

Գիրքը լուսապատճենահանվել է  
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից և ներկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է  
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹԱՅ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐՊՈՒՆԻՆ ԱՐԿԵԱՆ ԱՍՅԱՏԱՌ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ  
ՀՈՒՄԱՆՈՅՔԵԼԱՂԱՅԵԼ ԳՐՔԵՐ:


ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂՈՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԻՄԱՆԱԼ "ՇԱՐՈՂՈՑԳՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՆ՝

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԸՆԴՈՂՆԱԿԱԼ ԵՒՔ, ԱՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՆ:  
ՑԱՆՎՈՒՆՈՒՄ ԵՒՔ ՉԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐՔԻՔ ՄԵՔ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)



# ՀԱՅ ՀԻՆ ՎԻՎԱՇԽԱՐԵ

Անարգիս Հարությունյան

Գրքարիչ  
Ֆ. Ս. Գյուլանյան



ԵՐԵՎԱՆ  
«ԱՐԵՎԻԿ»  
1987

ԳՄԳ 8427  
Հ422

ՄՏ  $\frac{842}{Հ422}$

**Հարությունյան Ս. Բ.**

Հ 422 Հայ հին վիպաշխարհը: (Դպր. միջին և բարձր տարիքի համար) / Սարգիս Հարությունյան, նկ.՝ Ֆ. Գյուլանյան. — Եր.: Արևիկ, 1987. — 180 էջ: Նկարազարդ: Գիրքը ներկայացնում է հայ հին առասպելները, լեգենդները, վեպերը:

Հ  $\frac{4802000000 (40)}{707(01) 87}$  98 87

ԳՄԳ 8427



## ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ իրականության մեջ տասնամյակներ առաջ արդեն ստեղծվել էր այս գործի շատ համառոտ, բայց և հաջող ու գեղեցիկ նախօրինակը՝ Ստեփան Լիսիցյանի «Հայրենի առասպելներից ու վեպերից» գրքույկը:

Մեր օրերում, երբ հրապարակի վրա կա, այն էլ մի քանի վերահրատարակություններով, Ն. Ա. Կունի «Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները» մեծածավալ գիրքը, բնական է, որ թե՛ հրատարակչությունը և թե՛ հեղինակը նախընտրեին Ն. Ա. Կունի փորձն ու օրինակը, այն է՝ տալ տարբեր աղբյուրներում պահպանված հայ հին առասպելների ու վեպերի ամբողջական, համակարգված ու հանրամատչելի շարադրանքը:

Այս գիրքն, ահա, ամենից առաջ այդ նպատակն է հետապնդում:

Ծարադրանքի համար առաջին հերթին սկզբնաղբյուր են ծառայել հայ միջնադարյան պատմիչների՝ Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Սեբեոսի և Հովհան Մամիկոնյանի պատմագրական աշխատությունները, ապա նաև ուշ շրջանի ժողովրդական բանավոր ավանդությունը:

Հին հայերն, անշուշտ, ունեցել են իրենց զարգացած դիցաբանությունը, որի վկայությունն է հեթանոսական դիցարանի, աստվածների պաշտամունքի, տաճարների առկայությունը:

Սակայն, ցավոք, այդ հին դիցաբանությունից շատ քիչ բան է պահպանվել ու հասել մեզ: Հին աստվածների մասին առասպելներից մեզ են հասել ընդամենը Վահագնի ծննդյան առասպելաբանական երգը ու մի երկու զրույց նրա և Աստղիկ դիցուհու մասին: Մնացած աստվածների մասին ոչ մի առասպել ուղղակի ձևով չի պահպանվել: Պատճառն, անշուշտ, այն է եղել, որ հին հայերը հեթանոսական շրջանում չեն ունեցել իրենց գիրն ու գրականությունը, որի մեջ արտացոլվեին հին աստվածների առասպելներն ու պաշտամունքը: Հայ գիրն ու գրականությունը ստեղծվեցին 5-րդ դարի սկզբներին, երբ քրիստոնեությունն արդեն մեկ հարյուրամյակից

ավելի պաշտոնական կրոն էր դարձել Հայաստանում, և հիմնականում տապալվել էին հին հեթանոսական կրոնն ու տաճարները, արգելվել էին աստվածների պաշտամունքն ու նրանց վերաբերող առասպելաբանական շատ երգեր ու գրույցներ: Հայ առաջին հեղինակներն էլ լինելով քրիստոնյա կրոնավորներ՝ հեթանոսական կրոնի ու պաշտամունքի թունդ հակառակորդներ, բնականաբար, պետք է զանց առնեին դեռ իրենց օրերում ժողովրդի լայն խավերում գոյատևող հին աստվածների մասին եղած երգերի ու առասպելների հետքերը: Եվ եթե որոշ բաներ էլ արձանագրել են ու հաղորդել, ապա բոլորովին կողմնակի հանգամանքների բերումով, հաճախ հին հավատալիքներն ու առասպելները բննադատելու կամ մերժելու առնչությամբ:

Այս է պատճառն, ահա, որ այս գրքում հայոց հին աստվածների՝ Արամազդի, Անահիտի, Նանեի, Ամանորի և Վանատուրի, Սպանդարամետի, Բարշամիևի մասին առասպելներ գրեթե չկան: Իսկ Միհր աստծո մասին առասպելաբանական գրույցները համարվել են «Սասնա ծռեր» հերոսավեպում Միհրի անվան ու հիշատակի հետքերը պահպանած Մեծ և Փոքր Մհերների մասին եղած այնպիսի գրույցներով, որոնք ինչ-որ չափով համապատասխան են եղել Միհր աստծո հին առասպելներին:

Այդ միևնույն նպատակով էլ գրքի հին առասպելների բաժնում են զետեղվել ուշ շրջանում, անգամ մեր օրերում ժողովրդի բերանից գրառված բնության առարկաներին ու երևույթներին, երկնային լուսատուներին, բույսերին ու կենդանիներին վերաբերող առասպելաբանական գրույցները: Դրանք, անկախ իրենց ուշ ժամանակներում գրառվելու հանգամանքից, բնույթով հնագույն առասպելներ են՝ բնության այս կամ այն երևույթի, բույսի, կենդանու ծագման մասին կամ դրանց այս կամ այն հատկանիշը մեկնաբանող առասպելաբանական հիշատակներ, որոնք երկար դարեր պահպանվել են ժողովրդի հիշողության մեջ և հասել մեզ:

Բնույթով առասպելներին են հարում գրքի «Հերոսներ» բաժնում զետեղված վիպական գրույցները: Դրանց մեծ մասի հերոսները կամ հնագույն աստվածներ են (Արա Գեղեցիկ, Ծամիրամ, Տորք Անգեղա), կամ աստվածացված նախնիներ, գուցե ցեղային աստվածներ (Հայկ, Արամ): Այդ գրույցները մեծ մասամբ պատմականացել են, կապվել Հայաստանի տեղանքին, վաղնջական պատմական իրադարձություններին, ենթարկվել գրական վերամշակման, դարձել փոքրիկ վեպեր կամ պատմական ավանդություններ:

Եվ հենց այդ պատմականացման հետևանքով էլ մեր հին պատմիչները դիմել են դրանց և օգտագործել իբրև հայոց պատմության վաղնջական ժամանակների սկզբնաղբյուրներ:

Հնագույն առասպելների բացահայտ հետքեր են պահպանվել հայոց թագավորներ Տիգրանի, Երվանդի, Արտաշեսի և Արտավազդի մասին վիպական գրույցներում, որոնք դեռ հնում իրար են հարել և միացել, կազմելով վիպական մեկ ամբողջություն կամ ամբողջական վիպասանություն, որը կոչվել է «Վիպասանք» կամ «Երգք վիպասանաց»: Սա հայոց անդրանիկ առասպելաբանական վեպն է, բաղկացած երկու հիմնական մասերից՝ Տիգրանի և

Արտաշեսի վիպաշարերից, որոնց միավորիչ հիմքն է կազմում ամպրոպային աստծո՝ վիշապների հետ ունեցած հակադրության և պայքարի հնագույն առասպելը:

«Վիպասանքում» հին հայոց թագավորների անունների, հաճախ նաև իրական պատմական արարքների հետ են համաձուլվել, որոշակի ձևափոխումների ենթարկվել վիշապամարտիկ աստվածների և դյուցազունների առասպելաբանական որոշակի հատկանիշներ ու արարքներ: Այսպես. Տիգրանի և Ածդահակի թշնամությունը, նրանց մենամարտը, վիշապ Ածդահակի սպանությունը, կնոջ՝ վիշապամայր Անուշի, և նրա զավակների՝ վիշապազունների գերումը Տիգրանի կողմից՝ բոլորը վիշապամարտի հնագույն առասպելի մոտիվներ են: Հայոց Տիգրան թագավորը փոխարինել է հին վիշապամարտիկ ամպրոպային աստծուն, անգամ հայոց բուն ամպրոպային աստված Վահագնը այդ հին վեպում դարձել է Տիգրանի որդի: Վիշապ Ածդահակի սերունդները՝ վիշապազուն Արգավանը և նրա զավակները, հանդես են գալիս Արտաշիսյան վիպաշարում, նախ՝ իբրև բարեկամ, ապա թշնամի: Արտաշեսի կին Սաթենիկը սիրային գաղտնի կապեր է հաստատում վիշապազուն Արգավանի հետ, Արգավանը դավ է սարքում Արտաշեսի դեմ, դավադրությունը բացահայտվում է, Արտաշեսի որդի Արտավազդը կոտորում է Արգավանին ու բոլոր վիշապազուններին: Երվանդը թեպետ հրաշածնունդ երկվորյակներից է, բայց օժտված է չար վիշապի հատկանիշներով, ունի չար ու դժնյա աչք, կոտորում է Սանատրուկի զավակներին, հալածում Արտաշեսին, զավթում նրա հայրենի իշխանությունը և ի վերջո սպանվում Արտաշեսի կողմից: Արտաշեսի որդի Արտավազդը, որը վիշապամարտիկ լինելով հանդերձ, օժտված է նաև բնավորության չար գծերով, հոր անեծքով քաջքերի կողմից, իբրև վիշապ, արգելափակվում է Մասիսի վիհերից մեկում:

Այս առասպելաբանական բացահայտ հատկանիշներով հանդերձ «Վիպասանքը», սակայն, վաղնջական վեպ է՝ էպոս, իր կոնկրետ պատմական միջավայրով, հերոսներով, ազգային շահագրգռություններով:

Հայոց գրեթե բոլոր հին առասպելները, որոնք մեզ են հասել գրավոր ավանդությամբ, առհասարակ ենթարկվել են խիստ պատմականացման ու վիպականացման: Դրանց մեջ նախկին լուսավոր աստվածներն ու դյուցազունները կամ դարձել են հայոց նախնիներ ու թագավորներ (Հայկ, Արամ, Արա Գեղեցիկ, Տորք), կամ հայոց թագավորները փոխարինել են հին աստվածներին (Տիգրան, Արտաշես, Արտավազդ), իսկ նրանց հակառակորդ աստվածությունները դարձել են հայոց թշնամի երկրների բռնակալ թագավորներ ու տիրակալներ (Բել, Բարշամ, Պաշապիս քաղյա Տիտանյան, Ծամիրամ, Ածդահակ): Բնության չար ու բարի ուժերի հին առասպելական կոիվը հայոց հին առասպելներում վերածվել է յուրային հերոսի կամ թագավորի սեփական տոհմն ու հայրենիքը օտար բռնակալներից պաշտպանելու, իր տոհմի, ցեղի, իշխանության պատմական իրավագրությունը հաստատող մի արդարացի կոլի՝ յուրայինի պարտադիր հաղթանակով:



Վիպական-գաղափարական այս գիծն այնուհետև անցնում է բոլոր հայ հին և նոր ժողովրդական վեպերին, խարսխվում հայ ժողովրդի պատմական երկարատև կենսավորմի վրա, դառնում խորհրդանշալի հայրենասիրական գաղափարախոսություն, այն է՝ կենաց ու մահու պայքար արտաքին ու ներքին բոլոր թշնամիների դեմ, հանուն սեփական հայրենիքի, պետականության, ժողովրդի ազատության և անկախության:

Գաղափարական այս կաշուն գիծն է դրսևորվում և անցնում «Պարսից պատերազմ» և «Տարոնի պատերազմ» հին ավանդական վեպերի միջով և հասնում ոչ ժամանակներում գրառված «Սասնա ծռեր» հերոսավեպին:

«Պարսից պատերազմ» վեպի պատմական հիմքն են կազմում մ. թ. Յ — 4-րդ դարերում Հայաստանի և Սասանյան Պարսկաստանի միջև մղված երկարամյա կռիվներն ու պայքարը, ինչպես նաև Հայաստանի ներքին ֆեոդալական հասարակական կռուները՝ իր հակասություններով ու դրամատիկական իրադարձություններով: Վեպի հիմնական կոնֆլիկտը հակադրությունն ու պայքարն է Արշակունչաց Հայաստանի և Սասանյան Պարսկաստանի միջև: Այդ կոնֆլիկտը սկզբում ունի նեղ, տոհմային հակասության բնույթները՝ Պարսկաստանում տապալվում է հայոց Արշակունի թագավորներին ազգակից պարսից Արշակունի արքայատոհմի տիրապետությունը, և պարսից թագավորական զանին են նստում Սասանյանները, հայոց Արշակունի և պարսից Սասանյան թագավորների միջև տոհմային թշնամություն է ստեղծվում, որը հետզհետև վերածնում է երկու երկրների միջև ազգային քաղաքական հակասության, երկարամյա սազմական բնդհարումների ու պայքարի: Հայաստանի ու հայ ժողովրդի շահերն են մարմնավորում հայոց Արշակունի թագավորները՝ Խոսրով և Տրդատ Մեծ, Խոսրով Վոտակ, Տիրան, Արշակ, Պարս, Վարազդատ, և Մամիկոնյան սպարապետները՝ Վաչե, Վասակ, Մուշեղ և Մանվել: Նրանք էլ վեպի գլխավոր հերոսներն են, որոնց շուրջը հյուսված վիպական գրույցները՝ ըստ թագավորների և սպարապետների անունների ու արարքների, վիպական առանձին-առանձին շարքեր են կազմում, որոնք և իրար սերտորեն կապակցված են սերունդների և դեպքերի հաջորդականության սկզբունքով: Վեպում հանդես եկող հայ Արշակունի և պարսից Սասանյան թագավորների, Մամիկոնյան սպարապետների ու մյուս նախարարների անունների մեծ մասն, անշուշտ, իրական-պատմական են, բայց նրանց կերպարներն ու արարքները ստույգ պատմական չեն: Դրանք վիպական-գեղարվեստական կերպարներ են և արարքներ, որոնք ձևավորվել են վիպասանների ու գուսանների կողմից՝ իրական պատմական նախատիպերի և իրադարձությունների հիմքի վրա, ենթարկվել գաղափարականացման, հերոսացման, միտումնավոր չափազանցումների: Վեպի բուն բովանդակությունը կազմող հայ-պարսկական կռիվները միշտ էլ ավարտվում են հաջրի կատարյալ հաղթանակով, իսկ եթե լինում են ժամանակավոր պարտություններ, սպա դրանք էլ պատճառարանվում են առանձին հայ իշխանների դավաճանությամբ: Հայերի հաջողություններն ու հաղթանակները նկարագրվում են վիպական բացահայտ չափազանցումներով, որի նպատակն է ցույց տալ հայերի բազու

թյունն ու հերոսությունը թվով գերազանց թշնամիների նկատմամբ:

Հայ Արշակունի թագավորները մարմնավորում են ինքնուրույն և անկախ պետության գաղափարը, իսկ Մամիկոնյան սպարապետների սերն ու նվիրվածությունը հայրենի Արշակունի թագավորների՝ «բնիկ տերերի» նկատմամբ, մի կողմից արտահայտում է Ֆեոդալական դարաշրջանի հասարակական բարոյական հարաբերությունները՝ ենթակայի հավատարմությունը տիրոջ նրկատմամբ, մյուս կողմից այդ նվիրվածությունը պայմանավորված է ինքնուրույն պետականության և հայրենիքի անկախության պահպանման անհրաժեշտությամբ:

«Պարսից պատերազմ» վեպի հիմնական միտումը հայրենասիրությունն է, հայրենի երկրի, նրա յուրաքանչյուր թիզ հողի համար հերոսաբար մարտնչելն ու մեռնելը: Այս գաղափարի կրողներն ու վիպական մարմնավորողներն են վեպի գլխավոր հերոսներ Վասակ, Մուշեղ, Մանվել Մամիկոնյան սպարապետները: Վեպի բացառիկ ուժեղ գաղափարականացված կերպարներից է Ներսես Մեծը, որն իր արդարամտությամբ, մարդասիրությամբ, աշխարհաշեն գործունեությամբ, ազգային-պետական միասնության նախանձախնդրությամբ, աշխարհիկ տերերի դեմ մղած իր անհաշտ, բայց սրտացավ պայքարով դարձել է վեպի բարոյական ծանրության կրողը և մարդկային ու ազգային խղճմտանքի կենտրոնը: Ներսեսի՝ անմիաբան նախարարներին ուղղված խրատն ու պարսավանքի խոսքերը մարգարեաբար են հնչում հայոց պատմության հետագա դարերի ողջ ընթացքի համար:

Հայոց երրորդ հին վեպը «Տարոնի պատերազմն» է, որի պատմական հիմքն են կազմում Տարոնի Մամիկոնյան իշխանների՝ 5 — 7-րդ դարերում պարսիկների դեմ ապստամբություններն ու հերոսական մարտումները: Վեպի գլխավոր հերոսներն են Մուշեղ, Գայլ Վահան, Սմբատ, Վահան և Տիրան Մամիկոնյանները: Մուշեղի կերպարը «Տարոնի պատերազմ» է մտել «Պարսից պատերազմ» հին վեպից և երկու վեպերը միմյանց կապող յուրօրինակ օղակ է դարձել: Բացի այդ «Տարոնի պատերազմը» «Պարսից պատերազմ» վեպի յուրատեսակ շարունակությունն է կազմում միայն պատմական նոր պայմաններում, հասարակական-քաղաքական նոր շահագրգռություններով, վիպական նոր տրամաբանությամբ ու հնարանքներով:

Եթե «Պարսից պատերազմում» պարսիկների դեմ մղած երկարատև կռիվներն ու պայքարն ուղղված էին համայն Հայաստանի պետական-քաղաքական ինքնուրույնության ու անկախության, Արշակունիների սեփական թագավորության պահպանության նպատակին, ապա «Տարոնի պատերազմում» արդեն ընկել էր հայոց Արշակունիների թագավորությունը, քայքայվել հայոց միասնական պետականությունը, և պայքարը պարսիկների դեմ ուղղված է սուկ Տարոնի Մամիկոնյան իշխանների սեփական երկրամասի ազատության ու անկախության նպատակին՝ տեղական նեղ շահագրգռություններով: Վիպական կոնֆլիկտը՝ հայերի հակադրությունն ու պայքարը պարսիկների դեմ, արտաքնապես թեպետ նույնն է մնում, բայց փոխվել է այդ կոնֆլիկտի բովանդա-

կությունը: Պարսիկների ձգտումն է Տարոնի հպատակեցումն ու հարկադրումը, նրա գլխավոր սրբավայրի՝ սուրբ Կարապետ վանքի ավերումն ու նշանավոր իշխանների նշխարների հափշտակումը: Այս ձգտման դեմ են ելնում Տարոնի Մամիկոնյան իշխանների իրար հաջորդող սերունդները և հաղթում թվով գերազանց թշնամուն:

Փոխվել է նաև հերոսների գործելակերպը: Եթե «Պարսից պատերազմում» Մամիկոնյան սպարապետներին յուրահատուկ էր թշնամու նկատմամբ ասպետական վեհանձնությունը, ազնվությունն ու մեծահոգությունը, ապա «Տարոնի պատերազմում» արքայազուրկ Մամիկոնյան իշխանները միայն սեփական ուժերով իրենց համեմատաբար փոքր երկրամասը հզոր թշնամուց պաշտպանելու համար դիմում են բնավ ոչ ազնիվ միջոցների՝ խորամանկության, խարեության, նեկոության, դաժանության, որոնց շնորհիվ կարողանում են միշտ հաղթող հանդիսանալ թվով գերազանց թշնամու նկատմամբ: Որքան էլ, առօրյա բարոյականությամբ, այդ միջոցները ազնիվ ու խրախուսելի չեն, բայց վիպական տրամաբանությամբ, մանավանդ հզոր ու նվաճող թշնամու դեմ գործելիս, դրանք միանգամայն արդարացվում են ու խրախուսվում:

Հարկ է նկատի ունենալ նաև հետևյալը. այս գրքի նպատակն է ոչ միայն առասպելական կամ վիպական հետաքրքրաշարժ գրույցների սուկ հաղորդումն իբրև ընթերցանության նյութ, այլ այդ հաղորդվող հին գրույցների ու ժողովրդական վեպերի հիման վրա այսօրվա, հատկապես պատանի ընթերցողին ծանոթացնել ու ճանաչելի դարձնել մեր ժողովրդի անցյալի պատմությանը՝ իր շատ ուսանելի և մերժելի կողմերով:

Որքան էլ այս գրքում գետնդված հին առասպելներն ու վեպերը հաշ ժողովրդի անցյալի գեղարվեստական, վիպական մտահայեցությունների արդյունք են, այդուհանդերձ դրանցից շատ-շատերը, հատկապես վեպերը, իրենց հիմքով պատմական են, գեղարվեստական ձևերի մեջ, վիպական տարբեր հնարանքներով նկարագրում են մեր ժողովրդի հին ու միջնադարյան կյանքի տարբեր կողմերն ու երևույթները:

Իսկ այդ պատմությունը միայն գեղեցիկ, հայրենասիրական ու հերոսական արարքներով չի բնորոշվում: Լինելով հիմնականում ֆեոդալական ժամանակաշրջանի արտաքին ու ներքին անցքերի պատմագեղարվեստական նկարագրություններ, դրանք չի են ֆեոդալական դարաշրջանին բնորոշ արատներով՝ խարդավանքներով, մատնություններով, քսություններով, դավադրություններով, դավաճանություններով, անմեղ սպանություններով, որոնք ոչ միայն չեն իդեալականացնում միջնադարյան Հայաստանի վիպական գրույցների հերոսներ հանդիսացող թագավորներին ու նախարարներին, այլ, ընդհակառակը, ավելի իրական, ռեալիստական գծերով են ներկայացնում իրականությունը, ավելի ճիշտ ու ճշգրիտ պատկերացում են տալիս ֆեոդալական Հայաստանի կյանքի, բարքերի, ներքին ու արտաքին հարաբերությունների մասին:

Այդ նույն նպատակով «Պարսից պատերազմ» վիպաշարում առանձին գլուխներ են հատկացվել Գրիգոր Լուսավորչի կողմից Հայաստանում նոր կրոնի՝ քրիստոնեության տարածման պատմական իրողությանը, որը սերտորեն շաղկապված է վեպի գլխավոր

հերոսներից մեկի՝ Տրդատ Մեծի գործունեության հետ: Նոր կրոնի տարածման պատմությունը լի է առասպելական դրվագներով (Գրիգորի անասելի մարմնական տանջանքներին դիմանալը, Խոր Վիրապում 15 տարի կենդանի մնալը, Տրդատի դիվահարությունն ու կերպարանափոխումը, Գրիգորի տեսիլն ու Տրդատի և մյուս նախարարների բուժումը և այլն), որոնք այսօրվա, թեկուզև պատանի ընթերցողի վրա բնավ չեն կարող կրոնական գաղափարախոսության ներգործություն ունենալ, որովհետև դրանք նույն-քան են առասպելական, որքան հին հեթանոսական աստվածների, արևի և լուսնի, բույսերի և կենդանիների մասին եղած հրաշապատում գրույցները: Ընդհակառակը, քրիստոնեական այդ և նման լեգենդները, իրենց անհրակյան, գերբնական, առասպելաբանական բնույթի պատճառով կարող են անգամ նպաստել երիտասարդության աթեիստական դաստիարակությանը:

Նպատակը, սակայն, սուկ այդ չի եղել, այլ այդ կրոնաառասպելական շղարշով զարդարված գրույցների միջոցով ընթերցողին ներկայացնել Հայաստանում նոր կրոնի ընդունման ու տարածման պատմական նշանավոր իրողությունը, այդ կրոնի տարածման ձևերն ու եղանակները (հեթանոսական տաճարների ավերում, դրանց տեղերում եկեղեցիների կառուցում, տաճարային զանձերի բռնագրավում, քրմերի հալածանք, քրմերի զավակներին նոր կրոնի սպասավորներ դարձնելը և այլն), որոնք ունեն պատմաճանաչողական կարևոր արժեք մեր ժողովրդի հոգևոր կյանքի պատմության երևույթներին միջնադարյան մտածողությամբ ու հոգեբանությամբ այսօրվա ընթերցողին ծանոթացնելու գործում:

Այս գիրքը շարադրելիս հեղինակը նպատակ է ունեցել մի գրքում ամփոփել ու ամբողջական պատկերացում տալ տարբեր աղբյուրներում ցրված հայ հին առասպելների ու վեպերի մասին: Հետևաբար, ավելորդ է համարվել նյութի գեղարվեստական վերամշակումը կամ հեղինակային միջամտությունը: Հեղինակը միանգամայն հարազատ է մնացել սկզբնաղբյուրների տվյալներին, անգամ դրանց ոճին ու մտածողությանը: Կատարվել են միայն տարբեր աղբյուրներով ավանդված միևնույն գրույցի տարբերակների համադրումներ, միևնույն գրույցում անհարկի կրկնվող մրտքերի, առանձին մոտիվների հապավումներ, որոշ միջադեպերի, անգամ առանձին պոեմների, կրոնաբարոյախոսական ավելորդ մեկնաբանությունների կրճատումներ, նպատակ ունենալով հնարավորին չափ պահել ու պահպանել տվյալ գրույցի, պատումի կամ կերպարի նախնական, բուն ավանդական նկարագիրը:

Նյութերը մասերի, առանձին գլուխների, ենթագլուխների բաժանումը կատարվել է գիտության մեջ արմատացած տեսակետների և սկզբնաղբյուրների ընձեռած տվյալների հիման վրա, իսկ դրանց մեծ մասի վերնագրումը՝ ըստ հերոսների անունների և արարքների, կատարվել է հեղինակի կողմից, դարձյալ սկզբնաղբյուրների հիման վրա:

Թե որքան է այդ հաջողվել, ցույց կտա գրքի անաչառ ընթերցումը:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

---

ԲՆՈՒԹՅՈՒՆ



## Երկինք և երկիր

Երկինքն ու երկիրը ամուսիններ են, երկինքը հայր է, երկիրը՝ մայր: Երկնքի և երկրի արանքում է գտնվում երկնային ծիրանի ծովը:

Երկինքը նաև քաղաք է, երբեմն կոչվում է Անգին քաղաք, շրջապատված պղնձե դարպասներ ունեցող քարե բարձր պարիսպներով: Երկնային քաղաքը մի լույս տանար է կամ ծիածանաքարով կառուցված՝ վեհ կամարներով շողշողուն պալատ: Ամեն ինչ այնտեղ լույս ու փայլ է, հրաշալիք. այնտեղ ոչ խավար կա, ոչ ցուրտ: Դա «անմահության տուն ու տեղ է»:

Երկիրը հանգչում է եզի եղջյուրների վրա. երբ նա թափահարում է գլուխը, երկրաշարժ է առաջանում: Ուրիշ պատկերացումների համաձայն՝ երկիրը գտնվում է օվկիանոսի վրա, չորս կողմից շրջափակված Լևիաթան<sup>1</sup> ձկան մարմնով. նրա գլուխը եկել և մեկ թիզ տարածություն է մնացել, որ ուսանի պոչին: Ձուկը կարծում է, թե իր պոչը օտար կենդանի է, որ միշտ խաղում է իր քթի տակ: Ուստի նա շարունակ հետամտում է նրան, ուզում է բռնել ու կծել, բայց չի կարողանում, որովհետև աշխարհի ստեղծման օրից մինչև վախճանը Լևիաթանը մազաչափ անգամ չի աճում: Եթե հանկարծ նրան հաջողվի բռնել իր պոչը, այնժամ աշխարհը քարուքանդ կլինի: Իսկ երբ նա իր պոչը բռնելու նպատակով շարժումներ է անում, երկիրը ցնցվում է, և երկրաշարժ է առաջանում: Լևիաթանի գլխին մի մեծ աղամանը կա, որ գիշեր-ցերեկ լույս է տալիս: Երբ նա ջրի մեջ շարժումներ է անում, գլխի աղամանի շողերը փայլատակում են աշխարհի տարբեր կողմերում:



<sup>1</sup> Այս անբողջ բաժինը շարադրված է հիմնականում Գ. Արվանձտյանցի «Գրոց ու բրոց», «Մանանա», «Համով-հոտով», Մ. Աբեղաևի «Հայ ժողովրդական հավատքը», Ա. Ղանալանյանի «Ավանդապատում» աշխատությունների և ժողովրդական սին ու նոր պատալիքների հիման վրա:

Լևիաթան — Աստվածաշնչում կամ հին հրեական ավանդության մեջ՝ ծովային վիթխարի հրեշ, վիշապ:



## Լույս և խավար

Լույսի և խավարի կամ ցերեկվա և գիշերվա կանոնավոր իրար հաջորդելը կարգավորում է ժուկը<sup>1</sup> կամ **ժուկ ու ժամանակը**: Նա այլևի՜նք ծերունի է՝ նստած մի բարձր սարի վրա: Ժուկ ու ժամանակը ձեռքին ունի երկու կծիկ, մեկը՝ սպիտակ, մյուսը՝ սև: Նա կծիկներից մեկը կամ մյուսը հերթով սարից ցած է գործում: Լեռան մեկ կողմից նա մի կծիկը ցած է գործում, մինչդեռ լեռան հակա՝ մյ կողմից մյուսը կծկում է: Երբ սպիտակ կծիկն է քանդելով ցած գործում՝ լուսանում է, արևը ծագում: Բայց՝ երբ սպիտակ կծիկն է կծկում, իսկ սևը քանդելով՝ ցած գործում, մթնում է, արևը մայր է մտնում:

Գիշերային խավարն անձնավորում են սև ու դժխեմ գիշերամայրերը, որոնք պատավ վիուկներ են, սև օձեր հմայողներ: Նրանք արևի և լույսի թշնամիներն են, որ աշխարհի ստեղծման օրից հետապնդում են արևին, բայց բնավ չեն կարողանում նրան հասնել կամ բռնել: Երբ երեկոն իջնում է, նրանք սարերի տակից դուրս են գալիս մեր աշխարհը, որպեսզի բռնեն արևին, բայց արևն արդեն մայր մտած է լինում, և միայն վերջալույսի ցոլքերն են աշխարհը լուսավորում: Այդ պահին նրանք մեկ բերան փչում են, և մութը պատում է ամբողջ աշխարհը: Պատավ գիշերամայրերը ձեռներին սև օձեր բռնած սկսում են դեսուդեն վագել. մտնում են սարերը, քարերը, անտառները, տները, գյուղերը, քաղաքները, կարծելով, թե արևն այնտեղ է թաքնվել: Երկար որոնելով ու չգտնելով արևին, նրանք մտնում են ավերակ ջրաղացներն ու ցամաքած հորերը, որոնք նրանց սովորական ուղիներն են դարձել և դրանց միջով անցնում են գետնի տակ ու ծովերի հատակը՝ արևին փնտրելու: Հենց այդ պահին արևելքում շառագոմսում է արշալույսը, լուսանում, և արեգակը գետնի տակից բարձրանում է երկինք: Եթե գիշերամայրերին հանկարծ հաջողվի տեսնել արևի երեսը, ապա երկրի վրա ոչ մի կենդանի արարած չի մնա, ամեն ինչ կկործանվի ու կոչնչանա, և աշխարհը կլցվի միայն նրանց օձերով: Բայց, բարեբախտաբար, նրանք երբեք չեն կարողանում տեսնել արևի երեսը:

## ԱՐԵՎ

### Արև և արևամայր

Արևը գեղեցիկ պատանի է: Նա իր մոր հետ բնակվում է հեռու, աշխարհի ծայրին, կապույտ մարմարից շինված շքեղ պալատում: Պալատը գտնվում է տասներկու բակի մեջտեղը: Յուրաքանչյուր բակ չորս կողմից կամարակապ է, կենտրոնում՝ ավազան, ցայտոյ շատրվանով: Այնտեղ ոչ ծառ կա, ոչ կանաչ, ոչ կենդանի, ոչ թռչուն, ոչ էլ որևէ արարած: Ցերեկը այնտեղ խոր լուռություն է տիրում, և այդ քար լուռության մեջ բա-

-----

ժուկ - նավերնի սի բանի բարբառնորում նշանակում է ժամանակ:

կերի կամարների տակ պառկած անջում են հազարավոր ու բյուրավոր աստղեր:

Մեջտեղի բակի ավազանի վրա կառուցված է ոսկեդեմ տաղավար, ուր բացված է արեգակի մարգարտապատ մահիճը: Տաղավարի մի անկյունում լույսերի մեջ նստած չքնաղ ու լուսերես արևամայրը սպասում է որդու վերադարձին: Եվ ահա օրվա ուղևորությունից հետո հոգևած իր պալատն է վերադառնում բոցավառ արեգակը: Նա մտնում է ավազան, լողանում, իսկ աստղերը արթնանում են, ոտքի կանգնում, ողջունում արևին և երկինք բարձրանում: Արևամայրը գրկում, ջրից հանում է որդուն, պառկեցնում մահճում և կուրծք տալիս հավերժ կրիտասարդ, մշտամանուկ արեգակին: Վերջինս քնում, հանգստանում է, որպեսզի հաջորդ օրն առավոտյան վերսկսի իր մշտական երթուղին<sup>1</sup>:



Արևի լողավազանը նաև Վանա ծովն է: Վերջապույսին, օրվա շրջապտույտից հոգևած, արևը մտնում է Վանա ծով, լողանում, մաքրվում, իջնում ծովի հատակը, ուր փրփուրների վրա փոկած է նրա անկողինը, պառկում է անկողնում, քնում, հանգստանում: Իսկ արևմուտքում շառագունած կամ ձյունաթույր ծալ-ծալ ամպերը նրա անկողնի քողն ու վարագույրներն են:



Արշալույսից առաջ հրեշտակները արևին հանում են անկողնից, հագցնում հրեդեմ գգեստներ, հարդարում մահիճը: Արևը լվանում է երեսը, ջուրը դեմքից ցայտում է չորս դին, սար ու դաշտ ծածկում ցողով: Բոլոր թռչունները ցողի սրսկումից սթափվում են քնից, արթնանում, բներից վեր թռչելով, սկսում են երգել ու ծլվլալ: Արևելքում գունկող հսկա լեռան տակից նախ ելնում են արևի 12 թիկնապահները՝ բոլոր սևագույն արաբներ, անտազայթի հման լուսեղեմ ճիպտներով հարվածում են սարին, որը խոնարհվում է և ցածրանում: Մյուս բոլոր սարերն էլ իրար հետևից իրենց գլուխն են խոնարհում արևի առաջ: Հանկարծ այդ պահին սարերի թիկունքից երևում է արևի ոսկե գլուխն ու հրեդեմ մազերը, և նա բարձրանում է երկնակամար:



Առավոտ վաղ, երբ արևը դուրս է գալիս ծովից ու երկրին շատ մոտիկ է լինում, նրա սաստիկ ջերմությունից երկիրը կարող է այրվել ու մոխիր դառնալ: Բայց այդ պահին նրա դեմ է ելնում մի վիթխարի թռչուն և իր հզոր թևերը տարածելով՝ պատասպարում է երկիրը արևի այրող ճառագայթներից: Կեսօրին, երբ արևը հասնում է երկնքի մեջտեղը և հեռանում երկրից, նրա ջերմությունը թուլանում է, և վտանգը վերանում: Այդ ժամանակ արդեն խանձված են լինում թռչունի թևերը, և նա ուժասպառ ու կիսամեռ ընկնում է ծովը, զուլանում, բուժում իր թևերը: Հաջորդ առավոտ կազդուրված՝ նա դարձյալ ելնում է արևի դեմ, իր հովանու տակ առնում երկիրը, և այդպես շարունակ:

Արևը երկինք է բարձրանում նաև առյուծի վրա նստած. նա արագ սլանում է երկնակամարով և երեկոյան գնում, հանգստանում է մոր գրկում: Արեգակին կրող առյուծը թաթերում պահում է մի վիթխարի թուր, որով նա պաշտպանում է արևին քաջքերից:

<sup>1</sup> Այդ պատճառով էլ արևմտադար կոչվում է նաև **մայրամուտ** (որ մոտ օտնկ) կամ **մայր օտնկ**, իսկ արևմտագի մտախե կրկնակ ստում են՝ «արևը մոր ծովն էլալ»:



## Արև, Արևամանուկ և արևամայր

Մի մեծահարուստ մարդու որդի՝ Արևամանուկ անունով, անհոգ ու շվայտ կյանք է վայելում: Ամեն օր գնում է որսի և միշտ առատ որսով վերադառնում տուն: Մի անգամ էլ որսի գնալիս՝ երեք օր անընդմեջ նրան չի հաջողվում որս անել:

Անհաջողությունից հուսահատված Արևամանուկը մտածում է. քանի որ ինքը այլևս չպետք է կարողանա որս գտնել ու զվարճանալ, թող որ աշխարհն էլ կործանվի: Վճռում է՝ հաջորդ օրը վաղ առավոտյան, հեռց որ արևը ծագի, նետով զարկի արևին, երկնքից վաչր գցի, որպեսզի աշխարհը ծածկվի հավիտենական սև խավարով:

Հաջորդ առավոտյան, արևածագից առաջ, Արևամանուկը նետ-աղեղը ձեռքին պատրաստ սպասում է արևին: Արևը իր գլուխը հագրիվ հանած, մի բոցեղեն հուժկու ապտակ է հասցնում Արևամանուկի դեմքին, բոցեղեն ձեռքով բռնում է նրա մազերից, բարձրացնում, տանում դնում է մի ամաչի կղզի և անհծում, որ նա արևի երես չտեսնի և լույս չվայելի: Այդ օրվանից Արևամանուկը ցերեկները բնում է արևից պատասպարված տաղավարում և արթնանում է միայն գիշերը, գնում թափառում, իր ապրուստը ճարում: Տարիներ անց, պատահաբար, այդ կղզին է ընկնում մի կին, հանդիպում Արևամանուկին, ամուսնանում: Փամսնակ անց կիներ մնում է երեխաշով: Արևամանուկը նամակ է գրում ծնողներին, թե. «Ահա ձեզ եմ ուղարկում ձեր հարսին, պահեք նրան, բայց ինձ մի փնտրեք. ես արև չեմ կարող տեսնել, մեր քաղաքն ու մեր տունը չեմ կարող մտնել: Եթե գամ, անպայման կմեռնեմ, անհիծված եմ»: Արևամանուկը գիշերները քայլելով, կնոջն ու զավակին բերում հասցնում է իրենց տուն և առանց ծնողներին ներկայանալու վերադառնում:

Ծնողները հարսից իմանալով իրենց որդու պատմությունը, չեն դիմանում, ուզում են գնալ, բերել որդուն: Հարսը համոզում է, որ չի կարելի, եթե բերեն, նրա մահվան պատճառը կդառնան: Արևամանուկի կինը ազատվում, տղա է բերում: Նա իր գլխի եկածները երգ է շինում և գիշերները երեխային օրորելիս, երգում: Արևամանուկն էլ որդու կարոտից գիշերները գալիս է իրենց տան մոտ, դրսից ձայնակցում է կնոջ երգին և ինքն էլ պատմում իր գլխով անցածը: Բայց վախենում է ներս մտնել: Արևամանուկի ծնողները նկատում են, որ գիշերները ինչ-որ մեկը գալիս է տան մոտ և դրսից իրենց հարսի հետ փոխադարձ երգեր երգում: Կասկածում են հարսի անմեղության վրա և բացատրություն պահանջում: Հարսն ասում է, որ եկողը իրենց որդին է, իր տղայի կարոտից է գալիս, եթե նրան բռնեն, ներս բերեն, կմեռնի:

Արևամանուկի ծնողները չեն հավատում հարսին: Մի գիշեր էլ, երբ դրսից ձայն են լսում, դուրս են գալիս, բռնում, տեսնում են, իրոք, իրենց որդին է: Արևամանուկը խնդրում, պաղատում է ծնողներին.

— Թողե՛ք ինձ, — ասում է, — թողե՛ք գնամ, եթե արևը ծագելիս ես իմ տաղավարում չլինեմ, կմեռնեմ: Խնայե՛ք իմ արևը, անհիծված եմ ես, թողե՛ք...

Ծնողները չեն լսում իրենց որդուն, չեն թողնում: Առավոտյան, երբ արևը ծագում է, որդին կիսամեռ ընկնում է հոր ու մոր առաջ: Նրանք իրենց մխիթարում են այն հույսով, որ երեկոյան արևը մայր մտնելուց հետո որդին կկենդանանա: Բայց երեկոյան Արևամանուկը դարձյալ մնում է կիսամեռ: Ծնողները սուգ ու շիվան են բարձրացնում, ծեծում իրենց գլուխը, զղջում, օրերով ողբում:

Մի օր էլ Արևամանուկի մորը երազում ասում են.

— Ելի՛ր, երկաթե տրեխներ հագիր, երկաթե զավազան վերցրո՛ւ, քայլի դեպի արևմուտք. որտեղ տրեխների ծակվեն, զավազանդ կտորվի, այնտեղ կգտնես որդուդ բուժման ճարը:

Որդու ցավով ու կարոտով տառապած մայրը առավոտ կանուխ, առանց երկար-բարակ մտածելու էլնում, շինել է տալիս երկաթե տրեխներ ու զավազան, հագնում և ընկնում է ճանապարհ: Տարիներով ճամփա է կտրում, անցնում սև ու սպիտակ մարդկանց սահմանները, հասնում աշխարհի ծայրը, որ անգամ հավքեր ու գազաններ չկան: Հեռվում նկատում է կապույտ մարմարակերտ մի պալատ. դեմ է անում այդ պալատն ու գնում: Դռան առջև զավազանն ընկնում է ձեռից, կտորվում: Հանում է ոտից տրեխները թափ տալու, տեսնում է՝ տրեխները ծակվել են: Հիշում է իր տեսած երազը, որ այստեղ պետք է գտնի որդու փրկությունը: Ներս է մտնում բակ, անցնում 12 բակերի միջով, հասնում այն տաղավարին, որի մի անկյունում լույսերի մեջ նստած է լուսաճաճանչ թագուհին՝ արևամայրը: Արևա-

մայր թագուհու գեղեցկությունից շշմած, Արևամանուկի մոր աչքերը զարմանքից բաց են մնում:

— Դու, անշուշտ, մի խնդիր ունես, — քաղցրությամբ նրան է դիմում արևամայրը, — որ այդքան չարչարանք ես քաշել, եկել հասել ես այստեղ: Ի՞նչ ցավ ունես, պատմիր, մի վախենա:

— Մնչոր եմ ես, — ասում է կինը, — որդուս արևն ինձ դարձնելու համար ճար խնդրելու եմ եկել:

Եվ մեկ առ մեկ պատմում է Արևամանուկի գլխով անցած-դարձածը:

— Տղադ չար տղա է, — ասում է արևամայրը, — ես էլ մայր եմ. արեգակի մայրը. իմ որդու արևով երկինք ու երկիր է լուսավորվում, իսկ քո տղան ուզեց նետով զարկել նրան: Անիծյալ է քո որդին, արեվից գուրկ պիտի մնա. ապրի ու չպիտի ապրի, մեռնի ու չպիտի մեռնի:

— Մնչոր եմ ես, — կրկնում է Արևամանուկի մայրը, — ցավ եմ քաշել իմ որդու համար, այսքան ճամփա եմ քայլել-անցել նրա սիրո համար: Քո զավակի արևի համար մի ճար ինձ ասա:

Արևամայր թագուհու գուրջը շարժվում է, ասում.

— Ծատ անարժան զավակներ են իրենց մայրերի շնորհիվ արև վաշելել. թող քո զավակն էլ իր մոր համար ապրի: Բայց դու անցիր այդ աստղերի հետևը, թաքնվիր. հիմա որդիս կգա, այնպես արա, որ չերևա: Երբ նա մտնի ավազանը, լողանա, ելնի գա կուրծք ուտելու, իմ կուրծք տալու ժամանակ դու նրա լողացած ավազանից մի շիշ ջուր առ ու գնա: Տնը, ցանֆի քո որդու վրա, կառողջանա:

Արևամանուկի մայրն այդպես էլ անում է. արեգակի լողացած ավազանի ջրից մի շիշ ջուր է վերցնում, պալատից դուրս է գալիս, հաջողությամբ վերադառնում է տուն, ջուրը ցանում է որդու վրա, որդին առողջանում է, ոտքի կանգնում:

### Աղջիկն ու արևը

Մի աղջիկ երեկոյան՝ արևը մայր մտնելուց հետո, տունն ավլում է և աղբը դուրս թափում: Այդ մեղքը գործելու համար նա պատժվում է<sup>1</sup>. ցերեկը արևի մոտ սևերես է լինում, մնում է մեռած, գիշերը՝ կենդանանում:

Աղջկա հայրը հագնում է երկաթե տրեխներ, ձեռն առնում երկաթե գավազան, ճանապարհ է ընկնում արևի մոտ: Նա գնում է արևից խրճորելու նրա երեսը լվացած ջրից, որ բերի, ցանի աղջկա վրա, բուժի նրան: Բայց մինչև օրս էլ աղջկա հայրը թափառում է աշխարհով մեկ և չի կարողանում գտնել արևի բնակարանը:



<sup>1</sup> Հայ ժողովրդական հավատալիքներով՝ երեկոյան տունն ավլելն ու աղբը թափելը՝ մեղք է համարվում, ուստի խտրապիտա են դրանից:

## Տղան և արևը

Մի կին իր տղայի համար գուլպա է գործում: Քիչ է մնում, որ գուլպան ավարտի, արևը պատրաստվում է մայր մտնել: Տղան դիմում է արևին, խնդրում.

— Ջան, արեգակ, մի քիչ սպասիր, մայրս վերջացնի զիզի գուլպաս, հագնեմ, հետո մորդ մոտ գնա:

Արևը լսում է տղային, սպասում և միայն ուշ երեկոյան վերադառնում մոր մոտ: Արևամայրը հարցնում է որդուն, թե ինչո՞ւ է ուշացել:

Արևը մորը պատմում է փոքրիկ տղայի և նրա գուլպայի մասին: Արևամայրը զայրանում է, անհիծում որդուն ուշացնող փոքրիկ տղային, որ նա ցերեկը մեռնի, գիշերը կենդանանա, իսկ նրա մայրն էլ երբեք չավարտի տղայի գուլպան:

Տղան ցերեկները մեռնում է, գիշերները՝ կենդանանում, գալիս է մոր մոտ, խնդրում իր գուլպան: Խեղճ մայրը չի կարողանում վերջացնել գուլպան, որովհետև գործածը ինքն իրեն քանդվում է:

Իսկ տղան, ստիպված, թափառում է ուտաբոքի:

## Արևն ու հարսանքավորները

Հարսանքավորները հարս ու փեսայի հետ Վարանդայի Քափաս սարով անցնելիս, արևը սկսում է մայր մտնել: Փեսան խնդրում է արևին՝ մի քիչ սպասել, մինչև իրենք անցնեն այդ վտանգավոր տեղից: Արևը կատարում է փեսայի խնդիրքը, բայց երբ վերադառնում է մոր մոտ, արևամայրը խիստ բարկանում է որդու վրա ուշանալու համար: Արևը մորը հայտնում է ուշացման պատճառը: Մայրը ավելի է բարկանում և անհիծում է հարսանքավորներին, որ նրանք քար դառնան: Հարսանքավորներն իսկույն քար են դառնում:

## Արև և լուսին\*

Արևն ու լուսինը աստծո զավակներն են. արևը աղջիկ է, լուսինը՝ տղա: Հոր հրամանով նրանք պարտավորվում են գիշեր-ցերեկ հերթով հսկել աշխարհին: Քույր ու եղբայր վիճակ են գցում, թե իրենցից ով գիշերը հսկի: Վիճակն ընկնում է քոռջը՝ արևին: Քույր ու եղբայր սկսում են տաք-տաք վիճել: Աղմուկի վրա գալիս է հայրը: Երբ իմանում է պատճառը, նախատում է լուսնին և հրամայում, որ նա գիշերները հսկի: Լուսինը հանձն է առնում կատարել հոր կամքը: Ապա աստված դիմում է աղջկան՝ արևին, առաջարկելով ցերեկները հսկել: Արևն առարկում է, ասելով՝ որ ինքն իր աղջիկ տեղով ամաչում է օրը ցերեկով մարդկանց աչքին երևալ:

— Այդ դեպքում, — ասում է հայրը, — ձեռներիդ մեջ մեկ-մեկ խուրճ ասեղ բռնիր. ով որ կհամարձակվի քեզ նայել, ասեղներով ծակիր աչքերը:

Արևն ընդունում է այդ առաջարկությունը և այդ օրից սկսած հոր կամքը կատարում:

Արևն ու լուսինը քույր-եղբայր են. արևը եղբայրն է, լուսինը՝ քույրը: Առաջներում քույրը եղբոր հետ է գալիս-գնալիս եղել. բայց որովհետև շատ գեղեցիկ է եղել, չար աչք է դիպել նրան, և նա հիվանդացել է ծաղիկ հիվանդությամբ: Այդ դեպքից հետո լուսինը խնդրում է եղբորը՝ ծակել այն մարդու աչքերը, ով իրեն կնայի, որպեսզի իրեն այլևս չար աչք չդիպչի և իր հիվանդության վրեժը լուծվի:

\* Արևի և լուսնի մասին եղել են տարբեր պատկերացումներ. մի դեպքում արևը տղա է, լուսինը՝ աղջիկ, որոնք կամ թագավոր ու թագուհի են, կամ էլ սիրահար զույգ: Իսկ մեծ մասամբ նրանք քույր ու եղբայր են, բնդ որում, արևը քույրն է, լուսինը՝ եղբայրը:

Արևի և լուսնի մայրը ապրում է երկնքում՝ աստղաստանը: Մի անգամ գիշերը, երբ մայրը խմոր է շաղախում, արևն ու լուսինը կուվում են: Արև քույրն ասում է.

— Ես գիշերով դուրս չեմ ելնի:

Լուսին եղբայրն էլ ասում է.

— Ես ցերեկը դուրս կգամ:

Ծառ որ կուվում են, մայրը վեր է կենում տեղից, խմորոտ ձեռքով ուժեղ ապտակ է հասցնում լուսնի երեսին, գիշերով նրան տանից հանում, գցում դուրս: Այդ օրվանից մինչև հիմա լուսինը գիշերն է դուրս գալիս, արևը՝ ցերեկը:

Մի անգամ մայրը արևին ու լուսնին ասում է.

— Գնացե՛ք աղբյուրից ջուր բերե՛ք, ծարավ եմ, ով շուտ բերի, նրան կօրհնեմ:

Քույր ու եղբայր վեր են կենում, գնում ջրի: Լուսինը քրոջից առաջ է անցնում և կուժը դնում աղբյուրի խողովակի տակ, որ ջուր լցվի: Արևը եղբորից թաքուն ծակում է նրա կփի տակը: Վերադարձին լուսնի կփից ջուրը հոսում, թափվում է, կուժը մնում է դատարկ: Իսկ արևը կուժը լիք լցնում է ջրով, բերում, տալիս է մորը, ստանում նրա օրհնությունը:

Մի անգամ արևն ու լուսինը գնում են գետը, լողանում: Լուսին եղբայրը մի քիչ լողանալուց հետո շուտ դուրս է գալիս ջրից, ապաստում, որ երբ քույրը ելնի ջրից, տեսնի նրա մերկությունը: Արևը կուսահելով եղբոր դիտավորությունը, ամոթից երկինք է բարձրանում: Լուսինն էլ անմիջապես նրա հետևից բարձրանում է երկինք, հետապնդում քրոջը, բայց մինչև օրս էլ հետապնդում է նրան և չի կարողանում հասնել: Դրա համար էլ արևը իր սուր ասեղներով ծակծկում է թե լուսնի և թե բոլոր նրանց աչքերը, ովքեր փորձում են նայել իրեն:

Արևը թագավոր է, լուսինը՝ թագուհի: Լուսինը շրջագայության է դուրս գալիս այն ժամանակ, երբ արար աշխարհը քնած է լինում, որպեսզի ոչ ոք չկարողանա իրեն տեսնել: Նա գրոսանքի է դուրս գալիս՝ շրջապատված աստղերով, որոնք իր կույս ընկերուհիներն ու նաժիշտներն են: Լուսին թագուհին ծով բարիքներ է սփռում աշխարհի բոլոր արարածներին, մեկ-մեկ էլ ամոթխածությունից իր դեմքը ծածկում է ամպի քողով:

Արևն ու լուսինը ջահել սիրահարներ են. արևը աղջիկ է, լուսինը՝ տղա: Երբ նրանք հանդիպում են իրար, լուսինը սիրուց խելքը թոցնում է, խավարում: Լուսնի վզից արյունոտ տիկ կա կախված. նա երբեմն այդ տիկը գցում է արևի վիզը, որից արևը խավարում է:

## Լուսին

Լուսինը մի անհամբեր երեխա է եղել: Մի օր, երբ մայրը խմոր է շաղախում, լալով գալիս է, մորից հաց է ուզում: Մայրը զայրացած՝ խմորոտ ձեռով ապտակում է լուսնին, անիծում, որ նա երբեք չկշտանա: Ապտակից լուսինը թռչում է երկինք, դեմքին՝ խմորի կտորներ: Երբ լուսինը կուշտ է լինում, պաշտոն փալլում է երկնքում, երբ քաղցում է՝ խավարում:

## Աստղեր

Աստղերը երկնքի կանթեղներն են, որոնք իբրև ջահեր առանց պարանի կախված են բարձր ու լայն, անսյուն ու անգերան կառուցված երկնաչին տաճարում և առանց ձեթի լույս են տալիս: Աստղերը լինում են չար և բարի: Ամեն մարդ ծնվում, աշխարհ է գալիս մի աստղի տակ. որի տակ կանգնում է մարդը ծնվելիս՝ իր բախտն է: Եթե նրա աստղը բարի է, նա բախտավոր է, եթե չար է՝ դժբախտ:

**Միր-կաթին** աստղաբույլը կոչվում է նաև **Հարդագողի** կամ **Գարմանագողի** ճանապարհ: Մի խիստ

ձմեռ հայերի նախնի Վահագնը ասորեստանցիների նախնի Բարշամից հարդ է գողանում, և Ծիր կաթինը այդ գողացված հարդի հետքն է:

Մի ժամանակ ուրիշ ցեղի աստված իր մշակներին ուղարկել է մեր երկրի աստծո կալից հարդ գողանալու: Մեր աստծո հրեշտակները նետ-աղեղով խփել, սպանել են գողերին, որոնց մոտից հարդը թափվել է երկնքի երեսին և այդպես էլ մինչև այժմ մնացել:

Գարունը բացվելիս՝ մի խելոճ կնոջ դարմանը պակասում է, անասունները մնում են քաղցած: Ծատ է դեսուդեն ընկնում. քայց ոչ մեկը նրան դարման չի տալիս: Ծարը որ կտրվում է, ելնում գնում է իր քավորի մարագը, փեշը դարմանով լցնում: Վերադարձին քամին խփում է, փեշի դարմանը թափում գետին:

Այս անամոթ արարքը տեսնում է աստված, երկնքի երեսին ցուցադրում է այդ գողության նշանը, որպեսզի աշխարհը տեսնի սանամոր գողությունը:

Սանամայրը շատ աղքատ է լինում. ամեն անգամ ստիպված իր քավորի հարդանոցից գողնոցով հարդ է գողանում: Մի անգամ էլ, երբ քավորը նկատում է այդ, սանամայրն ամոթից երկիկն է քարձրանում, հետևից թափելով հարդը: Մինչև այժմ էլ երկնքի վրա երևում է թափած հարդի հետքը, որ կոչվում է նաև **Սանամոր երթ**:

Մի ուղտապան 45 ուղտ է ունենում: Երբ նրա հարդը սպառվում է, գնում հարևաններից 15 ուղտի համար հարդ է գնում. իսկ 30-ի համար՝ հարդը փոխ է վերցնում: Հաջորդ անգամ, երբ դարձյալ հարդը սպառվում է, անհարձար է գգում նորից փոխ ուղեղ, ստիպված գողանում է: Այդ պահին տաստիկ քամի է քարձրանում և ամբողջ հարդը ցրում երկնքով մեկ, որ մինչև հիմա էլ երևում է:

Տան հարսը մարդագայլ է լինում: Մի անգամ նրանց տունը հյուր է գալիս: Հարսը հյուրի ոտները լվանալիս տեսնում է, որ դրանք շատ փափկիկ են: Հարսի ախորժակը գրգռվում է: Երբ բոլորը քնում են, հարսը գալիս է, որ հյուրին ոտի: Հյուրն սոջ խկուղն իմանում է, քաշում է դաշույնը և հարվածում հարսի կրծքին: Կոթն անմիջապես հարսի կրծքից ցալտում է երկիկն և իր հետքը մշտապես թողնում երկնքի վրա: Դրա համար էլ Հարդագողի նանասյարհը կոչվում է նաև Ծիր կաթին (կաթի հետք):

Ծիր կաթինը երկնքի այն տեղն է, որ պատրվել է ժամանակին, և հեղեղը թափվել երկրի վրա:

**Կշիռ համաստեղության** աստղերը Հուլյ նահապետի զավակներն են՝ երեքը տղա, երեքը աղջիկ, որոնք կոչվում են նաև հայկեր (խեքեր):

**Մեծ արջի** համաստեղությունը կոչվում է նաև **Յոթ սանամոր աստղեր**: Ժամանակին յոթ սանամայր են եղել, ունեցել են մի քավոր: Սանամայրերից յուրաքանչյուրը մտածել է, թե մյուսը կհոգա քավորի հոգսերը: Քավորը մնացել է առանց խնամքի և քաղցից մեռել: Աստված բարկանալով սանամայրերի վրա, նրանց դարձրել է յոթ աստղ:

-----  
Մարտագույլը ստատոգրաֆիան հավատարիքներով՝ ժամանակավորապես գալի փոխարկված կին է. անզված գույր սոջառուս հասկություններով:

## Ամպրոպ, որոտ, կայծակ, փայլակ, ցող


Ամպրոպի ժամանակ հայր երկինքն ու մայր երկիրը ծի-  
ռու ծովի միջոցով միանում են իրար, և երեքն էլ բռնվում  
երկունքի ցավերով: Երկունքի պահին ծիրանի ծովում  
կոպրվում է կարմիր եղեգնը, որի փողից բարձրացող ծխի և  
հետի միջից ծնվում է հրեղեն մազերով, բոցավառ մորու-  
սիկ և արեգակնակերպ աչքերով կայծակի և ամպրոպի պա-  
հանի աստվածը՝ Վիշապաքաղ Վահագնը: Նա ծնվելուն  
հետևաբար վազում է վիշապների դեմ կովելու:

Ամպրոպի ժամանակ ծովի խորքերից կամ ամառի լեռ-  
ներից երկինք են բարձրանում վիշապները, որոնք չար ոգի-  
ների հետ միասին կամեևում են կուլ տալ արեգակին կամ  
լուսին: Այդ ժամանակ Գաբրիել հրեշտակը ուրիշ հրեշ-  
տակների հետ միասին կովում է նրանց դեմ, գարկում հրե-  
ղեն արերով և սև ամպերից դուրս քշում նրանց: Ամպրոպի  
հոտը այդ կովի ձայնն է, փայլակը՝ Գաբրիել հրեշտակի  
արևն է, կայծակը՝ հրեղեն նետը, իսկ ծիածանը՝ աղեղը:

Վիշապները մազեր ու թևեր ունեն և բոլոր օձերի նման  
լուծան են, եթե նրանց չսպանեն: Նրանք շարունակ մեծա-  
նում են, և երբ արդեն վիշապը հազար տարեկան է դառ-  
նում, կարող է աշխարհը կուլ տալ: Դրա համար էլ հրեշ-  
տակները երկնքից իջնում են, կապում վիշապին և փոթորկի  
հոջ նրան վեր են հանում: Սակայն վիշապը կովում է հրեշ-  
տակների հետ, գալարվում, բերանից հուր թափում, հաճախ  
զոտր փչում երկրի վրա: Հրեշտակները նրան հանում են  
արեգակի մոտ, որի կիզիչ ճառագայթները այրում, մոխիր  
ու դարձնում վիշապին, և նրա մոխիրը թափվում է երկիր:  
Հաճախ վիշապի գալարվող պոչը պոկվում, ընկնում է երկրի  
վրա կամ էլ հրեշտակները բաց են թողնում վիշապին, և նա  
երկնքի բարձրությունից ընկնում է մի լեռան վրա, փշուր-  
ջուր լինում: Երբ ձերացած վիշապը լեռներից կամ ծովե-  
րից երկինք է քաշվում, երկնքի վիշապներն էլ երկիր են իջ-  
նում: Ամպրոպի ժամանակ երևացող ամառի հրեղեն շերտերը  
վիշապի հրեղեն մարմինն է, կայծակը՝ հրեշտակների գա-  
լարված կամ ճիպտոր, որով հարվածում են վիշապին, որո-  
շու ծեծվող վիշապի գոտոցը:

Վանա ծովի հատակում վիշապի բույն կա, ուր բնակ-  
վում է մի ահռելի վիշապ և իր մարմնով բռնել է ամբողջ  
Երկրի հատակը: Հրեշտակները միշտ կովում են նրա հետ,  
սպում նրան, պոչից վիրավորում, որպեսզի նա չմեծանա և  
բով ու ցամաք կուլ չտա:

Ամպրոպը երբեմն պատկերացվում է վիթխարի եղջյուր-  
առ ունեցող կովի կերպարանքով, որը երկնային կաթնաղ-  
ջուրից ջուր է խմում և արյունագույն ծովի (ծիրանի ծով)  
մեջից գոտում, բառաչում: Մեկ այլ պատկերացմամբ՝ անձ-



րևաբերը Եղիա<sup>1</sup> մարգարեն է, որը իր քառաձի կառքով սլանում է ամպերի վրայով, որպեսզի բռնի իր փախչող պարտապանին և հետ վերցնի փոխ տված դրամը:

Կառքի դղրոցից ամպերը որոտում են, իսկ անիվներից կամ ձիերին հարվածող մտրակից՝ փայլատակում:

Մի կույր մարդ բարկանում է աստծո վրա, որ իրեն զրկել է տեսողությունից: Նա վերցնում է թթու լավաշը, շարտում թխալի վրա: Թուխալը սաստիկ գայրանում է և սկսում է կույրի վրա գոռոգոռալ: Այդ գոռոգոռոցից էլ առաջ է գալիս որոտը:

**Կայծակը** կամ փայլակը կոչվում է նաև **Հրաչք**. նա հրացայտ աչքերով կին է, անունը՝ Ծովյան կամ Ծովինար, և ապրում է վերին երկնքում: Նա նստած է հրեղեն ձիու վրա և ձիով խաղում-պարում է ամպերում: Նրա ձիու և իր աչքերից կրակ է ցայտում, և ոչ ոք չի կարողանում նայել նրա հրեղեն, լուսավոր դեմքին: Ծովյանը երբեմն երևում է նաև ծպտված՝ տղամարդու կերպարանքով: Ամպրոպային մութ գիշերներին նա հանկարծ գլուխը հանում է ամպերի տակից, ցած նայում և հենց այդ պահին էլ փայլատակում է, ասում են՝ «Ծովյանը խաղում է»: Երբ երկնքում երևում է Ծովյանը կամ Ծովինարը և փայլատակում լույսի ու կրակի մեջ, իսկույն սկսում է անձրև տեղալ, և սար ու ձոր ծածկվում է պտղաբերող խոնավությամբ:

Երկրի վրա՝ օվկիանոսում, փայլուն փորով մի մեծ ձուկ կա: Երբ ձուկն ընկնում է մեջքի վրա, նրա փայլուն փորի շողքից երկինքը սկսում է փայլատակել:

Երբ դրախտում առաջին անգամ վարդը թառամում է, սոխակը սաստիկ տխրում է և սկսում է նվազելու աստիճան տրտմությամբ դալլալել: Լուսինը տեսնելով սոխակի սրտաճմլիկ վիճակը, լուռ արտասվում է: Լուսնի արտասուքներից էլ առաջ է իկել ցողը:

### Կրակ ու կայծակ

Ժամանակին քարերն ու ծառերը մարդկանց նման շարժվել են, խոսել, կերել, խմել: Աստանան տեսնելով այդ, գալիս է աստծո մոտ, իրավունք խնդրում, որ ինքն էլ մի բան ստեղծի: Աստված քնծի-ծաղ տալով ասում է.

— Թե կարող ես՝ ստեղծիր:

Աստանան գնում է քարերի մոտ, տեսնում, որ նրանք ոսկուն են թագավոր դարձրել, ասում է.

— Կայծքարն ավելի գորավոր է և կարող է ոսկուց լավ թագավոր լինել:

Ասածը հաստատելու համար նա մի տան մեջ խոտ, փայտ ու ցան է լցնում, ապա առաջարկում է կայծքարին՝ երկաթին բախվել: Կայծքարն ու երկաթը բախվում են իրար, կայծեր առաջացնում: Կայծերն ընկնում են տան մեջ լցրած չոր խոտի վրա, վառվում, կրակ ստեղծում: Մարդիկ ու քարերը հավաքվում են կրակի շուրջը և նրա միջից հանում խորոված պտուղներ ու կենդանիներ, ուտում: Ժառ են հավանում դրանց համը, սկսում են այդ կրակից տանել իրենց տները, օջախ սարքել, վրան կերակուր եփել:

Աստված գայրանում է աստանայի վրա, որ նա կրակի գաղտնիքը հայտնել է մարդկանց, ասում է.

— Սպասիր, քո պատճառով այնպիսի կրակ ստեղծեմ, որից սարսափեն մարդիկ:

Եվ նա ստեղծում է աստծո կրակը՝ կայծակը, ուղարկում է երկիր: Կայծակի հենց առաջին հարվածից զոհվում են տասը մարդ: Աստանան արսափահար փախչում է և այլևս աստծո աչքին չի երեվում: Աստված պատժում է քարերին, զրկում նրանց շարժվելու և ուտելու ունակությունից, որովհետև մարդիկ կայծքարի միջոցով էին իմացել կրակի գաղտնիքը:

Աստված նույն կերպ պատժում է նաև ծառերին, որոնք իրենց կամքով վառելիք էին դարձել մարդկանց համար:

<sup>1</sup> Եղիան հին հրեաների մարգարեներից է, որի պատմությունը շարադրված է Աստվածաշնչում: Նա, լստ առապելի, ոչ թե մեռնում է, այլ աստծո հրամանով հրեղեն կառքով ու հրեղեն ձիերով բարձրանում երկինք: Հետագայում, երբ տարածվում է քրիստոնեական կրոնը, քրիստոնյա շատ ժողովուրդները, այդ թվում նաև հայերը, Աստվածաշնչի ազդեցությամբ Եղիա մարգարեին իր հրեղեն կառքով ու ձիերով նույնացնում են իրենց հին ամպրոպային աստծուն:

## Հուր և ջուր

Կրակն ու ջուրը քույր ու եղբայր են. կրակը քույրն է, ջուրը՝ եղբայրը: Մի անգամ քույր ու եղբայր վիճում են, թե ուրիշից ով է ավելի ուժեղ: Որոշում են չափել իրենց ուժերը: Եղբայրը իր ուժը ցույց տալու համար սկսում է այրել սարերի լեռները, ջուրը խոտը: Եղբայր-ջուրը գալիս է և անմիջապես լցնում հրդեհը: Այդ օրվանից քույր ու եղբայր բաժանվել են իրարից:

Մի անգամ եղբայր-ջուրը իջնում է սարից, քույր կրակն ընկնում է նրան.

— Արի մի քիչ նստիր, տաքացիր:

Ջուրը պատասխանում է.

— Դու էլ մի քիչ ինձնից խմիր, հովացիր:



## Լեռներ, լճեր, գետեր

**Հայոց լեռները** հաղթանդամ ու հսկա եղբայրներ են եղել: Մեն անավուր վաղ արթնանալիս՝ նրանք սովորություն են արեցել նախ կապել իրենց գոտիները, հետո միայն բարևել էղբայր: Բայց երբ եղբայրները ծերանում են, էլ չեն կարողանում վաղ վեր կենալ: Մի օր էլ, ուշ արթնանալով, նրանք հասնում են կապել գոտիները և, հակառակ սովորության, իրար բարևում են առանց գոտիները կապելու:

Աստված տեսնելով այդ, պատժում է եղբայրներին. նրանք բարանում են, դառնում են լեռներ, գոտիները՝ կանաչ լճեր, իսկ արցունքները՝ անմահական աղբյուրներ:

**Մասիսն ու Արագածը** շատ սիրով քույրեր են լինում: Երբ մեկն է պատահում, որ մի օր նրանք կուլում են, սուկալի լինում. մեկն ասում է.

— Ես եմ լավը, քեզանից էլ բարձր:

Մյուսն ասում է.

— Ես քեզանից էլ լավն եմ, քեզանից էլ մեծ ու բարձր:

Վեճի ժամանակ վրա է հասնում Մարութա սարը<sup>1</sup>, փորձում է քույրերին հաշտեցնել, բայց չի կարողանում: Նա հորովված հեռանալով, անիծում է քույրերին, որ նրանք իրարից բաժանվեն և երբեք իրար չհանդիպեն: Մասիսը դառնում, անիծում է Արագածին, որ ամբողջ տարին վիշտը նրա գոտից դուրս չգա, արցունքներն էլ աչքերից չպակասեն: Արագածն էլ հետ չի մնում, իր հերթին անիծում է Մասիսին, որ աշխարհի երեսին մարդ չբարձրանա նրա գագաթը, վրան մատաղ չմորթվի:

Այդպես էլ լինում է. Արագածի կատարին արտասուքից ընկնում է գոչանում, իսկ Մասիսի վրա մինչև օրս մարդ չի բարձրացել և մատաղ չի մորթվել:

-----  
<sup>1</sup> Մարութա սարը գտնվում է Արևմտյան Հայաստանի Սասուն գավառում և եղել է սասունցիների սիրած ու պաշտելի սարը՝ ընկել է նաև Մարութակ կամ Բարձր Մարութակ:



**Մարութա սարի** պաշտամունքը խիստ զայրացնում է Անդոկին<sup>1</sup>, և նա Մարութա սարին մարտի է հրավիրում: Մարտի ժամանակ Անդոկն իր կայծակե թրով խիստ, ճեղքում է Մարութա սարի գլուխը, որի պատճառով էլ նրան ջղլագլուխ (զույգ գլխով) Մարաթուկ են անվանում: Անդոկի հարվածից վիրավորված Մարութա սարը հսկա մի ժայռ է պոկում իր կողերից և խիստ նրան: Ժայռը խրվում է Անդոկի կտրծքը, թաղվում կողերի մեջ. դուրս է մնում միայն ժայռի երկու ջրաղացաքարի չափ մի կտոր, որի վրա այժմ էլ երևում են Մարաթուկի ձեռքի հետքերը:

**Ջագրոշի լեռները**<sup>2</sup> եղջյուրներով վիշապ են եղել: Ջագրոշն ուզեցել է ուտել Տավրոսին<sup>3</sup> և կովի է ելել նրա դեմ: Տավրոսը թեպետ մարմնով փոքր, բայց ավելի ուժեղ լինելով, այնպես է հարվածում Ջագրոշի ճակատին, որ նրա եղջյուրները պոկվում, ընկնում են դեռ ու դեռ: Մի եղջյուրը թռչում ընկնում է Արգեոից հեռու և ցցվում է գետնի մեջ, որ մինչև այսօր Մասիոս<sup>4</sup> է կոչվում: Մյուս եղջյուրը թռչում, խրվում է Արարատի կողը, որ մինչև այսօր Մասիս է կոչվում: Ջագրոշը շշմած, մեջքը դեմ է տալիս Տավրոսի Առնոս և Արտոս<sup>5</sup> եղջյուրներին: Տավրոսը բարկացած, այնպես ուժեղ է հարվածում Ջագրոշի մեջքին ու փորին, որ մի մեծ ձոր է բացում Կոթորից սկսած մինչև Տիարտխտը: Այդ ձորով է հոսում Ջաբ գետը<sup>6</sup>, որը Ջագրոշի արյունն է: Տավրոսի հարվածից նոր լեռներ են բարձրանում, իրարից ջրերը բաժանում: Ջագրոշի փորոտիքի աղի ջրերի մի մասը գնում է Վան և կազմում Վանա լիճը:

Այդ օրվանից Ջագրոշն իր գլուխը առած քաշվում է մի կողմ. նրա մարմնի մի ծայր հասնում է Արարատ, իսկ գլուխը՝ Ծիրագ<sup>7</sup> ու Հնդկաստան:

**Դադասանի լեռն ու Մոավը**<sup>8</sup> վիճում են իրար հետ: Դադասանի լեռն ասում է.

— Դու ինձ մոտ ինչ ես որ. ես քեզանից շատ բարձր եմ:

Մոավն ասում է.

— Ի՞նչ կարող ես դու ինձանից բարձր լինել, երբ իմ դիրքը այնքան վեր է քեզանից:

Դադասանի լեռն ասում է.

— Ձայնդ կտրի, թե չէ՝ ձեռիս ափսեմ կտամ երեսիդ:

Ասում է ու ձեռի ափսեմ շարտում Մոավի վրա: Ափսեմ չի հասնում Մոավի գլխին, այլ ընկնում է մոտիկ մի հարթ տեղ: Մոավն ասում է.

— Որ դու ինձ վրա ափսե շարտեցիր, անիծում եմ քեզ՝ թող գլխիդ ձյունը երբեք չհալվի:

**Սև ու Կարմիր սարերը**<sup>9</sup> ժամանակին մարդ են եղել: Սև սարը եղել է մի բռնակալ, իսկ Կարմիր սարը՝ մուրազաբեր մի աղջիկ: Բռնակալը ուժով տիրացել է աղջկան և ժողովրդի անեծքով՝ քարացել: Բայց քանի որ չի կարողացել վախել աղջկա սերը, Սև սարը մինչև հիմա չի կարողանում նրան մոտենալ: Դրա համար էլ Սև սարը անզոր կատաղությունից լալիս է և իր վրեժը մարդկանցից հանում: Ամառվա կեսին հանկարծ մթնում է, բուք ու բորան անում, մարդ ու անասուն խեղդում:

**Աղբակում**, Բարդուղիմեոս առաքյալի վանքից դեպի արևելք գտնվում է մի քարայր, որը կոչվում է **Վիշապի այր**: Այստեղ բնակվել է մի վիշապ, որը կույ է տվել մոտակայքից անցնող մի աղջկա: Բարդուղիմեոս առաքյալը երբ տեսնում է այդ, ձիով հարձակվում է վիշապի վրա: Վիշապը քարայրից դուրս է փախչում և փսխում սողչկան: Այդ փսխուկը դարձել է սպիտակ քարակույտ, որ փոված է մինչև այժմ քարայրից դեպի հարավ՝ բլրի լանջին:

Անդոկի սար է Սասուն գավառում, Հայկական Տավրոսի գագաթներից մեկը:

<sup>2</sup> Ջագրոշի լեռնաշղթան ընկած է Վանա և Ուրմիա լճերի միջև, Վանա լճից հարավ-արևելք՝ հյուսիսից հարավ ձգվող գծով: Հուսիսարևու ծայրը միակտրով Կոտորի լեռնաշղթային, հասնում է մինչև Մեծ ու Փոքր Մասիսները:

Տավրոսի լեռները կամ Հայկական Տավրոսը ընկած է Վանա լճից հարավ՝ երկար գծով, արևմուտքում հասնելով մինչև Ծովք կամ Փուչիկ լիճը, արևելքում հասնելով Կոթուզաց լեռներին, մոտենալով Ջագրոշի լեռնաշղթային:

<sup>3</sup> Մոավոսի լեռները գտնվում են Կիսրթեքերից հարավ-արևելք:

Սեւոսը և Արտոսը Հայկական Տավրոսի լեռնագագաթներից են:

Ջաբ կամ Մեծ Ջաբ գետը գտնվում է Հայկական Տավրոսի և Ջագրոշի լեռնաշղթայի միջև:

Փավառ հարավ-այլն Իրանում:

Մոավի լեռները Գանձակի լեռների արևելյան մասն են կազմում և հասնում մինչև Թարթուս գետի ստորին հոսանքը:

Սև ու Կարմիր սարերը Կեղզամա լեռների գագաթներից են:

**Մթնածորում**<sup>1</sup> միշտ թուխայ ու անձրև է լինում: Ժամանակին մի սիրուն աղջիկ է եղել. երբ ծիծաղել է, չորս կողմը վարդեր ու ծաղիկներ են բացվել, երբ լաց է եղել, անձրև է եկել: Դուքը հափշտակում են նրան, տանում Մթնածորի ամենամութ տեղը, ար ոչ արևի լույս է ընկնում, ոչ էլ կենդանի շունչ: Աղջիկը գերության մեջ անընդհատ լալիս է, որից էլ Մթնածորում շարունակ թուխայ ու անձրև է լինում: Իսկ մեկ-մեկ էլ, երբ քնած ժամանակ երազում ծիծաղում է, Մթնածորը պարզվում է, լուսանում:

**Ան լճի**<sup>2</sup> ջրի կեսը ժամանակին եկել խոնել է քառասուն գլխանի մի վիշապ, հետո պտտել, հանգստացել է, որ մյուս կեսն էլ խոնել, ցամաքեցնի լիճը: Աստծո հրամանով սարերը մոտեցել են իրար, վերցրել են լիճը, բարձրացրել, հասցրել են մինչև երկինք և ազատել վիշապից: Վիշապն այլևս չի կարողացել վերև բարձրանալ, ջուր խոնել, ծարավից ճաքճքել է, տրաքել, ցրիվ եկել:

Ան լճում ապրում է նաև մի գեղեցիկ աղջիկ: Երբ արև է լինում, նա դուրս է գալիս ջրի երեսը, խաղում ալիքների հետ: Այս աղջիկը կաշում է լճի մեջ ընկած կենդանիների ոտից, չի թողնում նրանց ջրից դուրս գալ:

**Եփրատ գետը** կին է՝ խոիվ մագերով, քորձեր հագած: Ամեն տարի նա հարյուրավոր մարդիկ է կուլ տալիս: Երբ գալիս է Վարդավառը, Եփրատը նայում է դիմացի ժայռին ու ասում.

— Վարդևորն եկավ, մեկը չեկավ:

**Մեղրագետի**<sup>3</sup> ակունքի տեղը առաջ թոնիր է եղել: Մի օր գյուղի քահանայի կինը հաց է թխում: Գալիս է մի մուրացկան և Քրիստոսի սիրո համար թարմ հաց խնդրում: Երեցկինը հաց է տալիս, մուրացկանը պանիր էլ է խնդրում: Պանիր էլ է տալիս: Մուրացկանը Քրիստոսի սիրո համար համբույր է խնդրում: Երեցկինը դեմքը մոտեցնում է մուրացկանին, համբույր էլ է տալիս: Այդ միջոցին քահանան ներս է մտնում, տեսնում կնոջ և մուրացկանի համբուրվելը, խիստ զայրանում է կնոջ վրա: Կինը արդարանում է, թե մուրացկանը Քրիստոսի սիրո համար հաց խնդրեց՝ տվեցի, պանիր խնդրեց՝ տվեցի, համբույր էլ խնդրեց՝ չկարողացա մերժել:

— Դե որ այդպես է, — ասում է քահանան, — Քրիստոսի սիրո համար քեզ թոնիրը գցիր:

Կինն իսկույն իրեն գցում է բարկ թոնիրը: Վառ թոնիրն անմիջապես լցվում է սևդրահամ ջրով, գետ է դառնում: Երեցկինը ձուկ է դառնում, մնում գետի ակունքի մեջ:



<sup>1</sup> Գտնվում է Հին Կորնոսի վրա, Կոստեր, մեծ

<sup>2</sup> Գտնվում է Կորնոսի վրա, Եջիտ — բնակած սարերի մեջ

<sup>3</sup> Լճի սգետը Արածանի գետի մասնիկներից մեկն է. Եփրատ է անունը Տոբան — գլխարկի (Արևմտյան Հայաստան) Չոխտրի գաղթից:





## Քույսեր

**Մանուշակը** սկզբում եղել է գեղեցիկ, բայց շատ խաբարբզիկ աղջիկ. իրենց տան գաղտնիքները հաղորդել է ուրիշներին, ուրիշներինն էլ՝ տանեցիներին: Մայրը շատ է խրատել աղջկան. բայց աղջիկը մնացել է անուղղելի: Ստիպված անիծել է նրան՝ ասելով.

— Չուլերն ընկնես, լեզուդ ծոծրակիցդ դուրս գա:

Աղջիկն անմիջապես ընկել է դաշտերը, ծաղիկ դարձել:

**Վարդն ու Մանուշակը** քույր ու եղբայր են եղել: Վարդը փշերով միշտ ծակծկել է Մանուշակին. նա էլ ձձել է Վարդի արյունը և քսել իր երեսին: Մայրը տեսնելով, որ քոռջ ու եղբոր կոփվները վերջ չունեն, անիծում է նրանց՝ միմյանցից կարոտ մեռնեն: Այդ օրից Վարդն ու Մանուշակը այլևս իրար երես չեն տեսնում: Ով նրանց փորձի իրար մոտ բերել՝ փափազը անկատար կմեռնի:

**Աղբրանց արյունը** կարմիր, արյունագույն ծաղիկ է:

Քուրդ ավազակները սարերում սպանել են յոթ եղբայրների: Նրանց թափված արյունից բուսել է տխուր ու արնագույն աղբրանց արյունը: Նրա կողքին գրեթե միշտ բուսնում է լալան, որն իր զանգակաձև գլուխը կախած, ողբում է սպանված եղբայրներին:

**Նունուֆարը** բուսել է Սասունցի Գավթի թափված արյան կաթիլներից, երբ դարանակալ թշնամին Մեղրագետում լողանալիս սպանել է նրան:

**Սիրի-սիրի:** Երեք եղբայր սիրահարված են լինում մի աղջկա: Իրար շատ են խանդում ու նախանձում, վերջում երեքն էլ սպանում են իրար:

Այդ երեք եղբոր թափված արյունից գոյանում է եռատերև սիրի-սիրի ծաղիկը:

**Գիհի:** Գրիգոր Նարեկացին մեկի մոտ հոտաղ է լինում: Մի անգամ տան պատավր բարկանալով նրա վրա, անթորցը (թոնրի կրակը խառնելու երկաթ) նետում է նրա հետևից: Նարեկացին վերցնում է անթորցը, տնկում հողի մեջ, ինքն անհայտանում: Անթորցը ծաղկում է, դառնում գիհու ծառ:

**Խաղողի որթ:** Հրեշտակը հյուր է գալիս Աբրահամի<sup>1</sup> տուն: Տանը ուտելու բան չի լինում, Աբրահամը ստիպված մորթում է հորթը: Երեկոյան, երբ կովը նախրից վերադառնում է, բառաչելով փնտրում է հորթին: Չաչնն ընկնում է հրեշտակի ականջը: Նա պատվիրում է Աբրահամին՝ բերել հորթի կաշին ու ոսկորները: Աբրահամը բերում է, բայց հորթի ազդրուկը չի գտնում: Հրեշտակն օրհնում է. հորթն իսկույն կենդանանում է և ոտի կանգնում: Քիչ անց Աբրահամը գտնում է նաև հորթի կորած ոսկորը և բերում հրեշտակի մոտ: Հրեշտակը պատվիրում է Աբրահամին ոսկորը թաղել աչգում: Աբրահամը աչգախ էլ անում է: Մեկ տարի անց հորթի ոսկորից բուսնում է խաղողի որթը:

**Բամբակ:** Աստված մարդուն կավից է պատրաստել: Երբ պատրաստել, վերջացրել է, ձեռները իրար է քսել. կավի մնացորդները թափվել են գետին, և դրանցից էլ գոյացել է բամբակը:

**Լոշտակ**<sup>2</sup>: Մի վարդապետ Լոշտակ անունով ծառայող է ունեցել, որին շատ է տանջել: Մի օր էլ, երբ վարդապետը բնած է լինում, Լոշտակը կանթեղից ձեթ է լցնում նրա մորուքին և կրակ է տալիս: Վարդապետը զարհուրած՝ բնած տեղից վեր է թռչում և տեսնելով Լոշտակին, ասում.

— Գետիկը մտնես:

Լոշտակն իսկույն գետինն է մտնում: Վարդապետը զոջալով իր անեծքի զորությունից, մեղմացնում է խոսքը և ասում.

— Ամենայն հիվանդության դեղ լինես:

Բայց քիչ անց, զգալով այրվածքի ցավը, նորից է անիծում Լոշտակին, ով որ նրան հողից հանի՝ ինքը մտնի նրա տեղը:

<sup>1</sup> Աբրահամ կամ Հայր Աբրահամ՝ Աստվածաշնչում՝ հիս հրեաների նահապետներից մեկը:

<sup>2</sup> Լոշտակը մեծ և բայն տերևներով, երկար ու նասա ձևաչոր արմատներով գեղարուս է, Հայաստանում շատ տարածված: Գրան ասում են նաև «մսկավառ մեղին»:

Այդ է պատճառը, որ մարդիկ լռչտակ հանելիս, շուն են կապում արմատներից և քաշել-հանել են տալիս հողից<sup>1</sup>:

**Զմերուկ:** Գագիկ թագավորի ծառաները պալատի առջև մի օձ են տեսնում, որն անհանգիստ գետնին է քսում իր եղջյուրները: Թագավորն իմանում է այդ և հրամայում կտրել օձի եղջյուրները: Երբ կտրում են եղջյուրները, օձը հանգստանում է և գոհ հեռանում:

Ժամանակ անց օձը կրկին է հայտնվում պալատի մոտ, բերանից մի կորիզ գցում գետնին և անհայտանում: Գագիկ թագավորը խորհուրդ է տալիս կորիզը թաղել հողում և հետևել դրան: Ամռանը այդ կորիզից մի հսկայական կլոր պտուղ է աճում: Թագավորն ու պալատականները չեն համարձակվում այդ անծանոթ պտուղն ուտել: Իրոշում են այն փորձել մի մահամերձ ծերունու վրա: «Գտնուլից մի կտոր են կտրում և տալիս ծերունուն: Ծերունին պտուղն ուտում է թե չէ, անմիջապես կազդուրվում է, երիտասարդանում: Գագիկն ու իր պալատականները ուտում են պտուղի մնացած մասը. իրենք էլ են կազդուրվում և ջահելանում: Այդ օրվանից այդ պտուղի անունը դնում են չմեռուկ (= չմեռցևող), որը հետագայում բերանից բերան անցնելով, դառնում է ձմերուկ:

### Կենդանիներ

**Արջը** ժամանակին ջրադասցպան է եղել: Բայց երբ շատ գողություններ է արել, աստված գալուստել է նրա վրա և արջ դարձրել:

**Գայլ և շուն:** Կենդանիներին ստեղծելիս՝ աստված գայլին հոտառություն է տալիս, իսկ շանը՝ ուժ: Գայլը հարձակվում է գոմեշի վրա, ուզում է նրան պատառոտել, բայց չի կարողանում: Գայլը գնում է աստծո մոտ և հոտառության փոխարեն ուժ խնդրում: Աստված առնում է գայլից հոտառությունը, տալիս է շանը, իսկ շան ուժն էլ տալիս է գայլին:

Սկզբում գայլերը բնակվելիս են եղել մարդկանց մոտ, իսկ շները՝ անտառում: Մի անգամ շները խնդրում են գայլերին, որ թույլ տան իրենք մնան մարդկանց մոտ: Գայլերը խղճում են հիվանդ շներին և թույլ են տալիս մարդկանց մոտ բնակվել: Մարդիկ շներին շատ են դուր գալիս, և շներն այլևս չեն ուզում անտառ վերադառնալ: Մինչև հիմա էլ գայլերը հարցնում են շներին.

— Առողջացմբ, դե՞ վերադարձե՞ք:

Իսկ շները ոռնոցով պատասխանում են, որ իրենք դեռ չեն առողջացել և ուզում են մարդկանց մոտ մնալ:

**Շուն:** Սկզբից աշխարհում հաց չի եղել: Մի օր քաղցած շունը սկսում է անընդհատ ոռնալ և երկինք նայել: Այնքան է ոռնում, որ երկնքից մի հատիկ է ընկնում գետին: Հատիկը ծլում է, աճում, արտը լցնում ցորենով: Շան տերը քաղում է արտը, ծեծում հասկերը, ցորենը աղում: Դրանից հետո աշխարհը հացով է լցվում:

Ժամանակին երկինքը շատ մոտ է եղել երկրին: Մի կին ցորենի հասկով սրբում է երեխայի կեղտը և շարտում երկինք: Դրանից երկինքը խիստ բարկանում է. անիծում ցորենին, որ նա այլևս հասկ չտա: Անեծքը կատարվում է. ցորենը զրկվում է հասկից և մնում է ցցված միայն իր դատարկ ցողունով: Աշխարհում սով է ընկնում: Շներն սկսում են քաղցից ոռնալ ու կաղկանձել, երկնքից հաց խնդրել: Երկինքը խղճում է շներին: Նա պատվիրում է ցորենին՝ իր ցողունի վրա մի փոքրիկ հասկ ունենալ: Հացը նորից է աշխարհ գալիս, բայց մարդիկ շներից խլում են նրանց այդ բաժինը և իրենք ուտում:

-----  
<sup>1</sup> Հայաստանի շատ վայրերում այն հավատալիքը կա. թե հողից հանելիս լռչտակի արմատները այնպիսի ճիչ են արձակում, որ մարդ այդ ճիչը լսելիս՝ մեռնում է: Ուստի լռչտակի կողքերը փորում են, շանը կապում են արմատներից. իրենք բազմակամ մեռնում, որ ճիչը չլսեն: Եվ երբ շունը քաշում հանում է լռչտակն իր արմատներով, հալխաստիացնում են, թե շունն այդ ճիչից աստկում է:

**Կապիկը** ժամանակին մարդ է եղել և զբաղվել է ներկարարությամբ: Նա աշխատելուց առաջ ոչ երեսն է խաչակնքել, ոչ էլ աղոթել: Աստված զայրացել է նրա վրա, անիծել, դարձրել կապիկ: Մինչև հիմա էլ կապիկի եղունգները կապույտ են, որ մնացել է նրա ներկարար եղած ժամանակներից:

**Կատու:** Նոյի<sup>1</sup> տապանում գտնված ժամանակ առուծը հանկարծ փոշոտում է և քթից դուրս է ընկնում կատուն: Դրա համար էլ կատուն շատ նման է առուծի:

**Օձն** առաջ թևեր է ունեցել: Մի օր աստված կանչում է նրան, ասում.

— Թո՛րք գնա, մեռածին ասա՛ պատանդ մաշի, տուն արի:

Օձը թռչում, գնում, ասում է.

— Քարդ մաշի, տուն արի:

Ապա գալիս է աստծո մոտ: Աստված հարցնում է.

— Ասաց՛իր:

Օձը թե՛

— Այո՛, ասացի:

Աստված թե՛

— Ի՛նչ ասացիր:

Օձը թե՛

— Ասացի՛ քարդ մաշի, տուն արի:

Աստված բարկանում է, անիծում օձին, ասում.

— Կերածդ հող լինի, շարժմունքդ էլ՝ փոքսող:

Այդ օրից օձը զրկվում է թևերից, սկսում է փոքսող տալով շարժվել ու հող ուտել:

Օձն ու մարդը առաջ բարեկամ են եղել և հաշտ ու խաղաղ ապրել: Մի օր մարդի տղան կացնով սպանում է օձերի թագավորի գեղեցիկ կնոջը: Դրանից հետո օձերը թշնամանում են մարդկանց հետ և ձգտում են միշտ վրեժխնդիր լինել նրանցից:

Ջրհեղեղի ժամանակ մուկը ապաստան է գտնում Նոյի տապանում, կրծում, ծակում է տապանը: Ջուրը սկսում է ներս լցվել: Նոյը բարկանում է մկան վրա, սա էլ փախչում, թաքնվում է անկյունում: Նոյն առաջարկում է բոլոր կենդանիներին փակել տապանի անցքը, բայց ոչ ոք չի կարողանում: Գալիս է օձը, ոլորվում, տարածվում անցքի վրա, փակում անցքը ջրի հոսքից: Երբ ջրհեղեղն անցնում է, Նոյը առաջարկում է օձին՝ իր կատարած լավ ծառայության համար վարձատրություն ուզել: Օձը հանում է լեզուն, մարդու արյուն պահանջում: Ծիծեռնակը, որ նստած էր Նոյի ոտին, հարձակվում է օձի վրա, կծում լեզուն: Դրանից հետո օձերի լեզուն մեջտեղից մնում է ճեղքված: Օձն էլ հարձակվում է ծիծեռնակի վրա, կծում է նրա պոչը: Այդտեղից էլ ծիծեռնակների պոչը մինչև այժմ երկու մասի բաժանված է մնում: Օձի խայթած տեղից երկու կաթիլ արյուն է ընկնում, մեկը՝ Նոյի վրա, դառնում ոջիլ, մյուսը՝ գետնին, դառնում լու, թռչում:

Օձերի թագավորը ապրում է Մասիսի վրա, գլխին ունի թանկագին թագ: Յոթ տարին մեկ անգամ շրջապատի բոլոր օձերը գալիս են նրան տեսության: Մի անգամ օձերի թագավորը որոշում է իր հրեղեն կառքով զբոսանքի դուրս գալ: Ծանապարհին կառքը դիպչում է մի սարի և նրա կատարը կիսում, բաժանում երկու մասի: Այդ օրվանից այդ ճեղքված կատարով սարը կոչվում է **Օձասար**<sup>2</sup>: Օձասարի վրա են բնակվում յոթ օձ եղբայրներ, որոնք շատ մեծ սիրով կապված են իրար: Եթե նրանցից վեցին անգամ սպանեն, ապա մնացած վերջին օձը կընկնի սպանողի հետևից և անպայման կլուծի եղբայրների վրեժը:

<sup>1</sup> Ըստ աստվածաշնչյան ավանդության՝ համաշխարհային ջրհեղեղից փրկված հերոս, որն իր նավում՝ տապանում, պատասպանում է բոլոր կենդանիներին ու թռչուններին, փրկում խեղդվելուց: Նրա երեք զավակներից (Սև, Քամ, Հարեթ) հետագայում առաջանում են հետջրհեղեղյա մարդկային ցեղերը:

<sup>2</sup> Գտնվում է Հին Նախիջևանի շրջանում:

Օձասարի վրա է ապրում նաև օձերի թագավորը, որի գլխին երկու եղջյուր կա: Ամեն օր կեսօրին, երբ ուժեղ շոգ է լինում, և արևը երկնքից հուր է թափում, օձերի թագավորը հավաքում է իր հպատակ բոլոր օձերին, խմբեր կազմած սարի բարձունքից իջնում ցած՝ աղբյուրի մոտ, ջուր խմում և նորից բարձրանում Օձասար:

Արագած սարի վրա ևս օձեր են ապրում: Երկու տարին մեկ Մասիս սարի օձերը մեծ զորք կազմած կոխվ են մղում Արագած սարի օձերի դեմ:

Մշո դաշտի Դաղոնք կոչված լեռան մոտակայքում գտնվող մի մեծ ժայռի մեջ շատ օձեր են բնակվում: Նրանք ունեն իրենց թագավորն ու թագուհին: Օձերի թագավորը գլխին ունի արեգակի նման վառվռուն թանկագին քար, իսկ թագուհին՝ բոցագույն մազեր: Նրանք ունեն իրենց թիկնապահները, զորքը, զորապետները և երբեմն մեծ բանակ կազմած գնում են Դիարբեքիի հողը, որտեղ նույնպես օձեր են բնակվում՝ իրենց թագավորներով: Դիարբեքիի օձերը, սակայն, ենթակա են և հարկ են վճարում Դաղոնքի օձերի թագավորին: Բայց երբ Դիարբեքիի օձերը սպառնալու են իրենց տիրակալ Դաղոնքի օձերի թագավորի դեմ, վերջինս մեծ զորքով գնում է Դիարբեքի, կոչում տեղական օձերի դեմ, շատերին կոտորում և մեծ ավարով ու գերիներով վերադառնում:

Օձեր կան, որոնք տան պահապաններ են, բնակվում են մարդկանց հետ միևնույն տանը և ոչ միայն մարդկանց չեն վնասում, այլև ապահովում են տան բարիքն ու հաջողությունը:

Մի հարուստ գյուղացի շատ արտեր, ջրաղացներ, անասուններ է ունեցել: Այդ ունեցվածքի և հաջողության պատճառը եղել է մի սև օձ, որ բնակվել է նրա տանը և ազատ շրջել տան բոլոր անկյունները: Գյուղացին ունեցել է նաև մի փոքրիկ միամորիկ տղա: Մի անգամ օձն ու երեխան տանը միասին խաղում են: Տղան բռնում է օձի պոչը և շատ ուժեղ սեղմում: Օձը ցավից գալարվելով, ինչքան ուզում է պոչն ազատել երեխայի ձեռքից, չի հաջողվում: Ճարը կտրած խայթում է տղայի թաթիկը: Տղան բաց է թողնում պոչը, խայթոցից թունավորվում: Օձը հասկանալով իր խայթոցի ծանր հետևանքը, փախչում, կծկվում է տան մի անկյունում: Երեխան օձի թույնից տանջվելով, մահանում է: Գյուղացին որդու մահվան կսկիծից հուսահատ վերցնում է ուրազը, խփում օձին: Ուրազը դիպչում է օձի պոչին, պոչը կտրում: Օձը տանից դուրս է փախչում, գյուղից դուրս է գալիս, գնում մոտակա քարքարոտների մեջ բնակվում: Ժամանակ անց գյուղացու բախտը շուտ է գալիս, անհաջողությունը անհաջողության հետևից է գալիս, աղքատանում է: Մի օր էլ կնոջ հետ խորհուրդ են անում, թե՛ «Գնանք, մեր օձին տուն հրավիրենք, բերենք, որպեսզի մեր բախտը նորից դառնա»:

Գնում են քարերի մեջ, ձայն տալիս օձին, կանչում: Օձը պատասխանում է, ասում.

— Գիտեմ, որ իմ գալը թե՛ ձեզ է հաճելի, թե՛ ինձ, բայց դա անկարելի է: Դուք ինձ նայելիս միշտ պիտի ձեր զավակի մահը հիշեք, ես էլ ձեզ նայելիս՝ իմ կտրած պոչը: Մենք այլևս իրար հետ հաշտ ու խաղաղ չենք կարող ապրել:

Մարդը կարող է կախարդանքով օձ դառնալ, իսկ երբ կախարդանքը վերացվի, նա նորից դառնում է մարդ:





Մի պատալ շատ բարեգութ տղա է ունենում:

Տղան մի քանի անգամ կենդանիներ չարչարող չարամճի տղաների ձեռից, իր դատած վերջին կուպեկները տարով, ազատում է չարչարված կենդանիներին, փրկում նրանց կյանքը: Մի օր էլ տուն վերադառնալիս, տեսնում է՝ գյուղի տղաները մի օձ են բռնել, չարչարում: Մոտենում է, իր դատած փողի մնացորդը տալիս է տղաներին, ազատում օձին, դնում կճուճի մեջ, բերում տուն: Հաջորդ օրը անտառ փսյտի գնալիս, տղան օձին կճուճով տանում է անտառ: Կեսօրին, երբ պաղ աղբյուրի մոտ նստում է հաց ուտելու, հանում է օձին, իր ձեռով մի պատառ հաց է տալիս նրան: Օձը հանկարծ դառնում է մի գեղեցիկ տղա և պատմում, որ ինքը թագավորի տղա է, կախարդներն իրեն գողացել են, օձ դարձրել: Կախարդանքը կվերանար այն դեպքում, եթե մարդ իր ձեռքով հաց տար օձին: Եվ ահա պատալի տղան միանտաքար լուծել է այդ կախարդանքը և օձին մարդ դարձրել:

Մի թագավոր է լինում, որը զավակ չի ունենում: Ինչքան բժիշկներ է բերում, ոչ մի օգուտ չեն կարողանում տալ: Հուսահատությունից իրեն նվիրում է որսորդության: Մի օր տեսնում է, որ օձը փաթաթվել է իր մանրիկ ձագերին, գուրգուրում է: Թագավորը հոգու խորքում ախ է քաշում, զանգատվում աստծուն, թե միթե ինքը մի օձի չափ էլ չկա, որ իր զավակներն ունենա: Ժամանակ անց թագավորին տղա է ծնվում՝ կեսը օձ, կեսը՝ մարդ: Թագավորը հրամայում է, որ այդ Օձամանուկին տանեն, գցեն քաղաքից դուրս գտնվող հորը: Այդպես էլ անում են, բայց բժիշկների և իմաստունների խորհրդով շաքաթը մեկ մի աղջիկ են տանում գցում հորը, որ Օձամանուկն ուտի, մեծանա: Հերթը հասնում է խորթ մայր ունեցող մի աղքատ մարդու աղջկա: Աղջկան երազում խորհուրդ են տալիս իր հետ վերցնել երեք կուժ կաթ, դանակ, փաթաթվել գոմշի կաշվի մեջ և պարանով իջնել հորը: Օձը, երբ ներքևից կանչի, թե՛ «Դուրս եկ գոմշի կաշվից, քեզ ուտեմ», աղջիկը երեք անգամ պետք է ասի. «Դուրս ելիր այդ օձի շապիկից, որ քեզ կաթով լողացնեն»: Օձը դրանից կպատովի: Աղջիկը այդ ժամանակ պետք է դանակով կտրի պարանը, իջնի հորի հատակը, դուրս գա գոմշի կաշվից և տղային կաթով լողացնի:

Աղջիկն այդպես էլ անում է, օձը բարկությունից պատովում է, օձի շապիկից դուրս է գալիս մի սիրուն տղա, որին աղջիկը կաթով լողացնում է: Թագավորը, թագուհին, բոլոր պալատականներն ուրախանում են, աղջկան ու տղային հորից հանում, հարսանիք անում, ամուսնացնում:

**Իշխան ձուկ:** Ժամանակին Ծրոան գետից միայն մի տեսակ սև ձուկ էր դուրս գալիս, որը վնասում էր ուտողին: Այդ կողմերում ապրում էր Իշխան անունով մի մարդ, որը թողել էր իր աշխարհիկ կյանքը, դարձել նգնավոր: Իշխանը փախտից ձուկ է շինում, գցում ջուրը: Ժամանակ անց նույն գետից սկսում է դուրս գալ մի նոր հրաշալի ու համեղ ձուկ, որը ճգնավորի անունով կոչվում է Իշխան:

**Կրիան** առաջ եղել է գող և շատ վարձ առնող ազառ ջրաղացպան: Նա մի աղքատ մարդուց անչափ շատ վարձ է վերցնում, որից զայրացած աղքատը անիծում է նրան, ասում.

— Քեզ տեսնեմ էդ կոկոշը (աղուն կամ ալյուր չափելու դոմե աման) գլխիդ ման գալիս:

Աղքատի անեծքն անմիջապես կատարվում է, ջրաղացպանը դառնում է կրիա, գլխին՝ կոտ:

**Գորտը** առաջ հղի հարս է եղել: Սկեսրաչրը նկատում է, որ հարսն առանց մեկից քաշվելու, վերցնում ուտում է սրտի ուզածը: Նա բարկանում է հարսի վրա, թքում երեսին: Խեղճ հարսը ամոթից խլույն գորտ է դառնում, մտնում ջուրը:

### Թռչուններ

**Բուն** առաջ ծուլ ու անպետք մարդ է եղել և չի կարողացել անգամ իրեն շոր նարել: Մոտիկ մարդիկ մի օր նրան շոր են տալիս և հետները եկեղեցի տանում: Հանկարծ նրանք հարձակվում են ծուլի վրա, հետ վերցնում տված հագուստները և մերկ վիճակով թողնում բազմության մեջ: Ծուլին օգնության են հասնում երկնքի թռչունները: Ամեն մեկը մի-մի փետուր է տալիս նրան, ծածկում մերկությունը, դարձնում բու, թոցնում, տանում իրենց հետ: Սակայն բուն ապերախտ է գտնվում թռչունների նկատմամբ. նա ամեն գիշեր ուտում է նրանցից մեկին: Թռչունները որոշում են՝ նրան տեսնելուն պես, պատմել: Դրա համար էլ բուն փախչում է լույսից, ցերեկները թաքնվում, գիշերներն է միայն դուրս գալիս:

Մի պատաժ եկեղեցուց տուն գալիս, իր Պողոս անունով միանունար որդուն մեռած է գտնում: Ծանր վշտից սկսում է ողբալ, ձեռները գլխին խփել և աստծուն խնդրել, որ իրեն թոչուն դարձնի: Պատավը բու է դառնում և այդ օրվանից ոչ հանգիստ ունի, ոչ քուն, գիշերները շարունակ աղիողորմ կանչում է որդուն՝ Պողոս, Պողոս...

Քույր ու եղբայր մի խորթ մայր են ունենում: Ամեն օր իրենց եզը տանում են արածեցնելու: Մի օր խոսքով են ընկնում, եզը կորցնում: Ծատ են փնտրում, չեն գտնում, վերադառնում են տուն, խորթ մորը պատմում եղածի մասին: Մայրը զայրանում, անիծում է նրանց, տանից դուրս անում, պատվիրում, որ առանց եզի չվերադառնան: Երկար ու զուր որոնումներից հետո քույր ու եղբայր հուսահատված դիմում են աստծուն, թևեր խնդրում: Աստված խղճում է նրանց, թևեր է տալիս, դարձնում բու: Մինչև հիմա էլ խեղճ քույր ու եղբայրը փնտրում են իրենց կորած եզը, ձայն տալիս իրար, հարցնում.

- Սհնկ...
- Հեյ...
- Գտնիր...
- Չէ'...

**Տատրակը** ժամանակին աղջիկ է եղել: Մի անգամ հայրը քաղաքից նրա համար շորացու կտոր է բերում, աղջիկը չի հավանում և շոր չի կարում: Հայրը բարկանում է, անիծում, ասում.

- Որ իմ բերած կտորը չես հավանում, գնն, թող աստված քեզ բմբուլից շորեր տա: Աստծո հրամանով աղջիկն իսկույն տատրակ է դառնում, թոչուն և շարունակ կրկնում.

- Գուքը կու-գու, ամին էկել ա,
- Գուքը կու-գու, ինչ բերել ա.
- Գուքը կու-գու, թոփով շիւն.
- Գուքը կու-գու, էրեսն ինչ ա.
- Գուքը կու-գու, ես ուզում չեմ:

**Կաքավը** սկզբում հարս է եղել: Մի օր խմոր անելիս, սկեսուրը բարկանում է վրան, թե ինչու է խմորը պինդ հունցել: Հարսը հակառակում է սկեսուրին, պնդելով, թե խմորը կակուղ է: Սկեսուրը զայրացած՝ անիծում է հարսին: Հարսն անմիջապես կաքավ է դառնում և մինչև այսօր էլ հակառակում սկեսրոջը, անդադար կրկնում է. «Կակուղ ա, կակուղ ա»:

Խոպոտ ձայն ունեցող թոչունները նախանձում են կաքավներին, գնում են արծվին բողոքում, որ կաքավներն անբան ու անգործ օրնիբուն երգում են և իրենց հանգիստը խանգարում: Արծիվը, որ ինքն էլ երգ չէր սիրում, հրամայում է կաքավներին այլևս չերգել: Կաքավները հնազանդվում են և մնում լուռ ու մուկ: Ժամանակ անց արծիվը զոջում է իր արարքի համար, կաքավներին թույլ է տալիս երգել: Բայց նրանք այլևս երգել չեն կարողանում, միայն «կըղ-կըղա,» են ասում:

Կռապաշտ Սուրեն իշխանի որդին, հոր կամքին հակառակ, քրիստոնեություն է ընդունում և հոր հալածանքներից թաքնվում: Սուրեն իշխանը, երբ էլնում է որդուն փնտրելու, կաքավները մատնում են նրա տեղը: Սուրենը գտնում է որդուն, սպանում: Կաքավները իրենց կտուցներն ու ոտները թաթախում են նահատակված որդու արյան մեջ, և այդ օրվանից նրանք դառնում են կարմրակտուց, կարմրատիկ: Ժամանակ անց նրանք զոջում են իրենց արարքի համար: Եվ երբ Գրիգոր Լուսավորիչը գալիս է, նահատակված տղայի տեղը վանք շինում, կաքավները գալիս են Լուսավորչից ներում խնդրում: Գրիգոր Լուսավորիչը թեպետ նրանց ներում է շնորհում, բայց արյան հետքը մնում է կտուցներին: Դրա համար էլ նրանք ամբողջ օրը իրենց կտուցները քսում են հողին ու քարին, որպեսզի վրայի արյան հետքերը ջնջեն: Բայց արյան հետքը միշտ մնում է նրանց կտուցներին, որպեսզի միշտ հիշեն իրենց կատարած սխալը:

**Ծիծեռնակը** ճարտար ու քաղցրախոս երեխա է եղել: Խորթ մայրը սաստիկ ասել է նրան: Մի անգամ մայրը սուս հիփանդ է ձևանում և ամուսնուց պահանջում, որ կտրի կրեխալի ճկույթը, տա իրեն ուտի, որպեսզի ինքն ստողջամա: Ամուսինը ստիպված կատարում է շար կնոջ կամքը: Երբ կտրում է

տղաչի ճկույթը, տղան մեռնում է: Իսկ երբ կտրած ճկույթը տալիս է կնոջը, որ ուտի, ճկույթը հանկարծ ծիծեռնակ է դառնում, թռչում ու երգում.

Ծիծեռն էմ, հնա, ծիծեռն էմ,  
Հորը մորթած ծիծեռն էմ,  
Մորը կերած ծիծեռն էմ.  
Թռել, ծիծեռնակ էմ դառել:

Մի անգամ խաչթող սողունները հավաքվում են խորհրդի՝ որոշելու համար, թե որ կենդանու արյունն է ամենից քաղցր: Ծատ վիճելուց հետո տեսնում են, որ համաձայնության չեն գալիս, մոծակին են կանչում: Մոծակին պատվիրում են գնալ, բոլոր կենդանիների արյունը համտես անել և գալ, իրենց հայտնել: Մոծակը գնում, խաչթում է բոլոր կենդանիներին և գտնում, որ ամենաքաղցրը մարդու արյունն է: Երբ մոծակը վերադառնում է սողուններին հայտնելու իր եզրակացությունը, ծիծեռնակը հարձակվում է նրա վրա, սպանում:

**Արագիլներն** իրենց երկրում մարդ են, մարդկային կերպարանք ունեն: Չվելու ժամանակ նրանք գալիս են գետափ, լողանում ջրերում, հագնում են թռչունի փետուրներ և ճանապարհ ընկնում մեր երկիրը: Վերադարձի ժամանակ նրանք հավաքվում են մի բարձր սարի վրա, մատաղ անում, լողանում գետում, նորից մարդ դառնում ու գնում են իրենց երկիրը: Արագիլն ամեն տարի խեղդում է իր ձագերից մեկին աստծուն մատաղ անելու համար:

Մի կին լվացվելիս ապարանջանը մոռանում, թողնում է աղբյուրի մոտ: Հետո հիշելով՝ վերադառնում է ապարանջանը վերցնելու, տեսնում է՝ չկա: Ընկնում է երկրից երկիր ապարանջանը փնտրելու: Մի տեղ հանդիպում է վար անող մի գյուղացու: Սա մտերմաբար խոսում է կնոջ հետ, տալիս նրա անունը: Կինը զարմանում է: Պարզվում է, որ վար անող գյուղացին կնոջ բակի ծառին բույն դրած արագիլն է, որ հասնելով իրենց երկիրը, նորից հողագործ է դարձել:

— Մի փնտրիր ապարանջանդ, — ասում է գյուղացին, — ես եմ վերցրել, որ ուրիշները չգողանային. թաքցրել եմ բնիս տակ, հանգիստ կաց:

Երբ գարունը սկսում է բացվել, արագիլների երկրի հողագործները գալիս են գետափ, լողանում, թևեր հագնում, ապարանջանի տեր կնոջն էլ մի զույգ թևեր պարզևում, բոլորն էլ դառնում են արագիլներ, երամ կազմած վերադառնում են մեր երկիրը:

**Կռունկ** սպանելի մեծ մեղք է: Երբ մարդ հրացան առնի ձեռք և նշան բռնի կռունկին, կռունկն իսկույն դառնում է գեղանի հարս՝ ծծկեր երեխան կրծքին:

**Հոպոպը** գեղեցիկ աղջիկ է եղել՝ սիրահարված մի կտրիճ երիտասարդի: Ծնողները, հակառակ աղջկա կամքին, նրան ամուսնացնում են ուրիշի հետ: Հարսնաբաղնիքի ժամանակ աղջիկը հիշում է իր սիրածին և կարոտով ինքն իրեն ասում. «Ա՛խ, երանի թռչուն լինեի, սար ու ձոր ընկնեի, սիրածիս զրտնեի »: Աստված անմիջապես կատարում է նրա բաղձանքը: Աղջիկը դառնում է թռչուն՝ սանրը գլխին, և բաղնիքից դուրս թռչում: Մինչև հիմա էլ նա հառաչելով թռչում է սար ու ձոր, փնտրում սիրածին, կանչում «Իպիպ... կուկո՛ւ...»

Հարսը խմոր հունցելիս գործը կիսատ է թողնում, սկսում մազերը սանրել: Հանկարծ ներս է մտնում կեսուրը, տեսնում հարսը գործը թողած, մազերն է սանրում, ասում է.

— Հո՛, պո՛, պո՛, պո՛, էդ ի՞նչ ես անում:

Հարսը ամոթից ու վախից դառնում է հոպոպ՝ սանրը գլխին, տանից դուրս թռչում: Մինչև հիմա էլ նա կրկնում է սկեսրոջ խոսքերը՝ «Հո՛, պո՛, պո՛, պո՛»:

**Սահակ թռչուն:** Երկու որբեր են լինում՝ քույր ու եղբայր, եղբոր անունը Սահակ է լինում: Մի երեկո Սահակը քրոջ մազերն է սանրում, հանկարծ նրան հափշտակում, տանում են: Քույրը եղբոր կսկիծից խեղդում է աստծուն՝ իրեն հավքի թևեր տալ, որ գնա, եղբորը գտնի: Աստված անմիջապես կատարում է

Անուստոնեք: Քույրը դառնում է թռչուն՝ սանրը գլխին, թռչում լեռներն ու անտառները, ամաչկոտ ու ողբալի ձայնով կանչում եղբորը՝ «Սրհնկ, Սրհնկ, Սրհնկ...»

**Կկուն** հարս է եղել: Մի օր ծառից ճոճք է կապում, երեխային դնում մեջը, գնում քաղհան անելու: Երբ քաղհանից վերադառնում է, երեխային ճոճում չի գտնում: Ցավից ու սկեսրոջ վախից թռչուն է դառնում, «կհու-կհու» կանչելով, փնտրում երեխային:

Խորթ մայրը տղային ու աղջկան ուղարկում է անտառ փայտ բերելու: Անտառում սև օձը խայթում է եղբորը, սպանում: Քույրը շատ է ողբում եղբոր դիակի վրա, հետո ինքն իրեն սառնում. «Եղբորիցս հետո ինչ պիտի անեմ, ավելի լավ է կկու դառնամ, ընկնեմ սարերը»: Խոսքը դեռ չավարտած՝ աստծո հրամանով կկու է դառնում, ընկնում սարերը, «կհու-կհու, պհու-պհու» կանչում:

**Բեբուկ թռչուն:** Բեբուկ անունով մի որբ ու տանջված աղջիկ է եղել, ունեցել է մի եղբայր: Վաղ գարնանը, ձնհալը հազիվ սկսած, երբ տեղ-տեղ սարերում նոր էր ծլում բանջարը, խորթ մայրը ստիպում է քրոջն ու եղբորը, որ ման գան սարերը ու առաջինն իրենք տուն բերեն գարնան նորաբույս բանջարը: Թշվառ որբուկները՝ բոբիկ ու կիսամերկ, ընկնում են սար ու ձոր բանջար հավաքելու: Բեբուկի տոպրակի տակը ծակ է լինում. քույր ու եղբայր ինչքան բանջար են հավաքում, լցնում տոպրակը, տեսնում են՝ տոպրակը դատարկ: Եղբայրը զայրանում է քրոջ վրա, բանջար հանելու բութ դանակը խրում է քրոջ կողը: Տեսնելով, որ քրոջ կողից արյուն է հոսում, սկսում է լալ ու ողբալ, վերցնում է նույն դանակը, խփում իրեն, վիրավորում ու հուսահատ կանչում.

— Բեբուկ, Բեբուկ, Բեբուկ, խղճն եղբորդ, արթնացիր...

Այնքան է աղեկտուր ձայնով քրոջը կանչում, ծնկի գալիս, համբուրում, աղերսում, որ Բեբուկը դառնում է թռչուն, թառում եղբոր ուսին և նրա նման ողբում ու կանչում.

— Բեբուկ, Բեբուկ, Բեբուկ...

Անտառի սուրբ ոգին խղճում է նրանց, եղբորն էլ է թռչուն դարձնում: Այդ օրվանից քույր ու եղբայր սկսում են Բեբուկ կոչվել, թռչում են սար ու ձոր, «Բեբուկ, Բեբուկ» կանչում:

**Հավալասան:** Մի կին իր ամուսնուն շատ-շատ էր սիրում: Ամուսինը գնում է պանդխտություն և այլևս չի վերադառնում: Կինն իր ամբողջ սերը տալիս է իր նորածին որդուն: Մի օր էլ արծիվը օրորոցից հափշտակում, փախցնում է երեխային: Ահավոր վշտից ճնշված, խեղճ կինը դառնում է հավալասան թռչուն: Թռչում է շարունակ, ողբագին կանչում և դադարում է միայն այն ժամանակ, երբ սրտից երեք կաթիլ արյուն է կաթում:

**Կաչաղակը** մարդուն բարեկամ է եղել, հասկացել նրա լեզուն, նրա տանը բնակվել: Նա միշտ բարի լուր է բերել մարդուն: Մի անգամ կաչաղակը միամտորեն երեխայի աչքն է հանում: Մարդը զայրանում է, կաչաղակին տանից դուրս անում: Կաչաղակն ընկնում է սար ու դաշտ, բայց չի մոռանում հին բարեկամությունը: Երբ մի նորություն է իմանում, գալիս նստում է մարդու տան պատին կամ ծառի ճյուղին, կշկշում, մինչև որ մեկը տանից դուրս է գալիս, շնորհակալություն հայտնում բերած լուրի համար: Դրանից հետո նոր միայն կաչաղակը թռչում, գնում է:



Մի անգամ կաշաղակը գալիս նստում է մի պառապի տան կտորին, ավետում նրան, որ որդին վերադառնալու է օտարությունից: Պատավն առանց հասկանալու կաշաղակի բերած բարի լուրը, մի կտոր հաց է նետում նրան: Կաշաղակն իսկույն կտուցն է առնում հացը, տանում, տալիս է պառապի տղային, որը խիստ քաղցած է լինում: Նորից է վերադառնում պառապի մոտ, դարձյալ նույն լուրն ավետում, էլի մի կտոր հաց ստանալով, տանում է պառապի որդուն:

Կաշաղակը նույն բանը մի քանի անգամ էլ է անում, մինչև որ պառապը ձանձրանում է, քար է նետում կաշաղակին: Սա առնում է քարը, տանում զգում պառապի տղայի գլխին, սպանում: Պատավը գալիս է մեռած որդու մոտ և իսկույն ճանաչում իր նետած քարը: Դրանից հետո այլևս քար չեն նետում կաշաղակին, միայն հաց են տալիս ու ասում.

— Բարին՝ մեզ, չարը՝ թշնամուն:

**Չափարժիտ:** Աստված թոշուններին հայտնում է, թե ով որ ամենից շուտ հասնի իր մոտ, թագավոր կնշանակի: Արծիվն իսկույն թևերը բարձրացնում է և թռչում դեպի երկինք, բայց ճանապարհին հոգնելով, նստում է մի տեղ հանգստանալու: Չափարժիտը, որ թաքուն մտել էր արծվի թևի տակ և հանգիստ վեր բարձրացել, այդ ժամանակ դուրս է թռչում արծվի թևի տակից և առաջինն ինքը ներկայանում աստծուն:

— Ինչիւ ես եկել, — հարցնում է աստված այդ փոքր թռչունին:

— Եկել եմ, որ ինձ թռչունների թագավոր կնշանակես, — պատասխանում է չափարժիտը:

— Դե որ այդպես է, — ասում է աստված, — գնա մի ճիպոտ բեր, որ ոչ կարճ լինի, ոչ երկար, ոչ ծուր, ոչ ուղիղ:

Այդ օրից ի վեր փոքրիկ ծիտը չափարների (ցանկապատներ) տակ ճիպոտներ է փնտրում և երբ գտնում է, ասում.

— Չի, չի, էս չի, էն չի...

**Հավ:** Բոլոր թռչունները հավաքվում են և որոշում, որ եթե աստված հաջողի, միասին թռչեն մի տեղ: Հավը վեր է կենում տեղից և ամբարտապան-ամբարտապան ասում.

— Ուզում է աստված հաջողի, ուզում է չհաջողի, միևնույն է, ես թռչելու եմ:

Լուսաբացին բոլոր թռչունները թևերին տալով օդ են բարձրանում: Հավը ինչքան թափահարում է թևերը, չի կարողանում գետնից կտրվել: Այդ օրից մինչև հիմա հավը չի կարողանում թռչել, թեպետ առաջ նա էլ բոլոր թռչունների նման թռչել է իմացել:

**Աքաղաղը** օրվա լույսի ավետաբերն է: Երբ սկսում է լուսանալ, նախ կանչում է երկնային աքաղաղը: Նրա ձայնը լսում է երկրային աքաղաղը, ձայն տալիս, արթնացնում մարդկանց խոր քնից, որը ժամանակավոր մահ է գիտակցվում: Դրա համար էլ աքաղաղը համարվում է «գիշերվա մեռելիարույց», այսինքն՝ քնած մարդկանց հարություն տվող, արթնացնող:

Ամեն առավոտ աքաղաղը տեսնում է, թե ինչպես են բացվում երկնքի դռները. դրա համար էլ արևածագի ժամանակ նա ավելի հաճախ է կանչում: Նա այդ պահին տեսնում է մարդկանց պահապան հրեշտակներին, որոնք մարդկանց քնած ժամանակ երկինք են բարձրանում և լուսադեմին վերադառնում: Նա տեսնում է նաև հոգեատ հրեշտակին և բոլոր չար ոգիներին:

Մոկսում գտնվող Փութկու սուրբ Գևորգի վանքի վանահայրը միշտ աքաղաղ է եղել, որը կատավարել է վանքն ու նրա տնտեսությունը: Առանց այդ աքաղաղի կանչի վանքում իջևանած կարավանները երեք ճանապարհ չեն ընկել: Երբ վախճանվում է այդ աքաղաղը, ժողովուրդը նրա փոխարեն վանահայր է կարգում այն աքաղաղին, որը երազում երևացել է որևէ բարեպաշտ մարդու:

**Թիթեռը** գնում է սատանայի մոտ, նրա աղջկան կին ուզելու: Սատանան ասում է.

— Գնա ինձ համար ճրագ բեր, աղջիկս տամ քեզ:

Թիթեռը գնում է, ճրագի շուրջը պտտվում, ընկնում է ճրագի մեջ, այրվում: Դրա համար էլ թիթեռները շարունակ ճրագի շուրջն են պտտվում:

Մի թագավոր շատ սիրուն աղջիկ է ունենում. երբ աղջկա ամուսնության ժամանակը հասնում է, ձայրն ասում է.


— Զեզ կտամ այն կտրիճին, որը կկարողանա անհանգչելի կրակ բերել:

Ըստ կտրիճներ են գալիս թագավորի պայմանը կատարելու, բայց ոչ ոքի չի հաջողվում անմար ձուր բերել: Գնացողները բոլորն էլ ընկնում են կրակի մեջ, այրվում: Կրակի շուրջը պտտվող թիթեու-ները, որ փարվանա են կոչվում, թագավորի աղջկան ուզող փեսացուներն են:

**Կարիճը** աստված չի ստեղծել: Կարիճները գոյացել են հետագայում՝ դավաճանների և ազգութաց-ների գերեզմաններից: Սրանք մեռնելուց հետո ժառանգություն են թողել կարիճներին, որոնք խայթե-լով ոչնչացնում են մարդկանց:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԱՍՏԿԱԾՆԵՐ ԵՎ ՀԵՐՈՍՆԵՐ





## ԱՍՏՎԱԾՆԵՐ

### Արամազդ

Հին հայերի գերագույն աստվածն էր Արամազդը, երկնքի և երկրի արարիչը, բոլոր աստվածների ձայրը: Նա կոչվում էր «Մեծ և արի Արամազդ», որի գլխավոր սրբավայրը գտնվում էր Հին Հայաստանի գաշտամունքային կենտրոններից մեկում՝ Անի կամախում: Այնտեղ էին գտնվում հայոց Արշակունի թագավորների տոհմական դամբարաններն ու զանձերը:

### Անահիտ

Արամազդի դուստրն էր կամ կինը Անահիտը՝ հայոց ամենասիրելի և պաշտելի դիցուհին: Նա մայր աստվածուհի էր, պատկերվում էր երեխան գրկին՝ հայ մայրերին կամ կանանց հատուկ գլխի հարդանանքով, մինչև ուները իջնող գլխաշորով: Նա կոչվում էր «Մեծ տիկին Անահիտ», բոլոր տեսակ խոհեմությունների ու պարկեշտությունների մայր, մարդկանց բարերար, հայ ժողովրդին պահող ու փառաբանող: Հավատում էին, թե նրա շնորհիվ միշտ եղել է, կա ու գոյություն կունենա Հայոց աշխարհը: Հայ թագավորները որևէ գործ ձեռնարկելիս Մեծ տիկին Անահիտից էին հովանավորություն և առողջություն հայցում: Իբրև մայր աստվածություն Անահիտը մայրության, բերքի և պտղաբերության սրբազան ձարմնացումն էր: Նա Արամազդի և Վահագնի հետ միասին հայկական դիցարանում կազմում էր աստվածային սուրբ երրորդություն:

Հին Հայաստանում լայնորեն սիրված ու տարածված էր Անահիտի պաշտամունքը. Եկեղյաց գաղատում, Տարոնում, Վասպուրականում, Արմավիրում, Արտաշատում կառուցված էին Անահիտի տաճարները: Ամենանշանավորը Եկեղյաց գավառի Երիզա ավանի (հետագայում՝ Երզնկա) Անահիտի տաճարն էր, որին նվիրաբերում էին սպասավորներ ու սպասուհիներ: Մեծահարուստ և նշանավոր ընտանիքները իրենց հասուն դստրերին նվիրում էին այդ տաճարին, որտեղ որոշ ժամանակ ծառայելուց հետո միայն նրանք իրավունք ունեին ամուսնանալու: Անահիտի սրբավայրերին նվիրում էին նաև պիտակավոր (ճակատին սպիտակ նշան ունեցող) երիցներ, որոնք նախիրներով արածում էին նրա տաճարների շուրջը:

Երիզա ավանի տաճարում էր դրված Անահիտի ոսկեծուլ արձանը, որի համար էլ Անահիտին կոչում էին **Ոսկեծղի** (ոսկեբազուկ), **Ոսկեհատ**, **Ոսկեծին-Ոսկեմայր**: Նրա արձանին ծառերի թափ ու թարմ շուղերից հյուսված պսակներ էին դնում: Այդ ոսկեծուլ արձանն այնքան մեծ էր, որ երբ հոռմեացի գորավար Մարկոս Անտոնիոսը մեր թվականությունից առաջ 34 թ. իր պարթևական արշավանքի ժամանակ մտնում է Երիզա ավանը, նրա զինվորները ջարդում են Անահիտի ոսկեծուլ արձանը, կտոր-կտոր անելով, բաժանում իրար մեջ և տանում Հոմ: Այդ ավարին մասնակցած հոռմեացի մի զինվոր ճոխ ճաշկերույթ է կազմակերպում Օգոստոս կայսեր պատվին: Երբ կայսրը հարցնում է Անահիտի արձանի մասին, զինվորը պատասխանում է, թե ինքն է եղել առաջինը արձանի վրա հարձակվողներից, և այդ ճաշկերույթի ծախսը հոգացել է Անահիտի արձանի սրունքի մի կտոր ոսկով:



## Վահագն

Հայոց դիցարանի երրորդ աստվածն էր Վիշապաբաղ Վահագնը, մի վառվուռն ու խարույաչ պատանհի՝ հրեղեն մազերով, բոցավառ մորուքով և արեգակնափայլ աչքերով: Նա ծնվում է տիեզերքի բուն երկունքի ժամանակ, երբ նրա երեք բաղկացուցիչ մասերը՝ երկինքը, երկիրն ու ծովը բռնվում են երկունքի ցավերով: Եվ երկունքից շառագունած ծիրանի ծովի մեջ վառվող եղեգնի ծուխ ու բոց արձակող փողից վազելով ելնում է պատանհի Վահագնը:

Երկնում էր երկինքը, երկնում էր երկիրը,  
Երկնում էր և ծիրանի ծովը.  
Երկունքն էր բռնել ծովում նաև կարմիր եղեգնիկն.

Եղեգան փողից ծուխ էր ելնում,  
Եղեգան փողից բոց էր ելնում,  
Եվ բոցից դուրս էր վազում մի խարույաչ պատանեկիկ.

Նա հուր մազեր ուներ,  
Ուներ բոցեղեն մորուք,  
Եվ աչքերն էին արեգակներ՝:

Նա ծնվելուն պես կովի և բռնվում սև ու ամենի վիշապների դեմ, սպանում նրանց, ազատում տիեզերքը կործանման սպառնալիքից:

Վահագնը հայերի ամպրոպի ու կայծակի աստվածն էր, որից թագավորներն ու գորավարները քաջություն էին աղերսում:

Վահագնի գլխավոր պաշտամունքատեղին և սրբավայրը գրանցվում էր Տարոնի Աշտիշատում՝ Հին Հայաստանի հոգևոր կենտրոնում:

Վահագնին հետագայում ժողովուրդը մարդեղենացրել է և դարձրել իր սիրած ու մեծարած Տիգրան Մեծ թագավորի երրորդ զավակը:

<sup>1</sup> Ստորի տրվում է Վահագնի ծննդյան երգի միև մասերն բնագիրը.

«Երկն, ք երկին, երկն, ք երկիր,

Երկն, ք և ծովն ծիրանի,

Երկն ի ծովուն ուներ և գերարթին եղեգնիկ.

Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,

Ընդ եղեգան փող բոց ելաներ,

Եւ ի բոցուն վազէր խարույաչ պատանեկիկ.

Նա հուր ներ ուներ,

Բոց ուներ մորուս,

Եւ աչքունքն էին արեգակունք»:

## Աստղիկ

Վահագնի տարիածուն էր Աստղիկ դիցունի՜ն՝ հաչոց սիրո և ջրի աստվածուհին, որի պաշտամունքը կապված էր Արուսյակ (Վեներա) մոլորակի հետ: Աշտիշատում գտնվող նրա տաճարը կոչվում էր «Վահագնի սենյակ», ուր Աստղիկը հանդիպում էր իր սիրած Վահագնին: Աստղիկի և Վահագնի ամուսնությունը համարվում էր սրբազան. այդ ամուսնության հետևանքով անձրև էր տեղում երկրի վրա, ծաղկեցնում երկիրը, բերք ու բարիք տալիս մարդկանց:

Աստղիկին պատկերում էին մերկ, չքնաղ գեղեցկուհու տեսքով, հաճախ՝ լողանալիս: Նա ամեն գիշեր լողանում էր Եփրատ գետում: Նրա սիրով տարված երիտասարդ տղաները Տարոնի Դաղոնաց սարի վրա գիշերները խարույկներ էին վառում, որպեսզի դրանց լույսի տակ կարողանան տեսնել Եփրատում լողացող դիցունի՜ն, հիանալ նրա չքնաղ գեղեցկությամբ: Բայց Աստղիկը ամեն գիշեր Տարոնի դաշտը մշուշով էր պատում, որպեսզի իրեն ոչ մի օտար աչք չկարողանա տեսնել:

Ուշ շրջանի մեկ այլ առասպելով՝ Աստղիկը Նոյի (Բսիստօթիոս) դուստրն է: Ջրհեղեղից և Նոյի Հայաստան նավարկելուց հետո, աշխարհի տիրակալներն են դառնում Նոյի երեք զավակները՝ Ջրվանը, Տիտանը և Հաբեթոսթեն՝: Երբ նրանք ամբողջ աշխարհը բաժանում են իրար միջև, Ջրվանը բռնանում է մյուս եղբայրների վրա և կամենում է նրանց երկրներում իր որդիներին թագավորեցնել: Տիտանն ու Հաբեթոսթեն ըմբոստանում են ավագ եղբոր՝ Ջրվանի դեմ և պատերազմի մեջ մտնում նրա հետ: Տիտանը հափշտակում է Ջրվանի երկրների մի մասը: Այս խռովություններին միջամտում է նրանց քույր. Աստղիկը, խնդրելով եղբայրներին դադարեցնել կռիվները: Տիտանն ու Հաբեթոսթեն համաձայնում են, որ առայժմ իրենց վրա թագավորի ավագ եղբայր Ջրվանը, միայն մեկ պայմանով, որ նրանից ծնվելիք բոլոր արու զավակներին սպանեն, որպեսզի հետագայում Ջրվանի թագավորությունն իրենց վրա սերնդից սերունդ հավերժական չլինի: Համաձայնում են, դաշինք կնքում: Տիտանն ու Հաբեթոսթեն իրենց հզոր մարդկանցից վերահսկիչներ են նշանակում Ջրվանի բոլոր կանանց ծննդաբերության վրա:



Մ. Խորենացին հայտնողելով այս գրույցը, գտնում է, որ Ջրվանը, Տիտանը և Հաբեթոսթեն Աստվածաշնչում հիշատակված Նոյի երեք որդիների Սեմի, Բամի և Հաբեթի անունների փոխակերպված ձևերն են: Ջրվանը պարսից գրադարձության կրոնում ժամանակի աստվածն էր, որից ծնվում են բարի Օրսիզդն ու չար Ահրիմանը: Տիտանները հունական դիցարանության մեջ Սրակոս-Երկնի և Գեա-Երկրի ամուսնությունից ծնված անեղ հսկաներ էին, որոնք հետագայում կոլեցին Զևսի և մյուս աստվածների դեմ:

Եվ երբ Զրվանի նորածին արու զավակներից երկուսին սպանում են, Աստղիկը խղճահարվում է և Զրվանի կանանց հետ միասին հասնոգում մի քանի տիտանների՝ Զրվանի մյուս տղաներին կենդանի թողնել և ուղարկել արևմուտք, այն լեռը, որ կոչվում է Օլիմպոս կամ հայերեն՝ Դյուցընկեց (այսինքն՝ աստվածների ընկնելու տեղ):

Աստղիկը Տարոնի կողմերում շինել է տալիս Աստղնաբերդ (համառոտված՝ Ասղնբերդ) ամրոցը իր Զրվան եղբոր ապահովության համար: Այն հետագայում կոչվեց նաև Մոկաց բերդ:

Բացի Աշտիշատից, Աստղիկին նվիրված տաճարներ կային Վանա լճի մոտակայքում գտնվող Արտամետ ավանում, Անձևացիք կոչված գավառում, Արտաշատում և այլ տեղերում: Աստղիկին նվիրում էին վարդեր և աղավնիներ, որոնք սուրբ էին համարվում: Վարդեր նվիրելու սովորությունից էլ ըստ երևույթին առաջացել է Աստղիկի «Վարդամատն» (վարդե մատներ ունեցող) մականունը:

Աստղիկի տոնը կատարում էին ամսուվա կեսերին, համաժողովրդական մեծ հանդիսություններով ու արարողություններով: Այդ տոնը կոչվում էր վարդավառ, որ մինչև այժմ էլ կատարվում է ժողովրդի մեջ: Այդ տոնակատարության ժամանակ Աստղիկին վարդեր էին նվիրում, աղավնիներ թոցնում, իրար վրա ջուր էին ցողում, ուրախանում:

### Նանե

Հին հայերի հաջորդ դիցուհին Նանեն է՝ Արամազդի դուստրը, հավանաբար ուազմի աստվածուհի, որի պաշտամունքը սերտորեն կապված էր մայր դիցուհու՝ Անահիտի պաշտամունքին: Եվ պատահական չէր, որ Նանեի հարուստ տաճարը գտնվում էր Եկեղյաց գավառի Թիլ ավանում, Անահիտի տաճարի մոտակայքում: Ժողովրդի մեջ մինչև այժմ էլ մեծ մորը, այսինքն՝ տատին, նանե են կոչում, մի բան, որ վկայում է Նանե դիցուհու մայր աստվածության հետ ունեցած կապի և ժողովրդական խավերում նրա անվան ու պաշտամունքի լայն տարածվածության մասին:

### Միհր

Երկնային լույսի և արեգակի աստվածն էր լուսաճաճանչ Միհրը՝ Արամազդի մյուս որդին, Անահիտի և Նանեի եղբայրը: Նրա գլխավոր տաճարը գտնվում էր Դերջան գավառի Բազահատիճ գյուղում: Միհրին էր նվիրված նաև Գառնիի հեթանոսական տաճարը:

Միհրի պաշտամունքը լայն տարածում ուներ հին Հայաստանում: Հին հայկական օրացույցի յուրաքանչյուր ամսի 8-րդ օրը կոչվում էր նրա անունով՝ Միհր, իսկ յոթերորդ ամիսը, որ համապատասխանում է այժմյան փետրվար ամսին, դարձյալ կոչվում էր նրա անունով՝ Մեհեկան: Միհրի անունից են ծագում նաև հին հայոց հեթանոսական սրբավայրերի ընդհանուր կոչումը՝ մեհյան:

Միհրի անունն ու արարքների հիշատակը որոշ ձևափոխումներով պահպանվել են «Սասնա ծռեր» հերոսավեպում, հանձին Մեծ և Փոքր Մհերի անունների և վեպերի:

Ըստ «Սասնա ծռերի»՝ Մեծ Մհերը ծովածին Սանասարի որդին է: Նա տակավին 15 տարեկան պատանի էր, երբ Սասունում սով ու թանկություն է ընկնում: Պարզվում է, որ Սասնա լեռներում մի ամեհի աղյուծ է լույս ընկել, փակել Սասուն տանող բոլոր ճանապարհները, անցնող-դարձողներին հոշոտում է, չի թողնում հաց կամ որևէ ապրանք մտնի Սասուն:

Մհերն իմանալով հացի պակասության և թանկության պատճառը, հաջորդ իսկ օրը գնում է առյուծի դեմ կռվելու: Առյուծը որ տեսնում է Մհերին, զազազած գալիս է ընդառաջ, պոչը գետին է խփում, փոշու ամպեր բարձրացնում: Մհերը, երբ ուղեկիցներից իմանում է, որ եկողը աղյուծն է, անգե՛ն գնում է նրա դեմ, գոտեմարտի է բռնվում աղյուծի հետ, կանչում իր պապե՛նական երդումը՝ «Հացն ու գինին, տեր կենդանին», մի ձեռք գցում է աղյուծի վերին ծնոտից, մյուսը՝ ներքինից, քաշում ճղում է աղյուծին, անում երկու կես, կեսը դնում ճամփի մի կողմը, մյուս կեսը՝ մյուս կողմը, վերադառնում Սասուն: Այդ օրվանից նրան կոչում են Աղյուծաձև՝ Մհեր:

<sup>1</sup> Աղյուծաձև մակդիրը հասկացվում է երկու իմաստով. աղյուծ ձևող, ճղող և աղյուծի ձև, աղյուծի կերպարանք ունեցող:

«Սասնա ծռերի» այն պատումներում, ուր պատմվում է Մեծ Մհերի աղյուծ սպանելու՝ ձեռքերով երկու կես անելու, ճղելու

Մեծ Մհերին խորհուրդ են տալիս գնալ Աղջաղլա Յալերի թագավորի աղջկան՝ Արմաղանին ուզելու: Երբ Մհերը գնում է այդ թագավորի քաղաքը, տեսնում է՝ բոլոր քաղաքացիք սև են հագել և լաց են լինում: Մհերը հարցնում է սգո պատճառը: Պարզվում է, որ քաղաքի մոտ գտնվող սարի քարանձավում, որտեղից քաղաքի ջուրն է գալիս, վիշապ է մտել, փակել աղբյուրի ակը և կտրել ջուրը: Ամեն անգամ, որպեսզի մի քիչ ջուր տա՝ վիշապը մի աղջիկ է ուզում: Յոթ օր է, ինչ քաղաքը ծարավ է: Այդ օրը թագավորի աղջկա հերթն է, նրան պետք է տան վիշապին, դրա համար էլ քաղաքը սուգ է մտել: Մհերը գնում է այդ քարանձավը և պատվիրում քաղաքացիներին՝ թագավորի աղջկան բերել այնտեղ: Մհերը գնում, կանգնում է քարանձավի մոտ. այնտեղ են բերում սև հագած թագավորի աղջկան: Երբ վիշապը տեսնում է աղջկան, դուրս է սողում քարանձավից, որպեսզի աղջկան կուլ տա: Մհերը քաշում է թուրը, վիշապի յոթ գլուխն էլ թոցնում, գլուխներից թանձր կրակ ու ծուխ է բարձրանում: Մհերը սպանված վիշապին քարայրից գլորում է ցած, անմիջապես քարայրից պղտոր արնաջուր է հորդում ներքև, ապա աստիճանաբար սկսում է զուլավել: Մարդիկ ուրախությունից իրենց ջուրն են նետում, խմում, զվարճանում:



Թագավորի դուստրը արնաջուր գալու պահին ձեռքը թաթախում է արյան մեջ, խփում Մհերի մեջքին, վերադառնում պալատ: Թագավորը աղջկան տեսնելով, շատ է ուրախանում, հարցնում է, թե ինչպես է ազատվել, հվ է ազատել: Աղջիկը ոչինչ չի պատասխանում: Թագավորը կարգադրում է գտնել վիշապ սպանողին, բերել, խոստանալով աղջկան նրան տալ կնություն:

Շատերն են գալիս ներկայանում թագավորին, ասելով, որ իրենք են վիշապին սպանել: Արմաղանը բոլորին հետ է դարձնում, բացահայտում նրանց սուտը: Գալիս է Մհերը: Թագավորը հարցնում է.

— Դո՞ւ ես իմ աղջկան ազատել:

— Ես եմ ազատել, — ասում է Մհերը, — իմ սրով վիշապի յոթ գլուխներն են թոցել:

Թագավորը նրան էլ չի հավատում: Երբ Մհերը շրջվում է գնալու, Արմաղանը նկատում է նրա մեջքին դրոշմված իր ձեռքի արյունահետքը, մոտենում է Մհերին, բռնում թևից, ներկայացնում հորը:

— Հնչյր թագավոր, այս տղան ինձ ազատեց, ես պետք է նրա հետ ամուսնանամ:



մափն, վիպասացները Առյուծաձև մակդիրը առաջին իմաստով են հասկացել, իբրև առյուծ ձևող: Բայց կան պատումներ էլ, որ առյուծ սպանելու մոտիվը չկա, բայց Մհերը կոչվում է Առյուծ Մհեր: Նախնականը, ըստ երկվայթին, եղել է մակդիրի երկրորդ իմաստը՝ առյուծի ձև, առյուծի կերպարանք ունեցող, որովհետև Միթրա-Միհր աստծուն պատկերող հին հռոմեական մի շարք քանդակներում Միհրը (Միթրա) պատկերված է առյուծի գլխով և մարդու մարմնով: Այստեղից էլ՝ «Սասնա ծռերի» որոշ պատումներում պահպանված Առյուծ Մհեր անվանումը:

Հայրն ուրախանում է, Արմաղանին տալիս է Մհերին, Մհերն առնում է Արմաղանին, բերում Սասուն:

Մեկ ուրիշ պատումով Արմաղանին Սպիտակ դևն է փախցնում, տանում իր բնակարանը, որը գտնվում է ջուր բխող մի սարի գագաթին: Մհերը հարցուփորձով գտնում է դևի բնակատեղին, քնած դևին արթնացնում է, հետը մենամարտում, սպանում Սպիտակ դևին, Արմաղանին ազատում, բերում Սասուն, հետն ամուսնանում:

Փոքր Մհերը Մեծ Մհերի թոռն է, Դավթի որդին. երբ ծնվում է մորից, մի ձեռք փակ է լինում, որքան չարչարվում են, չեն կարողանում բացել: Կանչում են հորը՝ Դավթին, կամ Քեռի Թորոսին, որը շփելով կամ աղոթելով, բացում է Մհերի բուռը, բռան մեջ՝ մի գունդ լերդացած արյուն: Գուշակում են, որ Մհերը աշխարհը մի գունդ արյուն է շինել ու առել բոլ մեջ:

Մի շարք պատումներով Դավիթը օտարության մեջ է լինում, երբ ծնվում է Փոքր Մհերը: Մեծանում է, դառնում պատանի, հարցուփորձով մորից՝ Խանդութից, իմանում է հոր մասին: Ուզում է գնալ հորը փնտրելու: Մայրը, իբրև նշան, Մհերի բազկին է կապում Դավթի տված ապարանջանը: Մհերը ճանապարհին հանդիպում է հորը, իրար չեն ճանաչում և սկսում են մենամարտել: Մեծ դժվարությամբ Դավթին հաջողվում է մի կերպ հաղթել պատանի Մհերին (կամ, ընդհակառակը, Մհերն է հաղթում) և երբ գետին դնելով՝ կամենում է սպանել, տեսնում է իր տված ապարանջանը: Ծանաչում են իրար, հաշտվում:

Որոշ պատումներով՝ մայրը՝ Խանդութը, լսելով հոր և որդու մենամարտի շոկնը, գալիս է միջամտելու, բայց կովից տաքացած հարազատները չեն լսում Խանդութի աղերսանքը: Խանդութն ստիպված դիմում է աստծո միջամտությանը: Երկնքից իջնում է Գաբրիել հրեշտակը, միջամտում կովին, հորն ու որդուն բաժանում իրարից: Դավիթը այդ կովից զայրացած՝ անիծում է Մհերին, որ նա անմահ ու անժառանգ մնա: Հոր անեծքը կատարվում է. Մհերը մնում է անմահ և անժառանգ:

Իր երկար թափառումների ընթացքում Փոքր Մհերը կոչվում է Սասնա թշնամիների, դևերի, կուպաշտների դեմ, բոլորին հաղթում: Վերջում ծերացած ու անարդար հողը այլևս չի դիմանում անմահ ու անժառանգ Մհերի ոտքերի տակ, ոտքերը խրվում են հողի մեջ, տանջում: Հուսահատված, հայրենի տնից հալածված Մհերը օգնություն է հայցում մեռած ծնողների գերեզմաններից: Ծնողները խորհուրդ են տալիս գնալ Հալեպ կամ Ագոսվաքար, այնտեղ պատուպարվել: Մհերը ճանապարհին դիմում է աստծոն, կոիվ խնդրում: Աստված ուղարկում է իր յոթ դաս հրեշտակներին Մհերի դեմ կովի: Մհերը կոչվում է, բայց չի կարողանում հրեշտակներին հաղթել: Աստծո հրամանով Վանի մոտ գտնվող Ագոսվաքար ժայռը բացվում է, Մհերը ձիով մտնում է ժայռի մեջ, փակվում: Մհերը ժայռից դուրս կգա այն ժամանակ, երբ հին աշխարհը քանդվի և մեկ էլ շինվի, երբ անարդարությունը աշխարհից վերանա, բարիքների առատություն լինի՝ գարին դառնա ընկույզի չափ, ցորենը՝ մասուրի, երբ հողը դառնա արդար, դիմանա նրա ոտների տակ:

## Տիր

Հին հայերի իմաստությունների, ուսման, գիտության աստվածն էր Տիրը՝ Արամազդ գերագույն աստծո գրիչը կամ քարտուղարը, որի պաշտամունքատեղին գտնվում էր հին Արտաշատի մոտակայքում և կոչվում էր Արամազդի գրչի դիվան կամ գիտությունների ուսուցման մեհյան: Այսօրվա լեզվով ասած՝ դա Արամազդ աստծո քարտուղարի, այսինքն՝ Տիր աստծո գրասենյակն էր, որը միաժամանակ գիտությունների ուսուցման տեղ էր, որտեղ հեթանոսական կրոնի պաշտոնակատար քրմերը գիտություն և իմաստություն էին սովորում: Քրմական գիտությունների կամ իմաստությունների մեջ էր մտնում ամենից առաջ գուշակությունը, հատկապես երազների մեկնությունը, երազահանությունը: Դրա համար էլ Տիր աստվածը կոչվում էր նաև երազացույց ու երազահան, այսինքն՝ քրմերը նրանից սովորում էին երազների գուշակության արվեստը, իսկ Տիրի պաշտամունքի վայրը հին հայերը կոչում էին «Երազամոյն տեղիք» (երազալից կամ երազառատ տեղեր): Այստեղ ուխտ եկողները քրմերի միջոցով Տիր աստծոց առանում էին իրենց տեսած երազների գուշակությունը:

## Ամանոր և Վանատուր\*

Հայերի համաժողովրդական սիրո ու ճանաչման արժանացած աստվածներն էին Ամանորը և Վանատուրը: Ամանորը, որ հին հայերենում նշանակում է նոր տարի, հին հայերի նոր տարին անձնավորող աստվածն էր և համարվում էր «նոր պտուղների ամենաբեր»: Նրա տոնն ու պաշտամունքը կատարվում էր հայոց նոր տարվա օրերին՝ Նավասարդին, որ հայոց հին տոմարով համընկնում էր հուլիսի վերջերին և օգոստոսի սկզբներին, տարվա այն ամիսներին, երբ հասունանում էին նոր մրգերն ու պտուղները: Նավասարդյան տոնախմբությունները համաժողովրդական մեծ շուքով ու ցնծությամբ կատարվում էին հատկապես հայոց հին հոգևոր կենտրոններից մեկում՝ Բագրևանդ գավառի դաշտավայրում գտնվող Բագավանում, որ նշանակում է դիցավան կամ աստվածավան: Այս ավանում էր գտնվում նոր տարվա աստվածների՝ Ամանորի և հյուրընկալ Վանատուրի պաշտամունքատեղին: Եթե Ամանորը խորհրդանշում էր նոր տարին ու նրա բերած նոր պտուղները, ապա Վանատուրը, որ բառացի նշանակում է օթևան տվող, հյուրընկալ, խորհրդանշում է Նավասարդին և այլ օրերի Բագավան այցելած բազմահազար հյուրերին և ուխտավորներին հյուրընկալելու, տեղ ու օթևան տալու իրողությունը: Հայոց Տիգրան վերջին թագավորը Բագավանում իր եղբոր՝ Մաժան քրմապետի գերեզմանի վրա սրբավայր է շինում, որպեսզի բոլոր անցորդները վայելեն այդտեղ զոհաբերվող կենդանիների միսն ու խմիչքը, միաժամանակ նույն տեղում գիշերեն և հյուրընկալվեն:

## Սպանդարամետ

Հին հայերի ստորերկրյա թագավորության աստվածն էր Սպանդարամետը կամ Սանդարամետը, որ հանախ նույնանուն էր ստորգետնյա աշխարհի, մեռելների թագավորության կամ ուղղակի դժոխքի հետ:

Նույն Սպանդարամետին նույնացրել են այգիների և գինու հովանավոր հանդիսացող հունական Դիոնիսիոսի կամ Բաքոսի հետ, հետագայում նա համարվել է երկրի, անդունդների, դժոխքի տիրակալ՝ Սանդարամետապետ: Երբեմն հոգնակի «Սանդարամետք անդնդոց» ձևով հասկացել են ն դժոխքի անդունդները, ն դժոխքի չար ոգիները:

\* Կարծիքներ կան, որ Վանատուրն ու Ամանորը մեկ աստված են, Վանատուրը Ամանոր աստծո մակդիրն է և նշանակում է օթևան տվող, հյուրընկալ Ամանոր: Կամ էլ, կարծում են, Վանատուրը հյուրընկալ Արամազդ աստծո մակդիրն է:



## ՀԵՐՈՍՆԵՐ

### Հայկ դյուցազն\*

Ահեղ և երևելի էին առաջին աստվածները, որոնք ստեղծեցին աշխարհն ու մարդկությունը, միաժամանակ և աշխարհի մեծամեծ բարիքները: Այդ աստվածներից են սերում հսկաների սերունդը՝ վիթխարի ու հաղթանդամ դյուցազուններ, որոնք ամբարտապանանալով և ըմբոստանալով, վճռում են կառուցել Բաբելոնի հսկա աշտարակը, հասնելու երկինք՝ աստվածներին: Երբ կառուցում են աշտարակը, աստվածների ցասումից վիթխարի հողմ է բարձրանում, կործանում՝ աշտարակը: Միաժամանակ աստվածների կամքով, չորաքանջյուր մարդ և հսկա մյուսներին անհասկանալի մի նոր լեզվով է սկսում խոսել, որի հետևանքով մեծ խառնաշփոթություն և իրարանցում է ընկնում նրանց մեջ:

Այդ հսկաներից մեկն էր նաև Հաբեթոսթյան<sup>1</sup> Հայկը՝ մի անվանի և քաջ նախարար, վիթխարի աղեղնավոր և կորովի նետաձիգ:

Հայկը վայելչակազմ էր, թիկնեղ, հաստաբազուկ, գանգրահեր, գեղեցիկ վառվռուն աչքերով: Նա միակը, եղավ հսկաների մեջ, որ քաջաբար ըմբոստացավ բոլոր նրանց դեմ, ովքեր ձեռք էին բարձրացնում մյուս հսկաների ու դյուցազունների դեմ և կամենում էին նրանց վրա գերիշխել: Այդ այն ժամանակ էր, երբ բաբելոնյան խառնաշփոթության հետևանքով մարդկային ցեղը ցրվել ու սփռվել էր ամբողջ երկրով մեկ՝ բազմամբոխ, հզոր ու դաժան հսկաների մեջ, և չորաքանջյուրը մոլի կատաղությամբ սուրը իր ընկերոջ կողմ էր խրում իշխելու համար: Եվ հսկաներից մեկին՝ Տիտանյան Բելին, պատահաբար հաջողվում է բռնանալ մյուսների վրա, ամբողջ երկիրն ու մարդկային ցեղը իրեն ենթարկել և իրեն հռչակել թագավոր և աստված:

Հայկը ըմբոստանում է Բելի դեմ, չի հնազանդվում նրան և արհամարհանքով հրաժարվում է նրան աստված կոչել: Այնժամ Բելը կովով հարձակվում է Հայկի վրա, բայց արի Հայկը հսկա աղեղով հալածում է նրան:

Այդ ընթացքում Բաբելոնում ծնվում են Հայկի որդիներն ու դուստրերը, թոռներն ու ծոռները:

Հայկի անդրանիկ որդին էր Արամանյակը կամ Արամենակը, սրա անդրանիկ որդին էր Արամայիսը, սրա անդրանիկը՝ Ամասիան, սրանը՝ Գեղամը, Գեղամի անդրանիկը՝ Հարման, Հարմայինը՝ Արամը, իսկ Արամի անդրանիկ որդին՝ Արա Գեղեցիկը:

Հայկը չկամենալով հնազանդվել Բելին, իր ամբողջ գերդաստանով, թվով մոտ երեք հարյուր հոգի, բոլորն էլ զորավոր մարդիկ, իր բոլոր ծառաներով ու աղախիններով և իրեն հարած եկվորներով գաղթում է Բաբելոնից դեպի հյուսիս՝ Արարադի երկիրը<sup>2</sup>:

\* Ծարադրված է ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» և Սեբեոսի «Պատմություն» գրքերի:

<sup>1</sup> Ըստ հին պատմիչների (Խորենացի, Սեբեոս) Հայկը սերում է Նոյի (Քսիսություն) երրորդ որդուց՝ Հապեթոսթեից կամ Հաբեթից: Այստեղից էլ Հաբեթոսթյան ազգանունը:

<sup>2</sup> Արարադի երկիր էր կոչվում Միջագետքից դեպի հյուսիս ընկած երկրամասը, որ ասորաբաբելոնյան աղբյուրներում կոչվում է նաև Ուրարտու, այսինքն՝ Հայաստանի արևմտահարավային մասը, Վանա լճից դեպի հարավ:

Հայկն այստեղ սկզբում բնակվում է մի լեռան ստորոտում գտնվող դաշտավայրում, որտեղ ապրում էին իրենից առաջ այդտեղ եկած սակավաթիվ մարդիկ: Հայկը նրանց իրեն հնազանդեցնելով, այստեղ կալվածքներով բնակատեղի է շինում և ժառանգություն տալիս թոռանը՝ Արամանյակի որդի Կաղմոսին: Իսկ ինքը իր մնացած մարդկանցով ու գերդաստանով շարժվում է դեպի հյուսիս-արևմուտք, գալիս հաստատվում է մի բարձրավանդակ դաշտում և այդ լեռնադաշտը կոչում է Հարք<sup>1</sup>, այսինքն՝ այդտեղ բնակվողները հայրեր են, Թորգոմի տան սերնդից: Հայկն այստեղ շինում է մի գյուղ և կոչում իր անունով՝ Հայկաշեն: Դաշտի հարավային կողմում՝ մի երկայնանիստ լեռան մոտ, դարձյալ նախապես բնակվելիս են եղել սակավաթիվ մարդիկ, որոնք հոժարակամ ենթարկվում են դյուցազնին:

Իսկ այդ ժամանակ Բաբելոնում թագավորում էր հսկա որսորդ Տիտանյան Բելը, որն իրեն էր հնազանդեցրել ամբողջ երկրում սփռված բոլոր ազգերին և իր կախարդական հնարագիտությամբ և արքայական հրամանով պարտադրել էր բոլոր ազգերին երկրպագելու իր հպարտ ու ամբարտաձան պատկերին, իբրև աստծո և զոհ մատուցել:

Բոլոր ազգերը անմիջապես կատարում են նրա հրամանները, բացի Հայկ նահապետից, որը հչ նրան է հնազանդվում, հչ իր տանը նրա պատկերը կանգնեցնում և ոչ էլ մեծարում նրան աստվածային շքով:

Բելը ռիսակալվում է Հայկի դեմ, բայց սոժամանակ իր ռիսը թաքցնում. նա իր որդիներից մեկին, հավատարիմ մարդկանց ողեկցությամբ, պատգամավոր է ուղարկում հյուսիս՝ Հայկի մոտ, որպեսզի նա հնազանդվի և խաղաղ ապրի:

— Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր, — ասում է Բելը իր պատգամախոսի բերանով Հայկին, — սակայն տաքացրու և մեղմացրու քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդելով խաղաղ ապրիր իմ երկրում, որտեղ դու կհաճես բնակվել:

Հայկը խստությամբ մերժում է Բելի պատգամավորներին, և նրանք ձեռնունայն վերադառնում են Բաբելոն:

Հայրացած Տիտանյան Բելը զորք է ժողովում և հետևակ զորքի մեծ բազմության գլուխ անցած, գալիս հասնում է հյուսիս՝ Արարադի երկիրը, այնտեղ, ուր բնակվում էր Հայկի թոռ Կաղմոսը: Վերջինս խուսափելով Բելից, փախչում գալիս է Հարք, նախապես սուրհանդակներ առաքելով Հայկին, հայտնելով հետևյալը.

— Գիտցիր, ով մեծո դյուցազուններից, որ Բելը ուղիղ գալիս է քեզ վրա հավերժական քաջերով և երկնադեզ հասակով մրցող հսկաներով: Եվ ես լսելով, որ նա մոտեցել է իմ տանը, կնոջս ու զավակներիս հետ փախստական ահա տագնապած գալիս եմ քեզ մոտ: Ուստի շունչ մտածիր անելիքը:

Հայկն իմանալով այդ, վերցնում է Արամանյակին և Կաղմոսին իրենց որդիներով, ինչպես նաև իր յոթանասուն դստերի որդիներին, բոլորն էլ հսկա տղամարդիկ, և դուրս է գալիս Բելի վիթխարի զորքի դեմ:

Հայկն իր սակավաթիվ մարդկանցով չի կարողանում Բելի սպառազեն հսկա տղամարդկանց բազմության դեմն առնել: Բելն անգամ փորձում է Հայկին գերել, բայց Հայկը խուչս է տալիս Բելից և նահանջելով հեռանում: Բելը ամբակուռ զրահով զրահապատված՝ իր զորքով հետապնդում է Հայկին: Հայկը հետ է դառնում և ասում Բելին.

— Ինչո՞ւ ես ինձ զուր հետապնդում. վերադարձիր քո տեղը, որպեսզի այսօր չմեռնես իմ ձեռից, քանզի իմ նետը բնավ չի վրիպում:

Բելը պատասխան է տալիս և ասում.

— Որպեսզի չընկնես իմ զինվորների ձեռը և չսպանվես, եկ հանձնվիր, ապրիր իմ տանը խաղաղությամբ, դարձիր իմ տան որսկան զինվորների ղեկավարը:

Հայկը զայրույթով ասում է.

— Ծո՞ւն ես դու և շան երամակից եք դու և ժողովուրդը քո: Դրա համար էլ այսօր իսկ քո վրա կթափեմ իմ կապարճի նետերը:

---

<sup>1</sup> Հարք (հին հայերենում նշանակում է հայրեր) գտնվում է Վանա լճից հյուսիս-արևմուտք, Մշո դաշտից հյուսիս և կոչվում է նաև Բուլանըխ կամ Բուլանըխի դաշտ:







Տիտանյան արքան վստահ իր սպառազինության և իր հանդուգն ամբոխի զորության վրա, շարունակում է հետապնդումը: Բելի զինված ամբոխը զառիվայրից գահավիժող հեղեղի նման շտապում է հասնել Հայկի բնակության սահմանները:

Իսկ ուշիմ ու խոհեմ Հայկը իր սակավաթիվ և քաջ աղեղնավորներով հասնում է մանր ձկներով հարուստ մի մեծ աղի լճի<sup>1</sup>: Լճափին նա կանգ է առնում, հավաքում իր զորքը, դիմում նրան հետևյալ խոսքերով.

— Երբ մենք դուրս գանք Բելի հրոսակների դեմ, ձգտենք հանդիպել Բելին այնտեղ, ուր կանգնած կլինի նա իր քաջերի խումբ բազմության մեջ, կնամ պետք է մեռնենք և մեր ամբողջ գերդաստանը ընկնի Բելի ծառայության տակ, կնամ մեր մատների կորովը ցուցադրենք, ցրենք Բելի խառնամբոխը և հաղթանակ տանենք:

Հայկը իր սակավաթիվ զորքն առաջ է տանում, հասնում բարձր լեռների արանքում գտնվող մի դաշտաձև տեղ և գետի հոսանքի աջ կողմում՝ բարձրավանդակի վրա, ամուր դիրք գրավում: Այդտեղից պարզ երևում էր Բելի բազմամբոխ հրոսակը, որ սփռված բռնել էր շրջապատի ամբողջ տարածքը, և զինվորները ազատ ու հնամարձակ սուրում էին աջ ու ձախ: Իսկ Բելը հանդարտ ու խաղաղ կանգնած էր բազմության մեջ, գետի ձախ ափին գտնվող բլրակի վրա՝ իբրև դիտանոցի:

Հայկն իսկույն նկատում է այդ սպառազինված ջոկատը, որ բավական երկար տարածությամբ անջատված էր զինված ամբոխից: Այդ ջոկատի մեջ նա ճանաչում է Բելին, որը գլխին կրում էր երկաթե սաղավար՝ նշաններ ունեցող վերջույթներով, թիկունքի և լանջի վրա ուներ պղնձե գրահ, սրունքների և թևերի վրա՝ պահպանակներ, մեջքին կապել էր գոտի՝ ձախ կողմից կախված երկսայրի սրով. աջ ձեռքում բռնել էր հսկայական նիզակ, իսկ ձախում՝ վահան և աջ ու ձախ կողմերից շրջապատված էր ընտիր զորականներով:

Հայկը տեսնելով կուռ սպառազինված Տիտանյան Բելին և նրան աջ ու ձախ կողմից շրջապատած ընտիր զորականներին, Արամանյակին զույգ եղբայրներով կանգնեցնում է իր աջ կողմը, Կաղմոսին զույգ որդիներով՝ իր ձախ կողմը, իբրև կորովի աղեղնավորներ և սրամարտիկներ, իսկ ինքը կանգնում է առջևում, իր զորքի մնացած մարդկանց կանգնեցնում իր հետևում և ամբողջ զորքը եռանկյունաձև դասավորելով, հանդարտ առաջ է շարժվում:

Երբ երկու կողմի հսկաներն իրար են հասնում, և սկսվում է ահեղ ճակատամարտը, երկրի վրա սոսկալի դողդուցն է բարձրանում. հսկայազուններն իրենց ահռելի գրոհի թափից միմյանց վրա ահ ու սարսափ են տարածում: Երկու կողմից բազմաթիվ հաղթանդամ մարդիկ են սրահարվում և գետին տապալվում, և երկու կողմն էլ մնում են անպարտելի:

Այս անսպասելի հարձակումից ու ճակատամարտի ելքից սարսափած Տիտանյան արքան, որ բլուրի բարձունքից իջել էր ներքև, հետ քաշվելով սկսում է բարձրանալ բլուրը, մտածելով այնտեղ իր թիկնապահների մեջ ամրանալ, մինչև ամբողջ զորքը հասնի և կարողանա երկրորդ ճակատամարտը տալ:

Աղեղնավոր Հայկը այս տեսնելով, իսկույն կռահում է Բելի մտադրությունը. իրեն առաջ է նետում, մոտենում արքային, մինչև վերջ ձգում է իր լայնալիճ, հզոր մայրափայտյա աղեղը և եռաթև նետն արձակելով՝ ուղիղ հարվածում է Բելի կուրծքը գրահավորող պղնձե տախտակին: Նետապարք շեշտակի թափով ծակում անցնում է գրահը, Բելի թիկունքից դուրս գալիս և խրվում հողի մեջ: Ամբարտավան արքան մտե հսկա արձանի նման տապալվում է գետին և շունչը փչում:

Բելի զինված խառնամբոխը, տեսնելով այս անլուր քաջագործությունն ու իրենց արքայի կործանումը, սարսափահար դիմում է փախուստի: Հայկի զինվորները հետապնդելով նրանցից շատերին՝ խլում են ձիերի, ջորիների և ուղտերի բազմաթիվ երամակներ:

Հայկը ճակատամարտի վայրում շինում է մի դաստակերտ,<sup>2</sup> անունը դնում Հայք՝ ի նշան վարած հաղթական կովի: Այդ անունից էլ մինչև այժմ ամբողջ գավառը կոչվում է Հայոց ձոր<sup>3</sup>: Այն բլուրը, ուր ընկնում է Բելը իր քաջ մարտիկների հետ, Հայկը կոչում է Գերեզմանք, որը հետագայում հայտնի է

<sup>1</sup> Խորենացին նկատի ունի Վանա լիճը, որ հնում կոչվում էր նաև Բզունայաց ծով:

<sup>2</sup> Նոր շեն կամ քաղաք՝ իր կալվածքներով:

<sup>3</sup> Հայոց ձորը գտնվում է Վան քաղաքից հարավ, Խոշաբ գետի ստորին հոսանքի շրջանում:

Գերեզմանակք անունով: Իսկ Բելի դիակը Հայկը զմոտել է տալիս, տանում է Հարք և թաղում մի բարձրադիր տեղում՝ ի տես իր կանանց և որդիների: Արարադ երկիրը, ուր բնակություն է հաստատում Հայկը, հետագայում նրա անունով կոչվում է Հայք:

Հայկը հետագայում հայերի համար դառնում է պաշտելի նախնի. նրա անունով է կոչվել երկնային Օրիոն համաստեղությունը<sup>1</sup>, ինչպես նաև Կշիռ կենդանակերպ համաստեղությունը, որ կոչվել է նաև Ծամփորք Հայկին կամ Պատրվակ Հայկին: Հայկի որդիների և դստերի անուններով է կոչվել նաև հին հայոց տոմարի ամիսների մի մասը:

### **Հայկի զավակներն ու թոռները\***

(Արամանյակ, Արամայիս, Ամասիա, Գեղամ, Հարմա)

Բելին սպանելուց հետո Հայկը վերադառնում է իր բնակատեղին՝ Հարք, իր Կադմոս թոռանը պատերազմի ավարից բազմաթիվ ընծաներ է տալիս, ինչպես նաև անվանի մարդիկ՝ իր գերդաստանի ծառայության մեջ գտնվողներից: Միաժամանակ հրամայում է Կադմոսին վերադառնալ իր նախկին տունը և այնտեղ ընդմիջտ բնակություն հաստատել:

Հայկը երկար տարիներ Հայքում ապրելուց հետո մեռնում է, իր ամբողջ ազգը հանձնելով Արամանյակ որդուն:

Արամանյակը իր եղբայրներից երկուսին՝ Խոռին և Մանավազին, ինչպես և Մանավազի որդուն՝ Բազին, թողնում է Հարքում: Մանավազը ժառանգում է Հարքը, իսկ որդին՝ Բազը, ժառանգում է սղի լճի հյուսիս-արևմտյան ափը, և գավառն ու լիճը կոչում է իր անունով՝ Բզնունիք և Բզնունյաց ծով: Մանավազից են հետագայում սերում Մանավազյան, իսկ Բազից՝ Բզնունյաց նախարարական տոհմերը: Իսկ Խոռը հյուսիսային կողմերում շեներ է շինում, բազմանում, և նրանից է սերում Խոռխոռունիների ցեղի մեծ նախարարությունը:

Արամանյակն իր գերդաստանն առնելով, շարժվում է դեպի հյուսիս-արևելք, գնում հասնում է մի խոր ընդարձակ դաշտավայր, շրջապատված բարձրագագաթ լեռներով, որոնց ստորոտներից բլրխում էին բազմաթիվ ականակիտ աղբյուրներ, որոնք միանալով գետեր էին կազմում և հոսում լեռների ստորոտներով ու դաշտի ափերով: Դաշտի հարավային մասում բարձրանում էր արեգակնաձեռ լեռը՝ սպիտակափառ գագաթով: Արամանյակը բնակություն է հաստատում այս խոր դաշտում, շենացնում դաշտի հյուսիսային կողմը և այնտեղ բարձրացող լեռը կոչում է իր անունով՝ Արագած, իսկ կալվածքը՝ Արագածոտն: Արամանյակի մահից հետո նրա որդին՝ Արամայիսը, բնակություն է հաստատում դաշտի արևմտյան կողմից հոսող գետի ափին, մի բլուրի վրա կառուցում իր բնակատեղին և այն կոչում իր անունով՝ Արմավիր, իսկ գետը իր թոռ Երաստի անունով կոչվում է Երասիս: Արամայիսը իր բազմազավակ և շատակեր որդուն՝ Ծարային, իր տունուտեղով ուղարկում է Արագած լեռան թիկունքում գտնվող բերրի ու արգավանդ դաշտը, որտեղ շատ ջրեր էին հոսում: Գավառը հետագայում նրա անունով կոչվում է Ծիրակ: Այդ օրից Ծարայի շատակերության մասին գեղջուկների մեջ պահպանվել է հետևյալ առածը. «Թե քո Ծարայի որկորն է՝ մեր Ծիրակայ ամբարքն չեն» («Եթե դու Ծարայի փորն ունես, սպա մենք Ծիրակի ամբարները չունենք»):

Արամայիսի մահից հետո Արմավիրը ժառանգում է նրա որդին՝ Ամասիան: Վերջինս ունենում է երեք զավակ՝ Գեղամ, Փառոխ և Յոլակ: Վերջին երկու որդին ունենալուց հետո Ամասիան անցնում է գետը, մոտենում հարավային բարձրաբերձ լեռան ստորոտին, լեռան խորշերում խոշոր ծախսերով շինում երկու բնակատեղ, մեկը դեպի արևելք, լեռան ստորոտից բխող աղբյուրների ակունքների մոտ, մյուսը՝ դեպի արևմուտք: Այդ տները նա ժառանգություն է տալիս իր երկու որդիներին՝ արի Փառոխին և կայտառ Յոլակին, որոնք բնակվելով այնտեղ, կոչում են իրենց անուններով՝ Փառիխտ և Յոլակերտ: Իսկ այդ բարձրաբերձ լեռը Ամասիան կոչում է իր անունով՝ Մասիս:

<sup>1</sup> Օրիոնը հունական առասպելաբանության մեջ ևս որսորդ էր, քաջ աղեղնավոր:

\* Ծարարդված է ըստ Լոմվես Խորենացու «Հայոց պատմության»:

Ամասիայի մահից հետո ավագ որդին՝ Գեղամը, ժառանգում է Արմավիրը, բայց շուտով այն թողնում է իր որդուն՝ Հարմային, իսկ ինքը գնում է հյուսիս-արևելյան լեռների հետևում գտնվող ծովափի մերձակայքը: Այստեղ նա շենացնում է ծովափի ափերը, բնակեցնում, լեռը իր անունով կոչում է Գեղ, շեները և ծովակը՝ Գեղարքունի: Այստեղ է ծնվում Գեղամի Սիսակ անունով որդին՝ մի սեգ, թիկնեղ, վայելչակազմ, կորովախոս ու գեղեցիկ աղեղնավոր: Գեղամը նրան տալիս է իր ունեցվածքի մի մասը, բազմաթիվ ծառաներ և հիմնում նրա հողային ժառանգության սահմանները: Գեղամը իր որդուն է նվիրում Գեղարքունի ծովից դեպի արևելք ընկած տարածությունները, մինչև այն դաշտը, ուր Երասխը ձեղքելով սեպացած լեռները, նեղ ու երկար կիրճերով անցնելուց հետո, թափվում է այնտեղ: Սիսակը բնակություն հաստատելով այս երկրամասում, այնտեղ կառուցում է բազմաթիվ շեներ, գյուղեր, շինություններ և այդ աշխարհը կոչում իր անունով՝ Սյունիք, կամ ինչպես պարսիկներն են անվանում՝ Սիսական:

Գեղամը վերոհիշյալ դաշտի արևելյան կողմում՝ լեռան ստորոտում գտնվող մի ամուր ձորակում, շինում է մի դաստակերտ, անունը դնում Գեղամի, որը հետագայում նրա թոռ Գառնիկի անունով կոչվում է Գառնի: Հետագայում, Արտաշես թագավորի ժամանակ, Գեղամի սերնդից մի պատանի է եղել Վարաժ անունով՝ քաջ և դիպուկ նետաձիգ, եղջերուների, այծյամների և վարազների հմուտ որսորդ, որին Արտաշես թագավորը նշանակում է արքունական որսապետ և նրան պարգևում Հրազդան գետի հովտում գտնվող բազմաթիվ շեներ ու ավաններ: Այս Վարաժից է սկիզբ առնում Վարաժնունիների իշխանական տունը:

### Արամ\*

Արամը Գեղամի թոռն էր, Արմավիրի տեղ Հարմայի որդին, մի աշխատասեր, եռանդուն, հայրենասեր մարդ, որը գերադասում էր մեռնել հայրենիքի համար, քան տեսնել, թե ինչպես են օտար ցեղերն ու ազգերը ոտնակոխ անում իր հայրենիքը և տիրում ու շահագործում իր արյունակից հարազատներին:

Արամը նեղվելով շրջակա ազգերի ու ցեղերի ասպատակություններից, իր ընտանի քաջ և աղեղնավոր մարդկանցից հավաքում է շուրջ 50 հազար հոգի, որոնք բոլորն էլ վարժ միզակավորներ էին, հմուտ նետաձիգներ, ուժեղ և անվեհեր երիտասարդ մարտիկներ: Հայաստանի սահմանների մերձակայքում Արամը հանդիպում է մեդացի (մարացի)<sup>1</sup> երիտասարդ զինվորների մի զորախմբի, որի առաջնորդն ու հրամանատարն էր ոմն Նյուքար Մադես, մի հպարտ ու ուզմասեր մարդ: Նյուքար Մադեսն արդեն մի քանի անգամ արշավել ու ասպատակել էր Հայոց աշխարհը և իր ձեռքի սմբակներով ոտնակոխ արել երկրի բոլոր սահմանները և երկու տարի Հայաստանը ենթարկել իրեն:

Արամը հանկարծակիի է բերում թշնամուն: Արևածագից առաջ Արամն իր զորքով անսպասելի հարձակում է գործում մեդական զորքի վրա, գլխովին ջախջախում, իսկ նրա առաջնորդին՝ Նյուքար Մադեսին, գերում և ձերբակալելով բերում Արմավիր: Այստեղ Արամի հրամանով Նյուքար Մադեսին հանում են քաղաքի աշտարակի ծայրը, երկաթե ցից մեխելով ճակատի մեջ, գամում են պատին՝ ի ցույց բոլոր անցորդներին ու քաղաք եկողներին: Արամը Նյուքար Մադեսի աշխարհը՝ Մարաստանը, մինչև Զարասյ լեռը իրեն է ենթարկում, դարձնում հարկատու:

Հարևան Ասորեստանում գահ է բարձրանում Նինուսը, որին երկար տարիներ հանգիստ չէր տալիս իր նախնի Բելի սպանության հիշատակը: Նա վրեժխնդրության դավեր էր որոճում՝ քաջ Հայկի սերունդներին արմատից ոչնչացնելու և սպասում էր հարմար ժամանակի:

Նինուսը տեսնելով Արամի, քաջություններն ու հաղթանակները, առերևույթ բարեկամ է ձևանում, հրամայում է նրան աներկյուղ վարել իր իշխանությունը, անգամ նրան մարգարտե վարսակալ կրելու իրավունք է տալիս և իր երկրորդը համարվելու պատվավոր կոչում:

\* Շարադրված է բառ Մովսես Մորենացու «Հայոց պատմության»:

<sup>1</sup> Մեդիա, Միդիա կամ Մարաստան — Հին Արևելքի հզոր պետություններից մեկը, գտնվում էր Վանա ծովից հարավ-արևելք, Զագրոշի լեռների և Կասպից ծովի հարավ-արևմտյան ափերին, գոյատևել է մ. թ. ա. 7—5-րդ դարերում:

Արամը արևելքում իր երկրի սահմանները ապահովելուց ու ամրացնելուց հետո նույն զորքով իջնում է հարավ՝ Ասորեստանի կողմերը: Այստեղ Բարշամ<sup>1</sup> անունով մեկը՝ ծագումով հսկաների ցեղից, իր քառասուն հազար հետևակներով և հինգ հազար հեծյալներով, պարբերական ասպատակություններով և ծանր հարկերով ամայացրել էր շրջակա երկրները:

Արամը ընդհարվելով Բարշամի զորքին, հալածում է նրան Կորդուքի միջով մինչև Ասորեստանի դաշտը, շատերին կոտորում է, այդ թվում նաև Բարշամին: Ասորեստանի դաշտերի բնակչության մեծ մասին Արամը երկար ժամանակ իրեն դարձնում է հարկատու: Իսկ Բարշամին, իր քաջարի արարքների համար ասորիները աստվածացնում են և պաշտում երկար ժամանակ:

Արամը Հայաստանի հարավային՝ Ասորեստանի կողմի սահմանների տնօրինությունը հանձնում է Կադմոսի տան հաջորդներին, իսկ արևելյան սահմաններինը՝ Միսակյաններին, իսկ ինքը իր զորքի վրա ավելացնելով ևս քառասուն հազար հետևակ և երկու հազար հեծյալ, շարժվում է դեպի արևմուտք՝ Կապադովկիական Կեսարիա: Այստեղ նրա դեմ կռվով դուրս է գալիս Պալապիս Քաղյա Տիտանյանը<sup>2</sup>, որը բռնությամբ գրավել էր Պոնտոսի (Սև ծով) և Օվկիանոսի (Միջերկրական ծով) միջև ընկած տարածությունը: Արամը ընդհարվելով նրա հետ, հալածում, փախցնում է Միջերկրական ծովի կղզիներից մեկը:

Արամը Կապադովկիական Կեսարիան պահպանելու համար այնտեղ տիրակալ է կարգում իր ցեղակիցներից մեկին՝ Մշակին, նրան թողնում 10 հազար զինվոր, ինքը վերադառնում է Հայաստան: Մինչև այդ Արամը հրաման է տալիս Կեսարիայի բնակիչներին՝ սովորել և խոսել հայերեն: Այդ պատճառով էլ հույներն այդ երկրամասը անվանում են Պոտոսին Արմենիան, այսինքն՝ Առաջին Հայք: Իսկ այն դաստակերտը, որ իր անունով շինում է Արամի կարգած կողմնապետ Մշակը, տեղացիները աղավաղված ձևով կոչում են Մաժաք. այն հետագայում նոր շինություններով ընդարձակվելով այլոց կողմից՝ կոչվում է Կեսարիա:

Արամն իր կատարած աշխարհաշեն գործերով դառնում է այնքան անվանի, որ նրա անունով են մինչև այժմ մեր երկիրն ու ազգը կոչում շրջակա ժողովուրդները, հույները՝ Արմեն, պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ: Արամը երկար տարիներ ապրելուց հետո ժառանգ է թողնում իր գեղեցիկ որդուն՝ Արային:

### Արա Գեղեցիկ և Ծամիրամ\*

Արամի մահից հետո Հայաստանի խնամակալությունը անցնում է որդուն՝ Արա Գեղեցիկին: Այդ ժամանակ Ասորեստանում տակավին թագավորում էր Նինուսը, որը նույնպիսի արքայական շնորհների է արժանացնում Արային, ինչպես նրա հորը՝ Արամին: Իսկ Նինոսի կինը՝ վավաշոտ և այրասեր Ծամիրամը, բազում տարիներ լսած լինելով Արայի անզուգական գեղեցկության մասին, անհուն տարփանքով տենչում էր տեսնել նրան, բայց ամուսնու ահից չէր համարձակվում իր ցանկությունն իրականացնել:

Երբ վախճանվում է Նինուսը, Ծամիրամը չի կորցնում պահը, իր տարփանքը համարձակորեն բացահայտելով, պատգամավորներ է առաքում Արա Գեղեցիկի մոտ, ճոխ ընծաներով, բազում աղեր-

Բարշամ, բուն անվանաձևը՝ Բաալշամեմ-արևմտյան սեմական ժողովուրդների երկնքի և արևի աստվածությունը, որի պաշտամունքը տարածված է եղել Ասորիքում անգամ մինչև մ. թ. 5-րդ դարը: Բարշամը (նաև Բարշամին, Բարշիմնիս) պաշտվել է նաև հայերի մեջ: Տիգրան 2-րդը նրա փղոսկրյա արձանը Միջագետքից բերել և տեղադրել է Երզնկայի մոտ գտնվող Թորոյան ավանի տաճարում:

Պալապիս Քաղյա (հունարեն՝ Պապալոս Խիմայրագենես-Պապալոս այժմոյն, բայց հին հայերենում նշանակում է այժ) հունական առասպելաբանության մեջ Ջևաի դեմ կռվող զիզանտների զխավոր Տիփոնի (հրաբխային լեռների և կործանող փոթորիկների խորհրդանիշը)՝ որդի Քիմայրան է, այժմակերպ մի հրեշ, որի երախից կրակ է դուրս ժայթքում: Հետևաբար՝ Արամի կռիվը Պալապիս Քաղյայի դեմ նման է Ջևաի կռիվին Տիփոնի դեմ, որին Ջևաը դնում է Միջերկրական ծովի Ինարին (Էնարիս) հրաբխային կղզու տակ:

\* Ծարսդրված է ըստ Մովսես Խորենացու «Հայոց Պատմության»:



ասնքներով ու պարզեցնելի խոստանով խնդրում է Արաչին գալ Նիկիե<sup>1</sup>, կան՝ ամուսնանալ իր հետ և բոլորի վրա թագաւորել, կան՝ էլ իր տարիաւից ցանկութեանը կատարել և մեծամեծ նշերներով ու խաղաղութեամբ իր երկիրը վերադառնալ: Ծամիրամի պատգամաւորները գալիս են Հագաստան, բայց Արան կորականապետ մերժում է Ծամիրամի կամքը կատարել: «Պատգամագնացություննեղ կրկնվում են մի քանի անգամ՝ Ծամիրամի նորանոր խոստումներով, հորդորներով ու աղաչանքներով, սակայն ամեն անգամ արժանանում են Արաչի մերժմանը»:

Երբ սղո բազում բանագնացությունները դառնում են անարդյունք, Ծամիրամը սաստիկ գայրանում է, դադարեցնում է պատգամագնացությունը, գործ է հաւարում և շտապով մեկնում է Հայոց աշխարհ՝ Արաչի դեմ պատերազմելու: Բայց նա շտապում է ոչ թէ Արաչին ապանելու կամ հաղածելու, այլ նրան իր ձեռքը գցելու, նվաճելու, իր մոլեգին ցանկությունը կատարել սալու և տոհմաւորը հազեցնելու:

Ծամիրամը փոքրով գալիս մասնում է Արաչի դաշտը, որ հետագայում նրա անունով կոչվեց Աչքարստ: Աչքտեղ, ճակատամարտից առաջ, Ծամիրամը պտուղիքում է իր զորապետներին՝ ամեն կերպ ջանալ կենդանի պահել Արաչին: Բայց մարտի ժամանակ Արաչի գործը կոտորվում է, Արան էլ ընկնում է պատերազմի դաշտում Ծամիրամի կորիճներից:

Հալոթությունից հետո Ծամիրամ տիկինը ճարտասանարտի վաչրն է ստարում դիմաւախներին՝ դիակների մեջ փնտրելու իր բաղձալի տարիսածուին: Արաչին գտնում են մի խումբ քաջամարտիկների մեջ սպանված: Ծամիրամը, հրամայում է Արաչի դին դնել սպարանքի վերնատանը:

Իսկ երբ գրգռված հաշոց գործը պատրաստվում է նորից մարտնչել տիկին Ծամիրամի դեմ Արաչի մանվան վրեժն ստնելու համար, Ծամիրամը դիմում է նրանց, ավզով.

— Ես հրամայեցի իմ սատավածներին՝ նրա վերքերը լիզել, և նա կկենդանանա:

Ծամիրամը հուշս ուներ իր հնաշախան դյուրութեամբ վերակենդանացնել Արաչին: Բայց երբ դիակն սկսում է քայքայվել, Ծամիրամը գաղտնի թաղում է Արաչին, իր հոմանիներից մեկին պաննուապատում է Արաչի կերպարանքով և լուր է տարածում, թէ «Արաչեզնկը Արաչին լիզելով վերակենդանացրին և մեր փափագն ու ցանկությունը կատարեցին: Աչքտետե նրանք ստավել ևս արժանի են մեր պաշտամունքին ու փառաբանմանը»:

Ծամիրամը արձան է կանգնեցնում Արաչին հարություն տվող սատավածների անունով և նրանց պատվին մեծամեծ զոհեր մատուցում: Արաչի հարության լուրը տարածելով Հայոց աշխարհում և բոլորին հանդգելով՝ Ծամիրամը խաղաղեցնում է ժողովրդի հուզմունքը:

<sup>1</sup> Ասորեստանի մայրաքաղաքը:

## Շամիրամակերտի շինարարությունը\*

Ամեն ինչ բարեհաջող ավարտելուց հետո, Շամիրամը մի քանի օր մնում է Այրարատի դաշտում, բարձրանում երկրի հարավակողմն ընկած լեռնաչին գավառը: Եվ քանի որ ամառային եղանակ էր, նա կամենում է զբոսնել տեղի զովաշունչ հովիտներում ու ծաղկավետ դաշտերում: Զմայլված երկրի գեղեցկությամբ, օդի մաքրությամբ, վճիտ ու սառնորակ աղբյուրներով, կարկաշատնու գետերով՝ Շամիրամը մերձավորներին հայտնում է իր վճիռը.

— Այսպիսի բարեխառն օդով ու մաքուր ջրերով երկրում պետք է քաղաք և ապարանք շինենք, որպեսզի ամառվա ամիսներին վայելենք Հայոց աշխարհի զովը, իսկ զով եղանակներին ապրենք Նինվեում:

Շրջելով Հայոց աշխարհի տարբեր վայրերում, Շամիրամը հասնում է աղի ծովակի արևելյան ափը, որի երկայնքով դեպի արևմուտք ձգվում էր մի երկար բլուր, հյուսիսակողմից փոքր-ինչ թեք, իսկ հարավից՝ ուղիղ երկհինք խոչացող զանիվայր ապարածով<sup>1</sup>: Բլուրից հարավ տարածվում էր լայն ու երկայնաձիգ հովիտ, որ լեռան արևելյան կողմից ընդարձակ ու գեղեցիկ ձորի ձևով իջնում էր ծովափ: Այդ հովտով հոսում էին լեռներից իջնող քաղցրահամ առվակներ, որոնք ծործորներից ու հովիտներից ծորելով, լեռների ստորոտներում միանում էին, ծավալվում, կազմում գեղեցիկ գետեր: Այս հովտաձև ձորակում ջրերի աջ ու ձախ ափերին բավական թվով շեներ կային կառուցված: Իսկ այս հանելի բլրից դեպի արևելք բարձրանում էր մի փոքրիկ սար<sup>2</sup>:

Այս տեղը շատ է դուր գալիս Շամիրամին, և տոփոտ ու քաջասիրտ տիկինը հրամայում է Ասորեստանից և իրեն ենթակա այլ երկրներից անմիջապես բերել քառասուններկու հազար անարվեստ գործավորներ (սևագործ բանվորներ) և վեց հազար ընտիր արհեստավորներ, որոնք կատարելապես հմուտ էին փայտի, քարի, պղնձի և երկաթի արհեստներին:

Թագուհու հրամանն իր ուզած ձևով իսկույն կատարվում է. գալիս են անարվեստ բանվորների և բազմարվեստ հանձարեղ վարպետների բազմություններ: Շամիրամը հրամայում է կառուցել նախ գետի ամբարտակը՝ անբավ լայնությամբ ու բարձրությամբ, ապարածներով և խոշոր վեներով, կրի և ավազի շաղախով ամրացված<sup>3</sup>:

Գետի այդ ամբարտակը մինչև այժմ էլ մնում է կանգուն, և այնպես ամրակուր, որ եթե մեկը փորձի այդ շինվածքից պոկել թեկուզ մի փոքր քար պարսաստիկի համար, երբեք չի հաջողվի: Եվ կրաշաղախը շուրջը այնպես է ծեփված, որ թվում է, թե հալած ճարպով է անցված:

Այդպես երկար տարածության վրա ամբարտակը կառուցելով, Շամիրամը այն հասցնում է քաղաքի հիմնադրման համար որոշված տեղը: Այստեղ թագուհին հրամայում է գործավորների բազմությունը բաժանել մասնագիտական տարբեր դասերի և յուրաքանչյուր դասի վրա ղեկավար նշանակել վարպետներից լավագույններին: Նման խիստ լարված աշխատանքով մի քանի տարվա ընթացքում ավարտվում է հրաշակերտ քաղաքի կառուցումը՝ ամրակուր պարիսպներով և պղնձակոփ դռներով: Քաղաքի մեջ Շամիրամը կառուցում է բազմաթիվ ընտիր ապարանքներ՝ կրկնահարկ և եռահարկ, գույնզգույն պեսպես քարերով զարդարված, յուրաքանչյուրում պատուհաններ՝ ըստ պատշաճի: Քաղաքի թաղամասերը միմյանցից բաժանվում են գեղեցկագույն և ընդարձակ փողոցներով: Ծիճում է նաև չքնաղ քաղանիքներ՝ քաղաքի դիրքին ու կարիքներին համապատասխան: Գետը բաժանում է երկու մասի, մեկը անց է կացնում քաղաքի միջով, քաղաքը պատում առուների ցանցով՝ քաղաքացիների տարբեր կարիքները հոգալու, բուրաստաններն ու ծաղկանոցները ոռոգելու, իսկ մյուս մասը անց է կացնում ծովակի աջ և ձախ

\* Շարադրված է ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության»: Շամիրամակերտը, Շամիրամաշենը կամ Շամիրամի քաղաքը ըստ միջնադարյան ժողովրդական ավանդության, Վան քաղաքի անունն է, ուրարտական հզոր պետության Տոշպա անունով մայրաքաղաքը, որ հայերենում կոչվել է նաև Տոսպ կամ Վանտոսպ:

Խոսքը Վանա լճի և Վան քաղաքի մոտ գտնվող Տոսպան բլրի մասին է:

Այդ փոքրիկ սարը Վարազա սարն է:

Խոսքը վերաբերում է Վան քաղաքի մոտակայքում ուրարտական թագավոր Մենուայի կառուցած ջրանցքին, որ տեղացիները մինչև 1916 թ. գաղթը, ըստ ավանդության, կոչում էին Շամիրամի առու:



աիերով, քաղաքի ողջ շրջակայքի այգիներն ու հողերը ջրելու համար: Քաղաքի բոլոր կողմերը զար-  
դարում է դաստակերտներով, վարսագեղ սաղարթախիտ ու պտղատու ծառերով, տնկում բազմաթիվ  
բարեբեր ու զինեվետ այգիներ: Պարսպապատ քաղաքը ամեն ինչով դարձնում է հրաշալի ու հռչակերտ,  
մեջը բնակեցնում մարդկանց անթիվ բազմություն:

Ծամիրամը պարսպապատում է քաղաքի վերին ծայրում գտնվող ժայռի գագաթը, ժայռի մեջ կա-  
ռուցում գաղտնի ելք ու մուտք ունեցող քարակոյի արքայանիստ շինություններ, զանազան սենյակներ,  
անջարաններ, գանձարաններ, վիհեր, որոնք բոլոր թագավորական մեծագործությունների մեջ առհա-  
սարակ առաջնակարգն ու վեհագույնն են համարվում: Իսկ քարածայռի արեգունի կողմը հարթեցնելով,  
ինչպես մեղրամոմն են երկաթե գրչով հարթում, Ծամիրամը բազմաթիվ գրեթե է՝ գրել տալիս, որոնց  
միայն տեսքը մարդկանց զարմանքն ու հիացմունքն է շարժում: Եվ ոչ միայն այստեղ, այլև Հայոց աշ-  
խարհի շատ վայրերում Ծամիրամն արձաններ է կանգնեցնում և նույն գրեթե իր մասին ինչ-ինչ հիշա-  
տակներ գրել տալիս և շատ տեղերում նույն գրով սահմաններ հաստատում<sup>1</sup>:

### Ծամիրամի արարքներն ու վախճանը\*

Ծամիրամը իր ամառանոցային քաղաքը Հայաստանում շինելուց հետո սովորություն է դարձնում  
ամեն ամառ գալ Հայաստան՝ իր շինած քաղաքում հանգստանալու: Հայաստան գալուց առաջ նա Աստ-  
րեստանում իբրև կողմնապետ և Նիմվեի վերակացու է թողնում Զրադաշտ մոգին<sup>2</sup> մարաց նահապե-  
տին, վստահելով նրան իր իշխանությունը:

Մի ամառ էլ, Հայաստանում եղած ժամանակ, Ծամիրամը դուրս է գալիս Վասպուրական գավա-  
ռում զբոսանքի, տեսնում է՝ մի տեղ երեխաները խմբված գետնից ուլունքներ են գտել և ուշադիր զննում  
են: Թագուհին իսկույն կոահում է ուլունքների արժեքն ու նշանակությունը, լավ վարձատրում է երե-  
խաներին և ուլունքները ձեռներից առնում:

Այդ ուլունքներով Ծամիրամն սկսում է կախարդել ու հմայել և իր սպականված սրտով երկրով  
մեկ ամեն տեսակ շարիք գործել: Ում ուզում էր, որ նա իր տոհմայից ցանկությունը կատարի, ուլունքների  
զորությամբ նրան իսկույն բերում էր իր մոտ, իսկ ում կամեցնում էր ոչնչացնել, դարձյալ դյուրությամբ  
ու առանց որևէ ջանքի կատարում էր այդ: Բոլորն սկսում են սարսափել թագուհուց, և ոչ ոք չէր հան-  
դրգնում ծպտուն հանել:

Ծամիրամն ուներ մի ծերունի խորհրդական, որը վայելում էր թագուհու վստահությունը, տեղյակ  
էր նրա բոլոր գաղտնիքներին և ազատ էլումուտ ուներ նրա պալատում: Թագուհու գործած շարիքները  
շատ են մտահոգում ծերունուն, և նա երկար ժամանակ մտածում է, թե ինչպես նրա ձեռից կամ ուլունք-  
ների կախարդական զորությունից աշխարհն ազատի:

Մի օր էլ, երբ թագուհին ծերունու հետ դուրս էր եկել Արտամետ<sup>3</sup> զբոսանքի, ծերունին հարմար պահ  
է գտնում, հաիշտակում է ուլունքները Ծամիրամի ձեռից և փախչում: Զայրացած Ծամիրամը հետա-  
պնդում է նրան, բայց տեսնելով, որ չի կարողանում հասնել, ցատումից կատաղած իր թավ ու երկար

<sup>1</sup> Խորենացու խոսքն այստեղ Վանի քաղաքային «Մհերի դուռ» կոչված հարթեցված երեսի, ինչպես նաև Վանի շրջակայքում և Հայաստանի տարբեր վայրերում բարե կոթողների վրա քանդակված ուրարտական թագավորների սեպագիր արձանագրու-  
թյուններին է վերաբերում, որ ժողովրդական ավանդությամբ թե Խորենացու ժամանակ և թե հետագայում վերագրվել է  
առասպելական Ծամիրամ թագուհուն:

\* Ծարադրված է ըստ Մ. Խորենացու «Հայոց պատմություն» և Ներսես Սարգիսյանի «Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս»  
գրքերի:

<sup>2</sup> Զրադաշտ մոգը պարսկական հին կրոնի՝ զրադաշտության հիմնադիրն է, ապրել և գործել է մոտավորապես մ. թ. ա. 7-րդ դա-  
րում: Հայկական հին գրույցներում նա հանդես է գալիս իբրև մեղացիների կամ մարերի նախնի:

<sup>3</sup> Արտամետը գյուղ է Վանի մերձակայքում: Արտամետցիների և առհասարակ վանեցիների մեջ մինչև վերջերս տարածված էր  
հետևյալ ասացվածքը. երբ որևէ աղջիկ սիրահետել է տարբեր տղաների, ասել են. «Ա՛յ շան ախճիգ, Արտամետու ախճիգն ա,  
ամեն տղի ծոց կարմիր խնձոր կը դնա»: «Արտամետու ախճիգ» ասելով, ըստ քանասացների, նկատի են ունեցել Ծամիրամին,  
տղամարդկանց հետամտելու նրա հեշտասեր բնավորությունը:

ծամերը պարաստիկ է դարձնում, վերցնում է մի վիթխարի ապառաժ, դնում ծամերի վրա, պտտում և նետում ծերունու հետևից: Ահռելի ծանրությունից մազերը գլխից պոկվում են, իսկ հսկա ապառաժը գլորվելով ընկնում է Արտամետի մոտ գտնվող մի փոսի մեջ, ուր բնկած է մինչև այժմ:

Իսկ ծերունին ուլունքները ձեռին՝ փախչում հասնում է Դատվանի՝ ծովեզերքը և այնտեղ ուլունքները նետում ծովը, աշխարհն ազատում Շամիրամի հմայական չարագործությունից: Այդ դեպքից էլ մնացել է «Ուլունք Շամիրամայ ի ծով» ասացվածքը:

Շամիրամը իր բոլոր գանձերն ու պաշտոնները նվիրում է իր հումանիներին և բնավ չէր հոգում իր զավակների մասին: Երբ զավակները չափահաս են դառնում, սկսում են հանդիմանել իրենց մորը նրա անառակ վարքի, գանձերն ու պաշտոնները ուրիշներին շուռնորեն նվիրելու համար: Շամիրամը սաստիկ զայրանում է զավակների վրա, բոլորին կտորել է տալիս, բացի կրտսեր որդուց՝ Նինվասից:

Պատահում է այնպես, որ Ասորեստանում Շամիրամի տեղապահ Ջրադաշտ մոզր սխալմունք է գործում թագուհու հանդեպ, և նրանց միջև հակասություն է ծագում: Այդ հակամարտությունն ավելի է խորանում, երբ մարացի Ջրադաշտը մտադրվում է ամբողջ իշխանությունն իր ձեռքն առնել և իր բռնապետությունը տարածել բոլորի վրա: Շամիրամն այդ իմանալով, պատերազմ է սկսում Ջրադաշտի դեմ: Երբ պատերազմը սաստկանում է, Շամիրամը զգում է իր մոտալուտ պարտությունը և Ջրադաշտի ձեռից հետիոտն փախչում է Հայաստան: Թշնամիներից հետապնդվելով, Շամիրամը ճանապարհին վազքից ու հոգնածությունից սաստիկ ծարավում է, հասնում է Վանա ծովին, ջուր խմում, հագեցնում ծարավը: Բայց տեսնելով, որ իրեն հետապնդող սուսերավորները մոտենում են, իր կախարդական հոսույթները ծովն է նետում և ինքն էլ տեղնուտեղը քարանում:

Իսկ մեկ այլ գրույցի համաձայն, երբ Շամիրամը պարտվելով ու հետապնդվելով Ջրադաշտից, փախչում է Հայաստան, որդին՝ Նինվասը, վրա է հասնում, վրեժխնդրությամբ սպանում հեշտասեր մորը և Ասորեստանում ինքը թագավորում:

### **Արայան Արա և Անուշավան Սոսանվեր\***

Երբ Արա Գեղեցիկը ընկավ Շամիրամի դեմ մղած ճակատամարտում, նա ուներ արդեն տասներկուամյա մի տղա, ծնված իր սիրելի կնոջից՝ Նվարդից:

Շամիրամը Արա Գեղեցիկի նկատմամբ տածած իր անհուն սիրո պատճառով, Արայի անունով է կոչում նաև նրա որդուն: Շամիրամն այնքան է սիրում ու վստահում Արայան Արային, որ նրան մտերմաբար նշանակում է Հայոց աշխարհի վերակացու: Արայան Արան ևս հավատարիմ է մնում Շամիրամին և նրա հետ միասին սպանվում պատերազմում:

Արայան Արան սպանվելուց հետո թողնում է մի արու զավակ՝ անունը Անուշավան, գործով հզոր, խոսքով հանճարեղ: Նա կրում էր Սոսանվեր մականունը, որովհետև, ըստ հին պաշտամունքի, նա նվիրված էր Արմավիր քաղաքի Արամանյակի տնկած սրբազան սոսիներին: Այդ սոսիների սաղարթների սոսափյունից, կախված քամու ուժից և ուղղությունից, Հայոց աշխարհում հնուց ի վեր ընդունված էր հնայություններ և գուշակություններ անել:

Անուշավանը գնում է Ասորեստան՝ Շամիրամի որդի Նինվասից ձեռք բերելու Հայոց աշխարհի խնամակալության իրավունքը: Նա երկար ժամանակ տառապում է արքունի դռանը, արժանանալով միայն Նինվասի արհամարհանքին: Ի վերջո բարեկամների օժանդակությամբ նրան հաջողվում է ձեռք բերել Հայոց աշխարհի մի մասի խնամակալությունը՝ իբրև հարկատու, հետագայում՝ նաև ամբողջ Հայաստանի խնամակալության իրավունքը:

\* Դատվանը գյուղ է և նավահանգիստ Վանա լճի արևմտյան ափին:

\* Ծարադրված է ըստ Մ. Խորենացու «Հայոց պատմության»:

## Տորք Անգեղյա\*

Տորքը Հայկի թոռ Պասքամի որդին էր՝ մի տգեղ, բարձրահասակ, կուպտավուն կազմվածքով, տափակաքիթ, փոս ընկած աչքերով ու դժնահայաց մարդ, որին խիստ տգեղության համար Անգեղյա՝ էին կոչում:

Հայոց Վաղարշակ թագավորը այս հզոր ու վիթխարահասակ Տորքին նշանակում է Հայոց աշխարհի արևմտյան մասի կուսակալ և նրա ցեղի անունն էլ կոչում է Անգեղ տունն՝:

Տորքը օժտված էր վիթխարի ուժով. նա ձեռք էր զարկում ողորկ որձաքար ապառաժներին, ուզած ձևով ճեղքում, եղունգներով տաշում էր ապառաժը, տափտակի նման հարթեցնում և դարձյալ եղունգներով վրան արծիվներ էր քանդակում:

\* Ծարագրված է բառ Մ. Խորենացու «Հայոց պատմության»:

<sup>1</sup> Տորքը հին անատոլական Տարու, Տարքու, Տարխու, Տրքա անվանաձևերով հայտնի ամպրոպի և փոթորկի աստվածությունն էր, որ հայոց հին ավանդության մեջ փոխարկվել է Տորքի կամ Տորքի: Այդ դիցանվան հետքերն ու հիշատակը պահվել է Սեմի որդի Տարբանի առասպելի և Տարոն տեղանվան մեջ:


Անգեղյա մակդիրը Մ. Խորենացին ժողովրդական ստուգաբանությամբ բացատրում է իբրև ան-գեղ, այսինքն՝ տգեղ: Մինչդեռ Անգեղը եղել է հին հայերի աստվածներից մեկը, որի անունով է Աստվածաշնչում հայերեն թարգմանվել շումերականադական ստորգետնյա թագավորության աստծո՝ Ներգալի անունը: Հետևաբար Տորք Անգեղյա անվան մեջ միացել են երկու տարբեր դիցանուններ՝ Տորքի և Անգեղի, և Տորքը դարձել է կամ Անգեղ աստծո սերունդ՝ Անգեղյա, կամ Անգեղ աստծո տված պարգև (Տորք անվանաձևի դեպքում):

<sup>2</sup> Անգեղ տունը Հին Ծոփքում (Վանա լճից դեպի արևմուտք) գավառ էր և նախարարություն: Այդտեղ հնում, հավանաբար, տարածված է եղել Անգեղ աստծո պաշտամունքը:

Խորենացին հաղորդում է, որ ջրհեղեղի ժամանակ, երբ Քսիստրիոսը (Նոյ) նավարկում է դեպի Հայաստան և հանդիպում է ցամաքի, նրա որդիներից մեկը՝ Սեմ անունով, գնում է դեպի հյուսիս-արևմուտք՝ երկիրը դիտելու: Նա դուրս է գալիս մի երկայնանիստ լեռան մոտ գտնվող փոքր դաշտ. որի միջով գետ էր հոսում դեպի Ասորեստանի կողմերը: Այս գետի մոտ նա կանգ է առնում և մնում մոտ երկու ամիս: Այդ լեռը նա իր անունով կոչում է Սիմ և նորից վերադառնում իր եկած տեղը:

Իսկ Սեմի կրտսեր որդիներից մեկը, որի անունը Տարբան էր, բաժանվում է հորից և իր երեսուն որդիներով ու տասնհինգ դուստրերով ու նրանց ամուսիններով բնակություն է հաստատում այդ գետի ափին: Տարբանի անունով այդ գավառը կոչվում է Տարոն, իսկ այն տեղը, ուր բնակվել էր Տարբանը, կոչվում է Յրոնք, այսինքն թե՛ այստեղից առաջին անգամ Սեմի որդին ու թոռները ցրվեցին, բաժանվեցին նրանից:

Տարոնի կամ Մշո տեղանունները ստուգաբանող այս վարդեմի ավանդությունը կապվում է ջրհեղեղի առասպելին, այսինքն՝ հետջրհեղեղյա ժամանակաշրջանում Հայաստանի առաջին բնակիչների առասպելաբանական պատմությանը և վկայում Տարբան-Տարուն-Տարոն անվան իւր հնության և դիցական ծագման մասին:



Մի անգամ Պոնտու ծովի<sup>1</sup> ափին Տորքը հանդիպում է թշնամու նավերի. հարձակվում է նավերի վրա, ուզում է խորտակել, բայց նավերն արագ հեռանում են ծովի խորքերը: Տեսնելով, որ դրանց չի կարող հասնել, Տորքը ծովափին եղած լեռներից բլրաշափ ժայռեր է պոկում և նետում նավերի հետևից: Նետած ժայռերից ծովում խիստ ալեկոծություն է բարձրանում, նավերից շատերը ընկղմվում են ծովի հատակը, խորտակվում, իսկ մնացածներն էլ, ճեղքված ջրերի ալեբախումից, բազում մղոններ հեռու են մղվում:

---

<sup>1</sup>Ան ծով:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

---

## ՀԱՅՈՑ ՀԻՆ ԿԵՂԵՐԸ





## «ՎԻՊԱՍԱՆՔ» ՎԻՊԱՇԱՐԸ

### «Վիպասանք» վիպաշարը\*

#### ՏԻՓՐԱՆ ՄԵԾ

Տիգրանը հայոց թագավորներից ամենահզորն էր, ամենախոհեմը և ամենաբաջը: Նա պարսից Կյուրոս Մեծ թագավորի աջակիցն էր մարաց իշխանությունը տապալելիս: Նա հնազանդեցնում ու նվաճում է հույներից, ընդարձակում Հայոց աշխարհի սահմանները:

Իր բացառիկ արիությամբ ու քաջությամբ նա բարձրացնում է հայոց ազգի հարգն ու պատիվը, և հայոց ազգը, որ մինչև այդ օտարների լծի տակ էր հեծում, դարձնում է օտարների վրա գերիշխող ու հարկապահանջ: Նա լիացնում է Հայոց աշխարհը ոսկով ու արծաթով, թանկարժեք քարերով, շքեղ ու գունագեղ զգեստներով: Նրա օրոք հայոց հետևակ մարտիկները դառնում են ձիավորներ, պարսավորներ՝ դիպուկ աղեղնավորներ, մահակավորները զինավառվում են սուսերներով ու տեգավոր նիզակներով, անգրահ մարտիկները վահանավորվում են ու զրահավորվում: Եվ երբ բոլոր այդ զորատեսակները ի մի էին հավաքվում, ապա նրանց շքեղ զինավառության, շողշողուն գեներ ու զրահի գեթ փայլը բավական էր թշնամուն ընդմիջտ վանելու և հալածելու համար:

Նա խաղաղություն, շենություն, լիություն բերեց Հայոց աշխարհին:

Տիգրանը խարույաշ, գանգրահեր սղամարդ էր՝ գունեղ երեսով, մեղմահայաց, թիկնեղ ու վայելչակազմ. ուտել-խմելու մեջ պարկեշտ էր ու չափավոր, խրախճանքների մեջ՝ օրինավոր, վարքուբարքով՝ ժուժկալ:

Իբրև թագավոր՝ արդարամիտ էր, արդարադատ, հավասարակշռված. ոչ լավագույններին էր նախանձում, ոչ էլ նվաստներին արհամարհում, միշտ ձգտում էր բոլորի վրա տարածել իր խնամքն ու հովանավորությունը:

\* Այս շարքն ամբողջապես շարադրված է ըստ Մ. Խորենացու «Հայոց պատմության»: «Վիպասանքը» կամ «Երգք վիպասանացը» հայ հնագույն և առաջին առասպելաբանական վեպն է, հյուսված հայոց Տիգրան, Երվանդ, Արտաշես, Արտավազդ, Տրդատ անուններով տարբեր թագավորների արարքների շուրջը՝ առասպելաբանական մոտիվներով հարակցված կամ գունավորված:

## Տիգրան և Ածիահակ

Ածիահակը<sup>1</sup> Մարաստանի թագավորն էր և Տիգրանի դաշնակիցը: Բայց Տիգրանը միաժամանակ դաշնակիցն էր Մարաստանի թշնամի պարսից Կյուրոս թագավորի: Այս դաշնակցությունը շատ էր մտահոգում և անհանգստացնում Ածիահակին: Նա ամեն անգամ հիշելով Կյուրոսի և Տիգրանի դաշնակցությունը, անհանգստանում էր, մնում էր անքուն և հաճախ իր խորհրդականներին հարց էր տալիս, թե ինչ հնարներ ու միջոցներ կարելի է գտնել՝ քանդել տալու սիրո կապը պարսիկի և բազմաբյուր գործ ունեցող հայ Տիգրանի միջև:

Այս տևական մտատանջություններից ու կասկածներից ալեկոծված, մի գիշեր Ածիահակը այնպիսի երագ է տեսնում, որ ոչ արթուն ժամանակ էր աչքով տեսել և ոչ էլ երբևէ ականջով լսել:

Ածիահակը այդ երագից սարսափահար, քնից վեր է թռչում և կեսգիշերին, չսպասելով լուսանալուն, շտապ կանչում է իր խորհրդակիցներին: Երբ խորհրդակիցները հավաքվում են, Ածիահակը տըրտում ու մտահոգ, հայացքը գետնին հառած, խոր թառանչ է արձակում: Խորհրդակիցները հարցնում են պատճառը, իսկ նա ժամերով լուռ է և, ի վերջո, հեծկլտանքով նրանց պատմում իր տեսած ահավոր երագը:

— Իմ սիրելիներ, — ասում է նա, — երագումս ես մի անձանոթ երկրում էի, մի բարձրաբերձ լեռան մոտ, որի գագաթը թվում էր պատած սարսափելի սառնամանիքով: Կարծես մեկը ասելիս լինեք, թե դա Հայկազանց երկիրն է:

Երբ ես երկար նայում էի այդ լեռանը, հանկարծ մի ծիրանագգեստ կին երևաց՝ ծածկված երկնագույն քողով, բարձր լեռան գագաթին նստած: Կինը բարձրահասակ էր, խոշոր աչքերով, կարմիր այտերով և ծննդաբերության ցավերով էր բռնված:

Ես հիացմունքով ու ակնապիշ երկար ժամանակ նայում էի այդ կնոջը: Հանկարծ կինը ազատվեց և բերեց երեք զավակ, երեքն էլ հասակով ու տեսքով՝ կատարյալ դյուցազուններ: Առաջինը առյուծի վրա նստած սլացավ դեպի արևմուտք, երկրորդը՝ ընձի վրա հեծած, դիմեց հյուսիս, իսկ երրորդը վիթխարի վիշապ սանձած՝ բուռն թափով հարձակվեց մեր տերության վրա:

Այս խառն երագների մեջ մեկ էլ ինձ թվաց, թե ես կանգնած եմ իմ ապարանքի տանիքին, ուր ցայտում էին բազմաթիվ գունագեղ շատրվաններ. այնտեղ էին կանգնած նաև մեզ պատկոհ աստվածները՝ իրենց հրաշալի տեսքով, և ես, ձեզ հետ միասին, նրանց պատվում էի զոհերով և խնկով: Այդ պահին հանկարծ վեր նայեցի և տեսա այն վիշապ հեծած մարդուն, որ արծվի նման վայր սլանալով հարձակվեց մեզ վրա և մոտենալով, ուզում էր կործանել մեր աստվածներին: Այդ պահին ես կովի մեջ մտա և այդ սքանչելի դյուցազնի հարձակումն ինձ վրա ընդունեցի: Նախ նիզակների տեգերով սկսեցինք միմյանց մարմինները խոցել և արյան վտակներ հոսեցնել, որի հետևանքով ապարանքի արեգակնատիպ երեսը դարձավ արյան ծով: Հետո երկար ժամանակ կովեցինք այլ գեներով:

Բայց գուր եմ խոսքս այսքան երկարացնում, որովհետև կոփվել վերջացավ իմ կործանումով: Տազնապալի հուզմունքից սաստիկ քրտնել էի, բունս փախավ, և թվում էր, թե այլևս կենդանի չեմ: Կարծում եմ, որ այս երագս ուրիշ բան չի նշանակում, բան այն, որ Հայկազյան Տիգրանի կողմից մեզ վրա անակնկալ հարձակում է սպասվում: Ուստի խնդրում եմ ձեզ, աստվածների օգնությամբ, խոսքով ու գործով, բարի խորհրդով մեզ աջակից ու օգնական լինել:

Խորհրդակիցները բազմաթիվ օգտակար մտքեր ու խորհուրդներ են առաջարկում Ածիահակին. նա շնորհակալությամբ ընդունում է, ապա դիմելով նրանց ասում.

— Ո՛վ սիրելիներ, ձեզանից բազում հանձարեղ և իմաստուն խորհուրդներ լսելուց հետո կասեմ և իմը, որը աստվածների օգնությունից հետո, կարծում եմ, լավագույնն է և օգտակարը: Թշնամիներից

<sup>1</sup> Ածիահակը իրանական առասպելաբանության չար վիշապն է՝ Ածի Դահական: Ածի նշանակում է իծ, օձ, վիշապ. որի դեմ կովում է ամպրոպի աստված Թրայետառնան: «Ծահ-Նամեոս» Ածի Դահական հանդես է գալիս իբրև օտար բռնակալ թագավոր՝ Ջոհակ անունով, որի դեմ կովում, հաղթում և որին շղթայում է Հրուդենը: Այս առասպելական վիշապ Ածի Դահական հայոց հին վեպում դարձել է Մարաստանի թագավոր, որին հաղթում և սպանում է Տիգրանը:

զգուշանալու, նրանց մտադրությունը գուշակելու և նրանց կործանելու համար առհասարակ լավագույն ձևը սիրո միջոցով դավելն է: Եվ քանի որ այդ միջոցն այժմ անհնարին է գործադրել գանձերով կամ կեղծ ու պատիր խոսքերով, ապա, կարծում եմ, որ Տիգրանի դեմ որոգայթ լարելու ամենահարմար ձևը նրա քրոջը՝ գեղեցկագույն և խոհեմ Տիգրանուհուն, կնության առնելն է: Մեր խնամիական կապերը նախ լայն հնարավորություն կընձեռեն ազատ ու համարձակ կրթելության, ապա և Տիգրանի մտերիմ-նեղին գանձերով ու պատվի խոստումներով կաշառելու, որպեսզի նրանք կամ թաքուն սպանեն Տիգրանին, կամ էլ նրան լքելով մատնեն մեր ձեռք, իբրև մի անզոր տղայի:

Բարեկամներն այս խորհուրդը իմաստուն համարելով, անցնում են գործի: Ածդահակը իր խորհրդակիցներից մեկին մեծ գանձ է տալիս և ուղարկում Տիգրանի մոտ հետևյալ նամակով.

«Քո եղբայրությունը գիտե, որ աշխարհում ոչ մի բան այնքան օգտակար չէ, քան աստվածների պարգևած սերն ու միաբանությունը, մանավանդ իմաստունների և հզորների միջև: Այդ դեպքում դրսից խոտվություններ չեն ծագի, ծագելու դեպքում էլ՝ իսկույն կընկճվեն, իսկ ներքին խոտվությունները կհալածվեն, որովհետև դրսից նպաստող չի լինի: Բարեկամությամբ պայմանավորված այս շահավետ օգուտը նկատի առնելով, ուզում եմ առավել խոր ու հաստատուն դարձնել սերը մեր միջև, որպեսզի երկուսս էլ ապահով զգալով՝ հաստատուն և ամբողջական պահենք մեր տերությունները: Այդպես էլ կլինի, եթե դու ինձ կնության տաս քո քրոջը՝ Հայոց մեծ օրիորդ Տիգրանուհուն: Եվ եթե համաձայնես, ապա նա կդառնա թագուհիների թագուհի: Ողջ եղիր, մեր թագակից և սիրելի եղբայր»:

Պատգամավորը գալիս է Տիգրանի մոտ, հանձնում նամակը: Տիգրանը համաձայնում է իր գեղեցիկ քրոջը՝ Տիգրանուհուն, կնության տալ Ածդահակին: Տիգրանն անտեղյակ իր դեմ նշույթով խարդավանքին, քրոջն արքայավայել ուղարկում է Մարաստան: Ածդահակն ամուսնանում է Տիգրանուհու հետ և նրան իր կանանց մեջ առաջինն է դարձնում: Պատճառը ոչ միայն իր նեղ մտադրությունն էր, այլև Տիգրանուհու անչափ գեղեցկությունը:

Ածդահակը Տիգրանուհուն տիկնության կարգի մեջ է հաստատում և իր թագավորության մեջ ամեն ինչ կատարում նրա կամքով ու ցանկությամբ, հրամայում է անգամ, որ բոլորը Տիգրանուհու հրամանին ենթարկվեն և ամեն ինչ կատարեն նրա ուզածի պես:

Ածդահակն այնուհետև սկսում է մեղմ շողոքորթությամբ Տիգրանուհուն տրամադրել եղբոր դեմ:

— Դու տեղյակ չես, — ասում է Ածդահակը, — որ քո եղբայր Տիգրանը կնոջ՝ Զարուհու դրդմամբ, նախանձում է քեզ Արյաց<sup>1</sup> տիկին դառնալուդ համար: Այս նախանձի հետևանքը կլինի իմ մահը, որից հետո Զարուհին ինքը կդառնա Արյաց վրա տիկին և աստվածուհիների տեղը կգրավի: Այժմ ամեն ինչ քեզնից է կախված, կամ մ պիտի լինես եղբայրասեր և հանձն առնես մեր խայտառակ կործանումը Արյաց առաջ, կամ քո բարին գիտակցելով, մի օգտակար խորհուրդ խորհես մեր ապագայի մասին:

Ածդահակի այս նեղ խոսքերի տակ թաքնված էր նաև մի սպառնալից ակնարկ, որ եթե Տիգրանուհին իր կամքի համաձայն չգործի, ապա նա կսպանվի: Իսկ խորագետ Տիգրանուհին լավ կուսիելով ամուսնու դավադիր մտադրությունը, մեղմ ու սիրալիր խոսքերով հանգստացնում է Ածդահակին, միաժամանակ մտերիմների միջոցով շտապ հայտնում եղբորը նրա դեմ նշույթով դավաճանության մասին:

Ածդահակն այնուհետև անցնում է իր խարդավանքի իրագործմանը: Նա պատգամավորներ է առաքում Տիգրանի մոտ, առաջարկելով բարեկամական տեսակցություն՝ իրենց երկու պետությունների սահմանագլխին: Այդ անձնական հանդիպումը Ածդահակը պատճառաբանում էր խիստ գաղտնի և կարևոր գործի անհրաժեշտությամբ, որն իբրև թե հնարավոր չէր հայտնել նամակով կամ պատվիրակների միջոցով:

Տիգրանը նախապես տեղյակ լինելով Ածդահակի նեղ դիտավորությանը, նամակով բացահայտ գրում է նրա հոգում թաքցրած խարդախ խորհուրդների մասին: Երբ այս ձևով ամեն ինչ բացահայտվում

---

Արիներ կամ արիացիներ էին կոչվում վաղնջական իմաստով՝ հնդկական և իրանական ցեղերը միասին վերցրած, առավել ուշ առումով՝ իրանական ցեղերը միայն: Քանի որ մարերը (մեդացիները) ևս իրանական ցեղեր էին, ուստի այստեղ այդ վերջին առումով է գործածված: Հետևաբար Արյաց տիկին, նշանակում է իրանական (այդ թվում նաև մարական) տիկին, այսինքն՝ մարաց թագուհի:



Է, Ածդահակի համար այլևս անհնար է դառնում որևէ խորամանկությամբ կամ պատրվակով իր չար խորհուրդը քողարկել: Եվ երկու տերությունների միջև ծայր է առնում լարված թշնամություն:

Տիգրանը սկսում է նախապատրաստվել պատերազմի: Նա Կապադոկիայի սահմաններից, Վրաց և Աղվանից աշխարհներից, Մեծ ու Փոքր Հայքից հավաքում է իր ընտիր զորագնդերը և իր ամբողջ զորությամբ, սքանչելի զինավառված՝ դիմում մեդացոց կողմերը:

Ահագնացող վտանգը հարկադրում է Ածդահակին ևս զորքերի մեծ բազմությամբ ելնել պատերազմի Հայկազունի Տիգրանի դեմ: Բայց Տիգրանը քրոջ Մարաստանում գտնվելու պատճառով պատերազմն առայժմ չի սկսում: Այս լարված հակառակությունը տևում է մոտ հինգ ամիս. այդ ընթացքում Տիգրանին հաջողվում է իր սիրելի քրոջը՝ Տիգրանուհուն, հնարամտությամբ փրկել և ազատել Ածդահակի ձեռից: Երբ այդ բանը հաջողվում է, Տիգրանը սկսում է պատերազմը:

Կռիվը տևում է բավական երկար, որովհետև քաջերը քաջերի հանդիպելով՝ մեկը մյուսին դյուրությամբ թիկունք չէր դարձնում: Կռիվն վերջ է տրվում միայն այն ժամանակ, երբ քաջամարտիկ նիզակավոր Տիգրանը դեմ առ դեմ հանդիպում է Ածդահակին: Տիգրանն իր երկար նիզակով այնպես է հարվածում Ածդահակի կրծքին, որ երկաթե ամուր զրահը ջրի պես ճեղքելով, նրան շամփրում է նիզակի լայնաթև տեգին, և երբ նիզակը դուրս է քաշում՝ Ածդահակի թոքի կեսը մնում է գեների ծայրին:

Կռիվն ավարտվում է Տիգրանի փառահեղ հաղթանակով: Կռիվից հետո Տիգրանը Տիգրանուհուն մեծ բազմությամբ և արքայազայել ուղարկում է իր անունով կառուցած Տիգրանակերտ քաղաքը և հրամայում շրջակա գավառները դնել քրոջ ծառայության տակ:

Հետագայում Տիգրանուհու սերնդից է սկիզբ առնում այս կողմերում հայտնի «Ոստան ազատության» կոչված արքայազարմ ազնվական դասակարգը:

Իսկ Ածդահակի առաջին կնոջը՝ Անուշին, և Ածդահակից սերված բազմաթիվ պատանիների ու աղջիկների, գերիների բազմությամբ հանդերձ, ավելի քան տասը հազար մարդ, Տիգրանը Մարաստանից բերում, բնակեցնում է Մասիսի արևելյան փեշերին՝ մինչև Գողթն գավառի սահմանները, Նախճավանի ամրոցի դիմաց: Այդ բնակավայրերն են Տամբատ, Ոսկիողա, Դաժգույնք և Երասխի ափին գլտնը լող այլ դաստակերտներ, որոնցից մեկն էլ Վրանջունիքն է:

Տիգրանը մարացիներին է թողնում նաև գետի մյուս ափին գտնվող Խրամ, Ջուղա և Խորշակունիք ավանները և մինչև Նախճավանի ամրոցն հասնող ամբողջ դաշտը: Անուշին, իր գավակներով հանդերձ, Տիգրանը խաղաղ բնակեցնում է Մասիս լեռան փեշի երկրաշարժից առաջացած փլվածքի վերջում և նրանց տրամադրում սպասավորներ:

## ՍԱՆԱՏՐՈՒԿ

Հայոց Սանատրուկ թագավորը Ատրիքի թագավոր Արգարի քրոջ որդին էր: Արգարի քույր Ավդեմ ձմեռ ժամանակ իր ծծկեր երեխայի հետ դեպի Հայաստան ճամփորդելիս՝ Կորդվաց լեռներում ընկնում է բքի տակ: Ուժեղ ձյունամրրկի պատճառով Ավդեմն ուղեկցող շքախումբը մոլորվում է, ցրվում այս ու այնտեղ, իրար կորցնում:

Երեխան գտնվում էր նրա դայակ Սանոտի մոտ, որը, Բյուրատ Բագրատունու քույրն էր և Խոսրեմ Արծրունու կինը: Սանոտը խմբից անջատվելով ու մոլորվելով Կորդվաց լեռներում, երեք օր ու գիշեր մնում է ձյան տակ, փոքրիկին պահում է իր ստինքների մեջ: Այդ ժամանակ աստվածները Սանոտի մոտ են ուղարկում մի նորահրաշ սպիտակ կենդանի, հավանաբար շուն, որը երեք օր պահպանում է երեխային, մինչև բուքը հանդարտվում է, և նրանց փնտրելու էլիս մարդիկ գտնում են նրանց անվնաս: Այդ պատճառով էլ երեխային կոչում են Սանատրուկ, այսինքն՝ Սանոտի տված, Սանոտի տուրք<sup>1</sup>:

<sup>1</sup> Անվան այս ժողովրդական ստուգարանությունը կարելի է հասկանալ նաև այլ կերպ՝ Ծանատրուկ, այսինքն՝ շան տված կամ պահած, ի պատիվ նրան փրկող շան:

Սանատրուկը վերաշինում է երկրաշարժից ավերված Մժբին քաղաքը, այն շրջապատում կրկնակի պարսպով ու պատվարով, քաղաքի մեջ կանգնեցնում իր արձանը, ձեռին մի դրամ բռնած, որ նշանակում է, թե այս քաղաքի շինության վրա բոլոր գանձերս ծախսվեցին և մնաց միայն այս դրամը:

Սանատրուկը սպանվում է որսի ժամանակ, պատահաբար արձակված ճետից:

### **ԵՐՎԱՆԴ**

Սանատրուկի մահից հետո թագավորության մեջ խռովություն է բնկնում, և թագավորությունն անցնում է ոմն Երվանդի ձեռքը: Երվանդի մայրը Արշակունի արքայական տոհմից էր՝ մի տգեղ, պատաված ու վավաշոտ կին, որի հետ ոչ ոք չէր համարձակվում ամուսնանալ: Նա, ցլի հետ ունեցած խստնակությունից, երկու մանուկ է ծնում: Երբ երեխաները մեծանում են՝ մեկի անունը դնում են Երվանդ, մյուսինը՝ Երվագ:

Երվանդը հասակն առնելով՝ դառնում է մի խիզախ ու հաղթանդամ մարդ: Նա ծառայության է անցնում Սանատրուկի մոտ, վերջինիս կողմից նշանակվում է վերակացու և առաջնորդ, աշխատում է նվիրված, բոլոր նախարարների մեջ դառնում է նշանավոր ու առաջնակարգ և իր խոնարհությամբ ու սուստաձեռնությամբ բոլորին իր կողմը գրավում: Եվ երբ Սանատրուկը մեռնում է, բոլոր նախարարները միաբանվում են և Երվանդին դնում թագավոր, բայց առանց Բագրատունիների կողմից թագադրվելու<sup>1</sup>: Երվանդն օժտված էր հմայական չար նայվածքով կամ ինչպես ասում են՝ չար աչքով: Արքունի սպասավորները ամեն առավոտ, լույսը բացվելիս՝ որձաքարե վեմեր էին բռնում Երվանդի առաջնորդ չար նայվածքից որձաքարերը պայթում էին:

### **Երվանդ, Արտաշես և Սմբատ**

Երվանդը թագավոր դառնալուց հետո, կասկածելով Սանատրուկի զավակներին, որ կարող են իր դեմ դավադրություն սարքել, բոլորին կոտորում է: Սանատրուկից մնում է մի փոքրիկ տղա՝ Արտաշես անունով, որին իր ստնտուն առնում և փախցնում է Հեր գավառի կողմերը, Մաղխազանի հովիվների մոտ: Այստեղից նա լուր է ուղարկում Արտաշեսի դայակին՝ Սմբատ Բագրատունուն, Բյուրատ Բագրատունու որդուն, որ բնակվում էր Սպեր գավառի Սմբատավան գյուղում:

Սմբատը, երբ իմանում է Սանատրուկի մահվան և նրա զավակների կոտորածի գույժը, վերցնում է իր երկու դասրերին՝ Սմբատանույշին և Սմբատուհուն, տանում տեղավորում է Բայբերդի ամրոցում, քաջարի մարդկանց Կամրոցին պահապան դնում, իսկ ինքը իր մի կնոջ և փոքրաթիվ մարդկանց խմբով գնում է մանուկ Արտաշեսին որոնելու:

Երվանդը Սմբատի մտադրությունն իմանալով, մարդիկ է ուղարկում նրան գտնելու և ձերբակալելու: Սմբատը գտնում է մանուկ Արտաշեսին, բայց երկյուղելով հետապնդումից, ծպտվում է և կերպարանափոխված ու հետիոտն երկար ժամանակ երեխայի հետ թափառում է լեռներում ու դաշտերում, պատսպարվում հովվական վրաններում, սնվում հովիվների մոտ, մինչև որ հարմար պահ գտնելով անցնում է Պարսկաստան, գնում պարսից Դարեհ թագավորի մոտ: Քանի որ Սմբատը քաջ մարդ էր և պարսիկներին վաղօրոք ծանոթ, պարսից զորապետներին հավասար մեծ պատվի է արժանանում թագավորի կողմից: Երեխան նույնպես ապրում է թագավորի որդիների հետ հավասար պայմաններում: Թագավորն անգամ Արտաշեսի և իր զավակների համար բնակության հատուկ տեղեր է հատկացնում Բատ և Ողոմն գավառներում:

Արտաշեսի փախուստը շատ է անհանգստացնում Երվանդին. նրան շարունակ տանջում է այն միտքը, որ Պարսկաստանով Սմբատի կողմից իր թագավորության դեմ չարիք է նյութվում: Արթուն

---

<sup>1</sup> Բագրատունի իշխանական տոհմի ավագ ներկայացուցիչները Արշակունի արքայական տոհմի ծիսական թագադիրներն էին, այսինքն՝ թագավորներին պաշտոնապես թագադրողները, առանց նրանց թագադրության, թագավորողը ասօրինի էր համարվում:

Ժամանակ կասկածները կրծում են նրա սիրտը, քնում էր խիստ անհանգիստ, իսկ քնած ժամանակ էլ սարսափելի երազներ էր տեսնում: Եվ նա վճռում է գործի դնել բոլոր հնարավոր միջոցները՝ կանխելու սպառնացող վտանգը:

Նա պատգամավորներ է ուղարկում Պարսից թագավորի մոտ մեծամեծ նվերներով, փորձում համոզել նրան՝ Արտաշեսին իր ձեռքը հանձնելու:

«Իմ արյունակից, իմ հարազատ, — գրում էր նա պարսից թագավորին, — ինչի ես այդ մարացի Արտաշեսին պահում, ինձ և իմ թագավորության հակառակորդ սնուցում. ինչի ես ակամեջ դնում այդ ավազակ Սմբատի խոսքերին, որ իբր թե Արտաշեսը Սանատրուկի որդին է: Նա ջանում է հովիվների և նախորդների որդուն Արշակունի դարձնել, տարածայնելով, թե իբր նա քո արյունակիցն ու հարազատն է: Նա Սանատրուկի որդին չէ. Սմբատը խաբվելով՝ մի մարացի տղա է գտել և զուր տեղը աղմուկ բարձրացրել»:

Նույն կերպ Երվանդը բազմիցս Սմբատի մոտ էր պատգամավորներ ուղարկում, ասելով, թե «Ինչի ես զուր տեղը այդքան նեղություններ կրում, խաբվելով սոնտուից՝ այդ մարի տղային ինձ հակառակորդ սնուցանում»:

Եվ ամեն անգամ Երվանդը երկուսից էլ տհաճ պատասխաններ է ստանում:

Տեսնելով, որ ուրիշ ելք չկա, Երվանդը մարդիկ է ուղարկում Բայրեթ, կոտորել տալիս ամրոցի պահապան քաջերին, գերում Սմբատի դստերին, տանում փակում է Անի ամրոցում:

### **Երվանդաշատի, Ծննդոց անտառի և Երվանդակերտի շինարարությունը**

Երվանդի թագավորության ժամանակ Երասխ գետը արդեն բավականաչափ հեռացել էր Արմավիրի բլրից. իսկ երբ ձմեռը երկարատև էր լինում, հյուսիսից փչող ցուրտ քամիները լրիվ սառցակալում էին գետի վտակը, և արքունիքը զրկվում էր խմելու ջրից: Դրանից նեղվելով՝ Երվանդը արքունիքը Արմավիրից տեղափոխում է արևմտյան կողմում գտնվող միակտուր ապաստած բլրի վրա, որի մի կողմը շրջափակում էր Երասխը, իսկ դիմացից հոսում էր Ախուրյան գետը: Երվանդը պարսպապատում է բլուրը, պարսպից ներս շատ տեղերում ժայռի քարերը կտրել տալով՝ փորվածքներ է բացում, հասցնում մինչև բլրի հատակը, հավասարեցնում գետնի մակերևույթին, այնպես, որ գետի ջրերը սկսում են հոսել փորվածքի մեջ և խմելու ջուր մատակարարել քաղաքին:

Այնուհետև Երվանդը կառուցում է միջնաբերդը, ամրացնում բարձր պարիսպներով, պարիսպների մեջ կանգնեցնում պղնձակոփ դուներ և ներքևից վերև, մինչև դուրը, երկաթե աստիճաններ դնում. սանդուղքի վրա, աստիճանների միջև գաղտնի որոգայթներ է սարքում: Եվ եթե մեկը կամենար թագավորին դավել և թաքուն բարձրանալ այդ աստիճաններով, իսկույն կբռնվեր: Աստիճանները, երկկողմանի էին. մի կողմինը կոչվում էր ցերեկային, ծառայում էր արքունի սպասավորների և առհասարակ բոլոր պալատականների ելումուտի համար, մյուսը կոչվում էր գիշերային, հատուկ շինված դավադիրներին բռնելու նպատակով:

Երվանդն այդ նոր քաղաքը կոչում է իր անունով՝ Երվանդաշատ, Արմավիրից ամեն ինչ տեղափոխում այնտեղ, բացի կուռքերից<sup>1</sup>, և այդ անում է իր անձի սպահովության նպատակով: Մտածելով, որ կուռքերը Երվանդաշատում դրվելու դեպքում կրոնական արարողությունների, հատկապես զոհաբերությունների ժամանակ այնտեղ կհավաքվի ժողովրդի հոծ բազմություն, և քաղաքի անվտանգության պահպանումը կոժվարանա, Երվանդը քաղաքից դեպի հյուսիս, մոտ քառասուն ասպարեզ<sup>2</sup> հեռավորության վրա, Ախուրյան գետի ափին շինում է մի փոքրիկ քաղաք, նման իր քաղաքին և կոչում Բազարան<sup>3</sup>: Արմավիրից նա այստեղ է տեղափոխում բոլոր կուռքերը, շինում մեհյաններ<sup>4</sup> և իր եղ-

<sup>1</sup> Հեթանոսական ժամանակներում պաշտվող և աստվածացվող մարդակերպ և կենդանակերպ արձաններ:

<sup>2</sup> Երկառության չափ, հավասար 600 ոտնաչափի:

<sup>3</sup> Ծագում է հին իրանական բազա — աստված բառից և նշանակում է աստվածների վայր, տեղ: Մ. Խորենացին Բազարանը համարում է կազմված բազին բառից, որ դարձյալ նույն բազաից է սերում և նշանակում է աստվածների զոհասեղան, զոհարան, տանարի այն սեղանը, որի վրա աստվածներին զոհ էին մատուցում: Հետևաբար, ըստ Խորենացու՝ Բազարան նշանակում է բազիններ ունեցող տեղ:

<sup>4</sup> Մեհյան՝ հեթանոսական տանար:

բայ՝ Երվանդին, Աշատուրան քունապետ :

Երվանդը գետի նյութապահին կողմում աճելում է նաև մեծ սև սառ, ազատապատում, դարձնում որսարգելափնոց, մեջը թողնում այսպեսիպաց ամյամներ, եղևիկներ, եղջերուներ, ցիուեր՝ ու վարսագ մեր, որոնք սանելով ու բազմանալով՝ լցնում են սևնաառը, և Երվանդը իր արքայական որսի օրերին որսում էր դրանց ու զվարճանում: Այդ որսարգելափնոցը Երվանդին անվանում է Ծննդոց սևնառ:

Երվանդը, դարձյալ իր անունով, կառուցում է Երվանդակերտը՝ սի շնագլխարնիկ դաստակերտ, գեղեցիկ ու չքնաղ հորինվածքով: Նա մեծ հովիտ բնակեցնում է մարդկանցով, կառուցում պայծառ շենքեր, յուսափոր, ինչպես աչքի բիր: Բնակեցված այդ շենքերի շուրջը կաննչապատում է ծաղկանոցներով ու բուրաստաններով, ինչպես բիրը շրջանակող աչքի բոլորակ: Իսկ նրա տնկած բազում այգեստանները նման էին գեղեցիկ, խիտ արանանունքների, որոնց նյութապահին կողմի կանարածն դիրքը իսկապես հիշեցնում էր գեղաստակի կույսերի հունքեր: Հարավում բնիկ դաշտերի հարթությունը նման էր ծնունների գեղեցիկ ոլորկուփջան. գետը բերանի էր նմանվում, իսկ նրա գույգ ափերի դարավանդները՝ երկթերթ շրթունքների: Եվ այս գեղատիր համալիրը թվում էր, թե իր անբթիս հաչաքքն ուրիշ է արքայանիստ բարձրավանդակին:

### Մմբատի և Արտաշեսի կռիվը Երվանդի դեմ

Այդ ժամանակ մանուկ Արտաշեսը Պարսկաստանում արդեն հասուն տղամարդ էր դարձել: Նրա դպրակ Սմնառը իր սագրավանու հնարություն շատ բաշխագործություններ է կատարում հոգում Պարսկաստանի և արժանանում արքայց նախարարների ջերմ համակրանքին: Նախարարների բազմխառում են իրենց թագավորին՝ Մմբատին արևանացնել պարզելների լատ նրա ցանկություն: Թագավորը սիրով համաձայնում է և հանձնարարում նախարարելիին.

- Իմացեք, ինչ է ցանկանում այդ բաշ տղամարդը:

- Չեղոյ տնման բարեբալություն, -- տալով են նախարարները, -- Մմբատն այդ բան չի կամենում, բան քո արչունակից Արտաշեսին՝ Սաննարուկի որդուն, որ գրկված է իր թագավորությունից, գարձյալ իր թագավորություն մեջ հաստատել:

Այրապից արքան հոժարում է, Մմբատին է հանձնում Ասորպատանականի գորքերը և Ասորպատանի գորքերի մի մասը, հանձնարարում, որ Արտաշեսին տանեն և իր նաչրենական գանին հաստատեն:

Երվանդը գտնվում էր Ռոսիք գաղառում, երբ նրան լուր է հասնում, թե Մմբատը պարսից թագավորի մեծ գորքով գալիս է քո վրա՝ թագավորությունը մանուկ Արտաշեսին հանձնելու:

Լուրն առնելով՝ Երվանդը Ռոսիքում իր նախարարներից շատերին կողմնապահներ է Աշատուրան և ինքը շտապ վերադառնում իր քաղաքը, Հայոց, Պրոսց, Սևասիլայի և Միջագետքի կողմերից մեծ գորք հավաքում:

— —

Ընթերցանողական կրթի սպասավոր Քրնտուտ՝ բարձրի պետ. սովագ քուն: 1901 թ. արդի էջ:



Գարնանային օրեր էին, ուստի և բոլոր գորքերը շուտով հավաքվում են Երվանդաշատ: Իր հետևակ գորքի բազմությամբ գալիս է նաև Աժդահակից սերված Մուրացյան ցեղի տանուտեր Արգամը, որին Երվանդը վերադարձրել էր իր թագավորության երկրորդության գահը: Երվանդը Արգամին և բոլոր նախարարներին արժանացնում է մեծ պատիվների ու պարգևների, իսկ ժամանած գորքերի բոլոր զինվորներին՝ առատորեն վարձատրում:

Այդ ժամանակ Սմբատը մանուկ Արտաշեսի հետ իր գորքով շտապ մոտենում է Ուտիքի սահմաններին: Այստեղ Երվանդի թողած կողմնապահ նախարարներն իրենց գորքով ընդառաջ են գալիս Սմբատին և միանում նրան: Երբ այդ լուրը հասնում է հայոց մյուս նախարարներին, նրանց մեջ խլրտում է ընկնում, բարոյալքվում են և մտածում անջատվել Երվանդից, մանավանդ, որ Հոռմից ուշանում էր սպասվող զինվորական օգնությունը: Որքան նախարարները բարոյալքվում էին, այնքան Երվանդը առատացնում էր պարգևները, յուրաքանչյուրին մեկամեկ բաշխում իր գանձերը: Եվ որքան շատ էր բաշխում, այնքան ավելի ատելի էր դառնում, քանզի բոլորն էլ լավ գիտեին, որ դա ոչ թե առատաձեռնությունից է բխում, այլ երկյուղից: Նրանց, ում շատ էր բաշխում, չէին համակրում իրեն, իսկ ում քիչ էր բաշխում՝ դառնում էին իրեն թշնամի:

Սմբատը մանուկ Արտաշեսի հետ գալիս հասնում է Գեղամա ծովի ափերը և շտապում օր առաջ հասնել Երվանդի գորքերի բանակատեղին: Երվանդի գորքերի բազմությանը արժեք չտալով, Սմբատը փոքր-ինչ երկյուղում էր Մուրացյան Արգամից, քանի որ նա քաջ մարդ էր և իր ձեռքի տակ ուներ բազմաթիվ տեղավորներ:

Երվանդն իր գորքով ճամբար էր դրել Երվանդաշատից ավելի քան երեք հարյուր ասպարեզ դեպի հյուսիս՝ Ախուրյան գետի վրա: Իմանալով Սմբատի գորքերի մոտենալը, Երվանդը նրանց դեմ է հանում իր գորքերի բազմությունը և ճակատ կազմում իր ճամբարից ոչ հեռու: Արտաշեսը պատգամավորներ է ուղարկում Մուրացյան նահապետի մոտ, բազում երդումներ տալիս, որ ինքը Երվանդից ստացած նրա բոլոր արտոնություններն ու ունեցվածքը նրան կթողնի, դեռ կրկնակին էլ կավելացնի, միայն թե նա լքի Երվանդին և հեռանա:

Երբ Երվանդի գորքերի ճակատի դիմաց երևում են Արտաշեսի առաջապահ ջոկատների զինանշանները, Արգամը իր հետևակների բազմությունն առնում և մի կողմ է քաշվում: Այդ ժամանակ Սմբատը հրամայում է պղնձե փողեր հնչեցնել ի նշան պատերազմի և իր գորքի ճակատն առաջ տանելով՝ խոչնդում է Երվանդի գորքերի վրա, ինչպես արծիվը՝ կաքավների՝ երամի: Հայոց նախարարները, որոնք իրենց զորագնդերով Երվանդի բանակի աջ ու ձախ թևերն էին կազմում, միանում են Սմբատի գորքին:

Ճակատամարտում սուկալի կոտորած են կրում Երվանդի գունդը և Միջագետքի գորքերը: Իսկ տավրոսցի քաջերը, որոնք Երվանդին խոստացել էին, թե կսպանեն Արտաշեսին, մահը աչքերն առած մաքառում են Արտաշեսի դեմ: Տավրոսցիների դեմ հետիոտն դուրս է գալիս Արտաշեսի ստնտուի որդի Գիսակը. կովի մեջ մտնելով՝ կոտորում նրանց, բայց ինքն էլ սրի հատու հարվածից կորցնում է դեմքի կեսը և մահանում:

Երվանդի մնացած գորքերը պարտվելով՝ փախուստի են դիմում:

Պատերազմի դաշտից փախչում է նաև Երվանդը: Նա ձիով բազմաթիվ ասպարեզներ է կտրում անցնում, ճամբարից մինչև իր քաղաքը հաստատած իջևաններում նորանոր ձիեր է փոխում, հեծնում, շարունակում փախուստը: Երվանդին կրկնակոխ հետապնդում է Սմբատը, հալածում գիշերով մինչև քաղաքի դուռը:

Իսկ մարաց գորքերը, որ Երվանդի գնդի բանակատեղն էին անցել, մթության մեջ իջևանում են դիակների վրա: Արտաշեսն էլ գալով հասնում է կաշվից և կտավից պատրաստված Երվանդի կլոր վրանին, իջնում, գիշերում է այդտեղ: Առավոտյան նա տիրաբար կարգադրում է գորքին՝ սպանվածներին թաղել, իսկ այն հովիտը, ուր դիակների վրա բանակել էր մարաց գորքը, կոչեց Մարաց մարգ, ճակատամարտի տեղն էլ՝ Երվանդավան, այսինքն՝ Երվանդին վանելու տեղը:

Արտաշեսը գորքով շարժվում է դեպի Երվանդաշատ: Կեսօրից առաջ հասնում է Երվանդի դատակերտը և գորքին հրամայում միաձայն աղաղակել «Մար ամատ», որ հայերեն նշանակում է՝ «Մարը եկավ»: Դրանով Արտաշեսը հիշեցնում էր այն վիրավորանքն ու թշնամանքը, որ Երվանդը տածելով իր նկատմամբ, իրեն մար էր համարում և նույնն ուզում էր հավատացնել պարսից թագավորին ու Սմբատին: Զինվորների այս միաձայն բացականչության հետևանքով էլ Երվանդի դատակերտը այնուհետև

կոչվում է Մարմետ, հավանորեն, Արտաշեսի կամքով, որպեսզի Երվանդի անունը այդ դաստակերտի վրայից ընդմիջտ վերացվի:

Սմբատը գիշերով հետապնդելով Երվանդին, իր փոքրաթիվ վաշտով հասնում է Երվանդաշատի դարպասների մոտ, քաղաքի դուռը պահում, սպասելով Արտաշեսի գալուն: Երբ Արտաշեսը ամբողջ զորքով հասնում է քաղաքին, սկսվում է հարձակումը քաղաքի վրա: Դիմադրությունը երկար չի տևում. չդիմանալով Արտաշեսի քաշերի ճնշմանը, ամրոցի մարդիկ անձնատուր են լինում և բացում քաղաքի դուռը: Զինվորներից մեկը ներս մտնելով ամրոց, վաղորով<sup>1</sup> հարվածում է Երվանդի գլխին, ջախջախում գլուխը, ուղեղը ցրում հատակին: Բայց Արտաշեսը հիշելով, որ Երվանդի մեջ Արշակունյաց տոհմի արյան խառնուրդ կա, հրամայում է թաղել նրան և վրան մահարձան կանգնեցնել:

## ԱՐՏԱՇԵՍ

Երվանդի մահից հետո Սմբատը մտնում է արքունական գանձարանը, ստուգում գանձերը և այնտեղ գտնում Սանատրուկ արքայի թագը: Նա թագը դուրս է բերում, դնում Արտաշեսի գլխին, թագադրում և համայն Հայոց աշխարհի վրա կարգում թագավոր:

Արտաշես թագավորը մեծ պարգևներ է քաշխում իրեն օգնական դարձած մարսաց ու պարսից զորքերին և նրանց պատվով ու հարգանքով ճանապարհ դնում իրենց երկիրը:

Արտաշեսը կատարում է իր խոստումը՝ նաև Մուրացյան Արգամի նկատմամբ. նա քաջ Արգամին արժանացնում է իր խոստացած արքայական երկրորդության գահին, նրան պարգևում հակինթազարդ պսակ, զույգ ականջներին գինիքեր, մի ոտին կարմիր կոշիկ կրելու, ոսկե գոլա և պատառաքաղ գործածելու, ոսկեղեն զավաթներով և նվագով գինի խմելու իրավունք:

Նման պատիվների է արժանացնում նաև իր դայակ Սմբատին, բացառությամբ գինիքեր և կարմիր կոշիկ կրելու իրավունքի: Թագադիր ասպետության և արևմտյան զորքերի հրամանատարության աստիճաններից բացի, նա Սմբատին է վստահում նաև հայոց բոլոր զորքերի, երկրի բոլոր գործակալների և ամբողջ արքունական տան տնօրինությունը:

Արտաշեսը անմասն չի թողնում նաև իր ստնտոի ժառանգներին: Նա Գիսակի թոռ Ներսեհի ցեղը արժանացնում է նախարարական տոհմի պատվի և տոհմանունը կոչում Դիմաքսյան<sup>2</sup> ի նշան Գիսակի քաջագործության, երբ նրա դեմքը սրով կիսվեց՝ Արտաշեսին պաշտպանելիս:

Արտաշեսը այդ օրերին նախարարական տոհմի պատվի է արժանացնում նաև Տուրի տասնհինգ զավակներին, տոհմը կոչում նրանց հոր անվամբ՝ Տրունի: Բայց նրանք այդ պատվին են արժանանում ոչ թե իրենց հոր քաջագործության համար, այլ լրտեսության: Տուրը Սմբատի լրտեսն էր Երվանդի արքունիքում, մտերիմ էր Երվանդին և վալելում էր նրա վստահությունը: Նա արքունիքի բոլոր կարևոր լուրերը ժամանակին հաղորդում էր Սմբատին, որի պատճառով էլ սպանվում է Երվանդի կողմից:

Այնուհետև Արտաշեսը հրաման է տալիս Սմբատին՝ գնալ Ախուրյանի վրա գտնվող Բագարան ամրոցը և սպանել Երվանդի եղբորը՝ Երվազին: Սմբատը գնում է Բագարան, բռնում Երվազին, հրամայում է վզից երկանաքար կապել և նետել գետի հորձանուտը: Երվազի փոխարեն Սմբատը բազինների վրա քրմապետ է նշանակում Արտաշեսի մտերիմ, մի երազահամ մոզի աշակերտի, որին իր ուսուցչի առիթով կոչում էին Մոզպաշտե: Սմբատը ավարի է ենթարկում Երվազի գանձերն ու հինգ հարյուր ծառաներին, վերցնում է նաև մեհյաններում կուտակված գանձերից լավագույնները և բերում Արտաշեսին: Վերջինս Երվազի ծառաներին պարգևում է Սմբատին, իսկ բերած գանձերի վրա նորերն ավելացնելով, հրամայում է տանել պարսից Դարեհ արքային նվեր՝ ի նշան շնորհակալության ու երախտագիտության, իբրև հոր և օգնականի:

Սմբատը Բագարանից գերած Երվազի ծառաներին տանում բնակեցնում է Մասիսի թիկունքում գտնվող իր ձեռակերտում և այն անվանում դարձալ Բագարան:

Վաղր — սակր, տապար:

Մ. Խորենացին Դիմաքսյան տոհմանունը բացատրում է ժողովրդական ստուգաբանությամբ, կազմված իբրև դիմա և կես լատերից:

## Արտաշատի շինարարությունը



Մի անգամ Արտաշեսը գնում է այն տեղը, ուր Երասխի ու Սև-  
ձամորը միմյանց են խառնվում: Տեղը նրան շատ է դուր գալիս, մա-  
նավանդ տեղում բարձրացող բլուրը: Եվ նա վնաս է բրբի վրա քա-  
ղաք կառուցել: Քաղաքի կառուցմանը մեծապես նպաստում էր  
Երասխ գետը, որի վրայով դյուրությամբ կարելի էր անտառափայտ  
տեղափոխել: Արտաշեսը կարճ ժամանակում բավական արագ և  
հեշտությամբ կառուցում է քաղաքը և այն իր անունով կոչում Ար-  
տաշատ:

Արտաշատում Արտաշեսը մեծյան է կանգնեցնում, Բագարա-  
նից այնտեղ փոխադրում Անանիա դիցուհու սրճանը և մնացած  
բոլոր հայրենական կուռքերը: Տիր առածո սքանչելի, սուրբ, կանգ-  
նեցնում է քաղաքից դուրս, ճանապարհի կտրին: Արմավիրից տար-  
ված և Երվանդաշատում վերաբնակեցված բոլոր հրեա գերիների  
Արտաշեսը դուրս է բերում և բնակեցնում Արտաշատում: Հրեա  
գերիներից լացի, Արտաշեսը Երվանդաշատի բոլոր վաղեջուրյուն-  
ները, որ դարձյալ տարված էին Արմավիրից կամ էլ Երվանդի կող-  
մից էին կառուցվել, հանում բերում է Արտաշատ: Գրանց վրա Ար-  
տաշեսն ալիկացնում է նաև նոր կառույցներ ու կերտվածքներ,  
կարգավորում և Արտաշատը դարձնում արքայանիստ քաղաք:

## Արտաշես և Սաթենիկ

Այս նույն ժամանակներում սղանները<sup>1</sup> կողկապան բոլոր լեռ-  
նականների հետ միաբանվելով և վրաց աշխարհի կեսը գրավելով,  
մեծ բազմությամբ գալիս տարածվում են Հաղոց աշխարհով մեկ:  
Այսանների ներխուժման դեմն սուներու համար Արտաշեսը նավա-  
քում է իր գործերը և էլնում պատերազմի: Այսանները հաղոց գոր-  
քերի ճնշումից փոքր-ինչ հետ են հանաճում, սեղնում Կուր գետը  
և բանակ դնում գետի հյուսիսային ափին: Արտաշեսն էլ նետա-  
պնդելով նրանց, իր գործով գալիս, բանակ է դնում Կուրի հարա-  
վային ափին: Գետը դառնում է թշուաճի երկու բանակների ջակ-  
մանարաններ:

Հաղոց և սլանների գործերի ընդմարման ժամանակ սղանների  
արքայազնը գերի է ընկնում Արտաշեսի ձեռքը: Այսանների թագա-  
վորը ստիպված հաշտություն է ինդրում: Նա պատգամավորներ է  
ուղարկում Արտաշեսի մոտ, խոստանալով այն ամենը, ինչ Արտա-  
շեսը կամենա, միաժամանակ առաջարկում երդմամբ դաշինք կրն-  
քե, որ դրանից հետո սղանների կորիճները այլևս չեն ասպատակի  
Հաղոց աշխարհը: Արտաշեսը նրաժարվում է պատանի արքայազ-  
նին վերադարձնել: Երբ այդ մասին խոստում է արքայազնի քույրը,  
այսանների չքնաղ արքայադուստր Սաթենիկը, որ գտնվում էր հոր  
մոտ, նրա բանակում, գալիս կանգնում է Կուր գետի ափին գտնվող  
մի մեծ դարավառի վրա և թարգմաներչևների միջոցով ձայն է տա-  
լիս Արտաշեսին.



<sup>1</sup>Սովետական ժամանակ ընկել է իր անվանումը և կոչվում էր Սաթենիկ:

Քեզ եմ տանում, քնք այր Արուաշես,  
Որ հաղթեցիր քաջ ազգին պանակս,  
Է՛կ լսիր պանակների գեղաշնչա դառեր խոսքը՝  
Տնոր պատանուն,  
Քանզի տուկ քեկի համար օրեկը չէ, որ դյուցազները  
Այ դյուցազների գավախներին գրկեն կանքից  
Ասե՛ ծառա դարձնելով՝ սարյուկների կարգում պանեն,  
Էվ հավերժ թշնամություն  
Երկու քաջ ազգերի միջև հաստատեն :

Արուաշեսը լսելով այս իմաստուն խոսքերը, գնում է գետափ և տեսնելով չքնաղ կույսին, սրտանց  
ցանկանում է նրան կին առնել: Իսկույն կանչում է իր դաշակ Սմբատին, նրան հայտնում իր սրտի փա-  
փազը: Միսածամանակ նա Սմբատին հայտնում է, որ կին առնելով պանների արքայադստերը, ինքը  
դաշինք և ուխտ կկնքի երկու քաջ ազգերի միջև և պատանուն խաղաղությամբ կվերադարձնի:

Սմբատը հավանություն է տալիս Արուաշեսի առաջարկին, անմիջապես մտոր է ուղարկում ալան-  
ների թագավորի մոտ, առաջարկում պանների օրհորդ Սաթենիկին կնության տալ Արուաշեսին:  
Ալանների թագավորն ասում է.

Եվ որտեղից պիտի տա քաջ Արուաշես  
Նազար տագարներ ու թոր ոչորներ  
Ալանների քաջազգի կույս օրհորդի փոխարեն :

Երբ Արուաշեսին հայտնում են Սաթենիկին կնության առնելու այս թանկ պայմանները, այնժամ

Նե՛մալ արի արքա Արուաշես գեղեցիկ Սևուկը (ձին),  
Եվ հանկո ռուկեղ շիկափուկ պարանը,  
Եվ որպես սրաթև արծիվ ունցկացավ գետը,  
Եվ նետեց ռուկեղ շիկափուկ պարանը,  
Կցեց մեջքը պանակ օրհորդի,  
Եվ շատ ցավեցրեց մեջքը փափուկ օրհորդի,  
Արագ հասցնելով բառակը ին՛:

Սուտիս պրվում է այս վիպական հատվածի մին հատրե՛ն քնագիրը.

Քեզ ասե՛մ, այր քաջ Արուաշես,  
Որ սողթեցիր քաջ ազգին Ալանաց՝  
Տուլ գարտանիդ,  
Ձի վասն միոյ օրևու ոչ է օրեն պիցազանց  
Ջազոյ դիցազանց գարմեց ըստնալ գլենդատութին,  
Կամ ծառայեցուցանելով ի սորիսց կարգի պանել,  
Եւ թշնամութիւն շափտե՛նուկս  
Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել.

Ետըր պտղակրեն ըստ է. հայերենում փոխառված, և նշանակում է տասը հազար:

Նուրբ այստեղ վարձանքով կամ գլխազնով կին առնելու հին սովորությանն է վերաբերում, երբ հարսնացուի համար փեսացուն  
գարտավոր էր վճարել մեծ գումար, ունեզվածք կամ անասուններ, որ կոչվում էր «վարձանք» կամ «գլխազին»: Այդ սովորությո-  
ւուն էլ հարստեղան է սուղ մեծամենաց ժողովուրդների կենցաղում.

Սուտիս պրվում է միշտու հատվածի քնագիրը.

Ի՛ն տառի ոսցե քաջս Արուաշես  
Նազարը ի հազարս, և թորու ի բնորոց  
Անդ քաջազգւոյ կույս օրհորդիս Ալանաց:

Նե՛մալ արի արքայն Արուաշես ի սեռու գեղեցիկ,  
Եւ հանեալ գուկեղ շիկափուկ պարանն,



Արտաշեսը բռնությանը առևանգելով գեղեցիկ Սաթենիկին, բերում է Արտաշատ, մեծ ու շքեղ հարսանիք հրավիրում, հետը ամուսնանում: Հարսանիքի ժամանակ, ըստ արքայական սովորության, երբ Արտաշեսն իբրև փեսացու մտնում է դահլիճը՝ գլխին ոսկե դրամներ են շաղ տալիս, իսկ երբ Սաթենիկն է մտնում ամուսնական առագաստը՝ մարգարիտներ են գլխին թափում: Եվ այնքան վսեմ ու շքեղ էր այս տեսարանը, որ գուսանները երգել են այն հետևյալ ձևով.

Ոսկի անձրև էր տեղում  
Արտաշեսի փեսայության պահին,  
Մարգարիտ էր տեղում  
Սաթենիկի հարսնության պահին<sup>1</sup>:

Արտաշեսը Սաթենիկին դարձնում է իր կանանց մեջ առաջինը: Սաթենիկից ծնվում է Արտավազը և ուրիշ շատ զավակներ:

### Արտաշեսի և Արտավազի կոիվը մարացի Արգավանի դեմ

Արտավազը երբ մեծանում է, դառնում է քաջ, ինքնահավան և հպարտ արքայազն: Մայրը՝ Սաթենիկը, գաղտնի սիրային կապեր է ուզում հաստատել վիշապազուն Արգավանի<sup>2</sup> (Մուրացյան Արգամի) հետ, սաստիկ տենչալով նրա սերը, և, հավանաբար, զանազան հմայական միջոցներով կամենում է նրա սիրտը գրավել: Արտավազն, ըստ երևույթին կուսհելով այդ, հորը՝ Արտաշեսին, գրգռում է Արգավանի դեմ, որ իբր թե նա ուզում է խլել նրա թագավորությունը և բոլորի վրա իշխել: Արտաշեսը հավատում է որդուն և արքայական երկրորդության գահը վերցնում է Արգավանից և հանձնում Արտավազին:

Մի անգամ Արգավանը Արտաշեսի պատվին խնջույք է կազմակերպում իր պալատում և Արտաշեսին իր զավակների հետ ճաշի հրավիրում: Ծառի ժամանակ պարզվում է, որ Արգավանը դավ է նու-

Եւ անցեալ որպէս զարծուի սրայն ընդ գետն,  
Եւ ձգեալ զուկէտը շիկափուկ պարանն՝  
Ընկէց ի սէջք օրիորդին Ալանաց,  
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,  
Արագ հասուցանելով ի բանակն իր:

<sup>1</sup> Ստորև դրվում է հին հայերեն բնագիրը.

Տեղ ոսկի տեղայր  
Ի փեսայութեանն Արտաշեսի,  
Տեղայր մարգարիտ  
Ի հարսնութեանն Սաթինկանն:

<sup>2</sup> Արգավանը մարաց Ածղահակ թագավորի սերնդից էր, որին Տիգրանը Անուշի հետ միասին բերում վերաբնակեցնում է Մասիսի փեշերին: Հին վիպական երգերում, որոնք կոչվում էին նաև թվկյաց երգեր, Ածղահակը ընթրնվում էր իբրև վիշապ, նրա կին Անուշը՝ վիշապների մայր, իսկ նրանց սերունդը՝ վիշապազուններ, այսինքն՝ վիշապի զավակներ: Մար անունը, որ հին մեդագիների լագգի անունն էր (այդտեղից էլ նրանց երկրի անվանումը՝ Մարաստան) պարսկերեն նշանակում է օձ: Եվ քանի որ մարերի թագավոր Ածղահակի անունը վիշապ էր նշանակում, ուստի ժողովրդի գիտակցության մեջ «մար» ցեղանունը ընթրնվել է իբրև օձ կամ օձեր, որոնց թագավորը վիշապն է (Ածղահակ): Մանավանդ որ հայկական հին ու նոր հայտատալիքներով Մասիս լեռան վրա վիշապ օձեր են բնակվում, իսկ Ածղահակի սերունդ մարերը վերաբնակվել էին Մասիսի փեշերին, ուստի և մարերն ու Մասիսի օձերը ժողովրդի մտածողության մեջ խառնվել են միմյանց և նույնացել: Այդ հին վիպական երգերում Արգավանին և նրա զավակներին, նույն այդ մտածողությամբ, կոչում էին վիշապազուններ: Խորենացին հավատ չընծայելով առասպելներին, երգերում հիշատակված Արգավան անունը, հավանաբար պատմական աղբյուրների հիման վրա, դարձնում է Մուրացյան տոհմի նահապետ Արգամ: Այնպես որ Արգավան և Արգամ անունները նույն անձի տարբեր անվանումներն են: Ընկն գերադասելիքն այս հատվածում Արգամի փոխարեն գործածել նրա ժողովրդական ձևը՝ Արգավան:

թել Արտաշեսի դեմ<sup>1</sup>: Արտաշեսի զավակները մեծ իրարանցում են բարձրացնում, քաշում Արգավանի ալևոր մագերը: Արտաշեսը խիստ հուզված ու ալեկոծված վերադառնում է Արտաշատ և իսկույն իր որդի Մաժանին մեծ զորագնդով ուղարկում է Արգավանի վրա, հրամայում Մուրացյան տոհմի անդամներից (վիշապագուններից) շատերին սպանել, Արգավանի ապարանքը (վիշապների տաճարը) այրել, և նրա չքնադագեղ և սիգաճեմ հարձին<sup>2</sup> Մանդուին, բերել իրեն հարճություն:

Մաժանը կատարում է հոր կամքը: Սակայն երկու տարի անց Արգավանը դարձյալ հնազանդվում է Արտաշեսին: Վերջինս ամեն ինչ վերադարձնում է Արգավանին, բացի հարձից:

Իսկ Արտաշեսի քաջ որդի Արտավազդը, որ Արգավանից վերցրել էր արքայական երկրորդության պատիվը, Արտաշատում իր ապարանքը կառուցելու համար տեղ չգտնելով, անցնում է մարաց մեջ և Ծարուրի դաշտ<sup>3</sup> կոչված տեղում կառուցում է Մարակերտը<sup>4</sup>: Նա Արգավանից խլում է նաև Նախճավանը և Երասխից հյուսիս գտնվող բոլոր գյուղերը, նրանց մեջ գտնվող բերդերն ու ապարանքները դարձնում սեփական ժառանգություն:

Արգավանի զավակները չհանդուրժելով Արտավազդի արարքները, դիմադրում են, բայց Արտավազդը հաղթում է, կոտորում է Արգավանին իր բոլոր զավակներով, կոտորում է նաև Մուրացյան տոհմի բոլոր երևելի մարդկանց, գրավում նրանց շեներն ու ամբողջ իշխանությունը: Արտավազդի սրից գրեթե ոչ ոք չի փրկվում, բացառությամբ մի քանի աննշան մարդկանց, որոնք փախչում են Արտաշեսի մոտ և ապաստան գտնում արքունիքում:

<sup>1</sup> Ամա ինչպես է ներկայացվում այդ դիպվածը հին վիպերգում.

Ճաշ ասեն գործեալ Արգաւանայ  
Ի պատիւ Արտաշիսի,  
Եւ խարդաւանակ լեալ նմին  
Ի տաճարին վիշապաց:

(«Ասում են՝ ճաշ կազմակերպեց Արգավանը ի պատիվ Արտաշեսի, Եվ խարդավանք նյութեց նրա դեմ վիշապների պալատում»):

<sup>2</sup> Հարճ — օրինական կնոջ հետ պահվող սիրունի:

<sup>3</sup> Ընկած է Արաքս գետի արևելյան ափի երկայնքով, Մասիսի ստորոտից մինչև Նախիջևանի դաշտը:

<sup>4</sup> Գտնվում է Վասպուրական աշխարհում, Նախիջևանից հարավ-արևմուտք:

Մարակերտի կառուցման մասին հատվածը հին վեպում նկարագրվում է հետևյալ ձևով.  
Արտաւազդայ ոչ գտեալ, ասեն,  
Քաջի որդւոյն Արտաշիսի,  
Տեղեկիկ ապարանից  
Ի հիմնեալն Արտաշատու՝  
Նա անց, ասէ, գնաց և շինեաց  
Ի մեջ Մարաց զՄարակերտ.  
Որ է ի դաշտին՝ որ անուանեալ կոչի Ծարուրայ:  
(«Արտավազդը՝ քաջ որդին Արտաշեսի, չգտավ, ասում են,  
Մի փոքրիկ տեղ ապարանքի  
Արտաշատի հիմնադրման ժամանակ.  
Նա անցավ, ասում է, գնաց և շինեց  
Մարերի մեջ Մարակերտը՝  
Այն դաշտի մեջ, որ կոչվում է Ծարուրա»):

## ՄՄԲԱՏ, ԱՐՏԱՇԵՍ ԵՎ ԱՐՏԱՎԱԶԴ

### Սմբատի արշավանքները Կովկաս և Կասբից աշխարհ

Սմբատը գեղեցիկ տղամարդ էր՝ բայց և վայելչակազմ, թեպետ փոքր-ինչ ծերացած, ալևոր մազերով, բայց աշխույժ էր, եռանդուն, արագաշարժ: Զույգ աչքերի մեջ արյան փոքրիկ նշաններ կային, որոնք շողում էին ոսկու և մարգարտի մեջ ագուցված կարմիր թանկարժեք քարի նման<sup>1</sup>:

Սմբատը միաժամանակ ամեն բանում զգուշավոր էր. հստակաարակշռված, պատերազմներում, իր խելքի ու շրջանալեցույթյան շնորհիվ, միշտ հաղթող էր դուրս գալիս:

Արտաշեսին լուր է հասնում, որ ալանների թագավորի՝ Սաթենիկի հոր մահից հետո, մի բունակալ մարդ խլել է իշխանությունը, բունությամբ թագավորում է Արանաց աշխարհի վրա և նստածում է Սաթենիկի եղբորը: Արտաշեսն իսկույն կարգադրում է Սմբատին մեծ զորքով գնալ Արանաց աշխարհ՝ Սաթենիկի եղբորն օգնելու:

Սմբատը զորքով գնում է Արանաց աշխարհ, հաղթում և երկրի սահմաններից դուրս բշտմ ինքնուկոչ բունակալին. Սաթենիկի եղբորը կարգում իր ազգի վրա թագավոր: Այնուհետև Սմբատը սպառնում է ալանների թշնամիների երկիրը, ավերում, բնակիչներին բոլորին գերի վերցնում և մեծ բազմությամբ բերում Արտաշատ: Արտաշեսը հրամայում է Սմբատի բերած գերիներին բնակեցնել Մասիսի մարտավարևելյան կողմը՝ Ծավարշական գավառում<sup>2</sup>, միաժամանակ սող գավառի վրա թողնելով վերաբնակեցված գերիների բնիկ հայրենիքի սևուկը՝ Արտազ:

Պարսից Արշակ վերջին թագավորի մահից հետո Արտաշեսը Պարսից աշխարհի վրա թագավորեցնում է նրա որդուն՝ պարսիկ Արտաշեսին: Բայց նրան չեն կամենում հնազանդիվ Պատիժահար կոչված գավառի, ինչպես նաև Կասպից ծովի եզերքի բնակիչները: Այս առթիվ հայոց Արտաշես թագավորի դեմ է ապստամբում նաև Կասբից երկիրը: Արտաշեսը ապստամբների դեմ է ուղարկում Սմբատին՝ հայոց բոլոր զորքերով, ինքն էլ լուր օր հետը գնում է՝ նրանց ողնկցելու:

Սմբատը բոլոր ապստամբներին հնազանդեցնում է, ավերում Կասբից երկիրը, բնակիչների մեծ մասին՝ նրանց թագավոր Զարդանանուսի հետ, գերեվարում, բերում Հայաստան:

Արտաշեսը ըստ արժանիույն գնահատելով Սմբատի ծառայությունները, նրան է պարգևում Գողթն գավառի շենքերում եղած արքունի հողերը, Աղտի սկունքները և, դրանցից բացի, նրան է թողնում նաև պատերազմից ձեռք բերած ամբողջ ավարը: Այս առթիվ Արտավազդը սաստիկ ետխառնում է Սմբատին, անգամ կամենում է նրան ապանել, բայց նրա դիտավորությունը բացահայտվում է և մեծ ջամ պատճառում Արտաշեսին:

Այս դեպքից հետո Սմբատը խոհեմաբար հրաժարվում է հայոց զորքի հրամանատարությունից, որի վրա աչք ուներ Արտավազդը, թողնում գնում է Ասորեստանի կողմերը: Սմբատը իր ձեռ ստրիքում կին էր ստել մի ասորեստանցու, որին շատ էր սիրում, ուստի գերադասում է գնալ. կնոջ հայրենիքի կողմերը բնակվել: Արտաշեսի հրամանով նա բնակություն է հաստատում Տմորիքում<sup>3</sup>, իսկ իր բերած գերիներին բնակեցնում Ալկիում<sup>4</sup>:

<sup>1</sup> Իրեննացու բնագրում սուր բարդ կոչ լուր է դրույթնություն, որ հունարեն բառացի նշանակում է փոքրիկ (վ) աղ. Կրակոմոր կոնր արդրոնիկու է՝ Կրակոմորը. կարմիր թանկարժեք քար, որի հունարեն անունը, բացառված չէ, որ ծագած լուր օձերի թագավորի՝ Ծամնարի գլխին պատկերագրող անգլիկ քարի Եռասպելական մեզալոգիայից:

<sup>2</sup> Համապատասխանում է արժեյան Մակոտի շրջանին, որ հենում կոչվել է նաև Ծավարշես կամ Արտազ:

<sup>3</sup> Հետագայում կոչվել է Կորդիթ, գտնվում է Արևմտ լեռն հարավ մասիս-տրեկրոս Մարզազոթի սերժավազում, Կորնր ուշ խարնում:

<sup>4</sup> Երդարազար Կորդիթ գավառում:

## Արտաշեսի որդիները

Մերառի գնացուց հետո հալոց գործերի ընդհանուր հրամանատարությունն Արտաշեսը հանձնում է Արտավազդին: Եղբայրները, իրենց կատանցից զրգովելով, սկսում են նախանձեղ Արտավազդին այդ պաշտոնի համար: Արտաշեսը եղբայրների միջև գծողությունը վերացնելու նպատակով յուրաքանչյուրին մի մի պաշտոն է շնորհում: Վրոյրին, որ խնայատուն ու բանաստեղծ մարդ էր, նշանակում է հազարապետ և նրան վստահում սարքունի տան բոլոր գործերի կառավարումը: Մաժանյին նշանակում է Անիի՝ Արամազդի տանարի քրմապետ: Չորքերի ընդհանուր հրամանատարությունը բաժանում է չորս մասի, արևելյան կողմի գործի հրամանատարությունը թողնում է Արտավազդին, արևմտյան կողմի գործը հանձնում է Տիրանին, հարավայինը վստահում է դարձյալ իր դաշակ ու բարեբար Սմբատին, իսկ հյուսիսային գործի հրամանատարությունը տալիս է վերջին որդուն՝ Չարենին: Չարենը հպարտ մաղղ էր, որսի սիրահար և որսորդության մեջ խիզախ, բայց սազմի գործերում՝ թույլ և դանդաղկոտ: Չարենի սար հետևողական բաշտմանը էր վրաց թագավոր Քարծամը, որը սպասամբեցնում է իր երկիրը Չարենի դեմ, գերում նրան և բախտարկում Կովկասում: Բայց Արտավազդն ու Տիրանը, Սմբատի հետ հասգործակցելով, պատերազմում են Քարծամի դեմ, իրենց եղբորը բանտից ազատում, դարձնում հայրենիք:

## Սմբատը փրկում է Արտաշեսի զավակներին

Հոռմեական կարքության մեջ հուզումներ են սկսվում: Արտաշեսը օգտվելով ստիժից, ապստամբում է հոռմեական տերության դեմ և հարկ վճարելուց հրաժարվում:

Դոռմեականու կայսրը զայրանալով, զորք է ուղարկում Արտաշեսի վրա: Հոռմեական զորքերը առաջ շարժվելով, հասնում են Կեսարիայի մոտերքը և Տիրանին, հալոց արևմտյան գործի հետ առաջ խառնած, բշում բերում են մինչև Բասենի մեծ դաշտը: Արտավազդը անցնում է հալոց արևելյան և հյուսիսային գործերի գլխար, հավաքում իր բոլոր եղբայրներին և Բասենում դուրս է գալիս հոռմեացիների դեմ: Ճակատամարտի ժամանակ հալոց զորքերը շատ նեղն են ընկնում: Այդ ժամանակ հարավային գործերով եղբայրներին օգնության է հասնում Սմբատը և մարտի մեջ մտնելով, ծանր վտանգից դուրս է բերում Արտաշեսի զավակներին: Չնայած իր պատկասելի տարիքին, Սմբատը երիտասարդի առուցությանը կազմակերպում է ճակատը, ճերտաբար կռվում, կատարյալ հաղթություն տանում և հոռմեացիներին հետապնդելով, հալածում մինչև Կեսարիայի սամանները:

## Մաժան

Հոռմում կայսր է նստում Տրալանուր: Կա սկզբում խաղաղեցնում է արևմտոքր, ապա անցնում է արևելք, դարձյալ իրեն ենթարկում եգիպտացիներին ու պաղեստինցիներին և զորքով շարժվում պարսիկների վրա: Արտաշեսը կռահում է իրադրությունը, իսկույն մեծամեծ ընձուկներով դուրս է գալիս Տրալանոսին ընդառաջ, ներում հալցում իր սրարքների համար, նախորդ տարիների չվճարված հարկերն էլ դնում նրա առաջ և արժանանալով ներման, վերադառնում Հալոց աշխարհը:

Էրբ Տրալանուր ննազանդեցնում է պարսիկներին և Ասորիքով հետ վերադառնում, նրան ընդառաջ է դուրս գալիս Արտաշեսի որդի քրմապետ Մաժանը և ամբատուստում իր եղբայրներին:

Արտաշեսի տնտեսական գործերի կառավարիչ:

Ներսիսի է տանված հին Անի, որ գտնվում էր Կարսի սի գավառում, Եփրատի ափի տիկն: Անիս հնուս հայտնի էր իրեն անմաշկեի ամրոց և մոզոր կենարտ: Աստու էր գտնվում մալոց գերագույն առած: Արամազդի մեծանք, իր կարգաձեռնելով: Արտաշեսյանների և Արշակունիների լազարությունն շրջանում սառ տարգում էին պատմում ուրբունի գանձերի մի տար: Այս տղ էին գտնվում նաև մալոց Արշակունի թագավորների կամուրջանները: Անիս հնուս գտնաբերված է մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերին Հալաատի կամուրջիս ոչնեմալոր բաղաթի տեղին, որ միջնադարից մալուն է ետև կամախ կամ ուղղակի Անի կամախ բաղադրյալ տեղում:

— Իմացիր, — ասում է, — հվ թագավոր, եթե Արտավազդին և Տիրանին երկրից չվտարես և հայոց գորբերը Չարեհին չհանձնես, ապա Հայոց աշխարհի հարկերին դու բնավ դյուրությունք չես տիրանա:

Մաժանը քենով էր լցված իրեն սնուցող Սմբատի դեմ և մի կողմից կամենում էր իր վրեժն առնել նրանից, մյուս կողմից Տիրանին հեռացնելով՝ դառնալ թե արևմտյան գործի հրամանատար և թե միաժամանակ մնալ քրմապետ:

Տրայանոսը, սակայն, զանց է առնում այս ամբաստանությունը և Մաժանին հետ դարձնում ձեռնունայն:

Արտավազդն ու Տիրանը իմանալով Մաժանի չար խորհուրդն ու արարքը, որսի ժամանակ դարան են սարքում, սպանում Մաժանին, և իբրև քրմապետի՝ տանում թաղում են Բագավանում:

### Արտաշեսի բարենորոգումները

Արտաշեսի թագավորության ժամանակ Հայոց աշխարհում մեծ ու նշանավոր գործեր են կատարվում: Ամենից առաջ նա շենացնում ու բազմամարդ է դարձնում Հայոց աշխարհը: Նա տարբեր երկրներից շատ տարբեր ազգություններ է բերում և վերաբնակեցնում Հայաստանի լեռնային վայրերը, դաշտերն ու հովիտները: Մշակել է տալիս երկրի լեռնային ու դաշտային բոլոր հողերը, և Հայոց աշխարհում նրա օրոք գրեթե անմշակ հող չի մնում: Արտաշեսը սահմանաբաժանման է ենթարկում գյուղերի և ագարակների հողատարածությունները: Այդ սահմանները որոշելու համար նա տաշել է տալիս քառակուսի քարեր, մեջտեղում պնակաձև փոսեր փորում, թաղում հողի մեջ, իսկ քարե փոսորակների վրա ամրացնելով՝ կանգնեցնում քարե քառակուսի կոթողներ<sup>1</sup>:

Արտաշեսը Հայոց աշխարհի ծովակների և գետերի վրա նավագնացություն է սահմանում, զարգացնում երկրագործությունը, ձկնորսությունը, շինել տալիս ձկնորսական տարբեր գործիքներ, սահմանում ու կարգավորում Հայոց բուն տոմարը, այսինքն՝ տարին տարբեր շրջանների, ամիսների, շաբաթների, օրերի բաժանելու գիտությունը:



<sup>1</sup>Մեր օրերում Արտաշեսի այս սահմանաքարերից Հայաստանում շատ են հայտնաբերվել: Դրանց վրա արաներեն արձանագրություններ են փոսագրված՝ Արտաշես Երվանդական (Երվանդունի) թագավորի անվան և սահմաններ դնելու մասին հիշատակություններով:

## Արտաշեսի մահը և թաղումը

Հռոմի Ադրիանոս կայսրի հրամանով Արտաշեսը գնում է Պարսկաստան, նրա հետ հանդիպելու: Հանդիպումը կայանում է Մարսքում, Սոհուդ կոչված տեղավայրում: Սակայն Արտաշեսը Մարսնում<sup>1</sup> հիվանդանում է: Նա Արեղյան տոհմի նահապետ Աբեղոյին ուղարկում է Եկեղյաց գավառի Երիզա ավանի Անահիտի մեհյանը՝ կուրքերից բուժում և երկար կյանք խնդրելու: Մինչև Աբեղոյի վերադարձը՝ Արտաշեսը վախճանվում է: Մահվանից առաջ Արտաշեսը երազում էր տեսնել հայրենի ծխանի ծուխն ու Նավասարդի՝ հին հայոց նոր տարվա առավոտը, արքայական ծխական որսով ու տոնախմբություններով: Եվ նա մեռնելիս ասում է.

Ռ՛վ կտար ինձ ծուխը ծխանի  
Եվ առավոտը Նավասարդի,  
Եղնիկների վազքը և եղջերուների արշավը.  
Մենք փող էինք փչում և թմբուկ զարկում,  
Ինչպես կարգն էր թագավորների<sup>2</sup>:

Արտաշեսի մահվան և թաղման ժամանակ բազում մարդիկ՝ նրա սիրելի կանայք, հարճերը, մտերիմ ծառաները ինքնակամ մահ են ընդունում, չեն ուզում ապրել առանց իրենց սիրելի թագավորի: Արտաշեսի դիակին շքեղ և բազմապիսի պատիվներ են մատուցում: Նրան դնում են ոսկեղեն դագաղում, մարմինը պատում ոսկեթել պատմունճանով, գլխին թագ դնում, առջևը՝ ոսկյա զենք, գահը և անկողինը բեհեզով հարդարում:

Հուղարկավորության ժամանակ գահը շրջապատում են որդիներն ու ազգականների բազմություններ, նրանց անմիջապես հարում էին զինվորական պաշտոնյաները, նահապետները, նախարարական գնդերը և առհասարակ զինվորական վաշտերը՝ բոլորը կուռ զինված, ինչպես ճակատամարտի դուրս գալիս: Առջևից հնչում էին պղնձե փողերը, հետևից գալիս էին սևազգեստ ձայնարկու կույսերը և ողբասաց կանայք, իսկ ամենից վերջում գալիս էր ռամիկների հոծ բազմությունը: Այդպիսի շուքով ու հանդիսավորությամբ համայն հայոց ազգը թաղում է իր սիրելի թագավորին:

## ԱՐՏԱՎԱԳՂ

Արտաշեսի մահից հետո թագավորում է որդին՝ Արտավազդը: Նա իր բոլոր եղբայրներին, բացառությամբ Տիրանի, արտաքսում է Այրարատից<sup>3</sup>, որպեսզի Այրարատի արքունի կալվածքում ոչ մի արքայազն չբնակվի: Նա միայն Տիրան եղբորն է մտքը պահում, իբրև իրեն փոխանորդ, որովհետև ինքը գավառի չունեի:

<sup>1</sup> Գտնվում է Ռիմիա լճից հյուսիս-արևելք:

<sup>2</sup> Ստորև բերվում է այս հին վիպերգի բնագիրը, որ պահպանվել է 11-րդ դարի նշանավոր գրող ու քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոսի նամակներում.

Ռ՛ տայր ինձ զծուխ ծխանի,  
Եւ գառաւօտն Նաւասարդի,  
Զվազելն եղանց և զվազելն եղջերուաց.  
Մենք փող հարուսք և թմբկի հարկանւաք,  
Որպէս օրէնն է թագաւորաց:

<sup>3</sup> Այրարատը Հին Հայաստանի (Մեծ Հայքի) բնդարձակ աշխարհներից մեկն էր, որի սահմանները տարածվում էին Երասխի միջին հոսանքի ավազանում և Արածանի վերնագավառում:

Բայց Արտավազը գտնվում էր հոր՝ Արտաշեսի անեծքի տակ՝:

Արտաշեսի մահվան ժամանակ, երբ շատերն են հոժարակամ ապանվում իրենց սիրելի թագավորի հանար և, շատ կոտորածներ են լինում<sup>2</sup>, Արտավազը վրդովվում է և դիմում հորը.

Մինչ դու գնում ես,  
Եվ ամբողջ երկիրը քեզ հետ ես տանում.  
Ես ավերակների վրա հոմ թագաւորեմ:

Արտաշեսը անհիծում է որդուն հետևյալ խոսքերով.

Երբ դու ծի հեծնես, որսի գնաս,  
Ազատն ի վեր, ի Մասիս,  
Քասքիրը՝ քեզ բռնեն, տանեն՝  
Արտուն ի վեր, ի Մասիս,  
Աչնոեղ մնաս և յուր շտանես :

Ծուռով կատարվում է հոր անեծքը: Մի անգամ Մասիս փեշերին որսի դուրս գալիս, քասքիրը բռնում են Արտավազին, շղթաւում, բանտարկում են Մասիսի քարանձավներից մեկում: Երկու շուն շարունակ կրծում են Արտավազի շղթաները, որպեսզի նրան ազատեն կապանքներից: Արտավազը իրեն թափ է տալիս, ջանում է փշրել շղթաները, դուրս գալ քարանձավից և աշխարհը կործանել: Ամբողջ տարվա ընթացքում շների կրծոցից շղթաները բարակում են և տարեմուտին դառնում անգամ մագի չափ: Ասկան յուրաքանչյուր տարեմուտի երեկոյան, այսինքն՝ Նախասարդի (հին նոր տարվա) սկզբին դարբինները երեք անգամ կտանները հարվածում են սալին, որի հետևանքով Արտավազի շղթաները կրկնակի հաստանում են ու ամրանում, և Արտավազը այլևս չի կարողանում դուրս գալ քարանձավից: Մինչև վերջերս էլ, դարբինները հետևելով հին սովորության, յուրաքանչյուր կիրակնամուտի, երեք-չորս անգամ մուրճով հարվածում էին սալին, որպեսզի Արտավազի շղթաներն ամրանան :

Ըստ հին ավանդության, երբ Արտավազը ծնվել է, Աժդահակի սերնդի վիշապագուն կանաչ կախարդել են նրան, գողացել են Արտավազին օրորոցից և նրա փոխարեն դե են դրել:

ժողովրդավրա հավատալիքով՝ մոտ անեծքը չի բռնուս որդուն, մինչդեռ հոր անեծքը անպայման իրագործվում է: Հին երթևեկագրերը Հայաստանում և ամենաարևելյան հին աշխարհում թագավորի կամ իշխանի մահվան և թաղման ժամանակ որս ասերիստերին՝ կտանու ծառաներին գոհու է էին ի պատիվ հանգուցյալի և նրա հետ թաղում:

Մասիս ասոր հետև իր ճան Ազատն Մասիս, մավանաքար իր մեծության և բարձրության պատճառով:  
Առաւելիւման սրբներ, երբեմն չար, երբեմն էլ բարի բնավորութամբ:

Մտորե պղծում ես պիտակամ այս աստվածների հին հայրեն բնագրող.  
Մինչ դու գնացել,  
Երբ վերկիրս ամենան բնդ քո տարագ,  
Ես անբարպազս ուս ի սոց ստրկեմ:

Երբ դու որս մեծցել,  
Արտուն ի վեր ի Մասիս,  
Քքեզ կապիս քո թ,  
Տարցրն Ազատն ի վեր ի Մասիս,  
Անդ կապես, և գրու մի անցել:

Տ յու որսի մեղիմակ Ազգիկ կողբացու հաղորդան համաձայն, հին հայերը իրենց փրկության հույսը կապում էին Արտավազի հետ, անձկությամբ սպասում, որ Արտավազը մի օր դուրս է գալու քարանձավից և հայ ժողովրդին ու Հայաստանը ազատելու և օտար բռնակալների լծը:

## ՏԻՐԱՆ ԵՎ ԵՐԱՆՈՒՆԱԿՈՒ

Արտավազդից նկատ թագաւորութիւն է կրաւորացի Տիրանը՝ որ սի և գրտաւորք մեղի սիրտաւոր: Նա ունիւ կրկաւ թեթեւաշարք ու խիտաւ արագաւազ ձիեր, որոնք անկաւա կիւ տարտու, կարծես թե օդի միջով էին թռչտու:

Բզնունաց Գաստարե իշխանը Տիրանին խօստում է թոյլ տալ նկննկ այլ փաստարեւելաւ արագրեթաց ձիերք: Եւ էրք նկննում է, պարծկնում է, թե իւրք թագաւորից էլ նարտաւ է:

Աննկացոյց ցեղից կար Էրախնաւոր տնտնով մի քաջ արտաւոր, որն անտնուացել էր Արտավազդի Հոնտաւտանից քկաւմ վերջին կեոյ նկա: Եւ քանի որ Արտավազդի ժոտակց չաւեր, ոտակ Տիրանը Արտավազդի ստրոյց տնտր և անկցվաւքք նակնում է Էրախնաւորին: Վերջինն ոչ միակ քաջ էր, այլի նաւկաւ, պարկեւտ, քեւիք և օրինաւոր տարտաւոր: Քաւաւորք նրան պերան է սիրում և քերտնում, որ անկաւ արարական կրկորդորդաւ գարն, որ նախկինում Արտավազդի էր ժոտակաւ, նակնում է Էրախնաւորին, կրան վաւանկրով կուտ արկերան կրոյնի գորքերի նրաւանտարտորքոյնը:

Տիրանը Էրախնաւորի մաւ է թողւում իր նախաւարիւնկերիս մեկին՝ Վաստորակրանի նախարարնկերի նկա խնաւիացաւ Գրխաւայ տնտնով մի պարտիկի, իսկ իւրք պարտիքք, անկաւորտում է Արկոյաց գաւաւակի Զրմաւ ավանը, նոտաւաւաւում պերտեղ: Տիրանը քաւանկ տարի թագաւորեթոյց նկաւ մեւնում է արտաւորից՝ ձոտար նաւկորդեղիս մնում է ձրան կրոյնի տակ և խեղդվում:

## ՏՐԴԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Բագրատունցաց ցեղից Տրդատ անտնով մի քաջ, անկեւեր ուարդ կար, նա Ամբաւ Բագրատունում թոտն էր, Ամբատունում որդի, թեպեւ ուրք ու արտաւ, քաջ կարնանտաւակ և աղեղ կերպարակրով:

Տիրան թագաւորք իր դաւերք՝ Էրանկաւկին, անտնուացկում է Տրդատի նկա և նրան դարնում փեւա: Բաց Էրանկաւր սկորից իսկ չի սիրում անտնանկ, արնանարնում է կրան, ոտնրեթղ վրան կիտում, շարտնակ դեկունում ու վալ ապիս, որ իր նման չքկաւ ու աղկաւաւրն կիւնր անկաւաւմ է ապրել մի աղեղ և նաւարակ ձագրտնով մարդու նկա:

Տրդատը, չկարտրանաւորով տանկ այս արնանարնակրք, մի օր էլ սաստիկ գաւրտաւում է, շարաչար ձեւում Էրանկաւկին, կարտու նրա շկ մաւերք, խոպոպիկնկերք վեւտում և նրամաւում է նրան քարշ տաւով՝ անկաւից դարա գեղ: Եսկ իւրք ապտաւորում է թագաւորի դեւ, գնում դեղի Մարտաւտակի տնտր և անտնուցեղի կողմերք: Բաց դեւ նրք էր նաւեղ Արունիք, էրք աշտեղ կրան է նաւնում Տիրանի մանկան քարք: Տրդատն այլեւ Մարտաւտակ չի գնում, մաւում է Արունիքում:

Մի օր Արունցաւ Բաւրք տնտաւերք Տրդատիե քկորիքի է նրա վիրում իր ապարակրք: Էրք քկորիքն անկաւաւում է և սկաւում է գիւնարքորք՝ ուրակ ինկոյրե ու գիւնկաւար, գաւանկնկերի և վար





ձակների<sup>1</sup> երգով ու պարով, Տրդատը նկատում է մի վարձակի՝ չքնաղ գեղեցկությամբ մի կնոջ, անունը Նազենիկ: Նազենիկը երգում էր ու նրբագեղ պարում: Գինովցած Տրդատը գմայլված նայում է չքնաղ Նազենիկին, նրա սքանչելի պարին և ամբողջ էությամբ ցանկանում նրան: Ծուռ գալով դեպի Բակուրը, Տրդատը հրամայարար պահանջում է.

— Այդ վարձակն ինձ տուր:

— Չեմ տա, — խանդոտ գայրոյթով առարկում է Բակուրը, — նա իմ հարձն է, չեմ տա:

Տրդատը տեղից վեր է կենում, մոտենում Նազենիկին, բռնում նրան, քաշում բերում իր մոտ, նըստեցնում ծնկներին և բոլոր սեղանակիցների առաջ սիրահար երիտասարդի անգուսպ կրթով ու կարոտով գգվում նրան, սեղմում կրծքին, կատաղորեն համբուրում:

Բակուրը խանդից կարկամած՝ տեղից վեր է կենում, որ Նազենիկին Տրդատի ձեռից խլի:

Տրդատն ընդոստ ոտքի է ելնում, սեղանից վերցնում կավե հսկա ծաղկամանը, նետում դեպի Բակուրը, հետ վանում նրան ու բոլոր սեղանակիցներին, հափշտակում չքնաղ Նազենիկին, դուրս գալիս ապարանքից, հասնում իր կացարանը, արագ ձի նստում, Նազենիկին առնում իր գավակը և սլանում դեպի Սպերք<sup>2</sup>:

### ՎԱՐՂԳԵՍ ՄԱՆՈՒԿ ԵՎ ՎԱՂԱՐՇ

Հայոց Երվանդ Սակավակյաց թագավորի ժամանակ<sup>3</sup> Տուհաց գավառից մի կտրիճ երիտասարդ՝ Վարդգես անունով, գաղթում գալիս է Այրարատ, ամուսնանում Երվանդ Սակավակյացի քրոջ հետ և Ծրեշ բլրի<sup>4</sup> մերձակայքում, Արտեմիդ քաղաքի և Քասախ գետի մոտ շինում է մի ավան և իր անունով կոչում Վարդգեսավան: Այդ մասին հին վիպասաններն այսպես են վիպել իրենց երգերում.

Թողեց գնաց Վարդգես մանուկը  
Տուհաց գավառից, Քասախ գետի մոտ,  
Եկավ ու նստեց Ծրեշ բլրի  
Արտեմիդ քաղաքի, Քասախ գետի մոտ,  
Երվանդ արքայի դուր թակելու<sup>5</sup>:

Վարդգեսավանը հետագայում Տիգրան Մեծը բնակեցնում է հրեա գերիներով և դարձնում վաճառաշահ գյուղաքաղաք:

Տիրանի եղբայր Տիգրան Վերջին թագավորի կինը Այրարատի ձմեռանոցից գնալու ժամանակ ճանապարհին բռնվում է երկունքի ցավերով և Բասեն գավառում՝ Մուրց և Արաքս գետերի միախառնման տեղում, ծնում որդուն՝ Վաղարշին:

Երբ Վաղարշը թագավոր է դառնում, նա հավերժացնում է իր ծննդյան տեղի հիշատակը և գետերի այդ միախառնման տեղին մոտ կառուցում մի ավան և այն կոչում իր անունով՝ Վաղարշավան: Վա-

<sup>1</sup> Վարձակ — կին գուսան, որ և երգում էր, և պարում:

<sup>2</sup> Սպերք — գավառ Բարձր Հայքում, տարածվում էր Ծորոխ գետի վերին հոսանքներում, Տայքից հարավ-արևմուտք:

Հին դարից եկող այս վիպական գեղեցիկ գրույցն է ընկած Դանիել Վարուժանի «Հարձը» սքանչելի պոեմի հիմքում:

<sup>3</sup> Երվանդ Սակավակյաց — Հայաստանի թագավոր, թագավորել է մոտավորապես մ. թ. ա. 570—560 թթ.:

<sup>4</sup> Ծրեշ բլուրը գտնվում է նախկին Վաղարշավառից (այժմ Լջմիածին) հյուսիս, որտեղից հայտնաբերվել են բազմաթիվ հնագիտական նյութեր, իրեր և առարկաներ:

<sup>5</sup> Ստորև դրվում է այդ վիպական երգի հին նայերեն բնագիրը.

Հատուած գնացեայ Վարդգես մանուկն  
Ի Տուհաց գաւառէն, գՔասաղ գետով,  
Եկեայ նստա գՇրէշ բլրով,  
գԱրտիմէդ քաղաքաւ, գՔասաղ գետով,  
Կուկ կոփել գրոունն Արուանդայ արքայի:

ղարշը վերանորոգում է նաև հին Վարդգեսավանը, այն ամրացնում ամուր պատվարով, պարսպապատում և կոչում իր անունով՝ Վաղարշապատ<sup>1</sup>:

Վաղարշի ժամանակ Կովկասյան լեռներից դեպի հյուսիս բնակվող խազարներն ու բասիլները Շորա դռնից<sup>2</sup> դուրս են գալիս և իրենց բազմությամբ հեղեղում Անդրկովկասը: Նրանք իրենց թագավոր Վնասեպ Սուրհապի առաջնորդությամբ գալիս, անցնում են Կուր գետը: Այս հյուսիսային ցեղերի դեմ է դուրս գալիս հայոց Վաղարշ թագավորը՝ իր զորքերի բազմությամբ և քաջակորով մարտիկներով: Վաղարշն իր զորքով մեծ ջարդ է տալիս թշնամուն, ամբողջ դաշտը ծածկվում է թշնամու դիակներով: Թըշնամու մնացած բազմությունը հալածվելով Վաղարշի կողմից, անցնում է Շորա դուռը: Այստեղ թշնամին վերադասավորելով ուժերը, նորից ճակատամարտ է տալիս: Թեպետ հայոց քաջերը հաղթում են թշնամուն և փախուստի մատնում, բայց Վաղարշը աղեղնավորներից նետահարվում է և սպանվում:

---

<sup>1</sup> Վաղարշապատը այժմյան Էջմիածին քաղաքն է, հին Վարդգեսավանը, որ վաղ միջնադարում հույների կողմից կոչվել է նաև Նոր քաղաք:

<sup>2</sup> Շորա դուռ կամ Շորա պահակ — Կովկասյան լեռնաշղթայի արևելյան ծայրի և Կասպից ծովի միջև գտնվող անցման տեղ, այն միակ ճանապարհը, որով անցնում էին հյուսիսային ցեղերը և արշավում Անդրկովկաս: Այդ տեղում է կառուցված այժմյան Կերբենդ քաղաքը (բաղացի՝ փակ դուռ):



## «ՊԱՐՍԻՑ ՊԱՏԵՐԱԶՄ» ՎԵՊԸ

### ԽՈՍՐՈՎ ՄԵՄ\*

Պարսկաստանում Սասանի որդի Արտաշիրը դավադրությամբ սպանում է պարթևների թագավոր Արտավանին և վերջ դնում պարթև Արշակունիների թագավորությանը: Հայոց Արշակունի թագավորները, որոնք պարթև Արշակունիների տոհմակիցներն ու ազգականներն էին, չէին կարող անտարբերությամբ նայել կատարվող իրադարձություններին:

Երբ Արտավանի սպանության գույժը հասնում է Հայաստան, հայոց Արշակունի Խոսրով թագավորին, վերջինս մեծ ցավով է ընդունում այդ լուրը և նախապատրաստվում պատերազմի: Խոսրովը նախ օգնություն է խնդրում Հռոմի Փիլիպոս կայսրից, ապա հավաքում աղվանից ու վրաց գործերը, բացում Ալաանց՝ ու Գորա պահակի դռները հունների առաջ, հնարավորություն տալով այդ ուսգմի ցեղերին՝ ասպատակելու և ախուկելու Պարսից աշխարհով մեկ: Իսկ ինքը՝ Խոսրովը, հսկա զորքով արշավում է Ասորեստանի կողմերը, հասնում մինչև Տիգրոս, ապարում Պարսից աշխարհը, ավերում շեն քաղաքներն ու բարեկարգ ափանները, ջնջում, քանդում, հիմնահաստակ անում ու վերացնում պարսից տեղությունն ու կարգերը:

Խոսրովը ստե՛ն կերպ ուզում էր վրեժ լուծել Արտաշիրից իր տոհմակից Արշակունիների իշխանությունը խլելու և Արտավանի արջան համար: Խոսրովը պատգամախորներ է ուղարկում պարթևական տոհմերին ու նախարարներին՝ ի մի հավաքվելու, իրեն զորավիգ կանգնելու և Արտաշիրի դեմ կռվելու համար: Սակայն պարթև ազնվականների մեծ մասը հնազանդվել էր Արտաշիրին և չէր ուզում Խոսրովի հետ միաբանվել:

Այն ժամանակ Խոսրովը հայոց գործերով և իրեն օգնության եկած կովկասյան ցեղերի գործի հսկա բազմությամբ նախատամարտի է ելնում պարսից գործի դեմ: Արտաշիրը չի դիմանում Խոսրովի գործերի ճնշմանը և փախուստի է դիմում: Խոսրովը հետապնդելով պարսիկներին՝ դաժանաբար կոտորում է նրանց ամբողջ գործը, դաշտերն ու ճանապարհներն ամբողջապես ծածկում դիակներով:

Խոսրովը կատարյալ հաղթանակ է տանում, բազում ավարով և մեծ ցեղությամբ վերադառնում է Հայոց աշխարհ՝ Վաղարշապատ քաղաքը:

Ի պատիվ իր սարած մեծ հաղթանակի, Խոսրովը հրամայում է բոլոր կողմերի հայությունը՝ ուխտի գնալ յոթ մեհյանների բազիններին, Արշակունի տոհմի հայրենական պաշտամունքի վայրերը մեծարել մեծ նվիրատվություններով: Բոլոր բազիններին նվիրաբերում են բազմաթիվ սպիտակ ցուլեր ու նոխազներ, սպիտակ ձիեր ու ջորիներ, ոսկյա և արծաթյա զարդեր, փողփողուն ծոպերով մետաքս շքեղ զգեստներ, ոսկյա պատկեր ու արծաթյա զոհարաններ, թանկարժեք քարերով լեցուն գեղեցիկ ամաններ, ոսկի ու արծաթ, բնօրի զարդեր ու հանդերձանք:

\* Ծարագրիված է քսո Ագաթանգեղոսի և Մ. Խորենացու «Հայոց պատմություն» գրքերը: Ալաանց դռները՝ Պարսիցի կիրճը է Կովկասյան լեռներում:

Բերած ավարի մեկ հինգերորդը Խոսրովը բաժին է հանում քրմերին, նրանց տալով նաև մեծ պարգևներ, իսկ իր հետ եղած զորքին բազում ընծաներ է տալիս և արձակում:

Խոսրովը հաջորդ տարին ավելի մեծ զորք է հավաքում, նրան օգնության է գալիս նաև արարական զորքը, արշավում և ասպատակում է Ասորեստանի կողմերը և մեծ ավարով ու հաղթությամբ վերադառնում:

Այդպես, շատևմեկ տարի շարունակ Խոսրովը արշավում, ավարի է ենթարկում ու ավերում բոլոր այն երկրները, որոնք գտնվում էին պարսից թագավորի իշխանության տակ:

### Խոսրով և Անակ

Այս բոլոր արշավանքները, ավարներն ու ավերները մեծապես շիթեցնում, նեղում ու մոլորեցնում են Արտաշիրին: Նա իր մոտ է կանչում երկրի բոլոր թագավորներին, կուսակալներին, նախարարներին ու զորավարներին և խորհրդի նստում: Արտաշիրը բոլորին աղաչում էր հնար գտնել, խնդրում, մեծամեծ պարգևներ էր հոստանում, ասում.

— Գուցե գտնվի մեկը, որ կարողանա Խոսրովից վրեժ լուծել:

Խոստանում էր անգամ իր վրեժը լուծողին շնորհել իր պետության երկրորդության գահը, ով էլ նա լիներ, թեկուզ անարգ և արհամարհված մեկը:

Այդ խորհրդին էր մասնակցում պարթևական տերության գլխավոր նահապետներից մեկը՝ անունը Անակ: Լսելով թագավորի ցանկությունը, նա ոտքի է կանգնում և խոստանում իր ազգակիցներից վրեժ լուծել, իբրև թշնամիների:

— Եթե հավաստարմորեն այդ վրեժը լուծես, — ասում է թագավորը, — ձեր պարթևական հայրենի իշխանությունը և պահլավական սեփական տիրույթները ձեզ կվերադարձնեմ, քեզ արքայական թագով կպսակեմ, կդարձնեմ իմ երկրորդը և իմ թագավորության մեջ կդառնաս երևելի ու փառավոր:

— Իմ ազգի մնացած անդամներին էթե դու պահես, — ասում է Անակը, — ապա այսօրվանից ես ու եղբայրս քեզ հրաժեշտ կտանք և կզնանք քո փափագը կատարելու:

Անակն ու եղբայրը ելնում են, վերցնում իրենց ընտանիքներն ու ունեցվածքը և ճամփա ընկնում դեպի Հայոց աշխարհի կողմերը: Նրանք ձևացնում են, թե իբր ասպատամբել են Արտաշիրի դեմ, հալածվում են նրանից և այժմ ասպատան են որոնում Հայոց աշխարհում:



Խոսքովն այդ ժամանակ գտնվում էր Ռաֆիկի իր արքայական ձմեռանոցում՝ Խաղիսալ քաղաքում: Երբ նա իմանում է Աննակի գալստյան պատճառն իբրև սպասամբի ու փախստականի, մեծ ցնձությամբ ու խնդությամբ դիմալիրում է նրան, սիրով ընդունում: Աննակը Խոսրովին հավատացնում է, թե՛

— Եկել եմ քեզ մոտ, որպեսզի միարանվենք և միասնական ուժերով ընդհանուրի վրեժը լուծենք:

Խոսրովը անսնելով, որ Աննակն իր ամբողջ բնասնիրով է եկել, լիովին հավատում ու վստահում է նրան, արքայավայել ընդունում, անգամ նստեցնում իր թագավորության երկրորդ աթոռին և ամբողջ ցուրտ ու բքաշունչ ձմեռվա ընթացքում իր օրերը նրա հետ է ուրախությամբ անցկացնում:

Երբ զարունը բացվում է, և օրերն սկսում են տաքանալ, Խոսրովը թողնում է Ռաֆիկը, վերադառնում Վաղարշապատ և գարնան հետ սկսում մի նոր արշավանք նախապատրաստել պարսից կողմեր: Աննակն այդ իմանալով, հիշում է պարսից թագավորին տված իր երդումը, նրա պարգևների խուտումները, ինչպես նաև նրա մոտ ջերմ փափագ է առաջանում նորից տեսնելու իր բնիկ Պանիսի աշխարհը:

Եվ Աննակը եղբոր հետ որոշում է ապանել Խոսրովին: Նրանք մի օր Խոսրովի հետ դուրս են գալիս գրոսանքի, և թագավորի հետ մեկուսի խորհրդակցելու պատրվակով, Խոսրովին թիկնապաններից հեռացնում, մի կողմ են տանում և անսպասելիորեն սուսերները մերկացնելով՝ թագավորին գետին են տապալում, սրախոյիտը ակնում: Ամբոխն անմիջապես իրագրել է դատնում դավադրությանը և աղա դակով գոծում թագավորի սպանության լուրը: Այդ միջոցին դավադիրները հասցնում են նստել իլեկնց երիվարներն ու փախչել:

Հայոց զորքերի նախարարներն այդ իմանալով, իսկույն զորքը բաժանում են գնդերի և դավադիրներին հետապնդում: Մի գունդը անապարելով, ձգտում էր արագ հասնել Արտաշատ քաղաքի դռների մերձակալքում գտնվող կամուրջի գլուխը և ճանապարհը փակել: Գարնանային ջրերից ախեափ հորդացած Երասխը իր ձյունախառն երման ջրերով անհնար էր դարձնում գետանցն անանց կամուրջի: Մյուս գունդն արագ հասնում է Վաղարշապատի կամրջին, որ կոչվում էր Մեծամորի կամուրջ և փակում այն: Մյուս գնդերը փակում են ճանապարհից դեպի կիրճերը տանող մուտքերը: Եվ հենց այդ մուտքերից մեկի մոտ կռվեցնում են դավադիրներին, Տափերական կամուրջի մոտ շրջապատում հրանց, գցում գետը, խեղդում: Ապա այդտեղից զորքն ու ամբոխը մեծ ճիչ ու ողբ բարձրացնելով վերադառնում են Վաղարշապատ, որ ամբողջ երկիրը հավաքված, սգում էր սիրելի թագավորին:

Խոսրովը, որ դավադիրների սրահարոսից անմիջապես չէր մտնացել, մահից սուսը արձակում է իր վերջին հրամանը՝ ոչնչացնել Աննակի և եղբոր ամբողջ ազգատոհմը, որ գտնվում էր Հալաստանում: Ակտն են անխնա կոտորել բոլորին, անգամ կանանց ու նորեակ մանուկներին: Մի մարդու հաջողվում է դապակների միջոցով փրկել պարթև Աննակի երկու մանկահասակ զավակներին, որոնցից մեկին փախցնում են Պարսկաստան, մյուսին՝ Հունաստան:

Երբ Պարսից թագավոր Արտաշիլը լսում է Խոսրովի սպանության լուրը, շատ է ուրախանում, մեծ տոնախմբություն է կազմակերպում, ստորոշաններին բազմաթիվ զոհեր մատուցում: Ապա մեծ զորքով արշավում է Հալաստանի վրա, սասպատակում երկիրը, մեծ ու փոքր, ծեր ու մանուկ՝ բոլորին գերի տանում:

Այդ ժամանակ մի մարդ կարողանում է փրկել Խոսրով թագավորի որդիներից մեկին՝ Տրդատ անունով մի փոքրիկ մանկան, որին Արտավազդ Մանդակունին վերցնելով, փախցնում տանում է Հոմ: Իսկ Խոսրովի դստերը՝ Խոսրովիդուխտին, Օտա Անատունին վերցնում և ապահով թաքցնում է Անի ամրոցում, դառնալով նրա սնուցողը:

Արտաշիլը նորից արշավում է Հալաստան, հալածում այնտեղ գտնվող հունական զորքերին, գրավում երկիրը և դարձնում իրեն հպատակ: Ապա իմանալով, որ Խոսրովի զավակներից Տրդատին Արտավազդ Մանդակունին է փրկել և փախցրել, տարել Հոմի կայսրի պալատը, նա հրամայում է կոտորել Մանդակունիների ամբողջ ցեղը: Մանդակունիների ցեղից ազատվում է միայն Արտավազդի թույլը, որին Աշոցան ցեղից Տաճատ անունով մեկը փախցնում տանում է Կեսարիա և հետք ամուսնանում:

## ՏՐԴԱՏ ՄԵԾ\*

Տրդատը Հոռմում իր ուսումն ու դաստիարակությունը ստանում է Լիկիանես անունով մի կոմսի մոտ: Մանկությունից իսկ սիրում էր ձի հեծնել և հետագայում դառնում է կորովի ձիավար: Նա այստեղ ուսումնական արվեստ է սովորում, զենքերի գործածության մեջ դառնում քաջահմուտ: Տրդատն օժտված էր ֆիզիկական վիթխարի ուժով ու ճարպկությամբ: Իր այս բարեմասնությունների պատճառով նա մասնակցում էր կրկեսային մրցումներին և միշտ դուրս էր գալիս հաղթանակով:

Մի անգամ մեծ կրկեսում Տրդատի մրցակիցն էր արգիացի Կերասուր: Վերջինս մենամարտելով վայրի ցույի հետ, ճարպկորեն բռնում է ցլի ետևի ոտքը և կճղակը պոկում: Իսկ Տրդատը մենամարտում է երկու վայրի ցույերի հետ: Նրան հաջողվում է մեկ ձեռքով բռնել գույգ ցույերի եղջյուրներից, մեկի եղջյուրը պոկել, իսկ մյուսի վիզը ոլորելով՝ ջախջախել:

Մի անգամ էլ, դարձյալ մեծ կրկեսում, Տրդատը մասնակցում է ձիարշավի մրցումներին: Մրցման ժամանակ, երբ Տրդատը կամենում է կառքը քշել, հսկառակորդի ճարպկությունից՝ կառքից վայր է ընկնում: Նա իսկույն ձեռքը օգնում է կառքից, կանգնեցնում հզոր ձիեր լծած կառքը, արժանանալով հանդիսականների հիացումնքին:

Տրդատը նաև քաջ ուսզմիկ էր և անվեհեր պատերազմով: Երբ հոռմեացի գորավար Պրոբոսը կրկնում էր գոթերի<sup>1</sup> դեմ, պարենի պակասության պատճառով հոռմեական զորքերի մեջ սաստիկ սով է ընկնում: Սովահար զինվորները կատաղած էլնում են իրենց զորավարի դեմ և սպանում նրան: Ապս քաղցից հարձակվում են իրենց բոլոր իշխանավորների պալատների վրա: Տրդատը միայնակ պաշտպան է կանգնում իր հովանավոր Լիկիանեսի ապարանքին և ոչ մի զինվորի թույլ չի տալիս ոտք կոխել այնտեղ:

Տրդատը հոռմեական զորքերի կազմում մասնակցում է նաև պարսից Սասանյան Արտաշիրի դեմ մղած կռիվներին:

Երբ Եփրատի ափերին պարսիկների դեմ մղած անհավասար կռվում հոռմեացի զորավարները սպանվում են և զորքը խուճապահար փախչում է, Տրդատը ձիով վիրավորված լինելու պատճառով չի կարողանում զորքի հետ հեռանալ: Նա վերցնում է իր զենքերն ու ձիու սարքը, մտնում Եփրատ գետը և լողալով կտրում անցնում է լայնատարած գետը, հասնում բուն հոռմեական զորքերի մոտ, ուր գտնվում էր Լիկիանեսը: Նույն օրերին Թրակիայում սպանվում է Նոմերիանոս կայսրը և իշխանությունն անցնում է Դիոկղետիանոսին:

### Տրդատի և գոթաց թագավորի մենամարտը

Այդ օրերին գոթերի թագավորը զորածողով է անում և բազում զորք հավաքելով պատերազմի է ելնում Հոռմի դեմ: Նա Հոռմի թագավորին հղում է հետևյալ պատգամը. «Ինչո՞ւ եմք զուր իրար դեմ զորքով ելնում պատերազմի, զորք սպառում, երկրին ու ժողովրդին վտանգ ու տազնայ պատճառում: Ես իմ զորքի միջից դուրս կգամ իբրև ախույան այս կողմից, դու էլ հունական զորքից դուրս սրի՝ այդ կողմից, գնանք հասնենք մարտի վայրը. եթե ես քեզ հաղթեմ, հույները կհնազանդվեն ինձ, եթե դու ինձ հաղթես՝ մեր կյանքը քեզ կպատկանի և կհնազանդվենք քեզ: Երկու կողմերի համար էլ ամեն ինչ կավարտվի խաղաղությամբ, առանց արյան ու կոտորածի»:

Երբ Հոռմի թագավորին հաղորդում են այս պատգամը, անը սիրուն է ընկնում, որովհետև անգամ օրինավոր ուսուցանական պատրաստության դեպքում նա չէր կարող թշնամու դեմ ճակատել, ուր մնաց թե համաձայններ այդ պատգամի պահանջին, մանավանդ որ մարմնով սկար էր և անզոր: Ուստի նա սարսափած ու մոլորած չի իմանում ինչ պատասխան տու գոթաց թագավորին: Վերջապես նա վճռում է դի-

\* Ճարպկրված է ըստ Ագաթանգեղոսի և Մ. Թորենացու «Հաղոց պատմություն» գրքերի:

<sup>1</sup> Գոթերը գերասական ցեղախումբ էին, որոնք 2-րդ դարի վերջերից չարժվելով հարավ-արևելք, հաճախակի հարձակումներով մշտական վտանգի տակ էին պահում Հոռմեական կառավարությունը:

մել իր գորականներին ու գորքին: Նա հրովարտակներ ու պատվիրակներ է ուղարկում իր տերության բոլոր իշխաններին, նախարարներին ու գորքին, որպեսզի նրանք շատափույթ իր մոտ հավաքվեն: Բոլորը շտապում են ներկայանալ թագավորին: Թագավորին է շտապում ներկայանալ նաև Լիկիանեք՝ Տրդատի հետ միասին, իր ձեռքի տակ եղած գորագնդով:

Այնպես է պատահում, որ բոլոր գորագնդերը արքայանիստ քաղաքին են մոտենում կեսգիշերին, երբ քաղաքի դարպասները արդեն փակ էին: Զորքերը գալիս խոնվում են դարպասների մոտ գտնվող շտեմարանի հրապարակում՝ այգեստանի առուների մեջ: Հոգևած ու քաղցած ձիերին կերակրելու համար հրապարակում խոտ չի գտնվում, մինչդեռ քաղաքի պարսպից ներս՝ անասունների բակում, խոտի մեծ-մեծ դեզեր կային կիտված: Պարիսպն այնքան բարձր էր, որ ոչ ոք չէր՝ կարող բարձրանալ և քաղաքից խոտ բերել ձիերին: Այնժամ Տրդատը մագլցելով բարձրանում է պարիսպը, իջնում քաղաք և սկսում դեզ-դեզ խոտերը պարսպի վրայով նետել գորքերի մեջ, լիովի բավարարելով ձիերին: Ապա նա բռնում է խոտերի վերակացուներից և պահապան շներին շատերին, դարձյալ նետում գորքի մեջ, իսկ ինքը բարձրանալով պարիսպը, իջնում, գալիս է իր գունդը:

Լիկիանեքը Տրդատի այս վիթխարի ուժից ու արարմունքից մնում է ապշած: Առավոտյան քաղաքի դռները բացվում են, և ամբողջ գորքը մտնում է քաղաք: Լիկիանեքը բոլոր մեծամեծների և գորապետների հետ ներկայանում է թագավորին:

Թագավորը իշխաններին ու գորապետներին է ներկայացնում գոթաց թագավորի պատգամները: Լիկիանեքը անմիջապես խոսք է վերցնում և դիմում թագավորին.

— Թող իմ տիրոջ սիրտը բնավ չտագնապի, քանզի այստեղ՝ քո պալատում, կա մի տղամարդ, որի միջոցով կարող ես գոթաց թագավորի պայմանը կատարել: Նրա անունը Տրդատ է, ինքը՝ Հայոց աշխարհի արքայական տոհմից:

Եվ Լիկիանեքը թագավորին պատմում է Տրդատի գիշերվա քաջագործությունը: Թագավորի հրամանով Տրդատին բերում, ներկայացնում են թագավորին: Թագավորն ամեն ինչ կարգով պատմում է Տրդատին, ստանում գոթաց թագավորի հետ մեծամարտելու նրա համաձայնությունը, որոշում նաև մեծամարտի ժամը:

Հաջորդ օրն առավոտյան կայսեր հրամանով ծիրանի արքայական պատմունճան են գցում Տրդատի վրա, զարդարում կայսերական նշանով ու զարդով և հրաման արձակում, որ նա ինքը կայսրն է:

Կայսերակերպ Տրդատը վերցնելով գորքի համակ բազմությունը մարտական փողերի ազդանշանով արագ մոտենում է գոթական գորքին և կանգնում թշևամիներին դեմ հանդիման: Զորքերից անջատվում են կայսերակերպ Տրդատն ու գոթերի թագավորը և գալիս կանգնում են իրար դիմաց: Ապա նրանք մտրակում են երիվարներին և հասնում իրար: Կայսերակերպ Տրդատը հաղթում է գոթաց թագավորին, բռնում նրան և բերում կանգնեցնում է կայսրի առջև:

Այսպես մեծամեծ պատիվներ ու պարգևներ է շնորհում Տրդատին, գլխին թագ դնում, արքայական ծիրանիով ու զարդով զարդարում, մեծարում և բազում օգնական գորք հանձնելով նրան, ուղարկում իր հայրենի Հայոց աշխարհը:

### **Տրդատը Մեծ Հայքի թագավոր\***

Տրդատը հունաց օգնական գորքով գալիս է հասնում Կեսարիա: Այստեղ հայ նախարարներից շատերը գալիս են ընդատաջ, սիրով ու հավատարմությամբ դիմավորում նրան: Տրդատը մտնում է Հայաստան, իմանում, որ Օտա Ամատունին սնուցել է իր Խոսրովիլովիստ քրոջը, մեծ հավատարմությամբ պահել ու պահպանել արքունի գանձերն ու ամրոցը: Տրդատը շնորհակալությամբ պատվում է Օտային, նրան նշանակում Հայաստանի հազարապետ, իսկ իր դաշակորդի Արտավազդ Մանդակունուն, որ փրկել էր իրեն և պատճառ դարձել իր հայրենական փառքին տիրանալու, նշանակում

\* Շարադրված է ըստ Մ. Խորենացու «Հայոց պատմության»: Մեծ Հայքը կամ Մեծ Հայաստանը, ի տարբերություն Փոքր Հայքի, Հայաստանի հիմնական տարածքն էր: 7-րդ դարում իր մեջ էր ընդգրկում 15 նահանգ, բազմաթիվ հարյուրավոր գավառներից:

Է հայոց գորքերի սպարապետ: Իսկ Արտավազդի քրոջ ամուսնուն՝ Տաճատին Է Ավիրոս Աշոցք գավառը՝ իր բոլոր տիրույթներով:

Այնուհետև քաջ Տրդատը մեկը մյուսի հետևից սկսում է հաղթական ճակատամարտեր մղել պարսից գորքերի դեմ թե Հալաստանում և թե Պարսկաստանում: Հալաստանն ու հալ ժողովրդին հպատակեցրած պարսից գորքերից շատերին էլ հալածելով, քշում է երկրի սահմաններից դուրս:

Մի անգամ պարսից կորովի զորականները, իմանալով Տրդատի վիթխարի ուժն ու կուս գրահների ամրությունը, Անտերի տարափ են տեղում հսկա Տրդատի վրա, նրա ձիուն շատ տեղերից վիրավորում և սպանում: Չին գետին տապալվելով՝ Տրդատին վայր է գցում: Տրդատը արագությամբ ոտքի է կանգնում, հետիոտն հարձակվում է թշնամիների վրա, շատերին գետին գլորում, մի պարսիկից էլ ձին խլելով, հեծնում և շարունակում է կռիվը:

Մի անգամ էլ Պարսկաստանում ճակատամարտ մղելիս, երբ պարսիկները հաչոց գորքի դեմ հանում են փղերի հսկա բազմություն, Տրդատը ձիուց վայր է ցատկում, սուրը հանելով՝ հետիոտն հարձակվում է փղերի երամակների վրա, ցրում փղերի բազմությունը և ապահովում հաչոց գորքերի հաղթանակը:

Այսպիսի բազմաթիվ քաջագործություններով Տրդատը լուծում է իր վրեժը պարսիկներից, նրանց Հալաստանից իսպառ վտարում, նվաճում հայրենի տերությունը, դառնում Մեծ Հայքի թագավոր:



### Տրդատ և Գրիգոր\*

Պարթև Անակի որդիներից մեկը, որին Հունաց կողմերն էին փախցրել տարել, մեծանում և ուսում է ստանում Կապադովկիայի Կեսարիա քաղաքում: Այստեղ նա հետևում է նոր կրոնի՝ քրիստոնեության ուսմունքին, հմտանում և ընտելանում Աստվածաշնչին, դառնում քրիստոնյա և մկրտվում Գրիգոր անունով: Գրիգորն իր դաշակներից տեղեկանում է իր հոր արարքներին, մասնավորապես Խոսրովի սպանությանը և իմանալով, որ Տրդատը Խոսրովի որդին է և ապրում է Հռոմում, գնում, գտնում է Տրդատին և կամավոր ծառայության մտնում նրա մոտ: Կա Տրդատից թաքցնում է իր ով լինելը, հնազանդությամբ սպասարկում է նրան, որպեսզի դրանով քավի իր հոր գործած հանցանքը:

Այդ ժամանակ Հռոմում Դիոկղետիանոս կայսրը հարստում էր քրիստոնյաներին: Եվ երբ Տրդատը գգում է, որ Գրիգորը հետևում է քրիստոնեական ուսմունքին, սկսում է նրան նեղել, պատուհասել, գանազան տանջանքներ պատճառել, որպեսզի նա թողնի քրիստոնեությունը և հետևի հեթանոս աստվածների պաշտամունքին:

\* Աշոցքը գաղթել էր Արարատ նահանգում, հասնելուց անտեսանում է սպիտակ Հայկ. ՍՍՀ (Կոկորատնի) շրջանին: Ընթացիկում էր քաղ Ազգայնագիտության «Հայոց պատմություն»:



Երբ Տրդատը հոռմեական զորքով վերադառնում է Հայաստան, նրա հետ Հայաստան է գալիս նաև Գրիգորը: Իր թագավորության առաջին տարում Տրդատը մեծ շքախմբով ուխտի է գալիս Եկեղյաց գավառի Երիզա ավանում գտնվող Անահիտ դիցուհու մեհյանը և զոհեր մատուցում: Զոհաբերությունից հետո արքայական շքախումբը իջնում, տեղավորվում է Գալլ գետի ափին պատրաստված արքայական վրանում, ուր թագավորին ընթրիք են մատուցում:

Երբ Տրդատը գինովանում է, հրաման է տալիս Գրիգորին, որպեսզի նա պսակներ ու ծառերի թավ ճյուղեր տանի և նվիրաբերի Անահիտի պատկերը կրող բագինին: Գրիգորը կտրուկ մերժում է արքայի հրամանը: Այնժամ Տրդատը դիմում է Գրիգորին.

— Մի օտարական ու անծանոթ մարդ էիր, եկար մեզ միացար, մեզ հետ համակերպվեցիր: Արդ, ինչպե՞ս ես համարձակվում պաշտել այն աստծուն, որին ես չեմ պաշտում:

Տրդատի հրամանով Գրիգորին այդ օրն առնում են հսկողության տակ, իսկ հաջորդ օրն առավոտյան կանչել է տալիս Գրիգորին իր մոտ և ասում.

— Աչքսն տարի ես քեզ ճանաչում եմ՝ դու քո ամբողջ Էությունը հավատարմորեն ծառայել ես ինձ. ես գոհ էի քեզանից ու մտադիր էի քեզ պահել: Այժմ ինչիս իմ կամքը չես կատարում:

— Աստված հրամայել է, որ ծառաները հնազանդ լինեն մարմնավոր տերերին, իսկ աստծո պատիվն ու պաշտամունքը չի կարելի որևէ մեկին տալ, — պատասխանում է Գրիգորը:

— Գիտցի՞ր, — ասում է Տրդատը, — որ դու կորցրեցիր այն վաստակը, որ ձեռք էիր բերել ինձ մոտ և որին ես եմ վկա եղել: Արդ, այն կյանքի փոխարեն, որ դու պետք է վայելեիր, բազմաթիվ նեղություններ եմ տալու քեզ, պատվի փոխարեն՝ անարգանք, պաշտոնի փոխարեն՝ բանտ ու կապանք և մահ կտամ, եթե հանձն չառնես աստվածներին պաշտամունք մատուցել: Մանավանդ այս մեծ Անահիտ տիկնոջը, որը մեր ազգի փառքն է ու կեցուցիչը, որին բոլոր թագավորներն են պաշտում, և հատկապես Հունաց թագավորը: Նա է բոլոր զգաստությունների մայրը, բարերարը ամբողջ մարդկային բնության և դուստրը՝ մեծ, արի Արամազդի:

Գրիգորը ճարտարախոսությամբ դարձյալ մերժում է արքայի պահանջը: Տրդատը նորից է փորձում հորդորել Գրիգորին՝ հետ կանգնելու իր նոր դավանանքից, սակայն ապարդյուն: Այնժամ Տրդատը հրամայում է Գրիգորի ձեռները հետևից կապել, բերանին բերանակապ դնել, մեջքին մի մեծ կտոր աղաքար դնել, կրծքին գելարան<sup>1</sup> կապել և գելարանի կապերից պարաններ գցելով՝ գլխիվայր կախել ապարանքի բարձր տանիքից: Այդպես յոթ օր Գրիգորը մնում է գլխիվայր կախված: Յոթ օրից հետո թագավորը հրաման է տալիս արձակել կապանքները և Գրիգորին բերել իր մոտ: Գրիգորը արքայի առաջ դարձյալ մնում է անհողողող իր հավատի մեջ: Տրդատը քանիցս մեկը մյուսից ծանր մարմնական պատիժների ու շարչարանքների է ենթարկում Գրիգորին, բայց նա միշտ մնում է սոկուն:

Երբ բոլոր տանջանքներն ու պատիժներն ապարդյուն են անցնում, հայոց նախարարներից մեկը՝ Տաճատը, մոտենում է Տրդատին և հայտնում.

— Դա որդին է մահապարտ Անակի, որն սպանեց քո հորը՝ Խոսրովին, և խավար բերեց Հայոց աշխարհին, կորստի ու գերության մատնեց այս երկիրը: Արդ, դա արժանի չէ ապրելու, քանի որ վրիժապարտի որդի է:

Տրդատը երբ իմանում է, որ Գրիգորը պարթև Անակի որդին է, անմիջապես հրամայում է կապել ոտքերը, ձեռներն ու պարանոցը և տանել Արուստան քաղաքի բերդի դղյակը, իջեցնել ստորգետնյա բանուր՝ Խոր Վիրապը, որպեսզի այդ խորությունից չկարողանա դուրս գալ և այնտեղ էլ մահանա:

Այդտեղից Տրդատը շարժվում, գնում է Այրարատ գավառի իր ձմեռանոցը՝ Վաղարշապատ:

Գրիգորը Խոր Վիրապում մնում է տասներեք տարի: Այդ տարիների ընթացքում մի այրի կին, որ բնակվում էր բանտի բերդում, երազում հրաման է ստանում՝ օրական մի նկանակ<sup>2</sup> հաց տանել և գցել Խոր Վիրապ: Գրիգորն այս այրի կնոջ նետած հացով Խոր Վիրապում ապրում է ամբողջ տասներեք

<sup>1</sup> Պատժի գործիք, որի միջոցով արկում, ոլորելով սեղմում, ճնշում էին պատժվողին:

<sup>2</sup> Հացի կորավուն տեսակ, բոքուն, բլիթ:

տարի: Խոր վիրապում, ուր իջեցնում էին բովանդակ Հայաստանի շարագործ մահապարտներին մեռնելու համար, ոչ մի մարդ կենդանի չէր մնում: Բոլորը մեռնում էին անտանելի տեղի, թանձր տիղմի, հեղձուցիչ օդի և օձերի ու կարիճների առատության պատճառով:

Իսկ այդ ժամանակամիջոցում քաջ Տրդատը ավերում ու քանդում էր պարսից տերությունն ու Ասորեստանը, մեծ վնասներ հասցնում պարսից թագավորությանը: Նրա քաջություններն այնպիսի համբավ էին ձեռք բերել, որ անգամ դարձել էին ժողովրդական առակավոր խոսքի առարկա. «Ինչպես սեզ Տրդատը, որն իր հզորությամբ ավերեց գետերի թմբերը և իր իսկ գործությամբ ցամաքեցրեց ծովերի հորձանքը»<sup>1</sup>: Նա իրոք սեզ էր իր հաղթանդամ արտաքինով, գորեղ կազմվածքով, վիթխարի ուժով, քաջ էր ու կատաղի պատերազմող:

### Տրդատ և Հոփսիմե\*

Տրդատը զգուշանալով քրիստոնեության ուսմունքի հետևորդներից, հրովարտակ է արձակում իր իշխանությանը ենթակա բոլոր երկրների մեծամեծներին, իշխաններին, նախարարներին, գործակալներին, բոլոր մարդկանց: Հրովարտակն սկսվում էր այսպես.

«Թող ողջ՞ ո՞ւն և խաղաղություն հասնի աստվածների օգնությամբ, առատ լիություն՝ արի Արամագրից, խնամակալություն՝ Անահիտ տիկնոջից, քաջություն հասնի ձեզ ու ամենայն Հայոց աշխարհիս՝ քաջն Վահագնից: Թող հունաց իմաստությունը հասնի կայսերական դաստակերտիդ և հոգատարություն լինի մեր դիցախառն պարթևներից, թագավորների փառքից և քաջ նախնիներից»:

Այնուհետև հրովարտակի մեջ նշվում էր, որ երկիրը շեն ու լի, աստվածների պաշտամունքի կարգերն ու թագավորական օրենքները, երկրի խաղաղությունն ու անվտանգությունը ամուր պահելու նպատակով անհրաժեշտ է առավել զորացնել աստվածների պաշտամունքն ու պատվել նրանց զոհերով, դաժան ու անխնա պայքար մղել բոլոր նրանց դեմ, ովքեր կհանդգնեն անպատվել աստվածներին կամ տարածել իրենց նոր՝ քրիստոնեական կրոնը:

Առանձնապես պատվիրում էր հայտնաբերել այդ նոր կրոնի հետևորդներին, պատժել, նրանց հայտնաբերողներին խոստանալով արքունի պարգևների ու շնորհների արժանացնել:

Այդ օրերին Հռոմի Դիոկղետիանոս կայսրը կամենում է ամուսնանալ: Նա նկարիչներ է ուղարկում իր տերության տարբեր կողմերը՝ նկարելու բոլոր գեղեցիկ կանանց և ներկայացնելու իրեն, որին ինքը հավանի, նրա հետ էլ ամուսնանա:

Նկարիչները գալիս են Հռոմ քաղաքը և լեռներում մեկուսացած մի գաղտնի կուսանոց են գտնում, ուր ժուժկալ կանքով ապրում ու աղոթում էր քրիստոնյա կույսերի մի բազմություն: Կույսերի գլխավորն էր Գալանե անունով մի պարկեշտ կին, որի սաներից էր արքայական տոհմից սերող, ժամանակի նշանավոր մարդկանցից մեկի դուստր, չքնաղ գեղեցկության տեր Հոփսիմեն:

Նկարիչները գալիս, բռնությամբ մտնում են կուսանոցը և շլանում Հոփսիմենի սքանչելի գեղեցկությամբ: Նրանք իսկույն Հոփսիմենին նույնությամբ նկարում են տախտակի վրա և տանում, ներկայացնում են թագավորին: Դիոկղետիանոսը հիանում է Հոփսիմենի նկարով, լցվում տոփանքի կատաղի ցանկությամբ և անմիջապես հարսանիքի պատրաստություն տեսնում: Նա շտապ պատգամավորներ ու պատվիրակներ է ուղարկում բոլոր երկրները, որպեսզի ամենքը իրենց օժիտներով ու ընծաներով գան ներկայանան արքայական մեծ հարսանիքին:

Կույսերն իմանալով կայսեր մտադրությունը՝ Գալանեի գլխավորությամբ փախչում են Հռոմից և երկար ճանապարհ կտրելով, գալիս հասնում են Հայոց երկիրը: Նրանք գալիս ապաստանում են արքայանիստ Վաղարշապատի այգիների հնձաններում, ապրում՝ քաղաքում իրենց ունեցվածքը վաճառելով: Կույսերից մեկը, որ գիտեր ազակեգործության արհեստը, ապակյա ոլունքներ էր պատրաստում, վաճառում, ապահովում իրենց օրական ապրուստը:

<sup>1</sup> Ներքևում դրվում է հին հայերեն բնագիրը.

«Իբրև գեղեկ Տրդատ, որ սիգալովն ատրեաց գթոմբս գետոց, և ցամաքեցոց իսկ ի սիգալն խրում գլորճանս ծովուց»:

\* Ծարտդրված է ըստ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության»:



Կույսերի անակնկալ փախուստը մեծ տագնապ է բարձրացնում ամբողջ հունա-հռոմեական աշխարհում: Նրանց սկսում են լարված որոնել ամենուրեք: Դիոկղետիանոսը հրովարտակ է հղում Մեծ Հայքի թագավոր Տրդատին. խնդրելով անմիջապես գտնել Հայոց աշխարհի փախած կույսերին, բոլորին չարասար մահվան արժանացնել, բացի Հոփսիմեից:

«Այդ խաբված չքնադագեղ կույսին այստեղ ինձ ողարկիր: Իսկ եթե նրա գեղեցկությունը թեզ հաճո թվա, այդտեղ մոտո կպանես, քանզի նրա նմանը երբեք չգտնվեց մեր Հունաց աշխարհում», — գրում էր Դիոկղետիանոսը Տրդատին: Տրդատն անմիջապես սկսում է որոնումները Հայոց աշխարհի բոլոր կողմերում: Փակում են ու հսկում բոլոր գավառների մուտքերը, ճանապարհները, քաղաքների պողոտաները: Կույսերի հետքերը, սակայն, շուտով հայտնաբերվում են: Մեկը, որ տեսել էր նրանց, հայտնում է, որ նրանք թաքնված են Վաղարշապատի այգևատանների հնձաններում:

Անմիջապես հանձնարարվում է հետևակ զորքի մի վաշտի՝ շրջապատել հնձանները և կույսերին առայժմ արգելափակել այդտեղ: Երկու օր շարունակ կույսերը մնում են հնձաններում՝ զինվորներով վահանափակ շրջապատված: Երկու օր անց Հոփսիմեի պարկեշտության ու չքնաղ գեղեցկության համբավը հոչակվում է բազմամբոխ հրապարակներում ու տարածվում: Նրա գեղեցկությունը տեսելու համար հնձանների մոտ գալիս ու կիտվում է խուռներամ բազմություն: Խառնիճաղանջ ամբոխին են միանում նախարարները, ավագանու մեծամեծները, ազնվական մարդիկ, թույլ տալով ցոփ ու վավաշոտ արտահայտություններ կույսերի հասցեին:

Երբ կույսերը լսում են դրանք, ողբաձայն ողբում են իրենց աստծուն՝ փրկելու իրենց զազրելի հեթանոսների անօրեն պղծությունից: Նրանք ծածկելով իրենց երեսները, ընկնում են գետին, պառկում, ամաչելով լկտի ականատեսներից:

Տրդատին իր մտերիմ ականատեսները պատմում են Հոփսիմեի աննման գեղեցկության մասին: Մյուս օրը առավոտյան, այգաբացից առաջ, Տրդատը հրամայում է Հոփսիմեին արքունիք բերել, իսկ Գայանեին մնացած կույսերի հետ թողնել հնձաններում:

Արքունիքից շտապ ոսկեպատ զահափորակներ են բերում, սպասավորներով հանդերձ, հասցնում քաղաքից դուրս գտնվող հնձանի դուռը: Բերում են նաև ազնիվ, գեղեցիկ, փափուկ ու պաշտառ հանդերձներ, ընտիր արդուզարդ, որպեսզի Հոփսիմեին հագնի դրանք, զարդարվի, շուրջով ու պատվով քաղաք մտնի և ներկայանա թագավորին: Թագավորը թեպետ չէր տեսել Հոփսիմեին, բայց ասածներից գիտեր նրա վայելուչ գեղեցկության մասին և որոշել էր կնության առնել նրան:



Գայանեն երբ տեսնում է արքայական այս շքեղ պատրաստությունը, աղերսում է Հռիփսիմեին, հեթանոսական այդ շուքից չգալթակղվել և հավատարիմ մնալ իր հավատին:

Իսկ դրսում ամբոխվել էր արքունի սպասավորների, նախարարների, ազազանու, մեծամեծերի բազմությունը, որ եկել էր Հռիփսիմեին պատիվ տալու, արքունիք ուղեկցելու, Տրդատ թագավորին կնության տանելու և հայոց տիկնության արժանացնելու համար:

Հռիփսիմեն աղոթում է և ամբողջ հոգով վճռում հրաժարվել իրեն մատուցվող այդ բոլոր պատիվներից:

Երբ Տրդատին հայտնում են Հռիփսիմեի մերժման մասին, թագավորը կարգադրում է.

— Քանի որ չկամեցա՞վ գալ իր կամքով, պատվով, շքեղությամբ, թող բռնությամբ բերեն մինչև ապարանքս և ներս բերեն արքունի սենյակ:

Թագավորի սպասավորները գալիս, Հռիփսիմեին բռնությամբ հանում են հնձանից, մերթ քարձրացրած, մերթ քարշ տալով տանում են դեպի պալատ: Իսկ ամբոխը, որ հետևում էր Հռիփսիմեին, փողեր էր հնչեցնում, աղմկում, գոռում, գոչում էր, երկիր թնդացնում:

Սպասավորները Հռիփսիմեին տանում, մտցնում են թագավորի ապարանք, փակում արքունի սենյակում:

Հռիփսիմեն սկսում է աղոթել և փրկություն հայցել մատծուց: Այդ միջոցին ներս է մտնում Տրդատը, իսկ ապարանքից դուրս, փողոցներում մարդիկ խոնկած՝ սկսում են կրկել ու պարել, վազել ու թռչկոտել. մի մասը լցվում է բերդը, մյուսը՝ քաղաքում պատրաստվում է հարսանեկան ինչույքի, երգի ու պարի:

Թագավորը ներս մտնելով, փորձում է բռնությամբ տիրանալ գեղեցկուհուն: Հռիփսիմեն իր պատիվը փրկելու ներքին մղումից զորացած՝ մաքրում է Հունաց աշխարհում օլիմպիական խաղերում մարտնչած, բազում կոիվներում միշտ հաղթանակած հզոր ու հաղթանդամ Տրդատի դեմ: Այդ անհավասար մարտումը տևում է մոտ յոթ ժամ, ցերեկվա ժամը երեքից մինչև երեկոյան տասը և ավարտվում Հռիփսիմեի կատարյալ հաղթանակով: Հռիփսիմեն չի հանձնվում, իսկ Տրդատը մարտնչելուց հոգնում է, թուլանում: Պարտված թագավորը դուրս է գալիս սենյակից և վիզը պարան գցած՝ բերել է տալիս Գայանեին, կանգնեցնում սենյակի դռանը, ինքը մտնում ներս և սպասավորներին պատվիրում, որ ստիպեն չհրապուրվող Գայանեին՝ դրսից դիմել սենյակում գտնվող Հռիփսիմեին, կատարելու թագավորի կամքը, որպեսզի իրենք փրկվեն:

Գայանեն հանձն է ստնում խոսել իր սանի հետ: Նա մոտենում է դռանը, դիմում ներսում գտնվող Հռիփսիմեին.

— Որդյնի, Քրիստոսը քեզ պղծությունից թող հեռու պահի և զորավիզ լինի. աստծո կենաց ժառանգությունից դուրս չգա՛ւ՝ ժառանգելու այս անցավոր աշխարհը, որը ոչինչ է. աչսօր կս և վտղը կկորչի:

Երբ սպասավորները լսում են, թե ինչ խրատ է տալիս նա իր սանին, քարեր են բերում, խիռում Գայանեի բերանին, ատամները թափում, ստիպում, որ նա հորդորի Հռիփսիմեին թագավորի կամքը կատարելու:

Համես ու անզիջում Գայանեն դարձյալ նույն կարգի խրատներ ու հուսադրական խոսքեր է դասն արանքից շնչում իր սանին: Կրան դասն մոտից հեռացնում են, բերանը քարերով ջարդում, սակայն նա մնում է անկոտրում:

Իսկ սենյակի ներսում շարունակվում էր պաշարը Տրդատի և Հռիփսիմեի միջև: Պաշարը տևում է առավոտից մինչև գիշերվա առաջին ժամը: Կամքով արիացած սողիկը ուժեղ հարվածներ տեղալով թագավորի վրա, նրան պարտության է մատնում: Տրդատը հոգնած ու թուլացած վալը է ընկնում: Զարացած Հռիփսիմեն թուլացած թագավորին մերկացնում է հանդերձներից, ամոթալի վիճակում թողնում նրան ընկած և հեռանում:

Հռիփսիմեն թափով բաց է անում սենյակի դռները, գլգզված ու պատառոտված զգեստներով դուրս է գալիս սենյակից, ճեղքում ամբոխը, անցնում քաղաքի միջով, դուրս է ելնում քաղաքի արևելյան կողմի Արեգ դռնից, գնում հնձանում գտնվող իրենց կացարանը, ընկերուհիներին ավառում իր հաղթանակը, ապա անցնում գնում քաղաքից հեռու հյուսիս-արևելքում գտնվող մի ավազուտ սարավանդ, որի կողքով անցնում էր Արտաշատ տանող ճանապարհը: Այտոտեղ նա ծնկի է իջնում և սկսում աղոթել:

Մինչ Հոփսիսմեն ծնկաշոք աղոթում էր, գիշերով վրա են հասնում թագավորի իշխանները, դահճապետը՝ դահիճների հետ միասին, վառված ջահերը ձեռներին պահած: Դահիճներն իսկույն մոտենում են Հոփսիսմենին, ձեռները հետևը կապում, լեզուն կտրում, ապա վրայից հանում գոգզված հանդերձները, գետնին չորս ցից խփում, երկուսը՝ ուռքերից, երկուսը՝ ձեռներից կապում, պրկում ցցերի վրա, ջահերը մոտեցնում, այրում են մարմինը հրով, գոգը քարեր լցնում, մաս-մաս կտրատում և սառնում:

— Ով որ հանդգնի թագավորների հրամաններն անարգել և արհամարհել, այս ձևով կոչնչացվի:

Կույսերի հետ Վաղարշապատ էին եկել նաև այլ քրիստոնյաներ՝ շուրջ յոթանասուն կանայք և տղամարդիկ: Նրանց մի մասը իմանալով Հոփսիսմենի նահատակության լուրը, գիշերով գալիս են հավաքելու և թաղելու նրա մարմնի մասերը: Հանդիպելով դահիճներին՝ բոլորն էլ սրի են քաշվում: Իսկ Տրդատը, մոռացած իր նվաստացումն ու պարտությունը, Հոփսիսմենի գեղեցկության սիրով վառված, իր արքունի առանձնասենյակում տխուր սգում էր աղջկա մահը:

Վաղ առավոտյան թագավորի մոտ է գալիս դահճապետը, Գայանեի սպանության հրամանը ստանալու: Տրդատը իր սիրո վշտից մոռացած, որ Հոփսիսմեն սպանված է, տակավին մտորում էր Հոփսիսմենին համոզելու և իր մոտ բերելու մասին, երբ դահճապետը ազդարարում է.

— Այդպես կկորչեն քո բոլոր թշնամիները, արքան, որոնք աստվածներին և ձեր՝ թագավորներիդ, հրամանը կանարգեն: Սակայն կն դեռ այն կախարհը, որն ապականելով կորցրեց չքնադագեղ աղջկան:

Թագավորը երբ նորից է իմանում, որ գեղեցկուհի Հոփսիսմեն մեռած է, դարձյալ տխրում է, իջնում գահից, նստում գետնին և սկսում լալ ու ողբալ գեղեցկուհու կորուստը: Ապա իրեն հավաքելով ոտքի է կանգնում և արձակում Գայանեի մահվան հրամանը: Թագավորը կարգադրում է նաև Գայանեի լեզուն ծոծրակից հանել և ապա սպանել, քանզի համարձակվել էր նա իր վնասակար խրատներով կորստյան մատնել այնպիսի կույսի, որը մարդկանց մեջ օժտված էր աստվածների գեղեցկությամբ: Իսկ նա իր խրատներով անշնորհակալ գտնվեց աստվածների հանդեպ, որոնք Հոփսիսմենին գեղեցկություն էին շնորհել:

Դահճապետը պալատից դուրս գալով, կարգադրում է շղթայակապ անել Գայանեին իր երկու ընկերուհիների հետ միասին և տանել քաղաքից դուրս, հանել հարավային դռնից դեպի Մեծամորի կամուրջը տանող ճանապարհի մոտ գտնվող ճահճուտը, որտեղ ըստ սովորության, սպանում էին բոլոր մահապարտներին:

Քաղաքի շուրջը պտտվող խրամ փոսի մոտ յուրաքանչյուրի համար չորս ցից է տնկել տալիս, մերկացնում կույսերին, պրկում ցցերի վրա, լեզուները ծոծրակներից հանում, մորթազերծ անելով՝ գլուխները կտրում: Այնուհետև դահճապետը սրի է քաշում նաև կույսերի հետ Հոռմից եկած մնացած քրիստոնյաներին:

### **Տրդատի դիվահարությունն ու բուժումը\***

Հոփսիսմենի սպանությունից հետո Տրդատը վեց օր սուգ է մտնում, մնում խոր տրտմության մեջ, անհուն կարտոտով ու կակիծով հիշում Հոփսիսմենին: Տոթերորդ օրը թագավորը վճռում է որսի դուրս գալ և որսի մեջ մոռանալ իր վիշտը: Նա որոշում է որսի ժամը, հրամայում է գորքին՝ հավաքել բերել որսի գենքերը, տազնապ քարձրացնել, լարել ցանցերն ու թակարդները և որսի դուրս գալ Փառական Ծեմակաց դաշտում:

Երբ Տրդատը արքայական կառքը նստած քաղաքից դուրս է գալիս, հանկարծ դիվահարվում է և կառքից վայր տապալվում, սկսում է մոլեգնել ու իր մտերը կրծել: Նա վարագի կերպարանք է ընդունում, մտնում եղեգնուտը, դառնում խոտանարակ: Թեպետ քանիցս կամենում են նրան քաղաք բերել, արգելափակել, սակայն նրա ահռելի ուժի և դիվահարության պատճառով չեն կարողանում:

Թագավորի բոլոր մերձավորները, ծառաներն ու սպասավորները մնում են շվարած ու ահաբեկված այդ ահավոր պատուհասից:

Տրդատի քույր Խոսրովիդուխուրը երազ է տեսնում. նրան ասում են, որ թագավորի փրկությունը

\* Ծարադրված է ըստ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության»:

կախված է միայն Խոր Վիրապում բանտարկված Գրիգորից: Անհրաժեշտ է մարդ ուղարկել Արտաշատ, դուրս բերել բանտարկված Գրիգորին, որը և կդարձանի թագավորի ցավը:

Երբ Խոսրովի դուխտը իր մտերիմներին պատմում է երազը, սկսում են նրան միայն հեզգել ու ծաղրել, թե ինչպես մարդ կարող է տասնհինգ տարի կենդանի մնալ Խոր Վիրապում, երբ առաջին իսկ օրը այնտեղ ընկնողն իսկույն կմեռնի սուկ օձերի ահեղի տեսքից:

Երազը կրկնվում է մի քանի անգամ, այն էլ սպառնալիքով, որ եթե անմիջապես Գրիգորին չազատեն Խոր Վիրապից, ապա թագավորի տանջանքներն առավել կսաստկանան, կմահանա և նորանոր պատուհասների կենթարկվեն երկիրն ու ժողովուրդը:

Խոսրովի դուխտը այս անգամ մեծ երկչուղածությամբ ու զգուշավորությամբ պալատականներին պատմում է իր տեսած երազն ու սպառնալիքները:

Արքունիքից շտապ կարգով Արտաշատ են ուղարկում Օտա Ամատունուն: Երբ Օտան գալիս է Արտաշատ, քաղաքացիք հարցնում են գալու պատճառը: Իմանալով, որ նա եկել է Խոր Վիրապից բանտարկված Գրիգորին տանելու, շատ են զարմանում և կասկած հայտնում նրա կենդանի մնալու մասին:

Հաստ պարաններ են բերում, կապում իրար, կախում Վիրապի մեջ: Օտան վերևից ձայն է տալիս:

— Գրիգհր, ուր որ ես, դուրս եկ, այդպես է հրամայված քո պաշտած աստծո կողմից:

Գրիգորն անմիջապես Խոր Վիրապում ոտքի է կանգնում, շարժում պարանը և ամուր բռնում: Քաշում, հորից հանում են Գրիգորին. նրա ամբողջ մարմինը թխացել էր, ածուխի նման սևացել: Իսկույն հանդերձներ են բերում, հագցնում և մեծ խնդությամբ Արտաշատից տանում Վաղարշապատ:

Խոզի կերպարանք մտած թագավորն անջատվում է վայրի խոզերի երամակներից և քաղաքի մոտ ընդառաջ է գալիս Գրիգորին: Քաղաքի մոտ Գրիգորին դիմավորելու են գալիս նախարարները:

Երբ հեռվից նրանք տեսնում են բազմության հետ իրենց մոտեցող Օտային ու Գրիգորին, գալիս են ընդառաջ, ծունկի գալիս և ասում.

— Խնդրում ենք քեզանից՝ ներիք մեր հանցանքները, որ մենք գործել ենք քո դեմ:

Գրիգորը մոտենում է նրանց, ոտքի կանգնեցնում, ապա հարցնում նահատակված կույսերի տեղը: Իմանալով, զնում է այնտեղ, հավաքում է բնավ չապականված նրանց մարմիններն ու մարմնի մասերը: Նախարարները պատանքի համար շատ հանդերձներ են բերում, սակայն Գրիգորը արժանի չի համարում կույսերին այդ արքայական պատանքներում ամփոփել, այլ նրանց յուրաքանչյուրի մարմինը պատում է նրանց իսկ պատառոտված հանդերձներով և բերում, տեղավորում է այն հնձանում, որ կույսերի օթևանն է եղել: Ինքն էլ մնում է այդ հնձանում և մինչև լույս աղոթում:

Հաջորդ օրը վարազակերպ թագավորը, նախարարները, ավագանու մեծամեծները խուռն ամբոխի ուղեկցությամբ գալիս, ծնկի են իջնում Գրիգորի և նահատակների մարմինների առջև և իրենց կատարած հանցանքների համար ներում հայցում:


Գրիգորը նրանց սկսում է քարոզել նոր կրոնի սկզբունքները և առաջարկում ճանաչել ու ընդլայնել այդ կրոնը, որպեսզի նրանք ազատվեն իրենց հետ պատահած այդ դժբախտությունից և նորանոր պատուհասներից:

Թագավորն ու նախարարները համաձայնում են ընդունել այդ կրոնը, եթե ամեն ինչ կներվի իրենց և պատուհասներն էլ կվերացվեն:

Գրիգորը 65 օր շարունակ նորադարձներին մանրամասն քարոզում է նոր վարդապետության հիմունքներն ու պատգամները, 65 օր թագավորն ու նախարարները պաս են պահում, թավալվում նահատակված կույսերի օթևանի առջև՝ մոխիրների մեջ, ապաշխարում, բժշկություն խնդրում:

66-րդ օրը Գրիգորը թագավորին, նախարարներին և ամբոխին պատմում է այդ գիշեր իր տեսած հրաշալի տեսիլքը՝ աստվածային պատգամներով, որոնցով պահանջվում էր տեսիլում երևացած ոսկե խարիսխ ունեցող հրեղեն պան տեղում կառուցել աստծո տաճար, կույսերի զոհված տեղերում՝ վկայարաններ<sup>1</sup>, որպեսզի տուժածներն ու պատուհաս կրողները բուժվեն և իրենց ընդունած նոր հավատի մեջ ամրապնդվեն:

<sup>1</sup>Նահատակված վկայի նահատակության տեղում կամ նրա նշխարների վրա կառուցված մատուռ:



Թագավորն ու նախարարները խնդրում են Գրիգորին՝ հրամայել անել տայ այդ ամենը, ինչպես ինքը կկամենա:

Գրիգորն անմիջապես կարգադրում է շինանչյոթ հայթայթել հիշյալ տաճարն ու վկայարանները արագ կառուցելու համար:

Հավաքված մարդկային բազմությունն այդ լսելով՝ արագ գործի է անցնում, յուրաքանչյուրը գնում է շինանչյոթ պատրաստելու և բերելու: Հրամայված տեղերում բերում և կուտակում են վեմ, քար, աղյուս, մաշի շիպտ: Գրիգորը նույն տեղերում նախագծում է կառույցների հիմքերն ու հորինվածքը: Բազմության նվիրված ջանքերով՝ արագորեն կառուցվում են կրեք վկայարաններ. մեկը՝ քաղաքի հյուսիս-արևելյան կողմում, Հոփսիսիևի և Երեսներկու ընկերների նահատակված տեղում, մյուսը՝ հարավային կողմում, որ նահատակվել էր Փոզանեն իր երկու ընկերուհիներով. իսկ երրորդը՝ այգիների մեջ՝ հնձանի տեղում, որը նրանց կացարանն է եղել:

Այնուհետև Գրիգորը հրամայում է նահատակվածներից տուրքանչյուրի համար մայրափայտից արկղի նման պինդ ու երկաթազան տապաններ շինել: Արագ պատրաստում են տապանները, բերում հնձանի դուռը: Գրիգորը միայնակ, յուրաքանչյուր նահատակի տեղավորում է փայտե տապանի մեջ, ամրացնում, կնքում:

Իսկ Տրդատը, որ բացի մարդաբար խոսելուց և հասկանալուց, ամբողջապես խոզի կերպարանք ուներ, ձեռների ու ոտքերի թաթերը խոզի էին, մարմինը՝ խոզի թափ մազկալով ծածկված, վարսիկ նման խոշոր ժանիքներով և գլխին քուրձ գցած ման էր գալիս, մոտենում է Գրիգորին, աղաչում, որ գոնե ձևներն ու ոտները բուժելու հնար գտնի, որպեսզի ինքն էլ կարողանա այդ սուրբ շինվածքների կառուցին իր անձնական մասնակցությունը բերել:

Գրիգորը ծնկի է գալիս նահատակների դագաղների մոտ, ձեռները պաղատագին երկինք բարձրացնում, թագավորին և մյուս պատուհասվածներին բուժում հայցում:

Թագավորի ձեռների և ոտների կճղակները թափվում են, բուժվում: Տրդատը Գրիգորից հարցնում է իր անելիքը: Գրիգորը նրան է տալիս դագաղների շափը, որպեսզի յուրաքանչյուրի համար վկայարաններում գերեզմաններ փորվեն: Տրդատը Գրիգորին խնդրում է, որպեսզի այդ գործին մասնակից դարձնի նաև իր կնոջը՝ Աշխեն տիկնոջը, և քրոջը՝ Խոսրովիդուխտին: Գրիգորը համաձայնում է, Տրդատը կնոջ և քրոջ հետ գնում է նահատակների համար գերեզմաններ փորում, պատրաստում: Գերեզմանների պատրաստելուց հետո Տրդատը գալիս Գրիգորից յոթնօրյա նամիորդության թույլտրվություն է խնդրում:

Թագավորը գնում, բարձրանում է բարձր Մասիս ի վեր և Մասի գագաթից կարծր, անտաշ, ծանր ու երկար քարեր պոկում, այնպիսի մեծամեծ քարեր, որ դրանցից մեկն անգամ մարդկանց բազմությունը չէր կարող տեղից շարժել: Հսկայազոր թագավորը հսկա Հսկի նման այդ փթիսարի ժալասրեկորներից ութ քար վերցնելով՝ դնում է իր թիկունքիս և բերում հասցնում է նորակառույց



Այս վերաբանները եղել են առնվազն Էջմիածին և Գորիսի Գրիգորի հիշատակի համար: Գրիգորի և Տրդատի գործերի տեղիքը՝ բոլորովին ճշտակապես չեն սուղանվել:

վկայարանները: Նա սեփ-մեծակ չորս քար կանգնեցնում է Հոփսիսի վկայարանի սեփին, իբրև հուշարձան կույսի հետ մղած իր անմիտ մարտի:

Վկայարանները կառուցելուց, ավարտելուց, հարդարելուց հետո նահատակների դագաղներն ամփոփում են խորանների տակ փորված գերեզմաններում և յուրաքանչյուրի վրա խաչ կանգնեցնում:

Այս թագավորն ամբողջ ժողովրդի հետ գնում է այն վայրը, ուր Գրիգորի տեսիլի մեջ երևացել էր ոսկե խարսխի վրա հրեղեն սյունը: Այդ վայրը շրջափակում են բարձր պարիսպներով, դռներ դնում, փակում և մեջտեղը խաչ տնկում:

Գրիգորն այնուհետև ծնկի է գալիս, աղաչում, աղոթում աստծոն, որ թագավորին և մյուս պատուհասավածներին բուժում տա: Թագավորը, որ խոզի կերպարանքով կանգնած էր ժողովրդի մեջ, հանկարծ դողով է բռնվում, վրաչի խոզի մորթը, ժանիքներն ու կնճիթակերպ դեմքը վայր են ընկնում, խոզի մագի թավությունից կոշտացած մաշկը թափվում է: Տրդատը ձեռք է բերում իր մարդկային կերպարանքը՝ փափուկ ու մատղաշ մաշկով և լիովին բուժվում: Նույն կերպ բուժվում են նաև բոլոր նրանք, ովքեր պատուհասվել էին այս կամ այն հիվանդությամբ:

Մեծ ցնծություն և ուրախություն է պատում ամենքին, սկսում են աշակերտներ հավաքել Հայաստանի տարբեր կողմերից՝ նոր կրոնի վարդապետությունն ուսուցանելու: Արարատյան նահանգի արքայանիստ Վաղարշապատը դառնում է նոր կրոնի ուսուցման կենտրոն:

### **Տրդատն ու Գրիգորը կործանում են հեթանոսական մեհյանները\***

Գրիգորի առաջարկությամբ թագավորն ու իշխանները խորհուրդ են անում իսպառ վերացնելու հեթանոսությունը, կործանելու հին աստվածների բազիլիկներն ու մեհյանները:

Տրդատը հրաման է տալիս այդ գործի իրականացումը հանձնարարել Գրիգորին:

Թագավորն ինքն անձամբ ամբողջ գործով Գրիգորի հետ միասին, Վաղարշապատից շարժվում, գնում է Արտաշատ: Նրանք նախ Արտաշատի ճանապարհին՝ Երազամույն կոչված տեղում, ուր քարձրանում էր Որմիզդի գրչի Դիվան անունով Տիր աստծո մեհյանը, ավերում և կործանում են: Տեղի քրմերը իրենց պահապան գնդերով չկարողանալով դիմադրել արքունի զորքին, փախչում լցվում են Արտաշատում գտնվող Անահիտ դիցուհու մեհյանը: Երբ Տրդատը զորքով մտնում է Արտաշատ և շրջապատում մեհյանը, նրանք ուժեղ դիմադրություն են ցույց տալիս, պարիսպների վրաչից հարձակվողների վրա նետերի ու քարերի տարափ են տեղում, որոշ չափով կասեցնում հարձակումը: Բայց մեհյանը հարձակվողների ճնշման տակ կործանվում է, կրակի մատնվում, ավերվում: Այնտեղ ամբարված գանձերը բաժանում են աղքատներին, տառապյալներին և չքավորներին: Այնուհետև Գրիգորը Տրդատի հետ միասին զորքով գնում է Դարանաղաց գավառը<sup>1</sup>: Այստեղ Թորդան գյուղում էր գտնվում սպիտակափառ Բարշամինա աստծո մեհյանը: Նախ կործանում են մեհյանը, փշրում աստծո արձանը, կոտակված գանձերը, ոսկին ու արծաթը ավարի են մատնում և բաժանում աղքատներին: Իսկ գյուղը իր բոլոր դաստակերտներով ու կալվածքներով նվիրում են եկեղեցուն, գավառի բնակիչներին քարոզում նոր կրոնի վարդապետությունը:

Թագավորն ու Գրիգորը Թորդանից անցնում են Անի ամրոցը, ուր ամփոփված էին հալոց թագավորների գերեզմաններն ու գանձերը: Այստեղ էր գտնվում նաև աստվածների հայր Արամազդի բազիլը: Նրանք ավերում են այն, տեղում խաչ կանգնեցնում, իսկ ավանն իր ամրություններով հանդերձ նվիրում եկեղեցուն:

Այստեղից Տրդատն ու Գրիգորը անցնում են սահմանակից Եկեղյաց գավառը, որտեղ գտնվում էին հալոց թագավորների բուն պալատամունքի վայրերը: Դրանցից գլխավորը Երիզա ավանում գտնվող Անահիտ դիցուհու մեհյանն էր, որը վահանավոր զինվորներով պահպանում էին քրմերը՝ ընդդեմ

\* Շարվարված է ըստ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության»:

<sup>1</sup> Գտնվում է Բարձր Հայքում, Եփրատ գետի հովտում՝ Երզնկայից հարավ-արևմուտք:



արքունի գորքի: Ասկայն նրանց դիմադրությունը շուտով կտրվում է, տաճարի բարձրարևոճ պարիսպները կործանվում են և հարթեցվում: Գրիգորը թագավորով հանդերձ և գորքի օժանդակությամբ փշրում են Անահիտ դիցունու ոսկյա արձանը, քանդում տաճարը, ոսկին ու արծաթը ավարի մատնում: Ապա սյնտեղից Գալ գետի վրայով անցնում են Թիլ ավանը, ուր գտնվում էր Արամազդի դուստր Նանեի մեհյանը: Զույգ մեհյանների գանձերը ավարի ենթարկելով, կալվածքներն ամբողջությամբ նվիրում են եկեղեցուն:

Այնուհետև Գրիգորն ու Տրդատը գորքով անցնում են Դերջան գավառը, քարոզելու նոր կրոնի սկզբունքներն ու դարձի բերելու տեղի հաչ հեթանոս բնակչությանը: Բագահատից գլուղում գտնվող Արամազդի որդի Միհրի մեհյանը հիմքից քանդում են, կուտակված գանձերը ավարի մատնում և աղքատներին բաժանում, իսկ կալվածքները նվիրում եկեղեցուն:



Հեթանոսական մեհյանները քանդելուց, դրանց տեղերում խաչեր տնկելուց հետո, թագավորն ու Գրիգորը վերադառնում են Վահարշապատ: Տրդատն այստեղ իր կին Աշխեն տիկնոջ և քրոջ՝ Խուրովիդուխտի համաձայնությամբ հրաման է տալիս իր բոլոր գորքերին, իրենց զորահրամանատարներով միաստեղ ժողովի հավաքվել: Երբ բոլոր գորքերը իրենց իշխանների, զորապետների և բոլոր նշանավոր մարդկանց հետ ներկայանում են թագավորին, վերջինս բոլորի հետ խորհրդակցելով, առաջարկում է Գրիգորին դարձնել հոգևոր հովիվ, այսինքն՝ կրոնական առաջնորդ, որպեսզի ժողովրդին քրիստոնյա դարձնի և մկրտի: Գրիգորը մերժում է թագավորի առաջարկը, առարկելով թե՛

— Չեմ կարող համբերել, դիմանալ անչափ բարձրությանը, քանզի անպատում է քրիստոսատուր փառքի առաջնորդության պատիվը՝ միջնորդ դառնալու աստճո և մարդկանց միջև: Լավ կանեք, եթե ուրիշ արժանի մարդ գտնեք:

Տրդատին ու Գրիգորին տեսիլ է երևում և պարտափորեցնում է Գրիգորին՝ ստանձնելու քահանայապետության պաշտոնը: Գրիգորը համաձայնում է: Այնժամ Տրդատը հավաքում է Հայոց աշխարհի 16 գլխավոր նախարարներին ու կուսակալներին և հատուկ հրովարտակով Գրիգորի հետ ողարկում Կեսարիա քաղաքը, Գրիգորին Հայոց աշխարհի քահանայապետ օձելու համար:

Իշխաններն ու կուսակալները կազմ ու պատրաստ, իրենց հետ վերցնում են տարբեր ընծաներ՝ ոսկի ու արծաթ, ձիեր ու ջորիներ, զանազան շքեղ հանդերձներ, Գրիգորին նստեցնում են սպիտակ ջորիներ լծած արքունական ոսկեպատ կառքը, իրենք էլ նստում են կառքեր կամ երիվարներ, յուրաքանչյուրն իր զորագևով, զինանշաններով Վաղարշապատից մեկնում են Հունաց կողմերը: Օսկանապարհին, տարբեր քաղաքներում ու ավաններում նրանց դիմավորում են մեծ ցնծությամբ ու ուրախությամբ, բազում պատիվների ու հյուրասիրության արժանացնում:

Այսպիսի հարգով ու պատվով նրանք հասնում են Կեսարիա, ներկայանում Ղևոնդիոս կաթողիկոսին, հանձնում Տրդատի հրովարտակն ու ընծաները: Ղևոնդիոսն ու մյուս քահանայապետները



մեծ սիրով ու ուրախությամբ են ընդունում հայոց պատվիրակությանը, պատշաճ պատիվների արժանացնում: Այս Դևոնդոնը եպիսկոպոսական մեծ ժողով է գումարում և Գրիգորին ձեռնադրում են Հայոց աշխարհի քահանայապետ, նրան շնորհելով եպիսկոպոսի աստիճան:

Այնուհետև Կեսարիայի կաթողիկոսն ու եպիսկոպոսները մեծ պատվով, հատուկ նամակով ու ընծաներով հայոց պատվիրակությանը ճանապարհ են դնում դեպի Հայաստան: Պատվիրակությունը գալիս հասնում է Սեբաստիա քաղաքը, որտեղ Գրիգորը հանդիպում է բազմաթիվ քրիստոնյա կրոնավորների, համոզում է նրանց իր հետ գալ Հայաստան քահանայության կարգի արժանացնելու, քրիստոնեությունը տարածելու և ամրապնդելու համար:

Կրոնավորների մեծ խմբեր հավաքելով՝ Գրիգորը հայոց պատվիրակության հետ մեծ շուքով վերադառնում է Հայաստան:

Երբ գալիս հասնում են Հայաստանի սահմանները, Գրիգորը իմանում է, որ տակավին կանգուն է մնում Տարոն գավառի Վահեվանյան հոշակավոր ու մեծազանձ մեհյանը՝ լի ոսկով ու արծաթով և մեծամեծ թագավորների կողմից նվիրաբերված հարուստ ու բազմազան ընծաներով: Վահեվանյան մեհյանը հայոց ութերորդ հոշակավոր պաշտամունքատեղին էր, ձոնված Վիշապաքաղ Վահագնին, որ գտնվում էր Եփրատ գետի ափին, Քարքե լեռան վրա՝ Տավրոս մեծ լեռան դիմաց: Վահագնի այս մեհյանը Մեծ Հայքի թագավորների զոհատեղին էր, որը հաճախակի զոհեր մատուցելու պատճառով կոչվում էր Աշտիշատ<sup>1</sup>:

Այստեղ Վահագնի Վահեվանյան մեհյանի կողքին տակավին շեն ու կանգուն էին մնում նաև Անահիտին կամ Ոսկեմայր դիցուհուն ձոնված բազիկը, Ինչպես նաև Աստղիկ դիցուհու մեհյանը, որ կոչվում էր Սենյակ Վահագնի:

Գրիգորն, ահա, գալիս է Աշտիշատ, որպեսզի քանդի ու կործանի այս երեք մեհյանները, որտեղ մարդիկ տակավին հին սովորությամբ շարունակում էին զոհեր մատուցել:

Գրիգորը Կեսարիայից իր հետ էր վերցրել նաև Հովհաննես Մկրտչի<sup>2</sup> և Աթանագինեսի<sup>3</sup> նշխարները: Երբ պատվիրակությունը գալիս հասնում է Եփրատ գետի ափին, մեհյանների դիմաց և կամենում է վեր բարձրանալ դեպի այն բարձրավանդակը, որի վրա կառուցված էին մեհյանները, սպիտակ ջորիներ լծած կառքը, որի վրա դրված էին սրբերի նշխարները, կանգ է առնում և այլևս չի կարողանում ձորակն անցնել:

Այդ պահին Գրիգորին տեսիլ է երևում և նրան ցուցում է տրվում նույն այդ տեղում կառուցել մատուռ և սրբերի ոսկորների նշխարներն այնտեղ թաղել:

Գրիգորի կարգադրությամբ զորքն իսկույն գործի է անցնում, արագ կառուցում է մատուռը, գերեզման է փորում և սրբերի ոսկորներն ամփոփում այնտեղ:

Գրիգորը զորքին հրաման է տալիս՝ բարձրանալ վերև և մուրճերով կործանել հեթանոս աստվածների մեհյանները: Սկզբում այդ զորքին չի հաջողվում, բայց Գրիգորի քաջալերանքով ու օգնությամբ հիմնովին ավերում են մեհյանները, քրմերին ու նրանց մոտ ծառայության եղած մարդկանց կոտորում:

Գրիգորը հավաքում է տեղի բնակիչներին, քրիստոնեություն քարոզում, ապա մեհյանների տեղում եկեղեցու հիմքեր գցում և պաշտամունքի սեղան և մկրտության ավազան կառուցում: Եվ քանի որ ինքը օծված եպիսկոպոս էր, այստեղ Տարոնում էլ նա հիմք է դնում եկեղեցիների շինարարությանը: Գրիգորը Տարոնում մնում է քսան օր և տեղացի բնակիչներից մոտ 190 հազ. մարդու մկրտում, դարձնում է

<sup>1</sup> Յաշտ նշանակում էր գոհ, մատաղ, շատ՝ տեղ, վայր. հետևաբար յաշտիշատ կամ աշտիշատ նշանակում էր զոհավայր, զոհերի տեղ, զոհատեղի:

<sup>2</sup> Հովհաննես Մկրտիչը. ըստ քրիստոնեական ավանդության, Քրիստոսին Հորդանան գետում մկրտողն էր, որից էլ մակդիրը՝ Մկրտիչ: Իսկ հայոց մեջ կոչվում է նաև Կարապետ, այսինքն՝ առաջինը, առաջնեկը, իբրև առաջինը Քրիստոսին մկրտող: Այնտեղ, ուր Գրիգոր Լուսավորիչը թաղում է Հովհաննես Մկրտչի նշխարները, հետագայում կառուցվում է Մշո սուրբ Կարապետի հոշակավոր վանքը, որը Էջմիածնից հետո հայոց ամենանշանավոր սրբավայրն ու ուխտատեղին էր: Վահագնի հին հեթանոսական պաշտամունքը, սրբավայրի տեղի նույնության պատճառով միաձուլվում է ս. Կարապետի պաշտամունքին, որին ժողովուրդը կոչում էր Մշո սուրբակ, այսինքն՝ Մշո թագավոր, տեր:

<sup>3</sup> Աթանագինեսը եղել է Սեբաստիայի եպիսկոպոս և քրիստոնեության մոլի քարոզիչ, նահատակվել է, որի պատճառով էլ քրիստոնեական եկեղեցու կողմից սրբացել:

քրիստոնչա: Այնուհետև այս նույն օրինակով նա Տարոնի տարբեր վայրերում եկեղեցիներ է կառուցում և քահանաներ կարգում:

Տրդատը, երբ լսում է Գրիգորի գալուստը, վերցնում է տիկնոջը՝ Աշխենին, և քրոջը՝ Խոսրովի- դուխտին, և մեծ գործով Վաղարշապատից ելնում, գալիս է Գրիգորին դիմավորելու: Նա գալիս հաս- նում է Բագավան գյուղաքաղաքը և այստեղ նստում, սպասում Գրիգորին: Գրիգորն այդ ընթացքում տարբեր գավառներում. շեներում ու ավաններում եկեղեցիներ է կառուցում, մկրտություն կատարում, քահանաներ կարգում: Այս գալիս է հասնում Բագավան: Թագավորը ամբողջ գործով դուրս է գալիս նրան ընդատաջ և Եփրատ գետի ափին դիմավորում նրան:

Տրդատին են հանձնում Ղևոնդիոս կաթողիկոսի օրհնության նամակը, որն ընդունվում է մեծ ցնծու- թյամբ ու ուրախությամբ: Գրիգորն այնուհետև կարգադրում է արքայական բանակին պատվ ու աղոթ- քով անցկացնել, իսկ ինքը Բագավանում և կից գավառներում շարունակում է նոր կրոնի քարոզը, եկե- ղեցիների կառուցումը, քահանաների կարգումը:

Երբ պատի ու աղոթքի ժամկետը լրանում է, Գրիգորը վերցնում է ամբողջ գործը, թագավորին, թա- գունուն, Խոսրովիդուխտին, բոլոր մեծամեծներին ու իշխաններին, վաղ առավոտյան իջնում Եփրատի ափը և բղորին մկրտում:

Այնուհետև նա լոթ օր շարունակում է այդ արարողությունը և մկրտում շուրջ չորս միլիոն մարդ՝ կին, տղամարդ ու մանուկ:

Քրիստոնեության ուսմունքի նահատակների՝ Հովհաննես Մկրտչի և Աթանագինեսի հիշատակը հավերժացնելու նպատակով, Գրիգորը կարգադրում է Բագավանում պաշտվող Ամանոր և Վանատոր հեթանոս սատվածների տոնը՝ Նավասարդի օրը, վերածել այդ քրիստոնեական սրբերի տոնի:

Նա Տրդատին խնդրում է երկրի տարբեր տեղերից աշակերտներ հավաքել, տալ ուսման, գիտու- թյուն և քրիստոնեական վարդապետությունը ուսուցանելու համար:

Տրդատ թագավորը Հայոց երկրի տարբեր կողմերից հավաքում ու բերել է տալիս ուշիմ, ուսման համար պատրաստ մանուկների բազմաթիվ խմբեր և նրանց վրա կարգում հմուտ ուսուցիչներ: Նա հատ- կապես հավաքել է տալիս քրմերի կամ նրանց ցեղին պատկանող մանուկներին, ապրուստի թոշակ նշա- նակում, խմբերի բաժանում. մի մասին տալիս են հունական, մյուս մասին՝ ասորական կրթության: Նրանց մեծ մասը հետագայում դառնում են եկեղեցական նշանավոր գործիչներ:

Այդպես, Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Մեծ թագավորի ջանքերով Հայոց աշխարհում տարածվում են քրիստոնեությունն ու օտար լեզուներով դպրությունն ու լուսավորությունը:

### Տրդատ և Մամգոն\*

Սասանի որդի Արտաշիրի թագավորության վերջին տարիներին Ճենաստանից իր ընտանիքով Պարսկաստան է փախչում Մամգոն անունով մի նշանավոր նախարար, որը գժովել էր ճենաց Արբոկ թագավորի հետ և մահից խուսափելու համար ապաստան է փնտրում պարսից Արտաշիր թագավորի մոտ: Այդ իմանալով, Արբոկը պատգամավորներ է ուղարկում Պարսկաստան և պահանջում Մամգոնին: Արտաշիրը մերժում է Արբոկի պատգամավորների պահանջը, որի հետևանքով Արբոկը պատերազմի է պատրաստվում Արտաշիրի դեմ, սակայն Արտաշիրը շուտով մեռնում է և նրա փոխարեն թագավորում է որդին՝ Ծապուհը:

Վերջինս դարձյալ Մամգոնին չի հանձնում Արբոկի ձեռքը, բայց և Մամգոնին չի թողնում Պարս- կաստանում, այլ տունտնտեղով ուղարկում է Հայաստան իր գործակալների մոտ: Ինքը՝ Ծապուհը, պատգամ է հղում Ճենաստանի թագավորին, ասելով.

— Մի վիրավորվիր, որ ես Մամգոնին չկարողացա քո ձեռքը տալ, որովհետև հաչքս նրան երդվել էր արեգակի լույսով: Բայց որպեսզի դու հանգիստ լինես, ես նրան իմ երկրից հալածեցի արևմուտք՝ աշխարհի ծայրը, ուր նրա համար մահից էլ վատ է լինելու: Ուրեմն, թող իմ ու քո մեջ պատերազմ չլինի:

Ճենաց թագավորն այս իմանալով՝ հաշտվում է:

\* Ընդարձակված է ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության»:

Մամգոնը երբ Հայաստան է գալիս, հանդիպում է Տրդատին այն ժամանակ, երբ նա Հունաստանից Հայաստան էր վերադառնում: Մամգոնը իր ամբողջ գերդաստանով և մեծամեծ ընծաներով գնում է Տրդատին դիմավորելու: Տրդատը մեծ սիրով ընդունում է նրան, բնակության տեղ տալիս և ապահովում ապրուստով:

Պարսից Շապուհ թագավորը բոլոր ազգերին գրգռում է Հայոց աշխարհի դեմ. խոստանում, որ եթե նրանք արշավեն Հայաստան, ինքն էլ, մյուս կողմից պարսից զորքերով կգա նրանց օգնության: Շապուհի այս խարդավանքը հրապուրում է հայոց Սկյունյաց ցեղի Սղոյ նահապետին: Վերջինս սպանում է իր ծերացած փեսա Օտա Ամատունուն: Այդ ժամանակ Տրդատը գտնվում էր արևմուտքում: Երբ վերադառնում է և իմանում այդ բոլորը, ինքն է նախահարձակ լինում՝ հավաքում է զորքը և շարժվում հյուսիսային ազգերի վրա:

Սկյունյաց նահապետը, որ ամրացել էր Ողական ամրոցում և ապավինել Սիմ լեռան բնակիչներին՝ սասունցիներին, դիմակայում էր թագավորին, գրգռում երկրի բնակիչներին, չէր թողնում շրջակա գավառներում որևէ մեկը զբաղվեր պետական գործերով: Տրդատն ստիպված դիմում է հայոց բոլոր նախարարներին, թե՛ ով որ Սկյունյաց նահապետին բռնի և ինձ մոտ բերի, Սկյունյաց ցեղի բոլոր գյուղերը, դաստակերտները, ունեցվածքն ու իշխանությունը ընդմիջտ նրան կհանձնեն:

Թագավորի այս պահանջի կատարումը հանձն է առնում ճննացի Մամգոնը:

Երբ Տրդատը զորքով գնում է Աղվանքի կողմերը՝ հյուսիսային ազգերի դեմ կռվելու, Մամգոնը իր ամբողջ գերդաստանով գնում է Տարոնի կողմերը, ձևացնելով, թե իբր ապստամբել է թագավորի դեմ: Ծանապարհ ընկնելիս գաղտնի սուրհանդակ է ուղարկում Ողական, Սկյունյաց նահապետին հաղորդում, որ «թագավորը գնացել է Աղվանքի կողմերը՝ հյուսիսային ազգերի դեմ պատերազմելու: Նա այժմ էլ մեծ վտանգի մեջ է, ուստի և մեզ համար նպաստավոր ժամանակ է ըստ մեր կամքի գործելու: Թագավորի՝ իմ նկատմամբ ցույց տված արհամարհանքի պատճառով ես ապստամբել եմ նրա դեմ և այժմ կամենում եմ քեզ դաշնակցել»:

Սկյունյաց նահապետը շատ է ուրախանում, Մամգոնին սիրով ընդունում է և երդումով դաշնակցության ուխտ կնքում: Սակայն նա Մամգոնին ամրոց չի թողնում, տակավին չվստահելով նրա հավատարմությանը: Իսկ Մամգոնը ամեն ինչով աստիճանաբար շահում է Սղոյի վստահությունը, իբրև հավատարիմ գործակցի: Ի վերջո Սկյունյաց նահապետը համոզվում է նրա հավատարմության մեջ և թողնում է ազատ ելումուտ կատարել իր ամրոցում:

Օրերից մի օր Մամգոնը համոզում է Սղոյին՝ դուրս գալ ամրոցից և որսի գնալ: Որսի ժամանակ, երեներին հետապնդելիս, Մամգոնը նետով թիկունքից հարվածում է Սղոյին, գետնաթափալ սպանում, իր մարդկանց հետ արագ հասնում է ամրոցը, բերդը գրավում և ներսում գտնվողներին կապում: Կոտորում է Սկյունյաց տոհմի ներկայացուցիչների մեծ մասին. նրանցից միայն երկուսին է հասցրվում փախչել և ապաստանել Ծոփաց աշխարհում: Մամգոնը շտապ այդ ամենի մասին հաղորդում է Տրդատին: Տրդատը շատ է ուրախանում և հատուկ հրովարտակրով Սկյունիների կալվածքներն ու իշխանությունը Ողական ամրոցով հանձնում է Մամգոնին, նրան ապստամբի փոխարեն նշանակում նախարար, տոհմը նրա անունով կոչում Մամիկոնյան: Միաժամանակ Տրդատը հրամայում է մնացած Սկյունիներին չվճասել:

### **Տրդատի կռիվը բասիլների՝ թագավորի դեմ\***

Տրդատը Աղվանքում գարգարացիների դաշուն իջնելով, հանդիպում է հյուսիսական ցեղերին և ճակատամարտ է տալիս:

Երբ երկու կողմերն իրար են հասնում ու խառնվում միմյանց, Տրդատը դյուցազնի նման հարձակվում է շջնամու բազմության վրա և կիսում, բաժանում է երկու մասի: Նա այնպիսի ճարակությամբ ու

\* Ծարադրված է ըստ Մ. Խորենացու «Հայոց պատմության»:

1 Բասիլները կովկասյան հրոսակ ցեղեր էին:

արագությամբ է գեներ բանեցնում, որ նրա ձեռքի թափից միանգամից մի քանի հոգի էին գետին տապալվում, ինչպես հմուտ ձկնորսի ձկներով լի ցանցից ձկներն են գետին թափվում և վխտում հողի երեսին:

Բասիլների թագավորը տեսնելով այս անկոտորում հսկայի ուժն ու ահռելի կոտորածը, ձիով մոտենում է Տրդատին, ձիու վրայից արձակում ջլերից հյուսված կաշեպատ պարանը և հետևի կողմից ուժգին նետելով՝ զցում է Տրդատի ձախ ուսից մինչև ւաջ թևի անուրջ: Այդ պահին Տրդատը ձեռք բարձրացրել էր դիմացինին սրով հարվածելու համար, իսկ Տրդատի հագի գրահը ամրացված էր այնպիսի պահպանակներով, որի վրա նետերը գիծ անգամ չէին թողնում: Բասիլների թագավորը պարանը ձգելով տեսնում է, որ չի կարողանում հսկային տեղից շարժել, պարանը զցում է ձիու լանջին և դեռ չհասցրած ձին մտրակել, Տրդատը անապարելով ձեռք զցում է պարանին և սաստիկ ուժով ցնցելով, դեպի հրեն է քաշում բասիլների թագավորին և երկասյրի սրի հարվածով կես է անում թշնամի թագավորին, հետև էլ՝ նրա ձիու գլուխն ու պարսևնոցը:

Եվ երբ թշնամու գորքը տեսնում է, թե ինչպես իրենց գորավոր կովող թագավորը կիսվեց այդպիսի մի ահավոր բազկից, խուճապահար դիմում է փախուստի: Տրդատը նրանց հետապնդելով, բշում հասցնում է Հոների երկիրը: Նա նրանցից պատանդներ է վերցնում, հաշտություն կնքում և ամբողջ հյուսիսը իր հետ միաբանեցնելով, մի վիթխարի բանակ է կազմում և հարձակվում Ծապուհի վրա:

### ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԵՎ ՎԱՉԵ\*

Տրդատ Մեծից հետո թագավոր է դառնում նրա որդին՝ Խոսրովը, որը չնայած իր հոր և մոր հաղթանդամության, փոքր էր մարմնով և կարճահասակ, որի պատճառով էլ ստացավ Կոտակ (= կարճահասակ) մականունը:

Խոսրովի ժամանակ հայոց կաթողիկոս Վրթանեսի որդի Գրիգորիս եպիսկոպոսը նշանակվում է Վրաց և Աղվանից կողմերի կաթողիկոս: Նա իր եկեղեցաշեն գործունեությունն ու քրիստոնեության քարոզը հասցնում է մինչև Մասքութների<sup>1</sup> աշխարհը, մինչև մասքութների Արշակունի Սանեսան անունով թագավորի ճամբարը: Գրիգորիսը գնում ներկայանում է թագավորին, իբրև հայոց Արշակունի թագավորների տոհմակցի և սկսում նրան քարոզել քրիստոնեական ուսմունքը: Սկզբում թագավորն ու գորավարներն ընդունում են այդ ուսմունքը, սակայն երբ խորամուխ են լինում նրա սկզբունքների ու պահանջների մեջ, մանավանդ, երբ իմանում են, որ այդ կրոնին ատևի են ավարտությունը, հափշտակությունը.



\* Ճարտարված է ըստ Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» գրքերի:

<sup>1</sup> Մասքութներ կամ մասակետներ, սկյութական ցեղախմբին պատկանող ցեղ, որ բնակվել է Կասպից ծովի արևմտյան ափերին, մինչև Գերբենը քաղաքը ընկած տարածքում:

ազահությունը, սպանությունը, այլոց գրկելը, այլոց ունեցվածքին աչք դնելը, գայրանում են և ասում.

— Եթե մենք չհափշտակենք, չթալանենք, եթե ուրիշների ունեցվածքը չխլենք, ապա ինչո՞վ պետք է ապրենք և ինչո՞վ պահենք մեր այս բազմաթիվ գորքը:

Գրիգորիսը որքան էլ բարի խոսքերով ու պերճախոսությամբ փորձում է նրանց սիրտը շահել, համոզել, սակայն ամեն ինչ անցնում է ապարդյուն:

— Սա եկել է մեզ քաջությունից գրկելու, մեր ապրուստի աղբյուրը կտրելու, — ասում են նրանք, — եթե մենք սրան լսենք, ընդունենք քրիստոնեական հավատը, ապա ինչո՞վ պիտի ապրենք, մանավանդ, եթե մեր բնիկ սովորությամբ ձի չհե՞՞ճենք և չասպատակենք: Ո՛ր չ, սրա խոսքերը իրենք չեն, սրան Հայոց թագավորն է հատուկ նպատակով մեզ մոտ ուղարկել, որ այդ կրոնով խափանի մեր արշավանքներն ու ավարատությունն իր աշխարհից: Եկեք սրան մեջտեղից վերացնենք, արշավենք Հայաստան, ավարով մեր աշխարհը լցնենք:

Սանեսան թագավորը, որ սկզբից համամիտ էր Գրիգորիսին, բայց լսելով իր զորավետների և զինվորների այս խոսքերը, միտքը փոխում է, հրամայում է Գրիգորիսին սպանել: Զինվորները բռնում են մի կատաղի ձի, Գրիգորիսին կապում են նրա պոչից և ձին բաց թողնում իրենց բանակից դուրս՝ ծովամերձ Վատնյա կոչված դաշտում: Գրիգորիսը տանջամահ լինելով՝ մեռնում է, իսկ նրա հետ գնացած մարդիկ վերցնում են նրա ջախջախված դիակը, բերում Աղվանից կողմերի Հաբանդ գավառը, թաղում Ամարաս<sup>1</sup> գյուղի այն եկեղեցու մոտ, որ շինել էր Գրիգորիսի պապը՝ Գրիգոր Լուսավորիչը:

Այս դեպքից հետո մասքութների թագավոր Սանեսանը խիստ թշնամանում է իր ազգակից հայոց Խոսրով թագավորի հետ: Այդ իմանալով, պարսից Ծապուհ թագավորը գաղտնի գրգռում է Սանեսանին և ոտքի հանում Հայոց աշխարհի դեմ: Սանեսանը Կովկասի բոլոր վաչկատուն և ավարատու ցեղերին իր շուրջն է համախմբում, մեծ զորք գումարում և զինված խառնիճաղանջ բազմության գլուխն անցած, գալիս անցնում է Կուր գետը, սփռվում ու լցվում Հայոց աշխարհը: Զինված բազմությունն այնքան շատ էր, որ թիվ ու համար չկար: Իրենք անգամ չէին կարողանում հաշվել իրենց զինվորների քանակը: Դրա համար էլ, երբ մի նշանավոր տեղ էին հասնում, հատուկ հանդես էին կազմում քսո գնդերի, դրոշակների և վաշտերի, հրամայում էին, որ ամեն մի զինվոր մի քար վերցնի, բերի մի տեղ լցնի, որպեսզի գոյացած քարակույտով գաղափար կազմվի զորքերի քանակի մասին: Բացի այդ, նման քարակույտերը նաև ահարկու նշան էին սպագայի համար, իբրև հիշատակ նման ասպատակությունների: Այդպիսի քարակույտ նշաններ էին թողնում նրանք ճանապարհների խաչմերուկներում, փողոցների վրա:

Այդպես նրանք գալիս ծածկում են Հայոց աշխարհը, քանդում, գերում, ավերում, ծավալվում երկրի բոլոր սահմաններում, հասնում մինչև Սատաղ, Գանձակ, գալիս կուտակվում են Այրարատյան նահանգում և գոյացնում մի մեծ բանակ:

Հայոց Խոսրով թագավորը խույս է տալիս Սանեսանից և Վրթանես կաթողիկոսի հետ գնում ամրանում Կոզովիտ գավառի Դարեռնք<sup>2</sup> բերդում, աղաչում և աղոթում աստծոն՝ փրկության հույսով:

Այդ ժամանակ Մեծ Հայքի զորավար Վաչե Մամիկոնյանը, որ երկար ժամանակ գտնվում էր Հունաց կողմերում, լսելով մասքութների հարձակման մասին, գալիս հավաքում է նախարարներից քաջերին, կազմում մի մեծագոր գունդ և կռվի ելնում թշնամու առաջապահ զորքերի դեմ: Մասքութները եկել և բանակ էին դրել Յլու գլուխ կոչված լեռան վրա: Լուսաբացին, երբ նրանք զբաղված էին իրենց պաշտամունքային արարողությամբ, Վաչեն հանկարծակի հարձակվում է մասքութների վրա, բոլորին սրի քաշելով կոտորում, իսկ գերի տարած հայերի բազմությունն ազատում, հետ է դարձնում: Ապա վերցնելով թշնամու ավարը, գնում, իջնում է Արարատյան դաշտ: Այստեղ, Վաղարշապատ քաղաքում էր գտնվում Սանեսան թագավորը՝ բուն զորքի հետ:

<sup>1</sup> Կոնվում էր պատմական Սոցախ աշխարհում, այժմյան Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանում: Հռչակված էր իր եպիսկոպոսանիստ վանքով:

<sup>2</sup> Կոզովիտը Այրարատյան նահանգի գավառներից էր, համապատասխանում էր հետագայի Հին Բայազետի շրջանին: Դարեռնք, ամ Դարդյնք բերդը գտնվում էր Հին Բայազետի տեղում և Արշակունիների ժամանակ գավառն ու բերդը պատկանում էին յուրեմիքին:

Վաչեն ի մի հավաքելով հայոց գորքը, հանկարծակի հարձակվում է քաղաքի վրա: Թշնամիներն այդ անակնկալ հարձակումից խուճապահար՝ փախուստի են դիմում դեպի Օշականի բերդի կողմը: Հայոց զնդերը շրջապատելով թշնամուն, թույլ չեն տալիս նրանց ցրվել, որպեսզի ըստ իրենց սովորության նետաձգությամբ չկարողանան նեղել հայ զինվորներին, այլ կորովի հեծյալները նրանց արագ ու ոտնակոխ հետապնդելով, նեղում ու մղում են Օշականի քարքարոտ առապարի դժվար անցանելի տեղերը: Թշնամին ստիպված ճակատամարտ է տալիս: Ծակատամարտը եղավ ծանր ու ահավոր: Վաչե զորավարի նիզակակիցներն էին Բագրատ Բագրատունին, Մեհունդակ և Գարեգին Ռշտունիները, Վահան Ամատունին, Վարազ Կամինականը, որոնք իրենց զինվորներով հասնում ու խփում են ալանների, մասքութների, հոների և մյուս ցեղերի զորքերի բազմությանը: Ամբողջ առապարը լցվում է դիակներով, արյունը հոսում է գետի նման, սպանվածներին թիվ ու հաշիվ չկար:

Թշնամու նիզակավորների զորագլուխն էր մի փիթխարի հսկա՝ լավ սպառազինված, ամբողջ մարմինը ծածկված խիտ թաղիքով. նա արագ ու ճարակորեն արշավում էր զորքի մեջ՝ մեկ այստեղ, մեկ այնտեղ: Հայ քաջերը՝ աչքերը նրա վրա պահած, հարձակվում էին վրան, բայց ամեն անգամ, երբ նիզակներով խփում էին այդ թաղիքակիր հսկային, նա արագ ու ճարակորեն շրջվում էր, և հարվածներն անցնում էին ապարդյուն: Այդ ժամանակ քաջ Վահան Ամատունին շրջվելով դեպի Կաթողիկե եկեղեցին, գոչում է.

— Օգնիր ինձ, աստվանձ, դու որ Դավթի պարսաքարը դիպցրեցիր խրոխտացող Գողիաթի՝ ճակատին, իմ նիզակն էլ ուղղիր այս հզորի աչքին:

Ասում ու ձիու գավակից նիզակով խփում է ահարկու հսկային, ձիուց տապալում ներքև:

Այս դեպքը առիթ է դառնում թշնամիների փախուստին և նպաստում հայոց զորքերի հաղթանակին:

Հայոց զորքերը մինչև թշնամու երկրի սահմանները հալածում են ճակատամարտից փրկված թշնամու սակավաթիվ փախառականներին, վերադառնում, կտրում են ճակատամարտում սպանված Սանեսան մեծ թագավորի գլուխը և բերում Խոսրով թագավորին: Վերջինս ողբում է Սանեսանի կորուստը, ասելով.

— Իմ՝ եղբայրն էր՝ Արշակունի ցեղից:

Խոսրովը կաթողիկոսի հետ գալիս է ճակատամարտի վայրը, որը ծածկված էր անհամար նեխվող դիակներով ու բուրում էր գարշահոտությամբ: Հրաման է տրվում երկրից աշխարհագոր հավաքել, դիակները թաղել տալ և ծածկել քարակույտներով:

Խոսրովն իմանալով Վահան Ամատունու քաջագործությունը, նրան է պարգևում ճակատամարտի տեղը՝ Օշականը: Վաչե Մամիկոնյանին է պարգևում Ջանջանակի ակունքները, Ջրաբաշխիքը, Ցլու գլուխը՝ իր բոլոր գավառներով, այսինքն այն վայրերը, որտեղ Վաչեն կռվել և դուրս է բռնել թշնամուն: Նույնպիսի պարգևներ է տալիս բոլոր այն քաջ մարդկանց, ովքեր իրենց անձն էին դրել Մեծ Հայքի թագավորությունը պաշտպանելու համար:

Այնուհետև Հայոց աշխարհը երկար տարիներ ապրում է խաղաղ ու շինարար կյանքով:

### **Խոսրովը անտառներ է տնկում\***

Այս խաղաղ տարիներին Հայոց Խոսրով թագավորը զբաղվում է շինարարական աշխատանքներով: Նա հրաման է տալիս զորավար Վաչե Մամիկոնյանին երկրից մեծաթիվ գործավորներ ու մշակներ հանել Արարատյան գավառում անտառներ տնկելու համար: Հազարավոր մշակներ Հայաստանի տարբեր անտառներից վայրի կաղնիներ են հանում, բերում տնկում Գառնի արքունի ամրակերտ բերդի մոտակայքից սկսած, մինչև Մեծամորի դաշտը՝ Արտաշատից հյուսիս գտնվող Դվինի բլուրը: Նորակերտ

---

\* Դավիթն ու Գողիաթը հին հրեական վիպական ավանդության հերոսներ են. Դավիթը իսրայելացի մի սրատանի հույիվ էր, որ մեծանարտում է իսրայելացիներին թշնամի փղշտացիների առաջնորդ, անխոցելիորեն զբառնապատված հսկա Գողիաթի դեմ պարսատիկով բարը նետում և դիպուկ խփում նրա ճակատին, սպանում:

\* Զարադրված է ըստ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության»:

անտառը տարածվում է Ազատ գետի վերին հոսանքներից սկսած, գետի երկայնքով, հասնելով մինչև Տիկնունի ապարանքը: Խոսրովն այդ անտառը կոչում է Տանար մայրի: Մի ուրիշ անտառ էլ տնկում են դրանից հարավ՝ եղեգնուտի եզերքով և ամբողջ դաշտը ծածկում վայրի կաղնիներով: Այդ անտառն էլ անվանում են Խոսրովակերտ: Զույգ անտառն էլ շրջափակում են պարիսպներով, անտառներն իրար չեն միացնում, այլ արանքներին ճանապարհ են թողնում անցուդարձի համար: Երբ անտառներն աճում են ու խտանում, Խոսրովի հրամանով որսի բազմապիսի կենդանիներ ու գազաններ են հավաքում, լցնում դրանց մեջ, որպեսզի անտառները դառնան արքայական որսի և խրախճանքի վայրեր:

Խոսրովը Դվին բլուրի վրա ապարանք է կառուցում և արքունիքը Արտաշատ քաղաքից, տեղի ջերմ օդի և ճահճուտի պատճառով, տեղափոխում է Դվինի համեմատաբար զովասուն բարձունքները:

### **Խոսրով և Դատաբե\***


Մինչ Խոսրովը գրադված էր խաղաղ շինարար աշխատանքով, հանկարծ Հեր և Զարավանդ գավառներից լուր է հասնում, թե պարսից զորքերը պատերազմի են գալիս Հայոց աշխարհի վրա:

Խոսրովը հրաման է տալիս Բզնունչաց Դատաբե նահապետին՝ երկրից անչափ ու անհամար զորք հավաքել և Մատենիկ գնդի<sup>1</sup> հետ միասին դուրս գալ թշնամու դեմ, թույլ չտալ նրան մտնել երկրի սահմաններից ներս:

Դատաբեն մեծ զորք է հավաքում և գնում պարսից զորքին ընդառաջ: Հասնելով պարսից զորքին, Դատաբեն միաբանվում է թշնամու զորահրամանատարների հետ և ծրագրում հայոց թագավորին՝ իր տիրոջը, մատնել թշնամու ձեռքը:

Նա պարսիկներին հորդորում է ծուղակ սարքել իր զորքի դեմ: Հանկարծ անսպասելիորեն սրի է մատնվում և կոտորվում հայոց զորքից շուրջ քառասուն հազար զինվոր, իսկ մնացածները դիմում են փախուստի: Դատաբեն վերցնում է պարսկական զորքը և հարձակման պատրաստվում հայոց թագավորի վրա: Սակայն հալ փախըստական զինվորներն ավելի շուտ են հասնում հայոց թագավորի բանակը և գուժում Դատաբեի դավաճանության լուրը:

Խոսրով թագավորը լուրն իմանալով՝ Վրթանես կաթողիկոսի հետ ընկնում է գետին, ծնկի գալիս, ջերմ արտասուքներով աստծոց օգնություն աղերսում: Ապա Խոսրովը փութով իր մոտ է հավաքում հայոց զորքերին, շուրջ 30 հազար զինվոր, Վաչե զորավարի գլխավորությամբ և իր ավագ նախարարների հետ միասին դուրս են գալիս պարսիկների դեմ:



\* Շարադրված է ըստ Բուզանդի «Հայոց պատմության»:

Ընտիր զինվորներից կազմված գունդ, որ կոչվում էր նաև անմահական գունդ:



Հայոց և պարսից զորքերն իրար են հանդիպում Առեստ ավանի մոտ գտնվող փոքր գետակի վրա կառուցված արքունի ձկնորսարանում: Պարսից զորքերին թիվ ու համար չկար, ինչպես երկնքի աստղերին ու ծովի ավազին. եկել էին անթիվ փղերով ու անհաշիվ զորքով:

Հայոց զորքերը, արյունն աչքերն առած, հուշար դրած իրենց ասածո ու արդար գործի վրա, անասելի ոգևորությամբ հարվածում են պարսից բանակին: Նրանք ջարդում, կոտորում, ոչնչացնում են գրեթե բոլորին, գերում մարտական փղերի երամակները, խլում թշնամու ամբողջ զենքն ու զինամթերքը: Վաչե Մամիկոնյանն ու քաջ Վահան Ամատունին բռնում, ձերբակալում են դավաճան Դատաբեին, բերում կանգնեցնում Խոսրով թագավորի առջև: Խոսրովը հրամայում է քարկոծել դավաճանին, անգամ մարտական զենքի ազնիվ ու հատու հարվածի չարժանացնելով նրան, մի մարդու, որ դավել էր իր սեփական աշխարհին, իր թագավորին, իր հայրենի գնդին ու զորքերին:

Դատաբեին քարկոծելով սպանելուց հետո Վաչե Մամիկոնյանը նստում է նավակ և նավարկում Բզնունյաց ծովի Աղթամար կղզին, ուր գտնվում էր Ռշտունյաց իշխանի ամրոցը: Աչնտեղ էին բնակվում դավաճան Դատաբեի կինն ու զավակները, նրա ամբողջ տոհմը: Վաչե սպարապետը մտնելով Աղթամար, սրի է քաշում Դատաբեի տոհմը, չթողնելով ոչ էգ, ոչ արու: Նա ոչնչացնում է Ռշտունյաց նախարարական ողջ տոհմը, իսկ նրա տունն ու ունեցվածքը դարձնում արքունի սեփականություն:

Դրանից հետո Խոսրովը, զգուշանալով նախարարների դավաճանությունից, նախարարական բոլոր զորքերը միացնում է արքունի զորքերին, նրանց ընդհանուր հրամանատարությունը կենտրոնացնում ու հանձնում իրեն մշտապես հավատարիմ Մեծ Հայքի բուն սպարապետ Վաչե Մամիկոնյանի և քաջ Վահան Ամատունու ձեռքը: Այս զույգ զորավարները հայոց զորքով երկար ժամանակ հաղթականորեն դիմակայում են պարսիկների պարբերաբար կրկնվող հարձակումներին: Եվ Հայոց աշխարհը երկար տարիներ սպրում է շեն ու խաղաղ կյանքով:

## ՏԻՐԱՆ\*

Խոսրովի մահից հետո հոր արքայական գահին է նստում որդին՝ Տիրանը: Տիրանի ժամանակ Հայոց և Պարսից աշխարհների միջև բարեկամություն էր տիրում: Այդ նույն ժամանակ Ատրպատականում<sup>1</sup>, որ ենթակա էր Պարսկաստանին, նստում էր մի պարսիկ բարձրաստիճան պաշտոնյա, անունը՝ Ծապուհ-Վարազ:

Տիրանն ուներ մի սքանչելի ձի՝ սպիտակ պուտեր ունեցող և մուգ շագանակագույն մաշկով, բոլոր ձիերից մեծ ու բարձր, ուժեղ ու ճկուն, տեսքով բոլորից գեղեցիկ և սիրուն, ամբողջ երկրում հռչակված: Տիրան թագավորը ուներ սյունյաց տոհմից մի սեներկապետ<sup>2</sup>, անունը Փիսակ: Մի անգամ Փիսակը, իբրև հայոց թագավորի պատվիրակ այցելության է գնում Ատրպատական Ծապուհ Վարազին, հետը մտերմանում և նենգությամբ պատմում նրան Տիրանի հրաշալի ձիու մասին: Այդ իմանալով՝ Վարազը Փիսակի ձեռով նամակ է ուղարկում Տիրանին և խնդրում այդ ձին իրեն նվիրել:

Տիրանը չի համաձայնում կատարել Ծապուհ Վարազի ցանկությունը, բայց և երկյուղելով, որ Ծապուհ Վարազը կարող է իր և պարսից թագավորի միջև թշնամություն սերմանել, իր ձիու նման մեկ ուրիշ ձի է նարում և մեծ ընծաներով ու հրովարտակով Փիսակի միջոցով ուղարկում Ծապուհ Վարազին: Տիրանը միաժամանակ հորդորում է Փիսակին, ասելով.

— Կասես, որ այս այն ձին է, որ դու խնդրեցիր, և մեր թագավորը քո սիրո համար իր սիրած ձին քեզ չխնայեց:

\* Ծարդարված է քսո Փալստոս Բուզանդի «Հայոց պատմության»:

<sup>1</sup> Հին Ատրպատականը գտնվում էր Կասպից ծովի հարավ-արևմտյան ափերից դեպի արևմուտք, մինչև Ռոմիա լիճը ընկած տարածքում:

<sup>2</sup> Պալատի ներքին գործերի հսկող արքունական պաշտոնյա:

Սակայն Փիսակը երբ գալիս է Ծապուն Վարազի մոտ, Տիրանի գաղտնիքը իսկույն բացում է, հետևել չարախոսությանը Ծապուն Վարազին գրգռում Տիրանի դեմ:

— Հայոց Տիրան թագավորը, — ասում է Փիսակը, — պարսից թագավորի դեմ այնպիսի նախանձով, ատելությամբ ու թշնամությամբ է լցված, այնպիսի արհամարհանք է տածում քո և քո թագավորի ու զորքի նկատմամբ, որ մինչև իսկ մի կաշի խնայեց քեզ: Նա իր ձին թաքցրեց և քեզ խաբելով ու ծաղրելով, մեկ ուրիշ ձի է իմ ձեռքով քեզ ուղարկել: — Միայն այդ չէ, — ավելացնում է Փիսակը, — Տիրանը հուշար դրել է հունաց կաշեր ու զորքի վրա. նա իբրև պարթև Արշակունի, մտադրվել է Սասանի ցեղից խել պարսից թագավորությունը, որովհետև, ասում է նա, չեմ հանգստանա, մինչև իմ նախնիների վրեժը չլուծեն և նրանց պատիվը վերստին հետ չխլան: Ես, ասում է Տիրանը, մեր նախնի թագավորությունը պետք է հետ վերցնեն և հատկացնեն ինձ ու իմ թագավորական տանը:

Երբ Ատրպատականի մարզպան Ծապուն Վարազը նենգ ու խարդախ Փիսակից լսում է այս ամենը, իսկույն ամբաստանության թուղթ է ուղարկում պարսից Ներսեհ թագավորին: Այս թղթից պարսից թագավորն այնպես է գրգռվում, զայրանում ու կատաղում հայոց թագավորի դեմ, որ անմիջապես կարգադրում է Վարազ Ծապունի՝ որևէ միջոց ու հնար գտնել հայոց թագավորին նենգությանը գայթակելու և բռնելու համար:

Ծապուն Վարազը պատվիրակ է ուղարկում հայոց թագավորի մոտ, իր գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնում թանկագին նվերի համար, միաժամանակ նրա նկատմամբ տածած իր սերն ու կարոտը պատճառաբանելով, խնդրում է Տիրանին՝ իրեն թույլ տալ այցելություն կատարել Հայաստան:

Հայոց Տիրան թագավորը մեծ խանդավառությամբ և ուրախությամբ Ծապուն Վարազին հրավիրում է իր մոտ: Մինչև Ծապուն Վարազի այցը, Տիրանը հավաքում է իր ներքին սպասավորներին և պատվիրում:

— Մեզ մոտ եկող հյուրին անհրաժեշտ է զվարճացնել և ուրախացնել որսերով, կերուխումով և ամեն տեսակ վայելքներով: Բայց մենք նրան չպետք է ցույց տանք մեր լավագույն որսատեղիները, որովհետև պարսից ազգը նախանձոտ ու նենգ է և մի օր կարող է այդ լավագույն որսավայրերը մեր ձեռից խլել: Ուստի պետք է գտնել այնպիսի որսատեղեր, որտեղ որսը սակավ է: Մենք նրա հետ որս կանենք ոչ թե առատ որսի, այլ պարզապես ցուցի համար, որպեսզի կարողանանք նրան սուկ զվարճացնել: Այդ իմաստով ամենահարմարը Մեծ Մասիսի ստորոտում գտնվող Աղիորսք որսավայրն է, որտեղ որսի կենդանիներ քիչ կան:

Ծապուն Վարազը երեք հազարանոց լավ սպառազինված զորագնդով գալիս է Հայաստան: Հայոց Տիրան թագավորը նրան ընդունում է Ապահունյաց գավառում<sup>1</sup> մեծ շուքով ու պատվով: Սակայն տիրադավ ու բանասարկու Փիսակը անմիջապես Ծապուն Վարազին հայտնում է որսատեղիների մասին Տիրան թագավորի ասած խոսքերը: Ծապուն Վարազը ներքուստ ավելի է գրգռվում Տիրանի դեմ, սակայն խորամանկությամբ իր թշնամությունը թաքցնում է, ատերևույթ բարեկամ ձևանում և սպասում հարմար առիթի:

Մի քանի օր շարունակ Տիրան թագավորը Ծապուն Վարազի հետ ուրախություն է անում, որսով զվարճանում:

Մի անգամ, իրերի քերումով, Տիրանի զորավարները, նախարարներն ու ավագանին թագավորի մոտ չէին, գնացել էին իրենց տները հանգստանալու, իսկ արքունական զորքը գտնվում էր զորանոցներում:

Թագավորի մոտ մնացել էին միայն սակավաթիվ սպասավորներ, որսաշների պահապաններ, նախարարների մշակներ, վրանապահ զինվորներ և աշխարհագորայիններ: Թագավորի մոտ էին նաև թագուհին և մանկահասակ արքայազն Արշակը:

Տիրանը այնքան էր վստահ Ծապուն Վարազի հավատարմությանը, որ չնայած նրա հետ եկած երեք հազար սպառազեն զինվորների առկայությանը, բնավ չէր կասկածում որևէ վտանգ և հոգ չէր տանում իր անձի սպահովության համար:

<sup>1</sup> Գտնվում է Տուրքերանի նահանգում, Հարթ գավառից հյուսիս-արևելք՝ Արածանի գետի երկու ափերին:





Այդ օրերին Շապուհ Վարազը փոխադարձաբար պատիվ տալու պատրվակով իր մոտ ընթրիքի է հրավիրում Տիրան թագավորին: Երբ սկսվում է կերուխումը, թագավորն ու իր հետ եկած թիկնապահները սաստիկ հարբում են: Այդ ժամանակ Շապուհ Վարազի դարսանակալած զինվորները հանկարծակի հարձակվում են սեղանակիցների վրա, բոլորին բռնում, իսկ վահանավոր ու տապարավոր զինվորները շրջապատում են Տիրան թագավորին: Նրանք բռնում են թագավորին, երկաթե շղթաներով ձեռ ու ոտը կապում, ապա ավարի են ենթարկում թագավորի բանակատեղը, արքայական գույքն ու գանձերը գրավում, գերում թագուհուն ու թագաժառանգներին և Ապահունյաց գավառից հեռանում: Գալիս հասնում են մի գյուղ, որ կոչվում էր Դալարիք: Երբ պարսից զորավարը շղթաչակապ Տիրանի հետ մտնում է Դալարիք, հրամայում է իր զինվորներին.

— Աձուխ գտնեք, բերեք, որպեսզի երկաթ շիկացնենք և շիկացած երկաթով հաչոց թագավորի աչքերը դաղենք:

Անմիջապես աձուխ են բերում, երկաթը շիկացնում և Տիրանի աչքերը դաղում: Կուրացած Տիրանն ասում է.

— Քանի որ իմ գույգ լուսավոր աչքերը այս տեղում խավարեցին, թող այսուհետև և հավիտյան այս Դալարիք գյուղը Աձուխ կոչվի:

Շապուհ Վարազը շտապ մեկնում է Աձուխ գյուղից, հետը տանելով Տիրան թագավորին, նրա ընտանիքին ու մնացած գերիներին: Նա գնում հասնում է Պարսկաստան, գնում Տիգրոն՝ արքայական նստավայրը, և գերված հաչոց թագավորին հանձնում իր տիրոջը՝ պարսից թագավորին:

Այս անսպասելի չարիքի ու դժբախտության գույժն իմանալով, հաչոց բոլոր նախարարներն ու իշխանները, գործակալներն ու զորագլուխները երկրի տարբեր ծայրերից ի մի են հավաքվում, զորք կազմում և հետապնդում Շապուհ Վարազին, բայց ապարդյուն, այլևս չեն կարողանում նրան հասնել: Այնուհանդերձ նրանք մտնում են Պարսկաստան, երկրի մի մասը գրավում, կոտորում, այրում, ավարի ենթարկում ամեն ինչ: Այս գալիս հավաքվում են իրենց երկրում, սգում ու ողբում իրենց բնիկ տիրոջը՝ հաչոց թագավորին, կոծում իրենց սեփական երկրի անտեր վիճակը:

### **Հույների կռիվը պարսից թագավորի դեմ և Տիրանի ազատումը\***

Այնուհետև հավաքվում են Հաչոց աշխարհի մեծամեծ նախարարներն ու իշխանները, ժողովրդի բոլոր ներկայացուցիչները և ասում.

— Այս րճչ է մեր արածը, նստել սուգ ենք անում, իսկ թշնամին կօգուվի այս հանգամանքից և նորից կարշավի մեր երկիրը: Եկեք մենք մեզ մխիթարենք, գոտեպնդվենք, մեզ ու մեր երկրին տեր կանգնենք և մեր բնիկ տիրոջ վրեժը լուծենք:

Այդպես, երկրի բոլոր նշանավոր մարդիկ համախմբվում են, միաբանվում, իրար թիկունք կանգնում:

Հաչոց ավագանին մեծամեծ նախարարներից կազմված պատվիրակություն է ուղարկում հունաց թագավորի մոտ, օգնություն խնդրում՝ վրեժ լուծելու պարսիկներից: Պատվիրակությունը գլխավորում էին Այունյաց Անդոկ նահապետը և Արշարունյաց նահապետ Արշավիր Կամարականը: Նրանք մեծամեծ նվերներով գնում հասնում են Հունաց աշխարհը, մտնում կայսերական պալատը, թագավորին ներկայացնում ամբողջ ժողովրդի կամքն արտահայտող հրովարտակը: Կայսրը ուշադիր լսելով պատվիրակությանը, խորամուխ է լինում գործի բոլոր մանրամասների մեջ և խոստանում ամեն ինչով օգնել ու զորավիգ կանգնել Հաչոց աշխարհին:

Մինչ հաչոց պատվիրակությունը գտնվում էր Հունաց աշխարհում, պարսից Ներսես թագավորը մեծ բանակ է կազմում, արշավում Հայաստան, հրի ու սրի մատնելու երկիրը և ամբողջ Հաչոց աշխարհը իր բոլոր սահմաններով կցելու իր երկրին: Նա իր հսկա բանակը վերցրած, բազմաթիվ փղերով, մեծ քարավանով, տունուտեղով՝ կանանցով, տիկնանց տիկինով, մեծաբանակ մթերքներով գալիս մտնում է Հայաստան և ամբողջ երկիրը բռնում: Հաչոց նախարարներն ու իրենց զորքերը թշնամուց սարսափա-

\* Ծարադրված է ըստ Փ. Բուզանդի «Հաչոց պատմության»:

հար, իրենց ընտանիքներն առած փախչում են Հունաց կողմերը, կալսերական բազմագունդ նախարարների բանակին գուժում իրենց երկրին հասած այդ ահավոր աղետը:

Հունաց թագավորը, երբ խում է այս բոլորը, ինքն էլ զորք է հավաքում և շարժվում, գալիս Հաչոց աշխարհը՝ պարսից թագավորի դեմ:

Նա բանակը թողնում է Սառաղ<sup>1</sup> քաղաքի մոտակայքում, իր հետ է վերցնում հաչոց պատվիրակության ղեկավարներին՝ Անդոկին և Արշավիրին, ծպտվում շինականի կերպարանքով և իբրև կաղամբավաճառ մտնում պարսից բանակը: Պարսից բանակն այդ ժամանակ գտնվում էր Բասեն գավառի Ռսխա կոչված գյուղում: Նրանք ծպտված մտնում են պարսից բանակը, ամեն ինչ դիտում, զննում, իմանում զորքերի քանակն ու դասավորությունը և վերադառնում իրենց ճամբարը: Գալիս պատրաստվում են, կազմակերպվում և հանկարծակի հարձակվում պարսից բանակի վրա, որն անհոգ ու խաղաղ հանգրստանում էր իր ճամբարում: Հունական զորքը պարսից ամբողջ զորքին սրի է քաշում, ոչ մեկին կենդանի բաց չի թողնում: Ավարի ու կողոպուտի են ենթարկվում ամբողջ ճամբարը, բռնում են թագավորի կանանց ու տիկնանց տիկնոջը՝ իրենց գանձերով, ամբողջ ունեցվածքով, կայքով ու կարողությամբ, գերի վերցնում: Միայն թագավորին է հաջողվում մի սուրհանդակի հետ փախչել, մահից ազատվել և մի կերպ իր աշխարհն ընկնել:

Հաղթանակից հետո հունաց կայսրը շքեղ ու արքայական պերճությամբ զուգված, մտնում է պարսից ճամբարը, հրամայում՝ պարսից թագավորի բոլոր չափահաս ժառանգներին կոտորել, մնացածներին կանանց հետ գերի տանել Հունաց աշխարհը: Նա Հաչոց աշխարհի վրա վերակացու է կարգում Անդոկին և Արշավիրին, նրանց մեծքամեծ պարգևներով մեծարում, նրանց հանձնում երկիրն ու բոլոր իշխաններին, իսկ ինքը վերադառնում Հունաստան:

Իսկ պարսից թագավորը, երբ հասնում է իր երկիրը, իսկույն խորհրդի է հրավիրում իր իշխանության տակ մնացած մեծամեծներին, հրամայում վերստին քննել և պարզել, թե ինչքն սկիզբ առավ այդ ահավոր պատերազմը: Քննում են, պարզում և թագավորին հայտնում, որ ամեն ինչ ծագել է մի չնչին բանից, մի վատթար չարախոսությունից, և մոլի Ծապուհ Վարազը երկու երկրների միջև խռովություն է հարուցել ընդամենը մի ձիու պատճառով:

Թագավորը հրամայում է Ծապուհ Վարազին զրկել իր բոլոր պատիվներից ու արտոնություններից, պատվական պատմունձանը վրայից հանել, ենթարկել սուկալի չարչարանքների: Ապա, ըստ պարսկական սովորության, թագավորը նրան մորթազերծ է անել տալիս, մորթին խոտով լցնում և կանգնեցնում քաղաքի հրապարակում, իբրև նախատիճքի նշան:

Պարսից թագավորը զոջում է եղածի համար, պատվավոր իշխաններ է ուղարկում հունաց կալսեր մոտ հաշտության բանակցություններ վարելու և գերիներին հետ վերադարձնելու համար: Նա աղաչում և խնդրում է կայսրին, որ գոնե իր կանանց գերությունից արձակի և այդ խաշտակությունն ու նախատիճքը իրենից վերացնի:

Հունաց Վաղես կայսրը պարսից թագավորին պատասխանում է հետևյալ հրովարտակով.

«Նախ դու հետ դարձրու Հաչոց աշխարհից տարած գերիներին՝ Տիրան թագավորով և քո տարած բոլոր ավարով հանդերձ: Երբ դու այդ կկատարես, ապա ես էլ հետ կդարձնեմ այն ամենը, ինչ տարել եմ: Ուրեմն, առաջ դու հայեոհից առած ավարը վերադարձրու, հետո ես քեզանից տարածը կվերադարձնեմ»:

Պարսից թագավորը երբ այս հրովարտակը կարդում է, անմիջապես հրամայում է Տիրանին բանտից ու կապանքներից ազատել: Թագավորը Տիրանին բերում է իր մոտ, քաղցրությամբ ու մեղմությամբ հետը գրուցում, խոստանում նրան նորից թագավոր կարգել և պատվով իր աշխարհը վերադարձնել: Տիրանը թագավորին պատասխանում է.

— Անօգուտ ու անիմաստ է, անգամ՝ անկարելի ինձ նման կույր մարդուն նորից թագավոր դարձնել: Իմ փոխարեն թագավորեցրու որդուս՝ Արշակին:

Պարսից թագավորը կատարում է Տիրանի կամքը, Հաչոց աշխարհին թագավոր է կարգում Արշակին, թագավորի կնոջն ու մյուս բոլոր գերիներին իրենց գանձերով ու ունեցվածքով հանդերձ ազատ է արձակում և Տիրանին մեծ պատվով ու ընծաներով ուղարկում Հաչոց աշխարհը:

Այդ ժամանակ պարսից թագավորի մոտ էին գտնվում հունաց թագավորի պատվիրակները:

<sup>1</sup> Քաղաք Փորր Հայքում, Բայբերդից (այժմ՝ Բայբուրդ) ոչ հեռու:

Երբ պարսից թագավորը հայերին ազատում և ուղարկում է Հայաստան, նա արձակում է նաև հունաց կաշարի պատվիրակներին և ուղարկում իրենց թագավորի մոտ, որպեսզի նրան պատմեն, թե ինչպես ինքը մեկ առ մեկ և ճշտությամբ կատարել է նրա պահանջը: Պատվիրակները գալիս են Հունաստան, իրենց կաշարին պատմում պարսից թագավորի արարքը: Կայծրը պարսից թագավորի վարմունքից գոհացած՝ ինքն էլ ազատ է արձակում նրա կանանց՝ ու մնացած գերիներին և մեծ պատվով, կարգ ու սարքով նրանց վերադարձնում Պարսից աշխարհ, իրենց թագավորին:

## ԱՐՇԱԿ\*

Արշակի թագավորելուց հետո Հայոց աշխարհում խաղաղություն է հաստատվում. երկրից հալածվածներն ու փախստականները վերադառնում են հայրենիք, խաղաղ ապրում Արշակի թագավորության հովանու տակ:

Ինքն Արշակը անձամբ դուրս է գալիս որոնելու Մամիկոնյան քաջ զորավարներին, որոնք գծովել էին հորից՝ Տիրան թագավորից, և գնացել ամրացել էին Տաշքի՝ իրենց տիրույթներում: Նա գնում է Տաշք, գտնում Մամիկոնյան լղբայրներին, հետները հաշտվում, ավագ եղբորը՝ Վարդանին, նշանակում է Մամիկոնյան տոհմի նահապետ, միջնեկ եղբորը՝ Վասակին, որ իր դաշակն էր, նշանակում է Մեծ Հայքի սպարապետ, պատերազմական բոլոր գործերի ղեկավար և առհասարակ Մամիկոնյան տոհմին տալիս է Մեծ Հայքի բոլոր գործերի զորավարության իշխանությունը: Գնունաց իշխանական տոհմին էլ տալիս է հայոց հազարապետության պաշտոնը: Նա ընդհանրապես բոլոր կողմերից վերանորոգում ու ամրապնդում է երկրի իշխանությունը:

## Արշակ և Ներսես

Արշակ թագավորը իր մոտ համազգային մեծ ժողով է գումարում, որին մասնակցում են նախարարական տների մեծամեծ նահապետներն ու իշխող տարբեր խավերի ներկայացուցիչները: Ժողովի նպատակն էր Հայոց աշխարհի համար ընտրել հոգևոր առաջնորդ: Բոլոր ժողովականները միահամուռ գտնում են, որ հոգևոր առաջնորդ պետք է ընտրել միմիայն Գրիգոր Լուսավորչի տան ներկայացուցիչներից:

— Ինչպես Ձեր թագավորությունը նորոգվեց, — ասում են նրանք Արշակին, — այդպես էլ պետք է Գրիգորի սերնդից նորոգել հոգևոր նահապետությունը: Երբ այդ կաթողիկոսական աթոռը նորոգվի, սպա և պաշտոն վարքուբարք կնորոգվի Հայոց աշխարհում:

Ժողովը միաձայն նոր կաթողիկոսի համար առաջարկում է Գրիգոր Լուսավորչի թոռան թոռի՝ Ներսեսի թեկնածությունը: Ներսեսն ինքը մոր կողմից Տիրան թագավորի քրոջ՝ Բամբիշի որդին էր, Արշակի հորաքրոջ զավակը:

Ներսեսը աշխարհական էր, ամուսնացած, փոքր հասակից սնվել ու ուսանել էր Գամիրքի Կեսարիա քաղաքում, վատահեղի ուսուցիչների ձեռքի տակ:

Նա կրթված ու սիրված անձնավորություն էր, զինվորական պաշտոնյա և վարում էր Արշակ թագավորի սենեկապետի պարտականությունը:

Ներսեսն ինքը ներկա էր այդ ժողովին և սպասարկում էր Արշակ թագավորին: Նա հաղթանդամ տղամարդ էր, բարձր ու վաշելուչ հասակով, գեղեցիկ ու գրավիչ արտաքինով, պատկանելի ու վարժ զինվորական, բնավորությամբ հեզ, բարեհամբույր, խոնարհ, առաքինի, ընկերասեր ու մարդասեր, քաջ ու եռանդուն:

Ժողովում՝ նա զինվորական համազգեստ հագած, պատրաստ կանգնած էր Արշակ թագավորին

\* Ծարադրված է ըստ Փավստոս Բուզանդի. մասամբ և Մ. Խրեենացու «Հայոց պատմություն» գրքերի:

1 Տաշքը պատմական Հայաստանի նահանգներից մեկն էր, բնկած Կարին (Էրզրում) քաղաքից դեպի հյուսիս, տարածվում էր մորթի գետի միջին հոսանքի և աջակողմյան վտակների ավազանում:

սպասարկելու: Նրա մեջքին կապված էր ականակուռ մարգարտագարդ գոտի, իսկ գոտուց կախված էր արքայական պողպատյա սուրը՝ ոսկե պատյանով, ուսերին գցած էր վայելուչ զարդերով գեղեցիկ պատմունճան:

Մինչ Ներսեսը ժողովում կանգնած սպասարկում էր թագավորին, ժողովը միաձայն աղաղակում է.

— Ներսեսը թող լինի մեր հովիվը<sup>1</sup>:

Ներսեսն անակնկալի եկած, բողոքում է այդ առաջարկության դեմ, իրեն այդ պաշտոնի համար անարժան համարելով: Բայց ժողովականները չեն հանդարտվում, թագավորի առաջ շարունակում են աղաղակել.

— Ուրիշ ոչ ոքի չենք ուզում մեզ հովիվ, այլ միմիայն սրան. ուրիշ ոչ ոք չպետք է նստի այդ պոռնին, այլ միայն ինքը:

Ներսեսը առաջ է գալիս և սկսում ինքն իրեն բամբասել, սուտ բաներ ասել, որ ինքը իբր շատ մեղքեր ու թերություններ ունի և անարժան է այդ պաշտոնին:

Ժողովի մասնակիցները, թագավորի հետ միասին, ծիծաղում են այդ հորինած ստերի վրա: Իսկ զինվորները միաբերան աղաղակում են.

— Թող քո մեղքերը մեզ վրա, մեր գլուխներին թափվեն, քո անօրեն գործերը թող մեր զավակների գլխին թափվեն, միայն թե դու դարձիր մեզ առաջնորդ, շարունակիր ու նորոգիր քո մեծ հոր՝ Գրիգորի գործը:

Ներսեսը տեսնելով, որ ոչ մի կերպ չի կարողանում նրանց համոզել, ստիպված վիրավորում է նրանց.

— Դուք անօրեն եք ու պիղծ, ես չեմ կարող ձեզ հովիվ լինել և ձեր մեղքերը ինձ վրա վերցնել: Ես չեմ կարող աչառու լինել, չեմ կարող ձեր գործած չարիքներին դիմանալ: Դուք այսօր գուր եք ինձ սիրում, վաղն իմ թշնամիներն ու ատողները կդառնան: Դուք ինձ կապում եք ձեր գլխին իբրև ծեծող թակ: Ինձ հանգիստ թողե՛ք, իմ տառապանքներով ու մեղքերով լի կյանքը թողե՛ք առանց հոգսերի անցկացնեն:

Բայց զինվորների բազմությունը չէր հանդարտվում, այլ պահանջելով աղաղակում էր.

— Հենց դի՛մ մեղավորդ, պետք է մեզ հովիվ լինես:

Արշակի համբերության բաժակը լցվում է: Նա չարացած ու զայրացած, ձեռք գցում է Ներսեսի գոտուց կախած սրից, դեպի իրեն քաշում, սուրը գոտիով հանում, շարտում մի կողմ, ապա հրամայում՝ Ներսեսին իր առաջ կապել, խուզել նրա զանգուր ու վայելուչ մագերը, պատռել, վրայից հանել շքեղ պատմունճանը:

Երբ սկսում են խուզել Ներսեսի մագերը, և նա աստիճանաբար կորցնում է իր սքանչելի գեղեցկությունը, շատերը ցավից արտասվում են: Ապա թագավորը հրամայում է քերել կրոնավորի զգեստներ և հագցնել նրան. կանչում են ծերունի Փափստոս եպիսկոպոսին և նրան ձեռնադրել տալիս սարկավազ<sup>2</sup>:

Այնուհետև Արշակը իր մոտ է հավաքում երկրի մեծամեծ իշխաններին, խորհուրդ անում, որոշում Ներսեսին տանել Կեսարիա, օժել ամենայն Հայոց կաթողիկոս:

Հայոց նշանավոր իշխանների ուղեկցությամբ և մեծամեծ նվերներով Արշակը Ներսեսին ուղարկում է Գամիրքի Կեսարիա մայրաքաղաքը՝ կաթողիկոսների կաթողիկոս Եվսեբիոսի մոտ, կաթողիկոս օժելու:

Ներսեսին տանում են Կեսարիա, Եվսեբիոսին հանձնում Արշակ թագավորի հրովարտակն ու նվերները:

Եվսեբիոսը ամենայն սիրով ու մեծարանքով ընդունում է հայոց հյուրերին, հավաքում եպիսկոպոսների բազմությունը և Ներսեսին ձեռնադրում Մեծ Հայքի եպիսկոպոս: Երբ եկեղեցում Ներսեսին կաթողիկոս են օծում, մի սպիտակ աղավաղ գալիս, նստում է օժման սեղանին, ապա թոշում նստում է Ներսեսի գլխին: Հավաքված բազմությունը մեծ ցնծությամբ ու երկյուղածությամբ է ընդունում այդ երևույթը, այն համարելով աստվածային սուրբ նախանշան՝ Ներսեսի կաթողիկոս ձեռնադրման արժանավորության:

<sup>1</sup> Հովիվ բառն այստեղ ունի փոխաբերական իմաստ, իբրև հոգևոր հոտի, այսինքն՝ հավատացյալների և հոգևոր պաշտոնյաների առաջնորդ:

<sup>2</sup> Ցածր աստիճանի եկեղեցական պաշտոնյա:



Կեսարիայից Ներսեսին և հաշոց իշխաններին մեծ պատվով և շուքով ճանապարհ են դնում Հայաստան:

Երբ գալիս հասնում են հայրենիք, Արշակ թագավորը նրանց դիմավորելու է դուրս գալիս Առյուծ լեռան մոտ: Նրանք մեծ խանդավառությամբ ու ցնծությամբ հանդիպում են միմյանց, ողջունում, օրհնում, ապա բերում Ներսեսին, նստեցնում հաշոց հայրապետության աթոռին:

Ներսեսը երկրում մեծ բարեկորոզումներ է ծավալում: Նա Տսրոնի Աշտիշատում եկեղեցականների և աշխարհականների ժողով է գումարում, ուր իրավական կանոններ է սահմանում երկրի թե՛ աշխարհիկ և թե՛ եկեղեցական գործերը կարգ ու կանոնի ենթարկելու համար:

Նա նախարարական տներից վերացնում է երկու շատ կարևոր հեթանոսական սովորություն. առաջինը՝ ամուսնությունը մերձավոր և արշունակից ազգականների միջև, որ կատարվում էր շահադիտական նկատառումներով, և երկրորդը, երբ նշանավոր իշխանների մահվան ժամանակ սպանում և նրա հետ էին թաղում նաև նրա մերձավորներին ու ծառաներին:

Ներսեսը Հաշոց աշխարհի ամեն մի գավառում աղքատանոցներ է շինել տալիս, ուր պատսպարվում ու սնվում են խեղճերն ու չքավորները: Բոլոր գյուղերում շինել է տալիս հյուրանոց-իջևանատներ՝ օտարականների համար, սնվելու տեղեր՝ որբերի և ծերերի համար, հեռավոր և անմարդաբնակ տեղերում՝ հիվանդանոց-պատսպարաններ բորոտների, ախտավորների և այլ անբուժելի հիվանդների համար, որոնք մինչ այդ օրենքով հալածվում էին, իբրև պիղծ մարդիկ:

Ներսեսը Հայաստանի բոլոր գավառներում հիմնում է դպրոցներ, ուր ուսուցումը կատարվում է հունարեն և ասորերեն լեզուներով: Ծինում և վերանորոգում է ավերված եկեղեցիները, հաստատում վանական միաբանություններ, կարգավորում ու կայունացնում եկեղեցական գործի դրվածքն առհասարակ: Ինքն իր մարդասիրությամբ, աղքատասիրությամբ, խոնարհությամբ ու ողորմածությամբ ամբողջ Հաշոց աշխարհում վայելում էր համաժողովրդական մեծ սեր և հեղինակություն:

### **Արշակավանի կառուցումն ու կործանումը**

Ներսեսը հաշոց տասը նշանավոր իշխանների հետ բարեկամական այցով գնում է Հունաստան՝ Վադես կաչարի մոտ: Վերջինս, որ աղանդավոր էր և շեղվել էր բուն քրիստոնեական հավատից, վեճի է բռնվում Ներսեսի հետ և նրան արքորում մի անմարդաբնակ կղզի: Ներսեսն իր բացակայության ժամանակ Հաշոց աշխարհում տեղապահ է թողնում Բագրևանդի Խաղ եպիսկոպոսին՝ մի ազնիվ ու բարկաշտ հոգևորականի:

Արշակը որքան հասակ էր առնում և երկրում ամրապնդում իր իշխանությունը, այնքան դառնում էր ինքնավստահ և հաճախ գանց էր առնում եկեղեցու իշխանությունն ու պատվիրանները:

Ներսեսի բացակայության ժամանակ Արշակ թագավորը Կոզ գավառի հովտում մի դաստակերտ է շինել տալիս և հրամայում իր մունետիկներին՝ երկրով մեկ հայտարարել թագավորական հետևյալ հրամանը. «Ով որևէ մեկին պարտք է, ով որևէ մեկին մի բանով վնասել է, ով որևէ մեկի արշունն է թափել, ով որևէ մեկի կինն է հափշտակել կամ գույքը բռնագրավել, ով որևէ մեկից երկչուղ ունի, բոլորը, բոլորը թող հավաքվեն գան, բնակվեն թագավորի շինած դաստակերտում, նրանց նկատմամբ ոչ մի դատ ու պահանջ չի լինի, նրանց դեմ բողոքողներն իրենք կենթարկվեն պատժի ու դատաստանի»:

Երբ բոլոր գավառներում, քաղաքներում ու գյուղերում, բոլոր հրապարակներում հայտարարվում է արքունական այս հրամանը, Արշակ թագավորի շինած դաստակերտն են գալիս հավաքվում երկրի բոլոր գողերը, ավազակները, մարդասպանները, պարտապանները, հափշտակիչները, վնասարարները, բոլոր ստախոսներն ու խաբեքաները: Ծառ շատերը հանցանքներ էին գործում և այնտեղ ապաստան գտնում, շատ կանայք թողնում էին իրենց տղամարդկանց, փախչում գալիս՝ այնտեղ պատսպարվում, շատ տղամարդիկ իրենց կանանց լքելով, ուրիշների կանանց էին առնում և գալիս այնտեղ ընկնում, շատ ծառաներ իրենց տերերի գանձերը հափշտակելով, փախչում գալիս էին այնտեղ օթևան գտնում, շատ ավանդադուներ իրենց մոտ պահուստի տրված ավանդները վերցնում, գալիս էին այնտեղ ապաստանում: Այնտեղ էին գալիս նաև տուժածներն ու հարստահարվածները, զրկվածներն ու հալածվածները: Գալիս էին, լցվում, դաստակերտը մեծանում, դառնում է մի մեծ քաղաք, ամբողջ հովիտը բռնում:

Արշակ թագավորը հրամայում է այդ քաղաքը կոչել իր անունով՝ Արշակավան, և այնտեղ արքայական ապարանք է կառուցել տալիս:

Արշակավանի կառուցումը Արշակի դեմ երկրով մեկ բողոքի ու դժգոհության ալիք է բարձրացնում:

Ներսեսի տեղապահ Խաղ եպիսկոպոսը բազմիցս հանդիմանում է Արշակին այդ քաղաքի համար, բայց Արշակը փոխանակ նրան լսելու, փորձում է զանազան թանկարժեք նվերներով, ոսկով ու արծաթով, արքունական պալատի ընտիր ճծույզներով կաշառել նրան: Խաղն ընդունում է այդ թանկարժեք նվերները, բայց տեղևուտեղը բաժանում աղքատներին ու կարիքավորներին, միաժամանակ չդադարեցնելով իր հանդիմանությունը:

Խաղին ստիպում են անգամ Արշակավանի եկեղեցում սուրբ սեղան կանգնեցնել, որից Խաղը կտրուկ հրաժարվում է: Արշակը տեսնելով, որ իր ջանքերն ապարդյուն են անցնում, հրամայում է իր մոտից հեռացնել Խաղին:

Հունաստանում մեռնում է Վաղես կայսրը: Աքսորավայրից Հայաստան է վերադառնում Ներսեսը, որին Արշակ թագավորն ու ողջ ժողովուրդը դիմավորում են ցնծությամբ: Ներսեսի վերադարձով կրկին աշխուժանում է երկրի ներքին կյանքը:

Ներսեսն իմանալով Արշակավանի կառուցման և Արշակի գործած անօրինությունների մասին, մտնում է թագավորի մոտ, խստորեն նախատում նրան, ապա խորհուրդ տալիս.

— Արդ, լսիր, ինչ որ քեզ ասում են, և կատարիր, որպեսզի կարողանաս քեզ փրկել աստծո բարկությունից, և թշվառ Հայոց աշխարհն էլ քո պատճառով չկորչի: Դու հրաման տուր, որ Արշակավանը քանդեն, քո ժողոված մարդկանց ցրիր, որ գնան տարածվեն ու բնակվեն իրենց նախկին տեղերում, որպեսզի չարիքների խորքերը չընկնեն ու չկորչեն: Իսկ քո գործած մեղքերի համար ամբողջ երկրին հրաման կտանք, որ քո փոխարեն պաս պահեն, աղոթք անեն: Եթե Արշակավանի տեղը շատ ես հավանում, և քեզ դժվար է այն լքել, ապա ես ինքս նոր քաղաք կշինեմ քեզ համար և արդարությամբ շեն կպահեն:

Արշակը լսում է կաթողիկոսի խոսքերը, քթի տակ ծիծաղում նրա ասածների վրա, զանց առնում:

Ներսեսը բարկանում է թագավորի վրա, աստվածային պատժով սպառնում նրան և թողնում հեռանում գավառները:

Արշակավանի բնակչության մեջ ժանտախտ է ընկնում, սկսում են կոտորվել մարդիկ ու անասունները: Հայ նախարարներն էլ, կատաղած Արշակավանում ապաստանած իրենց ծառաների ու հանցավորների դեմ, զորքերով հարձակվում են Արշակավանի վրա, կոտորում բոլոր տղամարդկանց ու կանանց, բացի ծծկեր երեխաներից:

Կոտորածի մասին Ներսեսն իմանում է ուշացումով, և չի կարողանում դրա առաջն առնել: Նա հասնում է այն ժամանակ, երբ մեծերին կոտորել էին, իսկ նրանց երեխաներին նախարարներն իրենց մեջ էին բաժանում, որպեսզի գերի տանեն ինչպես հեռավոր թշնամիների երեխաների: Ներսեսը երեխաներին ազատում է նախարարների ձեռքից, կողովներով նրանց կրել է տալիս մի գոմ, նրանց համար սնունդ և ապրուստ նշանակում: Հետագայում, երբ այդ երեխաները մեծանում են, իրենց համար ավան են շինում, որ կոչվում է Որթք<sup>1</sup>, ի նշան այդ բնակավայրը նրանց կողովներով բերելու:

## Արշակ, Գնել և Տիրիթ

Ներսեսի անմարդաբնակ կղզի արքորված ժամանակ նրա հետ Հունաստան գնացած նախարարների մի մասը պատանդ էր մնացել Վաղես կայսրի մոտ: Նրանց մեջ էին նաև Արշակի կողբորոդիներ Գնելն ու Տիրիթը:

Ներսեսին արքորելու պատճառով հայոց և հունաց միջև եղած բարեկամական հարաբերությունները չխաթարելու և Արշակի սիրտը շահելու համար, Վաղեսը Ներսեսի փոխարեն պատանդից ազատում և մեծ նվերներով, թանկարժեք քարերով Հայաստան է ուղարկում Արշակի եղբորորդիներ Գնելին ու Տիրիթին:

-----  
<sup>1</sup> Որթք — հին հայերենում՝ կողովներ, այսինքն՝ որթերից, ճյուղերից հյուսված:

Նրանք հունաց պատվիրակի հետ գալիս են Հայաստան և Արշակին հանձնում Վաղեսի հրովարտակր, թանկարժեք քարերն ու զանձերը: Արշակն իմանալով կատարվածը, սաստիկ զայրանում է, անպատվում հունաց պատվիրակին:

— Այդ ձեր բերած քարերը թող թափվեն ձեր կայսեր ու ձեր գլխին: Մեր երկրում քարեր շատ կան, դրանք լիովի բավարար են այս քարերը տվողի և բերողի ատամները փշրելու համար:

Արշակն անմիջապես հրամայում է Վասակ զորավարին զորք հավաքել, զնդեր կազմել և գնալ, զարկել, ավարի ենթարկել Գամիրքի կողմերը, որ պատկանում էր հունաց կայսրին: Վասակ սպարապետը իսկույն կատարում է թագավորի հրամանը: Նա հավաքում է շուրջ երկու հարյուր վաթսուն հազար զինվորից բաղկացած մի բանակ, գնում շարդում, ավարի է ենթարկում Գամիրքի կողմերը, հասնում մինչև Անկյուրիս քաղաքը: Վեց տարի շարունակ Վասակն ասպատակում է Հունաց աշխարհի սահմաններում գտնվող երկրները, թալանում, կոտորում, ավարի ենթարկում տեսակ-տեսակ հարստություն և ունեցվածք, բերում, լցնում Հայոց աշխարհը, լիացնում բոլորին:

Գնելը գնում է Արագած լեռան ստորոտում գտնվող Կվաշ ավանը իր կուրացած պապի՝ Տիրանի մոտ, որ դեռ կենդանի էր: Տիրանը Գնելին նվիրում է իր ամբողջ ունեցվածքը, գյուղերը, դաստակերտները, կալվածքները և հրամայում է Գնելին հենց նույն Կվաշ ավանում էլ բնակվել:

Սյունյաց Անդոկ նախարարն ուներ մի գեղեցիկ աղջիկ՝ Փառանձեմ անունով: Նա իր գեղեցկությամբ ու պարկեշտությամբ հռչակված էր ամբողջ երկրում: Պատանի Գնելն ամուսնանում է այդ գեղեցիկ աղջկա՝ Փառանձեմի հետ, և մեծ ու թագավորապաշէլ հարսանիք անում: Նա իր պապից ստացած ժառանգությունից առատորեն պարգևներ է տալիս բոլոր նախարարներին, նրանց զավակներին, որոնք շատ են սիրում և գնահատում Գնելին: Նախարարներն անգամ իրենց զավակներին հանձնում էին Գնելին՝ զինավարժություն ուսուցանելու նրանց:

Գնելի մյուս հորեղբորորդին՝ Տիրիթը, տեսնելով Փառանձեմի չքնաղ գեղեցկությունը, սիրահարվում է իր հարսին: Նա նախանձում է Գնելին ոչ միայն գեղեցիկ Փառանձեմի համար, այլև իրենց պապից ստացված ժառանգության: Եվ նա սկսում է հնար փնտրել՝ Գնելին մեջտեղից վերացնելու, նրա կնոջն ու պապենական ժառանգությունը հափշտակելու: Նա վճռում է թագավորին զրգռել Գնելի դեմ և նրա միջոցով Գնելին մեջտեղից վերացնել:

Տիրիթը գալիս է Արշակի մոտ և ասում.

«Արքայիդ հայտնի չէ՞, արդյոք, որ Գնելը միտք է դրել քեզ սպանել և քո փոխարեն թագավորել: Բոլոր նախարարները, մեծամեծները, ազատները՝ սիրում են Գնելին, մեր ամբողջ երկրի նախարարները գերադասում են նրա իշխանությունը իրենց վրա, քան քոնը: Եթե ապացույցներ ես ուզում, թագավո՞ր, ահա քեզ ապացույցներ. Գնելը եկավ, բնակվեց Այրարատում, ձեր թագավորական կալվածքում, և բոլոր նախարարները սրտանց նրան են հարում: Հունաց կայսրերն այդ դավը նյութելով, նրան հյուպատոսի կոչում տվեցին և շատ մեծ զանձ, որով նա նախարարներին իր կողմը գրավեց: Արդ, արքն, իմացիր և տես, թե ինչ պիտի անես, ինչպես պիտի կարողանաս քեզ փրկել»:

Դավին մասնակից էր նաև Մամիկոնյան տոհմի Վարդան նահապետը, որը թագավորի արևով երդվելով, հավատացնում է Արշակին Տիրիթի խոսքերի ճշմարտությունը:

Արշակը հավատալով նրանց խոսքերին, Վարդանին ուղարկում է Գնելի մոտ հետևյալ պատգամով.

«Ինչիս բնակվեցիր Այրարատում և հայրենի կարգը խանգարեցիր<sup>2</sup>: Արդ, դու պետք է ընտրես երկուսից մեկը, կնւմ մեռնել, կնւմ Այրարատից հեռանալ և քեզանից հեռացնել նախարարների զավակներին»:

Գնելը անմիջապես կատարում է թագավորի պատգամը, թողնում է Այրարատը և գնում, բնակվում է Ադիովիտ և Առբերան զավառներում<sup>3</sup>:

<sup>1</sup> Ազատ՝ սոցիալական տերմին է, որն հավերժում նշանակում էր ազնվական:

<sup>2</sup> Արշակունիների արքայական տան սովորության համաձայն, Այրարատում պետք է բնակվեր միայն թագավորը և նրա մի որդին, որին պահում էին իրեն թագավորին հաջորդ, թագածառանգ: Իսկ Արշակունյաց տան մյուս ներկայացուցիչները պետք է բնակվեին Հաշտյանք, Ադիովիտ և Առբերան զավառներում՝ արքունական եկամտներով և ուսեստով: Գնելը փաստորեն խախտել էր այս սովորույթը:

<sup>3</sup> Գտնվում էին Վանա լճի հյուսիսային կողմում:

Այդ առթիվ Տիրանը սաստիկ զայրանում է որդու՝ Արշակի դեմ, և նրան խիստ հանդիմանում: Արշակի գաղտնի հրամանով՝ սենեկապետները խեղդամահ են անում Տիրանին և թաղում Կվաշ ավանում, չարժանացնելով անգամ Անիի արքայական գերեզմանոցում թաղվելու:

### Գնելի սպանությունն ու ողբը

Մոտենում էին հաշոց նոր տարվա՝ Նավասարդի, օրերը և այդ առթիվ Արշակը դուրս է գալիս արքայական որսի և զվարճությունների: Նա գնում է Մասիսի թիկունքում գտնվող իր սիրած Կոզովիտ գավառը և մեծաթիվ կենդանիներ որսում: Երբ որսից հետո հավաքվում են արքայական խնջույքի, Արշակը գինի խմելով պարծենում է, թե իրենից առաջ ոչ մի թագավոր մի ժամում այդքան մեծաքանակ որսի կենդանիներ չի կոտորել: Տիրիթն ու Վարդանը դարձյալ նորոգում են իրենց նեմգությունը և թագավորին ասում, թե այս օրերին Գնելը Ադիոպոսի լեռներում ավելի շատ երեներ է սպանել:

Արշակն այս առթիվ դարձյալ ոխով է լցվում Գնելի դեմ և անմիջապես կարգադրում Վարդանին՝ գնալ, Գնելին հրավիրել իր արքունական բանակատեղը՝ նավասարդյան որսին ու զվարճություններին մասնակցելու պատրվակով և սպանել:

Վարդանը գալիս է, Առավյուտք կոչված գյուղում գտնում պատանի Գնելին: Նա անկեղծ երդումներով ու խորամանկ վարպետությամբ համոզում է Գնելին՝ իր կնոջ և տնական մարդկանց հետ գալ արքունի բանակատեղին, հավատացնելով, որ թագավորը նրանց մեծարանքի և զվարճությունների համար է հրավիրում:

— Թագավորը չուզեց, — ասում է Վարդանը, — Նավասարդի տոներն առանց քեզ անցկացնել: Նա այժմ շատ բարեհաճ է տրամադրված քո նկատմամբ, որովհետև համոզվեց, որ քո մեջ ոչ մի չարություն չկա, և չարախոսները զուր էին փորձում իրեն հակառակն համոզել: Նա այժմ զղջում է, որ քեզ ատել է և կամենում է իր սիրուն քեզ արժանացնել:

Գնելը համոզվում է և իր իշխանական ամբողջ կազմով Վարդանի հետ ընկնում ճանապարհ: Ողջ գիշեր նրանք անապարելով գնում են, որպեսզի լուսադեմին հասնեն արքունի բանակը, քանի որ հաջորդ օրը կիրակի էր և արքունի բանակի մերձակայքում գտնվող Բագավանում մեծ հանդիսավորությամբ նշվելու էր Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը: Այդ տոնին Բագավանում էին հավաքվել տարբեր գավառներից եկած աշխարհիկ մարդկանց մեծ բազմություն և շատ եպիսկոպոսներ: Ներսես կաթողիկոսն այնտեղ էր ուղարկել իր աթոռակից և տեղապահ Խաղին, որպեսզի ամեն ինչ տեղում կարգավորի: Իսկ ինքը մնացել էր արքունի բանակում, որպեսզի իր ներկայությամբ այդ գիշեր մեծ պաշտամունք ու հաղորդություն կատարվի:



Լուսաբացին Գնելի խումբը հասնում է արքունի բանակը: Թագավորին անմիջապես հաղորդում են Գնելի ժամանման լուրը: Արշակը հրամայում է Գնելին բանակից դուրս տանել և սպանել: Եվ երբ Գնելը ձի հեծած անցնում էր բանակի միջով և մոտենում արքունի հրապարակին, արքունիքից վրա են հասնում բազմաթիվ սպասավորներ, զինված՝ սրերով, նիզակներով, սվիններով ու սակրերով, ինչպես նաև զինված հետևակ զորք:

Նրանք հասնում, բռնում են պատանի Գնելին, ձիուց վայր գցում, ձեռքերը հետևը կապելով՝ տանում գլխատման վայրը:

Գնելի կինը՝ Փառանձեմը, որ գտնվում էր ամուսնու հետ և գալիս էր փափուկ օթոցներով հարդարված պատգարակով, երբ տեսնում է ամուսնուն բռնեցին, իսկույն վայր է ցատկում պատգարակից, վազում եկեղեցի, ուր Ներսեսը բանակի մարդկանց ներկայությամբ առավոտյան աղոթք էր կատարում:

Կինը հեռից իրեն գցում է եկեղեցի և դիմելով Ներսեսին ճշում.

— Շտապիր, հասիր, ամուսնուս առանց մեղքի, առանց որևէ հանցանքի սպանում են:

Ներսեսն անմիջապես ընդհատում է արարողությունը և եկեղեցուց դուրս գալով, վազում դեպի թագավորի առանձնասենյակը: Հասնելով թագավորի դռանը, առանց նախազգուշացնելու նա իրեն գցում է թագավորի սենյակը: Արշակն անմիջապես կոսհելով Ներսեսի անակնկալ գալու պատճառը, քնած է ձևանում, սամույրե գլխարկը գլխին է քաշում, դեմքը ծածկում և սկսում խոնկացնել: Ներսեսը մոտենում, բռնում է թագավորի ուսը, ցնցում և ասում.

— Հիշիր, թագավոր, մեր տիրոջը, որ մեր սիրո պատճառով իջավ երկնային բարձրությունից, մեզ՝ անարժաններինս, եղբայր դարձավ, որ մենք միմյանց խնայենք, միմյանց սիրենք, չհամարձակվենք իրար վնասել: Եթե դու քո եղբորը, ծառայակցին, ընկերակցին ու հարազատին չխնայես, մեր տերն էլ քեզ չի խնայի:

Լսիր աստծո խոսքը, ինքդ քեզ խնայիր, քո հարազատ եղբոր արյունը մի թափիր, արդար մարդուն անմեղ տեղը անխնա մի սպանիր:

Արշակը արքայական գահույթում կողքի ընկած, մուշտակով փաթաթվել էր, դեմքը ծածկել, քար կտրած՝ ոչ լսում էր կաթողիկոսին, ոչ էլ պատասխանում: Այդ պահին ներս է գալիս թագավորի Երազմակ դահնապետը և զեկուցում թագավորին.

— Արքունի բոլոր հրամանները կատարեցի. Գնելին տարա որսատեղի պատի տակը, սպանեցի և նույն տեղում էլ թողեցի:

Ներսեսը ցնցվում է այս լուրից և զայրացած սկսում անեծքների տարափ տեղալ թագավորի գլխին:

— Ինչպես քարք օձն է<sup>1</sup> խցում իր ականջները՝ ճարտար կախարհի ձայնը չլսելու համար, այնպես էլ դի, թագավոր, ականջներդ փակեցիր, որպեսզի չլսես աստվածային խրատը և գազանի նման մարդ հոշոտես:

Դու, Արշակ, որովհետև Կայենի<sup>2</sup> գործը կատարեցիր, Կայենի անեծքին գաս. ողջ-ողջ թագավորությունիցդ զրկվես, քո Տիրան հորից ավելի չարչարանքներ կրես և մեծ նեղության մեջ դառն մահվամբ կյանքդ վերջացնես:

Ներսեսը անհիծում է, բարկացած դուրս գալիս թագավորի մոտից և այլևս արքունի բանակ չի վերադառնում:

Գնելին տարել գլխատել էին արքունի որսատեղի պատի մոտ գտնվող Լսին բլրի վրա, որն ընկած էր աղբյուրների մոտ սարքված արքունի բազմոցների դիմաց:

Արշակը հրամայում է իր բանակատեղում գտնվող բոլոր մարդկանց՝ մեծին և փոքրին, գնալ Գնելի սպանված տեղը և սզալ ու կոծել Արշակունի մեծ սեպուհ<sup>3</sup> Գնելի մահը: Բայց ոչ ոք չի համարձակվում

<sup>1</sup> Թունավոր խոշոր օձ՝ ասպիդ, որ ասպրում է արևադարձային և մերձարևադարձային շրջաններում:

<sup>2</sup> Կայենը, ըստ աստվածաշնչյան սուտապելի, առաջին մարդու՝ Ադամի որդին էր, առաջին երկրագործը, որը նախանձելով իր անասնապահ եղբորը՝ Աբելին, սպանում է նրան և թաղում: Այդ արարքի համար Կայենն արժանանում է աստվածային պատուհասի, գլխին եղջյուրներ են բուսում, մնում է անմահ, հետագայում թյուրիմացաբար սպանվում է իր ազգակցի՝ Լամեքի կողմից:

<sup>3</sup> Ազնվական ծագում ունեցող անձ, նախարարական տոհմից սերված իշխան:

գնալ: Թագավորն ինքն է անձամբ էլնում գնում այնտեղ, նստում լացող ու ողբացող կանանց կողքին, ողբում ու սգում իր եղբորորդուն, որին ինքն էր սպանել:

Արշակը ինքը լալիս էր և հրամայում ողբասաց կանանց՝ լաց ու կոծը սաստկացնել: Լացող կանանց մեջ էր Գնելի կինը՝ Փառանձեմը, զգեստները պատառոտած, մազերն արձակած, կուրծքը բաց կոծում էր սպանված ամուսնուն, բարձր ճշում, աղիողորմ ողբով բոլորին լացացնում: Արշակը նայում էր Փառանձեմի չքնաղ գեղեցկությանը, պատառոտված զգեստների արանքից ցոլացող մարմնին և մտքում տենչում նրան:

Իսկ Տիրիթը, որ Փառանձեմի սիրուց նախանձելով Գնելին, նենգորեն սպանել էր տվել նրան, լաց ու կոծի թունդ պահին, կրճեւ չզսպելով, մարդ է ուղարկում Փառանձեմի մոտ, ասել տալիս.

— Քեզ շատ մի տանջիր ու չարչարիր, ես Գնելից ավելի լավ տղամարդ եմ. ես քեզ սիրում եմ, դրա համար էլ նրան սպանել տվեցի, որ քեզ հետ ամուսնանամ:

Երբ Փառանձեմին հայտնում են Տիրիթի այս պատգամը, լաց ու կոծի թունդ պահին նա ձայնը բարձրացնում է, բողոքելով ճշում.

— Լսեցե՞ք, մարդիկ, բոլորդ լսեցե՞ք, իմ ամուսնու մահը իմ պատճառով է եղել, մեկը ինձ վրա աչք է դրել և իմ պատճառով սպանել տվել ամուսնուս:

Այս իրողությունը հայտնելով ի լուր ամենքին, Փառանձեմն ինքը դառնում է ողբամայր, բոլոր ձայնարկուները՝ միանում են նրան, հենց տեղնուտեղը սկսում են երգ կապել Տիրիթի սիրահարության, Փառանձեմի վրա աչք դնելու, մատնության, Գնելի մահվան համար հնարներ որոնելու և նենգությամբ սպանել տալու մասին: Բոլոր ողբասացները այս բաները սկսում են երգով պատմել ու աղիողորմ ձայնով երգել: Այդ ձևով տարածվում և բոլորին պարզ է դառնում Գնելի սպանության նպատակն ու հանգամանքները:

Արշակն այս ամենը լսելով և իրազեկ դառնալով սպանության նպատակին, ապշում, զարմանում, զղջում է իր արարմունքը, ափսոսանքով ձեռներն իրար խփում, ինքն իրեն ասում.

— Ուրեմն, Տիրիթն անարժան սիրով սիրահարված լինելով Գնելի կնոջը, այս չարիքը հնարեց, դարձավ անմեղ մահվան պատճառ, մեզ էլ զուր տեղը արդար արյունի մեջ շաղախեց և ժառանգել տվեց անանցանելի չարիք ու անեծք:

Թագավորը, սակայն, առժամանակ եղած իրողությունն ու սեփական մտորումները իր մեջ է պահում, ոչ ոքի չի հայտնում, լուռ է և սպասում:

Արշակը Գնելի դիակը նախարարների հետ տանում, իջեցնում է Աղիովտի դաշտը և թաղում արքունական Զարիշատ քաղաքում:

Գնելի սպանությունից բավական ժամանակ անց Տիրիթը պատգամավոր է ուղարկում Արշակի մոտ հետևյալ խնդրանքով. «Բարեհաճիր, արքն, և հրաման տուր Գնելի կնոջ՝ Փառանձեմի հետ ինձ ամուսնանալ»:

Արշակն այս լսելով, ասում է.

— Այժմ հաատատ համոզվեցի, որ իսկապես Գնելի մահը իր կնոջ պատճառով է եղել:

Արշակը կտրուկ մերժում է Տիրիթի պահանջը և մտադրվում Տիրիթին սպանել Գնելի մահվան համար:

Տիրիթն իմանում է թագավորի մտադրությունը և գիշերով անաբեկված փախչում: Երբ Արշակին հայտնում են Տիրիթի փախուստը, նա անմիջապես հրամայում է ազատների բանակին՝ Տիրիթին հետապնդել և որտեղ որ բռնեն, այնտեղ էլ սպանեն:

Ազատները Տիրիթին հետապնդելով՝ հասնում են մինչև Բասենի անտառները, անտառում բռնում են նրան և տեղնուտեղը սպանում:

Տիրիթին սպանելուց հետո Արշակն ամուսնանում է Գնելի կնոջ՝ Փառանձեմի հետ:

<sup>1</sup> Ողբամայր, մայր ողբոց կամ եղերամայր, նաև ձայնարկուներ կամ ձայնարկու կանաչք, հնում մեռելի վրա սուգ կատարելու նամար հրավիրում էին հատուկ լավկան կանանց, որոնցից մեկը դառնում էր ողբի մայր, այսինքն՝ գլխավոր տղբասացը, երգով մեռելի գովքն էր անում, իսկ մյուսները, որ կոչվում էին ձայնարկուներ, ձայնակցում էին ողբամայրը, կրկնելով նրա երգած ողբերգը:

## Փառանձեմ և Ոլոմպիադա

Արշակը շատ էր սիրում Փառանձեմին, բայց Փառանձեմը նրան չէր սիրում:

Եվ որքան Արշակը սիրում էր կնոջը, այնքան կինը ատում էր նրան: Փառանձեմը չէր սիրում Արշակին նրա մարմնի թավամազության և թուխ մաշկ ունենալու պատճառով: Տեսնելով, որ կնոջ սիրտը իրեն չի կաշտում, Արշակը խնամախոս է ուղարկում Հունաց աշխարհը և այնտեղից կայսերական տոհմից Ոլոմպիադա անունով մի գեղեցիկ կին է բերում, հետը ամուսնանում և դարձնում իր երկրորդ կինը: Արշակը ուժգին սիրով սիրում է Ոլոմպիադային և դրանով իսկ գրգռում Փառանձեմի անխանձը: Փառանձեմը խանդից ռիսակալվում է Ոլոմպիադայի դեմ և միջոցներ է փնտրում նրան մեջտեղից վերացնելու:

Ծուռով Փառանձեմը պառկում, տղա է բերում, անունը դնում Պապ: Պապը մեծանում, դառնում է շատ առույգ ու ուշիմ պատանի: Արշակը նրան պատանդ է ուղարկում Հունաստան՝ կայսրի մոտ:

Պապի ծնունդն ավելի է գրգռում Փառանձեմի ռիսն ու խանդը, և նա ամեն կերպ փորձում է թունավորել գեղեցիկ Ոլոմպիադային: Բայց Ոլոմպիադան, զգալով նրա անխանձը, շատ զգույշ էր իր ուտելիքի և ըմպելիքի նկատմամբ: Նա ուտում էր միայն իր անժիշտների պատրաստած կերակուրները և խմում միայն նրանց մատուցած գինին:

Տեսնելով, որ ուրիշ հնար չկա, Փառանձեմը իր խարդավանքին մասնակից է դարձնում արքունի պալատի քահանաներից մեկին, անունը՝ Մրջյունիկ: Վերջինս Քրիստոսի մարմինն ու արյունը խորհրդանշող սուրբ հաղորդության հացի և գինու մեջ թույն է խառնում և եկեղեցում իբրև սրբազան ժասունք մատուցում Ոլոմպիադա թագուհուն: Թագուհին ճաշակելով թունավորված հաղորդությունը, մահանում է:

Փառանձեմը իբրև հատուցում այդ սպանության, Մրջյունիկ քահանային է նվիրում Տարոնի նրա հայրենի Գոմկունք գյուղը:

## Արշակ, Վասակ և Ծապուհ

Պարսից Ծապուհ թագավորը, երկյուղելով հայոց և հունաց թագավորների միաբանությունից, ամեն կերպ ջանում էր հայոց Արշակ թագավորին իր կողմը գրավել: Նա Արշակին հրավիրում է Պարսկաստան, փառքով ու պատվով մեծարում, նվիրում մեծ քանակությամբ ոսկի և արծաթ: Նա Արշակին փայփայում է եղբոր և որդու նման, նրան նվիրում անզամ Ատրպատականի այն մեծ կալվածքը, որ, սովորաբար, տրվում էր պարսից թագավորության երկրորդ անձին:

Խնջույքի և ուրախության ժամանակ պարսից Ծապուհ թագավորն ու հայոց Արշակը բազմում էին միևնույն թախտի վրա դրված գահերին, հագնում համազույն և միատեսակ զգեստ, կրում միանման թագեր և երկու հարազատ եղբոր նման իրարից անբաժան էին:

Օրերից մի օր հայոց Արշակ թագավորը դուրս է գալիս պարսից թագավորի ախոռները դիտելու: Նա մտնում է ախոռներից մեկը, որի ներսում նստած էր թագավորի ախոռապետը: Ախոռապետը հայոց թագավորին լվի տեղ անզամ չի դնում. ոչ ոտի է ելնում նրան դիմավորելու, ոչ էլ արժանացնում որևէ հարգանքի: Ընդհակառակը, տեսնելով հայոց թագավորին, նա ծաղրելով՝ պարսկերեն դիմում է նրան.

— Հայից այժերի թագավոր, եկ, այս խոտի խրձի վրա նստիր:

Վասակ գորավարը, որն ուղեկցում էր իր թագավորին, սաստիկ զայրանում է, քաշում, մերկացնում է իր գոտուց կախած սուրը և տեղնուտեղը հենց ախոռի մեջ գլխատում պարսից թագավորի ախոռապետին:

Երբ պարսից թագավորին հայտնում են այս լուրը, Ծապուհը զարմացած և հիացած է մնում Վասակի խիզախությունից: Նա Վասակին կանչում է իր մոտ, դրվատում, խրախուսում նրա քաջությունն ու տիրապիտությունը և մեծ պարգևների ու պատիվների արժանացնում նրան:

Այդ խաղաղ ու սիրալիր օրերին պարսից թագավորի մտքում դարձյալ երկյուղ է ծագում Արշակի հավատարմության նկատմամբ. ուստի նա պահանջում է Արշակ թագավորից իրենց միաբանության ուխտին հավատարիմ մնալու երդում տալ:

— Համաձայնիք, — ասում է Ծապունն Արշակին, — և քո հավատով երդվիր, որ ինձ չէս խաբի, չէս դավաճանի:

Ծապունն Արշակին այնքան է ճշմարտացի, որ Արշակն ստիպված համաձայնում է երդվել:

Կանչում են Տիգրան քաղաքի եկեղեցու քահանաներին, քահանայապետ Մարիի գլխավորությամբ, բերել են տալիս ավետարանը, և Ծապուն թագավորը Արշակին երդվեցնել է տալիս սուրբ ավետարանի վրա, որ նա Ծապունին չի խաբի, չի դավաճանի, հաստատ կմնա իր ուխտին և իրենց դաշինքը չի խախտի:

Այդ երդման արարողության մեջ միջնորդի դեր էր կատարում Մամիկոնյան Վարդան նահապետը, որին Ծապունը սիրում էր ու պատիվներ տալիս: Վասակը նախանձելով եղբորը՝ վճռում է խախտել Ծապունի և Արշակի միջև եղած դաշինքը:

Այս երդումից հետո մի գիշեր Վասակը հրահրում է Արշակին Ծապունի դեմ և գիշերով երկուսն էլ Պարսկաստանից փախչում, գալիս են Հայաստան:

Այս փախուստից Ծապունը խիստ վրդովվում է, իր մոտ է կանչում Մարի քահանային և զայրույթով հանդիմանում.

— Եթե դուք երդումը անկեղծ տված լինեիք, Արշակը չէր համարձակվի երդման դեմ գնալ կամ երդմնազանց լինել: Ես համոզված եմ, որ դուք կախարհությամբ ինձ խաբեցիք. դուք սիրեցիք նրան, որովհետև նա ձեր կրոնին է պատկանում, դուք նրա հետ նենգությամբ խորհուրդ արիք և ինձանից հեռացրիք: Եվ առհասարակ բոլորը կամենում եք, որ Արշակունիները լինեն ձեր տերերը, և այդ նպատակն եք դուք միշտ հետապնդում:

Հենց տեղն ու տեղը Ծապունը երդվում է արեգակով, ջրով ու կրակով, որ ոչ մի քրիստոնյա կենդանի չի թողնի: Եվ նա հրամայում է Մարի քահանային և Արշակին երդվեցնող մնացած յոթանասուն քահանաներին տանել և մորթոտել: Իսկ այն ավետարանը, որի վրա երդվել էր Արշակ թագավորը, Ծապունը հրամայում է կապել երկաթե լարերով, իր մատանիով կնքում և հատուկ հսկողության տակ պահել է տալիս արքունի գանձարանում:

### **Վարդանի սպանությունը**

Ծապունը Արշակի անակնկալ փախուստի առթիվ Մամիկոնյան Վարդանին հատուկ հրովարտակով պատգամավոր է ուղարկում Արշակի մոտ և հաղորդում հետևյալը: «Ինչ որ մեր մեջ եղավ՝ եղավ, քո գործած հանցանքը մոռացությանն եմ տալիս, ներում. բայց դու այսուհետև հաստատ մնա ուխտիդ, մի՛ դրժիր երդումդ, որ տվեցիր քո քրիստոնեական հավատով: Իսկ եթե կործես, դժի գիտես, պարտական կմնաս քո հավատին»:

Արշակ թագավորը սիրով լսում, ընդունում է այդ պատգամը, համաձայնում Ծապունի առաջարկած խաղաղության ուխտին: Ապա նա ազատ է արձակում Վարդան նահապետին, որ գնա իր տունը, երկար ճանապարհի հոգնածությունից հանգստանա:

Վարդանի գնալուց հետո թագավորի մոտ է գալիս Վասակ զորավարը և իմանալով եղբոր գալու նպատակը, սկսում է թագավորին զրգոել եղբոր դեմ.

— Այդ Վարդանն էր, թագավոր, որ քեզ երդումով կախման մեջ դրեց պարսից թագավորից և ուզում էր քեզ կորցնել տալ: Եթե դու չշտապես, նրան մեջտեղից չվերացնես, ապա թե՛ դու կկործանվես և թե՛ ամբողջ Հայոց աշխարհը:

Խոսակցությանը ներկա էր նաև Փառանձեմ թագուհին, որը դեռ դիմ էր պահում Վարդանի դեմ իր առաջին ամուսնու՝ Գնելի անմեղ սպանության համար: Փառանձեմը հաստատում է Վասակի ասածները և ավելի զրգոում թագավորին Վարդանի դեմ: Նրանք համոզում են Արշակին, զորք են գումարել տալիս և Վասակի գլխավորությամբ ուղարկում Վարդանի վրա:

Վարդանը գտնվում էր Տայքում, Լրախանի կոչված ամուր բերդում: Երբ արքունի զորքը Վասակի գլխավորությամբ հասնում է Տայք, Վարդանի մարդիկ չեն կասկածում զորքի անակնկալ ժամանման համար, մտածելով, որ Վասակի գունդն է եկել եղբոր մոտ բարեկամական այցով:

Ամառ էր, Վարդանը վրան էր զարկել բերդի տակ գտնվող ձորում և այնտեղ էր մնում:



Վասակի զինվորները ծածուկ զինված էին և վրայից սովորական զգեստ էին հագել: Նրանք հասնում են վրանի դուռը այն ժամանակ, երբ Վարդանը դրսում կիսամերկ կուսցած՝ գլուխն էր լվանում: Մինչ նա կուսցել էր, որ գլխին ջուր լցնեն, Վասակի զինվորները մոտենալով՝ մերկացնում են սրերը, չեն թողնում անգամ գլուխը բարձրացնի, կողքից սրերով խփում, սպանում են նրան:

Այդ պահին Վարդանի հղի կինը նստած էր բերդի պատշգամբում իր բազմոցին: Հանկարծ ձորից լսում է սարսափելի ճիչ. կինը բազմոցից վաչր է ցատկում, վազում դեպի դուռը, հուզմունքից տեղնուտեղը ծննդաբերում: Երեխային հոր անունով կոչում են Վարդան:

### Նախարարների կոտորածը

Արշակը չէր մոռացել Արշակաւթանի կործանումն ու բնաջնջումը և հարմար առիթի էր սպասում իր վրեժը նախարարներից լուծելու համար:

Երբ Ներսես կաթողիկոսը Գնելի սպանության առթիվ նրանից ընդմիջտ հեռանում է, և այլևս չկար մեկը, որ խրատեր, հանդիմաներ թագավորին, կանխեր նրա ապօրինությունները, Արշակն իրեն ավելի ազատ ու ինքնագլուխ է զգում և վճռում իր ոխը հանել: Նա նախարարներին հրավիրում է իր մոտ՝ Արմավիրի լքված պալատը, իբրև բարեկամների մեծարելու և հյուրասիրելու պատրվակով: Երբ նախարարները ժամանում են, Արշակը բոլորին կոտորել է տալիս, բնաջնջում շատ նախարարական տոհմեր, նրանց կալվածքները բռնագրավում, միացնում արքունական տիրույթներին: Նա հիմնովին բնաջնջում է Ծիրակի և Արշարունիքի տերեր Կամսարականներին, որոնք ուժեղ դիմադրություն են ցույց տալիս Արշակին: Վերջինս սեփականացնում է Արշարունիքում գտնվող նրանց կուռ և անտիկ Արտագերս ամրոցը և ամբողջ գավառը հատկացնում այդ բերդին, դարձնում արքունի համբարանոց<sup>1</sup>: Կամսարականների ցեղից, Վասակ սպարապետի ջանքերով, փրկվում է միայն մի երեխա՝ Սպանդարատ անունով, որին Վասակը փախցնում, տանում է Տարոնի կողմերը, և որը հետագայում ժառանգում է իր նախկին հայրենական կալվածքները:

Թագավորից սպասումբում և Պարսկաստան են սպաստանում Արծրունյաց նախարարական տան նահապետ Մեհրոմեանը և նրա քրոջ ամուսին Վահան Մամիկոնյանը:

### Արշակ և Ծապուն

Երբ Արշակն իր երդումն անարգում է և գաղտնի փախչում Պարսկաստանից, Ծապունը չի թշնամանում Արշակի դեմ, որովհետև ինքը պատերազմի մեջ էր հույների հետ և չէր ուզում իրեն չորս կողմից թշնամիներով շրջապատել: Բայց հույն-պարսկական պատերազմը շատ է երկարում, և Արշակը համոզվում է, որ այդ կովող կողմերից մեկը մի օր իրեն օգնության կկանչի: Արշակն, իհարկե, ներքուստ հակված էր դեպի հույները և սպասում էր նրանց դիմումին: Բայց հույները բանի տեղ չեն դնում Արշակին և ոչ էլ նրան օգնության որևէ ակնարկ անում: Այդ բանը ներքուստ վշտացնում և վիրավորում է Արշակի ինքնասիրությունը: Այդ ժամանակ պարսից Ծապուն թագավորը դեսպաններ է ատարում Արշակի մոտ, հիշեցնում իրենց ուխտն ու երդումը, ասում.

— Բարեհաճիր, եղբայր, այս պատերազմում ինձ օգնել, քո զորքով եկ ինձ օգնության: Եթե դու մեր կողմը լինես, համոզված եմ, հաղթությունը մերը կլինի:

Արշակը ինքնագոհ ուրախությամբ ընդունում է Ծապունի առաջարկը և խոստանում շուտափույթ օգնության հասնել: Նա հրամայում է Վասակ սպարապետին զորք գումարել և պատրաստվել կովի: Վասակն իսկույն անցնում է թագավորի հրամանի կատարմանը: Նա շուտով հավաքում է չորս հարյուր հազար զինվորներից բաղկացած լավ սպասազինված զորք, կազմված քաջ ու բնօրի ուղանկներից՝

<sup>1</sup> Հանազան մթերքներ պահելու շևեք, շահմարան:

զինված նիստերով, սերով, աղեղներով, սակրերով, վաղրերով, դիպուկ նետաձիգներից, որոնք բնավ չէին վրիպում իրենց նշանակետից, բոլորն էլ թշնամուց երես չդարձնող քաջասիրտ կռվողներ: Իսկ հեծելազորք գրանավորված էր պահպանակներով ու սազավարտերով, կրում էր իրենց բոլոր պրոշներն ու զինանշանները և ուզում քաղնաձայն փողեր:

Արշակ թագավորը քաղնաձայնով նախարարների և զորքի հետ իջնում է Աղձնիք, Աղձնիքի միջով անցնում, ներխուժում Արուստանի աշխարհը և բանակ զարկում Մծրին քաղաքի դիմաց, որ պետք է տեղի ունենար ճակատամարտը:

Երբ հաչոց զորքը գալիս հասնում է ճակատամարտի վայրը, հունաց զորքերն արդեն սլանալ էին խմբվել ու բանակվել, իսկ պարսից զորքը տակավին տեղ չէր հասել: Հունաց զորքը այնքան քաղնաձայն էր, որ եկել կհավել էր այնտեղ, ինչպես ավազը ծովափին և ապաստում էր պարսիկներին: Պարսից զորքն ուշանում էր, իսկ հալ զինվորներն սկսում էին պարսպադրուկից նեղվել: Նրանք այլևս չեն համարում և կամենում են ժամ առաջ հարձակվել հունաց զորքի վրա: Հաչոց զորագնդերից յուրաքանչյուրը ինքնակամ ու համարձակ ուզում ցուցել էր անում, իսկ Վասակ զորավարը դարձել էր զորքից ավելի անհամարներ, անհամարեությունից կորում էր սանձերը, չէր կամենում սպասել պարսից զորքերի ժամանմանը:

Հաչոց ամբողջ զորքը գալիս կանգնում է Արշակ թագավորի սուսայ և ինկորում, որ չապասեն Շապուհ թագավորին, այլ թույլ տան հենց հիմա հարձակվել հույների վրա, քանի որ իրենք մաշվում են օտար աշխարհում պարսպ նստելուց և ժամանակ վատնելուց:

Արշակը, անսպավ զորքի թախանձանքին, հրաման է տալիս ճակատամարտը սկսել: Մեծ Հայքի զորավար Վասակ սպարապետն անմիջապես անցնում է մարտի պատրաստության, դատավորում զորքն քստ գնդերի ու զորատեսակների և սահմանված ժամին հարձակվում հունաց բանակի վրա: Հաչոց զորքը հակառակորդի մինչև վերջին զինվորը կոտորում ու սրի է անցկացնում, և հունական զորքից այնքան ավար ու գանձեր առնում, որ լիալի բավարարում է բոլոր զինվորներին:

Հույներին չափափելուց հետո Արշակ թագավորն իր զորքով մնում է տեղում, սպասելով պարսից թագավորին: Վերջապես գալիս է Շապուհ թագավորը անթիվ ու անհամար զորքով: Քալիս, տեսնում է հալ քաջերի գործած աներևակապելի սխրանքը և մնում զարմանքից հիացած: Նա մեծ պատիվներ է տալիս հաչոց Արշակ թագավորին, բոլոր մեծամեծներին և Վասակ սպարապետին: Այնուհետև Շապուհը դիմում է պարսից զորքին.

— Ի՞նչ եք կարծում, ինչ արժանի պարգևներ կամ ինչպիսի փոխհատուցում կարող եմ մենք տալ հաչոց Արշակ թագավորին պարսիսի մեծագործության կատարելու համար, պարսիսի քաջություն ցույց տալու համար, պարսիսի հզոր թշնամու չափափելու համար, պարսիսի անակեղալ ճակատամարտ մղելու համար, պարսիսի ճակատամարտում հաղթելու համար, մեզ համար պարսիսի անուն վաստակելու համար:

Համոզված եմ, որ եթե միայն մենք լինեինք արչաց զորքով հույների դեմ կռվողները, հազիվ թե կարողանայինք պարսիսի հաջողության հասնել: Մենք մեր հույար դրել էինք հաչոց և պարսից միացյալ ուժերի վրա: Իսկ հաչոց թագավորն, անավասիկ, միայն իր զորքով մեր փոխարեն կռվի դուրս եկավ և պարսիսի քաջություն գործեց, որ սրիչ մեկը անկարող էր: Արդ, ի՞նչ բարիքներով կարող եմք նրա այս մեծագործությունը հատուցել:

Պարսից նախարարները պատասխան են տալիս Շապուհին, ասում.

— Ինչ որ կամենաս, թագավոր, ինչով որ կամենաս՝ կարող ես նրան գոհացում տալ: Ոսկիով ու արծաթով՝ շնա, կերպասներով ու մարգարիտներով՝ շնա, տհր, ինչ որ սրաիցդ անցնում է:

Շապուհը պատասխատում է իր իշխաններին.

— Արդ, ինչ որ դուք ասում եք, սեր չէ. եկեք, անխաղճի սեր հաստատունը հաչոց Արշակ թագավորի մեծ, պարսիսի սեր, որ նա մինչև վերջ անբաժան մնա մեզանից: — Ես, — ասում է նա, — հաչոց Արշակ թագավորին կենության կտամ իմ դստերը և պարսիսի մեծ կազվածք կրտսմ նրան, որ Հայաստանից

Հարգելիառնությունը աշխարհներով մեկը, գտարտ էր Մեծ Հայքի հալ ու գոհանությունը, Միջ պետրիս դե փ ու սպա ու զինուորը և ստանա էր Մեծ Հայքի կազմի մեջ:

Մտեմառ էր ստոխասիկ Միջպետրիս, Աղձնիքը ու ի սլ:

մինչև մեզ մոտ հասնելը՝ նա իջևանի իր կալվածքում: Իսկ Վասակ սպարապետին, մյուս մեծամեծներին ու զորապետներին կտանք ոսկի, արծաթ, կերպաս և մարգարիտ:

Բոլոր մեծամեծներն ու խորհրդակիցները հավանություն են տալիս իրենց թագավորի այս ցանկությանն ու առաջարկին:

Պարսից Ծապուն թագավորն սկսում է ստիպել ու թախանձել հայոց Արշակ թագավորին, իր հետ գնալ Պարսկաստան՝ Տիգրոն, որպեսզի նրան պնտեղ մեծ շուքով ու փառքով իրեն փեսայացնի: Սակայն թե՛ Արշակ թագավորը և թե՛ հայոց զորքը ձանձրալի են համարում այդքան երկար ճանապարհ գնալը, մանավանդ, որ ամեն մեկը, հայ մարդու բնական սովորությամբ, կարոտել էր իր տունուտեղին:

Արշակի հետ հայոց զորքի մեջ էր գտնվում նաև Սյունյաց գավառի Անդոկ նահապետը՝ Փառանձեմի հայրը:

Երբ Անդոկն իմանում է, որ պարսից թագավորն ուզում է իր աղջկան կնության տալ Արշակ թագավորին, շատ է վախենում և ընկնում մտատանջության մեջ: Նա գիտեր, որ եթե Արշակը կին առնի պարսից թագավորի դստերը, ապա իր դուստրը՝ Փառանձեմը, կանարգվի: Եվ Անդոկը վճռում է ամեն կերպ խափանել հայոց և պարսից թագավորների միջև եղած սերն ու միաբանությունը: Ամենից առաջ Անդոկը կաշառում է Վասակ զորավարին: Նա Վասակին շատ ոսկի է տալիս, ապա կաշառում է նաև հայոց մյուս բոլոր մեծամեծներին: Բոլորն էլ, ոսկու փալլից շլացած, համաձայնում են ամեն կերպ խզել տալ երկու թագավորների միջև եղած սերը: Այնուհետև Անդոկը իր դավին մասնակից է դարձնում պարսից թագավորի մերձավոր ավագներից մեկին: Անդոկը նրան անչափ ու անհամար ոսկի է տալիս, խնդրում, որ նա որևէ միջոցով տարաձայնություն հարուցի Արշակի և Ծապունի միջև: Անդոկը պայմանավորվում է պարսիկ այդ ավագ մեծամեծի հետ, որպեսզի նա գուշակի կերպարանքով ներկայանա Արշակ թագավորին և ասի. «Գլխիդ ճարը տես, պարսից թագավորը քեզ նախանձում է քո տարած հաղթանակի համար և միտք ունի քեզ բռնել ու սպանել»: «Երբ դու այդ կասես, — խրատ է տալիս նրան Անդոկը, — ապա Արշակ թագավորին կառաջարկես, որ մեզ՝ բոլոր ավագներին, թող խորհրդի կանչի: Մենք կգանք և քո ասածները կհաստատենք»:

Պարսից թագավորի խորհրդակիցը գալիս է Արշակ թագավորի մոտ և անում այն ամենը, ինչ պատվիրել էր նրան Անդոկը: Նա ասում է Արշակին.

— Արշակ թագավոր, գլխիդ ճարը տես, պարսից Ծապուն թագավորը մտադրվել է քեզ բռնել ու սպանել:

Արշակն այս անակնկալ հայտնությունից մնում է ապշած:

— Իմ արած այդքան մեծ ծառայության հատուցումը միթե այս էր լինելու, — տարակուսած ու զարմացած հարցնում է նա:

Արշակն իր մոտ շտապ խորհրդի է կանչում իր բոլոր մեծամեծներին, խորհրդականներին, Վասակ սպարապետին, իր աներոջը՝ Անդոկին, բանակում եղած բոլոր նախարարներին և նրանց



հայտնում այն ամենը, ինչ լսել էր Ծապուհի պարսիկ խորհրդականից: Հրավիրվածները բոլորը միաբերան հաստատում են այդ և ասում.

— Մենք այդ բանը վաղուց էինք լսել, սակայն քեզ չէինք համարձակվում ասել: Ինչ որ ասացիր՝ հաստատ բան է: Հիմա, թագավոր, տես, մտածիր և գործիր այնպես, որ կարողանաս և քեզ փրկել, և մեզ:

Արշակը համոզվելով Ծապուհի դավադրության իսկությանը, մեծաքանակ ոսկի ու արծաթ է պարգևում պարսից խորհրդականին այդ կարծեցյալ դավադրությունը բացելու համար, ապա հրամայում է գործին՝ կազմակերպվել, պատրաստվել:

Եվ մի գիշեր, երբ բոլորը խաղաղ քնած էին, հաչոց բանակում ինչքան որ մարդ կար, Արշակի հրամանով ոտքի են ելնում, բանակատեղում իրենց վրանները, խորանները<sup>1</sup>, իրերն ու ունեցվածքը, ամեն ինչ թողնում նույնությամբ իրենց տեղերում, հեծնում ձիերը և պարսիկներից գաղտնի սուսուփուս հեռանում:

Առավոտյան, երբ, ըստ սովորության, գալիս է պարսից թագավորին բարի լույս մաղթելու ժամը, բոլոր մեծամեծներն ու իշխանները գնում են Ծապուհին բարի լույս մաղթելու: Մաղթանքին չեն ներկայանում հաչոց թագավորն ու մեծամեծները: Երբ նրանք շատ են ուշանում, Ծապուհը հրամայում է իր մարդկանց, որ գնան տեսնեն, թե ինչ է պատահել հաչոց թագավորին, որ այդքան ուշացավ: Գնում տեսնում են, որ հաչոց բանակատեղում ամեն ինչ կանգուն՝ վրանները, խորանները, բազմոցները, հովանոցները, անկողինները, կահկարասին, անգամ ավար վերցրած գանձերը իրենց տեղերում, են, բայց մեջը դատարկ, ոչ ոք չկա:

Ծապուհի մարդիկ գալիս են և իրենց տեսածը պատմում են թագավորին: Ծապուհը, երբ այդ ամենը լսում է, խելոք մարդ է լինում, իսկույն եղելությունը հասկանում է.

— Հաչոց թագավորի այս փախուստն, — ասում է նա, — իմ մարդկանցից է եղել. մեր արքունի դուռն մարդիկ են եղել Արշակին վախեցնողներն ու փախցնողները:

Ապա Ծապուհը իր ավագ մեծամեծներից շատերին ձիերով պատվիրակ է ուղարկում Արշակի հետեւից, սիրո և միաբանության անկեղծ երդում տալիս, խնդրում, որպեսզի հետ դառնա, միասին քննեն ու պարզեն չարախոսությունները և պատժեն նենգ ու տիրադավ բանարկուներին:

Բայց հաչոց թագավորը լսել չի ուզում պարսից թագավորի պատգամը և այլևս չի վերադառնում Պարսից աշխարհ: Այդ օրից սկսած թշնամությունը խորանում է Հայաստանի ու Պարսկաստանի միջև, բազում ընդհարումներ, կռիվներ, ճակատամարտեր են լինում և ծագում է մի մեծ պատերազմ հաչոց Արշակ թագավորի և պարսից Ծապուհ թագավորի միջև, որը տևում է ավելի քան երեսուն տարի:

### **Արշակի մղած երկարամյա պատերազմները Ծապուհի դեմ**

Արշակի գաղտնի փախուստից հետո պարսից թագավորը ութ տարի լուռ է մնում: Որովհետև Ծապուհը հունաց թագավորների դեմ ծանր ու երկարատև պատերազմների մեջ էր, ուստի նա ոչ միայն հաչոց Արշակ թագավորի նկատմամբ առաջժմ թշնամություն չէր ցույց տալիս, այլ, ընդհակառակը, շարունակ պատվիրակներ էր ուղարկում Արշակի մոտ, խնդրում, աղաչում, որ իրար դաշնակից լինեն, սիրով ու խաղաղությամբ հաշտ ապրեն: Սակայն հաչոց Արշակ թագավորը ամենևին չի ուզում նրան լսել, ոչ էլ նրա մոտ գնալ, ոչ պատվիրակներ ու պարզուներ ուղարկել, նրա անունն իսկ լսել չէր կամենում:

Հույն-պարսկական կռիվներն ի վերջո ավարտվում են պարսիկների հաղթանակով, և հունաց թագավորը նեղն ընկնելով, խաղաղության դաշնագիր է կնքում Ծապուհի հետ և նամակով դիմում նրան այսպես.

«Քեզ եմ տալիս Արուստանում գտնվող Մծրիներ և Ասորոց Միջագետքը. Հայաստանի ներքին նահանգներից էլ ձեռ եմ քաշում. եթե կարող ես՝ հաչերին հաղթիր և նվաճիր քո իշխանության տակ, ես նրանց օգնություն չեմ ցույց տա»:

<sup>1</sup> Խորանը նույնպես վրան էր, բայց մեծ, ընդարձակ, ներսից զարդարված, ներսում բոլոր հարմարություններն ունեցող շքեղ օթեփան, հատկացվում էր թագավորներին ու մեծամեծներին:

Հույն թագավորներին հաղթելուց և նրանց հետ խաղաղություն հաստատելուց հետո պարսից Ծապուն թագավորը կարգի է բերում իր զորքերը, նախապատրաստվում և պատերազմի է ելնում հայոց Արշակ թագավորի վրա:

Հայոց թագավորի սահմանապահները, որոնք նստում էին Ատրպատականի Գանձակում<sup>1</sup>, վաղօրոք Արշակ թագավորին տեղեկացնում են Ծապունի հարձակման նախապատրաստության մասին:

Արշակն այդ իմանալով, իսկույն հրաման է տալիս Վասակ սպարապետին՝ իր բոլոր զորքերը կազմակերպել և Ծապունի դեմ ելնել Հայաստանի սահմաններից դուրս: Վասակն արագությամբ ի մի է հավաքում հայոց զորքերը, զորահանդես կատարում: Նրա հրամանատարության տակ են հավաքվում շուրջ 60 բյուր<sup>2</sup> հեծյալ, բոլորն էլ լավ զինված, քաջասիրտ, միաբան ու նվիրված նիզակավորներ: Վասակը նրանց գլուխն անցած, առաջ է շարժվում, և Ծապունը իր զորքով դեռ Ատրպատականի սահմանը չհասած, պարսից հողում բնդհարվում է Ծապունի զորքի հետ: Վասակն իր անվեհեր մարտիկներով իսպառ կոտորում է պարսից զորքերին, բոլորին բնաջնջում: Կոտորածից ազատվում է միայն Ծապուն թագավորը, որը մեկ ձիով փախչում, գնում է իր երկիրը: Հայոց զորքը մտնում է Պարսկաստան, գերում, կոտորում, այրում, ավարի ենթարկում Պարսից աշխարհը և հաղթանակով վերադառնում:

### **Ծապունի երկրորդ արշավանքը**

Առաջին պարտությունից հետո Ծապունը փախչում է Պարսկաստան, հավաքում իր զորքերի անթիվ ու անհամար բազմությունը, ինչպես ավազը՝ ծովափին. հավաքում է անթիվ ու անհամար փղեր և զորքը բաժանում երեք մասի: Երկու զորաբանակների հրամանատարներ է նշանակում Անդիկանին և Հազարավուխտին, իսկ մյուս զորաբանակի գլուխն անցնում է Ծապունին ինքը և հրամայում՝ երեք տարբեր տեղերից մտնել և ասպատակել Հայոց աշխարհը:

Ծապունի այս արշավանքի նախապատրաստման մասին ևս նախօրոք իմանում է Արշակ թագավորը: Նա Վասակ սպարապետի միջոցով երկրից անթիվ ու անհաշիվ զորք է հավաքում և շտապում կանխել Ծապունի մուտքը Հայոց աշխարհ: Սակայն ինչքան էլ շտապում են, չեն հասցնում կանխել հարձակումը, և պարսից զորքերը երեք տարբեր ուղղություններով մտնում են Հայաստան:

Արշակ թագավորը ևս իր զորքերը բաժանում է երեք զորաբանակի, մեկը հանձնում Վասակ զորավարին, մյուսը՝ նրա Բագոս անունով եղբորը, մի չտեսնված քաջ ու անվեհեր մարդու, բայց խելքով փոքր-ինչ պակասամիտ, իսկ մյուս զորաբանակի գլուխն անցնում է Արշակն ինքը և հրամայում առաջ շարժվել, գնալ, դեմադդեմ ճակատել պարսից զորքերին:

Վասակ սպարապետը վերցնելով իր զորաբանակը, գալիս և Վանանդ գավառում<sup>3</sup> հանդիպում է Հազարավուխտի զորքերին: Նա հարձակվում է պարսից զորքերի վրա, ցրում, հալածում, հասնում կոտորում է բոլորին: Հազարավուխտի զորքից ոչ մեկը կենդանի չի պրծնում, Վասակը մինչև վերջին մարդը սպանում է, վերցնում է մեծ ռազմավար և փղերի վիթխարի բազմություն:

Նույն ամսի, նույն շաբաթվա նույն օրը Բագոսը իր զորքերի գլուխն անցած գալիս, Բզնունյաց ծովափին հանդիպում է պարսից զորավար Անդիկանի զորաբանակին, որ եկել խոնվել ու ճամբար էր դրել Առեւտի արքայական ձկնորսարանում: Երբ պարսից զորքերն իմանում են հայոց զորքերի մոտենալու մասին, պատրաստվում են ճակատամարտի: Բագոսն իր զորաբանակով գալիս և անմիջապես հարձակվում է պարսից զորքի վրա, բոլորին կոտորում, այդ թվում նաև նրանց զորավար Անդիկանին: Բագոսի դեմ է ելնում փղերի գունդը: Փղերից մեկը շքեղ զարդարված էր և կրում էր արքունական նշաններ: Բագոսը կարծելով, թե այդ փղի վրա է նստած պարսից թագավորը, արագ ձիուց իջնում է, սուրը

<sup>1</sup> Գանձակու էր նիս Ատրպատականում, Թավրիզից հարավ, այժմյան Թահտի Սուլեյման բնակավայրի տեղում: Արշակունիների ժամանակ Հայաստանի արևելյան սահմանը Կասպից ծովի արևմտյան ափերից իջնելով, հասնում էր մինչև այդտեղ:

<sup>2</sup> Վեց հարյուր հազար:

<sup>3</sup> Գավառ Ալյարատյան նահանգում, հասնապատասխանում է այժմյան Կարսի և Սարիղամիշի շրջաններին:

քաշում, մտնում փղի տակ, սուրը փղի փորը խրում: Բագուր չի հասցնում փղի տակից դուրս գալ, փիղն ընկնում է իր վրա, ճզմվում, մեռնում է:

Նույն ամսի, նույն շաբաթվա նույն օրը Արշակ թագավորը գալիս, Բասեն գավառի Ոսիսա կոչված անդում հանդիպում է պարսից Ծապուն թագավորի զորքին:

Արշակը գիշերով հարձակվում է Ծապունի բանակի վրա, բռնորին կոտորում, միայն Ծապունին է հաջողվում մազապուրծ եղած՝ ձիով փախչել, իրեն գցել Պարսից աշխարհը, ազատվել:

Հայոց երեք զորաբանակների հաղթության ավետարներն էր գալիս, մի տեղում հանդիպում են միմյանց, շնորհավորում իրենց տարած հաղթանակը, որի ժամանակ զոհվել էր միայն Բագուր: Հայոց զորքերը միանում են իրար, արշավում Պարսից աշխարհը, հասնում մինչև Խարտիզանի կողմերը, ավերում, սապատակում երկիրը, մեծ քանակությամբ գանձեր, զենքեր, զարդեր ավարի ենթարկում, լիանում են ու հարստանում:

### Մեհրուժան, Ծապուն և Արշակ

Արշակ թագավորի դեմ ապստամբած և Պարսկաստանում ապաստանած Մեհրուժան Արծրունին ներկայանում է Ծապուն թագավորին, երդումով ուխտ դնում, որ հավիտյան հպատակ ու հավատարիմ կննա Ծապուն թագավորին: Իր հավատարմությունն ապացուցելու համար Մեհրուժանը հրաժարվում է քրիստոնեությունից, ընդունում պարսիկների գրադաշտական կրոնը<sup>1</sup>, երկրպագում ու պաշտում արեգակին ու կրակին, ինչպես պարսիկները: Նա խոստանում է Ծապունին, որ եթե նա կարողանա հաղթել Արշակ թագավորին, նվաճել Հայոց աշխարհը, ապա ինքը կվերադառնա իր հայրենիքը, իր սեփական տունը, իր տանը ստորուշան կշիմի և կդարձնի կրակապաշտության տուն:

Ծապունը վստահում է Մեհրուժանի ուխտին ու կրդումին, նրան կնության է տալիս իր Որմիզդուխտ քրոջը, նրան հրովարտակներով մեծ արտոնություններ է շնորհում, բազմաթիվ գյուղեր, դաստակերտներ ու կալվածքներ նվիրում Պարսկաստանում: Ծապունը Մեհրուժանին է խոստանում տալ նաև հայոց թագավորությունը, եթե միայն նա կարողանա հնազանդեցնել նախարարներին և Հայոց աշխարհում տարածել մազդեզական կրոնը:

Մեհրուժանը վստահեցնում է Ծապունին, որ ինքը նրա բոլոր հույսերը կարդարացնի զործով:

Մեհրուժանը Պարսկաստանում մեծ զորք է հավաքում, ինքը անցնում պարսից զորաբանակի գլուխը, հանկարծակի հարձա-



<sup>1</sup> Մազդեզական կամ գրադաշտական կրոնը հին պարսիկների կրոնն էր, որի միակն էր կազմում բնության երևույթների՝ արեգակը, կրակի, լույսի, ջրի պաշտանությունը: Մազդեզական անունն առաջացել է նրանց գերագույն ստեղծող՝ Անուրա-մազդաի անունից, իսկ գրադաշտությունը՝ այդ կրոնի հիմունքներն ու կանոնները մշակող Ջրադաշտ մոզի անունից:

կում գործում Հայոց աշխարհի վրա, մտնում իր սեփական հաշրենիքը, ոտնակոխ անում այն, անխնա հրի ու սրի մատնում այն ամենը, ինչ պատահում է: Նա արագությամբ գրավում է Հայաստանի վերին գավառները, տղամարդկանց փղերի ոտնատակ տալիս, կանանց սայլերի ցցերի վրա բարձրացնելով՝ սպանում, նախարարների կանանց բռնում, բանտարկում է բերդերում, հուսալով ամուսիններին հավատափոխել: Եպիսկոպոսներին ու քահանաներին բռնում, կապում, ուղարկում է Պարսկաստան. ինչ գիրք որ գտնում է հունարեն լեզվով, այրում է և հրամայում հունարեն գրագիտություն չսովորել, այլ միայն պարսկերեն<sup>1</sup>, որպեսզի խափանի քրիստոնեությունը և տարածի պարսից կրոնը:

Հայոց Արշակ թագավորն այդ ժամանակ գտնվում էր Հայաստանի ստորին գավառներում՝ Անգեղ տանը<sup>2</sup>, և զբաղված էր արքայական զորքերին ուտեստ հայթաջթելով:

Վասակ սպարապետը աճապարում է զորք հավաքել. նա հավաքում, կազմակերպում, կարգի է բերում շուրջ տասը հազար քաջ ու ընտիր հեծյալներից բաղկացած հեծելազոր, անցնում է զորքի գլուխը և փութով արշավում պարսից զորքի վրա: Երբ պարսից թագավորի զինվորներն իմանում են, որ իրենց վրա է գալիս Վասակ սպարապետը, կողոպտում են իրենց ձեռքի տակ եղած գավառների մնացած բնակչությանը, մեծ մասին գերի վերցնում և իրենց հետ առնելով, շտապ փախչում են իրենց երկիրը: Վասակ Մամիկոնյանը հետապնդում է պարսից զորքին և Ատրպատականի սահմանն անցնելիս՝ հասնում նրանց: Պարսից զորքերը հայ գերիներին թողնում են և Մեհրուժանի հետ փախչում, ազատվում: Վասակը անչափ ու անհամար գերիների բազմություն է ազատում պարսիկներից և խաղաղությամբ վերադառնում Արշակ թագավորի մոտ:

Բայց Մեհրուժանը դրանով չի բավարարվում: Նա պարսից Ծապուհ թագավորին գրգռում ու լարում է Արշակ թագավորի դեմ, հրահրում նոր պատերազմի: Ծապուհը անսալով Մեհրուժանի չարամիտ խորհուրդներին, զորք է հավաքում, միաժամանակ լրտեսներ ուղարկում Հայոց աշխարհ՝ հետևելու Արշակ թագավորի գործողություններին:

Մինչ Արշակ թագավորը իր զորքով գտնվում էր Ատրպատականի սահմանի մոտ, այդ կողմերից սպասելով պարսիկների հարձակմանը, պարսից զորքերը Մեհրուժանի առաջնորդությամբ և Ծապուհի գլխավորությամբ շուտ են գալիս և բոլորովին հսկառակ կողմից մտնում Հայոց աշխարհ: Նրանք անցնում են Աղձնիքով, Մեծ Ծոփքով, Անգեղ տանով, Անձիտ գավառով, Մզուրով, Դարանաղիով, Եկեղյաց գավառով: Պարսից Ծապուհ թագավորն անթիվ ու անհամար զորքով մտնում է այս գավառները, հեղեղի նման տարածվում: Պարսից զորքերը կրակի ու ավերի են ենթարկում երկիրը, անթիվ, անհամար մարդկանց սրի քաշում, կանանց ու երեխաներին սայլերի ցցերի վրա հանում, մի մասին էլ գցում են կամերի տակ, կախելով սպանում, տղամարդկանց բազմություններ գցում են փղերի տակ, ոտնատակ անում, մեծ քանակությամբ անչափահաս երեխաների գերի տանում:

Նրանք ավերում են շատ ամրոցներ, քանդում շատ անառիկ բերդեր, գրավում են Աղձնիքում գտնվող Տիգրանակերտ քաղաքը, բնակչության մեծ մասին կոտորում, քառասուն հազար ընտանիք գերի տանում: Գալիս պաշարում են Անգեղ ամուր բերդը, ուր կային հայոց Արշակունի շատ թագավորների գերեզմաններ և վաղուց ի վեր պահված շատ գանձեր: Սակայն բերդի անառիկության պատճառով պարսիկները չեն կարողանում այն գրավել, թողնում հեռանում են: Այդպիսի շատ բերդեր պարսիկների համար մնում են անառիկ: Նրանք Մեհրուժանի չար խորհրդով գալիս են Դարանաղիի Անի ամրոցը, ուր թաղված էին հայոց քաջ Արշակունի թագավորները և պահվում էին արքունի գանձերը: Պարսիկները մեծ դժվարությամբ պարիսպներով բարձրանում են բերդը, կործանում պարիսպները, դուրս են բերում անթիվ ու անհամար գանձեր: Նրանք բացում են թագավորների գերեզմանները, հանում ոսկորները և գերի տանում: Չեն կարողանում բանալ միայն Սանատրուկ թագավորի շիրիմը, իր հսկայակառույց, մեծ քարերից պինդ ու ճարտար շինված լինելու պատճառով:

<sup>1</sup> Այդ ժամանակ հայերը դեռևս սեփական գիր ու գրականություն չունեին, դպրոցներում ուսուցանվող լեզուները հունարենն ու ասորերենն էին, եկեղեցում ժամասացությունն ու կարգը կատարվում էր հունարեն կամ ասորերեն, իսկ պաշտոնական գրագրությունը՝ հունարեն և պարսկերեն:

<sup>2</sup> Գավառ Զորորդ Հայրում, տարածվում էր Մեծ Ծոփքից արևելք, Զիրեն գետի վրա ընկած լեռնային շրջանում:

Պարսից գործերը Դարանադից շարժվում են դեպի Բասենի կողմերը, նպատակ ունենալով թիկունքից հարձակվել թագավորի գործերի վրա:

Այդ ժամանակ գուժկան է գալիս հայոց Արշակ թագավորի մոտ, հաչտնում, թե.

— Դու այդտեղ՝ Ատրպատականում նստած, թշնամուն սպասում ես դիմացից, իսկ թշնամիները անցել են քո թիկունքը, ավերում ու կոտորում են երկիրը և հիմա գալիս են քեզ վրա:

Արշակ թագավորն ու Վասակ սպարապետը լսելով այս անակնկալ գույժը, շտապ զորահանդես են անում: Վասակ զորավարի ձեռքի տակ այդ ժամանակ կազմ ու պատրաստ կաշին վաթսուն հազար զինվորներ, բոլորն էլ ընտիր պատերազմողներ, միաբան, միասիրտ, հոժարակամ բոլորն էլ պատրաստ պատերազմի, հանուն իրենց կանանց ու երեխաների, հանուն իրենց հաչրենիքի, իրենց հավատի ու եկեղեցու, հանուն իրենց բնիկ տերերի՝ Արշակունիների: Նրանք պատրաստ էին իրենց կյանքը զոհելու նրանց բոլորի համար, որովհետև թշնամին անգամ իրենց թագավորների ոսկորներն էր հանել և բազում ժողովուրդ տեղահան արած, գերության էր տանում:

Վասակ զորավարն իր վաթսուն հազար քաջերի գլուխն անցած առաջ է շարժվում, Ատրպատականի մի ամուր բերդում թողնելով Արշակ թագավորին իր սպասավորներով: Վասակն իր գործով գալիս հասնում է Հայաստանի միջնաշխարհը՝ Այրարատյան գավառը, ուր պարսից գործը, ինչպես ծովի ավազ կուտակվել ու բանակ էր դրել:

Պարզելով թշնամու գործերի դասավորությունը, Վասակը գիշերով անսպասելի գրոհում է պարսից բանակի վրա, բոլոր գործերին սրի քաշում, և պարսից թագավորը հագիվ ճողոպրելով, մի ձիով փախչում, ազատվում է: Ուրիշ փախչողներ էլ են լինում, որոնց հետապնդում են հալ զինվորները, կոտորում: Դավաճան Մեհրուժանին ևս հաջողվում է փախչել ու ազատվել:

Հայոց գործը պարսիկներից հետ է խլում նրանց հափշտակած թալանն ու ավարը, հայոց գերիների քազմությունը և հալ թագավորների ոսկորները, որոնք պարսիկները գերի էին տանում իրենց երկիրը, հավատալով, որ հայոց թագավորների ոսկորներն իրենց երկիրը տանելով, նրանց փառքը, բախտն ու քաջությունն էլ կանցնի իրենց, կտեղափոխվի իրենց աշխարհը:

Քանի որ հայոց թագավորների ոսկորները պարսիկները խառնել էին իրար և անհնար էր քրիստոնյա թագավորների նշխարները ջոկել հեթանոս թագավորների ոսկորներից, ուստի արժանի չեն համարում դրանք թաղել Վաղարշապատ քաղաքի սրբերի հանգստարանում, այլ տանում թաղում են Արագած լեռան ստորոտում գտնվող Ադձք կոչված ամուր գյուղում<sup>1</sup>, տեղի նեղ ու դժվարամուտ ժայռերի խորշերից մեկում:

Վասակն այնուհետև սկսում է հոգ տանել գերիներին իրենց տեղերը դարձնելու, ավերած երկիրը բարեկարգելու ու նորոգելու, առհասարակ, Հայոց աշխարհում խաղաղություն հաստատելու վրա: Ապա Արշակ թագավորի հետ միասին ամրացնում են երկրի սահմանները և զգուշորեն ու ուշադիր հետևում դրանց պահպանմանը:

### **Վրեժխնդրության պատերազմը պարսից դեմ**

Պարսիկների գործած ավարն ու ավերածությունները հանգիստ չեն տալիս հայոց Արշակ թագավորին:

Նա Հայոց ամբողջ աշխարհը ոտքի է հանում, մեծ զորահավաք կատարում, իր մոտ է հավաքում ավազի բազմությամբ գործ և կովի գնում Պարսից աշխարհի վրա: Միաժամանակ Արշակ թագավորը Վասակի միջոցով օգնության է կանչում Կովկասի լեռնականներին՝ հոներին ու ալաններին, որոնք զինված մեծ բազմություններով գալիս են հայոց թագավորին օգնելու: Այդ նույն ժամանակ պարսից թագավորն էլ իր հերթին իր ամբողջ գործերով շարժվում, գալիս է Հայոց աշխարհի վրա: Հայոց գործերը

<sup>1</sup> Համապատասխանում է այժմյան ՀԽՍՀ Աշտարակի շրջանի Հախա գյուղին, որի մերձակայքում է գտնվում Արշակունի թագավորների այդ դամբարանը:



կանխում են պարսիկների առաջխաղացումը և հասնում նրանց այն ժամանակ, երբ պարսից զորքը դեռևս գտնվում էր Ատրպատականում և բանակ էր դրել Թավրիզ քաղաքի մոտ:

Վասակը երկու հարյուր հազար զորքով վրա է հասնում և հարձակվում պարսից բանակի վրա: Հայերը կոտորում են բոլորին, միայն պարսից թագավորին է հաջողվում ճողոպրել և մի ձիով փախչել: Ամբողջ զորքին կոտորելուց հետո, Վասակի զորքերը բանակից վերցնում են անհաշիվ ավար, զորքի ամբողջ ունեցվածքը, ապա ասպատակում Ատրպատական աշխարհով մեկ, հիմքից կործանում, քարուքանդ անում երկիրը, աստղերի բազմությամբ գերիներ են բերում, մնացած բնակչությանը սրի քաշում և ավելի ամրապնդում Հայոց աշխարհի սահմանները:

Այնուհետև պարսից Ծապուհ թագավորը հայոց Արշակ թագավորից վրեժ առնելու նպատակով քսաներեք անգամ իր տարբեր զորավարների գլխավորությամբ արշավում է Հայոց աշխարհի վրա և ամեն անգամ Վասակ զորավարի և Արշակ թագավորի կողմից չարաչար պարտվում է և պարսից բազմամիլիոն զորքեր կոտորածի մատնում:

### **Նախարարների դժգոհությունն ու ապստամբությունը Արշակից և Հայոց աշխարհի քայքայումը\***

Երևույնչորս տարի Հայոց աշխարհը պատերազմ է մղում պարսից թագավորի դեմ, որից հետո երկու կողմերն էլ՝ հայերն ու պարսիկները, հոգնում են, ձանձրանում տևական կռիվներից, բարոյալքվում:

Հայ նախարարները դժգոհում են իրենց թագավորից և սկսում են լքել նրան, փախչել երկրից կամ առանձնանալ: Այս բարոյալքումն առաջին հերթին սկսվում է ավագներից ու մեծամեծ իշխաններից: Նախ Արշակ թագավորից ապստամբում ու առանձնանում է Աղձնիքի բղեշխն իր ողջ նախարարական տոհմով ու զորքով, բուն Հայաստանից պարսպով անջատում իր երկիրը և գնում ապավինում պարսից Ծապուհ թագավորին: Աղձնիքի օրինակին են հետևում Գուգարքի բղեշխը, Չորա, Կողբ, Գարդմանաձոր գավառների իշխանները, որոնք ապստամբվելով Արշակից, դարձյալ գնում ապավինում են պարսից թագավորին: Արշակի դեմ են ապստամբում Արցախի, Տմորիքի, Կորդիքի ամուր աշխարհները, իսկ Կորդիքի իշխանը գնում ապավինում է պարսից թագավորին:

Հայոց թագավորի դեմ են ապստամբում նաև Ատրպատականի հայոց թագավորական տան սեփական իշխանությունը և Հայաստանի մաս կազմող Կասպից աշխարհը: Իսկ Անձիտի և Մեծ Ծոփքի իշխանները, որոնց աշխարհները գտնվում էին արևմուտքում, ապստամբելով Արշակից, գնում ապավինում են հունաց թագավորին:

Միջնաաշխարհում գտնվող նախարարներն էլ չէին կամենում հնազանդվել իրենց թագավորին, շարունակ երկրնտրանքի մեջ էին և նրանից դժգոհ:

Այսպես սկսվում է հայոց թագավորության քայքայումն ու թուլացումը:

Հայոց աշխարհի մնացած մեծամեծները, նախարարները, երկրի կուսակալները, գավառատերերը, գործակալներն ու գյուղապետները բոլորը հավաքվում, գալիս են Ներսես Մեծ կաթողիկոսի մոտ բողոքի և ասում.

— Տեր, դու ինքդ գիտես, որ արդեն երեսուն տարի է, ինչ մենք պատերազմից հանգիստ չենք ունեցել, շարունակ մեր երեսի քրտինքը՝ սրբել ենք սրերով, նիզակների տեգերով, նետասլաքներով: Մենք այլևս չենք կարող դիմանալ, այլևս չենք կարող պատերազմի դուրս գալ: Ավելի լավ է մենք ևս հպատակվենք պարսից թագավորին. ինչպես արեցին մեր ընկերները: Եթե Արշակ թագավորը կամենում է Ծապուհի հետ կռվել, թող Վասակի և իր աներոջ՝ Անդոկի հետ միասին ելնի պատերազմի, Հայոց աշխարհից այլևս ոչ ոք նրան չի գնա օգնության: Եթե Արշակն ուզում է, թող կռվի, եթե չի ուզում, թող չկռվի, իր կամքն է, մենք նրան լքել ենք արդեն:

Ներսեսը լսելով նրանց բողոքը, իր պաշտոնին վաչել սառնասրտությամբ համոզում էր, խորհուրդ տալիս:

\* Շարադրված է ըստ Փ. Բուզանդի «Հայոց սլատնություն»:

— Լնվ մտածեք, հիշեցեք տիրոջ պատվիրանը միաբանության մասին, հիշեցեք, որ ծառաները պետք է հնազանդ լինեն իրենց տերերին: Դուք միթե մոռանում եք, որ բուրդ այսօր ձեր գոյությամբ պարտական եք Արշակունյաց տոհմին, որ ձեզանից շատերը այսօրվա դիրքը, ունեցվածքը, պաշտոնները ստացել են Արշակ թագավորից: Մոռացել եք, որ եթե այսօր ձեզանից ոմանք գավառների տերեր են, աշխարհների կառավարիչներ ու մեծամեծներ, խոշոր ավանների, գյուղերի, դաստակերտների, գանձերի ու կալվածքների տեր են դարձել, սպա միմիայն շնորհիվ Արշակունիների և Արշակ թագավորի:

Իհարկե, Արշակունյաց պիղծ տոհմը հանցանքներ ունի գործած աստծո առաջ. բայց միթե դա ձեզ հիմք է տալիս լքել ձեր սեփական արքայատոհմը, որը ձեզ աղբից է վերև բարձրացրել, ապրեցրել, մեկիդ գործի դրել, մյուսիդ պատիվ տվել, երրորդիդ՝ իշխանություն, չորրորդիդ՝ գործակալություն:

Արշակ թագավորն ինքն էլ մեղքեր է գործել, — շարունակում է Ներսեսը, — անօրինություններ կատարել, բայց աստված իր մեծ մարդասիրությամբ խնայեց նրան, նրա հետ միասին նաև ձեզ: Իսկ դուք այժմ եկել կանգնել եք, ուզում եք լքել ձեր սեփական թագավորին, ձեր հովանավորին, ձեր բնիկ տիրոջը և կամենում եք գնալ օտար թագավորի ենթարկվել, հեթանոսների ծառայության տակ ընկնել, օտար տերերի լծին հնազանդվել: Արշակը որքան էլ չար լինի՝ աստվածապաշտ է, որքան էլ մեղավոր լինի՝ ձեր թագավորն է:

Դուք ինքներդ եք միշտ ինձ ասել ու քիչ առաջ էլ ասացիք, որ այսքան տարի կովել եք ձեր անձանց ու հոգիների համար, ձեր աշխարհի համար, ձեր կանանց ու երեխաների համար, ձեր եկեղեցիների, ձեր հավատի ուխտի համար, և ձեր տեր աստվածը ձեզ միշտ հաղթություն է շնորհել իր անվան համար:

Հիմա դուք ձեր Քրիստոսի փոխարեն ուզում եք ծառայել անօրենների անաստված մոգական կրոնին և նրա սպասավորներին: Դրանով դուք ձեզ հավերժ կմատնեք օտարների ստրկատիրական ծառայության և այնուհետև որքան էլ բողոքեք աստծուն, նա ձեզ այլևս չի լսի, որովհետև դուք ինքներդ եք մտնում օտար ու խստասիրտ տերերի, անգետ ու անգույթ հեթանոսների ծառայության տակ: Եվ դուք շատ ու շատ չարիքների կհանդիպեք, որոնցից երբեք չեք կարողանա ազատվել:

Ներսեսի այս խոսքերի վրա հավաքվածները սկսում են դժգոհության ձայներ բարձրացնել և բողոքով աղաղակել.

— Մենք քո այդ խորհուրդներն ու խոսքերը չենք կամենում ընդունել: Վեր կացեք գնանք մեր տները: Եվ նրանք դժգոհ ու զայրացած ցրվում, քաշվում գնում են իրենց տները:

### **Ծապուհը Արշակին հրավիրում է Պարսկաստան\***

Այդ ժամանակ պարսից Ծապուհ թագավորը մեծ ընծաներով, հրովարտակներով պատգամավորներ է ուղարկում Արշակ թագավորի մոտ, սիրով ու աղաչանքով խնդրում նրան գալ Պարսկաստան, որպեսզի խաղաղության ու բարեկամության դաշինք կնքեն:

Արշակ թագավորը թեպետ հաշտության կողմնակից չէր և կամենում էր շարունակել պատերազմը, բայց տեսնելով, որ ամբողջ գորքը, իշխաններն ու նախարարները հոգնել են կոիվներից և այլևս չեն կամենում պատերազմել, ստիպված ընդունում է Ծապուհի դեսպաններին և ինքն էլ իր կողմից Ծապուհին ընծաներ ու հրովարտակներ ուղարկում:

Ծապուհը դարձյալ պատգամավորներ է ուղարկում Արշակի մոտ, խնդրում նրան գալ Պարսկաստան՝ հետևյալ խոսքերով.

— Եթե դու ընդունում ես իմ առաջարկած հաշտության պայմանը և քեզ ինձ հետ հաշտ ես համարում, ապա եկ, հանդիպենք, տեսակցենք միմյանց և այնուհետև հայր ու որդու նման լինենք իրար նկատմամբ: Իսկ եթե չես կամենում ինձ տեսնել, նշանակում է դարձյալ պատերազմ ես ուզում բորբոքել երկուսիս միջև:

Երբ Արշակին հաշտնում են Ծապուհի այս պատգամը, Արշակն ապահով լինելու համար Ծապուհից

\* Ծարարված է ըստ Փ. Բուզանդի «Հայոց պատմության»:

խնդրում է ուխտի հավատարմության երդում ուղարկել: Ծապուն թագավորը հոժարում է, երդման համար աղ է քերել տալիս, աղի վրա երդվում, աղը կնքում վարագագիր մատանիով<sup>1</sup>, ողբարկում Արշակ թագավորին և պատվիրում, որ եթե այդ երդումից հետո էլ Արշակը չգա, ապա թող պատրաստվի պատերազմի:

Հայոց աշխարհի մեծամեծներն ու իշխանները և առհասարակ բոլոր մարդիկ, երբ իմանում են այդ, ստիպում են Արշակ թագավորին, շտապեցնում, որ նա գնա, ներկայանա պարսից Ծապուն թագավորին:

Արշակ թագավորը ստիպված իր հետ է վերցնում իր դստակ Վասակ սպարապետին և ճանապարհ ընկնում, գնում Պարսկաստան, Ծապուն թագավորի մոտ: Կրանք գալիս, ներկայանում են Ծապուն թագավորին:

Ծապունը խիստ նախատում է Արշակին իբրև ծառայի, իսկ Արշակը իրեն հանցավոր ու մահապարտ է համարում Ծապունի առաջ:

Ծապունը Արշակին ու Վասակին հանձնում է իր ազնվական թիկնապահ գնդին, որ նրանց պահեն ազատ, բայց հսկողության տակ:

### **Ծապունը Արշակին փորձում է հայրենի հողով ու ջրով\***

Ծապունին իր մոտ է կանչում հմայող կախարդներին, աստղագետներին ու աստղագուշակներին և նրանցից Արշակի մասին խորհուրդ հարցնում:

— Ես շատ անգամ կամեցա սիրել հայոց Արշակ թագավորին, — ասում է Ծապունը, — բայց նա ինձ միշտ անարգեց: Բնոր անգամ կամեցա նրան բարիքներ գործել, ինչպես հայրը սեփական որդուն, իսկ նա իմ բարիքների դիմաց ինձ միայն չարիքով հատուցեց: Ես նրա հետ խաղաղության դաշինք կնքեցի, որի համար նա երդվեց քրիստոնեական կրոնի գլխավոր սրբության՝ ավետարանի վրա, բայց նա դրժեց այդ երդումը:

Ես կանչեցի Տիգրան քաղաքի եկեղեցու քահանաներին, որոնք երդվեցրել էին Արշակին ավետարանի վրա, նախատեցի նրանց, կարծելով, թե նրանք նենգորեն կեղծ երդում են կատարել տվել Արշակին: Նրանց գլխավորը՝ Մարի քահանան ինձ ասաց, որ «Մենք նրան արդարությամբ երդվեցրինք, իսկ եթե նա իր երդումը դրժեց, ապա նույն ավետարանը մի օր նրան ձեզ մոտ կբերի»:

Ես նրան չհավատացի և բոլոր շրթանասուն քահանաներին էլ մորթել տվեցի, իսկ նրանց հավատակիցներին սրի քաշեցի: Այն ավետարանը, որի վրա երդվեց Արշակ թագավորը, շղթաներով կապեցի, և այժմ պահվում է իմ գանձարանում:

Հիմա հավատացի Մարի քահանայապետի խոսքերին, թե այդ ավետարանը Արշակին մի օր ինձ մոտ կբերի:

Հայոց Արշակ թագավորը, որ երեսուն տարի անընդմեջ արչաց հետ պատերազմ մղեց, և մենք նրան չկարողացանք հաղթել, այժմ ինքն է իր ոտով մեզ մոտ եկել:

Հիմա դուք ինձ խորհուրդ տվեք, — շարունակում է Ծապունը, — եթե ստույգ իմանամ և համոզվեմ, որ Արշակն այսուհետև հնազանդության անկեղծ ուխտով հաստատ կմնա իմ պաշմանին, ապա մեծարանքներով, պատվով ու հարգանքով նրան կրկին խաղաղությամբ կուղարկեմ իր աշխարհը:

Գուշակողները Ծապունիին ասում են.

— Աչսօր մեզ ժամանակ տուր, վաղը քեզ կպատասխանենք:

Հաջորդ օրը բոլոր հմայողներն ու գուշակողները հավաքվում, գալիս են Ծապունի մոտ, հարցնում.

— Հիմա որ Արշակ թագավորը քեզ մոտ է եկել, ինչպե՞ս է իրեն պահում, ինչպե՞ս է քեզ հետ խոսում, ի՞նչ լեզու է բանեցնում:

<sup>1</sup> Հնում թագավորների և իշխանների կնիքը հաճախ իրենց մատանիների վրա ամրացված թանկագին քարերն էին, որոնց վրա փորագրված էր լինում կնք իրենց անունը, կնք իրենց տոհմի խորհրդանշանը: Վարուզդ պարսիկների, այդ թվում նաև պարթև Արշակունիների պաշտած կենդանին էր, և նրա պատկերը սուրբ ու խորհրդանշական էր համարվում: Վարագագիր մատանին՝ մատանու քարի վրա փորագրված վարագի պատկերն էր, որ ծառայում էր իբրև կնիք, և նրա դրոշմը նվիրական ու անխախտ էր համարվում ինչպես պարսից Սասանյան թագավորների, այնպես էլ Արշակունիների համար:

\* Ծարագրված է ըստ Փ. Բուզանդի «Հայոց պատմության»:

Ծապուհին ասում է.

— Նա իրեն համարում է իմ ծառաներից մեկը, ուզում է անգամ իմ ոտքի հողը դառնալ:

— Այժմ լսիր մեզ և արև այն, ինչ ասում ենք, — խորհուրդ են տալիս գուշակողները. — Արշակին այստեղ պահիր, մարդիկ ուղարկիր Հայոց աշխարհ, այնտեղից բերել տուր երկու բեռ հող և մի աման ջուր: Ապա հրաման կտաս, որ քո սենյակի հատակի կեսի վրա շաղ տան Հայաստանից բերած հողը, վրան ցանեն հայոց ջուրը. ինքդ կրոնես Արշակ թագավորի ձեռք, նախ կտանես սենյակի այն մասը, որտեղ բնական հատակն է և այնտեղ նրան հարցուփորձ կանես: Հետո նրա ձեռք բռնած կտանես հայկական հող ու ջուր շաղ տված տեղը և կլսես՝ ինչ որ կասի. այն ժամանակ կիմանաս, եթե նրան ազատ արձակելու լինես Հայաստան, քեզ հետ կապած ուխտն ու դաշինքը հավատարմությամբ կպահի՞, թե ոչ: Իմացիր, եթե Արշակը հայկական հողի ու ջրի վրա քեզ հետ խիստ լեզվով խոսի, ապա համոզված եղիր, որ Հայաստան հասնելուն պես՝ հենց նույն օրը, նույն լեզուն կբանեցնի, նույն պատերազմը կնորոգի քո դեմ, նույն կոիվները, նույն թշնամությունը կշարունակի:

Պարսից թագավորը լսելով հմայողների և գուշակների այս խորհուրդը, ուղտերով մարդիկ է ուղարկում Հայոց աշխարհ՝ հող ու ջուր բերելու: Մի քանի օր անց նրանք Հայաստանից երկու բեռ հող ու ջուր են բերում: Ծապուհը հրամայում է իր սենյակի հատակի կեսի վրա շաղ տալ Հայաստանից բերած հողը, վրան ջուր ցանել, իսկ մյուս կեսը թողնել իր բնական հողե հատակով: Ապա Արշակ թագավորին կանչել է տալիս իր մոտ, մնացած պալատականներին հեռացնում սենյակից, բռնում է Արշակի ձեռք, ճնմում ընդարձակ սենյակում և հետը բարեկամաբար գրուցում: Երբ ճեմում են պարսկական հողի վրա, Ծապուհը դիմում է Արշակին հետևյալ հարցով.

— Արշակ թագավոր հաչից, դու ինչիս ինձ թշնամի դարձար, չէ որ ես քեզ որդու պես էի սիրում, կամեցա նույնիսկ աղջիկս քեզ կնության տալ, քեզ իմ զավակը դարձնել: Իսկ դու իմ արած լավության փոխարեն ավելի դեմս խստացար, ինքնահաճ ձևով, հակառակ իմ կամքի՝ ինձ թշնամի դարձար, և ահա ամբողջ երեսուն տարի իմ դեմ պատերազմ մղեցիր:


Արշակը համեստորեն պատասխանում է.

— Մեղանչել եմ և հանցավոր եմ քո առաջ. ես եկա, քո թշնամիներին հաղթեցի, բոլորին կոտորեցի, հույս ունեի քեզանից մեծ պարգևներ ստանալ, բայց իմ թշնամիներն ինձ մոլորեցրին, քեզանից վախեցրին և ստիպեցին փախչել: Եվ իմ երդումը, որով քեզ երդվեցի, ինձ քո առաջը բերեց: Ես ահա եկել եմ քո առաջ, քո ծառան եմ, քո ձեռքում, ինչպես ուզում ես՝ վարվիր ինձ հետ. եթե կամենում ես՝ սպանիր, որովհետև ես՝ քո ծառան, հանցավոր եմ քո դեմ, մահապարտ եմ:

Ծապուհն այնուհետև Արշակի ձեռք բռնած, միամիտ ձևանալով, ձեմելով բերում է նրան, կանգնեցնում հայկական հող ու ջուր լցրած հատակի վրա: Երբ Արշակը ոտը դնում է հայկական հողի վրա, լրիվ կերպարանափոխվում է, ըմբոստանում, հպարտ կեցվածք ընդունում և խրոխտ հանդիմանությամբ դիմում Ծապուհին.

— Հեռու ինձանից, չարագործ ծառան, որ այսօր քո տերերի վրա տեր ես դարձել, հափշտակել քո տերերի գահը: Ես չեմ ների քեզ ու քո որդիներին իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը: Դուք՝ ծառաներդ, մեր Արշակունիների՝ ձեր նախնիներին տերերի, բարձն եք հափշտակել. ես այդ թույլ չեմ տա, մենք պետք է մեր տեղը գրավենք<sup>1</sup>:

<sup>1</sup> Արշակի խոսքն այստեղ վերաբերում է պարսից Սասանյան տոհմի կողմից պարթև Արշակունիներին տապալելու և նրանց փոխարեն թագավորելու պատմական իրողությանը: Արտավանը Պարսկաստանի Արշակունի արքայատոհմի վերջին թագավորն էր, որ իշխել է 216 — 226 թթ.: Նրան սպանում է պարսիկ իշխաններից մեկը՝ Արտաշիր Սասանյանը, դառնում թագավոր և հիմք դնում Սասանյան արքայատոհմի տիրապետությանը: Ծապուհ թագավորը Սասանյան տոհմի ժառանգորդներից էր, իսկ Արշակը՝ պարթև Արշակունիների մեկ ճյուղը կազմող՝ հայոց Արշակունի արքայատոհմի ժառանգներից: Հայոց Արշակունիները, ինչպես տեսել ենք նախորդ գլուխներում, իրենց ազգակից պարթև Արշակունիներին գահընկեց անելու համար միշտ ոխ ու վրեժ-խընդրություն էին տածում Սասանյանների նկատմամբ: Արշակի այն արտահայտությունը, թե «Դուք՝ ծառաներդ, մեր Արշակունիների՝ ձեր տերերի, բարձն (գահ) եք հափշտակել» ակնարկում է այն իրողությունը, որ Արտաշիր Սասանյանը պարթև Արշակունիներին հպատակ, նրանց ծառայության մեջ գտնվող իշխան է եղել: Իսկ հայ Արշակունիները, այդ թվում նաև Արշակը, իրենց համարում էին Արշակունիների մեջ ավագագույնը, սերված պարթև Արշակ մեծի սերունդներից՝ և իրենց իրավունք էին վերապահում խոսելու Սասանյանների կողմից հափշտակված Արշակունիների գահի մասին, իբրև տոհմային սեփականության:



Ծապունի, Արշակի ձեռք բռնած, դարձյալ տանում է պարսկական հողի վրա: Ուղե դնելով պարսկական հողին, Արշակն սկսում է զոջալ իր ասածների համար, խոնարհվում Ծապունի առաջ, ոտքերն բնկնում, ներողություն խնդրում:

Իսկ Ծապունի նրան նորից տանում է հայկական հողի վրա, ուր Արշակը սկսում է նախկինից ավելի խիստ ու դաժան խոսքեր ուղղել պարսից թագավորին: Ծապունի նորից է Արշակին բերում պարսից հողի վրա, որտեղ դարձյալ Արշակն սկսում է զոջալ ու ապաշխարել:

Այսպես՝ Ծապունի ամբողջ օրը, առավոտից մինչև երեկո, բազմիցս փորձում է Արշակ թագավորին, և ամեն անգամ հայկական հող ու ջրի վրա Արշակը արքայական հպարտությամբ ու խիստ խոսքերով դատապարտում էր պարսից թագավորին, իսկ պարսից հողի վրա՝ զոջում իր արարքներն ու խոնարհվում նրան:

Երեկոյան պարսից թագավորը, սովորություն էր դարձրել Արշակ թագավորին միշտ բնթիքի հրավիրել իր մոտ:

Նա Արշակին իր կողքն էր նստեցնում, միևնույն թախտի վրա, բազմեցնում միևնույն գահին:

Իսկ այդ օրը Ծապուն թագավորը հրամայում է ամենաբարձր տեղում իր բազմոցը դնել, որից հետո հերթականությամբ շարել մնացած թագավորների բազմոցները, իսկ հաջոց թագավորի բազմոցը դնել բոլորից վերջը, ներքևում և տակը հայկական հող ու ջուր շող տալ:

Երբ բոլորը հրավիրվում են բնթիքի, և յուրաքանչյուրը բազմում է իր բազմոցին ըստ իր աստիճանի, բերում են Արշակ թագավորին և բազմեցնում ամենավերջում՝ իրեն հատկացված տեղում, ուր հայկական հող ու ջուր էր շող տրված: Արշակը մի պահ ուռածփքված նստում է, բայց հետո բնդոստ ոտքի է ելնում և խրոխտ դիմում Ծապուն թագավորին.

— Ի՛մն է այդ տեղը, որտեղ բազմել ես դու, վեր կաց անմիջապես այդտեղից, որ ես այդտեղ բազմեմ, դա մեր տոհմի տեղն է եղել: Իսկ եթե իմ երկիրը հասնեն, ապա քեզանից խստությամբ վրեժ կլուծեն:

Պարսից Ծապուն թագավորն անմիջապես հրաման է տալիս շղթաներ բերել, գցել Արշակի վիզը, ոտներին ու ձևոներին կապանք դնել և տանել, բանտարկել հենավոր Անհուշ բերդում, մինչև իր մահը:

## Վասակ և Ծապոնի\*

Հաջորդ օրը Ծապոնի թագավորը հրամայում է իր առաջը բերել Մեծ Հայքի զորավար սպարապետ Վասակ Մամիկոնյանին: Վասակը կարճահասակ էր և փոքրամարմին. երբ նրան կանգնեցնում են Ծապոնի առաջ, վերջինս սկսում է անարգել և վիրավորել նրա անձը:

— Աղվես, — ասում է Ծապոնին Վասակին, — դժու էիր այն խանգարիչը, որ այսքան տարի մեզ շարշարանքի դատապարտեցիր, դժու էիր, որ այսքան տարի կոտորում էիր արիներին. հիմա ինչպես ես, որ քեզ աղվեսի մահով սպանեմ:

Վասակը աներկյուղ պատասխան է տալիս նրան, ասում.

— Իմ փոքր մարմինը հիմա տեսար, բայց միթե իմ մեծության չափը չես զգացել: Այդ ինչպես էր, որ մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ հիմա դարձա աղվես: Բայց երբ ես Վասակն էի՝ Հայոց մեծ սպարապետը, հսկա էի. մի ոտս մի լեռան վրա էր դրված, մյուս ոտս՝ մի այլ լեռան. երբ այդ ոտիս վրա էի հենվում՝ այդ լեռն էր գետին խրվում, երբ ձախ ոտիս վրա էի հենվում՝ ձախ լեռն էր գետին խրվում:

— Ասան, իմանանք, այդ ինչ լեռներ են, որ դու գետին էիր խրում, — հարցնում է Ծապոնին:

Վասակը պատասխանում է.

— Լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ հունաց թագավորը: Քանի դեռ աստված հաշտ էր մեզ հետ, քեզ էլ էի գետին տանում, հունաց թագավորին էլ: Քանի դեռ մեր հոր՝ Ներսեսի օրհնությունը մեզ վրա էր, նրա խրատով էինք շարժվում, կարողանում էինք քեզ լավ խրատ տալ: Հիմա, ափսոս, խորխորատի մեջ ենք ընկել, ուժը քո ձեռքին է, հիմա ինչ ուզում ես արա:

\* Ծապոնի թագավորը հրամայում է Վասակ զորավարին մորթազերծ անել, մորթին տիկ հանել, մեջը խոտ լցնել և տանել նույն Անհուշ կոչված բերդը, ուր բանտարկված էր Արշակ թագավորը և պահել այնտեղ:

## Ծապոն և Փառանձեմ\*\*

Արշակին բանտարկելուց և Վասակին սպանելուց հետո պարսից Ծապոնի թագավորը հիմա հարչուր բչուր գորքով իր Զիկ և Կարեն զորավարներին ուղարկում է Հայոց աշխարհի վրա, որ զան կործանեն ու քարուքանդ անեն: Երբ Հայոց աշխարհի տիկինը՝ Արշակ թագավորի կին Փառանձեմը, տեսնում է, որ պարսից թագավորի զորքերը լցվում են Հայաստան, իր հետ վերցնում է ազատներից բաղկացած տասնմեկ հազար լավ սպառազինված, քաջ ու բնտիր պատերազմող մարտիկներ և պարսից զորքերից խույս տալով, գնում ամրանում է Արշարունյաց գավառում գտնվող Արտագերս ամրոցում:

Պարսից բոլոր զորքերն այդ իմանալով, գալիս, շրջապատում են բերդը, պաշարում, բանակ զարկում, նստում բերդը շրջապատող ձորերի շուրջը: Իսկ բերդում պաշարվածները հույսը դնում են տեղի ամրության և բերդի անառիկության վրա:

Պարսիկները տասներեք ամիս պաշարում են բերդը, բայց տեղի ամրության պատճառով չեն կարողանում գրավել: Այդ ընթացքում նրանք գնում, ավերում, քարուքանդ են անում շրջակա գավառներն ու երկրները, ավարի ենթարկում, բազմաթիվ մարդիկ ու անասուններ գերում, բերում իրենց բանակը, այլ տեղերից պարեն ու կենսամթերք են բերում, ուտում և բերդը պաշարման մեջ պահում:

Արշակ թագավորի որդի Պապը այդ ժամանակ պատանդ էր հունաց թագավորի մոտ:

Հայոց ազատների տոհմերից բաղկացած ամբողջ բանակը, որի զորագլուխն էր Վասակ սպարապետի որդի Մուշեղը, գնացել էր Հունաց աշխարհը՝ իրենց Պապ արքայորդու մոտ և բանակցություններ էր վարում հունաց թագավորի հետ, համոզում նրան, որ իրենց թիկունք և զորավիգ լինի պարսից Ծապոնի թագավորին դիմադրելու համար: Մուշեղը պարբերաբար սուրհանդակներ էր ուղարկում Հայոց աշխարհի տիկնոջ՝ Փառանձեմի մոտ, որ տոկա, համբերի, բերդը պաշտպանի, մինչև իր օգնության

\* Ծարադրված է ըստ Փ. Բուզանդի «Հայոց պատմության»:

\*\* Ծարադրված է ըստ Փ. Բուզանդի «Հայոց պատմության»:

հասնելը: Պապն էլ իր հերթին, գրեթե յուրաքանչյուր շաբաթ պատվիրակներ էր ուղարկում Արտագերս, որոնք գալիս, գաղտնի մուտքով մի կերպ մտնում էին ամրոց, Փառանձեմին սիրտ էին տալիս, հուսադրում, ասում. «Պինդ կ'նց, Պապ որդիդ գալիս է, կայսերական գունդ է բերում քեզ օգնության»: Այդպես, տասներեք ամիս շարունակ նրանք գալիս, քաջալերում էին Փառանձեմ տիկնոջը, թե՛ «Մի քիչ էլ, մի փոքր ժամանակ էլ համբերիր, քեզ օգնության կհասանենք»:

Պաշարման տասնչորսերորդ ամսից հետո բերդում ապաստանածների մեջ ժանտախտ է ընկնում: Մի անգամ Փառանձեմ տիկինը իր սեղանատանը նստած սեղանակիցների հետ ուտում, խմում, ուրախանում էր, երբ հանկարծ մի ժամում միանգամից հարշուր մարդ մեռան, մյուս սեղանատանը՝ երկու հարշուր մարդ: Պատահում էր, որ ճաշի ժամանակ, բոլորը սեղանի շուրջը բազմած ճաշում էին, հանկարծ հինգ հարշուր մարդ էր մահանում: Այդ մահաբեր հիվանդությունը սկսվելուց հետո, մեկ ամիս չանցած, պաշարվածներից մոտ տասնմեկ հազար տղամարդ և վեց հազար կին է կոտորվում: Բերդում եղածներից կենդանի են մնում միայն Փառանձեմ տիկինը՝ իր երկու նաժիշտներով:

Եվ մի օր, երբ Փառանձեմը իր նաժիշտների հետ տխուր ու հուսահատ նստած էր իր առանձնասենյակում, բերդի գաղտնի մուտքով ամրոց է մտնում պալատական ներքինի Հայր մարդպետը<sup>1</sup> և սկսում նախատել Փառանձեմ տիկնոջը՝ իբրև մի փողոցային կնոջ: Նա լուսանքի ու նախատինքի հեղեղ է թափում Արշակունյաց տոհմի վրա, նրանց համարում տմարդի, չարագործ, Հայոց աշխարհի կործանման պատճառ և վերջում ավելացնում, թե՛

— Տեղն է, ինչ որ ձեզ պատահեց, դուք արժանի եք դրան, դեռ սրանից էլ վատթարն է ձեզ պատահելու:

Ասում է, անպատվում և գաղտնի մուտքից դուրս գալով՝ փախչում:

Փառանձեմ տիկինը այս ամենից հուսաբեկված, ճարահատյալ բերդի դարպասները բացում է պարսից զորքի առջև: Պարսիկները մտնում են բերդ, բռնում Փառանձեմ տիկնոջը, բերդից իջեցնում ցած: Ապա բերդ են բարձրանում պարսից զորավարները, ավարի ենթարկում ամրոցում պահվող հայոց թագավորների գանձերը, բոլորը ցած իջեցնում: Ինչ օր, ինչ գիշեր շարունակ պարսից զորքերը բերդից իջեցնում են այնտեղ ամբարված հայոց արքունական ունեցվածքը և Հայոց աշխարհի տիկնոջ հետ գերի տանում:

Այնուհետև պարսից զորքերը մտնում են Հայոց աշխարհի գրեթե բոլոր նշանավոր քաղաքները՝ Արտաշատ, Վաղարշապատ, Զարեհավան, Զարիշատ, Վան, Նախճավան, բոլորը քանդում, ավերում, բնակիչների մեծ մասին՝ հայերին ու հրեաներին, տեղահան անում, գերի տանում: Պարսից զորավարները Հայոց աշխարհի մնացած բնակչությանը հպատակեցնելու համար վերակացուներ են թողնում, վերցնում են Փառանձեմ տիկնոջը իր մեծաքանակ գանձերով, քաղաքներից տեղահանված հարյուր հազարավոր հայ ու հրեա գերիներով, տանում Պարսից աշխարհը:

Երբ Փառանձեմ տիկնոջը, Հայոց աշխարհի բոլոր գերիներին ու գանձերը բերում, հանում են Ծապուռ թագավորի առաջ, Ծապուռը մեծ գոհունակությամբ շնորհակալություն է հայտնում իր Զիկ և Կարեն զորավարներին, ապա չարախնդությամբ վճռում է ստորացնել, նսեմացնել և մեծ վիրավորանք հասցնել Արշակունյաց ամբողջ տոհմին, Հայոց աշխարհին ու թագավորությանը: Նա հրամայում է կանչել իր բոլոր զորքերին, մեծամեծներին, ստորին պաշտոնյաներին և իր հպատակ բոլոր մարդկանց: Նա այս բազմության մեջ է բերել տալիս, կանգնեցնում Հայոց աշխարհի Փառանձեմ տիկնոջը: Ապա հրամայում է հրապարակում մի սարք պատրաստել, որի վրա պտակեցնում են Փառանձեմ տիկնոջը, ամբողջ բազմության առաջ խայտառակում նրան, սպանում: Իսկ գերիներին տանում, մի մասին բնակեցնում են Ասորեստանում, մյուս մասին՝ Խուժաստան երկրում<sup>2</sup>:

<sup>1</sup> Մարդպետ՝ Արշակունիների ժամանակ արքունի պալատի ներքինապետ, կանանց վերահսկիչ: «Հայր» հատուկ անուն չէ, այլ ներքինապետի հարգայից կոչումը:

<sup>2</sup> Նաև Խուժաստան կամ Խուզաստան, գավառ Իրանում, գտնվում է Պարսից ծոցի հյուսիս-արևմուտքում, այժմյան Իրաքի սահմանի մերձակայքում:

## Ծապուհը խայտառակում է հայ ազնվական կանանց\*

Պարսից Ծապուհ թագավորը հավաքում է իր իշխանության տակ եղած բոլոր զորքերը, հայոց դավանան իշխաններ Վահան Մամիկոնյանի և Մեհրուժան Արծրունու առաջնորդությամբ գալիս է Հայոց աշխարհը, ասպատակում, բոլորին գերի վերցնում, բերում, հավաքում Բագրևանդ գավառի Զարեհավան քաղաքի ավերակներում: Հայոց նախարարներից շատերը թողնում են իրենց ընտանիքները, կին, որդի, փախչում, ցրվում են այս ու այն կողմ: Պարսից ասպատակիչները հավաքում են փախած հայ նախարարների կանանց, բերում Զարեհավան քաղաքի մերձակայքում բանակ դրած Ծապուհի մոտ:

Պարսից Ծապուհ թագավորը հրաման է տալիս գերված բոլոր չափահաս տղամարդկանց փղերի ոտների տակը գցել, տրորել, իսկ կանանց ու երեխաներին, բացառությամբ նախարարների կանանց, սալերի ցցերի վրա հանել: Այդ ձևով հազարավոր ու բյուրավոր մարդիկ են կոտորվում, թիվ ու հաշիվ չկար սպանվածներին:

Այնուհետև Ծապուհ թագավորը հրամայում է փախած հայ նախարարների ու ազատների կանանց հավաքել, բերել Զարեհավան քաղաքի ձիարշավարանի հրապարակը, որի մոտակայքում խիստ էր իր արքայական վրանը: Նա մերկացնել է տալիս բոլոր ազնվական կանանց, նստեցնում հրապարակի երկու կողմերում, իսկ ինքը ձի հեծած՝ անցնում էր կանանց միջով. ով որ իր աչքին դուր էր գալիս, մեկ-մեկ տանում էր իր վրանը, անպատվում, բաց թողնում: Այդպես օրեր շարունակ նա անպատվում է հայ նախարարների բոլոր աչքի ընկնող կանանց: Ապա Ծապուհը հրաման է տալիս Հայաստանի ամուր ու անուռիկ տեղերում բերդեր կառուցել, ազնվական կանանց խումբ-խումբ տեղավորել այդ բերդերում: Նա այդ բերդերի վրա բերդակալներ է նշանակում և հրամայում նրանց, որ եթե բերդերում պահված կանանց ամուսինները չհնազանդվեն իրեն, չվերադառնան ու իր իշխանության տակ չմտնեն, ապա նրանց բռնորդի կանանց չարաչար մահով կսպանեն:

Ծապուհը բերդակալների վրա իշխան է կարգում Զիկ և Կարեն զորավարներին, նրանց մոտ թողնում բազմաթիվ զորք, իսկ Հայոց աշխարհի մնացորդների վրա իշխելու իրավունքը հանձնում է Վահան Մամիկոնյանին և Մեհրուժանին, ինքը թողնում հեռանում է Ատրպատական:

Հավատափոխ եղած այս երկու դավաճան իշխանները՝ Վահան Մամիկոնյանն ու Մեհրուժան Արծրունին, որոնք ընդունել էին պարսից զրադաշտական կրոնը, սկսում են Հայոց աշխարհի բոլոր կողմերում եկեղեցիներն ավերել, իրենց ձեռքն ընկած մարդկանց ստիպում հավատափոխ լինել և ընդունել մազդեզական կրոնը:

Նրանք հրամայում են կանանց պահպանող բերդակալներին, որ իրենց բերդերում պահվող նախարարների կանանց ստիպեն ընդունել պարսից կրոնը, իսկ հրաժարվողներին չարաչար սպանել:

Բերդակալներն այդ հրամանը ստանալով, սկսում են իրենց բերդերում պահված կանանց ստիպել, նեղել, տանջել: Բայց նրանցից ոչ մեկը հանձն չի առնում ուրանալ քրիստոնեությունը: Այնժամ բոլոր բերդերում պահված բոլոր նախարարների կանանց չարաչար տանջանքներով սպանում են:

Վահան Մամիկոնյանը մի ազգակցուհի ուներ Մամիկոնյան տոհմից, անունը Համագասպուհի. նա կինն էր Ռշտունյաց գավառի Գարեգին իշխանի և Վարդանի քույրը: Գարեգինն էլ մեկն էր այն նախարարներից, որոնք Ծապուհի ներխուժումից խուսափելով, թողել իրենց կանանց, փախել էին:

Գարեգինի կին Համագասպուհին պահվում էր Վան քաղաքի միջնաբերդում՝ պարսիկ բերդակալի հսկողության տակ:

Վահանն ու Մեհրուժանը հրամայում են Վանի բերդակալին՝ ստիպել Համագասպուհի տիկնոջը ընդունել զրադաշտական կրոնը, հրաժարվելու դեպքում նրան ողջ-ողջ կախել բերդի աշտարակից:

Համագասպուհին հանձն չի առնում հավատափոխ լինել և ընդունել պարսից կրոնը: Այն ժամանակ նրան հանում են բարձր աշտարակը, որ գտնվում էր ժայռի բարձր կատարին, հետևի կողմից դեպի ծովը նայող. Համագասպուհուն մերկացնում են, դարձնում մորից մերկ և ոտքերին կապ գցելով՝ գլխիվայր կախում բերդի աշտարակից: Նրա մարմինը իր սպիտակափառ գեղեցկությամբ փայլում է արեգակի տակ, և շատ մարդիկ գալիս են նրան նայելու, իբրև մի սքանչելի տեսարանի, իբրև անմեղ զոհաբերության խորհրդանիշի:

-----  
\* Ծարագրված է ըստ Փ. Բուզանդի «Հայոց պատմության»:



Վահանն ու Մեհրուժանը այնքան չար էին, որ իրենց մերձավորներին անգամ չէին խնայում, չար-չարում էին նրանց, ստիպում հավատափոխ լինել, ասորուշաններ էին կառուցում շատ տեղերում, իրենց սեփական կալվածքներում: Եվ բանն այնտեղ է հասնում, որ ասելությունից զայրացած Վահան Մամիկոնյանի որդին՝ Մամվելը, զարկում սպանում է հորը՝ Վահանին և պարսկոնի խորթ մորը, ինքը փախչում, ապաստանում է Խաղտյաց երկրում<sup>1</sup>:

### ՄՈՒՇԵՂ ԵՎ ՊԱՊ\*

Հայոց աշխարհի այդ ծանր օրերին Վասակ սպարապետի որդի Մուշեղ Մամիկոնյանը գտնվում էր Հունաց աշխարհում: Նա հավաքել էր հայ ազատներից բաղկացած մի զորագունդ, գնացել էր հունաց թագավորի մոտ խնդրելու, որ նա իր մոտ պատանդ տարված Արշակ թագավորի որդուն՝ Պապ արքայազնին ազատ արձակի, թագավոր կարգի իր հոր փոխարեն Հայոց աշխարհի վրա:

Հունաց կայսրը բավարարում է Մուշեղի և հայ սզնվականների ցանկությունը: Նա Հայաստանի վրա թագավոր է կարգում Պապ արքայազնին, միաժամանակ ուղղակի մեծ օգնություն ցույց տալիս հայերին: Նա Պապի և Մուշեղի հետ միասին Հայաստան է ուղարկում Տերենտ անունով ստրատելատին<sup>1</sup> և Ադե անունով կոմսին՝ վեց հարյուր բյուր զորքով, որպեսզի նրանք Պապին հաստատեն Հայոց աշխարհի արքայական գահին, իսկ զորքը օգնի հայերին պարսիկներին երկրից դուրս քշելու համար:

Պապն ու Մուշեղը հունաց զորքի հետ գալիս են հասնում Հայոց աշխարհ, Մուշեղը իր հոր՝ Վասակի փոխարեն դառնում է Հայոց աշխարհի զորավար սպարապետ:

Հայոց աշխարհի բոլոր այն նշանավոր մարդիկ, որոնք չէին ենթարկվել պարսիկներին, փախել կամ թաքնվել էին, գալիս, հավաքվում են իրենց նոր թագավորի շուրջը: Բոլորը երկրով մեկ սկսում են փնտրել Ներսես Մեծ հայրապետին, որի իմաստուն խորհուրդներին, օգտակար խրատներին, ջերմեռանդ աղոթքներին ու օրհնությունները կարոտ էին իրենք:

Ներսես կաթողիկոսին փնտրելու է դուրս գալիս անձամբ ինքը՝ Պապ թագավորը, հայոց ավագանու հետ: Նրանք գտնում են Մեծ Ներսեսին, խնդրում, աղաչում, որ հայր լինի բոլոր հայերին, իր իմաստուն խորհուրդներով ու օգտակար խրատներով զորավիզ լինի իրենց, վերադառնա արքունի բանակը:

Մեծ թախանձանքների ու ջանքերի գնով նրանց հաջողվում է մի կերպ համոզել Ներսեսին վերադառնալ, որովհետև Գնեյի սպանությունից ի վեր նա թողել հեռացել էր արքունի բանակից և երբեք չէր վերադարձել:

Պապը մեծ ուրախությամբ և ցնծությամբ հայոց ավագանու հետ Ներսես կաթողիկոսին բերում է արքունի բանակ: Ներսեսը դառնում է հայոց թագավորի, ավագանու և առհասարակ ամբողջ ժողովրդի հոգևոր վերակացուն ու խրատատուն, կարգադրիչն ու իմաստուն առաջնորդը:

Մուշեղ սպարապետը հավաքում է հայոց ցրված զորքերը, կարգի է բերում զորագնդերը, բաժանում ըստ զորատեսակների, սպառազինում և կազմակերպում մեծ զորահանդես: Հայոց զորքը, բաղկացած տալը հազար ընտիր ու լավ սպառազինված մարտիկներից, գունդ առ գունդ, ծածանվող դրոշակներով ու բացված զինանշաններով հանդիսավոր կերպով անցնում են Պապ թագավորի, Ներսես կաթողիկոսի, Տերենտ և Ադե հույն զորագլուխների առջևից, շարժելով նրանց ոգևորությունն ու հիացմունքը:

Հայոց Պապ թագավորը մեծ շնորհակալություն է հայտնում Մուշեղ զորավարին՝ լավ կազմակերպված, սպառազինված և մարտունակ զորքի համար, նրան արժանացնում մեծամեծ պարգևների: Նրան շնորհակալություն են հայտնում նաև հունաց հրամանատարները, իսկ Ներսես Մեծ հայրապետը մեծ գոռովանքով օրհնում է Մուշեղ սպարապետին, ասում.

<sup>1</sup> Խաղտյաց երկիր կամ Խաղտիք, հին փոքրասիական խաղաղների երկիրը, որ տարածվում էր Ան ծովի հարավ-արևելյան լեռնային ափերին և հյուսիս-արևմուտքից սահմանակից էր Տայքին:

\* Այս ամբողջ գլուխը շարադրված է հիմնականում Փ. Բուզանդի, մասամբ և Մ. Խորենացու «Հայոց պատմություն» գրքերի հիման վրա:

<sup>1</sup> Սպարապետ, զորավար, զորահրամանատար:

— Թող Քրիստոս տերը քեզ օրհնի, քեզ հաջողություն տա, քեզ հաղթություն շնորհի քո ամբողջ կյանքում, քո ձեռքով, քո տոհմի ձեռքով թող նա փրկի Հայոց աշխարհը մինչև հավիտյան:

Մուշեղն այնուհետև հայոց զորքը կազմ ու պատրաստ հանում է զորարշավի, իբրև սուաջապահ՝ Պապ թագավորից ու հունաց կայսերական զորքից առաջ է անցնում, շարժվում, գալիս հասնում է Հայաստանի միջնաշխարհը: Այստեղ նա կռվի է բռնվում պարսից Զիլ և Կարեն զորավարների հետ, նրանց սպանում, իսկ ամբողջ պարսից զորքը սրի քաշում: Ապա առաջ շարժվելով հասնում է մինչև Հայաստանի բուն սահմանը՝ Ատրպատականի Գանձակ քաղաքը, ամբողջ երկիրը թշնամուց հետ գրավում և իր ձեռքին պահում:

Իսկ Հայոց Պապ թագավորը հունաց զորքի հետ գալիս, պարսիկներից հետ է գրավում Հայաստանի բոլոր ամուր բերդերը, այդ թվում նաև Կոզի գավառում գտնվող Դարոյնք բերդը, որը, շնորհիվ հավատարիմ բերդապահների, անտիկ էր մնացել պարսից քազում հարձակումներից: Այստեղ էին կենտրոնացված Արշակունի թագավորների գանձերի մեծ մասը, որը և ամբողջապես հանձնվում է Պապ թագավորին: Հունաց կայսերական զորքի մի մասը տեղավորվում է Եռանդում և Բախշում, իսկ մնացած մասը քաշում են Հայոց աշխարհի մնացած բոլոր գավառների վրա:

Այս ընթացքում ուրացող Մեհրուժան Արծրունուն դարձյալ հաջողվում է մի ձիով փախչել և ապաստանել Պարսկաստանում:

Մուշեղ զորավարը սկսում է շրջել երկրով մեկ և չարաչար պատժել հավատորացներին և հալոնների դավաճաններին: Նա ամենից առաջ ավերում ու ոչնչացնում է այն մագդեգական ատրուշանները, որոնք կառուցել էին ուրացող Վահանն ու Մեհրուժանը. ապա բռնել է տալիս հավատափոխ եղած մագդեգականներին և հրամայում նրանց խորովել նույն մագդեգական ատրուշանների կրակների վրա: Բռնում և չարաչար պատիժներով սպանում է բոլոր այն բերդակալներին, որոնց Ծապուհը հանձնարարել էր պահել ու հսկել հայ նախարարների կանանց: Բայց ամենից դաժան պատժի է ենթարկում այն նախարարներին և իշխաններին, որոնք անցել էին պարսիկների կողմը և պարսից թագավորի պատիվներին արժանացել: Մուշեղը ձեռքակալում է նրանց, մորթազերծ անել տալիս և նրանց տիկ հանած մորթիների մեջ խոտ է լցնել տալիս և կանգնեցնում պարիսպների վրա՝ ի ցույց մարդկանց: Նա դրանով լուծում էր նաև իր հոր՝ մորթազերծ արված Վասակի մահվան վրեժը:

Երկրում ամենուրեք վերակառուցում ու վերանորոգում են թշնամու ավերած բոլոր եկեղեցիները, բերդերը, կամուրջները, հայոց թագավորությունն աստիճանաբար նորոգվում է, ընկնում հունի մեջ: Ներսես կաթողիկոսը կարգավորում է եկեղեցական ծիսակարգն ու պաշտամունքը, վերանորոգում աղքատանոցները, հիվանդանոցները, դպրոցները, իր իմաստուն խորհուրդներով նպաստում թագավորության ամրապնդմանը:

## Մուշեղ և Ծապուհ

Մեծ Հայքի սպարապետ Վասակի որդի Մուշեղը կազմում է քառասուն հազարանոց զորք՝ բաղկացած ընտիր և հավատարիմ ազնվականներից, նվիրված մարդկանցից, բոլորին ապահովում ձիերով, գեներով, պարենով և իր հետ վերցնելով գնում նստում է Ատրպատականի սահմանամերձ գոտում, թշնամու ներխուժումից պահպանելու Հայոց աշխարհը:

Նույն ժամանակ պարսից Ծապուհ թագավորը իր զորքով և ամենայն պատրաստությամբ գալիս է Ատրպատական: Մուշեղ սպարապետը իր քառասուն հազար զորքով մտնում է Ատրպատական, հարձակվում Ծապուհի բանակի վրա, բոլորին կոտորում: Ծապուհ թագավորը մի ձիով հազիվ կարողանում է փախչել, ազատվել:

Մուշեղը գերի է վերցնում պարսից ավագներից շատերին, ինչպես նաև Ծապուհի տիկնանց տիկնոջը՝ բոլոր մնացած կանանց հետ միասին, որոնք գտնվում էին մաշկավարձանում՝ արքայական կանանց վրանում: Մուշեղը հրամայում է ձեռքակալված պարսից ավագներից վեց հարյուր հոգու մորթազերծ անել, մորթիները տիկ հանել, մեջը խոտ լցնել և ուղարկել հայոց Պապ թագավորին: Իսկ Ծապուհի գերված կանանց Մուշեղը շի թույլ տալիս որևէ անարգանք հասցնել: Ընդհակառակը, նա հրամայում է բոլոր կանանց համար առանձին-ժանվար-պատգարակներ պատրաստել, նրանց հարգանքով ու պատ

վով մեջը նստեցնել և ազատ արձակելով, ուղարկել Ծապուհ թագավորին: Եվ որպեսզի կանանց ոչ ոք չկարողանա անարգել, նա գերված պարսիկներից մարդիկ է առանձնացնում, կանանց հետ դնում իբրև ուղեկիցներ, որպեսզի բոլորը ողջ ու անարատ գնան հասնեն իրենց տիրոջը:

Երբ կանայք ողջ ու առողջ, անարատ վերադառնում են, Ծապուհը մնում է ապշած ու զարմացած Մուշեղի քաջության, բարության, մեծահոգության ու ազնվության վրա: Մուշեղն այդ ժամանակ մի սպիտակ նժույգ ուներ, որ իր գեղեցկությամբ շարժում էր անգամ պարսիկների հիացմունքը: Ծապուհ թագավորը իր կանանց նկատմամբ Մուշեղի մեծահոգի վարմունքից հիացած, Մուշեղի պատկերը՝ սպիտակ ձիու վրա նստած, քանդակում է իր գինու գավաթի վրա: Ամեն անգամ խնջույքների ժամանակ այդ գավաթը լցնում էր գինով, դնում իր առաջ և իր գործին կամ հյուրերին հյուրասիրելիս՝ բարձրացնում էր գավաթը և ամեն բարձրացնելիս սասում.

— Ծերմակաձին թո՛ղ գինի խմի:

Իսկ Մուշեղը Ծապուհի գործը ջարդելուց հետո նրա բանակատեղից մեծ քանակությամբ գանձեր ու ունեցվածք է ավարի ենթարկում, բաժանում իր գործին, լիացնում բոլորին, ապա այդ ավարից մեծ բաժին է հանում Պապ թագավորին, նրա մոտ մնացած գործին, ինչպես նաև հունաց զորավարներին ու գործերին:

Բայց երբ Մուշեղը իր գործով վերադառնում է Հայոց աշխարհ, նրա զինվորներից ու զորապետներից ոմանք Պապ թագավորի առաջ ամբաստանում են Մուշեղ սպարապետին թշնամի Ծապուհ թագավորի կանանց ազատ արձակելու համար: Պապը փոքր-ինչ սառում է Մուշեղից, կասկածում նրա հավատարմության վրա:

### Հայր մարդպետի սպանությունը

Պապ թագավորին պատմում են Հայր մարդպետի մասին, որը Արտագերսում Փառանձեմ տիկնոջ պաշարման մեջ եղած ժամանակ գաղտնի մուտքով մտել էր բերդ, անվաչել խոսքերով վիրավորել տիկնոջը և Արշակունիների ամբողջ տոհմին: Պապը դիակալվում է Հայր մարդպետի դեմ և սպասում հարմար առիթի:

Եվ մի օր, երբ Հայր մարդպետը դռքս էր եկել շրջելու Տարոն գավառում գտնվող իր կալվածքները, Պապ թագավորը հրովարտակով դեսպան է ուղարկում Մուշեղ սպարապետի մոտ, որն այդ ժամանակ գտնվում էր Տարոնի իր Ողական ամրոցում: Դեսպանը գալիս է և հրովարտակը հանձնում Մուշեղին: Հրովարտակով թագավորը հրամայում է Մուշեղին՝ բռնել և շարաշար մահով սպանել Հայր մարդպետին:

Մուշեղը մարդ է ուղարկում Հայր մարդպետի մոտ և նրան մեծարանքի և հյուրասիրության պատրվակով հրավիրում իր մոտ Ողական ամրոց:

Զմեռվա ցուրտ օրեր էին, խիստ սառնամանիք էր, և Եփրատ գետը, որ հոսում էր Ողականի կողքով, ամբողջովին սառել էր: Հայր մարդպետը մեծարանքի ակնկալիքով գալիս, մտնում է Ողա-



կան ամբողջ: Մուշեղն իր զինվորներին անմիջապես հրամայում է բռնել Հայր մարդպետին, մորեմերկ անել, ձեռքերը ծնկներից ներքև կապել, իջեցնել գետը և դնել գետի սառույցի վրա: Հայր մարդպետը ամբողջ գիշեր կապված մնում է սառույցի վրա նստած: Հաջորդ օրը գնում են տեսնում, որ ցրտից նրա գլխի ուղեղը քթից դուրս էր եկել, թափվել և ինքը տեղնուտեղը սառել, մահացել:

Հայր մարդպետի փոխարեն Պապ թագավորը մարդպետության պաշտոնին է նշանակում Դղակին, որը Տիրանի և Արշակ թագավորի ժամանակ ևս մարդպետ էր եղել:

### **Ջիրավի ճակատամարտը**

Պարսից Շապուհ թագավորը նոր զորահավաք է կատարում, հավաքում իր ամբողջ զորքն ու զորությունը, շարժվում, գալիս հասնում է Ատրպատական աշխարհը: Ինքը իր պալատական փոքրաթիվ զորքով մնում է այնտեղ, իսկ մնացած զորքի ամբողջ բազմությունն ուղարկում է Պապ թագավորի դեմ պատերազմի: Պարսից զորքը մտնում է Հայաստան, սապատակելով, գալիս հասնում միջնաշխարհ: Հայոց Պապ թագավորն էլ իր հերթին է զորածողով անում, հրամայում է հայոց և հունաց զորքերը հավաքել Բագրևանդում, Նպատ լեռան մոտ, Եփրատ գետից ոչ հեռու՝ Ջիրավ կոչված դաշտում: Ադե կոմսը հունաց բոլոր զորքերը, որոնք գտնվում էին Եռանդում ու Բախիշում, հավաքում, բերում է այդտեղ: Նա հավաքում է նաև հայոց տարբեր քաղաքներում նստած հույն հետևակ պահապաններին, բերում, միացնում իր զորքին: Հայոց Մուշեղ սպարապետը հավաքում է հայոց ամբողջ զորքը, ավելի քան իննսուն հազար մարդ, կազմ ու պատրաստ բերում է Ջիրավի դաշտ, միացնում հունաց զորքին և այդտեղ զորքերը վերադասավորելով, պատրաստվում ճակատամարտի:

Դեռ Ատրպատականում, երբ Շապուհ թագավորը պարսից զորքերը վերադասավորում էր Հայոց աշխարհ պատերազմի ուղարկելու համար, նրա մոտ էր գտնվում աղվանների Ուռնայր թագավորը: Ուռնայրը գալիս է Շապուհի առաջ և նրան դիմում հետևյալ խնդրով.

— Այրերի մեջ քնջ, եթե կամենում ես, ինձ իբրև պարզև հրաման տուր, որ Պապ թագավորի հայկական զորքի դեմ դուրս գամ իմ առաջապահ գնդով: Իսկ հունաց զորքի դեմ պատշաճ է, որ արյաց գունդը դուրս գա: Ոստի թույլ տուր, որ ես իմ գնդով հայոց իշխանների դեմ դուրս գամ և ես նրանց հաշիվը մաքրեմ:

Շապուհը հավանություն է տալիս Ուռնայրի ցանկությանը, շնորհակալություն է հայտնում և համապատասխան հրաման տալիս: Մեհրուժան Արծրունին, որ ներկա էր այս խոսակցությանը, Ուռնայրին քաշում է մի կողմ և ասում.

— Դու փուշ գրկեցիր, շնտ զարմանալի կլինի, եթե հավաքել կարողանաս:

Աղվանների թագավորի այս պարծենկոտությունը խոցում է անգամ դավաճան Մեհրուժան Արծրունու ազգային արժանապատվությունը և նա գաղտնի սուրհանդակ է ուղարկում Մուշեղ սպարապետի մոտ, հայտնում հետևյալը. «Իմացիր և պատրաստվիր, Մուշեղ, աղվանից Ուռնայր թագավորը մեծ պարծանքով քեզ Շապուհին պարզև է խոստացել: Արդ, լսիր և անելիքդ իմացիր»:

Երբ պարսից զորքը շարժվելով գալիս է Հայոց աշխարհ, Ուռնայրը դիմելով այդ զորքի մեջ գտնվող իր գնդի զինվորներին, ասում է.

— Ձեզ այժմյանից հիշեցնում եմ, որ ձեր մտքերում լավ պահեք, հենց որ հունաց զորքերին կգերեք, զինվորներից շատերին կենդանի կթողնեք, որպեսզի նրանց կապենք, տանենք Աղվանք<sup>1</sup> և մեր քաղաքների, սպարանքների շինարարության վրա նրանց բանեցնենք իբրև կավագործներ, որմնադիրներ, ծեփագործներ և առհասարակ օգտագործենք մեր բոլոր կարիքների համար:

Պարսից զորքը գալիս և հունաց զորքին մոտենալով, ճակատ է կազմում: Հայոց քաջ նախարարների պատանիները Սմբատ Բագրատունու առաջնորդությամբ խիզախելով, գալիս մտնում են զույգ ճակատների միջև: Պարսից զորքից էլ դուրս են գալիս նրանց հասակակիցները և շարվում, կանգնում իրենց ճակատի երկայնքով՝ հայ պատանիների դիմաց:

<sup>1</sup> Աղվանք աշխարհը տարածվում էր Քուռ գետից դեպի հյուսիս, մինչև Կովկասյան լեռներն ու Կասպից ծովը, բնակված աղվաններով, մաքուրներով և այլևայլ ցեղերով:

Հունաց ոսկեկոտ ու արծաթակոտ զենք ու զրահով սպառազինված զորքերը, փայլուն և գույնզգույն զարդերով զարդարված ձիերը հեռովից պղնձակոտի պարիսպ էին հիշեցնում: Ջինվորների գլխին փողփողացող վիշապապատկեր դրոշակները, քամից ուռչելով բացել էին երախները, գալարվում և ամբողջ զորքի հետ միախառնվելով՝ աղամանդակոտ լեռ էին հիշեցնում, որ իջնում էր պարսիկների բաց կապտավուն զրահներով զրահավորված հզոր գետի նմանվող զորքերի վրա:

Երբ զորքերը երկու կողմից պատրաստվում էին ճակատամարտի, Պապ թագավորը զինված ու զրահավորված, ուզում է մտնել կռվի մեջ: Բայց հունաց Տերենտ զորավարը թույլ չի տալիս:

— Հունաց թագավորը, — ասում է նա, — մեզ ուղարկել է քեզ համար, որպեսզի քեզ պահպանենք: Հիմա եթե քեզ մի բան պատահի, ապա մենք թեև երեսուկ պիտի նայենք մեր թագավորին կամ թեև պատահան կարող ենք տալ: Դու, արքան, արև, ինչ որ ասում ենք քեզ. մոտ Ներսես եպիսկոպոսին, գնա Նպատ լեռը, նստի՛ր մի ամուր և անվտանգ տեղ, և թող սուրբ Ներսեսը աղոթք անի և աստծուց խնդրի, որ մեզ հաղթություն տա: Լեռան բարձունքից կնայես ու կտեսնես մեր ճիգերն ու ջանքերը ճակատամարտի ընթացքում, յուրաքանչյուրի քաջությունն ու երկչուությունը, որ քո աչքի առաջ կկատարվեն:

Պապ թագավորը համաձայնում է, Ներսես քահանայապետին վերցնում իր հետ և էլնում, նստում է Նպատ լեռան բարձունքներից մեկում: Բիշ անց Ներսեսի մոտ է գալիս հայոց զորքերի զորավար սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը. նա Ներսեսի մոտ էր բերել իր դրոշակներն ու զենքը օրհնել տալու, որից հետո պետք է իջներ ուղամարտ: Պապ թագավորը հիշելով Մուշեղի նկատմամբ եղած նախկին ամբաստանությունը, դիմում է Ներսես կաթողիկոսին.

— Ես հիշեցի, որ Մուշեղը բարեկամ է պարսից Ծապուհ թագավորին: Դա այն Մուշեղը չէ՞, որ պարսից Ծապուհ թագավորի կանանց ազատ արձակեց ժանվարներով ու պահապան վաշտով: Լսել եմ նաև, որ նա գաղտնի բանակցությունների մեջ է մտել պարսիկների հետ, դրա համար էլ նա պատերազմին չպետք է մասնակցի:

Ներսես կաթողիկոսը զարմացած թագավորի այդ խոսքերից, սկսում է բարեխոսել Մուշեղին Պապի առաջ:

Պապ թագավորը մնում է անդրդվելի:

— Դու մի բարեխոսիր, — ասում է նա Ներսեսին, — եթե հիմա նա պատերազմի դաշտ իջնի, անմիջապես պարսից զորքերին կմիանա:

Բայց Ներսեսն ավելի եռանդով է սկսում բարեխոսել Մուշեղին, մինչև որ կոտրում է թագավորի համառությունը:

— Թող քո կամքը լինի, — ասում է նա Ներսեսին, — բայց նախ պահանջիր՝ երդվի քո աջի վրա, որ նա մեզ չի դավաճանի, ապա արձակիր, որ գնա պատերազմի:

Մուշեղին անմիջապես կանչում են թագավորի առաջ: Մուշեղը գալիս է, նախ երկրպագում թագավորին, ապա Ներսես կաթողիկոսի աջը բռնելով՝ երդվում: Հետո բռնում է Պապ թագավորի ձեռքը, երդվում և ասում.

— Ես կապրեմ ու կմեռնեմ քեզ համար, ինչպես իմ նախնիները ապրեցին, կուվեցին ու մեռան քո նախնիների համար: Ընդունա՛յք, ինչպես իմ հայրը քո հոր՝ Արշակի համար մեռավ, ևս էլ կմեռնեմ քեզ համար, միայն թե դու, թագավոր, խնդրում եմ՝ չարախոս մարդկանց չլսես:

Այս երդումից հետո Ներսես քահանայապետը օրհնում է Մուշեղին մեծ օրհնությամբ, իսկ Պապ թագավորը հրամայում է իր ձին ու նիզակը մատուցել Մուշեղ քաջ զորավարին:

Մուշեղը կտրուկ հրաժարվում է այդ պարգևն ընդունել:

— Ես, արքան, — ասում է նա, — առայժմ իմ ունեցած ձիով ու զենքերով կգործեմ: Իսկ հետո ինչ որ տալու լինես, ես միշտ խոնարհ ու հնազանդ պատրաստ եմ քո հրամանին ծառայելու:

Ապա Մուշեղը բերում է իր դրոշակն ու զենքը Ներսեսի մոտ, որ օրհնի: Օրհնելուց հետո նա հեծնում է ձին, իջնում ուղամարտ և ճակատ կազմում հունաց զորքի աջ կողմում: Իսկ Պապ թագավորն ու Ներսես կաթողիկոսը մնում են կանգնած Նպատ լեռան վրա: Ներսեսը իր ձեռքերը բազկատարած երկինք բարձրացնելով, խնդրում էր աստծուց, որ խնայի իր հավատացյալներին ու եկեղեցուն, խնայի իր ժողովրդին և նրան չմատնի անօրեն հեթանոսների ձեռքը:

Մինչ Ներսեսը բազկատարած աղոթում էր Նպատ լեռան վրա, ներքևում՝ Ջիրավի դաշտում,

սկսվում է ճակատամարտը: Նախ իրար դեմ են ելնում երկու ճակատների արանքում իրար դեմ կանգնած հայ և պարսիկ պատանի զինվորները:

Երբ պարսիկ պատանիները հետ էին դառնում, հայ պատանիներն անմիջապես հասնում էին նրանց հետևից, և ինչպես անտառը տերևաթափ անող փոթորիկ, նիզակների հարվածների տարափ էին տեղում նրանց վրա, ձիերից վայր գցում, դիակները թավալում գետին: Պարսիկ պատանիները չէին կարողանում իրենց ճակատի մեջ մտնել ու պատասպարվել: Իսկ երբ հայ պատանիներին պարսիկներն էին հետ դարձնում, մերոնք արագ մտնում էին հունաց՝ վահաններով պատասպարված ճակատը, ինչպես մի ամուր ու անտիկ բերդի մեջ, և բնավ չէին վնասվում:

Այնուհետև առաջ է շարժվում հունաց զորքերի աջ կողմում ճակատ բռնած հայոց զորքը, իսկ Մուշեղի գունդը բոլոր գնդերից առաջ է անցնում, արագ շարժվելով մխրճվում թշնամու զորքերի մեջ: Մուշեղի գնդի դրոշները Նպատ լեռան բարձունքից ճակատամարտը դիտող Պապ թագավորի տեսադաշտից կորչում են, ձուլվում թշնամու ծով բանակի մեջ: Պապը հուսահատ աղաղակով դառնում է դեպի աղոթող Ներսեսը.

— Դու իմ տոհմը քանդեցիր, ինձ արմատախիլ արեցիր, այրեցիր. ես քեզ ասում էի՝ այդ մարդուն պատերազմ մի ուղարկիր: Ահն, նա գնաց, միացավ պարսից զորքի հետ և մեզ մեծ վնաս կհասցնի: Ներսես կաթողիկոսը ընդհատելով աղոթքը, սաստիչ ձայնով պատասխանում է.

— Այդպիսի բան մի մտածիր, թագավոր, նա մեզ չի դավաճանի. դու ինքդ շուտով կտեսնես այն քաջությունը, որ ծառայող կգործի քո առաջ:

Իսկ այդ պահին ներքևում՝ Չիրավի դաշտում, հայոց զորքերի դիմացից բարձրացող արևը ընկնելով զինվորների պղնձակուռ վահաններին ու սաղավարտներին՝ բեկբեկուն շողերով փայլատակում էր ջրջապատի լեռների վրա, ինչպես ամպերի տակից շողացող փայլակ:

Հայոց ճակատից թշնամու վրա խոչացող լավ զրահավորված նախարարներն ու զինվորները փայլող ճառագայթների փնջերի նման մխրճվում էին թշնամու ճակատի մեջ, սարսում, տատանում էին հակառակորդի դիմադրությունը: Երկու ճակատների թեժ ընդհարման ժամանակ Ապանդարատ Կամսարականի դեմ է դուրս գալիս հակառակորդի լավ սպառազինված մի մեծ խումբ, որի մեջ էր լեկերի (լեզգիների) քաջ թագավոր Շերգիրը: Շերգիրն իր խմբով անասան պատնեշի նման կանգնած էր ճակատի կենտրոնում, կասեցնելու հայ զինվորների հարձակումը: Ապանդարատը կաշմակի արագությամբ հարձակվելով՝ ճեղքում է խումբը, միքնվում հակառակորդի զինվորների մեջ և Շերգիրին շանթահարվածի նման գետին տապալում: Խումբը այդ անակնկալ հարձակումից երկրում է, խունապի մատնվում և շուտ գալով, դիմում փախուստի:

Իսկ քաջ սպարապետ Մուշեղը, որ իր գնդով աջ կողմից ճեղքել էր թշնամու ճակատն ու խորացել նրա թիկունքում, շարաշար կոտորում է պարսից զորքերին և աչքը պահած աղվանների Ուոնայր թագավորի վրա, կոպելով մոտենում է աղվանների գնդին: Աղվանից գունդը երերում է Մուշեղի զորքի հարվածների տակ, մեծ կորուստներ տալով՝ սկսում նահանջել: Ուոնայր թագավորը, տեսնելով իր զինվորների ահռելի կոտորածը, դիմում է փախուստի: Մուշեղը հասնում է նրան և հետևից իր երկար նիզակի կոթով սկսում ծեծել Ուոնայրի գլուխը և ասում.

— Շնորհակալ եղի՛ր, որ թագավոր մարդ ես, գլխիդ թագ ես կրում, թե չէ՝ քեզ շան նման կսատկացնեի: Ես թագավոր մարդու չեմ սպանի, թեկուզ կլանքս էլ վտանգի տակ լինի:

Եվ Մուշեղը այլևս չի հետապնդում Ուոնայրին, թողնում է, որ նա իր ձիավորների հետ փախչի, գնա Աղվանից աշխարհը:

Ամբողջ ճակատով մեկ, հայոց և հունաց զորքերի ճնշման տակ, պարսից զորքերը պարտություն են կրում, մեծ կորուստներ տալով ցրվում, դիմում փախուստի, ապաստանելով լեռներում ու խոր ձորերում: Հայ և հույն զինվորները հետապնդում են նրանց, շատերին կոտորում, քչերին է միայն հաջողվում իրենց արագավազ ձիերի շնորհիվ փախչել, ազատվել:

Հայոց և հունաց զորքերը վերադառնում են Պապ թագավորի մոտ մեծ հաղթանակով: Թիվ ու հաշիվ չկար սպանված թշնամիների գլուխներին, որ քաջ Մուշեղ զորավարը կտրել, բերել էր Պապ թագավորին, ի նշան մեծ հաղթության: Անհաշիվ էր նաև թշնամուց խլած ավարը՝ գանձեր, գեներ, զարդեր, կարասի, ձիեր, ջորիներ, ուղտեր, որոնք լիուլի բաժանում են հաղթանակած հայ և հույն զինվորներին:

Իսկայն Մուշեղին դարձյալ ամբաստանում են Պապ թագավորի առաջ, ասելով.

— Իմացիր, արքան, Մուշեղը քեզ հետ նենգորեն է վարվում, նա անհամբեր սպասում է քո մահվանը: Այս էլ մի բանի անգամ քո թշնամիներին բռնում է, ապա ըստ իր սովորության՝ ազատ արձակում: Նմա բռնեց քո թշնամի աղվանից Ռոննայր թագավորին, որի կյանքը իր ձեռին էր, բայց դարձյալ կյանք բաշխեց քո հակառակորդին և ազատ արձակեց:

Պապը անմիջապես կանչում է Մուշեղին և իր կատարած արարքի համար բացատրություն պահանջում:

— Արքան, — ասում է Մուշեղը, — ես կոտորեցի բոլոր նրանց, ովքեր ինձ հավասար էին, գորավարներ կամ զինվորներ էին: Իսկ նրանք, ովքեր թագ են կրում, ինձ հավասարակիցներ ու ընկերներ չէին, նրանք քո ընկերներն են, որովհետև թագավորներ են: Գայիր, ինչպես որ ես ինձ հավասարակից մարդկանց սպանեցի, դու էլ քեզ հավասար թագավորներին սպանեիր: Միևնույն է, ուր էլ լինեմ, թեկուզ ինչ էլ լինի, ես թագավոր մարդու վրա, որը իր գլխին թնագ է կրում՝ ոչ ձեռք եմ մեկնել, ոչ մեկնում եմ, ոչ էլ կմեկնեմ: Եթե կամենում ես ինձ սպանել՝ սպանիր, դա քո կամքն է, բայց ասում եմ և իմացիր, եթե առաջիկայում ևս ձեռքս թագավոր մարդ անցնի, ինչպես շատ անգամ է պատահել, ես, միևնույն է, թագավոր մարդու, որ գլխին թնագ է կրում, չեմ սպանի, թեկուզ ինձ սպանելու լինեն:

Պապ թագավորը Մուշեղի այս անկեղծ խոսքերից խիստ զգացված, գահույքից վեր է կենում, զբրկում Մուշեղին, գլուխը դնում նրա ուսին, լաց լինում, ասում.

— Մահապարտ են բոլոր նրանք, ովքեր հանդգնում են կամ այսուհետև կհանդգնեն չար բերան բանալ Մուշեղի՝ այս քաջ և պատվական մարդու հասցեին: Նա մի մարդ է, որն իր ծագումով մեզ նման նույնքան պատվական է: Նրա նախնիները մեր նախնիների նման ևս այլ աշխարհից են եկել: Նրանք թողել են Շենաց աշխարհի թագավորությունը, եկել մեզ մոտ և ապրել ու մեռել մեր նախնիների համար: Սրա հայրը իմ հոր համար մեռավ, և սա հավատարմությամբ ծառայել է մեզ: Ծատ անգամ աստված, մեր հոր՝ սքանչելի Ներսեսի աղոթքներով ու պաղատանքներով Մուշեղի ձեռով մեզ հաղթություն է շնորհել:

Էլ ինչպես են կարողանում ինձ հավատացնել, թե Մուշեղն, իբր, իմ մահվանն է սպասում: Մուշեղը արդարամիտ և հավատարիմ մարդ է. եթե նա իր ազնվականությամբ օտար թագավորներին խնայեց, էլ ինչպես նա կարող է ձեռք բարձրացնել իր բնիկ տերերի վրա:

Եվ Պապ թագավորը մեծ պատիվներ, շատ կալվածքներ ու գյուղեր է շնորհում Մուշեղ զորավարին իր քաջության, ազնվության և հավատարմության համար:

### Գանձակի ճակատամարտը

Զիրափի հաղթական ճակատամարտից փոքր-ինչ անց աղվանների Ռոննայր թագավորը գաղտնի սուրհանդակ է ուղարկում Մուշեղի մոտ և հայտնում հետևյալը.

«Նախ՛ շատ շնորհակալ եմ քեզանից, որ աստված ինձ քո ձեռը հանձնեց, բայց դու ինձ խնայեցիր, չսպանեցիր: Բանի կենդանի եմ, այդ քո լավությունը երբևէ չեմ մոռանա: Բայց ես ուզում եմ քեզ հայտնել հետևյալը. պարսից Ծապուհ թագավորը մեծ զորք է հավաքել և պատրաստվում է անսպասելի հարձակում գործել քեզ վրա: Իմացիր այդ և քո բանը տես»:

Մուշեղն անմիջապես այս լուրը հայտնում է Պապ թագավորին: Պապը շտապ կարգով պատրաստվում է պատերազմի: Նախ՛ հունաց ստրատելատի միջոցով հունաց զորքերը, որոնք կենտրոնացված էին Ատրպատականի Գանձակ քաղաքի շրջակայքում, շարժում, բերում է դեպի Հայաստանի սահմանները: Նույն տեղում է բերում կենտրոնացնում Մուշեղ զորավարը նաև հայոց բոլոր զորքերը, թվով իննսուն հազար մարդ, բոլորն էլ լավ զինված, ընտիր նիզակավորներ, չհաշված նրանց հետ եկող սապարակիրներին: Բոլոր զորքերն ու զորավարները կենտրոնանում են Պարսկաստանին սահմանակից Ատրպատականի մերձակայքում: Երկրում մնում են միայն Պապ թագավորն ու Ներսես կաթողիկոսը, որը հրամայում է ժողովրդին՝ երկրով մեկ աղոթել պատերազմի ելած զորքերի համար, հանուն նրանց հաղթանակի:

Իսկ պարսից Ծապուհ թագավորը, անտեղյակ այս ամենին, իր ամբողջ զորքով գալիս, հասնում է

պատերազմի վայրը և մնում զարմացած. հունաց և հաչոց զորքերը կազմ ու պատրաստ կովի են սպասում: Երկու կողմերն էլ առանց հապաղելու ճակատ են կազմում և անմիջապես անցնում կովի:

Հակառակորդ ճակատներն իրար են խառնվում: Հաչոց նիզակավորների գնդերը մոլեգնաբար հարձակվում են պարսիկների վրա և հենց Ծապուհի դիմաց՝ ձիերի վրայից նիզակներով հարվածում են իրենց արտյաններին, քաջաբար գետին տապալում: Հենց որ պարսիկներից մեկը հաչ զինվորների հարվածից գետին էր տապալվում, հաչոց ամբողջ զորքը ոգևորված աղաղակում էր.

— Ա՛հ, բաջ Արշակ:

Եվ ինչքան պարսիկներից մարդ էր գլխատվում, սպանվում, հաչոց զորքը միահամուռ ու միաբերան քացականչում էր.

— Մատնդ եղիր մեր Արշակ թագավորին:

Եվ այդպես շարունակ, ամբողջ ճակատամարտի ընթացքում, յուրաքանչյուր գետին տապալված կամ մորթված, գլխատված պարսից հակառակորդի հաչ զինվորները նվիրում էին իրենց նախկին թագավոր Արշակին:

Իսկ հաչոց հարձակվող նիզակակիր գնդերի թիկունքը պահում էին հունաց լեգեոնների<sup>1</sup> բազմությունն ու հաչ ասպարակիրները, որոնք վահաններով ամուր պատուպարված, կանգնած էին բերդի նման: Հենց որ պարսից զինվորները փոքր-ինչ վանում էին հունաց կամ հաչոց նիզակավորներին, սրանք արագ հետ էին նահանջում, իսկ թիկունքում կանգնած ասպարակիրներն ու վահանավորները բաց էին անում իրենց վահանները, նահանջողներին ներս ընդունում, փակում, պատուպարում: Մի փոքր հանգստանալուց ու շունչ քաշելուց հետո նիզակավորները նորից դուրս էին գալիս, ինչպես ամուր բերդից, հարձակվում պարսիկների վրա, անթիվ ու անհաշիվ մարդիկ էին իրենց ոտների տակ գլորում, սպանում կամ գլխատում և կրկնում նույն քաջալերիչ խոսքերը իրենց Արշակ թագավորի հասցեին:

Այդ օրը հաչոց գնդերն ու նրանց Մուշեղ զորավարը, հունաց զորքերն ու նրանց Տերենտ ստրատելատը փառավոր հաղթանակ են տանում: Պարսից Ծապուհ թագավորի բազմությունը գլխովին ջախջախվում է, իսկ Ծապուհն ինքը սակավաթիվ մարդկանցով փախչում է պատերազմի դաշտից:

Մուշեղ սպարապետն ու Տերենտ ստրատելատը Դղակ մարդպետին երեսուն հազար զորքով սահմանապահ են թողնում Գանձակում, իսկ իրենք հաղթական մեծ շուքով ու ավարով վերադառնում են իրենց Պապ թագավորի մոտ:

Երբ Ծապուհ թագավորը հասնում է իր երկիրը, յուրայիններին զարմանքով ու հիացմունքով պատմում է հաչոց կովող գնդերի քաջության մասին:

— Զարմացել եմ ես իմ տեսածի վրա, — ասում է նա, — շնտ եմ զարմացել: Մանկությունից ի վեր միշտ կովի ու պատերազմի մեջ եմ եղել, շատ տարի է, որ թագավոր եմ դարձել և տարի չի եղել, որ առանց կովի անցկացրած լինեմ, բայց այսպիսի թեժ ու եռանդուն, ջերմ ու նվիրված կովի ես առաջին անգամ տեսա:

Երբ հաչոց նիզակավորները առաջ էին գալիս, այնպես էին հարձակվում, կարծես մի բարձր լեռ կամ հաստ ու հզոր, անսասան աշտարակ էր մեզ վրա գալիս: Իսկ երբ մենք էինք նրանց փոքր-ինչ վանում, ապա նրանք արագ պատուպարվում էին հոռոմների<sup>2</sup> լեգեոնների մեջ, որոնք իրենց կից առ կից վահանները բաց անելով, նրանց ներս էին առնում, ինչպես պարսպապատ ամրոցի մեջ: Այնտեղ փոքր-ինչ շունչ առնելով, նրանք նորից դուրս էին գալիս ու կովում այնպիսի կատաղությանը, որ արյաց զորքերին գլխովին ոչնչացրին:

Մեկ ուրիշ բանի վրա էլ եմ մնացել զարմացած. դա հաչոց զորքի միասիրտ համերաշխությունն է, հավատարմությունն ու տիրասիրությունը իր թագավորի նկատմամբ:

Արդեն բանի տարի է, ինչ նրանց տերը՝ Արշակ թագավորը, չկա, նրանց համար կորած է, բայց հաչ զինվորները կովելիս նրանով էին քաջալերվում: Երբ նրանք իրենց արտյաններին ձիերից ցած

<sup>1</sup> Լեգեոնը հին հռոմեական զորքի միավոր էր, տարբեր ժամանակներում՝ բաղկացած 3600-ից մինչև 6000-ի հասնող կովող զինվորներից: Նրանց մեծ մասը լավ սպառազինված ծանրազեն մարտիկներ էին, փոքր մասն էր միայն թեթև զինված:

<sup>2</sup> Հոռոմներ — բյուզանդացի հույներին տրվող ժողովրդական անվանումներից մեկը, որ ծագում է Հոռոմ, հռոմեացի բառերից, իբրև հռոմեական կայսրության՝ Բյուզանդիայի հպատակներ կամ պարզապես բյուզանդացի հույներ:



էին գլորում, բոլորը միաբերան բացականչում էին՝ «Արշնկ, ւն», իսկ եթե սպանում էին՝ նրան էին նվիրում, կարծես թե թագավորն իրենց մեջ լինէր, իրենց գլխին կանգնած, իրենց մեջ կովէլիս:

Իսկ Մուշեղի մոլեգնած գնդից, թվում էր, բոց ու կրակ է թափվում, դրոշակներն այնպես էին փողփողում արագ սուրացող գնդի գլխավորնում, կարծես հրդեհի բոց էր անցնում եղեգների միջով:

Ծնտ, շնտ եմ զարմացել հայոց զորքի իրենց կորած թագավորի նկատմամբ ունեցած ջերմ ու նվիրական սիրուց, իրենց բնիկ տիրոջ հանդեպ ունեցած այդ շտենսկամ տիրասիրությունից:

### Դղակ մարդպետի դավաճանությունն ու սպանությունը

Դղակ մարդպետը, որ երեսուն հազար ընտիր, լավ սպառազինված զորքով սահմանապահ էր մնացել Հայաստանի և Պարսկաստանի սահմանագլուխ Գանձակ քաղաքում, գաղտնի պատգամավոր է ուղարկում պարսից Ծապուն թագավորի մոտ, խոստանում նրա ձեռք հանձնել հայոց Պապ թագավորին, Ֆունաց Տերենտ զորավարին և հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին: Այդ դավադրությունն իրագործելու համար, նա Ծապուն թագավորից մեծ գանձ ու խոստումներ է ստանում:

Պատրաստվող դավադրության մասին իմանում են Դղակի զորքում եղած հայ նախարարները, որոնք և գաղտնի տեղյակ են պահում Պապ թագավորին:

Պապը դեսպաններ է ուղարկում Դղակի մոտ հետևյալ պատգամով. «Քո ձեռքի տակ եղած զորքերը հավաքիր և հանձնիր Անձևացի Գնել իշխանին, իսկ ինքդ շտնապ եկ ինձ մոտ. մտադիր եմ բանակցություններ սկսել Ծապուն թագավորի հետ նրա հպատակության տակ անցնելու համար և քեզ կամեանում եմ նրա մոտ դեսպան ուղարկել»:

Դղակ մարդպետը այս լուրը լսելով, շատ է ուրախանում, մտածելով, որ եկել է հարմար առիթը Ծապուն թագավորին տված իր գաղտնի խոստումն իրագործելու համար: «Հիմա իմ գործը շատ հեշտացավ, — մտածում էր նա, — ճանապարհը գտել եմ արդեն. Պապ թագավորին պարսապ խոսքերով կքնեցնեմ, որ անհոգ ու միամիտ մնա, և անսպասելի նրա գլխի վերևը կկանգնեցնեմ պարսից Ծապուն թագավորին»:

Ոգևորված այն մտքից, որ ինքը պատգամախոս է նշանակված երկու թագավորների միջև և կարող է իր դավադրությունն ազատ իրականացնել, Դղակը շտնապ ձիավոր դեսպան է ուղարկում Պապի մոտ, հայտնում իր գալուստը:

Պապ թագավորն այդ ժամանակ գտնվում էր Այրարատյան գավառի Արդյանք կոչված մեծ գյուղի իր արքունական կալվածքում: Դղակը գալիս, ներկայանում է թագավորին և մեծ պատվով ընդունվում: Ընթրիքից առաջ Պապ թագավորը հրամայում է Դղակ մարդպետին հագցնել փառահեղ զգեստ: Բերում են շատ շքեղ հանդերձաներ, հագցնում, բայց զգեստներն այնքան մեծ էին, որ վերևից ծալ-ծալ իջնում էին ներքև, փաթաթվում ոտքերին: Դղակը լայն ու երկար պատմունճան հագնելուց հետո մեջքին գոտի է կապում, գոտուց կախում թուրը, մյուս կողմից սուրը: Սակայն պատմունճան այնքան երկար էր, որ ոտքերին չփաթաթվելու համար գոտուց վերև ծալում է, և պատմունճանի ծալքը ներքև իջնելով, ծածկում է թուրն ու սուրը: Երկար վարտիքը հագնելուց հետո կարճ դաշույնը կապում է ազդրի մոտ, բայց երկար վարտիքի ծալած դարսը դարձյալ գալիս, ծածկում է դաշույնը, հասնելով մինչև սրունքները:

Դղակը հիանալով արքայապարզև շքեղ զգեստներով, հագնում է դրանք, գլխի չընկնելով, թե ինչ փորձանք պիտի բերի իր գլխին զգեստների մեծությունը:

Երեկոյան ժամը իննին Դղակին կանչում են, ասում.

— Քեզ ներսում՝ արքայի մոտ ընթրիքի են հրավիրում:

Ողեկցող արքունի սպասավորները Դղակին մտցնում են թագավորի տան երկար նրբանցքը, որի բոլոր երդիկները փակ էին, իսկ պատերի տակ կանգնած էին իրենց ասպարների տակ պատուսպարված սակրավոր զինվորները: Երբ Դղակն անցնում էր մութ ու երկար նրբանցքով, սակրավորները սկսում են քաշքշել նրան. Դղակը քանիցս ձեռք տանում է դեպի իր զենքերը, բայց ոչ մի զենք չի կարողանում հանել, որովհետև զենքերի խճճվել էին մեծ ու երկար զգեստների ծալքերի մեջ:

Դղակը խոշոր, թիկնեղ, հաղթանդամ մարդ էր, բայց անգն չի կարողանում մաքստել սակրավոր

զինվորների բազմության հետ: Սակրավորները շրջապատում են նրան, բռնում, վերև բարձրացնում և այդպես տանում, հասցնում թագավորի սեղանատան դուռը: Թագավորը տեսնելով, որ Դղակին բերում են սեղանատուն, ասում է զինվորներին.

— Ոչ այստեղ, ոչ այստեղ, հանդերձատունը տարեք դրան:

Զինվորները Դղակի ձեռները հետևն են կապում, նրբանցքով տանում, հասցնում են արքունի հանդերձատունը, ուր սովորաբար թագավորն էր հանդերձավորվում և գլխին թագ դնում:

Դղակը դիմում է զինվորներին.

— Թագավորին ասացեք այսպես. ես արժանի էի այս մահվան, բայց քեզ վայել էր ինձ սպանել հրապարակով և ոչ թե թագադրության այս սենյակում, և քո թագը արշունով շաղախել:

Զինվորներն արագ բռնում են Դղակ մարդպետին, գլուխը կտրում, զարկում Աղակի ծայրին և կանգնեցնում արքունական հրապարակում:

### Արշակ և Դրաստամատ\*

Այդ ժամանակներում հայոց Արշակ թագավորը դեռևս կենդանի էր և բանտարկված Պարսկաստանի հեռավոր Անհուշ բերդում:

Պարսիկները դադարեցրել էին հայերի դեմ եղած երկարամյա կռիվները, որովհետև քուշանների Արշակունի թագավորը, որ նստում էր Բալխ<sup>1</sup> քաղաքում, պատերազմ էր սկսել Արշակունիների թշնամի Սասանյան տոհմի ժառանգ պարսից Ծապուն թագավորի դեմ:

Ծապուն թագավորը հավաքում է իր բոլոր զորքերը, այդ թվում նաև Հայոց աշխարհից գերի տարված հեծելազորը և պատերազմի տանում քուշանների դեմ: Ծապունի հետ քուշանների կռիվն մասնակցում էր նաև Արշակ թագավորի հետ Պարսկաստան գերի տարված Արշակ թագավորի ներքինին՝ Անգեղտան իշխան Դրաստամատը:

Նա դեռևս Տիրան թագավորի ժամանակներից իշխում էր Անգեղտան վրա, նրան էր ենթակա նաև Ծոփքի Բնաբերդ կոչված բերդը, ուր պահվում էին արքունի գանձերի մի մասը: Նա մեծ իշխանության տեր էր, սիրված Արշակ թագավորից ու պատիվների արժանացած, և նրա իշխանական դիրքը հայոց մյուս իշխաններից ամենաբարձրն էր:

Ծապունի զորքը քուշանների հետ վարած կռիվներում սաստիկ նեղվում է, մեծ ջարդ կրում, մի մասն էլ գերի է ընկնում կամ փախչում: Այդ ճակատամարտին մասնակցում էր նաև Դրաստամատը: Նա մեծ քաջագործություններ է կատարում այդ կռիվում. քուշաններից շատերին կոտորում, գլուխները կտրում բերում Ծապունի առջև: Եվ երբ Ծապունը պարտվելով շրջապատվում է քուշաններից, Դրաստամատը անասելի խիզախությամբ մարտնչում է շրջապատողների դեմ և իր մահը աչքն առած, շրջապատումից դուրս է հանում Ծապունին, փրկում նրա կյանքը:

Պարսկաստան վերադառնալիս Ծապունը մեծ շնորհակալություն է հայտնում Դրաստամատ ներքինուն նրա ծառայությունների համար, ապա ասում.

— Դրաստամանտ, խնդրիր ինձանից ինչ որ կամենում ես, ես քեզ ոչինչ չեմ մերժի:

— Արքն, — ասում է Դրաստամատը, — ես քեզանից ոչինչ չեմ ուզում, միայն խնդրում եմ, որ հրաման տաս ինձ, գնամ տեսնեմ իմ իսկական տիրոջը՝ հայոց Արշակ թագավորին: Ես քեզանից միայն մեկ օրվա տեսակցություն եմ խնդրում և իրավունք, որ թույլ տաս նրան կապանքներից արձակեմ, իմ ձեռով նրա գլուխը լվանամ, օծեմ, ազնիվ զգեստ հագցնեմ, նրա համար սեղան պատրաստեմ, նրա առաջ խորտիկներ դնեմ, զինի մատուցեմ և նվազով նրան ուրախացնեմ:

\* Շարադրված է ըստ Փ. Բուզանդի «Հայոց պատմության»:

<sup>1</sup> Բալխ կամ Բանդ, հնագույն քաղաք հին Բակտրիայում, այժմյան Միջին Ասիայում, Ամու-Դարիա գետի հովտում, հնում եղել է պարսից Կյուրոս թագավորի մայրաքաղաքը. հետագայում վաղ միջնադարում, քուշանների թագավորության մայրաքաղաքը: Քուշանները իրանական ցեղեր էին, բնակվում էին Միջին Ասիայի հարավում, Հնդկաստանի և Աֆղանստանի հյուսիսում:

— Դժվար բան խնդրեցիր, — ասում է Շապուհ թագավորը, — որովհետև պարսից թագավորության գոյությունից ի վեր այդ բերդը կոչվել է Անհուշ<sup>1</sup> նրա համար, որ ոչ ոք չի համարձակվել թագավորներին հիշեցնել, թե նրանք այնտեղ որևէ մեկին բանտարկել են, կամ էլ չի հիշատակվել որևէ մեկը այն մարդկանցից, որոնց այդ բերդում բանտարկել են. էլ հոր մնաց, որ հիշատակվի իմ հակառակորդը, ինձ հավասար թագավորը, որ իմ հրամանով կապված է այդ բերդում: Մինչդեռ դու խախտեցիր այդ կարգը և մեզ անհանգստացրիր:

Ինու, Դրաստամատ, մահդ աչքդ առար և հիշեցրիր Անհուշը՝ անհիշելին, մի բան, որ Արշաց թագավորության մեջ, իր գոյության սկզբից մինչև օրս բնավ չէր պատահել: Բայց որովհետև մեծ են քո ծառայությունները իմ հանդեպ, թող կատարվի քո ցանկությունը, գնն, ինչ որ խնդրեցիր, տալիս եմ: Միայն զարմանում եմ, որ դու քո օգուտի համար չես մտածում, փոխանակ ինձանից երկրներ, գավառներ, գանձեր խնդրեիր, քո թագավորին տեսնել ես խնդրում: Թող դա բացառություն լինի Արշաց թագավորության օրենքի մեջ, գնն, քեզ տվեցի, ինչ որ խնդրեցիր քո ծառայության փոխարեն:

Շապուհը Դրաստամատին տալիս է մի հավատարիմ թիկնապահ, արքունական մատանիով կնքված հրովարտակ, որով թույլատրվում էր Դրաստամատին մտնել Անհուշ բերդը, տեսնել իր կապված թագավորին և անել այն, ինչ կամենում է:

Դրաստամատը արքունական հրովարտակով՝ ու թիկնապահով գնում է Անհուշ բերդը, հանդիպում իր իսկական տիրոջը՝ Արշակին, արձակել է տալիս երկաթե կապանքները, հանում ոտնակապերն ու ձեռնակապերը, գլուխը լվանում, լողացնում, ապա Արշակին հագցրելում է ազնիվ զգեստներ, սեղան սարքում, Արշակին բազմեցնում սեղանի գլխին, նրա առաջ դնում արքայավայել ընթրիք, ընտիր գինի և ինչպես թագավորների կարգն էր, նրան զվարճացնում է և ուրախացնում գուսանների երգ ու նվագով:

Ապա ընթրիքից հետո սեղանի վրա աղանդեր ու միրգ են դնում՝ խնձոր, վարունգ, ամիճ, Արշակի առջև դանակ են դնում, որպեսզի կտրի և ուտի, ինչպես կամենա: Իսկ Դրաստամատը իր թագավորի առջև ոտքի կանգնած՝ շարունակ նրան էր ծառայում, ունեյիք, գինի ու միրգ մատուցում, ուրախացնում էր ու մխիթարում:

Երբ Արշակը ընթրիքից հագեցնում է, գինի է խմում, գինին գլուխն է ընկնում, հարբում, հպարտությամբ հիշում է իր նախկին արքայական վիճակը և աղաղակում.

— Վնչ ինձ, Արշակիս, որտեղից ուր ընկա և ինչ օրի հասա:

Դանակը, որ բռնել էր ձեռին և պիտի միրգ կտրեր, ուժգնությամբ խրում է իր սիրտը և տեղնուտեղը իր նստած տեղում մեռնում:

Դրաստամատը արագ վրա է ընկնում, դանակը քաշում, հանում թագավորի մարմնից և խրում իր կողք և ինքն էլ նույն ժամին մեռնում իր թագավորի հետ միասին:



<sup>1</sup> Բերդի անունն այստեղ ենթարկված է ժողովրդական ստուգաբանության, իրր թե այդ անունը նշանակում է ան — հուշ, այսինքն՝ անհիշելի, անհիշատակելի, անհիշատակ, որ ենթակա չէ հիշվելու կամ հիշատակվելու:

## Մուշեղը վերականգնում է Հայոց աշխարհի սահմանները\*

Պարսիկների հետ պատերազմը դադարելուց հետո հայոց մեծ զորավար Մուշեղը սկսում է պատժել բոլոր նրանց, ովքեր ապստամբել էին Արշակունյաց թագավորության դեմ, դավաճանել հայրենիքը, անցել պարսից Շապուր թագավորի կողմը:

Մուշեղը նախ նվաճում է հայոց թագավորի կալվածքը, որ գտնվում էր Ատրպատականում, ապա այդտեղ գտնվող գավառները դարձնում Հայոց աշխարհին հարկատու, վերցնում շատ գերիներ ու պատանդներ իբրև ոսգմատուգանք:

Մուշեղը նվաճում է Նոշիրական աշխարհը<sup>1</sup>, Կորդիք, Կորդուք և Տնորիք գավառները, Մարաց կողմերը, Արցախի երկիրը, ջարդում բոլոր նրանց, ովքեր ապստամբել էին հայոց թագավորի դեմ, այդ երկրներն ու գավառները հնազանդեցնում, դարձնում հարկատու:

Նա պատերազմում է Աղվանից երկրի դեմ, հաղթում, հետ խլում Ռուսին, Ծակաշենը, Գարդմանաձորը, Կողթը<sup>2</sup> և սրանց շուրջը եղած սահմանակից շատ գավառներ, որոնք գրավել էին հայոց թագավորի դեմ ապստամբած աղվանները: Կուր գետը սահման է դարձնում Հայոց աշխարհի և Աղվանքի միջև, ինչպես նախկինում էր եղել:

Ապա Մուշեղ սպարապետը խստորեն պատժում է Կասախից երկրի Փայտակարան<sup>3</sup> քաղաքի տերերին, որոնք ըմբոստացել ու դավաճանել էին հայոց թագավորին: Նա շատերին գլխատում է, շատերին գերի վերցնում, երկիրը հպատակեցնում և այնտեղ թողնում վերակացու պաշտոնյաներ:

Այնուհետև Մուշեղը զորքով մտնում է Վրաց աշխարհը, չարաչար պատժում հայոց թագավորին դավաճանած և նրա դեմ ապստամբած իշխաններին: Իսկ Գուգարաց աշխարհի բղեշխին, որը ծառայում էր հայոց թագավորին, բայց հետո ապստամբել էր ու դավաճանել, բռնում, գլխատում է, կոտորում նրա տոհմի բոլոր տղամարդկանց, կանանց ու սղջիկներին էլ գերի վերցնում: Նա նվաճում, հնազանդեցնում է Գուգարքը, ապա Հայաստանի և Վրաստանի միջև վերականգնում նախկին սահմանը, որ քաջանվում էր Կուր գետով:

Դրանից հետո Մուշեղ զորավարը իջնում է Հայոց աշխարհի հարավ-արևմտյան գավառները, մտնում Աղձնիք, մեծ կովով հնազանդեցնում բոլորին, ձերբակալում և գլխատում Աղձնյաց բղեշխին, կանանց սպանում, իսկ որդիներին գերի վերցնում: Մուշեղն այնտեղից արշավում է Մեծ Ծոփք, Անգեղտուն, Անձիտ գավառները, ապստամբներին պատժում, իսկ գավառները դարձնում հարկատու և հպատակ հայոց Պսպ թագավորին:

Այսպես, հայոց քաջ զորավար Մուշեղ սպարապետը մեծ նախանձախնդրությամբ, ջանասիրությամբ ու հավատարմությամբ օր ու գիշեր աշխատում է Հայոց աշխարհի և նրա թագավորության վերականգնման համար: Նա իր ամբողջ կյանքը դրել էր իր աշխարհի, իր ժողովրդի, իր քնիկ տերերի՝ Արշակունի թագավորների գոյության ու անվտանգության արքայաթիվմանը: Նա մեծ պատերազմներ էր մղում, ճիգ ու ջանք թափում, որ Հայոց աշխարհի սահմաններից մի կորեկի արտի չափ հող անգամ չխլվի և չբռնագրավվի:

\* Ծարտդրված է ըստ Փ. Բուզանդի «Հայոց պատմության»:

<sup>1</sup> Տարածվում է Ռոմիա (Սապոտան) լճից հյուսիս-արևմուտք:

<sup>2</sup> Բոլորն էլ գավառներ էին Հայաստանի Ռուսիք նահանգում, որ ընկած էին հյուսիս-արևելյան Հայաստանում, Թուր գետից դեպի հարավ:

<sup>3</sup> Փայտակարան քաղաքը գտնվում էր Արցախից դեպի արևելք, Արաքս գետից դեպի արևմուտք:

## Պապ թագավորի սպանությունը\*

Պապ թագավորը, երկիրն ամրապնդելով, սկսում է անկախանալ, միտքը ծոում է հունաց թագավորից: Իր թիկունքն ամրապնդելու նպատակով անգամ փորձում է սեր ու միաբանություն հաստատել պարսից թագավորի հետ:

Նա պատգամավորներ է ուղարկում հունաց թագավորի մոտ՝ հետևյալ պահանջով. «Կեսարիան, նրա հետ նաև ուրիշ տասը քաղաքներ մերն են եղել, հետ վերադարձրո՛ւ: Ուրիա քաղաքն էլ մեր նախնիներն են շինել, ուստի և մեզ է պատկանում: Եթե չես ուզում, որ խոռովություն ծագի, ապա այդ քաղաքները մեզ վերադարձրու, հակառակ դեպքում մեծ պատերազմով կկոպենք քո դեմ»:

Մուշեղ սպարապետը և հայոց մյուս իշխանները շատ են հորդորում իրենց թագավորին, որ հունաց թագավորության հետ իր ուխտը չխզի, բայց Պապը մնում է անհողդողդ: Նա բացահայտ թշնամությամբ է սկսում վերաբերվել հույների և հունաց թագավորի հետ:

Բայց հունաց Տերենտ զորավարն ու Ադե կոմսը իրենց զորքով դեռևս գտնվում էին Հայոց աշխարհում: Հունաց թագավորը գաղտնի դեսպան է ուղարկում Հայաստանում գտնվող իր զորավարների մոտ և հրամայում հայոց Պապ թագավորին սպանել:

Տերենտ ստրատելաուն ու Ադե կոմսը, ստանալով իրենց թագավորի գաղտնի հրամանը, հարմար առիթ են որոնում այն իրագործել:

Մի անգամ, երբ հայոց իշխաններն ու զորավարներն իրենց թագավորի մոտ չէին, Տերենտն ու Ադեն որոշում են գործի անցնել:

Պապ թագավորի բանակն այդ ժամանակ գտնվում էր Բագրևանդ գավառի Խու կոչված դաշտում, իսկ հունաց զորքերը բանակ էին դրել մոտակայքում: Հույն զորավարներն իրենց բանակում փառավոր հացկերույթ են կազմակերպում և հայոց Պապ թագավորին հրավիրում ընթրիքի: Նրանք մեծ պատվով ու արժանավորությամբ ընդունում են հայոց թագավորին, բերում, բազմեցնում կերուխումի սեղանի գլխին: Երբ Պապ թագավորը մտնում է Տերենտ զորավարի սենյակը, տեսնում է, որ սենյակի չորս պատերի տակ կանգնած են լեգեոնի ասպարակիր զինվորները՝ ձեռներին՝ վահան, գոտիներում՝ սակր: Իսկ սենյակից դուրս դարձյալ կազմ ու պատրաստ կանգնած էին լավ սպառազինված զինվորներ՝ վրայից սովորական զգեստ հագած: Պապին թվում է, թե այդ բոլոր զինվորները իր պատվի համար են պահակ կանգնած: Մինչ Պապը սեղանի գլխին նստած ընթրիք էր վայելում, նրա թիկունքին կանգնած սակրավոր զինվորներն աստիճանաբար շատանում են և շրջապատում նրան:

Գինեխումի ժամանակ ուրախության առաջին բաժակը մատուցում են Պապ թագավորին, և նույն պահին ճնշում է թմբուկների ու սրիկների, քնարների ու փողերի ներդաշնակ ձայնը: Այդ վայրկյանին էլ վահանակիր զինվորներին ազդանշան է տրվում: Եվ մինչ Պապը ուրախության գինու ոսկե թասը ձեռին բռնած՝ բերանին էր մոտեցնում և նաչում գուսանների խմբին, իսկ աջ ձեռը դրել էր աջ ազդրին կապած դաշույնի կոթին, թագավորի թիկունքին կանգնած երկու սակրավոր զինվորներ, սպասավորման ու կեպորտ վահաններով պատսպարված, իրենց սակրերը միասին քարձրացնելով, զարկում են Պապ թագավորին. մեկի հարվածից թագավորի վիզն է կտրվում, մյուսից՝ աջ ձեռի թաթը, որ դրված էր դաշույնի կոթի վրա: Պապ թագավորը բերանքսիվայր ընկնում է սեղանին, թասով գինին խառնվում է պարանոցից հոսող արյանը, և նա տեղնուտեղը մեռնում է:

Սեղանատանը աղմուկ ու շփոթություն է ընկնում, ընթրիքին ներկա Պապի ուղեկից իշխան Գնել Անձևացին իսկույն իր բազմած տեղից վեր է թոնում, քաշում սուրը և սպանում թագավորին սպանող զինվորներից մեկին: Այդ պահին հունաց Տերենտ զորավարը քաշում է սուրը և հարվածում Գնելի գլխին: Սուրը կտրում է Գնելի գլխի սկավառակը և շուռ տալիս աչքերի վրա: Գնելը ընկնում է մեռնում, իսկ ներկաներից ոչ ոք այլևս չի հանդգնում հույն զինվորների դեմ ըմբոստանալ:

\* Շարադրված է ըստ Փ. Բուզանդի «Հայոց պատմության»:

## Վարագդաստ և Մուշեղ\*

Պապի սպանությունից հետո հայ մեծամեծներն ու իշխանները հավաքվում են Մուշեղ սպարապետի մոտ խորհրդի:

— Ի՞նչ անենք, — ասում են նրանք, — լուծենք մեր թագավորի վրեժը, թե ոչ:

Երկար խորհրդակցելուց հետո գալիս են այն համոզման, թե՛

— Մենք չենք կարող հերթանոս պարսիկների հպատակության տակ մտնել, ոչ էլ հունաց թագավորին թշնամացնել մեր դեմ: Իսկ երկուսի դեմ կռվել և երկուսին էլ թշնամացնել՝ իմաստ չունի, որովհետև առանց մեկնումեկին մեր թիկունքում ունենալու, հնարավոր չէ ապրել:

Եվ որոշում են, առանց Պապի սպանության վրեժը լուծելու, հնազանդվել հունաց թագավորին:

Հունաց թագավորը Հայոց աշխարհի վրա թագավոր է նշանակում Վարագդաստ անունով մեկին, որը դարձյալ Արշակունիների տոհմից էր:

Վարագդաստը երիտասարդ էր, հաղթահասակ ու անվեհեր և շատ հզոր նետաձիգ: Պարսից Ծապունի թագավորից փախչելով, գնացել էր Հունաստան և իր քաջության շնորհիվ արժանացել հունաց թագավորի հովանավորությանը: Իր քաջությամբ, մարմնական մեծ ուժով և ճարպկությամբ Վարագդաստը Հունաստանում մասնակցում է ոլիմպիական խաղերին: Պիսա քաղաքում նա հաղթում է բոնցքամարտիկներին, իսկ Արեգ քաղաքի կրկեսի ըմբշամարտում կես օրվա ընթացքում նա մի քանի ատյուժ է սպանում և արժանանում ոլիմպիական ըմբշամարտում հաղթողի պատվավոր կոչման:

Վարագդաստը նաև քաջ ու անվեհեր կռվող էր: Նա հունաց զորքերի կազմում մասնակցում էր լանգոբարդների՝ դեմ մղած կռիվներին: Մի անգամ պաշարված բերդի համար մղվող ճակատամարտում Վարագդաստի վրա են հարձակվում հինգ ախոյաններ: Վարագդաստը սուրը մերկացնելով, մեկ-մեկ բռնորին կոտորում է և դիմելով դեպի բերդը՝ դիպուկ ու ճարպիկ նետահարությամբ բերդի պարսպի վրայից թշնամու տասնյոթ զինվորի միանգամից ներքև է գլորում, ինչպես ուժեղ մորիկից թափվող վաղափառ թզեր: Նա իր հերոսական արարքներով առհասարակ հիշեցնում էր իր քաջ ու անվեհեր նախնուն՝ Տրդատ մեծ թագավորին:

Վարագդաստը մեծ շուքով ու հանդիսավորությամբ գալիս է Հայաստան և թագավորում: Հայոց բռնոր նախարարներն ու մեծամեծները հավաքվում են նրա շուքը, ուրախանում իրենց նոր թագավորով:

Իր թագավորության առաջին տարում Վարագդաստը երկրում շրջագայելիս, Դարանաղիի դժվար մատչելի տեղերից մեկում հանդիպում է մի խումբ ասորի ավազակների: Վարագդաստը հարձակվում է ավազակների վրա, փախուստի մատնում և հետևներից ընկած՝ հետապնդում: Եփրատ գետի նեղ հոսանքներից մեկում ավազակները փայտե կամրջակով անցնում են մյուս ափը և իրենց հետևից կամրջակը վերցնում, զցում են գետը: Վարագդաստը վազքով հասնում է գետաբերանին, ցատկում է Եփրատի վրայով, թռչում, անցնում է մյուս ափը: Ավազակները նրանից զարհուրած, զենքերը վայր են դնում և անձնատուր լինում:

Վարագդաստը թեպետ շատ քաջ էր ու համարձակ, բայց բնավորությամբ մանկամիտ էր և երեխայի պես դյուրահավատ:

Մուշեղ սպարապետը բարի խորհուրդներով միշտ նրան խրատում էր, համոզում՝ շրջահայաց լինել, թագավորությունը ամուր պահել, իր թշնամիներին ու բարեկամներին ճանաչել: Ինքը՝ Մուշեղը, առաջվանից ավելի խոհեմությամբ ու զգուշությամբ էր հոգ տանում Հայոց աշխարհի սահմանների ամրությունը, անվտանգությունը, շենությունն ու բարեկարգությունը հաստատ պահելու համար: Նա Հայոց աշխարհի գրեթե բոլոր գավառներում ամուր բերդեր է շինել տալիս, շրջապատում մեկ կամ կրկնակի պարիսպներով, դարձնում զորանիստ տեղեր հայոց զորքերի համար, որպեսզի դրանք դառնան ռազմական կայուն ամրություններ դրսից ներխուժող թշնամիների դեմ:

\* Ծարադրված է ըստ Մ. Խորենացու և Փ. Բուզանդի «Հայոց պատմություն» գրքերի:

<sup>1</sup> Լանգոբարդներ (բառացի՝ երկայնամորուսներ), հին հայերենում՝ դանկվատներ, գերմանական ցեղեր, որոնք մեր թվականության առաջին դարում ապրում էին Էլբայի ձախ ափին. նրանք հետզհետե տարածվում են դեպի Դանուբ գետը, անցնում Ալպյան լեռները, նվաճում հյուսիսային և միջին Իտալիան, ապա մինչև 8-րդ դար հետզհետե ձուլվում տեղական ռոմանական ազգաբնակչության մեջ: Նրանց անունով մինչև այժմ Լոմբարդիա է կոչվում Իտալիայի հյուսիսում գտնվող ընդարձակ նահանգը:

## Մուշեղի սպանությունը\*

Հայոց նախարարները տեսնելով, որ Վարազդատ թագավորը դյուրահավատ մանուկ է, չարք բարոց գասել չգիտե, սկսում են այնուհետև թագավորին խաղացնել իրենց ուզածի պես, անել են տալիս այն, ինչ իրենք են կամենում:

Բառ Սահառունին, որ Վարազդատ թագավորի դայակն էր ու ուսուցիչը, մտադրվում է Մուշեղից հափշտակել սպարապետության պաշտոնը: Նա թագավորի մոտ սկսում է բամբասել ու չարախոսել Մուշեղին և Մամիկոնյանների ամբողջ տոհմին:

— Հնուց ի վեր, — ասում է նա Վարազդատին, — Մամիկոնյաններն են կորստի մատնել Արշակունիներին. նրանք ի բնե ձեր հակառակորդներն են եղել, կերել են ամբողջ Հայոց աշխարհը և Արշակունի թագավորների կործանման պատճառը դարձել: Նրանցից ամենաչարը ու անգր Մուշեղն է, որը միշտ սիրել ու պատվել է ձեր թշնամիներին, իսկ մեզ ու ձեր սիրելիների հետ վարվել անգորեմ, երկդիմությամբ ու չարամտությամբ: Դա այն Մուշեղը չէ, որ Պապի թագավորության ժամանակ պարսիկների դեմ պատերազմելիս մի քանի անգամ հնարավորություն ունեցավ Շապուհ թագավորին սպանել, բայց դիտավորյալ ազատ արձակեց: Դա այն Մուշեղը չէ, որ Շապուհի կանանց ձեռք գցելուց հետո նրանց մեծ խնամքով ու հոգատարությամբ հետ վերադարձրեց: Դա այն Մուշեղը չէ, որ աղվանից հունաց թագավորին ձեռք գցեց, բայց սպանել չկամեցավ, այլ ազատ արձակեց: Դա այն Մուշեղը չէ, որի հրամանով ու խորհրդով հունաց զորավարները սպանեցին Պապ թագավորին. հենց ինքը Մուշեղն էր, որ հունաց թագավորին գրգռեց ու թշնամացրեց Պապ թագավորի դեմ, մինչև որ սպանել տվեց: Հիմա էլ նույն այդ Մուշեղը Հայոց աշխարհը լցրել է բերդերով, մտադիր է դրանք դարձնել զորանիստներ, հունաց զորքին այնտեղ բնակեցնելու համար: Եվ դրանից հետո կան հունաց թագավորը քեզանից կխլի հայոց թագավորությունը, կան հենց Մուշեղը քեզ կսպանի և ինքը կթագավորի: Այնպես որ, արքա, մտածիր անելիքդ, քանի դեռ ուշ չէ, Մուշեղին մեջտեղից վերացրու:

Բառ Սահառունին և նրա համախոհները նման խոսքերով հաճախ էին Վարազդատ թագավորին գաղտնի գրգռում Մուշեղի դեմ, մինչև որ թագավորին համոզում են սպանել տալ հայոց մեծ զորավար սպարապետին:

Բայց Մուշեղին բռնելն ու սպանելը հեշտ գործ չէր. դրա համար ԼԼ նրանք երկար խորհուրդ են անում, թե ինչ ձևով կարողանան իրագործել իրենց դավադրությունը: Նրանք Մուշեղից շատ էին վախենում.

— Եթե գլխի ընկնի, — ասում էին, — մեծ պատերազմ կհարուցի, և ոչ ոք չի կարողանա նրա քաջությանը դեմ կանգնել. պետք է մի խորամանկ հնար մտածել:

Մի օր հայոց Վարազդատ թագավորը հրամայում է մեծ ու ճոխ ընթրիք սարքել և ընթրիքին հրավիրել բոլոր ավագ պատվավոր մարդկանց, մեծամեծներին և Մուշեղ սպարապետին: Թագավորը նախապես շատ հզոր ու հաղթանակած մարդիկ է հավաքում, հրահանգավորում, նախապատրաստում՝ Մուշեղի վրա հանկարծակի հարձակվելու և ձերբակալելու համար:

Հրավիրվածները գալիս, թագավորի սեղանատանը ընթրիքի են բազմում: Վարազդատը հյուրերին շատ է ուրախացնում, մեծ քանակությամբ գինի է խմել տալիս և գուսանների երգ ու նվագով զվարճացնում: Նա նախապես պայմանավորվել էր իր մարդկանց հետ, որ գինեխումի թունդ պահին, «երբ կտեսնեք, որ Մուշեղ սպարապետը լավ հարբել է և խելքը կորցրել, դուք այդ ժամանակ նրան կշոջապատեք»:

Ընթրիքի ժամանակ բոլոր հյուրերը լավ խմում են, գինովանում, իսկ Վարազդատը զգուշանում էր գինի խմելուց: Երբ Վարազդատը նկատում է, որ բոլորն ԼԼ արդեն լավ հարբել են, գլուխները կորցրել, տեղից վեր է կենում դուրս գալու համար: Սեղան բազմած բոլոր ավագները ոտի են կանգնում՝ թագավորին պատիվ տալու նպատակով: Եվ հանկարծ այդ պահին, տասներկու ուժեղ տղաձարդ, ում որ թագավորը նախօրոք ցուցում էր տվել, հետևի կուլմից բռնում են Մուշեղին, վեց մարդ մի ձեռից է բռնում, վեց մարդ՝ մյուս ձեռից: Մուշեղը հարցական նայում է ոտի էլած թագավորին, թե այս ինչ է նշանակում: Թագավորը պատասխանում է.

\* Շարադրված է ըստ Փ. Բուզանդի «Հայոց պատմության»:

— Գնն Պապ թագավորի մոտ, հարցրու և կիմանաս, թե ինչ պատճառով է:

Այս ասելով թագավորն ուղղվում է դեպի դուռը և դուրս գալիս: Մուշեղը դատնությանը թագավորի հետևից է նետում հետևյալ խոսքերը.

— Իմ այնքան ծառայությունների, այնքան արյուն ու քրտինք թափելու, քրտինքս նետի սլաքներով սրբելու վարձատրությունն անչա էր: Երանի թե այս մահը ինձ հասներ ձիու վրա, պատերազմի դաշտում կովելիս...

Այսքանն է միայն Մուշեղը հասցնում ասել, որովհետև նույն պահին թագավորի դայակ Բատ Սահառունին հանում է կողքից կախած դաշույնը և խրում Մուշեղ գորավարի շնչափողը և անմիջապես գլուխը կտրում:

Մուշեղի մարմինը վերցնում, տանում են իր հայրենի տունը՝ Ողական ամրոցը:

Երբ Մուշեղ ապարապետի մարմինը բերում են իր տունը, տանեցիները չեն հավատում, թե նա մեռել է, թեպետ տեսնում էին գլուխը կտրված, մարմնից անջատված:

— Նա անթիվ անգամ կոիվների մեջ էր մտել, բայց ոչ մի վերք չէր ստացել, ոչ մի նետ նրան չէր դիպել, ուրիշ ոչ մի վնասում նա չէր խոցվել, հիմա ի՞նչ վնաս կարող էր նրա վրա բանել և ի՞նչ ձեռք կարող էր նրան սպանել:

Հարազատներից շատերը հավատացած էին, թե նա կլեկնդանան: Ուստի Մուշեղի գլուխը կտրում են նրա մարմնից, մարմինը հանում, դնում են բերդի աշտարակի տանիքը, ասելով.

— Որովհետև Մուշեղը քաջ մարդ էր, ասլեզները՝ կիջնեն և նրան կլեկնդանացնեն:

Պահապան են դնում հսկելու և սպասում նրա հարությանը: Սակայն մարմինը սկսում է քայքայվել, նկնել: Ստիպված Մուշեղի մարմինն իջեցնում են աշտարակից, լաց ու կոծ անում և թաղում ըստ իշխանական կարգի:

## ՄԱՆՎԵԼ\*

### Վարազդատ և Մանվել

Մուշեղի սպանությունից հետո Վարազդատը Հայոց աշխարհի սպարապետությունը հանձնում է իր դայակ Բատ Սահառունուն՝ Մուշեղի քուր բանաարկուին և սպանողին, իսկ Մամիկոնյան տոհմի տանուտեր ու նահապետ է նշանակում Վաչե Մամիկոնյանին:

Այդ ժամանակ Հայաստան են վերադառնում Պարսից աշխարհի գերի տարված Մամիկոնյան տոհմից երկու եղբայր, մեկի անունը՝ Մանվել, մյուսինը՝ Կոմս: Նրանք Ծապուհի կողմից Պարսկաստան գերի տարված այն զինվորների մեջ էին, որոնց Ծապուհը տարել էր քուշանների դեմ մղվող պատերազմին մասնակցելու:

Երբ պարսից զորքերը քուշաններից չարաչար պարտվում են և գլխովին կտորվում, Մանվել և Կոմս եղբայրները այդ կովում մեծ քաջագործություններ կատարելով, իրենց կյանքը փրկում են, ազատվում: Պարսից զորքերից միայն այս երկու եղբայրներն են կենդանի մնում և ողջ ու առողջ Քուշանաց աշխարհից հետիոտն գալիս հասնում են պարսից աշխարհ, ներկայանում Ծապուհ թագավորին: Բայց որովհետև պարսից թագավորը իր պարտության և զորքի գլխովին բնաջնջման պատճառով շատ տխուր էր և անտրամադիր, երբ տեսնում է, որ զորքերից միայն այս երկուսն են ողջ ու առողջ մնացել և վերադարձել, սաստիկ բարկանում է նրանց վրա, անարգում և իր երկրի սահմաններից դուրս քշում:

Մանվելն ու Կոմսը երեսները դարձնում են դեպի իրենց աշխարհը և ոտով ընկնում ճանապարհ: Գալիս են, գալիս, շատ են գալիս, թե քիչ՝ Մանվելը հոգնում է, չի կարողանում քայլել ոտների ցավի պատճառով:

<sup>1</sup> Առլեզներ, արաբեզներ կամ հարաբեզներ, հայոց հին հավատալիքներով կովում ընկած հերոսներին վերակենդանացնող շնակերպ ոգիներ, որոնք երկնքից իջնում են գետին, լիզում զոհված հերոսների վերքերը և վերակենդանացնում: Նույն հավատալիքը տես նաև «Արա Գեղեցիկ և Ծամիրամ» առասպելում:

\* «Մանվել» գլուխն ամբողջապես շարադրված է ըստ Փ. Բուզանդի «Հայոց պատմության»:



Երկու եղբայրն էլ շատ հաղթանդամ էին, իսկական հսկաներ: Կոմսը, տեսնելով, որ Մանվելը չի կարողանում քայլել, շափալում է աչք վիթխարի մարդուն և օրական տասը փարսախ<sup>1</sup> տարածություն կտրելով, բերում հասցնում է Հայոց աշխարհ:

Երբ Մանվելն ու Կոմսը գալիս հասնում են իրենց հայրենի Տարոն աշխարհը, Վաչե Մամիկոնյանը, որ Վարազդատի կողմից նշանակվել էր Մամիկոնյան տոհմ նահապետ, իրենց իշխանական տան նահապետության և տանուտիրության պատիվը հանձնում է Մանվելին, որովհետև նա էր իրենց տոհմի մեջ ավագագույնը: Մանվելը դառնում է Մամիկոնյանների տոհմի նահապետ տանուտերը, իսկ Վաչեն՝ նրա երկրորդը:

Իր տոհմի առաջնության պատվին արժանանալուց հետո Մանվելը, առանց Վարազդատ թագավորի հրամանի, հետ է խլում հայոց սպարապետության իրավունքը, որ սկզբից ի վեր տրված էր Մամիկոնյան տոհմին, և Վարազդատ թագավորին ուղարկում հետևյալ պատգամը.

«Մենք ամբողջ տոհմով հին ժամանակներից ի վեր հավատարմությամբ ծառայել ենք ձեզ՝ Արշակունիներիդ, մեր կյանքը զոհել ենք ձեզ համար, ապրել ու մեռել ենք ձեզ համար. Մուշեղի հայր Վասակը կորավ Արշակ թագավորի համար, և մենք միշտ աշխատել, չարչարվել ենք ձեր ցեղի թագավորության համար: Ե՛վ դուք, փոխանակ մեր ծառայությունների համար մեզ վարձատրելու, դուք՝ Արշակունիներիդ, կոտորեցիք մեզ, որոնք թշնամիներից չմեռան ու կենդանի մնացին:

Իմ քաջ եղբայր Մուշեղը, որ մանկությունից ի վեր կյանքը ձեզ համար մաշեց, ձեր թշնամիներին կոտորեց ու երկրից վռնդեց, որին թշնամիներն անգամ չկարողացան սպանել, դու նենգությամբ բռնեցիր և սեղանին ընթրիքի նստած տեղում՝ խեղդեցիր:

Բայց, ըստ երևույթին, դու Արշակունի էլ չես, այլ պոռնկորդի, որովհետև Արշակունիների իսկական վաստակավորներին չճանաչեցիր:

Ինացի՞ր նաև, որ մենք ոչ թե ձեր ծառաներն ենք, այլ ընկերները, անգամ ձեզանից էլ բարձր ենք, որովհետև մեր նախնիները Շենաց աշխարհի թագավորներ են եղել: Առաջին Արշակունի թագավորները լավ գիտեին, թե ովքեր ենք մենք և որտեղացի. քայց որովհետև դու իսկական Արշակունի չես, ուստի այդ էլ չգիտես: Թ՛ող ու հեռացիր այս աշխարհից, որպեսզի իմ ձեռքով չմեռնես»:

Վարազդատը ի պատասխան Մանվելի պատգամին, հայտնում է նրան հետևյալը.

«Ես իսկական Արշակունի եմ և իմ նախնի Արշակունիների թագն եմ դրել իմ գլխին և տիրել նրանց աշխարհին. ես իմ հորեղբոր՝ Պասի, վրեժը լուծեցի քո չարագործ եղբորից՝ Մուշեղից: Իսկ դու այս աշխարհից չես, ինչպես ինքդ ես խոստովանում, և քո նախնիները Շենաց աշխարհից մեզ մոտ են եկել իբրև պանդուխտներ: Ուրեմն, մի՛ մեռիր քո եղբոր նման, ես պատժելու փոխարեն քեզ ազատ եմ արձակում, էլ և գնա՛ քո Շենաց աշխարհը, ապրիր քո երկրում և այնտեղ թագավորիր: Եթե չկամենաս գնալ, ապա կմեռնես իմ ձեռքով այնպես, ինչպես Մուշեղը մեռավ»:

Մանվելն ու Վարազդատը մի քանի անգամ պատգամավորներ են ուղարկում միմյանց, ավելի խիստ ու վիրավորական խոսքեր են իրար հղում, ի վերջո իրար դեմ պատերազմելու տեղ ու ժամանակ են նշանակում:

Վարազդատ թագավորն ու Մանվել սպարապետը վերցնում են իրենց լավ սպառազինված զորքերը, գալիս են Կարինի դաշտը, ուր և տեղի է ունենում ճակատամարտը:

Վարազդատն ու Մանվելը, նիզակները ձեռներին, ձիերի վրա նստած՝ դուրս են գալիս իրար դեմ մենամարտի:

Վարազդատը, երբ նայում է Մանվելի հսկա հասակին, պինդ ու շքեղ կազմվածքին, ոտից գլուխ անխոցելի զրահավորմանը, ուժեղ զրահապատված երիվարին, նրան թվում է, թե իր դիմաց մի բարձր ու անմատուց լեռ է կանգնած: Հաղթահարելով իր այդ ամենի տպավորությունը, մահը աչքն առած նա հարվածում է Մանվելին, որովհետև փրկության այլ ելք չկար: Կարծելով, թե Մանվելն իր զրահի տակ անխոցելի է, Վարազդատն ամբողջ թափով նիզակը խփում է Մանվել գորավարի բերանին: Մանվելը բռնում է Վարազդատի նիզակը, արագ իրեն քաշում. նիզակի տեղը անցնում է Մանվելի թշի միջով,

-----  
<sup>1</sup> Փարսախը երկարության չափ է, մեկ փարսախը հավասար է 5250 մետրի:

չարդում ատամներից մի քանիսը, բայց Մանվելին հաջողվում է նիզակը խել թագավորի ձեռից: Մարտի այս անսպասելի ելքից շփոթված, Վարազդատը շրջում է ձիու գլուխը, դիմում փախուստի: Մանվելը ընկնում է Վարազդատի հետևից, հասնում, նիզակի տեղից բռնած, կոթով սկսում է ծեծել Վարազդատ թագավորի գլուխը և այդպես բշում, հալածում նրան մոտ չորս ասպարեզ<sup>1</sup>: Այդ ժամանակ վրա են հասնում Մանվել զորավարի զավակներ Հմայակն ու Արուաշեսը և նիզակները ձեռներին պահած, ուզում են խփել, սպանել Վարազդատին: Բայց Մանվելը որդիների հետևից աղաղակում ու կանչում է.

— Էհե՛լ, տիրասպան մի լինեք, չսպանեք ձեր թագավորին:

Զավակները լսում են իրենց հորը, իսկույն թողնում հեռանում են թագավորից:

Այդ օրը արքայական զորքը պարտվում է Մանվելի գնդից: Ճակատամարտի դաշտում ընկնում են շատ զինվորներ ու նախարարներ, ընկած մնում են բազմաթիվ ծանր վիրավորներ, շատերն էլ հալածվելով՝ դիմում են փախուստի: Մանվելի գունդն ընկնում է փախչող արքայական զորքի մնացորդների հետևից: Այդ ժամանակ դաշտում ընկած դիակների և ծանր խոցված վիրավորների միջով անցնում էր Մամիկոնյան տոհմից Համազասպյան անունով սեպուհի<sup>2</sup>, իր ասպարակիր զինվորների հետ: Վիրավորների մեջ էր նաև արքայական զորքերում կոպող Ռշտունյաց զավառի տեր Գարեգինը՝ Համազասպյանի քրոջ ամուսինը, որի կնոջը՝ Համազասպուհուն, պարսիկները կենդանի կախել էին Վանի բերդի աշտարակից: Գարեգինը ոչ խոցված էր, ոչ էլ վնասված, պարզապես ձիուց վայր էր ընկել և ոտքը ցավեցրել: Նա տեսնելով իր կողքից անցնող աներորդուն, ձայն է տալիս.

— Տեր Համազասպյան, ինձ էլ օգնիր, հրաման տուր ձի բերել ինձ, որ հեծնեմ:

— Ո՛վ ես դու, — հարցնում է Համազասպյանը:

— Ես Գարեգին Ռշտունին եմ, ձեր փեսան:

Համազասպյանը հրամայում է իր հետ եկող վահանավորներին.

— Իջե՛ք, վահաններդ վրան դրե՛ք, պահպանե՛ք, մինչև ձի ուղարկեմ:

Համազասպյանը գնում է, իսկ վահանավորները իջնում են ձիերից, վահանները դնում Գարեգինի վրա, պահապան կանգնում: Այդ պահին նրանց է մոտենում Մանվելի զորքի ասպարակիրների հրամանատար Դանուն: Տեսնելով պահակ կանգնած վահանավորներին, հարցնում է.

— Ո՛վ է դա, և ինչի՞ եք դուք իջել, կանգնել այստեղ:

— Սա Գարեգինն է՝ Ռշտունյաց տերը, — պատասխանում են զինվորները, — մեզ Համազասպյանը հրամայեց իջնել, պահպանել նրան:

Դանուն սաստիկ բարկանում է, գայրացած ասում.

— Համազասպյանը գուցե ուզում է դրան դարձյալ իր փեսան դարձնել և իր Համազասպուհի քրոջը դրան կնության տալ. դրա համար սրան խնայեց և հրամայեց պահպանել:

Դանուն իսկույն ձիուց վայր է ցատկում, քաշում թուրը, կատաղած հարձակվում Գարեգինի վրա, կտոր-կտոր անում, ցրում մի կողմ:

Մանվելի զորքն աստիճանաբար վերադառնում է հետապնդումից, իր հետ բերում ձերբակալված շատ նախարարների. նրանց թվում էին նաև Մուշեղին չարամտորեն սպանող Բատ Սահառունին՝ իր որդու հետ, և բոլոր նրանք, ովքեր նպաստել էին այդ սպանությանը:

Մանվել սպարապետը հրամայում է՝ նախ Բատ Սահառունու աչքի առաջ մորթել նրա որդուն, սպա գլխատել է տալիս Բատին և բոլոր նրանց, ովքեր մասնակցել էին Մուշեղի սպանությանը: Իսկ Վարազդատ թագավորին հալածելով, բշում են Հայոց աշխարհի սահմաններից դուրս: Նա գնում է Հունաց աշխարհ, ուր և մնում է ու մահանում:

Մանվել սպարապետը նվաճում է Հայոց աշխարհը, իր շուրջն է հավաքում երկրի բոլոր մեծամեծ-

<sup>1</sup> Ասպարեզը երկարության չափ էր Հին Հայաստանում: Մեկ ասպարեզը սովորաբար հավասար էր 230,1 մետրի: Կային նաև այլ չափի ասպարեզներ: Բարը ծագում է պարսկերենից և նշանակում է ձիաբշավ, ձիընթացարան, այսինքն՝ այն հրապարակը, որտեղ ձի են բշում: Հետագայում բարը օգտագործվել է նաև երկարության չափի իմաստով:

<sup>2</sup> Նախարարական տոհմից սերված իշխան, ընդհանրապես ազնվական ծագում ունեցող անձ:

ներին ու նախարարներին, կանգնում նրանց գլուխը, դառնում առաջնորդ, թագավորի փոխարեն իր ձեռն է առնում Հայոց աշխարհի իշխանությունը և երկիրը պահում շեն ու լի: Նա իր խնամքի տակ է վերցնում Պապ թագավորի կնոջը՝ Ջարմանդուխտ տիկնոջն ու նրա զույգ մանկահասակ զավակներին՝ Արշակին ու Վաղարշակին: Պատանի արքայազների դայակն ու սնուցողը ինքն է դառնում, իսկ Ջարմանդուխտ տիկնոջը պահում է մեծ պատիվներով ու հոգատարությամբ իբրև թագուհու:

### **Մանվել, Մեհրուժան և Սուրեն մարզպան**

Մանվել սպարապետը տեսնում է, որ իր կողմից Հայոց աշխարհի ամրապնդումն ու անկախացումը դուր չի գալիս հունաց թագավորին, Ջարմանդուխտ տիկնոջ հետ խորհուրդ է անում իրենց թիկունք ու հովանավոր դարձնել պարսից թագավորին: Նրանք պարսից թագավորի մոտ Գարջույլ Մախդազի գլխավորությամբ ուղարկում են մի մեծ պատվիրակություն՝ բաղկացած հայ նշանավոր նախարարներից: Գարջույլը մեծամեծ նվերներով, Ջարմանդուխտ տիկնոջ և Մանվել սպարապետի հրովարտակներով գալիս է պարսից թագավորի մոտ, հանձնում հրովարտակները և հաղորդում պարսից տերությանը հնազանդվելու և հավատարմությամբ ծառայելու հայոց մեծամեծների պատգամը: Պարսից թագավորը մեծ ուրախությամբ է ընդունում հայ պատվիրակներին, հարգում, պատվում և Գարջույլին մեծամեծ պարգևների արժանացնում: Այս պարսից թագավորը հայ պատվիրակության հետ Հայոց աշխարհ է ուղարկում իր նշանավոր նախարարներից մեկին՝ Սուրեն մարզպանին, տասը հազար լավ սպանազինված հեծելազորով, որը պետք է թիկունք ու նեցուկ ծառայեր Մանվել սպարապետին Հայոց աշխարհը թշնամիների ներխուժումից պաշտպանելու համար: Նա միաժամանակ Սուրենի ձեռով Ջարմանդուխտ տիկնոջ համար ուղարկում է թագ ու պատմունճան և արքայական դրոշակ, իսկ նրա երկու մանուկների՝ Արշակի և Վաղարշակի համար՝ արքայական թագեր: Պարսից թագավորը մեծ պարգևներ է ուղարկում նաև հայոց Մանվել սպարապետին: Նա Մանվելի համար ուղարկում է թագավորական պատմունճան, սամույր քուրք, ոսկուց և արծաթից շինված գլխանոց՝ զարգմանագ, գազաթին արծիվ, կրծքի պատվանշան, որ կրում էին թագավորները, շիկակարմիր վրան, վրանի վրա արծվի նշան, մեծամեծ սրահակներ և երկնագույն հովանոցներ, ինչպես նաև սեղանի ոսկեղեն սպասք: Նա Մանվելին մեծ իրավունքներ և իշխանություն է շնորհում Հայոց աշխարհի վրա:

Պարսից թագավորը արժեքավոր նվերներ է ուղարկում նաև հայոց բոլոր ավագներին, տանուտերերին և մեծամեծներին:

Գարջույլ Խորխոռունին Սուրեն մարզպանի և պարսից զորքի հետ գալիս է Հայոց աշխարհ, Ջարմանդուխտ տիկնոջը, Մանվել սպարապետին և մյուս բոլոր մեծամեծներին հանձնում պարսից թագավորի ուղարկած պարգևներն ու նվերները: Երբ Ջարմանդուխտ տիկնոն ու Մանվել սպարապետը տեսնում են պարսից թագավորի ցուցաբերած այս սերն ու մեծարանքները, մեծ ուրախությամբ ու պատիվներով ընդունում են Սուրեն մարզպանին, Հայոց աշխարհը դնում նրա հովանավորության տակ, հնազանդվում և ենթարկվում պարսից թագավորի հրամաններին: Հայոց ավագանին որոշում է հարկ տալ պարսից թագավորին, նրան պարգևներ ու ընծաներ ուղարկել, Սուրեն մարզպանին նշանակել ոռճիկ, հասույթներ, ապրուստի միջոցներ, ինչպես նաև հոգալ պարսից տասը հազարանոց հեծելազորին անհրաժեշտ պարենը:

Հայոց աշխարհի և Պարսկաստանի միջև սերտ, բարեկամական հարաբերություններ են հաստատվում, հաճախակի դեսպաններ են գնում գալիս, պարգևներ են տանում բերում, և Մանվելը դառնում է պարսից թագավորի շատ սիրելին ու մտերիմը:

Դավաճան Մեհրուժան Արծրունին, որ գտնվում էր պարսից թագավորի ծառայության մեջ, երբ տեսնում է այս մտերմությունը, պարսից թագավորի կողմից Մանվելին տված փառքն ու պատիվը, սաստիկ նախանձում է Մանվելին և հնար է որոնում նրան զցել պարսից թագավորի աչքից, որպեսզի ինքը դառնա նրա միակ սիրելին: Բայց նա ոչ մի կերպ չի կարողանում պարսիկներին նենգորեն տրամադրել Մանվելի դեմ, ուստի հույսը դնում է Մանվելի միամտության վրա և վճռում կեղծավորությամբ Մանվելի վատահոյությունն ու հավատարմությունը շահել:

Նա բարեկամական կապեր է հաստատում Մանվելի հետ, շահում նրա համակրանքը, ապա իրեն ցավակից ու հավատարիմ ձևացնելով, գաղտնի գալիս է Մանվելի մոտ և նրան հաղորդում հետևյալը.

— Իմացած եղիր, ո՛վ Մանվել, պարսից թագավորը դեսպան է ուղարկել Սուրենի մոտ, հատուկ հրաման է բերել, որ քեզ բռնեն ու կապեն, կամ այստեղ սպանեն, կամ էլ ոտ ու ձեռք կապած, վզիդ կապ դրած՝ մեծ զգուշությամբ տանեն պարսից թագավորի մոտ: Հիմա դու գիտես, մտածիր, թե ինչ պիտի անես:

Այս անակնկալ լուրից Մանվելը շվարում է և զարմացած հարցնում.

— Ա՛խ ես պարսիկների դեմ ոչ մի հանցանք չեմ գործել, ուրեմն ինչո՞ւ պետք է պարսից թագավորը այդպիսի հրաման տար:

— Ես ստուգել և ճշգրտել եմ այդ լուրը, — ասում է Մեհրուժանը, — և հաստատ համոզվել, որ այն միանգամայն ստույգ է: Քեզ շատ սիրելուց և ցավելուց է, որ այս լուրը քեզ գաղտնի հաղորդում եմ: Այնպես որ անելիքդ իմացիր և գլխիդ ճարը տես:

Մեհրուժանն այնքան կեղծ լեզու է թափում, մինչև որ Մանվելը համոզվում ու հավատում է նրան:

Մանվել սպարապետը մեծ զորք է հավաքում, կուտակում իր մոտ, լավ սպասազինում, և մի օր, երբ Սուրեն մարզպանը խաղաղ ու միամիտ իր բանակում հանգստանում էր, անսպասելի հարձակվում է Սուրենի բանակի վրա, պարսից ամբողջ զորքը գլխովին բնաջնջում:

Նա միայն Սուրեն մարզպանին է կենդանի թողնում մի ձիով՝ որ գնա, ազատվի: Սուրենը զարմացած հարցնում է, թե ինչո՞ւ, ախր, Մանվելն այդ բանն արեց:

Մանվելը պատասխանում է.

— Քեզ իբրև բարեկամի սիրելով՝ ազատ եմ արձակում, արևդ քեզ եմ բաշխում, ողջ առողջ գննաքո ճանապարհով, բայց ես այլևս պարսիկների թակարդը չեմ ընկնի:

Սուրենը այդպես էլ տարակուսած, չհասկանալով բանի էությունը, գնում է Պարսից աշխարհ, իսկ Մանվելը գիտակցելով, որ իր արարմունքը մեծ թշնամություն ու գրգռություն կառաջացնի Հայոց աշխարհի ու Պարսկաստանի միջև, հայոց զորքերը գնդերի է բաժանում, սպասազինում, պատրաստում պատերազմի: Ապա իր հետ է վերցնում Պապ թագավորի Զարմանդուխտ տիկնոջը իբրև թագավորի, իր գնդերով նրան շրջեցնում Հայոց աշխարհի սահմանները, ամրացնում դրանք և սպասում անակնկալ հարձակումների:

### Հայ-պարսկական կռիվների վերսկսումը

Սպասումը երկար չի տևում: Պարսից թագավորը իր զորավար Գումանդ Ծապուհին քառասունութ հազար զորքով ուղարկում է Հայոց աշխարհ, որպեսզի գա, երկիրն ավերի և լուծի իր կոտորված հեծելազորի վրեժը:

Մանվելն այդ իմանալով, հավաքում է քսան հազարանոց զորք, ելնում Գումանդ Ծապուհի դեմ: Նա Ատրպատականի մոտ գլխովին ջարդում է պարսից զորքը, Գումանդ Ծապուհին սպանում և մեծ հաղթանակով վերադառնում:

Պարսից թագավորն այս անգամ Հայոց աշխարհի վրա ուղարկում է տասնութ բյուր զինվորներից բաղկացած մի հսկա բանակ, իր զորավար Վարազի գլխավորությամբ:

Մանվել սպարապետը Վարազի զորքի դեմ է հանում տասը հազարանոց լավ սպասազինված հեծելազոր, քաջաբար կռվում, ջարդում, բնաջինջ է սնում պարսից ահռելի բանակը, Վարազին սպանում, մեծ ուժգնությամբ և հաղթանակով վերադառնում:

Այնուհետև պարսից թագավորը Հայոց աշխարհի դեմ է հանում քառասուն բյուր զորք՝ Մոկան զորավարի հրամանատարությամբ: Պարսից զորքը գալիս, գրավում է Հայոց աշխարհի մի մասը և Արտանդան դաշտում բանակ դնում: Մանվելը գիշերով հարձակվում է պարսից բանակի վրա, թշնամու ամբողջ զորքը հենց բանակատեղում սրի քաշում, բոլորին կոտորում, սպանում նաև Մոկան զորավարին և ավարի ենթարկում պարսից զորքի ողջ ունեցվածքը: Այդ հաղթանակից հետո պարսիկները յոթ տարի շարունակ այլևս չհանդգնեցին արշավել Հայոց աշխարհի վրա: Երկիրը խաղաղվում է, պատերազմների

հետևանքով տարբեր տեղեր ցրված փախստականները վերադառնում են, համախմբվում Մանվել սպարապետի շուրջը, և յոթ տարի Հայոց աշխարհն ապրում է խաղաղ ու անհոգ կյանքով:

Այդ տարիներին Մանվել գորավարի մոտ են գալիս Սյունյաց նախարարական տոհմից պարսիկների կոտորածներից փախած և ազատված երեք պատանի՝ Բաբիկ, Սամ և Վաղինակ: Մանվել սպարապետը սիրով ընդունում է այդ պատանիներին, հովանավորում, նրանց ուղարկում իրենց երկիրը՝ Սյունիք: Բաբիկին Սյունյաց տեր ու նահապետ է նշանակում, իսկ Սամին ու Վաղինակին էլ կալվածքներ, գյուղեր ու ագարակներ շնորհում: Բաբիկն այնուհետև դառնում է Մանվել գորավարի նիզակակիցն ու աջակիցը իր ամբողջ կյանքի ընթացքում:

Մանվել սպարապետը ուրիշ իշխանական տներում ու գավառներում էլ է նոր նահապետներ ու տանուտերեր նշանակում, խաղաղությամբ կառավարում բոլորին:

Ամբողջ Հայոց աշխարհը Մանվելի հովանու տակ ապրում է խաղաղությամբ, ուրախությամբ և լիառատ կյանքով:

### **Մանվել և Մեհրուժան Արծրունի**

Յոթ տարի անց, հայրենիքն ուրացած Մեհրուժան Արծրունին, որ գտնվում էր պարսից թագավորի ծառայության տակ, դարձյալ պարսից թագավորին գրգռում է հայերի դեմ: Նա գոռոզամտորեն պարծենում է պարսից թագավորի առաջ, որ եթե նա իրեն մեծ զորք տա, ապա ինքը կնւմ Մանվելին կգերի և շղթայակապ կբերի պարսից թագավորի մոտ, կնւմ էլ նրան կսպանի և գլուխը նվեր կբերի պարսից թագավորին: Վերջինս համաձայնում է, մեծ զորք է տալիս Մեհրուժանին, որը պարսից զորքի բազմության գլուխն անցած, գալիս է Հայոց աշխարհի վրա:

Մեհրուժանը գալիս հասնում է Կորճայք<sup>1</sup>, պարսից զորքը թողնում է այդտեղ, իսկ ինքը իր սեփական զունդը անջատում է արյաց զորքից, նպատակ ունենալով, գաղտնի ու անսպասելի կերպով հարձակվել Մանվելի վրա, նրան ձերբակալել, անձամբ վճռել պատերազմի էլքը և պարսից թագավորի մոտ փառք ու անուն վաստակել:

Նա իր գնդի անջատումը պարսից զորավարներին խորամանկորեն պատճառաբանում է այսպես.

— Ես իմ գնդով նախ կգնամ, կլրտեսեմ Մանվելի բանակատեղին, տեղանքն ու զորքերի դասավորությունը, հետո կգամ, ձեզ կտանեմ նրանց վրա. դրանով շատ կհեշտանա հայոց զորքն ու զորավարին մեր բուռը գցելը:

Մեհրուժանը առնում է իր զունդը, գալիս հասնում է Կոզ գավառը, ինքը իր գնդի հետ այդտեղ կանգ առնում և լրտեսներ ուղարկում Մանվելի բանակը:

Մանվելի բանակը գտնվում էր Բագրևանդ գավառի Բագավան ավանում, Զարեհավան քաղաքի ավերակների մոտ: Լրտեսները գալիս, գնում են Մանվելի բանակը, իմանում, թե որտեղ է գտնվում բանակի ձիերի երամակը և վերադառնում, Մեհրուժանին հայտնում ձիերի տեղը: Մեհրուժանը վճռում է իր ձեռը գցել ձիերի երամակը և հայոց զորքին զրկել արագ շարժվելու հնարավորությունից: Իր այս ծրագրով ոգևորված, նա պարծենում է իր զորքի առաջ և ասում.

— Վաղը այս ժամին ես Մանվելին տապալած և ձերբակալած կլինեմ և նրա իսկ աչքի առաջ կխաչատառակեմ իր կնոջը՝ Վարդանուշին:

Մեհրուժանն առնում է իր զունդը և շարժվում լրտեսների ցույց տված ճանապարհով: Ծանապարհը անցնում էր լեռների վրայով, որոնց տեղացիները անվանում էին Եղջյուրներ:

Ծանապարհին Մեհրուժանը ուղևորների է հանդիպում և նրանց հարցնում.

— Որտեղի՞վ է ճանապարհը գնում Բագրևանդ:

Ուղևորները պատասխանում են.

— Եղջյուրներով:

Մեհրուժանը կարծելով, թե ուղևորներն իրեն ձեռ են առնում կամ խորհրդավոր ձևով ինչ-որ վտանգ

<sup>1</sup> Կոչվում է նաև Կորճեք կամ Կորդոք, ընկած է Վանա լճից հարավ, Միջագետքի հյուսիսում:

են ակնարկում, նախ այդ պատասխանից շփոթվում է ու տխրում, ապա խիստ զայրանալով, հրամայում է նրանց սաստիկ ծեծի ենթարկել:

Նա շարունակում է իր ճանապարհը, բայց ճանապարհին ընկնում է մտատանջության մեջ իր բռնած գործի առաջիկա հաջողության նկատմամբ և սկսում է հմայության զարեր գցել իր գործի ելքը գուշակելու համար: Չարերը բարեգուշակ նշաններ չեն ցույց տալիս, որն ավելի է տրտմեցնում ու վշտացնում Մեհրուժանին: Ուստի նա վհատված ու զայրացած, հետիոտներից առաջ գցած, արշավում է երամակների գտնված տեղը, որպեսզի կարողանա Մանվելի ձիերը բռնագրավել: Բայց երբ տեղ են հասնում, տեսնում են այնտեղ ձի չկա:

Բախտը ծպտացել էր Մանվել սպարապետին: Այդ օրը Մանվելը պատահաբար իր գնդի համար որսի օր էր նշանակել, և այդ պատճառով էլ ձիերի երամակները դաշտից բերել էին Բագավան:

Մանվելը այն է՝ պատրաստվում էր ձի հեծնել որսի դուրս գալու համար, երբ գուժկան է գալիս և հայտնում, թե.

— Սպարապետ, ճարդ տե՛ւ, Մեհրուժան Արծրունին մեծ գնդով կովի է գալիս քո վրա:

Մանվել սպարապետը դադարեցնում է որսի նախապատրաստությունը, իր զորքը արագ ոտքի հանում և ամբողջ գնդով ուխտի գնում Բագավանում գտնվող Հովհաննես Մկրտչի ոսկորներն ամփոփած գերեզմանին, իրենց հաղթանակի համար օգնություն և զորություն խնդրում: Ուխտից հետո Մանվելը Պապ թագավորի տիկնոջն իր զույգ զավակների հետ, ինչպես նաև իր ու իր զինակիցների կանանց ուղարկում է Վարազա լեռը կովից սպահով մնալու համար:

Մանվելը Վաչե Մամիկոնյանի որդի պատանի Արտավազդին ևս հրամայում է կանանց հետ գնալ Վարազա սար: Արտավազդը, որ տակավին մանկահասակ տղա էր, և ինչպես բոլոր երեխաները՝ գլուխը ստիպած էր և միայն խոպրպիք ու ծամ էր պահել, հակառակվում է հորեղբոր հրամանին, առարկելով պնդում, որ ինքը ևս պետք է պատերազմին մասնակցի: Մանվելը զայրանում է, քաշում է մտրակը և սկսում հարվածել պատանի Արտավազդի մերկ գլխին, սաստելով ու հաակացնելով նրան, որ ինքը դեռ մանուկ է և իր ժամանակը չէ պատերազմի գնալ:

Արտավազդը, ստիպված, առերես համաձայնում է հորեղբոր հետ, գնում, բայց ճանապարհին թողնում է կանանց, զաղտնի վերադառնում, զինվում և ելնում է պատերազմի:

Մանվելը հալոց տիկնոջը, կանանց ու երեխաներին ամուր ու սպահով տեղ ուղարկելուց հետո զորքը սպառազինում է, կազմակերպում, բերում ի մի հավաքում և պատրաստվում պատերազմի:

Եվ երբ Մանվելի զորքը զինանշանները բացած, ծածանվող դրոշակներով դուրս է գալիս Բագավանից, նրա դեմ է ելնում Մեհրուժանի սպառազինված գունդը:

Խորամանկ Մեհրուժանը իր զենքից ու զարդից, սաղավարտի վրա եղած զինանշանից շատերին էր տվել, շատ զինվորների էր զինավառել իր զենքերով ու համազգեստով, իսկ ինքը հագել էր սովորական զինվորի համազգեստ և ոչ մի տարբերանշան չէր կրում:

Մանվելը հենց որ տեսնում է Մեհրուժանի գունդը, առյուծի ու վարազի կատաղությամբ վրա է հարձակվում, խառնվում նրա գնդին և ուշադիր հետևում նրանց, ովքեր Մեհրուժանի համազգեստն ու նշաններն էին կրում: Դրանց շատերի գլուխները թոցնում է, կարծելով, թե Մեհրուժանն է, բայց ուշադիր զննելուց հետո տեսնում է, որ նա չէ: Հուսախաբված Մանվելը դիմում է իր նիզակակից Բաբկին:

— Տեսնի՛ս ես, ինչպես է մեզ խաբում այդ հավատորոս կախարդը: Բայց առաջներում, մեր հաշտ եղած ժամանակ, ես հաճախ եմ հանդիպել նրան և լավ գիտեմ նրա հատկանիշը. Մեհրուժանը երբ ձի է հեծնում, նրա ազդրերը պինդ չեն գրկում ձիու իրանը, այլ ձիու մարմնից փոքր-ինչ հեռու են մնում: Արի երկուսով հետևենք այդ նշանին, գուցե կարողանանք ճանաչել այդ դարձվոր կախարդին:

Ապա երկուսով ուշադիր դիտելով՝ այդ նշանից ճանաչում են Մեհրուժանին: Մանվելն իսկույն առաջ է անցնում, ձայն տալիս, կանչում Մեհրուժանին:

— Ա՛յ կախարդ, մինչև ե՛րբ պիտի մեզ խաբես և քո պատճառով ուրիշներին շարդել տաս: Մենք քեզ վերջապես ճանաչեցինք, այդ դու ես այդտեղ կանգնած, և մեր ձեռից քեզ այսօր փրկություն չկա: Աստված այսօր քո կատարած չարիքները քո գլխին թափեց և քեզ մեր ձեռը հանձնեց:

Երբ Մեհրուժանն այս խոսքերը լսում է, նիզակը ձեռին անմիջապես առաջ է անցնում և խոչանում Մանվելի վրա: Մանվելն էլ իր հերթին է Մեհրուժանի վրա հարձակվում: Բայց որովհետև եր-

կուսն էլ ծանրամարմին ու հաղթանդամ էին, միզակներով իրար հարվածելիս՝ երկուսն էլ ձիերից վայր են ընկնում: Այդ պահին Մանվելի միզակակից Բաքիկն իսկույն վրա է հասնում և միզակը Մեհրուժանի կողից՝ վերից վար խրելով, նրան մեխում է գետնին: Մեհրուժանն այլևս չի կարողանում ընկած տեղից վեր կենալ: Իսկ Մանվելի ձիապան սպասավորները անմիջապես Մանվելին բարձրացնում, նստեցնում են ձիուն: Մեհրուժանին երկար չեն թողնում գետնին մեխված, գլուխը կտրում են: Երբ Մեհրուժանի զինվորները տեսնում են իրենց առաջնորդի սպանությունը, դիմում են փախուստի: Մանվելի զորքը այս ամենը տեսնելով, ոգևորվում է, հարձակվում Մեհրուժանի գնդի վրա, բոլորին ջարդում, ոչ մի մարդ կենդանի չի թողնում:

Իսկ պատանի Արտավազը, որ Մանվելից թաքուն գնացել էր պատերազմի, զորքից ծածուկ գնում է Եփրատ գետի ափը և այնտեղ Մեհրուժանի փախչող գնդից բազմաթիվ զինվորներ կոտորում: Նրանցից մեկը, որ Մեհրուժանի համազգեստն ու նշաններ էր կրում, տեսնելով գեղեցիկ, կայտառ ու անմոռուք պատանի Արտավազին, տղայի տեղ է դնում և արհամարհանքով նշանը միզակին է փաթաթում ու հարձակվում Արտավազի վրա: Արտավազը իր ամբողջ ուժով լարում է աղեղը և նետը այնպիսի թափով ու դիպուկ է արձակում, որ այն հակառակորդի մարմինը ծակելով, անցնում է, ընկնում գետին, իսկ հակառակորդն էլ իր ձիուց վայր ընկնելով, անմիջապես մեռնում է: Ապա Արտավազը առնելով միզակը, ընկնում է Մեհրուժանի փախչող զինվորների հետևից, անչափ ու նախանայ մարդ է կոտորում, խլում նրանց գեներն ու ունեցվածքը և մեծ ավարով վերադառնում: Այդօրը ամենից շատ թշնամի է կոտորում մանուկ Արտավազը, դառնում օրվա լավագույն հերոսը և մեծ անուն ու հռչակ վաստակում:

Մինչ պատանի Արտավազը այդ կովում անլուր սխրանքներ է գործում, նրա հայր Վաչե Մամիկոնյանը և Գարշույլ Մախդազը մեռնում են անհերթեթ մահով: Երկուսն էլ կովի ժամանակ կորցնելով իրենց երիվարները, հեծնում են անվարժ ձիեր, որոնցից մեկը գլխի վրա ընկնելով՝ Վաչեին տապալում է գետին և սպանում, իսկ մյուսը՝ Գարշույլ Մախդազին փախցնում է և քարեքար տալով, սպանում:

Կովից հետո Մանվելը գնում է հասնում Վարազի լեռը, որ սպաստան էր տվել հայոց տիկնոջն ու մնացած կանանց: Նա իր հետ է տանում նաև Մեհրուժան Արծրունու գլուխը: Երբ կանայք տեսնում են Մեհրուժանի գլուխը, մեծ ճիչ ու աղաղակ են բարձրացնում, կարծելով, թե դա Վահան Մամիկոնյանի որդի Սամվելի գլուխն է, այնքան որ Մեհրուժանն ու Սամվելը մման էին իրար: Բայց երբ գլխի կախված ծամից իմանում են, որ դա Մեհրուժանի գլուխն է, դարձյալ ափսոսում են, ասելով.

— Այնուամենայնիվ, դա էլ մեր եղբայրն էր<sup>1</sup>:

Ապա բերում են Արտավազի հոր՝ Վաչեի, և Գարշույլ Մախդազի մարմինները, որոնց վրա մեծ կոծ ու սուգ են անում: Բերում են նաև Արտավազի սպանած Մեհրուժանի նշանները կրող մարդու մարմինը: Բոլորը նայում և զարմանում են, թե ինչպես է պատանի Արտավազի նետը ամբողջ մարմնով մեկ թափանցել և անցել: Այդ տեսնելով և Արտավազի մնացած հերոսական արարքները լսելով, Մանվելը ներում է նրան և կյանքն իրեն բաշխում, որովհետև զինվորական օրենքով սպարապետի հրամանին չենթարկվողն ու այն արհամարհողը դատապարտվում էր մահվան:

Իսկ պարսից զորքերը, որոնք Մեհրուժանի հետ եկել և բանակել էին Կորճայքում, լսելով, որ Մեհրուժանը սպանվել է, և նրա գունդն էլ գլխովին ոչնչացել, թողնում փախչում են Պարսից աշխարհը: Կյանքը Հայոց աշխարհում դարձյալ մտնում է իր խաղաղ հունի մեջ:

<sup>1</sup> Մեհրուժանը որդին էր ծավապ Արծրունու, որը Մամիկոնյանների փեսան էր: Հետևաբար, Մամիկոնյանները Մեհրուժանի քեռիներն էին, որի պատճառով էլ նրան Մամիկոնյան տան կանայք լայն առումով իրենց եղբայր են համարում:

## Արշակի թագադրումն ու Մանվելի մահը

Հաղթանակից հետո Մանվել սպարապետը Արշակունի տիկնոջ և նրա զույգ զավակների հետ, հաչոց արքունի ամբողջ բանակով, մեծամեծ ավագներով ու նախարարներով գնում է Կարին գավառը: Այստեղ Մանվել Ջորավարը իր Վարդանդուխտ դստերը ամուսնացնում է Պապ թագավորի պատանի որդու՝ Արշակի հետ: Ապա նրա եղբորը՝ Վաղարշակին, ամուսնացնում է Բագրատունի թագադիր սպետի դստեր հետ, երկուսի համար էլ մեծ հարսանիք կատարում, որը մեծ ցնծություն և ուրախություն է պատճառում համայն Հայոց աշխարհին:

Այնուհետև հավաքելով Հայոց աշխարհի բոլոր մեծամեծներին ու տանուտերերին, Մանվելը Արշակին թագավոր է կարգում Հայոց աշխարհի վրա, իսկ նրա եղբայր Վաղարշակին շնորհում թագավորի երկրորդության պատիվը: Հայոց աշխարհը դարձյալ մեծ ցնծությամբ է ընդունում իր նոր թագավորի հաստատումը:

Այս ամենը կատարելուց հետո հաչոց մեծ գորավար-սպարապետը հիվանդանում է ծանր ու մահաբեր հիվանդությամբ: Մանվելը մահվան մահճում իր մոտ է կանչում իր Արտաշիր որդուն, նրան հանձնում Մամիկոնյան տոհմի տանուտիրական իշխանությունը և Հայոց աշխարհի սպարապետությունը: Նա պատվիրում է որդուն՝ հնազանդ ու հպատակ լինել նորընծա Արշակ թագավորին, հավատարմությամբ ծառայել, կովել ու մեռնել հարազատ Հայոց աշխարհի ու թագավորի համար:

— Ուրախությամբ հանձն ւն քո մահը քո հարազատ երկրի համար, ինչպես քո քաջ նախնիները, — ասում է Մանվելը Արտաշիրին, — որովհետև դա արդար գործ է և աստծո կողմից ընդունելի: Երկրի վրա քաջության անուն թողեք և ձեր արդարությունը երկնքին նվիրեցեք: Մահից ամենևին մի վախենաք, համարձակ մեռեք աստվածապաշտ երկրի համար, ձեր բնիկ տերերի՝ Արշակունիների համար: Ձեզ հեռու պահեք նենգությունից, պղծությունից և չարությունից, ձեր ժողովրդին, թագավորին, աստծոն ծառայեցեք մաքուր սրտով և հավատարմությամբ:

Ապա Մանվելը հրովարտակ է գրում հունաց թագավորին և նրա հովանավորությանն է հանձնում Հայոց աշխարհն ու Արշակ թագավորին:

Երբ Մանվելի հիվանդությունը խորանում է և նրա առողջական վիճակը ծանրանում, նրա մահճի մոտ են հավաքվում Արշակ թագավորը, իր կին Վարդանդուխտը, հաչոց բոլոր ավագները, մեծամեծները, նախարարները, բոլոր երևելի մարդիկ՝ տղամարդ թե կին: Մանվելը ներկաներից առանց քաշվելու մերկանում է, բացում իր մարմնի բոլոր մասերը և ցույց տալիս պատերազմներում ստացած իր անհամար վերքերի սպիները: Ներկաները բոլորը մնում են զարմացած, որովհետև նրա մարմնի որևէ անդամի վրա անգամ դրամի չափ մի տեղ չկար, որ պատված չլինեք սպիներով: Մանվելն սկսում է լալ և հուզմունքով զանգատվել.

— Մանկությունից ի վեր ես պատերազմների մեջ եմ մեծացել, ամեն մի վերք տարել եմ քաջությամբ, բայց ինչիս ինձ բախտ չվիճակվեց պատերազմի մեջ մեռնելու, այլ մեռնել այսպես՝ անասունի պես. ինչիս ես բախտ չունեցա ընկնել կոիվներում մեր երկրի, մեր երկրի բնիկ Արշակունի տերերի, մեր կանանց ու զավակների, աստվածապաշտ մարդկանց, եղբայրների, ընկերների և մտերիմ բարեկամների համար: Ես պատերազմներում ինձ շատ հանդուգն էի պահում, կարծում էի՝ կընկնեմ հերոսի մահով: Բայց տեսնեք, թե ինչ պատահեց. ինձ վիճակվեց մեռնել վատագույն մահով՝ անկողնում պառկած:

Ապա Մանվելը դիմում է Արշակ թագավորին և ասում.


— Ես ապրել եմ աստծով իբրև ջերմեռանդ քրիստոնյա, ինձ վրա անհուսությամբ ու անկարգ լաց ու կոծ չսարքեք հեթանոսների նման: Ինձ համար ոչ ոք թող կոծ չանի, մեղապարտ լինի՝ ով անի: Բայց ես անկարող եմ իմ մահից հետո մեկին սաստել, որ չանի այն, ինչ ես չեմ կամենում: Ուստի ով ինձ սիրում է, իմ հիշատակի համար թող իմ ուզածը անի: Պատերազմի մեջ մահից մի վախեցեք, որի մեջ, ցավոք, ես չմեռա, դա էլ, երևի, աստծո կամքն էր:

Մահից առաջ Մանվելը կանչում է իր սպասավորներին, բեխել է տալիս շատ զանձեր և իր ձեռով բաժանում աղքատներին ու կարոտյալներին: Նա իր ունեցվածքից շատ կալվածքներ ու զանձեր է նվիրում եկեղեցիներին ու վկայարաններին, քահանայապետներին ու եկեղեցու պաշտոնյաներին:



Բայց երբ հայոց սպարապետը մեռնում է, ոչ ոք այլևս ուշադրություն չի դարձնում կոծ չամեկու նրա խնդրանքին: Հայոց աշխարհի բոլոր մարդիկ, ազնվական, թե շինական, քաղաքացի, թե գյուղացի՝ դառնապես ողբում, լալիս, կոծում են իրենց սիրելի զորավարի մահը:

Ամեն մարդ սգում է նրան, ինչպես սեփական հորը, ողբում էին նրան իր քաղցրության, մարդասիրության, հեզության, խնամատար բարերարության համար, կարոտագին մղկտում էին իրենց քաջ զորավարի, իրենց փրկչի, իրենց անհաղթ, անվախ ու բազմարդյուն սպարապետի համար:



**Անդոկ և Բաբիկ\*\***

Սյունյաց Անդոկ նահապետը հայ ուրիշ նախարարների հետ միասին հաճախ էր լինում պարսից Շապուրի թագավորի արքունիքում: Անդոկը հայ իշխանների մեջ ամենաճոխն ու փառավորն էր:

Շապուրի թագավորը իր հզոր աշխարհակալական իշխանությամբ հղիացած, կամենում է քննել և պարզել, թե որ ազգն ու իշխանական տոհմը ունի արքայական բարձի ու պատվի իրավունք:

Այդ առթիվ նա մի օր իր պալատում ճոխ խնջույք է կազմակերպում, հրավիրում է պարսից հնամենի տոհմերի նախարարներին, այդ թվում նաև արքունի դռանը եղած հայ իշխաններին: Շապուրը պարսից բոլոր մեծամեծներին, ըստ նրանց իշխանական զառի և աստիճանի, պատվում է գավաթով և ուռենու ճյուղով: Իսկ մոզպետաց մոզպետին<sup>1</sup> արժանին հատուցելով, նստեցնում է արքայական սեղանի ամենապատվավոր տեղում: Շապուրը խորհրդակցելով պարսից մեծամեծների հետ, դիմում է հայ նախարարներին հետևյալ խոսքերով.

— Պարսից և պարթև բնիկ պահլավիկների, ինչպես նաև մյուս ազնվականների աստիճանը ես լավ գիտեմ: Բայց ահա հայոց ազնվական տոհմերի և նրանց նախապատվության աստիճանի մասին մենք ոչինչ չկարողացանք իմանալ՝ ոչ մեր նախնի թագավորներից, ոչ էլ հին մատենագիրներից: Արդ, հայ նախարարներիդ համար երկու էք կա. կնամ հնագույն գրավոր վկայությամբ պիտի կարողանաք ապացուցել և հաստատել յուրաքանչյուր տան աստիճանն ու պատիվը և դարձյալ արժանանաք մեր շքեղաշուք մեծարանքին, կնամ էլ, եթե չեք կարողանա արչաց այս խորհրդի առջև այդ ապացուցել, ապա ձեր նախանիստ բարձն ու պատիվը, տունը, հողը, ջուրը և ձեր բոլոր ունեցվածքը արչաց ազնվականներին կնվիրեմ և ձեզ շնորհագուրկ անելով, ազատ կարձակեմ:

Հայոց իշխանները հեռացնում ժամին միմյանց հետ խորհուրդ են անում և բերում, Շապուրի թագավորի առաջն են դնում Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը»: Թագավորը հրամայում է այն թարգմանել պարսկերեն: Երբ Շապուրն իմանում է, որ այդ պատմությունը սկիզբ է առնում իր նախնի Արտաշիր Սասանյանից, շատ է ուրախանում, փառաբանում գիրքը և խանդաղատանքով վերցնում, դնում աչքերին:

\* «Պարսից պատերազմ» վեպն ավարտվում է 5-րդ դարի սկզբների պատմական իրադարձություններին վերաբերող վիպական դրվագներով: Սակայն այդ վեպը ժողովրդի միջոցության մեջ երկար պահպանվել է և ենթարկվել հետագա դարերի պատմական ազդեցությանը: 5-րդ դարից հետո եկող հայ պատմիչների երկերում (Սեբեոս — 7-րդ դար, Հովհան Մամիկոնյան — 8-րդ դար, Մովսես Կաղանկատվացի — 11-րդ դար, Ստ. Օրբելյան — 13-րդ դ.) պահպանվել են «Պարսից պատերազմ» վեպի առանձին դրվագներ, իբրև հին ավանդական գրույցներ, անշուշտ, կերպարանափոխված և հետագա դարերի պատմության ազդեցությամբ ենթարկված: Հին վեպի այդ առանձին դրվագները պահպանվել են Հայաստանի այն գավառներում, որոնց դրանք վերաբերել են. Սյունյաց Անդոկ և Բաբիկ իշխանների մասին գրույցներն, օրինակ, պահպանվել են Սյունիքում, Մուշեղ Մամիկոնյանի մասին գրույցները՝ Տարոնում և Սասունում:

Այս շարքում, սակայն, դրվում են «Պարսից պատերազմ» վիպաշարին վերաբերող այն գրույցները, որոնք կնամ իսպառ բացակայում են վեպն ավանդած 5-րդ դարի պատմիչների (Ագաթանգեղոս, Փ. Բուզանդ, Մ. Խորենացի) երկերում, կնամ էլ իրենցից ներկայացնում են «Պարսից պատերազմ» վեպի առանձին միջադեպերի նոր տարբերակներ:

\*\* Շարադրված է ըստ Մ. Կաղանկատվացու «Պատմություն Աղուանից աշխարհի» և Ստ. Օրբելյանի «Պատմություն տանն Արտաշանի» երկերի:

<sup>1</sup> Մոզպետը պարսից քուրմն է, մոզպետան մոզպետը՝ քրմապետը, գրադաշտական կամ մազդեզական կրոնի գլխավոր արարողապետը:

Ծապուն թագավորն այդ գրքում գտնելով հայոց տասնչորս իշխանական տների բարձրի ու աստիճանների ցուցակը, հրամայում է ըստ այնմ բաշխել հայոց նախարարների տեղերը արքունական սեղանի շուրջը:

Սյունյաց տեր Անդոկին բաժին է ընկնում տասնչորսերորդ բարձր: Անդոկը այդ ցածր աստիճանից խիստ վիրավորված, ձեռ չի տալիս կերակուրներին և սեղանից ոչինչ չի ճաշակում: Թագավորն զգում է նրա վիրավորանքը, բայց զանց է առնում և ուշադրություն չի դարձնում:

Այդ ժամանակ լուր է հասնում, թե խազարների<sup>1</sup> բազմամբոխ հրոսակները դուրս են եկել Ճորաս դռնից<sup>2</sup> և ներխուժել Հայոց աշխարհ: Ծապուհը մեծաքանակ ու բազմազգ զորք է հավաքում և ելնում խազարների դեմ կռվելու:

Ծապուհից վիրավորված Անդոկը այդ կռվին չի մասնակցում և դավաճանաբար մի կողմ է քաշվում: Օգտվելով Ծապուհի բացակայությունից, նա առնում է իր հազար յոթ հարյուր ժիր ու ընտիր հեծյալներից բաղկացած գունդը, գնում, հասնում է Տիզրոն: Անդոկն իր զորքը թաքցնում է քաղաքից դուրս և մի փոքրիկ ջոկատով մտնում քաղաք և անմեղ ձևանալով, հարցնում.

— Որտեղ է Ծապուհ թագավորը, ես Ծապուհի մոտ եմ եկել:

Քաղաքացիք նրան ընդունում են մեծ պատվով ու հարգանքով:

Առավոտյան, երբ քաղաքի դռները բացվում են, զորքը ներս է գալիս և սկսում է կողոպտել բոլոր մեծամեծների, ինչպես նաև թագավորական տները, հափշտակում անթիվ ոսկի և արծաթ, գոհարեղեն ու թանկարժեք քարեր, առհասարակ ամեն ինչ, որ կարելի էր տանել: Անդոկն այդ վիթխարի հարստությունները հափշտակելով, բերում է Սյունիք, թաքցնում Բաղաբերդ ամրոցում: Ապա հրամայում է իր ենթակա բոլոր գավառներում այրել անասունների համար պահեստված դարմանի պաշարները, իսկ ինչ որ մարդկային ուտելիք է, հավաքել և ամբարել Բաղաբերդում: Նա Բաղաբերդում հավաքել և կուտակել է տալիս բոլոր գեները, զրահները, ձիասարքերը: Այնուհետև հրամայում է Սյունիքի բոլոր բնակիչներին՝ այրել իրենց տներն ու ամբարները և երկրից հեռանալ: Բոլոր եկեղեցիներից հավաքում են թանկագին անոթներն ու ունեցվածքը, սրբերի մասունքները, բերում Ծաղատի եկեղեցին, ութ օր անընդմեջ եկեղեցական պաշտոն կատարում, որից հետո Ծաղատի եկեղեցին ծածկում են հողով, դարձնում մեծ հողաբլուր, իսկ երկրի բնակիչներն էլ ցրվում, գնում են Սյունիքի սահմաններից հեռու:

Սյունիքն ամայանում է, դատարկվում և ոչ ոք չէր հանդգնում անգամ այդ աշխարհի անուրը տալ:

Պարսից Ծապուհ թագավորը վերադառնում է պատերազմից, իմանում Անդոկի պատճառած աղետները և ցասումով լցված, հրամայում է իր բոլոր զորքերին՝ գնալ Սյունիք, գերել ու բերել բոլոր մարդկանց ու անասուններին:

Պարսից զորքերը գալիս են Սյունիք, բացի ամայությունից ու դատարկությունից ոչինչ չեն գտնում:

Նրանք գալիս հասնում են Ծաղատի եկեղեցաբլուրը, բարձրանում բլրի գագաթը: Եվ այդ պահին ահեղ երկրաշարժ է լինում. սարսափած պարսից զորքերը իրենց զորավար Աթաշխոդաշի հետ այդտեղից արագ թողնում են հեռանում: Նրանք գալիս, պաշարում են Բաղաբերդը և սկսում բերդի դեմ կռվել: Պաշարվածները բերդի գառիվարից մեծ-մեծ վեմեր են ցած գլորում և շատերին կոտորում: Պարսիկները երկրորդ և երրորդ անգամ են անցնում կատաղի հարձակման, սակայն, բացի մեծամեծ կորուստներից, ոչինչ չեն կարողանում անել: Պարսից թագավորը զայրացած՝ հրամայում է առավել սաստկացնել հարձակումը, բայց բոլոր մեծամեծները ընկնում են թագավորի ոտքերը, աղաչում դադարեցնել կռիվը և բավարարվել սոսկ ամրոցի շրջակայքը ավերելով:

Անդոկը հարմար ժամանակ է գտնում, թողնում է բերդը և մեծ հարստություն հետը վերցնելով, գաղտնի հեռանում է Հռոմեյացոց աշխարհը: Այնտեղ նա պատվի և ընդունելության է արժանանում, բնակվում և այնտեղ էլ մահանում է:

<sup>1</sup> Խազարներ կամ խազիրները թուրքական լեզվաընտանիքին պատկանող վաշկատուն, անասնապահ ժողովուրդ էին, որ բնակվում էին Հյուսիսային Դաղստանի և ստորին Վոլգայի միջև:

<sup>2</sup> Ծորս դուռ կամ Ծորս պահակ համապատասխանում է այժմյան Դերբենդ քաղաքին:

Ծապուհը մոխրով լիքը մի պղնձե սանդ է դնում իր պալատի դռանը, որպեսզի ով որ գա պալատ՝ սանդը ծեծի ու սախի:

— Այունչաց տերությունը, նրա կյանքն ու խորհուրդը այս մոխրի նման ցած թափվի:

Անդրևի որդի Բաբիլը, սակայն, օտարության մեջ երկար չի դիմանում, ինչպես հարազատ ծնողի՝ կարոտում է իր հայրենիքն ու իր բնիկ աշխարհը: Եվ որպեսզի ձեռք բերի իր հայրենական տերությունը, նա անցնում է Պարսից աշխարհ, ծառայության մտնում Ծապուհ թագավորի արքունիքում: Նա բազում սխրանքներ է կատարում պարսից ոլիմպիական խաղերում, և ոչ ոք չի ճանաչում, թե ով է նա կամ հրտեղացի:

Այդ ժամանակ հոների առաջնորդ Հոնագուրը ավարի է ենթարկում Պարսից աշխարհը, ապա դեսպան է հղում Ծապուհ թագավորի մոտ և ասում.

— Ինչհի ենք պարսկան զուր արյուն թափում, բազում զորքեր կոտորում, եկ, մենամարտենք՝ դու և ես:

Ծապուհին հայտնում են Բաբիլի մասին և ասում, որ միայն նա իր քաջությամբ ու հզորությամբ կարող է արժանի ախոյան դառնալ Հոնագուր հսկային:

Արքայից արքա Ծապուհը իր մոտ է կանչում Բաբիլին, նրան հանձնում վարսագազի մատանիով կնքված արքայական որոշումը և ասում.

— Եթե դու իմ մեծ վրեժը լուծես, ապա ես քեզ մեծագույն պարգևների կարծանացնեմ:

Բաբիլը խոստանում է կատարել արքայի կամքը, ապա ձևոնկրը բարձրացնելով, կանչում.

— Այունչաց եկեղեցիներ, ինձ օգնության հասե՛ք:

Բաբիլը վերցնում է իր զենքերը, արքայական շքեղ զրահով զրահավորվում, վարդակերպ սահավարտով զարդարում իր գեղեցիկ գլուխը, սուսերը կապում մեջքին, ոսկեկապ վահանը գցում ձախ ոսին, աջ ձեռքին բռնում սրածայր նիզակը, հեծնում սևաթույր ու արագավազ նժույզը և մենամարտի ելնում իր ահեղ ախոյանի դեմ:

Հոնագուրը վիթխարահասակ հսկա էր՝ պինդ զրահավորված, հսկայական գլխին կրում էր բևեռապինդ սաղավարտ, երեք թիզ լայնություն ունեցող ճակատը պատել էր պղնձե հաստ թիթեղներով, ձեռին բռնել էր մայրի փայտից շինված ահռելի նիզակը, կողքից կախել մեծ ու բոցափայլ սուսերը: Նրա սուկ արտաքինը դիտողին ահ ու սարսափ էր ազդում:

Բաբիլը տեսնելով վիթխարահասակ հսկային, ասպանդակում է իր սևաթույր նժույզը և խոչանում ախոյանի վրա: Հոնագուրն էլ իր հերթին է հարձակվում Բաբիլի վրա, և սկսվում է մի ահռելի մենամարտ: Նրանց նիզակների շտուպներից դողողում էր ամբողջ շրջապատը: Առավոտից մինչև երեկոյան ժամը ինը նրանք մաքառում են իրար դեմ: Հոնագուրը հոգնում է, հարվածների ուժը թուլանում, որից օգտվում է Բաբիլը և քաշելով սուսերը՝ ուժեղ հարվածով գլխատում իր արյունոտ խոչանակին:

Հաղթական մենամարտից հետո պարսից Ծապուհ արքան մեծ ցնծությամբ ընդունում է Բաբիլին և առաջարկում իր խոստումները կատարել: Բաբիլը խոսք է խնդրում թագավորից և ասում.

— Արքան, հրամայիր մեջտեղից վերացնել Այունչաց տերության անարգանքի սանդը, որ դրված է քո պալատի առաջ:

Թագավորը այս խոսքերից մնում է խիստ զարմացած, բայց հրամայում է սանդը պալատի առջևից վերցնել: Ապա Բաբիլը պարսից թագավորին խնդրում է իրեն վերադարձնել իր բնիկ ու հարազատ աշխարհը՝ Այունիքը:

Ծապուհ թագավորը մեծ սիրով Բաբիլին է շնորհում իր հայրենի աշխարհը և մեծամեծ պատիվներով նրան առաքում է Այունիք: Նա միաժամանակ Բաբիլին է շնորհում Բագրատունի և Մամիկոնյան նախարարական տներին հավասար իշխանական պատիվ և իրավունք:

Բաբիլը Այունիք վերադառնալիս, երբ անցնում է Երասխ գետը, շինում է մի գյուղ, անունը դնում Ակորգ, այսինքն՝ հայրենիքից առաջին կորզվածը:

Բաբիլը գալիս, հաստատվում է Այունիքում: Իր իշխանության առաջին տարում նա հաճախ էր դուրս գալիս որսի, շրջում ու դիտում էր իր անմարդաբնակ աշխարհը: Մի անգամ դարձյալ որսի է ելնում, գալիս հասնում է Ծաղատ, բարձրանում բլուրը, տեսնում մի փախչող եղջերու: Բաբիլն ընկնում է եղջերուի հետևից, հետապնդում:

Եղջերուն փախչում, բարձրանում է եկեղեցու բլուրը և անհայտանում: Բլրի վրա Բաբիլի ձիու ոտ-

ները խորում են հողի մեջ: Չնայ իջնում է և հագիվ մի կերպ կարողանում է ձիու ոտները հողից հանել: Բարբիկի հետ եղած մարդկանց ահ ու սարսափ է պատում: Նրանք սկսում են հողը փորել և բացում են մի հոչաշեն եկեղեցի՝ աստվածային գանձերով և անուշ բույրերով լցված: Այնուհետև ամեն սարի այդ օրը Այունիքում նշվում է իբրև նշանավոր տոն՝ ի հիշատակ եկեղեցու բացման:

### **Դեմետր և Գիսանե\***

Դեմետր և Գիսանե եղբայրները եղել են հնդիկ իշխաններ, որոնք հնդկաց թագավորի կողմից հալածվելով, փախչում, գալիս են Հայոց աշխարհ՝ Վաղարշակ թագավորի մոտ: Վաղարշակը նրանց է նվիրում Տարոն գավառը՝ իշխանությամբ հանդերձ: Եղբայրները Տարոնում շինում են Վիշապ քաղաքը, իսկ Աշոտիչատում կանգնեցնում են այն կուռքերի արձանները, որոնց պաշտում էին Հնդկաստանում:

Տասնհինգ տարի անց հայոց թագավորը երկու եղբայրներին էլ սպանում է և Տարոնի իշխանությունը հանձնում նրանց երեք զավակներին՝ Կուստին, Մեղտեսին և Հոռին: Կուստը մի ավան է շինում և իր անունով կոչում Կուստ, Մեղտեսը Տարոնի դաշտում շինում է մեկ այլ ավան և կոչում Մեղտի, իսկ կրտսեր Հոռը անցնում գնում է Պալունյաց գավառը և այնտեղ դարձյալ ավան շինում և կոչում Հոռյան:

Որոշ ժամանակ անց Կուստը, Մեղտեսը և Հոռը խորհուրդ են անում, բարձրանում Քարքե լեռը, որի գագաթը ընդարձակ որատեղ էր՝ գովասան բուսականությամբ առատ: Այնտեղ մի դաստակերտ են կառուցում և կանգնեցնում իրենց զույգ նախնիների՝ Դեմետրի և Գիսանեի արձանները, և պարտավորեցնում իրենց տոհմին՝ պաշտել դրանց իբրև կուռքերի: Քանի որ Գիսանեն գիսավոր էր, ուստի և նրան պաշտողները, ի պատիվ իրենց նախնու, երկար մազեր են իրենց գլխին թողնում: Թեպետ քրիստոնեությունն ընդունելիս Գրիգոր Լուսավորիչը խուզում է նրանց երկար մազերը, իբրև հեթանոսության նշան, սակայն նրանք քրիստոնեյա դառնալուց հետո էլ իրենց մանուկների գլխին ծամ էին պահում:

### **Տրդատի և Վեդրեհոնի կոիվը\*\***

Տրդատը և Գրիգոր Լուսավորիչը նանապարհվում են Հոռո՝ Կոստանդիանոս թագավորի հետ տեսակցելու: Նրանք գալիս, հասնում են Ապահունիքի Մանազկերտ գյուղաքաղաքը: Այդ ժամանակ Կովկասի հյուսիսական ցեղերը, իրենց Վեդրեհոն թագավորի գլխավորությամբ, հարձակվում են վրաց իշխանի տերության վրա, գերի վերցնում քառասունութ հազար մարդ, իսկ վրաց իշխանին բռնում, հալածում իր երկրից, բերում հասցնում միջև Հայոց աշխարհի Կարին քաղաքը:

Վրաց իշխանը պատգամավոր է ուղարկում Տրդատ թագավորի մոտ և օգնություն խնդրում: Տրդատը, Ապահունիքի իշխանի գլխավորությամբ, երեսուն հազարանոց զորք է ուղարկում վրաց իշխանին օգնության: Հառց գորքը գալիս է, վրաց իշխանի երկիրն ազատում թշնամուց, վրաց գեղերի մի մասը հետ խորն, գերի բռնում հյուսիսական ցեղերի երեք իշխանների, վրաստանում Աղձնիքի Գոռվ իշխանի հրամանատարությամբ պահակազոր թողնում, ապա վերադառնում Տրդատ թագավորի մոտ:

Տրդատն ու Գրիգորը գնում են Հոռո՝ վերադարձին գալիս են Պալունյաց գավառի Կուստս գյուղը և, քանի որ շատ էին հոգևած, վճում են մեկ օր մնալ այդտեղ, հանգստանալ:

Այդ ժամանակ հյուսիսականների Վեդրեհոն թագավորը վաթսուն հազար դահեկանով՝ կաշտում է Վրաց աշխարհի պահակազորի զորավար Աղձնյաց Գոռվ իշխանին, որն ատնում է իր զորքն ու հեռա-

\* Հարություն Ժ Է րոմ. Հ օրհան Բե ղ իր ձևերով «Տարոնի պատմություն»: Այն գրույթը Բաղնիկյան տոմարի նախնիների Հոստատու գրքի անտերգրույթն է՝ ուղղորդված է:

\*\* Ծանոթություն է ընդ Հարություն Բաղնիկյանի «Տարոնի պատմություն»:

Գեղեցիկ մանր պատկեր էր Երևանի դեմետրի կուստը էր Կոստանդուպոլս 4-րդ դրսս ոսկի կոն արձաք:

նում Աղձնիք: Հյուսիսականների թագավորը մեծ զորքով գալիս է և Կուստանոս գիշերով գաղտագողի պաշարում Տրդատին: Տրդատի մոտ այդ ժամանակ մնացել էր միայն երեսուն հազար զորք. մնացածը գնացել, բանակ էր դրել Մուշ ավանում: Տրդատն ու Գրիգորը Այունյաց և Անգեղ տան իշխանների հետ կանգնած, իրենց գիշերային աղոթքն էին անում, երբ հանկարծ ամպի որոտի նման ահեղ դողոյուն է լսվում. հյուսիսականների հետևազորը գյուղի մի կողմն էր բռնել, հեծելազորը՝ մյուս կողմը և միաձայն հնչեցնում էին ռազմի փողերը, որոնց ձայնը միահյուսվելով ձիերի վրճջունին, գիշերվա մեջ թնդացնում էին շրջապատը:

Հայոց իշխանները տեսնելով, որ իրենք շրջապատման մեջ են գտնվում, արագ պատրաստվում են լուսնի լույսի տակ կռվի ելնել թշնամու դեմ: Տրդատը կորուկ առարկում է իշխաններին, ասելով.

— Գիշեր է, և մենք չգիտենք թշնամու քանակը. եթե կամենում եք իմաստությամբ գործել, ապա վերցրեք վեց հազար զինվոր և այգեստանների միջով գաղտնի բարձրացեք Արձան բլրի գագաթը և մինչև լույս այնտեղ թաքնվեք: Չորս հազար զինվոր Հաշտենից կողմը, չորս հազար էլ թշնամիների միջով այգեստաններով անցկացրեք վերին բարձունքը և թող այնտեղից ուշադիր հետևեն մեզ: Բայց այնպես արեք, որ չիմանան ձեր անցումը, այլապես կնամ նենգությամբ կփախչեն, կնամ էլ կրնկնենք շրջապատման մեջ և կվնասվենք:

Ապա Տրդատը զորքը իր ասած ձևով բաժանելով՝ ուղարկում է տարբեր ուղղություններով, իսկ ինքը մտնում է Գրիգորի մոտ և շարունակում աղոթքը:

Կեսգիշերին պունեցի զինվորներից մեկը հյուսիսականներինց մի պատանի է գերի բռնում և բերում թագավորի մոտ: Պատանին Տրդատին հայտնում է, որ այս սրշավանքի պատճառը հայ իշխաններն են ևղել, որ հարձակվողը հյուսիսականների թագավոր Գեդեհոնն է, նա ևկել է 58 հազար զորքով Տրդատին գերի բռնելու նպատակով:

Տրդատն այս իմանալով, զորքերին հրամայում է պատրաստվել կենաց և մահու պատերազմի:

Առավոտյան Տրդատի ձեռքի տակ եղած զորքը պարսպելով իրենց թագավորին, պաշտպանելով, շարժվում է ասուջ, որպեսզի Տրդատը կարողանա Արձան բլուրը բարձրանալ: Սակայն հյուսիսականների թագավորը հրամայում է իր զորքին Տրդատի ասուջն առնել. վեց հազար լավ սպառազինված զինվորներ արգելում են Տրդատին Արձան լեռը բարձրանալ: Կռիվը տևում է բազում ժամեր, և Տրդատը ոչ մի կերպ չի կարողանում հաղթանարել թշնամու պատմեշք:

Անժամ Գրիգորը արտասովախառն աչքերով դիմում է ասոր Կարապետին և ասում.

-- Ո՛վ Հովհաննես Մկրտիչ Կարապետ. չես տեսնում՝ ինչ են անում, քո զորությամբ օգնության հասիր այս կշտեավոր սագին:



Տրդաստը միանգամից ուժ է ստանում, քաջարի ձայնով սուրբ Կարապետին օգնության կանչելով՝ կտրում է թշնամու առաջապահ գորքի պատնեշը, առաջ անցնում և բարձրանում բլուրը: Բլրի գագաթին գիշերը բարձրացած և թաքնված հաղոց գորքը ոտի է կնում, թշնամու գորքին մեջ առնում, կոտորելով՝ փախցնում, լցնում բլրի հարավակողմի անտառը:

Հյուսիսականները թակարդ ընկածների նման խճողվում են անտառում. իսկ Տրդատի գորքը վրա հասնելով, անխնա կոտորում է բլուրին:

Եվ այդ վայրը պնդեցին այդ դեպքի առթիվ կոչվում է Թակարդ:

Հյուսիսականների մնացած գորքերը, օգտվելով առիթից, հարձակվում են գյուղի վրա, բայց այնտեղ ամրացած և թաքնված չորս հազար հալ զինվորները ոտի են եղնում, հարձակվում թշնամու վրա. բշում գյուղի ներքևը, որտեղ նրանցից շատերի երիվարների զլուխները դիպչելով ժայռերին, ջարդվում են, ոմանք էլ ժայռերից ցած են գլորվում և մեռնում: Մնացածներին հալ զինվորները այգիների մեջ են բշում, կոտորում, և քչերին է միայն հաջողվում ազատվել:

Տրդատը վերադառնում է կոտորածից, բարձրանում Արձան բլրի գլուխը և սագմի փողեր հնչեցնելով, գորահավաք ազդարարում: Հայոց բլուր գորքերն աստիճանաբար գալիս, հավաքվում են այնտեղ: Երբ բլուրը հավաքվում են, Գրիգորին իջեցնում են անտառ և երեք հազար զինվոր նրան պահապան կարգում:

Իսկ հյուսիսականների թագավորը իր մնացած գորքը առնում, իջնում է Հաշտենից տափարակ տեղը և թողթ է ուղարկում Տրդատին. առաջարկելով.

«Վաղը եկ, իրար հետ կովե՛նք, և թույ այս օրը հապիտե՛նական օր լինի մեր միջև: Կան իմ գերված իշխաններն ինձ կվերադարձնես և ինձ կվճարես տասներեք տարվա հարկը, կնո՛ւ էլ, եթե կե՛նք ծես, կքանդե՛մ քո երկիրը սրով և գերեվարույթյամբ, որպեսզի քո գորքերի սուսջ քո խոզույթյան պատկերը ճանաչես: Ըստ այդմ քո պատասխանն ուղարկիր»:

Տրդատը հյուսիսականների թագավորի թղթին չի պատասխանում, դրա փոխարեն վերցնում է երեսուն հազար զինվոր, գնում, իջնում է Հաշտենից գավառի Մուշեղամարգ կոչված տեղը, թշնամու գորքի դիմաց: Այստեղ Տրդատը անկաստ է կազմում, կենտրոնում կանգնեցնում է Բագրատունյաց իշխանին իր գորքով, աջ թևի գորքը տալիս է Այունյաց իշխանին, ձախ թևի գորքը՝ Անգեղոսան իշխանին, իսկ զահերեց իշխանին իր գորքով իրեն թիկունք է կանգնեցնում:

Երբ երկու կողմի ճակատներն էլ կազմված էին և կանգնել էին իրար դիմաց, հյուսիսականների Գեղդեհոն թագավորը ձայն է տալիս Տրդատին.

— Հայոց սրբն, առաջ անցիր:

Տրդատն անցնում է առաջ, ելնում Գեղդեհոնի դեմը, և սկսվում է մեկամտարար: Երկուսն էլ սկսում են իրար անխնա հարվածներ հասցնել և միաժամանակ պաշտպանվել հարվածներից: Նրանք հեռվից նմանվում էին գույգ քարհատների կամ բուրդ ձողկողների, որոնցից մեկը մորճը կամ ձողկոցը բարձրացնում էր, մյուսը՝ իջեցնում: Եվ այդպես, երկար ժամանակ փոխադարձաբար միմյանց են հարվածում, և ոչ մեկը մյուսին չի կարողանում հաղթել: Թեպետ Գեղդեհոնը ավելի գորավոր էր ու տեսքով ամալոր, քան Տրդատը, բայց նրա ուժն աստիճանաբար սկսում է պակասել և գգում է, որ կարող է Տրդատից վնասվել: Ուստի նա սրագ հանում է օղապարանը և հեռվից նետելով՝ Տրդատի աջ ուսը թևատակից առնում է օղակի մեջ, պարանը ձգում ու ձիու գլուխը շուռ տալով, քաշում: Տրդատը տեսնելով, որ չի կարողանում աջ ձեռքը շարժել, արագ մտրակում է ձին և տասը քալ հագիվ էր Գեղդեհոնը անցել. Տրդատը հասնում է նրան, աջ ձեռքով սուրբ բարձրացնելով, գոռում.

— Կատաղի շին, կապեցիր քո ջղերից:

Եվ Տրդատը սուրը իջեցնելով՝ Գեղդեհոնի ձախ թիկունքից մինչև գոտկատեղը կիսում է. հետո էլ կտրելով ձիու ողն ու գլուխը, և գցում գետին:

Անգեղոսան իշխանն այս տեսնելով, ձախ թևի գորքն առաջ է տանում և Այունյաց իշխանին ձայն տալիս.

— Այունյաց իշխան, այժերիդ գունդը շրջապատիր, որովհետև հոների քոշն<sup>1</sup> արդեն ընկել է:

<sup>1</sup>Քոշը արու այճն է. որ առաջնորդում է սովորի հետը: Աստեղ երգիծանքով հյուսիսականների կամ հոների գորքը սովորի նկատ է հասնեմառվում, իսկ նրանց բազավորը՝ հետը առաջնորդող արու սովի:

Սյունյաց իշխանը շրջապատում է հյուսիսականգների գորքը, կտորում, թշնամու գորապետին աջ կողմի բշում և ասում.

— Աստղահնչ<sup>1</sup>, առաջ անցիր, մենամարտենք:

Հյուսիսականգների գորապետը արագ առաջ է գալիս և սրով խփում, կտրում է Սյունյաց իշխանի երկվարի գլուխը: Սյունյաց իշխանը վտանգից խռատափելու համար սրով խփում, կտրում է թշնամի գորապետի ձիու ոտը: Երկուսն էլ ձիերից վայր են ընկնում, և իրար հասնելով սկսում են կռվել: Այդ միջոցին Սյունյաց իշխանի ծառաներից մեկը մի գինվորի ձիուց վայր է գցում, ձին խլում, մոտեցնում իշխանին, ասում.

— Հեծիր, տեր:

Սյունյաց իշխանն իրեն արագ գցում է ձիու վրա, դառնում, կտրում է թշնամի գորապետի գլուխը և գցում իր մախաղը:

Անգեղոսան իշխանը տեսնելով, որ թշնամու գորքը փախուստի է դիմում, մտնում է կովի մեջ և Տրդատի հետ մինչև արևամուտը կտտորում դիմադրողներին, մնացածներին բշում, անցկացնում Հաշտենիցի գետի մյուս ափը:

Թշնամու գորքը գիշերը բանակում է գետի մյուս ափին, իսկ հաչոց գորքը՝ այս ափին:

Լուսաբացին հյուսիսականգները հավաքելով իրենց մնացորդ գորքը, հարձակվում են հաչոց գորքի վրա և սկսում կտտորել: Նրանք շրջապատում են Ծոփաց իշխանի գունդը և այն աստիճան նեղում, որ Ծոփաց իշխանը աղաղակելով, կանչում է.

— Ի՛ր ես, Սյունյաց իշխան, ինձ օգնության հասիր:

Սյունյաց իշխանը արագ գալիս է օգնության, ցրում թշնամիներին, իշխանին շրջապատումից ազատում, բայց քանի որ նա ծանր վիրավորված էր, շուտով մեռնում է:

Այդ ժամանակ թշնամու գորապետը դառնում, հարձակվում է Տրդատ թագավորի վրա:

Տրդատը խիստ զայրանալով՝ սրով հարձակվում է Գեղոեհոնի գորավարի վրա, խփում, կիսում, բաժանում է երկու մասի, ապա ընկնելով նրա գորքի հետևից, հալածելով փախցնում է մինչև Հարքի կողմերը: Այստեղ էլ Հարքի իշխանն է հարձակվում հյուսիսականգների վրա, վեց տեղով ճակատամարտ տալիս, կտտորում 8056 գինվոր, մնացածները փախչում են Վրաստան, դարձյալ կտտորվում, և միայն վեց հազար գինվոր է ազատվում, հասնում իրենց երկիրը:

Իսկ Տրդատը և հաչոց մյուս բոլոր իշխանները իրենց գորքերով վերադառնում, հավաքվում են Գրիգորի մոտ, բազում այծեր ու գառներ մատուղ անում, աղքատներին ողորմություն բաժանում: Ապա Տրդատը հրամայում է բռնել դավաճան Աղձնյաց իշխանին և նրա ոտներն ու ձեռները ծայրաքաղ անել՝ կտրել: Գրիգորը խնդրում է Տրդատին՝ նման դաժան ձևով չբառնել նրան: Տրդատը հարգում է Գրիգորի միջամտությունը և հրամայում է Աղձնյաց իշխանին Հաչոց աշխարհից վտարել:

---

<sup>1</sup> Աստղահնչ՝ շուն, սկստի օտի շան կրկնք անցելն օր անտար:





## «ՏԱՐՈՆԻ ԴԱՏԵՐԱԶՄ» ՎԵՂԸ

### ՄՈՒՇԵՂ ԵՎ ԽՈՍՐՈՎ\*\*

Պարուհաստանում Սասանյան Որմիզդ թագավորի զորավար Վահրամ Մերհեվանդակ իշխանը ապստամբում է իր թագավորի դեմ: Առիթից օգտվելով, պարսից մյուս նախարարները սպանում են իրենց թագավոր Որմիզդին և փոխարենը թագավորեցնում նրա որդուն՝ Խոսրովին: Վերջինս փախչում է իր աշխարհից և ապաստանք Վահրամի դեմ կապելու համար, նախարարների խորհրդով, հունաց Մորիկ կաշարից օգնություն է խնդրում:

Մորիկը մեծ զորք է ուղարկում Խոսրովին օգնելու: Խոսրովին օգնելու են ելնում նաև հաչոց զորքերն ու նախարարները՝ Մուշեղի գլխավորությամբ:

Կովից ատաջ Վահրամ Մերհեվանդակը պատգամավոր է ուղարկում Մուշեղի մոտ հատուկ հրովարտական, գրելով հետևյալը.

«Ես այնպես էի կարծում, թե երբ ես ձեր թշնամիների դեմ եմ կռվում, դուք ինձ օգնության կգաք, և մենք միասնական ուժերով մեջտեղից կվերացնենք տիեզերական պատուհաս դարձած Սասանյանների իշխանությունը: Մինչդեռ դուք զորք եք ժողովել և ձեր թշնամու կողմն անցած՝ իմ դեմ եք ելել պատերազմի: Դուք, հալեդդ, որ այսքան տարի կռվել եք Սասանյանների դեմ, նրանց, որոնք վերացրել են ձեր երկիրն ու իշխանությունը, հիմա ինչպես եք դարձել նրանց դաշնակից և ելել իմ դեմ: Իմացնք, էթե Խոսրովի հաղթի, ապա նա, հունաց թագավորի հետ միասին, ձեզ մեջտեղից կվերացնեն: Ուստի ինձ հաճելի կլինի, որ դուք դրանցից ղեռանաք, միանաք ինձ, ինձ օգնեք: Եթե ես հաղթեցի, երդվում եմ մեծ աստված Արամազդով, արեգակով, լուսնով, հրով, ջրով, Միհր աստվածով և բոլոր աստվածներով, որ ձեզ կտամ հաչոց թագավորությունը, և դուք, իմ կամենաք, նրան կդարձնեք ձեզ թագավոր: Ես ձեզ կվերադարձնեմ նաև ձեզանից խլած բոլոր երկրները և բոլոր ծախսերը կհոգամ, մինչև ձեր թագավորությունը հաստատվի»:

Մուշեղն ու մնացած հալ նախարարները Վահրամի հրովարտակր թողնում են անպատասխան:

Վահրամը երկրորդ անգամ է թույթ ուղարկում Մուշեղին, այս անգամ արդեն՝ սպանակիքներով:

«Ես ձեզ գրեցի, որ հեռու մնաք Սասանյաններից, ձեզ խոստացա ձեր երկրները, թագավորություն և գանձեր, իսկ դուք լսել չուզեցիք և անգամ չբարեհամեցիք պատասխանել: Այդ դեպքում վաղը առավոտյան ես ձեզ ցույց կտամ իմ զրահավորված փղերը, իրենց վրա նստած սպառազեն քաջերով, որոնք հաստամիզ աղեղներից ձեզ վրա կտեղան երկաթակուռ նետեր՝ պողպատե սլաքներով. ես ձեզ ու Խոսրովին ցույց կտամ հզոր ու սպառազեն երիտասարդ աչրերի, արագընթաց արաբական նժույզների, պողպատակուռ տապարների և սուսերների ուժը»:

\* Այս ստեղծագործությունը, բնի «Մուշեղ և Խոսրով» գլխից, շարադրված է Հովհաննես Առնիկյանի «Տարուհի պատմություն» պիեսի վրա:

\*\* Ճարտարված է բուն Մերհեվանդակի պատմությանը:

Մուշեղը նրան պատասխանում է պայպեւ.

«Աստված հւմ կամենա, թող նրան տա, բայց դու ինքդ ես գոչալու և ոչ թե մենք: Եվ ճանաչիր քեզ, պոռոտախոս մարդ, որ հուլադ դրել ես ոչ թե աստծո, այլ քո քաջութան և փղերի գորութեան վրա: Եթե աստված կամենա, վաղը քո փղերի բազմութունը կցրվի ամպերի նման, քո զորութունը հողմի քերան ընկած փոշու պէս կվերանա, և քեզ մոտ եղած արքունի գանձերը արքունիք կգնան»:

Վաղ առափոռչան հակառակորդ գորքերը ճակատ են կազմում, և սկսվում է մի ահեղ ճակատամարտ:

Ապստամբ Վահրամը չի կարողանում դիմանալ հունաց, հաչոց և պարսից գորքերի ճնշմանը, դիմում է փախուստի:

Հույն և հայ զինվորները քաջաբար մարտնչում են փղերի դեմ, շատ փղերի ու փղապան զինվորների կոտորում, շատերին էլ գերում, քերում են Խոսրովի մոտ:

Նրանք մտնում են Վահրամի գորքերի լքած բանակատեղին, Վահրամի վրանում գտնում մեծաթիվ արքունի գանձեր, ավարի են ենթարկում ամեն ինչ: Խոսրովի պարսից գորքը թալանված արքունի գանձերից կարողանում է մի մեծ մաս ազատել և բերել Խոսրովին: Հաղթանակած Խոսրովը հաստատվում է իր թագավորության վրա:

Ապա Խոսրովը հրամայում է Վահրամի գերված ձիավոր և փղահեծյալ զինվորներին մերկացնել, ձեռները ուտերի վրա կապել և զցել գերված փղերի ոտների տակ, ոտնակոխ անելով, սպանել:

Հաջորդ օրը, երբ Խոսրովի նախարարները նրան ակնարկում են, որ հունաց զինվորները Վահրամի վրանից արքունի գանձերի մեծ մասը ավարի են ենթարկել, ես չի ցավում դրա համար, այլ ասում է.

— Բայց ինձ անհանգստացնում է այն, որ կենդանի մնաց տիրառչաց Վահրամը և գնաց: Նա քաջ մարդ է և վերստին կարող է գորք գումարել արևելքի քաջ ազգերից և հարձակվել մեզ վրա:

Խոսրովին իր մարդիկ պատասխանում են.

— Այդ տիրառչացին հայերն ազատեցին. մենք մեր աչքով տեսանք, թե ինչպես նրան Մուշեղ Մամիկոնյանը բռնեց, ապա նրան երիվար ու զենք տվեց և ազատ արձակեց:

Խոսրովի մարդիկ վախենալով Մուշեղի ուժից ու բնավորությունից, իրենց արքայի մոտ դիտմամբ ամբաստանում են նրան: Իսկ Խոսրովը, որովհետև սարիքով դեռ մանուկ տղա էր, խակ ու անփորձ, փոխանակ քննելու իրողությունը, հավատ է բնծայում բանասրկուներին և ասում.

— Կանչեք աչտեղ Մուշեղին, ու ու ձեռը կապեք, մինչև ես նրա մասին հաղորդեմ հունաց կայսրին:

Նույն պահին նա մի հուշագիր է գրել տալիս, հանձնում սուրհանդակին, որ ասնի, տա Մուշեղին: Հուշագրում ասված էր. «Ծտապ էկ ինձ մոտ, կարևոր գործ կա»:

Ապա Խոսրովը հրամայում է իր թիկնապահներին.

— Պատրաստ կացեք, հենց որ նա գա, ես ձեռով նշան կանեմ, դուք անմիջապես ձեռները կոլորեք, կկապեք նրան: Բայց ուշադիր եղեք, որովհետև նա քաջ մարդ է, հանկարծ չլինի, որ նա ինձ սպանի կամ ինքը սպանվի. ես նրա համար պատասխանատու եմ կազարի առաջ:

Նույն ձևով Խոսրովը պատվիրում է նաև դռնապաններին.

— Զգուշ եղեք, հենց որ Մուշեղը մոտենա իմ վրանի դռանը, նրա մեջքի գոտին ու սուտերը վրայից կհանեք, կատեք թե՛ թագավորի մոտ գեներով մտնելու իրավունք չկա:

Մուշեղն այդ ժամանակ շարել էր իր գորքը և մեջը մտած՝ հաշվում էր, թե կավից քնտր քանիսն են կենդանի մնացել և քանիսն են ընկել պատերազմում: Այդ պահին նրան է մոտենում Խոսրովի սուրհանդակը, ողջունում և հանձնում արքայի նամակը: Մուշեղը վերցնելով նամակը, հարցնում է սուրհանդակին.

— Ողջույն է և խաղաղությո՞ւն:

— Ողջույն է և խաղաղություն, — պատասխանում է սուրհանդակը, — բայց ես ուրիշ բան չգիտեմ, ինձ միայն հրամայված է, որ թեզ շատ շտապ կանչեմ:

Մուշեղը սկսում է արագ զինվել ու պատրաստվել, մտածելով, թե գուցե պատերազմի գոյծ կա կամ գուցե իր վաստակի ու ծառայության համար թագավորն իրեն պարգևներ է շնորհելու, բայց դեպքերում

պետք է զինված ներկայանալ: Մուշեղը իր հետ վերցնում է նաև երկու հազար լավ սպասազինված զինվորներ, որոնք քաջահմուտ հեծյալներ էին և ընտիր պատերազմույններ:

Մուշեղը թագավորի հրավերի մասին գրավոր հաչտնում է նաև հունաց զորավար Հովհանն Գառիկին և խնդրում նրա թույլտվությունը: Հունաց զորավարը թույլատրում է և հրամայում է Մուշեղին՝ գնալ գործով և սպասազինված:

Երբ Մուշեղն իր զինված զնդով մտնում է Խոսրով արքայի բանակատեղին և մոտենում արքունական վրանին, արքունիքից հրաման է գալիս.

— Այդքան բազմությամբ առաջ մի գնա. գորքը թճող հետվում նստի, իսկ դու մի քանի մարդկանցով ներկայացիր արքային:

Մուշեղը զանց է առնում հրամանը և իր զինված զնդով մոտենում արքունի խորանին: Պարսից զորքը սպասազինված շրջապատել էր արքունի խորանը: Մուշեղը իջնում է ձիուց և հիսուն զինված տղամարդկանց հետ մտնում արքունի խորանը, իսկ նրա զորքը զինված ու ձիեր հեծած մնում է խորանի մոտ կանգնած: Պարսից թագավորն ու նրա զորքը տեսնելով Մուշեղի սպասազինված զունդը և նրա զինված հիսուն թիկնապահներին, սարսափում են ու փորձում իրենց նենգությունը ծածկել: Երբ Մուշեղը ուզում է խորան մտնել, դռնապանները մոտենում են նրան և առաջարկում.

— Քանզիք մեջքիդ գոտին, սուսերդ հանիր, մերկացիր քո զենք ու զրահից, որովհետև իրավունք չկա թագավորի մոտ զինված մտնել:

Մուշեղի սիրտը կասկած է ընկնում, նա իրեն պատրաստ է պահում անսկնկալ հարձակման, սպա դռնապաններին խտորեն պատասխանում.

— Ես իմ մանկությունից սննդակից եմ եղել թագավորներին, այդպիսիք են եղել նաև իմ նախնիներն ու հայրերը: Ես այժմ եկել հասել եմ արքունի դռանը՝ այս հանդիսավայրը, և դուք ինձ ասում եք, թե հանեմ իմ վրայից իմ զենք ու զրահը, մերկանամ, քանզի հանեմ իմ մեջքից իմ գոտին ու թնիր, որոնք իմ տանը ուրախությունների պահին անգամ իմ վրայից չեն հանում: Եվ միթե ես արժանի եմ ենթարկվելու պարսիկների շարությանը:

Մուշեղը մեկին հրամայում է՝ գնալ իր կտրիճների մոտ և զորքն առաջ բերել իրեն օգնության, սպա շուտ է գալիս ու գնում:

Թագավորին անմիջապես իրազեկ են պահում, թե Մուշեղը չկամեցավ զինաթափված ներս գալ, հետ դարձավ գնաց: Խոսրովը երկչուով հրաժարվում է իր չար մտադրությունից, կարգադրում.

— Այժմ մեր խորհուրդը հարկ չկա իրագործելու, կանչեք, թող ներս գա, ինչպես ինքն է կամենում: Մուշեղին հետ են կանչում, ասում.

— Հրաման կա ներս մտնես, ինչպես ինքդ ես կամենում:

— Թող տեսնենք, ինչ բարի խորհուրդ է ուզում ինձ տալ արքայից արքան, — ասում է Մուշեղը և լուր զինված տղամարդկանց հետ մտնում է արքունի խորանը, արքայի առաջ խոնարհվում, երկրպագում, սպա ոտի կանգնում:

Իսկ արքան ոչ ձեռ է մեկնում Մուշեղին ողջունելու, ոչ եռանդով ընդունում նրան, այլ ասում մնում է կանգնած: Խոսրովը երկչուից չի կարողանում հրաման տալ, ինչ որ նախապես մտածել էր ու պայմանավորվել և արդյապես մնում է մոլորված կանգնած:

Մուշեղը տեսնելով արքայի սառը վերաբերմունքը, լուռ շրջվում է, արագ դուրս գալիս խորանից, հեձնում ձին ու հեռանում:

Այդ տեսնելով Խոսրովը, խիստ վախեցած իջնում է իր գահույքից, խորանից ելնում դուրս և իր նախարարներից մեկին ուղարկում Մուշեղի հետևից, նրան տալով կնքված ալ, իբրև երդման նշան և հետևյալ պատգամը.

— Այստեղից պատվով ու մեծարանքով գնա և վատ բան մի մտածիր մեր մասին:

Մուշեղը ուշադրություն չի դարձնում նրա պատգամին, հրաժարվում է նախարարի ուղեկցումից ու մեծարանքից և շարունակում է իր ճանապարհը: Մուշեղը մեկ մտածում է հետ դառնալ, մտնել արքայի խորանը, սպանել Խոսրովին, մանափանդ, որ արքայի խորանի շուրջը կանգնած իր զինվորներն էլ վրդովված էին և կամենում էին խոտովություն բարձրացնել, բայց հրաժարվում է այդ մտքից և իր գնդի գլուխն անցած՝ շարունակում է իր ճանապարհը: Գնալով Մուշեղին է հանդիպում Խոսրով թագավորի թիկնապահներից մեկը: Մուշեղը հրամայում է բռնել նրան և իրենց հետ տանել:

Մուշեղն սկսում է հարցաքննել թիկնապահին և երդումով սպառնալ, որ եթե նա չխոստովանի իր թագավորի մտադրությունը, ապա կապանի նրան: Թիկնապահը երդվեցնում է Մուշեղին՝ իրեն չհանձնել թագավորի ձեռք, և ինքը ամեն ինչ կպատմի: Մուշեղը երդվում է, և թիկնապահը նրան հաջողում է Խոսրովի դավադիր խորհուրդը:

Հաջորդ օրը առավոտյան, Մուշեղն իր հետ է վերցնում Խոսրովի գերված թիկնապահին և գնում հույն զորավար Հովհան Պատրիկի մոտ, հաչտնում նրան Խոսրովի դավադրության մասին, և իրեն կենդանի վկա՝ նրա առաջ կրկին խոստովանեցնում Խոսրովի թիկնապահին:

Հունաց բոլոր իշխաններն ու զորքերը սաստիկ վրդովվում են, բայց և հիշելով իրենց կայսրի՝ Խոսրովին տված երդումը, որոշում են առաջով գաղտնի պահել դավադրության լուրը և միայն նամակով այդ մասին տեղյակ պահել իրենց Մորիկ կայսրին:

Մուշեղը դառնությամբ դիմում է բոլորին և ասում.

— Եթե Խոսրովը չսպանվի, ապա լնվ իմացեք, նրա ձեռով են կորչելու ձեր Հոռմեսյան տերության բոլոր երկրները:

Հունաց իշխանները որոշում են Մորիկ կայսրին ուղարկել Վահրամից ավար սուած պարսից արքունիքի գանձերն ու դրա հետ նաև ամբաստանության թուղթ՝ Խոսրովի դավադրության մասին:

Եվ երբ հունաց չորս հարյուր զինվորներից բաղկացած ջոկատը պարսից արքունիքի գանձերով ու ամբաստանության թղթով ընկնում է ճանապարհ և գնում Հունաց աշխարհը, այդ մասին լրտեսների միջոցով իմանում է Խոսրովը: Կա սաստիկ դառնացած, գաղտնի գորք է ուղարկում հունաց ջոկատի հետևից, հրամայում բոլորին կոտորել, խլել ու հետ բերել իր արքունի գանձերը: Այդ մասին իմանում են հունաց զորավարները, որոնք իրենց հերթին են գորք ուղարկում Խոսրովի պատժիչ զորքի հետևից:

Պարսից զորքը դեռ հունաց ջոկատին չհասած, ենթարկվում է իրեն հետապնդող հույների հարձակմանը և գլխովին բնաջնջվում:

Հունաց ջոկատը գնում է Հունաց աշխարհ, Մորիկ կայսրին հանձնում գանձերն ու Խոսրովին ամբաստանելու թուղթը:

Մորիկ կայսրը մեծ շնորհակալությամբ ընդունում է գանձերն ու նվերները, բայց զանց է առնում Խոսրովի դեմ եղած ամբաստանությունը և իր դեսպանի միջոցով հաչտնում Պարսից աշխարհում գտնվող իր իշխաններին.

— Եթե չապահովեք Խոսրովի անձի անվտանգությունը, ապա ձեր գլխով պատասխան կտաք դրա համար:

## ՄԻՀՐԱՆ, ՄՈՒԾԵՂ ԵՎ ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

Հունաց աշխարհում Փոկասը սպանում է Մորիկ կայսրին և ինքն է նրա գահին նստում:

Պարսից Խոսրով թագավորն այդ իմանալով, մեծ զորք է հավաքում և գնում Մորիկի վրեժը լուծելու: Երբ Խոսրովը Հունաց աշխարհ գնալիս, գալիս անցնում է Կարին քաղաքի մոտով, մարդ է ուղարկում Տարոնի և Սասունի մարզպան Մուշեղի մոտ և ասում.

— Ե՛կ ինձ հետ հունաց թագավորի դուրը. եթե չգաս, իմացիր, երբ վերադառնամ՝ երկիրդ քարոքանդ կանեմ և քեզ, քո ընտանիքի հետ շղթայակապ իմ արքունիքի դուրը կտանեն:

Մուշեղը չի պատասխանում Խոսրովի առաջարկին, փոխարենը սկսում է իր երկիրն ամրացնել:

Խոսրովը գնում է Հունաց աշխարհ, բազում գերիներ ու գանձեր ավար առնում, վերադարձին, երբ գալիս հասնում է Կարին քաղաքը, իր քրոջ որդի Միհրանին ՅՕ հազար զորքով ուղարկում է Տարոն, հրամայում՝ Մուշեղին բռնել, տանել Բալխ, իսկ Տարոնի պաշտամունքի տեղերն ավերել, կրոնավորներին էլ կոտորել:

Միհրանը գալիս հասնում է Հաշտյանք գավառը, տեղացիներից մեկին վերցնում է իրեն առաջնորդ, գալիս մինչև Արձան բլուրը: Տեղի վանքի վանականների մեծ մասը փախչում, ասրատանում է Ողակյան ամրոց ամրոցում, իսկ չոթ խոտանարակ ճգնավորներ գիշերը մնում են վանքում և սկսում աղոթել ասածուն՝ երկիրն ու ժողովուրդը անհավատ թշնամիներից փրկելու հույսով:

Այդ ժամանակ պարսից զորքը լցվում է վանքը, տեսնում արուսավալից աշքերով աղոթող կրոնավորներին, բոլորին սրի քաշում:

Մուշեղը հետախույզներ է ուղարկում զննելու պարսիկների զորքերի տեղն ու քանակը: Նրանք գալիս, տեսնում են կոտորված ճգնավորներին և անմիջապես գնում, տեղեկացնում են Մուշեղին: Մուշեղն այդ լուրից սաստիկ ցնցվում է և երեք օր լուռ ու անխոս նստում:

Մուշեղի զորքը միախորության թուղթ է հղում իր զորավարին, գրելով.

— ՌՎ էրանելի հույսի ճշմարիտ շառավիղ, երջանիկ սպարապետ, նրանց համար մի տրտմիր, նրանք իրենց աղոթքով ամուր աշտարակ են կանգնեցրել մեզ համար: Այժմ արի դու սթափվիր և մեզ ուղարկիր մեզ վրա եկած Միհրանի դեմ կովի:

Մուշեղը զորքի պատգամը լսելուց հետո, քնից արթնացածի նման իսկույն սթափվում է իր մտքերից և իր մոտ կանչում Վահան Մամիկոնյանին, որին ինքը իշխան էր կարգել Տարոնի վրա:

— Որդյակ Վահան, — ասում է նրան Մուշեղը, — դու գիտես իմ կյանքի պատմությունը, դու գիտես, որ հարյուր քսան տարի ես պատերազմ եմ մղել և քրտինքի տեղակ'՝ նետի պաքով իմ ճակատի արշունն եմ սրբել: Ես անձամբ ութուններեք ճակատամարտ եմ կազմակերպել ու վարել, բայց այժմ արդեն ծեր եմ ու դողոքջուն: Իմ օգնականն այժմ աստված է և դհ, էլ ուրիշ հչ ոք: Իմ քսանամյա որդին, դու գիտես, մեռավ, և այժմ ես ոչ ոք չունեմ:

Արդ, լսիր, որդյակ, և լավ հիշիր, էթե մեռնես քո եկեղեցու համար, ապա դու մարտիրոս<sup>1</sup> ես, իսկ էթե քո ազգի ու աշխարհի համար ես իջնում մարտի, դա քաջության անուն է և մեծ հերոսություն:

Քանի որ ես ուրիշ ժառանգ չունեմ, ուստի երկիրս քեզ եմ հանձնում և քո զավակին: Գնա, կովիր քո թշնամու դեմ, իմաստությամբ որսա Միհրանին, թող տարք Կարապետը քեզ օգնական և պարիսպ լինի:

Վահանը խոնարհությամբ ընդունում է Մուշեղի առաջարկը, պատգամավորություն է կազմում և ուղարկում Միհրանի մոտ, առաջարկում հաշտվել և թողնել, երկրից գնալ:

Միհրանը մերժում է Վահանի առաջարկը, ասելով.

— Ես այս երկրից չեմ գնա, սինչև Մուշեղ իշխանին չբռնեմ և չտաննեմ պարսից թագավորի մոտ: Վահանը պատասխան է ուղարկում Միհրանին.

— Եթե այս երկիրը իշխանությամբ հանդերձ ինձ տաս, ապա Մուշեղ իշխանին կբռնեմ և քո ձեռք կհանձնեմ: Ես կամենում եմ Մուշեղի դեմ ապստամբել և քեզ մոտ գալ, ընդմիջտ ազատվել նրա երկյուղից:

Միհրանը համաձայնում է Վահանի առաջարկած պայմանին: Վահանը իջնում է Մուշեղի մոտ, իսկ Մուշեղը մնում է ամուր Ուլականում:

Միհրանի զորքերը կրոնավորներին կոտորելուց հետո անցնում գնում են, Աստեղոն ամրոցը պաշարում, երկու օր մնում են պնտեղ, բայց չեն կարողանում ամրոցը գրավել: Ապա վերադառնում են Միհրանի մոտ և նրան նկարագրում անառիկ ամրոցի ձևն ու ամրությունները:

Երբ Վահանը գալիս է Միհրանի մոտ իր խոստումը կատարելու, Միհրանը նրանից պահանջում է Աստեղոն ամրոցը: Վահանն ասում է.

— Այդպես չէ, տե՛ր, ինձ տար չորս հազար զինվոր, որ գնանք, հարձակվենք ամուր բերդերի վրա: Դրանց մեջ են պահված Մուշեղի գանձերը, իսկ պաշտպանները բոլորը Մուշեղի մտերիմներն են: Եթե ես մեկնակ գնամ, ապա ինձ ապստամբ կարծելով, կրոնանան վրաս և գանձերը իմ ձեռք չեն տա: Նախ գնանք Օձ քաղաքը<sup>2</sup> գրավենք, ապա մյուս բերդերը:

Միհրանը համաձայնում է, Վահանին է տալիս չորս հազար ընտիր սպասազեն հեծյալ: Վահանը պարսից զորքի գլուխն անցած, գնում հասնում է Օձ քաղաքի դռների մոտ: Նա նախապես քաղաքում իր զինվորների միջոցով մահվան դարան էր պատրաստել: Հաջորդ օրն առավոտյան Վահանը համոզում է քաղաքի պահապաններին, որ պարսից զորքը ներս թողնեն: Եվ քանի որ քաղաքի մուտքը նեղ էր, պարսից զինվորները մեկ-մեկ էին մտնում քաղաք: Հենց որ զինվորներից մեկը մտնում էր քաղաքի դռնից

<sup>1</sup>Քրիստոսեւոյ եւ մարտի մարտը արտաշատ, արմաշտի և գոնիոյ:

<sup>2</sup>Օձ քաղաքը գտնւմ էր Տարոնի Տարոնի դաշտի ուղեով արեւելեան կողմը, Մեղրաբերդի Կոնդի տուն:

ներս, Վահանի մարդիկ անմիջապես տուն էին տանում, կողսարում, գլուխը կտրում և գցում քաղաքի պարսպից դուրս՝ մի չերևացող տեղ:

Վահանը չորս հազար զինվորներից հիսունին թողել էր քաղաքի մոտ գտնվող Խարձս գյուղում և պատվիրել, որ եթե ինքը նրանց մոտ մարդ ուղարկի, ապա թող գնան Միհրանից օժանդակ գործ բերելու:

Վահանն այդպես էլ անում է. երեք հազար ինը հարյուր հիսուն պարսից զինվոր գաղտնի սպանելուց հետո մարդ է ուղարկում Խարձս գյուղ՝ Միհրանից օժանդակ գործ ուզելու: Զինվորները գնում են Միհրանի մոտ և երկ և հազար ընտիր զինվոր բերում Վահանի մոտ:

Մինչ այդ Վահանը քաղաքացիներին պատվիրում է.

— Հագեք սպանված պարսից զինվորների զգեստները, հեծեք նրանց ձիերը և դուրս եկեք, շրջապատեք քաղաքը: Հենց որ պարսից օժանդակ գործը հեռվից երևա, միանամուտ հարձակվեք քաղաքի վրա, լցվեք ներս, հաղթության փողեր հնչեցրեք և քաղաքի դուռը բաց թողեք, որպեսզի եկող պարսից զորքը կարծի, թե քաղաքը գրավված է:

Այդպես էլ անում են: Երբ պարսից զինվորների զգեստներով ծափված քաղաքացիները գրոհելով մտնում են քաղաք, օգնության եկող պարսից զորքը ցնծում է ուրախությունից և նրանց հետևից սկսում քաղաք մտնել: Վահանն ընդատաջ է գալիս պարսից զորքին, ավտոտ քաղաքի գրավումը և նրանցից քսան զինվոր ուղարկում Միհրանի մոտ, նրան ևս ավետելու իրենց հաղթանակը: Վահանը հետ է դառնում և հետևում քաղաք մտնող պարսից զորքին: Երբ պարսից զորքից շատերն էին արդեն քաղաք մտել և մուսներն էլ դեռ շարունակում էին ներս մտնել, հանկարծ գորքի մեջ կատկած է ընկնում. զինվորներն ուզում են հետ դառնալ, բայց նրանց հետևից գնացող Վահանը չի թողնում: Մի կողմից Վահանը, մյուս կողմից քաղաքացիները պարսիկ զինվորների մի մասին քշում, լցնում են ճահճուտները և քառասուն զինվորի նահճախեղդ անում: Մնացածներին էլ արգելում են քաղաքում, կոտորում, գլուխները հանում, շարում պարսիկների վրա: Երբ հաշվում են սպանված պարսիկներին, տեսնում են, որ վեց հազարից միայն ութնուհինգ են պակաս:

Վահանը հրամայում է բոլոր սպանվածների քթերը կտրել և լցնել իր մախաղը: Ապա վերցնում է չոթ հարյուր զինվոր, գնում Մուշ: Երեք հարյուր զինվորի թողնում է Մեղտի ավանի անցքում, երկու հարյուր աշտենավոր զինվորների՝ Սասուն տանող ծմակում, իսկ ինքը երկու հարյուր զինվորներով գնում է Մուշ՝ Միհրանի մոտ: Գնում, մտնում է Միհրանի սենյակը, ասում.

— Ես քո զորքերից փախել, եկել եմ քեզ մոտ, քո զինվորները ոչ թողեցին ինձ քաղաք մտնել, ոչ էլ ավարից մեզ բաժին տվեցին. իմ զորքն էլ արգելեցին քաղաքում, ևս էլ այսպես փախատակյան դարձած՝ եկել եմ քեզ մոտ:

Միհրանը մտածում է նրանց վրա ուղարկել հազար զինվոր, սակայն Վահանը ավելացնում է.

— Նրանք ապատամբել են քո դեմ և քաղաքը կողոպտելով ու ավարի ենթարկելով, կամենում են իրենց կողոպուտով Հունաց կողմն անցնել:

Միհրանը սուսկալի գայրանում է և նրանց դեմ է ուղարկում երկու հազար զինվոր: Վահանը Միհրանի հանձնարարությամբ զորքի հետ է գնում: Նա պարսից զորամասին խորհուրդ է տալիս գիշերով Մեղտյա գետը շանցնել, այլ մնալ, այս ասիին գիշերել և առավոտյան երբ գետը անցնել ու գնալ:

— Գուցե հանկարծակի թշնամի հարձակվի ձեզ վրա, դուք էլ տեղանքին ծանոթ չեք, որ կարողանաք պտտսպարվել: Զեզանից հազար զինվոր թող ծնակը գնա, հազարն էլ մնա, դաշտում գիշերի:

Վահանը զորքը բաժանում է երկու մասի, հետները տեղացի ուղեկիցներ դնում, ուղարկում: Ապա ծնակը գնացող պարսից զինվորների հետևից ուղարկում է 100 հազ զինվոր: Ինքը մնացած հազար զինվորի հետ գիշերում է դաշտում՝ Մեղտյա գետի այս ասիին:

Երբ պարսից զինվորները քնում են, Վահանը հրամայում է սպասավորներին՝ ձիերը զինվորներից հեռացնել, տանել արտո տեղերը արածելու: Ինքը իմաց է տալիս նախապես մոտակայքում դարանակալած իր զինվորներին, որոնք շրջապատում են պարսից քնած զորամասին, ասից ու ձախից մարտի փողեր հնչեցնում և սկսում պարսից զինվորներին կոտորել: Հաչ զինվորները բոլորին գլխատում են և գլուխները գետը նետում:

Ապա Վահանը հրամայում է ձիերը ծնակը տանել, իսկ ինքը իր զինվորների հետ գալիս է դեպի ծնակը: Պարսից զինվորները դեռ տեղ չէին հասել, որովհետև Վահանն այդպես էր կարգադրել նրանց՝

հայ ողմկիցներին, որ ձգձգեմ նրանց գալուստը, մինչև ինքր տեղ հասնի: Վահանը սպասում է նրանց: Պարսիկները գալիս են, կամիրքով անցնում, իջնում գետի մյուս ափը և իրենց սպահով զգալով, իջնում ձիերից:

Վահանը զինվորներով փակում է կամուրջը, ապա դարանակալած զինվորները չորս կողմից սկսում են սուխալի ալաղակ բարձրացնել, հարձակվել պարսից զորամասի վրա և անխնա կռուտորել: Բայց մի պարսիկ զինվոր, որ բնկել էր դիակների տակ ու կենդանի մնացել, հեծնում է ձին ու փախչում դեպի Մուշ: Վահանի զինվորներից անմիջապես նրատում են նրան և բնկնում հետևից: Հետապնդելով՝ անցնում են գետի մյուս ափը, վրա հասնում, բռնում են և գլուխը ջախջախում:

Զինվորներից մեկը գետափից մի բուռ ավազ է վերցնում, տալիս մյուսին, որը ջախջախել էր պարսիկի գլուխը և ասում.

— Պարսից խորոկարներ, մոռ աղս՝:

Եվ այդ օրից սկսած՝ այդ տեղափառը կոչվում է Առադս, որտեղ հետագայում Վահան Մասիկոնյանը շինում է համանուն ավանը:

Իսկ Վահանը պարսից մնացած զինվորներին քշում, լցնում է ճահիճը, խեղդում: Ապա կտրել է տալիս բոլոր սպանված պարսիկների քթերը, պահում, գլուխները նետում ճահիճների մեջ կամ թողնում դաշտում, վերցնում սպանվածների երկու հագար ձիերը, տանում Ուղնուտ բերդը:

Հայտնի օրն առավոտյան Վահանը գալիս է Մուշ:

Նա հրամայում է իր ծառաներին ճաշ պատրաստել և Միհրանին հրավիրել ճաշի:

Երբ Միհրանը իր իշխանների հետ գալիս է Վահանի մոտ ճաշի, Վահանը քաշվում է սենյակը, հիվանդ ձևանում և դռնապանին կարգադրում, բացի Միհրանից, մյուսներին ներս չթողնել:

Դռնապանը միայն Միհրանին է ներս թողնում, մնացած իշխաններին ասում.

— Հայոց մարգալանի հիվանդ է, չկարողացավ ճաշի գալ, և ես չեմ կարող ձեզ ներս թողնել:

Իշխանները հավաքվում են սեղանատան դահլիճում և տրվում զինելիս:

Իսկ Վահանը Միհրանին ներս հրավիրելով, ծառաներից մեկին կարգադրում է բերել այն մախաղը, որ լցված էր պարսից զինվորների քթերով: Նա բացում է մախաղը և ցույց տալիս Միհրանին: Միհրանը զարհուրած հարցնում է.

— Այդ ի՞նչ է, պատմիր, տեսնեմ:

Եվ Վահանը ոչինչ չթաքցնելով, մեկամեկ նշտությամբ պատմում է այն ամենը ինչ կատարել էր:

Միհրանը կատուղած իլում է ծառայի ձեռքին եղած նիզակը և



Չգիտեքի ինչոք, որով իսկ զինվորը պարսից սպանված զինվորի մատուղ է հետաքրտ, իսկ իր սարանող բնկերոջը՝ չպարսից մատուղի խոնարար, օրին ավագը յորե այլ է ասույթ գրում, բուզի սատուղն ոտակց այլ բնկուղնի չէ:

կամենում է Վահանին խփել: Վահանը անմիջապես հանում է առջևից կախած սուրը, Միհրանի քիթը կտրում, դնում առաջև ու առում:

— Դ՞ն ես նախատեղ առածուն, դ՞ն ես իմ կրոնավորներին, որոնք աշխարհի պոններն են, մորթել տվել:

Ապա պատում է Միհրանի փորը, ծառային լսարդը հանել տալիս, դնում բերանը և դանակը թողնում փոքի մեջ ցցված ու առում:

— Այժմ տ՛նր Ասրահունիքում գտնվող պարսիկների նշանաբանն ու պատվերը, և ես քեզ կենդանի կթողնեմ:

Միհրանը բազում երդումներով հաշտնում է իր գաղտնի նշանաբանն ու պատվերը, որ միայն ինքն ու Ապահունիքի պարսից զորավարը գիտեին:

Վահանն ամեն ինչ ստույգ իմանալուց հետո, կտրում է Միհրանի գլուխը, ապա ծառաներին պատվիրում՝ հանել վրայից արշուկն առնելը, թաքցնել, հատուկի արյունը մաքրել: Ապա Միհրանի մարմինը դնել է տալիս մահճում, վերանկով ծածկում, իբրև թե քնած է: Ինքը ելնում, կանչել է տալիս Միհրանի դպրին<sup>1</sup> իր սենյակը և Ապահունիքում գտնվող պարսից Վաշիր զորավարի անունով նամակ է գրել տալիս: Նամակը սկսվում էր ողջույնով և գաղտնի նշանաբանով, որին հաշտորդում էր հետևալը:

«Երկու օրից հետո հազար զինվորով բարձրացիր Կոթ ձորի վրայի բլուրը, որպեսզի գամ, քեզ հանդիպեմ»:

Դպիրը գրում է նամակը, Միհրանի մատանիով կնքում: Վահանը կանչում է հիսուն հարյուսորիս ծառա, նամակը տալիս նրանց, պատվիրում՝ տանել, հանձնել Վաշիր զորավարին, որն ընդամենը հազար զինվոր ուներ: Ծառաները նամակն առնում, տանում են:

Վահանը կանչում է Միհրանի նվիրակին<sup>2</sup> և առում:

— Գնն, սպիկն սնունով իշխանին կանչիր, գա:

Նվիրակը գնում, կանչում է: Երբ իշխանը գալիս անցնում է խավար փողոցով, Վահանի վեց զինվոր մթույթյան մեջ նրան գաղտնի հետևում են: Հենց որ նա կամենում է սենյակ մտնել, նրանք շտապ վրա են հասնում, կոկորդից բռնում, որ չգոռա, իսկ մեկը դանակն իսկույն խրում է սրտի մեջ, ապանում, դիակը վերցնում օցում են մի ուրիշ սենյակ: Վահանը նույն կերպ իշխաններին մեկամեկ կանչում է իր մոտ իբրև թե խորհրդակցության և բոլորին մեկ-մեկ ապանել է տալիս: Այդ երկու նա այդ ձևով ապանել է տալիս պարսից ութսունվեց իշխանի:

Այնուհետև Վահանը ելնում, գնում է այն նաշաարսահները, որ հավաքված էին պարսից զինվորները: Նա այդտեղ գտնվող օտար կամ սեփական գավառներից եկած մարդկանց դուրս է հանում և սկսում զինվորներին պարսավել:

— Միթե ձեզ վրայ էր գողանալ մարգարանի մարգարոյա պաակը: Այժմ հրամայված է ձեզ բոլորիդ մերկացնել, որպեսզի տեսնենք իմ մոտ է պաակը թաքցրած:



<sup>1</sup>Դպիր — աշատեղ՝ գրագիր, բազումուրդ, իսկ քրիստոսուեսկան եկեղեցում՝ ընթերցող, կրթիչ:

<sup>2</sup>Վահանը զինվորական սարսավոր, աբարսուց, որամանուրսուոր, գարսավարի աբրասավոր զինվոր:



Բոլորի զգեստները հանել է տալիս. մերկացնում, հետո դռները փակում նրանց վրա: Նույն կերպ էլ վարվում է մյուս ճաշարահում գտնվող զինվորների հետ, որոնց ընդհանուր թիվը հասնում էր 1903-ի: Արահների դռները փակելուց հետո բերել է տալիս Միհրանի գլուխը, սրահների երդիքներից կախում, ցույց տալիս զինվորներին և ասում.

— Այս այն գլուխն է, որ մտածում էր սուրբ Կարապետի վանքը հիմնիվեր կործանել և կրոնավորներին հրով աչրել:

Այս Կահանը հրամայում է աչրել երկու ճաշարահները և ասում.

— Դուք ինձ վնաս եք անել տալիս, որ այս սրահները աչրել եք տալիս: Բայց եթե աստված և սուրբ Կարապետը կամենան, այս փայտերը, որոնք ափսոսում եմ, ձեր և ձեր թագավորի գլխին կհասնեն: Որովհետև ես՝ աշխատել եմ և շինել, իսկ դուք մերկ եք ու մրսած. ուստի իմ մեղքերի թողության և իմ հիշատակի համար այսօր դուք տաքացեք և մի ամաչեք: Եվ թող այս տներն էլ ձեզ գերեզման լինեն, որ եղան ձեր պարսից թագավորի պատճառով:

Մինչ պարսից զինվորները ճարպի բոցերի մեջ վառվում էին, Կահանը հավաքում է նրանց թալանած զանազան ու ավարը, տանում Ռդական՝ Մուշեղի մոտ: Մուշեղն այդ զանազան ու թալանած ունեցվածքը նորից վերադարձնում է Օձ քաղաքը:

Կահանը վերցնում է երեք հազար զինվոր, գնում Վաշիրին ընդառաջ: Գնում հասնում է Կոթ ձորի եզրին գտնվող լեռան մոտ, զորքը լեռան երեք կողմը դարան մտցնում, իսկ պարսից դպիրին ու նվիրակին, որոնք անտեղյակ էին մնացել Կահանի արարքներին, ուղարկում է Վաշիրի հետևից, որն այդ ժամանակ իջել էր Նիս լճի ափը: Վաշիրը վերցնում է իր հազար հարյուր զինվորները, գալիս լեռը: Երբ մոտենում է լեռանը, Վաշիրը հիսուն զինվոր թողնում է փոքր-ինչ հեռու, այլ թշնամիներից ապահով լինելու նպատակով, ինքը գալիս մտնում է Կահանի վրանը, կարծելով, թե Միհրանն այնտեղ է: Իր Կահանը նրան տեսնում է, ասում է.

— Վաշիր, ինչ ես մտադիր անել, ուզում եք պարսից հավատին դարձնել Հայոց երկիրը:

Եվ սկսում է Վաշիրին ծեծել ու խոշտանգել, ստիպել, որ հայտնի գորքին կանչելու նշանաբանը: Վաշիրը հարվածներին չհիմանալով, հալտնում է զորապետներին և իշխաններին շուսպ կանչելու նշանաբանը:

Կահանը պարսից դպիրին նամակ է գրել տալիս և կաշատելով նրան, ասում.

— Այնպես գրիր, որ վաղը գան, քանի որ հույները կարող է հարձակվեն մեզ վրա:

Վաշիրի մատանիով նամակը կնքում է և ուղարկում այն զորքերին, որոնք հեռու էին գտնվում: Իսկ մոտիկ գտնվող զորքի զորապետներին ու իշխաններին մեկ-մեկ Կահանը հրավիրում է իր խորանը և գլուխները կտրում: Պարսից իշխաններից մեկը այդ տեսնելով, փախչում է իր բանակը: Կահանը տեսնելով, որ գործը բացահայտվում է, լուր է ուղարկում բլրի շուրջը դարանակալած իր զորքին՝ հարձակվելու պարսից զորքի վրա: Դարանակալած զորամասը հետևից գրոհում է պարսիկների վրա, փախցնում Կոթ ձորի կողմը գտնվող քերդը: Բերդում գտնվողները սկսում են մեծ վեճեր ու քարեր գործել պարսիկների վրա, շատերին ջարդել: Պարսիկներին հետապնդող հայ զինվորներն էլ մյուս կողմից են սկսում կոտորել: Կոտորածից դեպի Ապահունիք է փախչում պարսից մի հարյուրակ, որի վրա հարձակվում է մյուս կողմում դարանակալած Կահանի զորամասը և բոլորին գերի բռնում:

Իսկ հաջորդ օրն առավոտյան Վաշիրի հետևում գտնվող զորքը, անտեղյակ այդ ամենին, գալիս է դեպի լեռը: Վահանը դուրս է գալիս զորքին ընդառաջ և ասում.

— Բոլորդ իջեք, թողեք ձիերն արածեն մինչև երեկո, երեկոսան կիջնենք, կհարձակվենք մուկների վրա:

Այդպես էլ անում են: Վահանի դարանակալած զորամասերը գալիս են պարսիկների վրա, ձիերը կտրում են գորքից, փախցնում, Արածունի գետն անցկացնում, քշում, հասնում Քարքե լեռը՝

Պարսից զորքը տեսնելով այս, միաբերան աղաղակում է.

— Վնա մեզ, կորանք:

Գանձում է Մ-ի դարձի վեճին ճամբար, որի վրա էր կառուցված Մշո սուրբ Կարապետի հուշարձանը վանքը:

Եվ այդ օրվանից լեռան անունը մնում է Կորյա:

Վահանը սպասնորդության պատրվակով վերցնում է պարսից գորքին, տանում, իջեցնում ձորը: Այդ ժամանակ նրա դարձանակը զինվորները աչից ու ձախից հարձակվում են գորքի վրա, շրջափակում և սկսում անխնա կոտորել: Վահանը հրամայում է պարսից գորքից քառասուն հոգու կենդանի թողնել, որ:վնասի դառնան պարսից թագավորին լրատարներ:

Վահանը նրանց է հանձնում Միհրանի գլուխը, պատվիրում՝ տանել իրենց թագավորին և ասել.

— Այս մարգարեքը, երբ եկավ մեր երկիրը, մեր և ձեր գորքերը հակառակվեցին իրար և գունդ՝ ուզեցին իտաղալ, բայց գնդակ չկարողացան գտնել: Եվ քանի որ հույները ձեր թշնամիներն էին, չհամարձակվեցինք գնալ, նրանցից խնդրել, իսկ ձեր գորքերին էլ գնդակ չկար, ուստի կարեցինք այս գլուխը և գունդ խաղացինք: Հիմա, լսեք, եթե Շահաստանից եկել եք հուսար քաղաքը, որ գտնվում է տախարակ ու տաշտաձև տեղում, համոզված եմք և գիտեմք, որ գունդ պիտի խաղաք: Առեք ձեր քրոջ որդու գլուխը, և թող ձեզ համար գնդակ լինի սերնդից սերունդ:

Երբ պարսից քառասուն զինվորները Միհրանի գլուխը տանում են տալիս իրենց Խոսրով թագավորին, թագավորը խիստ վիրավորվում է ու ամաչում այդ արարքի համար: Բայց հաջորդ տարին դարձյալ խոխուսանալով, նոր գորք է ուղարկում Հայոց աշխարհ:

Այդ նույն տարին ուժեղ երկրաշարժ է լինում և Իննակնյան տեղում գտնվող սուրբ Կարապետի վանքը փոյլ է գալիս: Տարոնի իշխան Մուշեղը բազում զանձերով վերաշինել է տալիս ս. Կարապետի վանքը և ինքն էլ նույն տարին վսիմանվում: Նրան թաղում են ս. Կարապետ վանքի արևելյան ճակատի մոտ:

Մուշեղի մահից հետո Մամիկոնյանների տան իշխան է կարգվում Վահանը, որը գալիս է ս. Կարապետի վանքը և նորակառույց վանքում ցնծության մեծ տոն կատարում:

### ՎԱԽՏԱՆԳ ԵՎ ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

Պարսից Խոսրով թագավորը երկրորդ անգամ է արշավում Հունաց աշխարհ: Երբ նա արշավանքի է դուրս գալիս, հիշում է իր քրոջ որդի Միհրանի մահը և Տարոնի վրա է ուղարկում Միհրանի հորեղբայր Վախտանգին՝ երեսուն հազար ընտիր հեծյալներով: Վախտանգը գալիս է Տարոն, տեսնում մի լճարձակ ու վայելույշ տեղ, շատ է հավանում և այնտեղ կառուցում քաղաք, տնկում այգի ու պարտեզներ: Ապա բարձրանում է Տորոս լեռան գլուխը և այնտեղ ամրոց կառուցում, իր անտիկ տեղի պատճառով անվանում Գահար, որտեղից շատ վայրի գազաններ զահավեժ էին լինում:

Վախտանգը: Պարսկաստանից բերում է իր կնոջը՝ Պորպետին, և նրա անունով Պորպ կոչում իր նորակառույց քաղաքը: Այնուհետև Գոռոզ լեռան վրա նա ավան է շինել տալիս և կոչում իր որդու անունով՝ Գրգոռս:

Վախտանգը մարդ է ուղարկում Վահանի մոտ և ասում.

— Քաջ և հզոր բազկի տեր Վահան հսկային՝ աստվածների օգնությամբ ողջոյն:

Թեպետ շատ տխրեցինք իմ եղբորորդու մահվան պատճառով, բայց հիացանք քո խելքով ու իմաստությամբ: Այժմ եկել եմ սիրո ու հաշտության նպատակով, ուստի էկ ինձ մոտ և երդվիր, որ այսուհետև չարիք չես գործի և կապրես խաղաղությամբ:

Իսկ Վահանը նրան պատասխանում է.

— Այդք անշակող խոնկորների ցեղից սերված, վատահոգի և թուլամարմին Վախտանգին ուղչոյն:

Թեպետ Միհրանի մահվան համար ուրախացաւ, բայց քո անձնության համար լաց եղաւ, որովհետև Միհրանի մահը լսելով և իմ գործությունը իմանալով, ինչպէս ես քեզ թույլ տվել գալ ինձ վրա: Թե սիրո և հաշտության համար ես ինձ մոտ եկել, կնոջդ ինչո՞ւ ես հետդ բերել, գուցե ուզում ես մեր ցեղից զավանկ ունենալ: Կամ եթե դու սիրո և բարեկրօնության նպատակով ես եկել, ինչո՞ւ իմ նոյրո՞ւ քո սեփական քաղաքն ու բերդը շինել տվեցիր: Ընտ լավ գիտեմ, որ դու ստա ես ասում, շան նման կձեռնվելով. պանքը

Գունդ կամ հոյ խաղալը հինավորաց խաղ էր, մապանախաղ, խիստ սիրված ու տարածված Մերձավոր Արևելքում, սող թմբու մասն Հին Հույաստանում: Գունդը կամ հոյը կրթական քաղ էր, ուկոր կամ փալո, որը խաղալու էին բոլոր դարձում մականները: 10 - 12 խաղացողներով, մոտավորապես նույնը, ինչ այժմյան խոտի հոկեյը:

մահվան վտանգի եւ ենթարկում: Ե՛կ, երկրիցս դուրս արի և խաղաղությամբ գնն, թե չէ՝ Էն մահը կրե-  
րեմ քո գլխին, որ ամբողջ երկիրը տեսնի:

Վախտանագ՝ գալրացած, վեց հազարանոց զորք է ուղարկում Մուշ՝ Վահանի վրա: Վահանին հայտ-  
նում են այդ մասին:

— Իմացիր, պարսից Իսահան զորավարը վեց հազար զորքով քեզ վրա է գալիս:

Վահանը գիշերով վերցնում է իր զորքը, գնում Ծծմահոտ կոչված աղբյուրի մոտ, ուր իջևանել էր  
պարսից զորքը: Նա սրերով անպասելի հարձակվում է քնած զինվորների վրա:

Այդ ժամանակ Վահանի որդի Սմբատը չի թողնում, որ պարսիկները հեծնեն իրենց երիվարները:  
Նա չորս հազար ձի կտրում, առանձնացնում է զորքից, քշում, անցկացնում Արածանի գետը, տանում  
Հաշտենից գավառի կողմերը. և երկու հարյուր ձի, իբրև առաջին հաղթության նշան և ավարաբաժին,  
ուղարկում է սուրբ Կարապետի վանքին:

Իսկ Վահանը սրերով պարսիկներին քշում, դեմ է անում ճահիճներին, շատերին կոտորում, իսկ  
երկու հարյուր հոգու էլ լցնում ճահիճները, խեղդում:

Վահանի տրամադրության տակ կար լնդհանուր ասմամբ 28 հազարանոց զորք, որից տաալ հա-  
զարը սրբու՝ Սմբատի ձեռին էր. չորս հազարը՝ Արշույց իշխանի, երկու հազար երկու հարյուրը՝ Պա-  
րունյաց իշխանի, վեց հարյուրը՝ Հաշտենից իշխանի, հինգ հազարը՝ Ողնոտի իշխանի, իսկ վեց հա-  
զարը՝ անմիջապես Վահանի ձեռին: Վահանը զորքն այդ կերպ բաժանելով, թույլ էր տարբեր տե-  
ղերում, իրենց պարտավանդությունների կատարելու:

Այդ կոչում մեծ կոտորած է կատարում Հաշտենից իշխանը իր փոքրաթիվ զորքով: Նա շտապով  
կտրում է Իսահանի զորքի գլուխը, մնացած զորքը փախուստի մասնում, զորագլուխն անում է շրջա-  
փակման մեջ և սկսում սատիկ նեղել: Պարսիկները աղաչելով փրկություն են խնդրում և առաջարկում՝  
փրկագին վճարել: Վահանն ասում է.

— Տվեք մեզ Իսահանի գլուխը, մենք ձեզ ազատ կարձակենք:

Պարսիկները մոլորված այս առաջարկությունից, էլք չեն կարողանում գտնել: Ապա բռնում են Իս-  
հանի որդի Վահին և հանձնում Վահանին: Այդ ժամանակ առաջ է գալիս Հաշտենից իշխանն ու ասում.

— Կամ մեզ տվեք Իսահանի գլուխը, կամ երեսուն հազար դահեկան փրկագին:

Պարսիկներն հոժարում են, վճարում են երեսուն հազար դահեկան և ազատ թողնում, հեռանում:  
Վահանը տեսնելով նրանց ազատ ու անվտանգ երթը, զղչում է իր արածը, հարձակվում է պար-  
սիկների վրա և սկսում անխնա կոտորել:

Պարսից զինվորների մեծ աղաղակ են բարձրացնում, ասում.

— Առ թնչ (ինչի համար) նորից կովի մտաք, հիվ ավելախոսներ:

Այդ օրից այդ տեղը կոչվում է մի նոր անունով՝ Առինչ:

Վահանի զորքը պարսից զինվորներին ցրում է դաշտով մեկ, սատիկ կոտորում: Նրանցից ազատ-  
վում է միայն հինգ հարյուր ձիավոր, որոնք փախչում, գնում են Վախտանագի մոտ և ամեն ինչ պատմում:

Վախտանագ խիստ կատաղում է, իր գայությունը թափում փրկված զինվորների գլխին և հրամայում  
հինգ հարյուրին էլ գլխատել:

Այնուհետև Վախտանագ ցամաքի լցված, հրաման է տալիս իր Ասուր զորավարին՝ ութ հազար  
զորքով գնալ Վահանի վրա: Ասուրը վերցնում է զորքը, գալիս, Մեղրագետի ափին բանակ զարկում,  
մալոդ ուղարկում Վահանի մոտ, ասում.

— Ա՛յ չարամիտ Գալլ Վահան, լավ գիտես, որ պիտի ծառայես ու ենթարկվես արյաց արքային, ին-  
չու ես գոր տեղը այդպես անամոթ ձևով լ մոռատանում: Արի մեզ սոտ, դարձիր հարկատու, թե չէ՝ շան  
նման կատկես:

Վահանն այդ լսելով, վերցնում է վեց հազարանոց զորք և իր որդի Սմբատի հետ էլնում պատե-  
րազմի:

Երբ գալիս հասնում է Ասուրի զորքի դեմ, կանգնում, Ասուրն սկսում է զայրացնել Վահանին, նրան  
անց նրանց Գալլ կոչելով: Վահանն ասում է.

— Դա իսկապես իմ անունն է՝ գամ, կոտորեմ, գնամ և նորից գամ:

Վահանի որդի Սմբատը աչքը պահում է Ասուրի վրա, կովելով մոտենում նրան: Ասուրը տեսնելով  
պատանի Սմբատին, արհամարհում է նրան, իբրև ջահելի, ասում.

— Քարապաշտ հարճորդի, հեռու կաց, որ կարողանամ դուրս գալ իսկական կովող տղամարդկանց դեմ:

Ամբատն ասում է.

— Սատանայի որդի, իսկապես որ քո անունն Աստր է, որովհետև քո սուրը բանի պետք չէ, երբ կտրիճների դեմ կովես, կզգաս քո պարտությունը:

Եվ Ամբատը միանգամից սուրը բարձրացնելով, խփում, կտրում է Աստրի ձիու գլուխը և Աստրին գետին տապալում: Ապա հարձակվում է Աստրի վրա, գլուխը կտրում, գլուխն առնում ձեռին, վերև բարձրացնում, ասում.

— Փնոք քեզ, սուրբ Կարապետ, որ հաղթեցիր հակառակորդիս:

Մինչ Ամբատը Աստրով էր գրադված, պարսից ինը զինվորներ շրջապատում են Վահանին ու սկսում անխնա հարվածել: Վահանի ուժը պակասում է, որովհետև ութսուն տարեկան էր, և հուսահատված ձայն է տալիս.

— Մ'ը ես, Ամբատ որդյնկ, օգնության հասիր:

Ամբատը քաջաբար հարձակվում է հոր շրջապատողների վրա, գոչելով.

— Օգնիր մեզ, սուրբ Կարապետ:

Ամբատը սրով խփում է Աստրի որդու գլխին, գլուխը թիկունքի հետ կտրում, գցում գետին, իսկ հորը մյուս շրջապատողներին՝ քաջ արծվի նման հալածում, փախցնում: Վահանը ոգևորվում է, առաջ անցնում և մինչև արևամուտ՝ պարսիկներին ջարդում ու հալածում: Պարսից ութ հազարանոց զորքից միայն երեք հազարն է փրկվում, փախչում, գնում Վախտանգի մոտ:

Վախտանգը սուս է մնում և մի տարի աչլես չի անհանգստացնում Վահանին:

Այդ ընթացքում մեռնում է ծերացած քաջ Վահանը, նրան մեծ փառքով ու հանդեսով տանում, թաղում են սուրբ Կարապետի վանքի դռանը:

## ՍՄԲԱՏ ԵՎ ՎԱԽՏԱՆԳ

Վահանի մահից հետո Վախտանգը քսան հազարանոց զորք է հավաքում, ուղարկում Ամբատի վրա, առաջարկելով թե.

— Կամ եկ, պատերազմենք, կամ էլ հնազանդվիր և հարկ վճարիր:

Ամբատը հավաքում է ինն հազարանոց զորք, գնում է Անտաք, Վախտանգի դեմ պատերազմի: Նա հինգ հազար զինվոր թողնում է Մահու ազարակ կոչված բլրի մոտ, մնացած զորքով գնում Վախտանգի զորքի դեմ: Վախտանգը կարծելով, թե Ամբատի զորքը միայն նրա հետ եղածն է, ինն հազար զինվոր է նրա դեմ հանում, որոնք գալիս, գիշերով շրջապատում են Ամբատին: Վերջինս կամենում է գիշերով ելնել, հարձակվել շրջապատողների վրա, բայց իր հետ եղած քահանաները խորհուրդ չեն տալիս: Իսկ Ամբատն ասում է.

— Վստահ եմ աստծո վրա, որովհետև մաքուր հոգով ու միամտությամբ ծառայել եմ սուրբ Կարապետին. նա կօգնի մեզ և իր ձեռից քաց չի թողնի:

Եվ կեսգիշերին Ամբատը ելնում, ոտի է հանում զորքին, զինվորները վառած ջահերը ձեռներին բռնած, հարձակվում են պարսիկների վրա: Այդ պահին հանկարծ մի հերարձակ մարդ է երևում, որի մազերից լույս էր փայլատակում: Քաջ Ամբատը տեսնելով նրան, գոչում է զորքին.

— Քաջալերվեք, զավակներս, չվախենանք, սուրբ Կարապետը մեզ թիկունքից օգնության է հասել և մեզ հետ միացած՝ ինքն էլ է կովում:

Պարսիկները մթության մեջ շփոթվելով, սկսում են իրար կոտորել: Մյուս կողմից էլ Ամբատի զորքն է սկսում նրանց ջարդել: Այնքան են կոտորում, որ արյան հեղեղ է ելնում, դիակները քշում, տանում: Այդ պատճառով էլ այդ տեղավայրը այդ օրից կոչվում է Թիլ<sup>1</sup>:

Պարսիկներին կոտորելուց հետո Ամբատը երկու հարյուր զինվորի կենդանի է թողնում, որ գնան,

<sup>1</sup> Թիլ կամ թլեր՝ կախարչության, հմայության, սնտոի պաշտամունքի նշան: Այս դեպքում օգտագործվում է այն իմաստով, որ հայերի հաղթանակը տվյալ տեղում ձեռք է բերվել սուրբ Կարապետի զորությամբ, նրա երևալով և օգնությամբ:

պատմեն իր հաղթանակի և հատկապես սուրբ Կարապետի մասին, որ գիշերով երևացել էր և օգնել հայերին իրենց հաղթական կռիվում: Ապա պարսիկներից խլված ձիերն ուղարկում է Մուշ, իր որդու՝ Վահան Կամսարականի մոտ, որպեսզի շտապ քաղաքի հետևակը դարձնի հեծելազոր:

Վահան Կամսարականը կատարում է իր հոր կամքը, կազմում է երկու հազար հինգ հարյուր հեծյալից բաղկացած հեծելազոր և ուղարկում Սմբատին: Վերջինս ութ օր պատրաստում է իր զորքը և սպասում թշնամու նոր հարձակման:

Ութ օր անց Վախտանգը մեծ զորքով գալիս է Մշո դաշտ, Սմբատի դեմ պատերազմելու:

Սմբատը երկու հազար հեծյալ գիշերով գաղտնի տանում, անց է կացնում պարսիկների թիկունքը և այնտեղ՝ բլրի հետևում, թաքցնում: Իսկ ինքը վերցնում է ութ հազարանոց զորք, ճակատ կազմում և առավոտ վաղ արագ հարձակվում պարսիկների վրա, որպեսզի նրանց թույլ չտա նկատելու իրենց թիկունքում դարանակալած հաչոց հեծելազորին:

Երբ ճակատամարտն սկսվում է, Սմբատն ուժեղ ճնշմամբ պարսիկներին ստիպում է նահանջել դեպի բլուրը: Գրավելով բլուրը, Սմբատը բարձրանում է բլրի գագաթն ու ձայն տալիս.

— Ռ' ր եք, քաջեր, առաջ անցեք:

Բլրի հակառակ կողմում թաքնված հաչոց հեծելազորը թիկունքից հարձակվում է պարսիկների վրա: Առջևից Սմբատն իր զորքով, հետևից հեծելազորը՝ շրջապատման մեջ են առնում պարսից զորքին, և սկսվում է օրհասական ճակատամարտ: Հայերն ու պարսիկները խառնվում են իրար, միայն փողերի ձայնից և դրոշակներով են հազիվ միմյանց ճանաչում:

Կռվի թեժ պահին իրար դեմ են դուրս գալիս Վախտանգն ու Սմբատը: Սմբատը սպանակից ձայնով դիմում է նրան.

— Կնց, հարճորդի, թեպետ բազում մարդկանց ես դու ջնջել, բայց այսօր դու չես սրճնի իմ քաջ սղամարդկանց ձեռից, մեր սրերը քեզ գազանների նման պատառ-պատառ կանեն:

Սմբատն առաջ է անցնում, թրով խփում, կտրում է Վախտանգի ազրի սունապանը, ծանր խոցում և կամենում ձիուց գետին տապալել նրան: Իսկ Վախտանգը նիզակով հարվածում է Սմբատի կրծքին, սակայն չի կարողանում ծակել զրահը: Նիզակը մնում է Սմբատի զրահի մեջ ցցված: Սմբատը ձայնը բարձրացնում է ու գոչում.

— Սուրբ Կարապետ, ինձ թիկունքից հասիր, մենք այսօր քեզ համար ենք կռվում ու մեռնում:

Ապա նիզակով հարվածում է Վախտանգի թիկունքին, ծակում զրահը, թափանցում սրտի մեջ և սիրտը նիզակի տեղի հետ դուրս քաշում: Սմբատը քաշում է թուրը և իսկույն կտրում Վախտանգի գլուխը, գցում գետին: Բայց չի կարողանում Վախտանգի գլուխը վերցնել, որովհետև պարսիկներն անմիջապես հափշտակում են իրենց զորավարի գլուխն ու փախչում:

Սմբատը, երբ տեսնում է, որ Վախտանգի գլուխը նրա ծառաներից մեկը ձեռին փախչում է, ձիով ընկնում է հետևից, հասնում և մուրճով ուժեղ հարվածում գլխին: Մուրճը ծոռում է սաղավարտը, մտնում գլխի ջարդված ոսկորների մեջ: Սմբատը հազիվ է կարողանում մուրճը ծոզված սաղավարտի միջից հանել: Պարսիկն այդ պահին Վախտանգի գլուխը ձեռից գցում է ցած ու մեռնում: Նույն պահին մեկ ուրիշ պարսիկ հափշտակում է Վախտանգի գլուխն ու դարձյալ փախչում: Սմբատն ընկնում է նրա հետևից ու կանչում.

— Մի անմուտցեք, որովհետև սա արդեն մեռած է, եթե սրտացավ ծառաներ էք և գլուխն էք առած փախչում, ապա իմացե՛ք, որ ձեզ էլ նրա օրը պիտի գցել:

Ծառան հետ է դառնում, Վախտանգի գլուխը շարտում Սմբատի կրծքին, ասում.

— Տնր, խորովիր և կեր, վնչ ձեզ, որ վաղը ուրիշի չեք սպանի:

Իսկ Սմբատը վերցնելով Վախտանգի գլուխը, հետապնդում է պարսիկ ծառային ու ասում.

— Ա՛յ տիրատյաց պարսիկ, ինչո՞ւ քո գլուխը չուղեցիր քո տիրոջ փոխարեն: Եվ որովհետև այդպես տիրատյաց ես, ես հիմա քո գլուխը քեզանից կհեռացնեմ:

Սմբատը սրով խփում, կտրում է պարսիկի գլուխը, գցում գետին և մեծ հաղթությամբ վերադառնում բլուրը:

Իսկ Սմբատի զորքը պարսիկներին օղակի մեջ էր առել և անխնայ կոտորում էր: Ոչ մեկին ազատ չեն արձակում, բացի պարսիկ չորս հարյուր ուղտապաններից, որոնք ուղտերի մոտ էին կացել: Սմբատը

հրամայում է նրանցից ոչ մեկին չվճատել, միայն ուղտերը վերցնել: Ուղտապաններից առնում են 1044 ուղտ և ութ հազար ձի ու ջորի:

Կռիվն ավարտելուց հետո Սմբատը հրամայում է՝ սպանված պարսից զինվորներին լցնել բլրի մոտ եղած հեղեղատը: Այդ օրից բլուրն սկսվում է կոչվել Մահու բլուր:

Սմբատը առնում է զորքը և գիշերով գնում Վահտանգի շինած Պորայ քաղաքի վրա: Չորքը մտնում է քաղաք և իր տանը պարսից լեզվով խոսող են գտնում, բոլորին սպանում, քթերը կտրում, թելի վրա շարում, բերում են Սմբատին: Հաշվում, տեսնում են, որ սպանվել է քսանչորս հազար պարսիկ կին, տղամարդ, երեխա:

Իսկ Վահտանգի կնոջն ու որդուն գերի են վերցնում, տանում, պահում Այծից բերդում:

## ՍՄԲԱՏ ԵՎ ՍՈՒՐԵՆ

Ապա Սմբատը մարդ է ուղարկում պարսից Խոսրով թագավորի մոտ և պահանջում հետևյալը.

— Կամ ինձ հինգ տարվա հարկ տուր՝ փոխարեն նրա, որ քո զորքերը կերան իմ երկրի խոտն ու հացը, վառեցին իմ փայտը, խմեցին իմ ջուրը, այն սեղանատան սրահների համար, որոնք այրեց իմ հայր Վահանը քո զինվորների պատճառով, վաթսուն հազար դահեկան այն սապոնի գնի համար, որով քո զինվորների զարշահոտ ու արյունաթաթախ հագուստները լվացինք ու հազանք: Իսկ եթե չտաս, ապա հարյուր մարդով կգամ քո վրա, բոլոր պարսիկներին կգերեմ, կբերեմ, կլցնեմ Տարոն, վզներին շան կապ կդնեմ, կուղղեմ քո վրա, որ փոխանակ մեզ, ձեզ վրա հաշեն:

Ինչ որ ասացի՝ շնտ ուղարկիր, թե չէ՝ գլխիդ ինչ ասես կբերեմ:

Խոսրովը Սմբատին չի պատասխանում, բայց Վահտանգի եղբայր Սուրենը վերցնում է հարյուր հազար դահեկան, հետն էլ ինը հազար մարդ, գալիս է Տարոն՝ իր եղբոր կնոջն ու որդուն գնելու:

Սմբատը դիմավորում է Սուրենին, սիրով ընդունում նրան և բերում Մուշ: Տասը օր մնալուց հետո Սուրենը հարցնում է, թե ուր է իր եղբորորդին: Ցույց են տալիս Այծից բերդը ու ասում.

— Այնտեղ է:

Սուրենը հարցնում է.

— Այնտեղ նա այժարանձ է, թե դիվարած:

Սմբատը ծիծաղում է սրամտության վրա և հրամայում՝ Սուրենի մոտ բերել նրա եղբոր կնոջն ու որդուն:

Երբ նրանց բերում են, Սուրենը դիմում է Սմբատին.

— Հայոց աշխարհի հզոր իշխան, տո՛ւր այս կնոջն ու երեխային պարսից արքային նվեր:

Սմբատը պատասխանում է.

— Պարսից արքային, առանց գնի, սատկած շուն չեմ տա, որ նա տանի ճաշ շինի, ուտի, ուր մնաց, որ սրանց տամ: Բայց եթե դու սրանց գնել ես ուզում, քեզ կտամ, եթե ոչ, ապա երեքդ էլ գնացեք Արծրունիք, այժ արածեցրեք:

Բայց որովհետև Սուրենը իմաստուն մարդ էր, չի առարկում, ասում է.

— Մ'վ բարեպաշտ իշխան, եթե անգամ քո դռանը շուն արածեցնեինք, դարձյալ մեզ համար պարծանք էր, որ քո դռանն ենք կացել, էլ ո՛ւր մնաց, թե այժ արածեցնեինք: Բայց եթե համաձայն եք, վերցրեք մեզանից հարյուր հազար դահեկան, երկու հազար ուղտ, հինգ հազար պարսկական ձի և մեզ տվեք այս կնոջն ու երեխային:

Սմբատն ասում է.

— Այս ամենը, ինչ որ այստեղ ես բերել, իմն են. ես քո գլուխը կկտրեմ և քո ունեցվածքը կվերցնեմ: Բայց եթե դրանք քեզ պետք են, դու դարձիր քրիստոնյա և ինձ էլ պարսիկների մոտ տար, քո ունեցվածքն էլ քեզ լինի: Իսկ եթե հոժար չես, ապա ուրիշ հնար մտածիր:

Սուրենը բերում է հարյուր հազար դահեկանը, ուղտերը, ձիերը տալիս Սմբատին: Սմբատն ասում է.

— Տվածիդ համաձայն եմ, բայց իմացիր՝ պարսից զինվորները հարյուր ութսուն հազար դահեկանի փայտ են տարել Քարթե լեռան անտառից, նրանց ձիերը չորս հազար դահեկանի խոտ են կերել դաշտից, քսան հազար դահեկանի եղնիկ ու նապաստակ են որսացել իմ երկրից, հացի ու ջրի գինն էլ ձեզ եմ բաշխում: Բայց երկու տարի Խառանի, Ասորիքի և Մուրհաչի գինի են խմել, դրա վարձը թող տան.

վեց գավառի հարկը, որ առել են, քաղաքների մուտքի վարձը, որ կերել են՝ չորս հազար դահեկան է անում, այդ թող տան: Դու էլ դարձիր քրիստոնյա, ինձ պարսիկների մոտ տար, և թող քո հարս-գատներն էլ քեզ լինեն:

Սուրենը տրտմում է և ոչինչ չի կարողանում ասել, Սմբատն ասում է.

— Մի տխրիր, ամեն ինչ քո ուզածով կանեն: Բայց արի, քո գորքով գնանք իմ վանքը ուխտի:

Վերցնում են գորքը, Սուրենի եղբոր կնոջն ու որդուն, գնում, անցնում Արածանի գետը: Սմբատը իր որդի Վահանին թողնում է գետի մյուս ափը, պատվիրում, ո՛վ որ գետն անցնի՝ սպանի: Ինքը չորս հազարանոց գորքը թողնում է Մեղտիում, պարսից գորքը թողնում դաշտի Արտից գյուղում, իր հետ վերցնում չորս հարյուր հաչ և չորս հարյուր պարսիկ զինվոր և Սուրենի հետ գնում վանքը: Բայց որովհետև վանք տանող ճանապարհը խիստ նեղ էր և ձիերով անհնար էր անցնել, իջնում են ձիերից, ձիերը թողնում են ներքևում, ոտքով բարձրանում վանքը: Երբ մտնելում են վանքի բակին, վանականներն ընդառաջ են գալիս և Սուրենի պատճառով արգելում նրանց վանք մտնել:


Սմբատը զայրացած ասում է.

— Որովհետև դուք՝ պարսիկներդ, այնպիսի պիղծ էակներ եք, որ անտառներին անգամ արժանի չեք, որ մնաց թե ապրելու:

Պալունյաց Վարազ իշխանը, որ վանականների հետ էր եկել, սրով հարձակվում է Սուրենի վրա և գլուխը կտրում: Մնացած երկու պարսիկ իշխաններին կախում են ծառից, խեղդում: Իսկ Պալունյաց իշխանի գորքը, որ նախապես դարան էր մտել շրջակայքում, դուրս է գալիս թաքստոցից, պարսիկների ավելի քան երկու հազար ձիերը կտրում գորքից, քշում, տանում մոտակա ձորը: Պարսից զինվորները ոտքով ընկնում են ձիագողերի հետևից, Գողոց աղբյուրի մոտ հասնում նրանց և պարսաքարերով ու նետերով հինգ հարյուր քսան հոգու խփում, սպանում: Ապա իջնում են ձորը, ձիերը հանում, բերում, խառնում մնացած ձիերին, թվով դառնում մոտ երեք հազար ձի:

Պարսից զինվորներից շատերը հետապնդելով մնացած ձիագողերին ձորով բարձրանում են անտառը և այնտեղ հարձակվում նրանց վրա, սկսում անխնա կոտորել: Չիագողերի ավագը, որի անունը Սերիմ էր, հետ է դառնում, հանում է սուրը և սկսում պարսիկների դեմ մեկ մեկ քաջաքար կովել, մինչև ընկերները հետ են դառնում և հասնում օգնության: Սակայն մինչև ընկերների գալը, պարսիկները նետահարում են նրան, նետը դիպչում է սրտին և սպանում: Սերիմին ընկերները թաղում են նույն ձորում, և ձորն ու անտառը նրա անունով կոչվում է Սերիմաձոր: Չիագողերը բոլորը հետ են դառնում և սկսում քարերով ու նետերով հարձակվել պարսիկների վրա, շատերին սպանում են, մնացածներն էլ փախչում, գալիս, ապաստանում են մի քարայրում և սկսում ճաշել:

Այդ ժամանակ հարյուր հիսուն հաչեր Ռդական ամրոցից դուրս էին եկել որսի: Նրանք գալիս հասնում են այն քարայրին, որ հավաքվել ու ճաշի էին նստել պարսիկ զինվորները: Նրանք, երբ տես-



նում են պարսիկներին անհոգ նստած, հարձակվում են պարսիկների վրա, շրջապատելով՝ ոչ ոքի չեն թողնում ձի հեծնել, բոլորին սպանում են: Այն տեղը, ուր ժողովվել, ճաշի էին նստել ու կոտորվել էին պարսիկները, սկսում է կոչվել Ժողով:

Այս իրադարձությունների ընթացքում Սմբատն ու Վարազ Պալունի իշխանը թաքնվում են ս. Կարապետի վանքի մոտակա ձորում և մարդ են ուղարկում Մեղտի, գորքին շտապեցնում՝ հարձակման անցնել: Սմբատի գորքից հարյուր զինվոր անջատվում են, գալիս են պարսից գորքին գրգռելու կովի: Նրանք գրոհում են պարսիկների վրա, ապա մեկ-մեկ նահանջելով, գալիս են Սմբատի մոտ և Սմբատի հետ բարձրանում բլուրը: Պարսիկները հետապնդելով նրանց, գալիս, շրջապատում են բլուրը, աստիճանաբար բազմանում և սկսում նեղել Սմբատին և Վարազ Պալունուն: Սմբատն ու Վարազը ծնկի են գալիս, ձեռները վերև բարձրացնում և սուրբ Կարապետից օգնություն հայցում.

— Հիշիր մեզ և մեր երախտիքը, սհորք Կարապետ, դիւ, որ մեզ հետվում օգնեցիր, այժմ քեզ մոտ ենք<sup>1</sup>, մոտիկից էլ մեզ օգնիր և մեզ թիկունքից օգնության հասիր:

Սմբատն ու Վարազը բլրի վրա եղած զինվորներին բաժանում են երկու թևի, աջ թևի գլուխն է անցնում Սմբատը, ձախիճը՝ Վարազը, և սկսում են կյանքի ու մահի կոիվ մղել հարձակվող պարսից գորքի դեմ: Իրենք ու իրենց ձիերը թաթախվում են արյան մեջ: Սմբատի սուրը արյունից պատյանում մածուցվում է, կաշում, և որքան փորձում է պատյանից հանել, չի դուրս գալիս: Ծառ զոռելուց՝ թրի դաստակը ձեռքի մեջ կոտրվում է, և չի հասցնում սուրը փոխել: Պարսիկները այդ որ տեսնում են, ոգևորվում են, իրար ձայնում.

— Ծտակեցեք, քաջի սուրը կպել է պատյանին, կոթը կոտրվել, չի դուրս գալիս, վրն տվեք:

Նրանք արագ շրջապատում են Սմբատին և սկսում զենքերով անխնա հարվածել գլխին. հարվածներից այնպիսի ճարձատյուն էր լսվում, ինչպես չոր փայտը ճեղքելիս:

Իսկ Սմբատը բարձր ձայնով ասում է նրանց.

— Վնյ ձեր քաջությանն ու արիությանը, որ չեք կարողանում մի գլուխ էլ կտրել:

Ապա ձայնն ավելի բարձրացնելով, կանչում է.

— Ո՛ր էս, հզոր ու քաջաբազուկ Պալունյաց իշխան, իմ ծեր օրերի նեցուկ, իբրև քաջ արծիվ առաջ անցիր, անգղներ ու բվեճներ են ինձ վրա տվել:

Վարազ Պալունին գորքի ձախ թևը թողնում է իր Վահան որդուն, ինքը արծվի նման կոնչալով, ահ ու սարսափ տարածելով, հարձակվում է Սմբատին շրջապատողների վրա, հետևից նիզակով հարվածում Սմբատի վրա խոյացած պարսիկի թիկունքին, ձիուց վերև բարձրացնում նրան և այլևս չի կարողանում նիզակը նրա մարմնից հանել: Պարսիկն ընկնում է, մեռնում, իսկ Վարազ Պալունին ծաղրանքով ասում.

— Գնն, չափիր նիզակը, թե քանի կանգուն է երկարությունը, եթե մեկն ասի, թե երեք կանգուն է, չհավատնա:

Վարազը Սմբատին շրջապատումից դուրս է բերում: Սմբատը կովից դուրս գալով, հրամայում է մի պարսիկ բռնել բերել: Պարսիկին բերում են, Սմբատը մորթել է տալիս նրան, տաք արյունը լցնում չորացած արյունից պատյանում լուված սրի վրա, թուլացնում, սուրը հանում: Բայց որովհետև սրի դաստակը կոտրված էր, նա փոխում է սուրն ու արյունոտ երիվարը, նոր ձի հեծնում և մտնում կովի մեջ:

Սմբատի հինգ հարյուրանոց զորամասը շրջապատում են վեց հազար պարսիկներ: Սմբատը տեսնում է, որ Վարազ Պալունու ձին հոգնել է և կանգնել: Նա խփում է մի պարսիկի, ձիուց գցում, ձին մոտեցնում Վարազին, ասում.

— Հեծիր, Պալունյաց իշխան:

Վարազը հեծնում է նժույզը, ընկնում պարսիկների մեջ և սկսում մի ահեղ կոտորած: Եվ ամեն անգամ, երբ Սմբատի և Վարազի ձիերն հոգնում էին, նրանք արագ փոխում էին ձիերը իրենց սպանած հակառակորդների երիվարների հետ, և որքան բազմանում էր պարսից գորքը, նրանք իրենց նոր փոխած ձիերի պատճառով մնում էին անխոնջ ու անպարտելի:

Ծառ թշնամիներ են կոտորում Սմբատն ու Վարազը, ընկածների դիակներին չափ ու համար չկար:

<sup>1</sup> Նկատի ունեն մոտակայքում գտնվող ս. Կարապետի վանքը:



Քաջ Սմբատի գորքի մեջ սկսում է երկյուղ քննել թվով բազմապատիկ թշնամու պատճառով: Այդ պահին կովի վայրին են մոտենում Հաշտենից Սմբատ իշխանը և Սմբատ Մամիկոնյանի որդի Վահան Կամսարականը՝ վեց հազար զորքով: Երբ Վարազ Պալունին տեսնում է Սմբատի որդուն, ձայն է տալիս, ասում.

— Քաջ որդի Վահան, հր էիր, որ այսքան ուշ ես գալիս օգնության:

Իսկ Վահան Կամսարականը, կասկածելով, որ հորը փորձանք է պատահել, լալով ձայն է տալիս.

— Կան իմ տառապյալ ու ծերունի հայրը, թե՛ արդեն տիրոջ մոտ է փոխվել առհասկա:

Սմբատը լսելով որդու ձայնը, կշտամբանքով ասում է.

— Սուրբ Կարապետը իմ թիկունքում կանգնած էր, ուրեմն ես պարսիկներից պիտի մեռնեի:

Վահան Կամսարականը աստծուն փառք տալով, հարձակվում է պարսիկների վրա, նրանց զորահամբը ճեղքում, կիսում երկու մասի, զորքը իր հետևից տանում, բաժանում երկու թևի, մեկն ինքն է գլխավորում, մյուսը՝ Հաշտենից իշխանը: Ապա կոտորում են պարսից զորագլուխը և աջ ու ձախ շրջվելով, պարսից զորքին առնում են օղակի մեջ և մինչև արևամուտը՝ անխնա կոտորում: Պարսից զորքից երեք հարյուր զինվորի է հաջողվում միայն ձիերը թողած՝ փախչել: Նրանք գնում, թաքնվում են մի ձորում և սաստիկ հոգնածությունից քնում մինչև հաջորդ կեսօրը: Կեսօրին հալոց զինվորները գալիս, նրանց քնած են գտնում: Բերում, ջուր են ցանում նրանց վրա, արթնացնում, տանում Մեղտի: Իսկ ձորն այդ օրից, քնած զինվորների պատճառով կոչվում է Թմրածոր:

Պարսիկ զինվորներին տանում են Մեղտի, վերքերը բուժել տալիս, խնամում, ապա նրանց տալիս են գանձ, ձիեր, զենք և խաղաղությամբ ազատ արձակում Պարսից աշխարհ:

Հաջորդ օրը Սմբատը հրամայում է՝ կովում սպանված պարսիկների դիակները իրար վրա կիտել: Դիակներից մի վիթխարի բլուր է գոյանում, որը քաջ վարազ Պալունու անունով կոչում են Վարազաբլուր:

Երբ դիակները սկսում են նեխել և գազաններին բաժին դառնալ, մոտակա գյուղի բնակիչները այդ անթիվ հետևյալ երգն են հյուսում և ասում.

Գազանները կերան դիակների մարմիններն ու գիրացան.

Կգաքիսը ուտելուց ուտեց, ինչպես արջ.

Եվ աղվեսը հպարտ դարձավ, ինչպես առյուծ,

Գայլը, որովհետև շատակեր էր՝ պայթեց.

Եվ արջը, որ ուրիշներն ուտեն, իրեն ոչինչ չի մնա՝

Սովից մեռավ.

Անգղները, որովհետև ազառ էին, նստեցին

Եվ այլևս չկարողացան թռչել.

Մկները, որովհետև իրենց ծակերը շատ տարան,

նրանց ոտները մաշվեցին<sup>1</sup>:

<sup>1</sup> Ստորև դրվում է երգի հին հայերեն բնագիրը.

Կերան գազանք զմարմինս դիակացն և գիրացան.

Կուգ կերեալ ուտեալ իբրև գարջ,

Եւ աղուէս հպարտ եղև քան գառուծ.

Գայլ քանգի շատակեր էր՝ պայթեաց.

Եւ արջ, զի գոր ուտէն՝

Չմնայ առ ինքն, ի սովոյ մեռաւ.

Անգղերք, զի ազառ էին, նստան

Եւ նյլ ոչ կարացին վերանալ.

Մկունք, զի շատ տանէին ի ծակս իրեանց՝

Մաշեցան ոտք նոցա:

## ՏԻԳՐԱՆ, ՎԱՀԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ԵՎ ՍՄԲԱՏ

Խոսքով թագավորը դարձյալ քսան հազարանոց զորք է ուղարկում Սմբատ Մամիկոնյանի վրա՝ Տիգրան զորապետի գլխավորությամբ: Տիգրանը գալիս է Ապահունիք և Սմբատին կանչում իր մոտ:

Սմբատը իր որդի Վահանին ուղարկում է Տիգրանի մոտ, որպեսզի իմանա, թե ինչ է ուզում: Վահանը գալիս է Տիգրանի մոտ, իմանում բանի էությունը, ապա պատասխան է գրում, ուղարկում հորը՝ Սմբատին, և ասում.

— Սա մեր մասին մերթ քարի է խորհում, մերթ՝ չար: Բայց նա եկել և մեզանից պահանջում է Մուշեղ իշխանի և քո հոր՝ Վահանի ոսկորներն ու Վախտանգի կնոջն ու նրա որդուն, որն ընկավ Վարազի հետ մղված պատերազմում: «Եթե չտաք, — ասում է նա, — կգամ, ձեր հավատի պաշտամունքատեղին կքանդեմ ու ավարի կենթարկեմ, եկեղեցիները կրակատուն՝ կդարձնեմ և ձեզ էլ պարսից արքունի դուռը քարշ տալով՝ կտանեմ»: Նա այսպես ասաց և Հաշտենքի կողմից կամենում է քո վրա գալ: Հիմա ես նրա հետ կգնամ, իսկ դու մեր զորքերը հավաքիր, գնն սուրբ Կարապետի վանք և խնդրիր կրոնավորներին՝ թող մեզ համար աղոթեն:

Սմբատը որդու նամակը կարդալուց հետո գալիս է սուրբ Կարապետի վանքը, ընկնում սուրբ սեղանի առաջ և լալահառաչ խնդրում.

— Արթնացիր, տեր, և արթնացրո՛ւ քո զորությունը: Նայիր, տեր, և մի լուիր, մի դադարեցնի քո օգնությունը, որովհետև թշնամին կրկին խրոխտացել է մեզ վրա: Աղաչում եմ, հիշիր այն ջանքն ու տառապանքը, որ դրեցիք քեզ վրա, հանուն մեր սուրբ ուխտի, որպեսզի քո անունը հավիտյանս փառավորվի:

Ապա Սմբատը բերել է տալիս տասներկու թուր, դնում եկեղեցու բեմի առաջ, բեմի վրա պատարագ մատուցել տալիս:

Հետո Սմբատը վերցնում է թրերը և ասում.

— Այ՛ո, տեր, անգգամ պարսիկներին կոտորելուց հոգնեցի՞նք, ձանձրացանք, հոգնեցին անգամ անօրեն պարսիկներն էլ, որոնք մեր թրերի ժանգը իրենց արյամբ սրբեցին:

Այնուհետև Սմբատը էլնում է վանքից, գնում ինը հազար ինը հարյուր քսուստուն զինվորից բաղկացած զորք հավաքում, գնում, իջնում Հաշտենք գավառի Գրեհն կոչված գյուղի մոտ: Իսկ Տիգրանն իր զորքով գնում, իջնում է Հոնընկեց բլրի վրա, զինվորական պատվիրակություն է ուղարկում Սմբատի մոտ, ասում.

— Արի ինձ մոտ և մի վախենա, ինձանից գանձ ու փառք կատանաս, քո գլխին պսակ կդնեմ, և քեզ կդարձնեմ Հայոց մարզպան, միայն թե Մուշեղի և Վահանի ոսկորներն ինձ տաս:

Սմբատը բռնում է Տիգրանի պատվիրակության ղեկավարին, շիկացած երկաթե շամփուրը պսակածն նրա գլխին է հագցնում և ասում.

— Կն՞ց, տեսնեմ, թե դու ինձ ի՞նչ նվեր ես բերել, որ ես քո գլխին պսակ դրեցի:

Ապա բերել է տալիս պատվիրակության մյուս անդամներին, բոլորի գլուխները կտրում, դիակները շիկացած շամփուրով դաղում, ագում մի կողմ: Եվ այդ գյուղը այդ դեպքի առիթով կոչվում է մոզերի գերեզման կամ Մոզտունս:

Սմբատը զորքը հանում է Սերեմավայրը կոչված բլրի վրա և Տիգրանի դեմ բանակ դնում:

Երբ մույժն ընկնում է, Սմբատի որդի Վահան Կամսարականը, որ Տիգրանի բանակում էր գտնվում, մտնում է Տիգրանի որդու վրանը, որդու գլուխը կտրում, կտրում է նաև աջնուեղ գտնվող պարսիկ երեք իշխանների գլուխները, գիշերով բերում Սմբատի մոտ: Ապա Վահանը նորից վերադառնում է պարսից բանակը, գնում, գաղտնի մտնում Տիգրանի վրանը: Տիգրանը տեսնելով Վահանին՝ մերկացած սուսերը ձեռին, չի հանդգնում ծառաներին ձայն տալ, կարծելով, թե նա եկել է կարասի գողանալու: Վահանը անմիջապես մի բարձ է վերցնում, ագում Տիգրանի դեմքին, բերանը փակում և հարձակվում վրան: Այդ պահին Վահանի ծառան ներս է գալիս, սրով կտրում Տիգրանի գլուխը: Նրանք վերցնում են գլուխը, հա-

<sup>1</sup> Կրակատունը զրադաշտական պարսիկների հրո տանարն էր, ուր ատրուշաններ էին դրված, և միշտ վառվում էր նրանց պաշտելի սրբազան կրակը:





վաքում վրանում եղած թանկարժեք քարերը, քնտիր կարասին ու սրերը և գաղտնի գնում Սմբատի բանակը:

Հայոց զորքը ցնծում է Վահանի քաջագործությունից և մեծ գոհություն մատուցում աստծուն:

Բայց Վահանը դրանով չի գոհանում: Նա նույն գիշերը երկու հարյուր կաշվե վահան և հարյուր ամենի ջորի է բերել տալիս, ջորիների երկու կողքերից վահաններ կապում, վահանների վրա երկաթներ կախում, ջորիներին գցում իր զորքի առջև, քշում դեպի Տիգրանի տեղակալ Հոն գորավարի բանակը:

Հոնը ուներ ութ հազար զորք և բանակ էր դրել պարսից մյուս զորքերից հեռու, մի ժայռի մերձակայքում, Տորոս լեռան դիմաց:

Վահանը յուրաքանչյուր տասը ջորու վրա մի վերակացու էր դրել, որպեսզի ջորիներին քշեն և հրկեն: Ջորիներին ուղարկում է առաջ, Հոնի բանակի մոտակայքը, իսկ ինքը զորքով հարձակվում է պարսից բանակի վրա: Վահանը բանակի չորս կողմից ուսզմի փողեր է հնչեցնել տալիս և մտնելով բանակի մեջ, սկսում կոտորածը: Ռազմի փողերի անակնկալ շարագուշակ կանչը, հայ զինվորների ամենի գոռոցը, անակնկալի եկած պարսից զինվորների սարսափահար աղմուկը, գեներալի շաչունը մի զարհուրելի ժխոր են բարձրացնում: Բանակի մոտակայքում գտնվող ջորիների երամակը այդ ահավոր աղմուկից խրտնում է, և ջորիներն սկսում են տարբեր կողմեր փախչել: Իսկ նրանցից կախված երկաթները այնպիսի մի ահասարսուռ զրնգոց են արձակում, որ պարսից զորքը կարծում է, թե ինքը շրջապատված է նաև մեծաքանակ հեծելազորով:

Պարսիկ զինվորներն ահաբեկված վնչ են կանչում, մատնվում խուճապի: Եվ որովհետև խավար գիշեր էր, իրենք էլ տեղանքին անձանոթ, թողնում են ձիերը և փախչում դեպի ժայռաբլուրը և մթության մեջ՝ ահավոր վեժների բարձունքից գահավիժում են ցած, սպանվում:

Երբ փախչող պարսիկների ճիչն ու աղաղակը վերջանում է, նրանց հետապնդող հայոց զորքը հասկանում է արդեն, որ թշնամին գլխովին ոչնչացված է: Վահանի զորքը վերադառնում է պարսից բանակատեղին, հավաքում այնտեղ եղած կարասիք, ունեցվածքը, գանձերը, պարսիկների թողած ձիերը, ուղտերը, ավանակները, թվով շուրջ տասնութ հազար, և դրանք բոլորն ուղարկում Պալունյաց գավառ: Ավարի ենթարկված անասուններն այնքան՝ շատ էին, որ ծածկում են ամբողջ գավառի մակերեսը:

Լույսը բացվում է: Տիգրանի բանակում գտնվող զորավարները փնտրում են Տիգրանին և որդուն, բայց չեն կարողանում գտնել: Ապա գտնում են Հոնի բանակից փախած զինվորների հետքը, այդ հետքով գնում են, տեսնում՝ բոլորը ժայռաբլրից գահավիժած, մեռած:

Պարսից զորքերը բարկությամբ լցված՝ միաբանվում են, իրենց զորավար նշանակում Միհրխոսրովին, ճակատ կազմում և պատրաստվում են պատերազմի:

Սմբատը Վահանին երեք հազար զինվորով կողմնակալ է թողնում, երկու հազար զինվորի դարանակալ թաքցնում է իր երեք կողմերում, իսկ ինքը մնացած զորքով ճակատ է կազմում պարսիկների դեմ: Ծակատի աջ թևը հանձնում է քաջ ու հզոր Վարազ Պալունուն, ձախ թևը՝ Հաշտենից իշխանին, ինքը մնում կենտրոնում և իրեն թիկնապահ դարձնում Վարազ Պալունու որդի Վահանին:

Ծակատամարտը սկսվում է: Միհրխոսրովն ու Սմբատը իրար դեմ են էլնում և սկսում գեներալով իրար գլխի հարվածել: Պարսից զինվորները մեղուների նման թափվում են Սմբատի վրա, խիստ նեղում: Սմբատի ուժն սկսում է պակասել, որովհետև տարիքով ձեր էր արդեն. նա հուսահատված ձայնը բարձրացնում է և որդուն օգնության կանչում.

— Ո՛ր ես, Վահան որդյնկ, ինձ օգնության հասիր:

Վահանը հոր ձայնը լսելով, դիմում է սուրբ Կարապետին.

— Ահն հասել է ժամը, հ՛վ սուրբ Կարապետ, հ՛ր են մեր կրոնավորների աղոթքները:

Ասում է, մտնում կովի մեջ, ձեղքում պարսից զորքը, մոտենում հորը, ցրում նրա գլխին հավաքված թշնամու զինվորներին: Սմբատը ոգևորված որդու քաջությունից, սուրբ բարձրացնում է, հարվածում իրեն շրջապատողներին, մի քանիսի գլուխը կտրում, մյուսներին՝ Վահանի հետ միասին հալածում, քշում, հասցնում են դարան մտած զինվորների դիրքերը: Դարանակալած զորքը միանգամից թաքստոցից բարձրանում է և խոյանում պարսիկների վրա, շուրջկալում նրանց և երեք հազար զինվորի ժայռերից ցած թափում: Օրը մթնում է, պարսիկները, թվով մոտ ութ հազար զինվոր, ստիպված փախչում են Հաշտենք գավառից:

Ճակատամարտի տեղում Սմբատը գորահանդես է կազմակերպում՝ հաշվելու համար կովում ընկածների թիվը: Եվ այդ օրից ի վեր այդ վայրը կոչվում է Հանդիսանա:

Հանդեսից հետո Սմբատը հրամայում է հետապնդել փախչող պարսից զորքին: Հետապնդում են, բայց պարսից զորքը բանակ է դնում և կանգնում: Սմբատի զորքը ևս նրա դիմաց բանակ է դնում և մտադրվում հարձակվել պարսիկների վրա: Սակայն երեկոյան դեմ Ապահունիքից գալիս է հազար զինվորից բաղկացած մի գունդ, միանում պարսից զորքին: Սմբատի զորքը, տեսնելով թշնամու գորահամալրումը, Մարտից փող կոչված ասորգետնյա անցքով ցած է իջնում և բանակ դնում Արածանի գետի եզերքին: Պարսիկները հետամտելով հաչոց զորքին, նույն անցքով իջնում են և հայերին սեղմում Արածանու գետեզրին և սկսում սաստիկ նեղել: Սմբատը դիմում է աստծուն.

— Տեր իմ, գիտեմ, քո մարդասիրությունը վաղուց ի վեր մեզ հետ է: Այժմ խնդրում եմ, մեզ նայիր, թե ինչպես է թշնամին մեզ նեղել:

Ապա զորքը ոտքի է հանում, և արյունն աչքերն առած, ելնում են պատերազմի: Դարձյալ կովի թունդ պահին նրանց է երևում մի ահեղ և լուսաճաճանչ մազերով տղամարդ: Վահանն իսկույն գլխի է ընկնում, որ դա ս. Կարապետն է, մեծ ոգևորությամբ ու խիզախությամբ հարձակվում է թշնամու վրա, պարսից զորքերից կտրում, անջատում չորս հազար զինվոր, քշում, տանում մինչև Աստեղոնք ամրոցի մոտակայքը և շրջապատած՝ հալածում ընդհուպ եկեղեցու դեմը: Պարսիկները կամենում են բարձրանալ եկեղեցին, կրոնավորներին կոտորել, բայց չեն կարողանում արանքում գտնվող ձորն անցնել, ուստի մտնում, թաքնվում են եկեղեցու դիմացի անտառում:

Վահանը զորքով շտապ հասնում է նրանց հետևից, բոլորին անտառում սրի քաշում: Այդ վայրը սկսում է կոչվել Մահու առիթ:

Թիկունքից Վահանին է հասնում Վարազ իշխանը, որը պարսից մնացած զորքին գետն է թափում, խեղդում, իսկ նրանք, ում հաջողվում է գետն ընկնելուց խուսափել, կանգ են առնում, որովհետև ձիերը առաջ չեն գնում: Վարազը նրանց ձայն է տալիս, ասում.

— Ինչո՞ւ եք կանգնել, փախե՞ք, որ կոտորենք:

Իսկ նրանք ասում են.

— Կորանք մենք, մեռանք, վերջացանք:

Այդ առթիվ այդ տեղը հետագայում կոչվում է Կուրա: Վարազը շատերին կոտորում է, հազար քառասուն զինվորի է միայն հաջողվում փախչել, գնալ հասնել իրենց Խոսրով թագավորի մոտ:

Այդ նույն տարին մեռնում է Սմբատը, որին տանում, թաղում են իր պապերի կողքին, ս. Կարապետի վանքի բակում:

## ՎԱՐԴՈՒՀՐԻ, ՎԱՀԱՆ ԵՎ ՏԻՐԱՆ

Տասնութ տարի անց նոր գծությունն է ընկնում պարսիկների և Տարոնի իշխան Վահանի միջև:

Պարսից Խոսրով թագավորը Վարդուհրի զորապետի գլխավորությամբ հիսուն հազարանոց զորք է ուղարկում Տարոն: Պարսից զորքը մեծ ցասումով գալիս է իջնում Մուշ, կամենում բարձրանալ ս. Կարապետի վանքը և Տարոնի իշխանների ոսկորները հանել, տանել:

Վահանը իր մոտ է կանչում որդուն՝ Տիրանին, և ասում.

— Որդիս, քո մեծության փառքից չգայթակղվես և մեղքերի մեջ չընկնես: Քանի որ ջահել ես, գեղեցիկ կանանցից չխաբվես, այլ հիշիր մեր հայրերին, որոնք սրբությամբ ծառայեցին հայրենիքին ու եկեղեցուն: Մի մոռանա նաև ծառայել սուրբ Կարապետին, որ այսքան պատերազմների մեջ մեզ օգնական ու զորավիգ եղավ: Եթե կամենում ես երկար ապրել, չարիք չգործես և պղծությամբ չտարվես: Եթե ես ընկնեմ պատերազմում, ապա ինձ կթաղես սուրբ Կարապետի վանքում, իմ հայրերի կողքին, սրբությամբ կվերաբերվես քո հայրերի հիշատակին և քո եկեղեցուն, ինչպես ես ծառայեցի:

Ես ոչ գեղեցկությամբ գայթակղվեցի, ոչ խեղձերին զրկեցի, ոչ տառապածներին նեղեցի. նրանք, ովքեր իմ իշխանության տակ էին գտնվում՝ կանայք թե տղամարդիկ, մանուկներ թե եկեղեցականներ, նրանց խնամեցի ու հոգացի, իբրև իմ սեփական եղբայրների և ընտանիքի անդամների, ինչպես իմ հայրերն էին անում: Որդյնկ, նույն կերպ էլ դու վարվիր, և քո բարեգործությամբ կգորհանաս:

Իսկ այժմ գնանք պատերազմ:

Վահանը պատերազմի է դուրս բերում նաև ս. Կարապետի վանքի երեք հարյուր հիսունվեց կրոնավորների՝ վանքի վանահայր Գրիգորի առաջնորդությամբ:

Պատերազմը սկսվում է Արածանի գետի ափին, Կաղամախիների բլուր կոչված անտառի մերձակայքում: Այնտեղ էին խմբվել նաև վանքի կրոնավորները՝ մագեղեն սև զգեստներ հագած, մեջտեղը մի ժամհար՝ երկու խաչադրոշ ուտերից վեր բարձրացրած:

Երկու կողմերն էլ դեմ դիմաց ճակատ են կազմում, և սկսվում է պատերազմը: Վարդուհրին մնում է գետի մյուս ափին և չի մտնում կովի մեջ. նա նկատում է սևազգեստ կրոնավորներին և զարմանքով հարցնում.

— Նրանք այնտեղ ինչ են անում:

Պարսիկները նեղում են Վահանի զինվորներին, որոնք խուճապահար խոնվում են իրար գլխի և կամենում փախչել: Այդ ժամանակ վանականները ծնկի են իջնում և բոլորը միաբերան ու արտասովախառն աչքերով սկսում աղոթել.

— Ո՛վ զորությանց տեր, դու զորացրու մեր զինվորներին և թշնամուն ամոթով արա: Ո՛վ Կարապետ, քեզ պաշտողների ձայնից արթնացիր:

Այս ասելով, նրանք բոլորը ոտքի են կանգնում, խաչանիշ դրոշակները պարզում առաջ դեպի թշնամին և դիմում հարձակման: Վահանն այդ պահին նայում է վանականների գնդին և տեսնում, որ նրանց աջ թևից մի փիթխարահասակ երիտասարդ է գնում, գլխին՝ ծիրանի թագ և խաչ, որի զգեստներից լույս էր ճառագայթում: Իսկ նրա առջևից գնում էին դարձյալ երկու այլ բարձրահասակ թևավոր երիտասարդներ:

Թշնամիները նկատելով այս տեսիլը, վախից խենթանում են, լցվում ջուրը, շատերը խեղդվում են, ոմանց էլ հաջողվում է անցնել գետի մյուս ափը:

Վահանը ձայն է տալիս իր որդի Տիրանին և մնացած զորքին, ասում.

— Ահն տեսեք, մեր տերը լսեց իր պաշտոնյաների ձայնը և իջել է մեզ ու նրանց փրկելու: Արդ գոտեպնդվեցե՞ք և եկեք հետամուտ լինենք թշնամուն:

Վահանն անցնում է գետի մյուս ափը, գնում այն գյուղը, որ Պարսից կողմ էր կոչվում, հավաքում է իր զորքը և հալածում պարսիկներին մինչև Մատրավանքի դաշտը:

Այստեղ հայոց և պարսից զորքերը կանգ են առնում և ճակատ կազմում: Իրար դեմ մենամարտի են դուրս գալիս պարսից Վարդուհրի զորավարը և Վահանի որդի Տիրանը:

Վարդուհրին չարախոսությամբ դիմում է Տիրանին.

— Կախարդագործ, դուք կախարդությամբ եք փառավորվել և կախարդությամբ եք կամենում հաղթել պարսից քաջերին:

Տիրանն ասում է.

— Եթե կախարդ եմ, դու էլ ինձանից չես ազատվի, ես հիմա քո ձիու պոչը քո աչքի առաջ կբերեմ, նայել կտամ:

Ասում ու արագ հարվածում է Վարդուհրիին, աջ ոտը սոնապանով հանդերձ կտրում, զցում մի կողմ:

Վարդուհրին թեքվում է, ընկնում ձիու մյուս կողմի վրա: Տիրանն ասում է.

— Վարդուհրի, ինձ մի մեղադրի, գլուխդ է մեղավոր, գլուխդ քեզ ծոեց, զցեց մի կողմի վրա. հիմա բեռդ կուղղեմ, հետո կբարձրացնեմ:

Տիրանը սրով խփում, կտրում է Վարդուհրիի գլուխը, տալիս է ծառային, ասում.

— Սա պահիր, իջնենք Մատրավանքից, գնանք սուրբ Կարապետի առաջ, գնդի խաղանք, որով հետև սա էր, որ նախատում էր ս. Կարապետի վանքի պաշտոնյաներին:

Վահանի զորքը շրջապատում է պարսիկներին: Պալունյաց Վարազ իշխանը կտրում, բաժանում է պարսից երկու իշխանների զորամասերը և քշում հանում մինչև Հաշտյանք: Երբ փախստական պարսից իշխաններից մեկը հասնում է մի դաշտաձև տեղ, սկսում է ապշանալ, ոչ կարողանում է խուսել, ոչ էլ կովել, թեպետ հայոց հետապնդող զորքը դեռ հեռու էր: Ծառան հարցնում է.

— Ինչո՞ւ ապշեցիր ու մոլորվեցիր, իշխան:

— Պաղակ իշխանին եմ տեսնում և չեմ կարողանում գնալ:

Ասում է և ընկնում, մեռնում:

Այդ օրվանից այդ տեղը կոչվում է Պողկ:

Վարազ Պալունին գերում է մեռած իշխանի երկու որդիներին, պահել տալիս տեղում, իսկ ինքը հետապնդում պարսից փախստականներին: Հասնելով փախչող իշխաններից մեկին, Վարազն ասում է. — Պարսիկ, ընկիր քո կամքով, թե չէ՝ կընկնես ակամա:

Պարսից իշխանը շարունակում է փախչել: Վարազը հետապնդելով նրան, միգակով ուժեղ հարվածում է թիկունքին, տեգը անցնում է մարմնի միջով, խրվում ձիու ողի մեջ:

— Այժմ արդեն կընկնես, — ասում է Վարազը:

Ծարունակելով հետապնդումը, Վարազը հասնում է պարսից մի այլ իշխանի, ասում.

— Կընկնես քո կամքով, թե կընկնես ակամա:

Պարսից իշխանը շուտ է գալիս և խփում, կտրում է Վարազի ձիու գլուխը: Վարազը ձիուց վայր է ընկնում, բայց արագ էլնում է ոտի, վազում պարսիկ ձիավորի հետևից, սրով խփում, կտրում է պարսիկի ձիու ջիլը, ասում.

— Դհու էլ ընկիր:

Այդ օրվանից այդ տեղը կոչվում է Վայրանկանիս:

Վարազը վերցնում է վախից մեռած պարսից իշխանի գլուխն ու նրա գույգ որդիներին, գալիս է իր որդու՝ Սմբատի մոտ, ապա երկուսով իջնում գալիս են Վահանի մոտ:

Իսկ Վահանը բազում պարսիկներ էր կոտորել, մնացածներն էլ փախել, թաքնվել էին դաշտի տարբեր կողմերում:

Այդ ժամանակ Կաղամսխյաց բլրից ցած են իջնում աղոթող վանականները, գալիս հասնում Մատրավանքի դաշտին նայող մի բլրի: Վանականների մոտ է փութով գալիս պարսիկ փախստականների մի գունդ և աղաչում նրանց՝ փրկել իրենց: Վրա են հասնում փախստական գնդին հետապնդող Հաշտենից իշխանի զորքերը և կրոնավորներից պահանջում նրանց մոտ ապաստանած պարսիկներին: Կրոնավորները կտրուկ մերժում են Հաշտենից իշխանի զորքերի պահանջը և պարսիկներին չեն հանձնում նրանց ձեռք: Գալիս հասնում է նաև Հաշտենից իշխանը և հարցնում կրոնավորներին.

— Ո՞ր են պարսիկները:

— Ահավասիկ կանգնած են ձեր հայրերի մոտ, — պատասխանում են վանականները:

Այդ օրից այդ տեղը սկսում է կոչվել Հայրկերտ:

Պատերազմը ավարտվում է: Պարսից փախստականներին, թվով չորս հարյուր հիսուն հոգի, բերում են Մեղտի, նրանց ձիեր են տալիս, գանձեր են տալիս և ազատ արձակում, որ գնան Պարսից աշխարհ, պատմեն իրենց աչքով տեսած սքանչելի հրաշքը:

## Տիրան

Տարոն աշխարհը առժամանակ խաղաղվում է: Երեսուն տարի Տարոնի և Ապահունիքի վրա իշխելուց հետո մեռնում է Վահան Կամսարականը և թաղվում ս. Կարապետի վանքի բակում՝ իր պապերի կողքին:

Վահանի որդի Տիրանը, վրաց Վաշդեն իշխանի և իր հանգուցյալ հոր խորհրդով, գնում է պարսից Խոսրով թագավորի մոտ, դառնում նրա որդեգիրը և Հայոց աշխարհի վրա մարզպան կարգվում: Խոսրով թագավորը Տիրանին մեծ զորքով ուղարկում է հունաց թագավորի դեմ պատերազմելու: Իսկ Տիրանը նախապես պատգամավոր է ուղարկում հունաց կայսրի մոտ, ասում.

— Չվախենանս իմ գալուց, ինձ մի քաղաք տուր, որպեսզի այնտեղ հավաքեմ հայոց զորքերը և քեզ թիկունք ու օգնական դառնամ:

Հունաց կայսրը սիրով ընդունում է Տիրանի առաջարկը, հավատարմության ուխտի պայման կնքում և Տիրանին համարում ոչ միայն Հայոց ու Պարսից մարզպան, այլ նրան դարձնում դեմեալեկոս<sup>1</sup> Հունաց ամբողջ աշխարհի վրա:

<sup>1</sup> Դեմեալեկոս՝ հունարեն դոմեստիկոս բառի հայերեն արտասանությունը, կայսերական թիկնապահ, բյուզանդական կայսրության ժամանակ արևելյան բանակի զորավարին տրվող տիտղոս:



Վաշդեն իշխանն այս իմանալով, սաստիկ զայրանում է, մարդ է ուղարկում Խոսրով թագավորի մոտ, ասում.

— Տիրանը քեզ դավաճանեց և անցավ հույների կողմը: Այժմ ինձ ուղարկիր ութ հազար ձիավոր Վանանդ գավառի մոտ, ես կբռնեմ Տիրանին և քո ձեռը կհանձնեմ:

Խոսրովը կանչում է վրաց իշխանորդի Ջոշիկին, որին մարզպան էր դարձրել, նրա ձեռով՝ Այունյաց իշխանին տալիս է խիստ ծեծել, իբրև նեճգ ու խարդախ ազգի, իսկ ինքը հազարանոց զորք է ուղարկում վրաց Վաշդեն իշխանին:

Վաշդենը նամակ է գրում Տիրանին, ասում.

— Հոգնեցիր պանդխտության մեջ մնալուց. այժմ վերադարձիր, որպեսզի մի բան մտածենք պարսից արքայի վերաբերյալ:

Տիրանը Վաշդենի նամակը ստանալու օրը մեկ այլ նամակ էլ ստանում է Վաշդենի քրոջ որդի Համանից, որը հայտնում էր Վաշդենի կողմից նրա դեմ նշույթով դավադրության և պարսից զորքերի գալու մասին:

Տիրանը շտապ պատասխան է գրում Վաշդենին և նրան ամոթանք տալիս իր դեմ գաղտնի դավադրություն սարքելու համար:

Վաշդենը խիստ զայրանում է Համանի վրա, նրա ոտ ու ձեռը ծայրատու՜կտում, վերցնում պարսից զորքը, անցնում Ճորոխ գետը, գնում Համանի քաղաքը, որ կոչվում էր Տամբուր: Սրով ու հրով մըտնում է քաղաքը, կոտորում, ավերում, գերում: Քաղաքի եպիսկոպոսն անիծում է անողոք իշխանին: Վաշդենը, սրանից զայրացած, կոտորել է տալիս սուրբ Սիոն եկեղեցու բոլոր քահանաներին, եպիսկոպոսին մորթում սուրբ սեղանի վրա:

Նույն տարին հունաց Հերակլ կայսրը սպանում է պարսից Խոսրով թագավորին, հիշում իր և Տիրանի միջև եղած ուխտն ու երդումը և Տիրանին կարգում մարզպան համայն Հայոց աշխարհի վրա, ինքը գնում Կոստանդնուպոլիս:

Ութ տարի անց, արաբներն արշավում են Հայաստան: Հայաստան է գալիս Մահմեդի քրոջ որդի Աբդուահիմը՝ տասնութ հազար հեծելազորով և Հայոց աշխարհից հարկ պահանջում:

Տիրանը հրաման է տալիս՝ ժողովել ամբողջ զորքը և ելնել արաբների դեմ պատերազմի: Սակայն Վաշդենի որդի վրաց Ջոշիկ իշխանը Հայոց աշխարհը ապստամբեցնում է Տիրանի դեմ, որպեսզի չենթարկվեն նրա հրամանին և չեղնեն արաբների դեմ պատերազմի: Տիրանը տեսնելով, որ ամեն ինչ վերջացած է, դիմում է իրենց կամքով իր մոտ հավաքված ութ հազար հայ զինվորներին.

— Ռ՛վ քրիստոնյա ժողովուրդ, ավելի լավ է մեռնել, քան մեր երկիրն ու եկեղեցին հարկատու դարձնել տաճիկներին<sup>1</sup>:

Հաջորդ օրը առավոտյան Տիրանը Գրգուռ լեռան ստորոտում կովի է ելնում արաբների դեմ, մինչև կեսօր կովում և արաբներին նեղելով, փախուստի մատնում: Սակայն այդ պահին Աճնացյաց Սահուռ իշխանն իր զորքով ապստամբում է Տիրանի դեմ, անցնում արաբների կողմը և սկսում կովել հայոց զորքի դեմ: Արաբները նորից զորանում են, և կոհվր բորբոքվում է նոր թափով:

Տիրանը զայրացած ձեղքում է երկու ճակատները, միարձվում դավաճան Սահուռի զորքի մեջ, հասնում նրան, գոչում.

— Կնց, ուրացող Սահուռ, աստված քեզ իմ ձեռը մատնեց:

Ապա սուրբ բարձրացնելով՝ խփում, կտրում է Սահուռի գլուխը, բայց ինքն էլ նույն պահին երկու իշխանների հետ սպանվում է: Արաբները շրջափակում են հայոց զորքը, շատերին կոտորում, ոմանց էլ հաջողվում է փախչել, անցնել Օձ քաղաքի մոտ գտնվող ճահիճների հակառակ կողմը:

Աբդուահիմը այդ հաղթանակից հետո անցնում է Հայոց աշխարհի մնացած գավառները, հասնում Ջավախք, Վրաստան, Վանանդ, բոլորից հարկ վերցնում, վերադառնում Տաճկաստան:

Նույն տարին արաբներն ավերում են Աշտիշատի եկեղեցին, ս. Կարապետի վանքը և Թիլում գտնվող Կաթողիկե եկեղեցին: Իսկ Տիրանին թաղում են Պորպ քաղաքի մոտ գտնվող Տարոնի Զյունակերտ եկեղեցու դռանը:

<sup>1</sup> Միջնադարում արաբներին հայերը տաճիկ էին անվանում:

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

*Առաջաբան*

3

Առաջին մաս

ԲՆՈՒԹՅՈՒՆ

10

Երկրորդ մաս

ԱՍՏՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԵՐՈՍՆԵՐ

36

ԱՍՏՎԱԾՆԵՐ

37

ՀԵՐՈՍՆԵՐ

44

Երրորդ մաս

ՀԱՅՈՑ ՀԻՆ ՎԵՊԵՐԸ

58

«ՊԱՐՍԻՑ ՊԱՏԵՐԱԶՄ» ՎԵՊԸ

80

«ՏԱՐՈՆԻ ՊԱՏԵՐԱԶՄ» ՎԵՊԸ

166

**ՍԱՐԳԻՍ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
ՀԱՅ ՀԻՆ ՎԻՊԱՇԵՍՈՂԸ**

Լեգենդներ, առասպելներ  
Միջին և բարձր տարիքի դպրոցականների համար

**ՏԱՐԿԻՏ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍՈՎԻՇ ԲԱՐԴՈՒՅԱՆ  
ЭПИЧЕСКИЙ МИР ДРЕВНИХ АРМЯН**

Легенды, мифы  
Для среднего и старшего школьного возраста

(На армянском языке)  
Издательство «Аревик»  
Ереван, 1987

Խմբագիր՝ **Հ. Վ. Վարդանյան**  
Գեղ. խմբագիր՝ **Ս. Գ. Սաֆյան**  
Տեխ. խմբագիր՝ **Ս. Մ. Սիմոնյան**  
Վերատպող սրբագրիչ՝ **Ե. Պ. Պոստյան**

ИБ № 225

Հանձնված է շարվածքի 26.03.87 թ.: Ստորագրված է տպագրության 7.11.87 թ.: ՎՖ 00756:  
Ֆորմատ՝ 84×108<sup>1/16</sup>: Թուղթ՝ օֆսեթ: Տառատեսակ՝ «Նորք»: Տպագրություն՝ օֆսեթ: Պալմ.  
20,16 մամ., հրատ. 18,49 մամ.: Տպաքանակ՝ 50000: Պատվեր՝ 2582: Գինը՝ 1 ու. 70 կոպ.:

«Արևիկ» հրատարակչություն, Երևան — 9, Տերյան 91:  
Издательство «Аревик», Ереван — 9, ул. Теряна, 91.

Հայկական ՍՍՀ հրատարակչությունների պոլիգրաֆիայի  
և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի  
ԿՈՒՆԱՎՈՐ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ  
Երևան — 82, Ծովակալ Իսակովի պող. 48:

ТИПОГРАФИЯ ЦВЕТНОЙ ПЕЧАТИ  
Госкомитета Армянской ССР по делам  
издательств, полиграфии и книжной торговли,  
Ереван — 82, пр. Адмирала Исакова, 48.

